Հ. Ռ. ՓՈՓՈՂՅԱՆ

ՍԻՄՈՒՅԻ ԵՎ ԼԻՊԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱՀԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՀ
Ա.ԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

О. Х. ТОПУЗЯН

ИСТОРИЯ АРМЯНСКИХ КОЛОНИЙ СИРИИ И ЛИВАНА

(1841—1946)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

ДУБЛЕТ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Խ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(1841—1946)

Ա 47676

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՄԴ 63.3(5Սիր)+63.3(5Լի)
Թ 839

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
Ա. Ն. Տեր-Ղևոնդյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտորներ **Հ. Գ. Ինճիկյանը և Հ. Մ. Եգանյանը**

Թոփուզյան Հ. Խ.
Թ 839 *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841—1946) /Պատ. խմբ. Ա. Ն. Տեր-Ղևոնդյան; ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտ. ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.— 369 էջ.*

Աշխատությունում Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմության հիմնական հարցերը քննարկվում են սերտորեն առնչված այդ երկրների պատմության հետ: Մասնավորապես լուսաբանվում են հայ գաղթականների ներհոսը, ֆրանսիական մանդատի հաստատումը և հայկական համայնքների իրավական դոյավիճակը, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացումը, հայ քաղաքական կազմակերպությունների գործունեությունը և կուսակցական պայքարը: Հանգամանորեն քննվում են հայ-արաբական հարաբերությունները, Սիրիայի և Լիբանանի հայերի մասնակցությունը ազգային ազատագրական շարժումներին, նրանց կապերը Սովետական Հայաստանի հետ, հայրենադարձությունը:

Նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

Թ $\frac{0506000000}{703(02)-86}$ 25—84 ԳՄԴ 63.3(5Սիր)+63.3(5Լի)+63.3(2ՀՍ)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների բազմադարյան պատմության հարցերին անդրադարձել են մի շարք սովետական և սփյուռքահայ հեղինակներ։ Բարձր գնահատելով հանդերձ նրանց աշխատությունների արժանիքները, կարող ենք անվարան ասել, որ դեռևս բացակայում է այդ հնագույն և առավել բազմամարդ գաղթօջախների պատմությունը։ Ներկա աշխատությունը փաստորեն առաջին փորձն է սիստեմատիկ շարադրելու Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների շուրջ մեկդարյա՝ 1841—1946 թթ. պատմությունը։

Աշխատության առաջին բաժինը նվիրված է Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների նոր պատմության 1841—1918 թթ. ժամանակահատվածի հիմնական հարցերի լուսաբանմանը։ Գտնվելով օսմանյան բռնակալության ներքո, Սիրիայի հայերը համարյա միևնույն չափով և միևնույն խորությամբ բաժանում էին Արևմտյան Հայաստանի հայության դառն ճակատագիրը։ Փորձել ենք ցույց տալ սիրիահայերի սոցիալական, տնտեսական, քաղաքական վիճակը, նրանց բաժին ընկած իրավազրկությունն ու կամայականությունները, կոտորածների արհավիրքները, ցեղասպանությունը։ Առանձնահատուկ ուշադրություն ենք ընծայել Սիրիայի հայության ճնշող մեծամասնությունը կազմող աշխատավոր գյուղացիության ազատագրական ընդվզումներին, որոնց պսակը հանդիսանում է Մուսա լեռան հերոսամարտը։ Քննարկել ենք նաև հայ-արաբական հարաբերությունների, օսմանյան բռնակալության դեմ հայերի և արաբների համատեղ պայքարի հարցեր։

Երկրորդ բաժնում ընդգրկված են Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների նորագույն պատմության 1918—1946 թթ. համեմատաբար կարճ, բայց բախտորոշ իրադարձություններով հագեցած ժամանակահատվածի առավել կարևոր հարցերը։ Դա ֆրանսիական մանդատի ժամանակաշրջանն է, երբ ցեղասպանությունից և Կիլիկիայի աղետից ճողոպրած բազմահազար հայեր ապաստան էին որոնում ազգային-

ազատագրական պայքարի բոցերով բռնկված Սիրիայում։ Փորձել ենք ցույց տալ հայ գաղթականների կյանքի դժնդակ պայմանները, նրանց ջանքերը պատերազմից ստացած խոր վերքերը բուժելու, թշնամիների բազմապիսի դավերը՝ սեպ խրելու հայ-արաբական բարեկամության միջև։ Հանգամանորեն կանգ ենք առել հայ դեմոկրատական կազմակերպությունների սաղմնավորման ու զարգացման, հայ և արաբ աշխատավորների, գործիչների հակաիմպերիալիստական համատեղ պայքարի, ազգային կուսակցությունների վարքագծի և այլ հարցերի վրա։

Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների նորագույն պատմության ամենանշանակալից դրվագները ստեղծվեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ այդ երկրների հայության ճնշող մեծամասնությունը, համախմբվելով դեմոկրատական կազմակերպությունների շուրջը, հանդես եկավ ֆաշիզմի դեմ Սովետական Միության, Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում։

Եվ, որպեսզի պատկերը լինի քիչ թե շատ ամբողջական, խիստ համառոտակի անդրադարձել ենք նաև Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների սկզբնավորման և միջնադարյան պատմության առավել ցայտուն դրվագներին։ Արդարև այդ գաղթօջախները սկիզբ են առել դարերի խորքից և, պարբերաբար վերանորոգվելով Հայաստանից դուրս մղվող հոծ բազմություններով, համարյա անընդհատ գոյատևել են և երբեմն կարևոր դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում։

Հարցերը քննարկել ենք Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, Պետական կենտրոնական պատմական արխիվում, Գրականության և արվեստի թանգարանում, ԳԱ արևելագիտության ինստիտուտում, Մոսկվայի և Լենինգրադի գրապահոցներում պահպանվող արխիվային նյութերի և տարբեր լեզուներով գրականության հիման վրա։ Աշխատությունը շարադրելիս մեծապես օգտվել ենք մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը Կ. Պոլսում, իսկ դրանից հետո Սիրիայում, Լիբանանում, Կիլիկիայում, Եգիպտոսում և այլ երկրներում լույս տեսնող հայ, մասամբ էլ օտար պարբերական մամուլից։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1. ՀԱՅ–ՍԻՐԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Պատմական Սիրիան կամ Ասորիքը տարածվում էր Ամանոսյան լեռներից մինչև Եգիպտոսի սահմանները, Միջերկրական ծովից՝ Սիրիական անապատ և հյուսիս-արևելքից սահմանակից էր պատմական Հայաստանին: Հայկական բարձրավանդակից էին անցնում հին Արևելքի միջազգային այն ճանապարհները, որոնք Սիրիան կապում էին Սև և Կասպից ծովերի հետ: Այդ ճանապարհները, որոնցով անցնում էին արևելյան և արևմտյան նվաճողները, միաժամանակ նպաստում էին առևտրական և մշակութային կապերի զարգացմանը՝ Հայաստանի և հարևան երկրների, այդ թվում Սիրիայի միջև:

Փյունիկիայի քարավանային առևտրի ճանապարհը, ձգվելով Տավրոսից դեպի Սիրիական անապատ, իջնում էր Եփրատ գետի հովիտը, որտեղից նրա մի ճյուղը գնում էր հարավ, դեպի Բաբելոն, մյուսը՝ հյուսիս, դեպի Կասպից ծովի ավազանը: Այս ճանապարհով Հայաստանն առևտրական կապեր էր պահպանում Տյուրոսի, Սիդոնի, Բիբլոսի և Փյունիկիայի այլ վաճառաշահ քաղաքների հետ: Այդ առումով հետաքրքրական է Աստվածաշնչի վկայությունն այն մասին, որ Փյունիկիայի շուկաներում վաճառվում էին «ի Տանէ Թորգոմայ» բերված ապրանքներ[1]:

Հին Արևելքի խոշորագույն պետություններից մեկի՝ Աքեմենյան Պարսկաստանի Արքայական ճանապարհի մի հատվածը (56.6 փարսախ կամ շուրջ 320 կմ) անցնում էր Հայաստանի միջով: Պարսից ծոցը Միջերկրական ծովի ափերի հետ կապող այդ ճանապարհը ոչ միայն վարչաքաղաքական ու ստրատեգիական նշանակություն ուներ, այլև նպաստում էր առևտրական կապերի զարգացմանը լայնարձակ պետու-

թյան հեռավոր ծայրամասերի, այդ թվում Հայաստանի և Սիրիայի միջև:

Հելլենիստական դարաշրջանում Սիրիայում և Միջագետքում հիմնադրված քաղաքներն առևտրական կապեր էին պահպանում Հայաստանի, հատկապես նրա հարավ-արևելյան մասի՝ Փոքր Հայքի և Ծոփքի քաղաքների հետ: Հնդկաստանից դուրս բերված ապրանքները Սև ծով էին տեղափոխվում Կասպից ծով-Կուր-Ճորոխ գետային ճանապարհով, որի մի ճյուղը Դիլիջանի կիրճով իջնում էր Արաբատյան դաշտ և հանգուցվում Միջերկրականի ափերից՝ Սելևկիայից (այժմ Սվեդիա) և Անտիոքից եկող ճանապարհի հետ: Մ. թ. ա. III դարում Հայաստանում շրջանառության մեջ էին սելևկյան ոսկե և արծաթե դրամները:

Սիրիայի և Հայաստանի միջև առևտրական կապերի զարգացմանը խոշոր չափով նպաստեցին Տիգրան II-ի (մ. թ. ա. 95—55) նվաճումները: Գրավելով Միջագետքը և Սիրիայի մեծ մասը, Հայոց արքան տիրեց հելլենիստական աշխարհի միջազգային տարանցիկ առևտրի կարևորագույն՝ Պարսից ծոց-Զևգմա-Անտիոք ճանապարհին, որի հանգույցներից էին Ծոփքի Արշամաշատ և Արկաթիակերտ քաղաքները: Նոր մայրաքաղաք Տիգրանակերտը դարձավ միջազգային առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը Արևելքում: Անտիոքում և Դամասկոսում գործում էին հայոց արքայի փողերանոցները, որոնք թողարկում էին նրա անունը և պատկերը կրող դրամներ: Պլուտարքոսը վկայում է, որ Տիգրան II-ի գերիշխանության տարիներին (մ. թ. ա. 84—66) Սիրիայում և Միջագետքում առևտուրն ու տնտեսական կյանքն աշխուժացան, «քաղաքները մեծանում և բազմամարդ» էին դառնում:

Տիգրան արքայի օրոք Հայաստանի և Սիրիայի միջև հաստատված տնտեսական, հատկապես մշակութային կապերը, չնայած հետագա անբարենպաստ քաղաքական իրադարձություններին, գնալով ամրապընդվեցին: Նրա պարտությունից հետո Սիրիան տակավին երկար ժամանակ Հայաստանի հետ կապված էր Տիգրանակերտ—Արտաշատ ճանապարհով, որը Միջին Ասիա տանող մայրուղու մի հատվածն էր: Այժմ Սիրիայից, Միջագետքից և այլ երկրներից առևտրական քարավանները ժամանում էին Հայաստանի նոր մայրաքաղաքը՝ Վաղարշապատ և այլ քաղաքներ: Դրանցից մեկի մասին Մշիխա-Զեխան գրել է. «Ասորի առևտրականները (Սիրիայից) իրենց քարավաններով մտնում էին հայկական Արզանեն (Արզան) քաղաքը, որտեղից անցնում էին Ադիաբենի քաղաքները և հասնում Արբելա մայրաքաղաքը»[2]:

V դարի երկրորդ կեսից միջազգային առևտրական հարաբերու-

Բյուզանդիայի հանգուցակետ դարձավ Դվինն մայրաքաղաքը։ Դվինից դուրս էին գալիս հինգ հիմնական ճանապարհներ, որոնցից երկուսով Հայաստանը կապվում էր Սիրիայի և հյուսիսային Միջագետքի քաղաքների հետ։ Հարավ-արևմտյան ճանապարհը տանում էր Խլաթ (Վանա լճի ափին), Քղիմար (այժմյան Մալիգիր գյուղի մոտ), Ուռհա (Եդեսիա), Դամասկոս, Երուսաղեմ, այստեղից՝ հյուսիսային Աֆրիկա։ Արևելյան ճանապարհը տանում էր Նախիջևան, Գանձակ և այստեղ միանում այն ուղեգծի հետ, որը գնում էր Նինվե, Մծբին, Ուռհա։ VI դարի բյուզանդական հեղինակ Պրոկոպիոս Կեսարացին հաղորդում է. «Դուբիոսը (Դվինը) շատ հարուստ բնակատեղի է, ունի բավական լավ օդ ու ջուր և գտնվում է Թեոդոսուպոլսից ութ օր հեռավորության վրա։ Դաշտերըն այստեղ լայնատարած են՝ ձիավարության համար մատչելի, կան իրար հարևան բազմաթիվ մարդաշատ գյուղեր, ուր բնակվում են առևտրական նպատակներով (ժամանած) մեծ թվով մարդիկ։ Հնդկաստանից, Հարևան Իբերիայից, մի խոսքով պարսից ենթակա բոլոր երկրներից, որոշ չափով նաև Հռոմեական (երկրից) ապրանքներ բերողները (հենց) այստեղ են իրար հետ առևտուր անում»[3]։

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Սիրիայի և Միջագետքի քաղաքները միջազգային առևտրի հանգուցակետեր էին, որոնց հետ Հայաստանի քաղաքները կապված էին մի քանի ճանապարհներով։ Միջին Ասիայից դեպի Արևմուտք գնացող քարավանների գլխավոր հանգրվաններից՝ Մոսուլ քաղաքից ճանապարհը երկփեղկվում էր, առաջինը Մծբինից անցնելով գնում էր դեպի Փոքր Ասիայի խորքերը, երկրորդը՝ Ամիդի, Սամոսատի, Ուռհայի և Խառանի վրայով՝ Ռակկա. այստեղից դուրս էր գալիս երկու ճանապարհ, մեկը դեպի Հալեպ, մյուսը՝ Հոմս։ Հալեպից առևտրական քարավանները Միջերկրական ծով էին հասնում Հալեպ-Լաոդիկե (այժմ Լատակիա) և Հալեպ-Անտիոք, իսկ Հոմսից՝ Հոմս-Տարտուս ու Հոմս-Տրիպոլի ճանապարհներով։ Հայաստանը Սիրիայի հետ կապված էր նաև տարանցիկ առևտրի հարավային ուղեգծով, որը Մարանդից գնում էր Հեր, Բերկրի, Արճեշ, Խլաթ, Բաղեշ, Արզն, Նփրկերտ (Մուֆարղին), այստեղից մի ճանապարհ տանում էր դեպի Ամիդ—Խառան—Բաղդադ, երկրորդը՝ Ամիդ—Ուռհա—Անտիոք և այլ քաղաքներ։

Ինդոսից մինչև Ատլանտյան օվկիանոս տարածված արաբական վիթխարի պետության ստեղծումը՝ կառավարման, հարկադրման և մաքսային միասնական դրույթամբ, նպաստում էր առևտրական կապերի ղարգացմանը նվաճված ժողովուրդների միջև։ Խալիֆայության ձեռ-

քում էին գտնվում Արևելքն Արևմուտքի հետ կապող բոլոր հիմնական ճանապարհները: Նրա ամենահեռավոր ծայրամասերից ապրանքները կարող էին անխափան փոխադրվել դեպի կենտրոն և կենտրոնական շրջաններից՝ ծայրամասերը: Աշխարհի բոլոր մասերից Բաղդադ, Դամասկոս, Անտիոք, Հալեպ, Կահիրե էին տարվում ամեն տեսակի ապրանքներ:

Հայաստանի քաղաքները դուրս չէին մնում առևտրական այդ շարժումից: Վանա լճից հանված բորակը (բուրեի արմանի), կերակրի աղը, աղ դրած տառեխը, Հայաստանի կարմրավուն կավից («հայկաս», «թին արմանի») պատրաստված կարասները, կժերը, պնակները և այլ ապրանքներ արտահանվում էին Մոսուլ, Ռակկա, Խառան, Հալեպ, Անտիոք և այլ քաղաքներ: Արաբ մատենագիրները հիշատակում են Հայաստանից արտահանված ցեղական լավագույն ջորիների մասին: Իբն Հաուկալը գրում է. «Ջավազանից (Անձևացյաց երկրից), Հայաստանի շրջաններից և Առանից (Աղվանք) դեպի Խորասան, Իրաք, Սիրիա և այլ երկրներ արտահանվում են հիանալի ջորիներ, որոնք աչքի են ընկնում իրենց ցեղականությամբ, դիմացկունությամբ...»: Խալիֆայության երկրներում մեծ գովասանքի էին արժանացած նաև «հայկական գործվածքները»՝ բազմոցները, գորգերը, ծածկոցները, կարպետները, բարձերը: Մատենագիրը նշում է. «Դրանց նմանը չկա աշխարհիս մի ծայրից մինչև մյուսը՝ բոլոր ուղղություններով»[4]:

Արաբական տիրապետության անկումից հետո էլ շարունակվեցին առևտրական կապերը Հայաստանի և Սիրիայի քաղաքների միջև: Հաղորդելով Հայաստանից Սիրիա ժամանող առևտրական մի քարավանի մասին, Ուռհայեցին ասում է. «Եկեալ կարաւան ի յարևելից ի քաղաքն Անտիոք, և բարձեալ բերէին տարեկ ձուկն...»: Քարավանին ուղեկցում էր 80 մարդուց բաղկացած բերդով պինդված մի ջոկատ, որն ուներ իր հրամանատարը՝ «մանկատաւագն»[5]:

Հայ-սիրիական առևտրական կապերի զգալի զարգացումը նպաստում էր սիրիական հարուստ մշակույթի ներթափանցմանը Հայաստան:

Հայաստանում ասորական մշակույթի ազդեցությունը ուժեղացավ հատկապես քրիստոնեության ծավալման ժամանակաշրջանում: Քրիստոնեական նշանավոր կենտրոններ էին Մծբին և Եդեսիա քաղաքները, որտեղից ասորի քարոզիչները ժամանում էին Հայաստան՝ առևտրական քարավանների հետ միասին և ծավալում կրոնամշակութային բավական եռանդագին գործունեություն: III դարի սկզբներին, օրինակ եդեսիացի հռչակավոր գործիչ Բարդածանը Հայաստանում մաքառել է հե-

թանոսության դեմ, սակայն, հաջողություն չգտնելով, նվիրվել է գրական գործունեության, Անի ամրոցում ուսումնասիրել է հայոց թագավորների պատմությունը:

Ասորի քարոզիչները Հայաստանում հիմնեցին դպրոցներ, որտեղ ուսուցումը կատարվում էր ասորական լեզվով: Ընդունակ աշակերտները ուղարկվում էին Եդեսիա՝ Եփրեմ Ասորու հիմնած պարսկական դպրոցը: Հավանաբար հենց այդ միջավայրում առաջին անգամ զգացվեց հայ գրերի անհրաժեշտությունը, և Մեսրոպ Մաշտոցն իր մի քանի աշակերտների հետ ձեռնարկեց տաժանելի ճանապարհորդության՝ դեպի Եդեսիա, Ամիդ, Սամոսատ: Այդ քաղաքներում ստեղծվեց, հարդարվեց և վերջնական ձև տրվեց հայ նշանագրերին՝ Դանիել Ասորու, Հռոփանոս գեղագրի, և պարսկական դպրոցի ղեկավար Հիբայի աջակցությամբ: Ըստ Կորյունի, Եդեսիա են ուղարկվել Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներից Հովսեփն ու Եղնիկը «զի յասորական բարբառոյն զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն»: Ասորերենից հայերեն թարգմանված երկերը կարևոր դեր կատարեցին ոսկեդարի հայ գրականության ձևավորման գործում:

Դեռևս ուրարտական ժամանակներից մինչև 37 թվականի պարսկա-հռոմեական համաձայնագիրը, վերին Միջագետքի մի մասը՝ Միգդոնիան որոշ ընդհատումներով գտնվում էր Մեծ Հայքի սահմանների մեջ: Հայ պատմիչները Միգդոնիան անվանում են «Միջագետք հայոց», որն ընդգրկում էր Ամիդը (այժմ Դիարբեքիր), Մարդե բերդը (այժմ Մարդին), Տուր-Աբդին կամ Ծավդեք և Արուաստան գավառները՝ Մծբին կենտրոնով:

Սիրիայում հայկական հնագույն բնակավայրերի ձևավորմանը նպաստում էին հայոց արքաների կիրառած նորաստեղծ քաղաքների բնակեցման հելլենիստական մեթոդները: Դրանք կիրառվել են դեռևս Արտաշես I թագավորի ժամանակներից, սակայն խոշորագույն վերաբնակեցումները սերտորեն կապված են Տիգրան II արքայի անվան հետ: Հայտնի է, որ վերջինս Կիլիկիայից, Կապադովկիայից, Միջագետքից երեք հարյուր հազար հույներ, հրեաներ, ասորիներ վերաբնակեցրեց Հայաստանի քաղաքներում[6]: Նրա հրամանով, մի շարք նախարարական ցեղեր Հայաստանից տեղափոխվեցին հայկական պետության նոր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտ, որը կառուցված էր Աղձնիքի նահանգի հեռավոր անկյունում:

Հռոմեական աղբյուրների հաղորդումով, առաջին դարի կեսերին

Խառանից ոչ հեռու դաշտային և լեռնային վայրերում կային բազմաթիվ հայաբնակ գյուղեր[7]։ Հավանաբար հենց այդ ժամանակ էլ սկզբնավորվել են Սելևկիայի (այժմ Սվեդիա) և Կասիոսի (այժմ Քեսապ) մինչև օրս գոյատևող հայկական բնակավայրերը[8]։ Խառանը հանդիսանում էր հեռավոր Արևելքից Անտիոք տանող «մետաքսի ճանապարհի» գլխավոր հանգրվաններից մեկը՝ Մծբինի հետ միասին։

Փավստոս Բուզանդը, հիմք ընդունելով մի ժողովրդական ավանդություն, փորձում է ապացուցել, որ Օսրոենի թագավորության մայրաքաղաքի՝ Եդեսիայի կամ Ուռհայի հիմնադիրն եղել են հայերը («Ուռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց»)։ Դա, իհարկե ճիշտ չէ, սակայն խոսում է այն մասին, որ հայերը հնագույն ժամանակներից կազմում էին Ուռհայի ազգաբնակչության զգալի մասը։ I դարի վերջերից Եդեսիայում որոշ ժամանակ թագավորել է հայ Արշակունիների մի կողմնակի ճյուղը, և հավանաբար այդ ժամանակներից այստեղ բազմացել է հայ տարրը։ Սիրիական մի հին հիշատակարան Եդեսիայի բնակչության խառն կազմը բնորոշում է այսպես՝ «Պարթևներ կամ պարսիկներ, պարթևներ կամ եդեսիացիներ, պարթևներ կամ հայեր, այս բոլորը մեկ է»[9]։

Տիգրան II արքայի պարտությունից հետո Հայաստանը նախ դարձավ պարսկա-հռոմեական, հետագայում՝ պարսկա-բյուզանդական և արաբա-բյուզանդական պատերազմների ասպարեզ։ Ավերածության, կոտորածի և գերեվարության հետևանքով, հայ ժողովրդի մի մասը պարբերաբար դուրս էր մղվում հայրենի բնաշխարհից։

Ձգտելով միջազգային առևտրական ճանապարհների տիրապետությանը, 114 թ. Տրայանոս կայսրն ավերեց Սելևկիան, Մծբինը, Եդեսիան և Հայաստանը վերածեց հռոմեական նահանգի։ 163 թ. հռոմեացի զորավար Ստատիոս Պրիսկոսն ասպատակեց Արտաշատը և այլ քաղաքներ։ 228 թ. պարսից Արտաշիր արքան, արշավելով Հայաստան, «...զխօսուն և զանասուն, զծէր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ առհասարակ խաղացուցանէր ի գերութիւն»[10]։

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց (301) հետո սասանյան արքաները առավել վայրագությամբ էին ասպատակում հայոց աշխարհը։ 369 թ. Շապուհ II արքայի (310—379) զորքերը գրավեցին Արտագերս բերդը և, կողոպտելով հայոց թագավորի գանձերը, «եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ եւ առին զնա, եւ կործանեցին զպարիսպ նորա, առին անտի զգանձս մեծս որ կային եւ գերեցին զամենայն քաղաքն»։ Այնուհետև պարսիկները «զամենայն շի-

նուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, եւ զքարակերտն քանդեցին զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունեն»։ Ավերել են նաև Վաղարշապատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ, Վան քաղաքները և վերցրել բազմահազար գերիներ[11]։ Պարսիկները հայ գերիներին ուղարկում էին «յերկիր բաբելացւոց», «յամենայն Ասորիստան և Խուժաստան», մինչև Սագաստան և Շահուղ, Մեշովն ու Քաշկար գավառները[12]։

428 թ. Հայաստանը բաժանվեց երկու հզոր հարևանների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։ Պարսկաբյուզանդական երկդարյա տիրապետության ընթացքում Հայոց աշխարհը դարձավ հարատև ասպատակությունների և զանգվածային գերեվարությունների առարկա։ Բավական է նշել, որ այդ ժամանակաշրջանում տեղի են ունեցել պարսկաբյուզանդական չորս երկարամյա (շուրջ 100 տարի) պատերազմներ, հայերը ինն անգամ ապստամբություն են բարձրացրել Պարսկաստանի և Բյուզանդիայի դեմ։ Նվաճողների սփռած արհավիրքների հետևանքով, արտագաղթը դնալով ավելի ու ավելի մեծ թվով հայեր տանում էր հայրենիքից դուրս, դեպի Կիլիկիա, Միջագետք, Սիրիա, Պաղեստին և ավելի հեռուները։ Այդ վայրերում ստվարանում էին արդեն ձևավորված հայկական բնակավայրերը և ստեղծվում էին նորերը։ Դրանցից էր Երուսաղեմի հայկական համայնքը։

Անաստաս վարդապետի կազմած (VII դ. վերջերին կամ VIII դ. սկզբին) ցուցակից երևում է, որ հայերն ու աղվանները Պաղեստինում, մեծ մասամբ Երուսաղեմում ունեին յոթանասուներկու վանք և կուսանոց, որոնք կառուցված էին Արշակունի թագավորների ժամանակ՝ արքունի գանձարանի միջոցներով։ Սյունյաց, Մամիկոնեից, Ռշտունյաց, Պալունյաց, Անձևացյաց, Վանանդացյաց, Քաջբերունյաց և այլ նախարարական տոհմերից յուրաքանչյուրը կառուցել է մեկ կամ նույնիսկ մի քանի վանքեր։ Թե որքան բազմամարդ էին դրանք, ցույց է տալիս Հովհաննես Բ կաթողիկոսին գրված թուղթը, որը ստորագրել էին ապաշխարող հինգ հարյուր հայ իշխաններ։ Հնարավոր է, որ այդ վանքերի հետ են առնչվում Երուսաղեմում հայտնաբերված երեք խաչանկարները, որոնցից մեկը կրում է հայերեն, երկուսը՝ հայեր հիշատակող հունարեն արձանագրություններ։ Այսպես կոչված Արտավանի և Զիթենյաց լեռան խաչանկարները համարվում են V, իսկ ս. Պողիկտոսի մատուռում հայտնաբերվածը՝ VI դարի գործ[13]։

Հայաստանից արտագաղթն ու բռնագաղթը խոշոր չափեր ընդունեցին արաբական արշավանքների ժամանակաշրջանում։

Մինչև VII դարի վերջերն արաբական արշավանքները կրում էին ավարառուական բնույթ։ Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը, Եգիպտոսը և Պարսկաստանի մի մասը նվաճելուց հետո՝ 640 թ. արաբական զորքերը ներխուժեցին Հայոց աշխարհ, կողոպտեցին և ավերեցին Բզնունիք, Աղիովիք, Բերկրի, Կոգովիտ գավառները։ Ղևոնդ պատմիչը հաղորդում է, որ նրանք «բազումս յարանց ընդ սուր անցուցանէին, եւ զայլս գերի վարեալ կանամբք եւ մանկտեաւ անցուցանէին ընդ գետն Երասխ»[14]։ Համարյա անպաշտպան Դվին մայրաքաղաքում և նրա շրջակայքում՝ Բզնունիք, Աղիովիտ, Բերկրի, Կոգովիտ գավառները։ Ղևոնդ պատմիչը հարուստ ավար ու երեսունհինգ հազար գերի վերցնելով, վերադարձել Սիրիա[15]։

Երկրորդ արշավանքը (643 թ.) նույնպես սկսվել է Հայաստանի հարավային սահմաններից։ Արաբական զորքերի մի մասը շարժվել է դեպի Աղվանք, մյուսը՝ Այրարատ և կոտորած ու ավերածություն սփռելով տարել է «զաւար եւ զգերութիւն»[16]։ Թեոդորոս Ռշտունին ազատել է գերիների մի մասը, իսկ մնացյալը, ինչպես հաղորդում է Ղևոնդ պատմիչը, տարվել է Սիրիա[17]։

Թեոդորոս Ռշտունին, ելնելով Բյուզանդիայի և Խալիֆայության ուժերի իրական փոխհարաբերությունից, կողմնորոշվեց դեպի արաբները։ 652 թ. կնքվեց հայ-արաբական պայմանագիրը, որով հայերը հասան ներքին ինքնուրույնության՝ Խալիֆայության հովանավորության ներքո։ Սակայն կարճատև եղավ խաղաղությունը։ Հայ այրուձին արաբների կողքին կռվում էր Հայաստան արշավող բյուզանդական զորքերի դեմ, սակայն արաբները խախտեցին հայ-արաբական պայմանագիրը և վերսկսեցին ասպատակել Հայաստանը։ 654—656 թթ., որպես պատանդ, Դամասկոս ուղարկվեցին «զգլխաւոր իշխանս աշխարհին, և զկանայս և զուստերս և զուստերս բազմաց», թվով շուրջ երկու հազար մարդ[18]։

Հայաստանից վերցված գերիներին արաբները վաճառում էին Սիրիայում, Միջագետքում և խալիֆայության մյուս շրջաններում, իսկ պատանդներին պահում էին մայրաքաղաքում՝ Դամասկոսում։ Ս. Բարսեղի ճառերի թարգմանության մի երկաթագիր օրինակի հիշատակարանից կարելի է հետևցնել, որ VII դարի կեսերին Դամասկոսում առկա էր հայկական համայնք։ Այնտեղ ասված է. «Դաւիթ թարգման Տարաւնացի զճառս զայս յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ ի Դամասկացոց քաղաքին հրամանաւ Համազասպա Իւորապաղատի Մամիկոնէից տեառն»[19]։ Դավիթ Տարոնացին հավանաբար մեկն էր 654—656 թթ. Դամասկոս ուղարկված երկու հազար պատանդներից, որոնց

1775-ը կոտորվեց 659 թ., երբ Համազասպ Մամիկոնյանն ապստամբություն բարձրացրեց Հայաստանում[20]:

Հայաստանում ավերածության և գերեվարության արհավիրք սփռող արաբները, ելնելով Բյուզանդիայի դեմ պայքարում դաշնակիցներ ունենալու անհրաժեշտությունից, հովանավորում էին Սիրիայի, Միջագետքի և Բյուզանդիայից գրավված մյուս շրջանների հակաքաղկեդոնական հայերին: Օմար Խալիֆան (634—644) իրավունք տվեց Երուսաղեմից վտարված հայ, աղվան, ասորի և մյուս հակաքաղկեդոնականներին վերադառնալ Սուրբ քաղաք (Երուսաղեմ) և տեր կանգնել իրենց վանքերին, եկեղեցիներին, կալվածներին[21]: Հետագա տարիներին ևս արաբները հովանավորում էին հույն կղերից հալածվող հայերին: 711—713 թթ. նրանք Սիրիայում և Մելիտինեում տեղավորել են զգալի թվով հայեր, որոնք որպես աղանդավոր վտարվել էին Բյուզանդիայից:

VIII դարի սկզբին Հայաստանն ընկավ արաբական տիրապետության ներքո: 701 թ. Մուհամմեդ իբն-Մրվանը գրավեց Հայաստանի կենտրոնական շրջանները, Վրաստանի մի մասը և Աղվանաց աշխարհը: Մրվանն ավելի քան երկու տարի հրով ու սրով ասպատակեց Հայաստանը, «կոտորէր զայրս, եւ զկանայս եւ զմանկունս վարէր ի գերութիւն»[22]:

Հայաստանից դուրս մղելով հայ ազգաբնակչությունը, խալիֆաներն այնտեղ վերաբնակեցնում էին արաբական ցեղեր: Արաբական ստվար գաղութներ հրևան եկան Դվինում, Նախիջևանում, Արճեշում, Խլաթում, Բերկրիում և հայկական այլ քաղաքներում: Վերաբնակիչները, զավթելով և բաժան-բաժան անելով հայ նախարարների տիրույթները, ստեղծում էին մահմեդական ֆեոդալական իշխանություններ՝ հայկական հողերի վրա: Թովմա Արծրունին հաղորդում է. «...Սկսան այնուհետև աններկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն տաճկաց, որ եկեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, եւ ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս եւ արկանէին վիճակս, եւ լարս ձգէին ի վերայ սահմանաց, եւ բնակէին յամուրս աշխարհիս աններկիւղս, զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր անտի եւս աններկիւղ հաստատեցան»[23]:

Նվաճողների ստեղծած քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով, Հայաստանի բնակչության որոշ մասը մեծ խմբերով արտագաղթում էր: Ղևոնդ պատմիչը հաղորդում է. «Եւ բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս եւ զանդեայս, եւ գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղէտիցն»[24]: Փախչում

էին ոչ միայն հասարակ մարդիկ, այլև «ոմանք ի նախարարացն հայոց, որք մերժեալք լքին զժառանգութիւնս իւրեանց եւ փախստեայ անկան յաշխարհն յունաց ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»[25]: Պատմիչը հիշատակում է Հայաստանից արտագաղթող հայերի տասներկու հազարանոց մի մեծ խումբ, որին առաջնորդում էին Շապուհ Ամատունին և նրա որդի Համամը: Զանգվածային արտագաղթի փաստեր հաղորդում է նաև Կաղանկատվացին: Պատմելով Հայաստանում արաբների կատարած չարագործությունների մասին, նա գրում է. «...Սա (խալիֆան) նեղութիւն անչափ հասոյց աշխարհին եւ այնր բազում գաւառք հայոց փախեան ի Հոռոմս»[26]:

VIII դարի կեսերին Սիրիայում և հյուսիսային Միջագետքում հայերը կազմում էին բավական խոշոր թվաքանակ: XII դարի ասորի ժամանակագիր Դիոնիսոս Բարսալիբին հաղորդում է. «440 տարի առաջ (734) հայերն իջել են Սիրիա և գրավել են մեր երկրները, վանքերը, գյուղերը»: Հովհան Օձնեցի կաթողիկոսը (716—728) Սիրիա է ուղարկել երեք եպիսկոպոս, որպեսզի «Հայաստանից եկած հայերը» չհետևեն տեղի քաղկեդոնականներին կամ հուլիան աղանդավորներին: Հայերին տրամադրվել է մի վանք, որտեղ հայ և ասորի աշակերտները սովորում էին «երկու (ժողովուրդների) լեզուները»[27]: Նրանք էլ հետագայում «հայերեն թարգմանեցին» սիրիացի եկեղեցականների գործերը: Հետաքրքրական է նաև Բարսալիբիի հետևյալ վկայությունը. «Այսոեղացիների (հայերի) լեզուն նման չէ Հայաստանի հայերի լեզվին, սրանց լեզուն նման է ասորերենի»[28]: Դա նշանակում է, որ հայրենի բնաշխարհից հեռու ապրող հայերը պահպանել էին մայրենի լեզուն, բայց այն աղավաղված էր ասորերենի ազդեցության ներքո:

IX դարի կեսերից խալիֆայության ռազմական և քաղաքական հզորությունը գնալով թուլացավ: Նվաճված երկրները, թեև տակավին համարվում էին արաբական տիրապետություններ, սակայն փաստորեն չէին գտնվում խալիֆայի իշխանության ներքո:

XI դարի կեսերից անլուր կոտորածների, ավերածության, գերեվարությունների և զանգվածային արտագաղթի մի ահավոր ժամանակաշրջան բացվեց հայ ժողովրդի պատմության մեջ: Դա թուրք-սելջուկյան (1064—1220) և մոնղոլ-թաթարական (1220—1468) չորսդարյա տիրապետության ժամանակաշրջանն էր, երբ այնպիսի բարգավաճ քաղաքներ, ինչպիսիք էին Անին, Կարսը, Դվինը վերածվեցին գյուղերի,

հայոց աշխարհի բերրի դաշտերն ամայացան, դարձան արոտավայր քոչվոր անասնապահների համար։

1047 թ. թուրք-սելջուկները, առաջին անգամ արշավելով Հայաստան, ասպատակեցին «գաւառս քսան եւ չորս սրով եւ հրով»[29]։ Նկարագրելով Բասենի աղետը, պատմիչը գրել է.

Ա 11/47769

Քաղաքք մեր աւերեալք
Եւ տունք այրեցեալք,
Ապարանք հնոցեալք
Եւ արքունաշէն սրահք աճիւնացեալք։
Արք ի հրապարակս կոտորեալք
Եւ կանայք ի տանց գերի ելեալք,
Եւ կաթնասուն տղայք զբարի հարեալք,
Եւ գեղեցիկ դէմք պատանեկաց թառամեալք։
Կոյսք ի հրապարակս ի խայտառականս անկեալք,
Եւ երիտասարդք առաջի ծերոց սրախողխող եղեալք...[30]։

1048 թ. թուրք-սելջուկներն ասպատակեցին Կարինը, Խաղդյաց գավառը, Սպերը մինչև «յամուրս Տայոց եւ Արշարունեաց», կործանեցին Արծն քաղաքը և այլն։ Նրանք տղամարդկանց կոտորում էին, իսկ կանանց և երեխաներին վարում էին «ի գերութիւն յաշխարհն Պարսից»[31]։

Փախչելով սելջուկյան դժոխքի վերածված Հայաստանից, հայերը «հազարք առ հազարս եւ բիւրք ի բիւրս» գնում էին դեպի «յՈւռհա եւ յամենայն սահմանս նորա։ Եւ յԱնտիոք եւ յամենայն աշխարհն Կիլիկիեայ եւ մինչև ի Տարսոն եւ յամենայն աշխարհն Մարաշայ եւ ի Տլուք յամենայն սահմանս աշխարհացս այսոցիկ...»[32]։ Արտագաղթի հոսանքը քշում-տանում էր ոչ միայն հասարակ մարդկանց, այլև «արք մեծամեծք և փառաւորք, ազատք և իշխանք, և կանայք մեծաշուք»[33]։ Հայաստանը մարդաթափ էր լինում։ Հայրենի հողից զրկված հայ աշխատավորը, ստեղծագործ միտքը և իշխանական այրուձին հեռավոր վայրերում մտնում էին օտարների ծառայության մեջ։

XI դարում Սիրիայում և Հյուսիսային Միջագետքում կազմավորվեցին մի շարք հայկական իշխանություններ, որոնք գոյության ծանր պայքար պետք է մղեին ոչ միայն սելջուկների, այլև խաչակիրների դեմ։ Այդ պայքարից հաղթական դուրս եկավ միայն Կիլիկիայի լեռնաշխարհում հաստատված Ռուբենի իշխանությունը (1080—1198), որը և հետագայում դարձավ Ռուբինյանց թագավորություն։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2. ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՂԹՕՋԱՆՆԵՐԸ
XII—XIII դդ.

XII—XIII դարերում հայերը կազմում էին Սիրիայի ազգաբնակչության հիմնական տարրերից մեկը: Նրանք սփռված էին ամբողջ երկրով մեկ, սակայն հայկական առավել հոծ գաղթօջախները տեղաբաշխված էին հյուսիսային Սիրիայում, ներառյալ վերին Միջագետքը: Այնտեղ ընդարձակ տիրույթներ էին ձեռք բերել Պահլավունիները և Հայաստանից գաղթած այլ իշխաններ, ինչպես նաև բյուզանդական բանակի հայ զորականներ, որոնք արաբներից լքված բերդերում նշանակվել էին սահմանապահ ակրիտներ՝ սեփականատիրության ժառանգական իրավունքով:

1044—1045 թթ., երբ Հայաստանի վրա կախվել էր սելջուկյան վտանգը, Գրիգոր Պահլավունին բյուզանդացիներին էր հանձնել հայրենական Բջնին և փոխարենը ստացել «զպատիւ մագիստրոսութեան, եւ զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գեօղս եւ քաղաքս, զրով եւ ոսկի մատանեաւ յազգէ մինչև յաւիտեան»[1]: 1021—1022 թ. Բյուզանդիայի կարճամիտ քաղաքականության զոհ էին դարձել Վասպուրականի Սենեքերիմ թագավորը և նրա 400 հազար հպատակները: Կապադովկիական Սեբաստիայում վերաբնակվելուց հետո նրանք, ինչպես նշել է Միքայել Ասորին, «տարածվեցին ամբողջ Կապադովկիայում, Կիլիկիայում և Սիրիայում»[2]:

Մանազկերտի ճակատամարտում (1071) Բյուզանդիայի կրած պարտությունից հետո բյուզանդական բանակի նախկին հայ աստիճանավոր Փիլարտոս Վարաժնունին, հայկական մանր իշխանությունները միավորելով, ստեղծեց մի ընդարձակ պետություն, որը տարածվում էր Մեծ Հայքից մինչև Անտիոք՝ Մարաշ կենտրոնով: Բյուզանդական կայսրը ճանաչեց Փիլարտոսի նվաճումները, սակայն նրա հաջողությունը կարճատև եղավ: Կ. Պոլիսը նվաճելու ապարդյուն փորձերից հետո սելջուկները արշավեցին Սիրիա, և Փիլարտոսի պետությունը (1071—1086) տրոհվեց մանր իշխանությունների՝ զգալի թվաքանակ կազմող հայ ազգաբնակչությամբ:

Դրանցից էր Ուռհայի կամ Եդեսիայի իշխանությունը, որի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին ասորիները և հայերը: Մինչև 944 թվականը Ուռհան մնացել էր արաբական տիրապետության ներքո: XI դարի սկզբներից Բյուզանդիան Ուռհան կառավարում էր մեծ մասամբ հայ իշխանների միջոցով: Ուռհայի կառավարչի պաշտոնում հիշատակվում են Աբուկապը, նրա որդի Վասիլը, Սմբատը և ուրիշ հայ

իշխաններ։ 1083 թ. Փիլարտոս Վարաժնունին, գրավելով Ուռհան, նրա կառավարիչ նշանակեց Թորոս կյուրապաղատին։ Որպես հայահոծ կենտրոն, Ուռհայում հաստատված էր եպիսկոպոսական աթոռ։ 1103 թ. Բարսեղ Անեցի կաթողիկոսը «ամենայն պաշտօնէիւք իւրովք եւ աղատօք, եպիսկոպոսօք եւ քահանայիւք» այցելել է Ուռհա, և մեծարվել «մեծաւ պատուով՝ որպես վայել է հայրապետի»[3]։

Հայերի դարավոր գաղթավայր էր Սամոսատը կամ Շամշատը։ 958 թ. բյուզանդացիները, արաբներից գրավելով Սամոսատը, այնտեղ վերաբնակեցրին զգալի թվով հույներ և հայեր։ Միքայել Ասորին Սամոսատի հայ իշխաններից հիշատակում է Կոստանդինին, Դավթուկին և Սմբատի որդի Քրիստափորին, որոնք տիրում էին նաև Հարևան Մար Բարսումայի վրա։ XI դարում Սամոսատում էր հաստատված բյուզանդական զորքի արևելյան հրամանատարության զորակայանը, որտեղ դիմեց Պետրոս Գետադարձ կաթողիկոսն Անին հույներին հանձնելու համար։ Սամոսատին հետագայում տիրել են մեկ սելջուկները, մեկ խաչակիրները, սակայն հայերը միշտ էլ կազմել են նրա բնակչության զգալի մասը։ Ըստ արաբ աշխարհագիր Յակուտ ալ-Համավիի, XIII դարի սկզբներին Սամոսատի բնակիչները հայեր էին[4]։

Թլպաշար հինավուրց բերդաքաղաքը կառուցված էր Այնթապից ոչ հեռու, Սաջուր գետի ափին։ XI դարում վասակ և Լիկոս Պահլավունիները, Թլպաշարը գրավելով սելջուկներից, այնտեղ հաստատեցին իրենց սերնդի բնակավայրը։ Ըստ Յակուտի, XIII դարի սկզբներին Թլպաշարի «բնակիչները քրիստոնյա հայեր» էին[5]։

Բիր կամ Բիրեջիկ քաղաքը գտնվում է Եփրատ գետի արևելյան ափին՝ Ուռհայի և Թլպաշարի միջև։ Վասակ Պահլավունու որդիները՝ Աբլղարիբ և Լիկոս իշխանները սելջուկներից խլեցին Բիրը և «շինեցին իւրեանց բնակարան, վասնզի էին քաջք եւ անուանիք պատերազմողք, ունեին իւրեանց զօրականս արս հազար»[6]։

Թլկուրան ավանը տեղադրված էր Ուռհայից հարավ, Շղպըթան գավառում։ Ներսես Շնորհալին իր եղբոր՝ Գրիգոր Կաթողիկոսի (1113—1166) հրամանով մի ընդհանրական թուղթ է գրել Թլկուրան ավանի հայ իշխան Առյուծին («ի խնդրոյ ուրումն աստուածասիրի Առիւծ կոչեցեալ իշխանի Թլկուրան աւանի») դավանաբանական այն վեճերի վերաբերյալ, որ ծագել էին Միջագետքի մի քանի գավառների միջև[7]։

Զգալի թվով հայեր կային Խառանում, Սրուճում, Ամիդում, Մարդինում, Մծբինում, Մոսուլում և այլ վայրերում։

Սիրիայի հայահոծ քաղաքներից էր Անտիոքը: Ըստ Լորանի, XI դարում նրա բնակչության «տիրող տարրը»[8] կազմում էին հույները և հայերը: Խաչիկ կաթողիկոսը (973—992) այդ քաղաքում հաստատել է եպիսկոպոսական աթոռ, որը և շարունակվել է ընդհուպ մինչև XIII դարի կեսերը: Անտիոքը կառավարում էին ինչպես հույն, այնպես էլ հայ իշխանները (Աբբաս իշխանը՝ 1059—1060, Վահտ Խաչատուր Անեցին՝ 1068—1071, Վասակ Պահլավունին՝ 1071—1078): Վերջինիս սպանությունից հետո «ազատագունդքն Վասակայ կոչեցին զՓիլարտոս, եւ տան Անտիոք ի ձեռս նորա»: Առանց կռվի գրավելով քաղաքը, Փիլարտոսը հռչակվել է «դուքս Անտիոքի»[9]:

Ճնշող մեծամասնությամբ հայաբնակ էին Անտիոքի հարևան Սելևկիան (Սվեդիա), Կասիոսը (Քեսապ), Ալեքսանդրետը, Շուղրը և նրանց շրջակա գյուղերը: 1099 թ. «Ահարովն կրոնաւոր» մի ավետարան է ընդօրինակել «ի մայրաքաղաքն Աղեկսանդրու, ընդ հովանեաւ Յովհաննու Աւետարանչին»[10]: Մինչև օրս էլ պահպանված հայկական՝ թեև աղավաղված տեղանունները խոսում են այն մասին, որ հայություն է եղել նաև այլ վայրերում: Դրանցից են Էնկիզեկը (Ընկուզեկ լեռ կամ Ընկուզուտ վանք), Պերթեզը (Բերդոս կամ Բերդ), Ֆեննկը (Վանք), Կերճիկինը (Կարճկան), Մազմախորը (Բազմախոռ), Պետերքենտը (Պետրոսի գյուղ) և այլն:

XII—XIII դարերում հայկական գաղթօջախներ ձևավորվեցին նաև Լաոդիկիայում, Հոմսում, Տրիպոլիում, Ակրայում և այլ վայրերում: 1179թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշատակվում են Լաոդիկեի և «Ապամիա Ասորւոց» (Հոմս) հայոց եպիսկոպոսները: Նկարագրելով Հոմսի գրավումը (1298), Աբու՛լ Ֆիդա արաբ պատմիչը նշում է, որ «բերդում ապաստան էին գտել բազմաթիվ հայեր» իրենց երեխաների և կանանց հետ[11]: Ըստ լատինական աղբյուրների, XIII դարում Տրիպոլի նավահանգստային քաղաքի բազմազգ բնակչության հիմնական տարրերից էին հայերը: Պտղոմեում կամ Ակրայում հիշատակվում է հայկական հյուրատուն, որը 1190 թ. Գի Դե Լուզինիանի կողմից նվիրաբերվել է Տևտոնյան ասպետներին: XIII դարի կեսերին՝ երուսաղեմի անկումից հետո խաչակիրների գլխավոր կենտրոնը դարձած Ակրայի հայկական գաղթօջախը կազմակերպվել է որպես ուրույն համայնք և ունեցել իր իշխանը[12]:

XII—XIII դարերում հայերի հոսքը հասավ մինչև Պաղեստին: Լատինական արքունիքում կային բազմաթիվ հայ իշխանուհիներ (մի քանիսը մինչև անգամ բարձրացել են թագավորական գահ) և զգալի թվով

հայեր ընդգրկված էին բանակում։ Երուսաղեմում հայերն ապրում էին մի քանի առանձին թաղերում, որոնցից մեկը կոչվում էր Ոյուգա Արմենօրիում։ Հայկական փոքրիկ գաղթօջախներ կային նաև Կերակում, Սալթում; Պաղեստինյան Կեսարիայում (այժմյան Գազա) և այլ վայրերում։

Սիրիայի և Միջագետքի հայկական գաղթօջախների տնտեսության հիմքը կազմում էր երկրագործությունը։ Այգեգործությունը և պտղաբուծությունը հասել էին զարգացման բավական բարձր աստիճանի։ Հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների ընդարձակ տիրույթներում աճում էին խաղողի այգիներ և պտղատու ծառեր. «թզենիս եւ ընկուզենիս, սերկևիլիս եւ սալորիս, մշմշիս եւ արքակաղնիս»։ Այգիները լավ մշակելուց, փորելուց, ոռոգելուց, պարարտացնելուց բացի կիրառվում էր մրգատու ծառերի և որթատունկերի պատվաստում։ Ներսես Շնորհալին գանգատվում է, որ կրոնավորները «փոխանակ զարուեստս առաքինութեան ուսանելոյ ի միմեանց՝ յայգեգործութեան հնարս վարժին անհմուտք ի համատգունին»։ Նրանք գործադրում էին պատվաստի ձևեր «մի քան զմին առաւելեալ ի հանճար» և կարողանում էին «զանազան հնարիւք բժշկել ի պատահելոց կրից»։ Բավական զարգացած էր շերամապահությունը, ինչպես և երկրագործական մթերքների վերամշակումը, առանձնապես գինեգործությունն ու ձիթհանությունը։

XIII դարի եվրոպացի ճանապարհորդ Մարկո Պոլոն հիշատակում է Մարդին քաղաքի շրջակայքում մշակվող բամբակի մասին, որից տեղի բնակիչները պատրաստում էին բեհեզներ և այլ գործվածքներ[13]։ Հայերը պատրաստում էին նաև մետաքսյա և բրդյա գործվածքներ, որոնց պահանջարկը, ինչպես նշել է Վ. Հեյդը, մեծ էր Եվրոպայում։ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակներում նշվում են՝ ոսկեգործ, արծաթագործ, երկաթագործ, դարբին, հյուսն, բրուտ, խաղախորդ (կաշեգործ), մորթեգործ, կոշկակար, կտավագործ, կարող (դերձակ) և այլ արհեստի անձինք։

XI—XII դարերում քարավանային առևտուրն այնպիսի վերելք ապրեց, որի մասին մինչ այդ «երազելն անգամ անհնարին էր»[14]։ Սիրիայի ծովեզերյա քաղաքներում առևտրական լայն գործունեություն ծավալող խաչակիրները ներքին Սիրիայում կռիվներ էին մղում գրաված քաղաքների, բերդերի և դղյակների պաշտպանության համար։ Իրավացիորեն Վ. Հեյդը նշել է. «Ջենք տեսնում, որ վենետիկցի, ճենովացի և պիզացի առևտրականներն իրենց բախտը փորձած լինեն Եփրատի ափե-

բին։ Այնտեղ առևտրով զբաղվում էր միայն ճնշող մեծամասնությամբ քրիստոնյա ասորիներից և հայերից բաղկացած տեղական բնակչությունը»[15]։

Միջագետքի և Սիրիայի հայկական գաղթօջախները խուլ անկյուններ չէին, այլ բավական զարգացած առևտրաարհեստագործական կենտրոններ։ Տլուքում արտասանած մի քարոզում («Դուք դասք կանանց») Վարդան Այգեկցին հանդիմանում է կանանց, որ զարդարվում ու պճնվում են, երեսները շպարում, ունքերին դեղ դնում, որպեսզի գեղեցկանան ի գայթակղություն երիտասարդների, կամ դեղերով իրենց զրկում են երեխա բերելու ընդունակությունից և նույնը սովորեցնում ուրիշներին։ Մի ուրիշ քարոզում («Դուք դասք արանց») նա դժոխքի տանջանքներով սարսափեցնում է վաշխառուներին, մշակի վարձը կտրողներին, նրանց, որ զրկում են որբերին, այրիներին կամ տնանկներին, կամ խափտում չափ ու կշռի մեջ, նրանց, որ կաթի ու դինու մեջ ջուր են խառնում և այնպես վաճառում։

Սիրիայի հայ հասարակության շահագործող դասերն էին իշխանները, զինվորական և վարչական բարձր պաշտոնյաները, հոգևորականները, ինչպես և քաղաքների զարգացման շնորհիվ առաջացած վաճառականների և վաշխառուների վերնախավը, որը հայտնի է «մեծատունք» անունով։ Քաղաքների և գյուղերի բնակչության հիմնական զանգվածը՝ արհեստավորները, շինականները և մանր առևտրականները կազմում էին ստորին կամ ռամիկների դասը։

Ֆեոդալական իշխող երկու դասերի՝ աշնվականության և եկեղեցականության կողքին նոր դասակարգի՝ հարուստ մեծատունների հանդես գալը նպաստեց ռազմիկ ֆեոդալների իշխանության և իրավունքների սահմանափակմանը, քաղաքային ինքնավարության առաջացմանը։ XI դարից Սիրիայի և Միջագետքի քաղաքներում գործում էին ավագների կամ ծերերի խորհուրդները։ Ուռհայեցին հաղորդում է, որ սիդոնացիք «զծերս քաղաքին իւրեանց» ուղարկեցին բանակցելու Ջմշկիկ կայսեր հետ՝ քաղաքի հանձնման և հարկերի վճարման մասին[16]։

Ուռհայի բնակիչները ևս ունեին ինքնավարական իրավունքներ։ 1083 թ., երբ Ուռհայի տեր Վասիլ իշխանը մեռնում է, ժողովուրդը հավաքվում է մայր տաճարում՝ որոշելու, թե ում պետք է հանձնել քաղաքը։ Պատմիչն ասում է. «Եւ արարին ժողով ամենայն քաղաքն ի սուրբ Սոփի և տան զքաղաքն Ուռհա ի ձեռն Սմբատայ...»[17]։

Որպես հողի սեփականատեր, իշխող դասերը ճնշում և կեղեքում

էին աշխատավոր բնակչության։ Ներսես Շնորհալին կշտամբում է իշխաններին, որ նրանք ուժից վեր հարկեր են սահմանում, նեղում են աղքատներին և տնանկներին, կաշառք են վերցնում, մարդկանց աշխատեցնում են առանց կերակրելու, վարձկանների վարձն են կտրում, աղքատների ինչքն են հափշտակում, նրանց առանց դատի պատժում, դնում են բանտի ու կալանքի մեջ[18]։ Նա գրում է, որ իշխանները ասում էին՝ «զի եթե ոչ զրկեմք եւ ոչ յափշտակեմք, զիշխանութիւն մեր ոչ կարեմք հաստատուն պահել»[19]։

Իշխող դասերի կատարած անօրինությունների մասին հաղորդում է նաև Ուռհայեցին. «ի թագաւորաց եւ յիշխանաց եւ յառաջնորդաց ապականելոց է երկիր։ Առաջնորդքն եւ իշխանքն լինելոց են կաշառասէրք եւ ստախօսք, եւ սուտերդմունք եւ ի ձեռս կաշառացն թիւրեն զդատաստանս իրաւանցն աղքատին»[20]։ Կաշառքով անարժան մարդկանց «ածեն զնոսա ի կարգս քահանայական եւ զամենայն մերժեալսն գլուխ եւ առաջնորդ կացուցանեն ի վերայ ժողովրդեանն...»[21]։

Աշխատավոր բնակչության անտանելի վիճակի վերաբերյալ տեղեկություններ կան Վարդան Այգեկցու առակներում։ «Աղօթք աղքատի» առակի բարոյականում ասված է. «Ցուցանէ առակս, թէ աղքատքն տառապին վասն չքաւորութեան եւ խնդրեն ինչք եւ ստացուած ի յաստծոյ. եւ թագաւորքն եւ բռնաւորքն զինչ ունի, զան ալ կողոպտեն եւ թալանեն»[22]։ Մի ուրիշ առակում («Իշխան եւ այրի») ցույց է տրվում, որ իշխողները մեկը մյուսից ավելի դաժան են դառնում և ավելի վատթարանում է աղքատների տնտեսական դրությունը։ Մի այրի կին աղոթում է, որ երկար ապրի քաղաքի «յոյժ չար ու անիրաւ» իշխանը։ Վերջինս, երբ հարց է տալիս՝ «ես քեզ լաւ չեմ արարել, դու ինձ համար էՙր կու աղաւթես», այրին պատասխանում է. «Քո հայրն վատ մարդ էր, ես անիծեցի, նա մեռաւ, դու նստար ի նորա տեղն այլ աւելի խիստ չար. կու վախեմ, թէ մեռանիս, նա քո որդին այլ աւելի խիստ լինի չար»[23]։ Այգեկցու առակներում խարազանվում են նաև առևտրավաշխառուները, որոնք «ծըծեն զղուզս ժողովրդեան. եւ շատ պատահի, որ աղքատն ի նեղեալ վշտացն մեռանի»[24]։

Սիրիայի հայկական գաղթօջախներում տեղի ունեցած սոցիալական շարժումների վերաբերյալ պահպանվել են խիստ սակավ և պատահական տեղեկություններ։ Թոնդրակյան շարժումը, որ լայն ծավալ էր գտել Արևմտյան Հայաստանում, ներթափանցել էր Միջագետքի, հավանաբար և Սիրիայի հայկական գաղթօջախները։ Գրիգոր Մագիստրոսը հաղորդում է. «Եւ եկեալ ի Միջագետս, հանդիպեցայ մահաբեր եւ մրրկեալ

պղտորեալ վտակաց, որ հոսէր մահացու արտաթորեալ յանիծելոյն Սմբատայ, որ ի Թոնդրակաց»: Տեսնելով աղանդի ծավալման խոշոր չափերը, նա, որպես Միջագետքի կառավարիչ, հալածանք է սկսում թոնդրակեցիների դեմ: Չնայած նրա հավաստիացմանը՝ «մաքրեցի զամենայն որոմն չարութեան եւ պղծութեան», թոնդրակյան աղանդը գաղտնի շարունակում է հարատևել Միջագետքում:

Վարդան պատմիչի մոտ պահպանվել է մի տեղեկություն, որն ակներևորեն վերաբերում է թոնդրակյան շարժման դրսևորման ձևերից մեկին: XII դարի կեսերին «...եղեւ սով սաստիկ ի Միջագետս, եւ քահանայ մի Աւետ անուն հայ ազգաւ» իր փոքրիկ ունեցվածքը բաժանում է աղքատներին, և «շրջէր քարոզութեամբ ընդ քաղաքս եւ ընդ գեօղս... եւ ղղջացեալ ի բանս նորա՝ դառնային բազումք ի չարեաց. եւ խնամ ածէր որբոց եւ այրեաց, լնլով զկարիս նոցա իւրով միջնորդութեամբ ի կարողացն: Եւ էլ համբաւ զնմանէ. եւ գային յարէնային ի յոլովութիւնք ժողովոց...»[25]: Ունևորները իրենց ունեցվածքից աղքատներին բաժին էին հանում ոչ թե ողորմությամբ, այլ ակամայից, տեսնելով «ժողովոց յոլովութիւնք»[26]: Վերջում Ավետը քարկոծվում է իշխող դասի սադրանքներով:

Միջագետքում տարածված էր նաև արևորդիների աղանդը, որի կենտրոնն էր Սամոսատ քաղաքը: Արևորդիները, «ազգաւ եւ լեզուաւ ի տոհմէն հայոց» էին, սակայն չէին ենթարկվում հայ եկեղեցու իշխանությանը: Հետագայում արևորդիների մի մասը «դարձի» է եկել, իսկ մնացյալը շարունակել է իր գոյությունը մինչև առաջին համաշխարհային պատերազմը:

XI դարի վերջերին Միջերկրական ծովի Արևելյան ավազանի երկրներում միջազգային բարդ իրադրություն ստեղծվեց: Գրավելով Բաղդադը, գրեթե ամբողջ Փոքր Ասիան, Սիրիան և Պաղեստինը, թուրքսելջուկներն արդեն սպառնում էին Բյուզանդիայի մայրաքաղաքին: Ալեքսիոս I Կոմենոս կայսրը դեսպաններ ուղարկեց Արևմտյան Եվրոպա՝ կաթոլիկ եկեղեցու միջնորդությամբ նորման, անգլոսաքսոն, դանիացի վարձկաններ հավաքագրելու համար: Այդ դիմումներն առիթ տվին եվրոպական ասպետներին, խոշոր ֆեոդալներին սկսելու և գրեթե երկու հարյուրամյակ (1096—1270) շարունակելու խաչակրաց արշավանքները:

Խաչակրաց արշավանքներին մասնակցում էին խոշոր ու մանր ֆեոդալներ, գյուղացիական խայտաբղետ զանգվածներ: Նրանց նպա-

տակները խիստ տարբեր էին։ Հողի, աշխատուժի և դրամական միջոցների սուր պակասություն զգացող մանր ասպետներին դեպի Արևելք էր մղում նոր հողեր գավթելու ու կողոպուտների միջոցով հարստանալու ձգտումը։ Խոշոր ֆեոդալները ձգտում էին Արևելքում ձեռք բերել նոր տիրույթներ և ուժեղացնել իրենց թուլացող քաղաքական ազդեցությունը։ Ինչ վերաբերում է գյուղացիական զանգվածներին, ապա նրանք հույս ունեին «ծովից այն կողմ» գտնվող երկրներում ազատագրվել ճորտատիրական կապանքներից և բարելավել իրենց դրությունը։

Փոքր Ասիայի, Կիլիկիայի և Սիրիայի քրիստոնյաները, հատկապես հայերը, խաչակիրներին համարելով ազատարարներ, նրանց ընդունում էին սրտաբաց, ընձեռում ամեն հնարավոր օգնություն։ Լատին ժամանակագիր Ֆուլչերը հաղորդում է. «Ճանապարհին, դուք պիտի զարմանայիք տեսնելով հայերը, որ համեստորեն դուրս կուգային դիմավորելու մեզ, խաչեր ու դրոշակներ կրելով. անոնք կհամբուրեին մեր ոտքերը և քղանցքները՝ աստուծո սիրույն, քանի որ գիտեին թե մենք պիտի պաշտպաններնինք զիրենք թուրքերու դեմ, որոնց լուծին տակ անոնք երկար ժամանակ ճնշված էին»[27]։

Արևելքի քրիստոնյաները, կառչելով խաչակիրներին որպես փրկության լաստ, նույնիսկ ընդգրկվել են նրանց ջոկատներում և կռվել թուրք-սելջուկների դեմ։ Պատմելով առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցների Անտիոք ժամանման մասին, Ֆուլչերն ասում է. «Ո՞վ լսած է լեզուներու այսպիսի խառնուրդ մը մեկ բանակի մեջ։ Հոն էին ֆրանկները, ֆլամանները, նորմաննները, անգլիացիները, իտալացիները, հույները, հայերը,...»[28]։

Հայ իշխանները, ընդառաջելով խաչակիրների խնդրանքին, ցույց են տվել Անտիոք տանող անվտանգ ճանապարհը։ Սմբատ Սպարապետը նշել է. «Կոստանդին որդի Ռուբենի, և իշխան Ուռհայոց Թէոդորոս ազդ արարեալ թղթով իշխանացն եկելոցն ի Հռոմայ, ... գալ յայս կոյս ի վանումն այլասեռիցն. եւ նոքա սոցա յորդորմամբ խաղացեալ անհուն բազմութեամբ անցին ընդ կապանն Պոնտացւոյ...»[29]։ Ուռհայեցու հաղորդումով, հայերն օգնության են հասել նաև Անտիոք քաղաքի երկարատև պաշարման մասնակցող խաչակիրներին, որոնց սպառնում էր սովամահությունը. «Իսկ ի բազմութենէ զօրացն վտանգ հասանէր պատրացն ի հացէ, եւ նեղէին ի կերակրոց, եւ յայնժամ իշխանքն որ կային բնակեալ Տօրոս լեառն, Կոստանդին որդին Ռուբինայ, եւ երկրորդ իշխանն Բազուլի, եւ երրորդ իշխանն Օշինն, սոքա զամենայն կարիս կերակրոյ առաքէին առ զօրապետն փոանգաց, նոյնպէս եւ վանորայքն

Սեւ լերինն կերակրօք օգնէին նոցա, եւ ամենայն ազգք հաւատացելոցն բարեկամութիւն ցուցանէին առ նոսա»[30]։

Հայերի օգնութիւնը բարձր է գնահատվել կաթոլիկ եկեղեցու կողմից։ 1584 թ. Հռոմի հայկական ճեմարանի հիմնադրման առթիվ տված կոնդակում Գրիգոր ԺԳ պապը (1572—1585) գրել է. «...մեծ ևս է այն գործը, զոր հայերը կատարեցին այն ատեն, երբ քրիստոնյա իշխաններ ու բանակներ գացին սուրբ երկիրը ազատագրելու, քանի որ ոչ մեկ ազգ եւ ոչ մեկ ժողովուրդ այնպիսի յօժարութեամբ ու խանդավառութեամբ փութացին անոնց օգնութեան, ինչպես ըրին հայերը, որոնք զօրքով եւ ձիերով, զենքով ու դրամով, խորհուրդներով եւ ամեն ձեւի նպաստներով, քաջութեամբ ու հաւատարմութեամբ ձեռնտու եւ զօրավիճ եղան քրիստոնեաններուն, այդ մեծ ու կարևոր պատերազմին»[31]։

Խաչակիրները, սակայն, մի քիչ ամրանալուց հետո սկսեցին հայերին ճնշել և խլել նրանց բերդերն ու տիրույթները։ Ուռհայեցին հաղորդում է թե, ինչպես էին նրանք ոչնչացնում հայ իշխաններին. «Նա (Բոլդուինը) եւ այլ բազում եւ գեղեցիկ իշխանք ի բանտ եւ ի չարչարանս եւ ի կապանս մեռուցանէր. եւ բազումք այն էին որոց զաշխարհս տաւարեցուցեալ էին, զձեռն կտրեալ եւ զունչն հատեալ. հատանէին զերանսն եւ ի փայտ հանեալ սպանէին զտղայսն վասն ծնողացն խրատեալ հրամայէին։ Եւ այսպիսի գործս անթուելի եւ անպատմելի ... զբազում անիրաւութիւնս նոցա կամէի գրել, բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»[32]։

Խաչակիր ասպետների առաջին զոհերից եղավ Եդեսիա կամ Ուռհա քաղաքը։ 1098 թ. մարտին խաչակրաց գլխավոր ուժերից անկախ գործող ասպետական ջոկատներից մեկի առաջնորդը՝ Բոլդուին Ֆլանդրացին գրավեց Եդեսիան և, նրան միացնելով Սամոսատը, Սրուճը, Թլպաշարը և այլ քաղաքներ ու բերդեր, ստեղծեց խաչակրաց առաջին պետությունը՝ Եդեսիայի կոմսությունը։ Ուռհայեցին բավական մանրամասն նկարագրել է, թե ինչպես Բոլդուինի կազմակերպած դավադրությունը «մանեյան բազմութիւն քաղաքին» հանել է Թորոս Կյուրապաղատի դեմ։ Վերջինս ճարահատ համաձայնվում է քաղաքը հանձնել, պայմանով, որ խնայեն իր կյանքը։ Բոլդուինն երդվում է պաշտպանել նրա կյանքը, սակայն դրժում է խոստումը, և դավադիրները Թորոս Կյուրապաղատին նետում են պարսպից ծաց, որտեղ նրա թշնամիները «չարաչար մահուամբ եւ բազմախոց սուսերօք սպանանէին զնա..., եւ պարան կապեցին յոտս նորա եւ խայտառականօք քարշէին զնա ընդ

քաղաքամէջս, եւ յայսմ աւուր ուրացան զերդումն զոր եդին, եւ յետ այսորիկ տան զՈւռհա ի ձեռս Պաղտին կոմսին»[33]:

Նույն տարվա հուլիսին հայերի ձեռքից հափշտակվեց նաև Անտիոք քաղաքը, որը Միջերկրական ծովի արևելյան ավազանի ամենանշանավոր քաղաքներից էր: Ավելի քան կես տարվա պաշարումից հետո խաչակիր ասպետները գրոհեցին քաղաքի վրա, գրավեցին այն և վայրագ կոտորածի ենթարկեցին բնակչությանը: Արյունահեղության ականատես լատին ժամանակագիրը նշել է, որ Անտիոքի փողոցներում կարելի էր քայլել միայն դիակների վրայով...:

Անտիոքում հիմնադրվեց խաչակիրների երկրորդ պետությունը՝ Անտիոքի իշխանությունը՝ որի գլուխ կանգնեց Բոհեմունդ Տարենտացին:

Խաչակիրները Սիրիայից շարժվեցին դեպի Պաղեստին և հինգշաբթյա պաշարումից հետո՝ 1099 թ. հուլիսին գրավեցին Երուսաղեմը: Խաչակիր ասպետները դերազանցեցին այդ քաղաքում մի քանի դար առաջ արաբական նվաճողների կատարած ասպատակությունները: Կոտորվեց շուրջ յոթանասուն հազար մուսուլման և հրեա, այդ թվում կանայք, երեխաներ, ծերեր: Ըստ լատին ժամանակագրի, քաղաքի փողոցներում, հրապարակներում թափված էին դիակներ, կտրված գլուխներ, ձեռքեր, ոտքեր...: Կոտորածին ուղեկցեց կողոպուտը: Խաչակիր ասպետները հափշտակեցին այն ամենը, ինչ դուռն քաղաքացիների տներում:

Երուսաղեմի գրավումից հետո խաչակիրները, նվաճելով Ակրա, Տյուրոս, Տրիպոլի և այլ նավահանգստային քաղաքներ, հիմնեցին ևս երկու պետություն՝ Երուսաղեմի թագավորությունը և Տրիպոլիի կոմսությունը:

Խաչակիրների չորս պետությունները զբաղեցնում էին Միջերկրական ծովի ափին հյուսիսից հարավ ձգվող գրեթե 1200 կմ երկարությամբ մի նեղ շերտ, որը քիչ տեղերում միայն տարածվում էր երկրի խորքերը: Այդ երկրամասի պաշտպանության համար անհրաժեշտ էին մեծ ուժեր, մինչդեռ խաչակրաց պետությունները թույլ էին շաղկապված միմյանց հետ և անվերջ պայքարում էին իրար դեմ, երբեմն նույնիսկ դաշինք կնքելով մուսուլման իշխանների հետ: Նրանց իշխանությունն ամուր չէր: Հարավից նրանց սպառնում էր Եգիպտոսը, հյուսիս-արևմուտքից՝ Փոքր Ասիայում հաստատված թուրք-սելջուկները, արևելքից՝ այն բազմաթիվ մանր իշխանությունները, որոնց գլուխ կանգնած էին տեղական արաբ ֆեոդալները կամ թուրք-սելջուկյան կառավարողները: Ջեզիրայում իշ-

խում էին օրդոկյանները, Հալեպում՝ սելջուկ Ռեդվանը, Հոմսում՝ խալաֆ իբն Մուալիբը, Դամասկոսում՝ Դուկաքը և այլն։

Բացի այդ, խաչակիրներից աստիճանաբար երես էին դարձնում քրիստոնյա, այդ թվում և հայ ազգաբնակչությունը։ Օրինակ, արաբ ժամանակագիր Իբն ալ-Ղալանիսին հաղորդում է, որ 1104 թ. հունիսին Արթայում (այժմ Ռիհանիե) հայերը, ապստամբել են «ֆրանքների անարդարությունների և բռնությունների» դեմ, և քաղաքը հանձնել Հալեպի տիրակալ Ռեդվանին։ 1106 թ. Անտիոքի մերձակա Արտաշիա քաղաքի կամ շրջանի հայերը, միաբանելով մուսուլմանների հետ, ապստամբել են չաուլի իշխանի դեմ։ Ուռհայեցին նշել է, որ ֆրանկների զորահրամանատարը «լուսալ զայս սրտմտեալ որպէս զչար գազան եւ ելեալ ի պատերազմ ի վերայ քաղաքացեացն. յայնժամ բաղաքացիքն յաղթեալ նոցա եւ կոտորեցին զնոսա առհասարակ, որ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի»[34]։

Խառանի ճակատամարտում (1104 թ. մայիս) խաչակիրների կրած ծանր պարտությունից[35] հետո հյուսիսային Միջագետքում նախաձեռնությունը հիմնականում անցավ թուրքական և արաբական էմիրների ձեռքը։ Այնուհետև նրանք հաճախ ներխուժում էին Եդեսիայի կոմսության սահմանները և սփռում կոտորած ու ավերածություն։ 1110 թ. Մոսուլի և Խլաթի էմիրների միացյալ զորքերի հարձակումը թողեց առավել աղետաբեր հետևանքներ։ Մինչև Երուսաղեմից օգնական ուժերի ժամանելը, Խլաթի էմիր Սուկմանը «կոտորեաց առհասարակ զամենայն դրախտին քաղաքին որ կայր արտաքոյ եւ հիմն ի վեր արար զամենայն վանորայսն, որք էին ի լերինս, եւ այսպիսի օրինակաւս կայր Ուռհա ի մեծ նեղութեան»[36]։

Դրանով սակայն չի ավարտվել Եդեսիայի ժողովրդի ողբերգությունը։ Օգնության հասած խաչակիր ուժերը կռվի մեջ չեն մտել, այլ քաղաքի պաշտպանությունը թողել են հայ իշխաններին և վերադարձել Երուսաղեմ։ Եդեսիայի բնակիչները զանգվածորեն զնացել են խաչակիրների հետից, սակայն Եփրատ գետն անցնելու ժամանակ նրանցից շուրջ հինգ հազարը կոտորվել է Մոսուլի էմիր Մաուդուդի հրոսակների կողմից։ Ուռհայեցին հաղորդում է. «Փոանգն առհասարակ անցեալ էին յայնկոյս գետոյն, եւ թուրքն զհաւատացեալս սրախողող արարեալ, զի անդէն բանակեալ կային որպէս զհօտս ոչխարաց, ... եւ Եփրատ իսկ ի յարիւն դարձաւ...։ Եւ յայսմ աւուր աւերեալ եղեւ ամենայն գաւառն Ուռհայոյ եւ եղեւ յանմարդ»[37]։

Մուսուլմանական աշխարհում հետզհետե գիտակցում էին, որ խա-

չակիրների գրոհներին կարող է դիմակալել միայն միասնական իշխանությամբ միավորված ուժեղ պետությունը: Միասնության շարժմանը նպաստում էր մանավանդ և այն վտանգը, որ սպառնում էր մուսուլմանական պետությունների առևտրին: Վենետիկի, Ճենովայի, Պիզայի վաճառականները, ձեռք բերելով հատուկ արտոնություններ, ծավալում էին միջազգային առևտրական լայն գործունեություն և, որ առավել կարևոր է, երազում էին այն ժամանակվա Արևելքի ամենավաճառաշահ մարզերի՝ Հարավային Միջագետքի և Եգիպտոսի նվաճման մասին:

Սիրիայում միասնության շարժման գլուխ կանգնեց Մոսուլի էմիրի աթաբեկներից Իմադ էդ-դին Զանգին: 1128 թ. նա գրավեց Սիրիայի կարևորագույն քաղաքներից Հալեպը և, աստիճանաբար իրեն ենթարկելով թուրք-սելջուկյան մանր իշխանությունները, ձեռքերը մեկնեց Եդեսիայի լատին կոմսության դեմ: 1144 թ. Զանգիի հրոսակները պաշարեցին Եդեսիան, որը խոշոր ստրատեգիական նշանակություն ուներ: Քաղաքի պաշտպանները («Թորգոմյան ժողովուրդը», «Հայոց աղգաց ցեղը») քաջությամբ դիմադրեցին, սակայն թշնամու գերակշիռ ուժերին հաջողվեց, ի վերջո, ներխուժել պարիսպներից ներս: Կատարվեց սոսկալի արյունահեղ կոտորած, որը նկարագրված է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» նշանավոր քերթվածում:

Սուսերամերկըք լինէին
Մէջ քաղաքին յարձակէին,
Եւ ժողովոցըն բազմութիւն
Մի ըզմիոյ հետ կասէին.
Անդ առաջի ընթանային
Մինչեւ ի դրունըս դըղեկին:
Իսկ մարդագիմ չար գազանին
Ըզսայրասուրըն քամէին,
Եւ որպէս գայլք ի հօտ գառանց՝
Ի մէջ նոցունց անկանէին...

Զանգի ամիրան գրավեց նաև Թլպաշարը, Բիրը կամ Բիրեջիկը և Եդեսիայի կոմսության ենթակա այլ քաղաքներ ու շրջաններ:

Ի պատասխան Եդեսիայի գրավման՝ Եվրոպայում կազմակերպվեց երկրորդ խաչակրաց արշավանքը (1147—1149), որը գլխավորում էին Ֆրանսիայի Լյուդովիկոս VII թագավորը և Գերմանիայի Կոնդրադ III կայսրը: Այդ արշավանքն ավարտվեց կատարյալ անհաջողությամբ: Փոքր Ասիայում խաչակիրների մի մասը կոտորվեց, իսկ մնացյալն ապարդյուն փորձեց գրավել Դամասկոս քաղաքը:

XII դարի 80-ական թթ. Եգիպտոսի, Սիրիայի (բացառությամբ խաչակիրների գրաված մարզերի) և Միջագետքի մուսուլմանական մանր իշխանությունների միավորումով ստեղծվեց մի նոր պետություն, որի գլուխ կանգնած էր Սալահ էդ-Դինը (1171—1193)։ 1186—1187 թթ. նա Տիբերիա լճից ոչ հեռու խաթինի ճակատամարտում վճռական պարտություն մատնեց խաչակիրներին։ Այնուհետև մուսուլմանները գրավեցին Երուսաղեմը, Ակրան, Սաիդան, Բեյրութը և այլ քաղաքներ։

Երուսաղեմի անկումից հետո կազմակերպվեց Երրորդ խաչակրաց արշավանքը (1189—1192), որը սակայն էական արդյունք չտվեց։ Հետագայում ձեռնարկվեցին ևս հինգ (1202—1204, 1217—1221, 1228—1229, 1248—1254 և վերջինը՝ 1270) արշավանքներ, սակայն դրեթե ոչինչ չփոխվեց Մերձավոր Արևելքի դրության մեջ։

Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական տեղաշարժերն աստիճանաբար մարեցին խաչակրաց արշավանքների նկատմամբ տարբեր հասարակական դասակարգերի հետաքրքրությունը։ Մյուս կողմից մուսուլմանական իշխանությունների միավորումը խիստ դժվարացրեց պայքարը և, ի վերջո, խաչակիր ասպետները դուրս մղվեցին Արևելքից։

Այսպիսով, խաչակրաց արշավանքները ոչ միայն չհասան իրենց անմիջական նպատակին, այլև դժբախտության պատճառ դարձան ինչպես հարյուր հազարավոր խաչակիրների, այնպես էլ, Սիրիայի, Միջագետքի, Պաղեստինի, Կիլիկիայի ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի համար։

3. ՀԱԼԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽԸ
XV—XVIII դդ.

XV դարի վերջերից Սիրիայի քաղաքները ստացան միջազգային առևտրական նշանակություն, կապված այն տեղաշարժերի հետ, որ Ոսկե Հորդայի և Իլխանության պատերազմներն առաջացրին Արևմուտք-Արևելք առևտրի ասպարեզում։ Կ. Պոլսի (1453), Տրապիզոնի (1461) և Ղարամանիայի (1471) գրավումից հետո Կասպից ծով—Աստրախան—Ազով ճանապարհը փոխարինվեց Թավրիզ—Հալեպ ճանապարհով։

Թավրիզից դեպի Հալեպ ամենակարճ և բանուկ ուղեգիծն անցնում էր Հայաստանի քաղաքներով՝ Բերկրի, Արճեշ, Արծկե, Խլաթ, Բաղեշ։

Բաղեշից դեպի Հալեպ կամ Եդեսիա տանող ճանապարհը երկփեղկվում էր, մեկն անցնում էր Նփրկերտի և Ամիդի, մյուսը՝ Հրսնիքայֆի և Մարդինի վրայով: Բանուկ էր նաև Թավրիզ—Էրզրում—Երզնկա—Սեբաստիա—Հալեպ ճանապարհը: Հալեպից դեպի Միջերկրական ծով դուրս էին գալիս երկու ճանապարհ, առաջինն անցնելով Համայից, Հոմսից և Դամասկոսից հասնում էր Տրիպոլիի, իսկ երկրորդը՝ Անտիոքի և Բեյլանի վրայով՝ Ալեքսանդրետի նավահանգիստը: Այդ ճանապարհների տարբեր հանգրվաններում և նրանց հարող շրջաններում գտնվող հայկական գաղթօջախները վերելք ապրեցին:

Առանձնապես նշանակալից զարգացման հասավ Հալեպի կամ Բերիայի հայկական գաղթօջախը:

Հալեպահայ գաղթօջախի սկզբնավորման հարցը համարյա լուսաբանված չէ: Հալեպում ապրող հայերի մասին առաջին վկայությունը հաղորդում է անհայտ վայրում գրված (1355) մի ավետարանի 1379 թվակիր հիշատակարանը, որտեղ ձեռագրի ստացողը՝ ոմն հալեպահայ Ամիր, թվարկում է իր ծնողներին, կնոջը, սարկավագ որդուն և մերձավորներին[1]:

Պատմելով Լանկթամուրի արշավանքի հետևանքով Հալեպում առաջացած սովի մասին, մի այլ ավետարանի ստացող իր հիշատակարանում նշել է. «Յայնմ ժամանակին (1400) գնացեալ Թաւաքալն՝ Հալպա տանուտեր՝ ի հաց ի գնել յԱնթափ քաղաք...»[2]: XIV դարից տանուտեր կամ ռեյիս էին կոչվում ինչպես գերդաստանների ավագ անդամները, այնպես էլ գյուղական համայնքների առաջնորդները, որոնք, նշանակվելով գավառապետների կամ ֆեոդալների կողմից, գլխավորում էին տվյալ համայնքի վարչական և տնտեսական գործերը:

1429 թ. Հալեպում Ստեփանոս Երեցը մի ժողովածու է գրել «Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին» եկեղեցու[3]: Սա, առաջին հաստատ տեղեկությունն է Հալեպում հայկական եկեղեցու, հետևաբար և հայկական կազմակերպված համայնքի գոյության մասին:

1499—1500 թթ. հալեպահայ մեծատուն ռեյիս Իսայի տրամադրած միջոցներով կառուցվել է «դարպաս թագաւորական» կամ առաջնորդարանը, ուխտավորական հյուրատունը («Հոգետունը») և մի նոր եկեղեցի՝ ս. Քառասուն Մանկանցը: Այդ տարիներին Հալեպ այցելած Մովսես վարդապետը թողել է մի հիշատակարան, որտեղ ասված է.

Եկեալ հասանք տունըս Շամեան,
Հալապ քաղաք ի շահաստան:
Հանդիպեցաք ուրախութեան,

Եւ ցնծացաք հոգով լըման,
Զի նոր շինեալ էր սուրբ խորան,
Յանուն սրբոց խ(40) Մանկան։
Այլ և խցկր հանգըստարան,
Ի գալ հիւրոց աւտարական,
Զի հանգիցեն խաղաղական ,
Հանդերձ գրաստիւքն իւրեանց որ կան։
Շինեաց դարպաս թագւորական,
Որ ժամատեղ էր ամառան,
Քահանայից տեղ հանգըստեան,
Զի վայելեն խաղաղական[4]։

Հալեպի հայերեն ձեռագրերի և եղեկեցիներին նվիրաբերված տարբեր իրերի հիշատակարաններից, ինչպես և հնօրյա տապանաքարերից, երևում է, որ այդ քաղաքում ապրում էին Ջուղայից, Երևանից, Ղարաբաղից, էրզրումից, Երզնկայից, Բաղեշից, Սեբաստիայից, Ակնից, Մալաթիայից, Սասունից, Արաբկիրից, Ամիդից, Մարդինից, Ուրֆայից և այլ վայրերից գաղթած ամենատարբեր ըբաղմունքի հայեր։ Հալեպի հայկական գերեզմանատանը XVI դարից պահպանված 14 տապանաքարերից 13-ը Հին Ջուղայից գաղթած և Հալեպում «ղարիպ մնացած» խոջաններինն են[5]։

Սիմեոն Լեհացու հաղորդումով, 1616 թ. Հալեպում կար 300 տուն, կամ մեկ տանը տասը շնչի հաշվով՝ շուրջ 3000 հայ[6]։ *Ըստ կաթոլիկ միսիոներ Պուարեսոնի, 1652 թ. Հալեպի հայերի թվաքանակը բարձրացել էր ավելի քան քսան հազարի*[7]։ *XVII դարի երկրորդ կեսին, երբ Հալեպն աստիճանաբար զրկվում էր առևտրական նշանակությունից, հայկական գաղթօջախն անկում ապրեց։ Ալ. Ռուսելի տվյալներով, 1745 թ. Հալեպում կային 200 հազար մուսուլման, 5 հազար հրեա և 30 հազար քրիստոնյա, այդ թվում 13.000 հույն, 6720 հայ, 3750 ասորի և 3000 քրիստոնյա արաբ*[8]։

Վերջին տարիներին Սիրիական անապատի խորքերում, Դեյր Էզ-Զոր քաղաքից շուրջ 80 կմ հեռու մի վայրում հայտնաբերվեցին 1628, 1654, 1664 թվակիր, համարյա միանման բովանդակություն ունեցող երեք հայերեն վիմագիր արձանագրություններ։ Դրանցից մեկում պարզ ու որոշ կարդացվում է. «Աստուած ջողեցոց բան հաստատ պահէ»։ Ջուղայեցի վաճառականները ժայռի վրա փորագրել են տվել իրենց անունները, այցելության թվականները և այլն։ Այդ վայրը Թավրիզ—Հալեպ ճանապարհի հանգրվաններից էր, և ժայռի մոտ հավանաբար

կառուցված է եղել քարվանսարա՝ ջուղայեցի հայ վաճառականների համար[9], որոնք Պարսկաստանի հում մետաքսը և արևելյան այլ ապրանքներ տանում էին Հալեպ, այնտեղից էլ՝ Եվրոպա։

XVI դարի կեսերից դնալով ընդարձակվեց Հալեպի առևտրական կապերի ոլորտը։ Ֆրանս-թուրքական «առևտրի և բարեկամության» պայմանագիրը (1535), հիմք դառնալով կապիտուլյացիոն առանձնաշնորհումների, լայն բացեց Թուրքիայի, ներառյալ Սիրիայի նավահանգիստները՝ ֆրանսիացի առևտրականների առաջ։ Հետագայում սուլթանից կապիտուլյացիաներ կորզեցին նաև Անգլիան (1579 և 1593) և Հոլանդիան (1598 և 1612)։ Սիրիայի տարբեր քաղաքներում առաջացան եվրոպական առևտրական հաստատություններ, որոնք հիմնականում Հալեպում էին փոխանակում իրենց մահուդն արևելյան ապրանքների՝ հում մետաքսի, բրդի, կաշվի, ճարպի, դղրոր, քրքումի, համեմունքների հետ։

XVI—XVII դարերի հայերեն ձեռագիր մատյաններում Հալեպը հորջորջվում է «մեծ մայրաքաղաք» և հիշատակվում Արևելքի խոշոր առևտրական շուկաների շարքում։ Գովերգելով իր հայրենի քաղաքը, Ստեփանոս Որբելյանին գրել է.

> Վաճառականք, ճանապարհորդք
> Գնային Շիրվան եւ Շամախի,
> Շամ ՚ւ Հալապ ՚ւ յԱստամպօլի
> Պուռսայ եւ այլ բազում տեղի[10]։

Սիմեոն Լեհացին, որ 1616 թ. այցելել է Հալեպ, դրվատանքով է պատմում նրա շուկայի մասին. «Այս քաղաքս մեծ պէնտէր է և շահրիստան և յինք կայ Հնու-Հնդուստանու մարդ, ամէն տեղաց վաճառական...։ Եւ ունի 3կ6 (=365) խան աւուր գլուխ մի քան զմին լաւ, և անթիւ խանութ, կրպակք, պէզէստան և այլն. և ինչ բան ուզէ անդ գտնուս, դի մեծ շահշրիստան է։ Այլ և ֆռանկի խաներն ուր պալիօսք նստին, լաւ չուխայ, աթլաս, քէմխայ և ֆռանկի խումաշ գտանիս»[11]։

Ավելի քան մեկ և կես դար հիմնականում հայ խոջաները տիրապետող դիրքեր ունեին Հալեպի մետաքսի շուկայում, որը համարվում էր ամենախոշորը ոչ միայն Սիրիայում։ Տարբեր ժամանակներում Հալեպում գործել են նշանավոր խոջաներ Սաֆարը, Խաչիկը, Նազարը, Փանոսը, Պետիկը և ուրիշներ, որոնց ձեռքում էին առևտրի ամենակարևոր լծակները՝ Հալեպի «կոմրուկն, մութասիպութիւնն, սուպաշութիւնն, խաներն», զարպխանան կամ փողերանոցը և այլն։ Հայ խոջաների հր-

զորության ցուցանիշ է հատկապես այն, որ նրանք մինչև անգամ ազդում էին Լեռնային Լիբանանի մետաքսի շուկայի վրա: XVII դարի կեսերից Լիբանանում, ինչպես նշել է արաբ պատմաբան Ադել Իսմայիլը, մետաքսի «բարգավաճ առևտուրն անկում ապրեց: Դրանում կարևոր դեր կատարեց հայերի մրցակցությունը, որոնք սեփական միջոցներով և իրենց հաշվին Ֆրանսիա էին տեղափոխում Սիրիայի և Պարսկաստանի մետաքսի խոշորագույն մասը»[12]:

Հալեպի շուկայում իրենց դիրքերը պաշտպանելու համար հայ խոջաները ստիպված էին կատաղի պայքար մղել եվրոպական առևտրական կապիտալի առաջամարտիկ վենետիկի դեմ, որի գործակալները վաղուց հաստատվել էին Սիրիայի քաղաքներում: Դամասկոսում նըստում էր վենետիկի առևտրական ներկայացուցիչը՝ կոնցը կամ կոնսուլը, իսկ Բեյրութում, Տրիպոլիում, Ալեքսանդրետում և այլ քաղաքներում՝ նրա գործակալները: 1519 թ. կոնցն իր նստավայրը տեղափոխել է Հալեպ, և այստեղ հաստատել վենետիկի ու Սիրիայի միջև «փոխադարձ վաճառաց տարուբերի համար հատուկ մաքսատուն կամ բաժատուն մի» և, որ ուշագրավ է, ընդլայնել է իր գործակալների ցանցը, որպեսզի խուսափի հայ խոջաների միջնորդությունից: Սակայն այդ նըրան չի հաջողվել:

Այնուամենայնիվ կոնցը և նրա գործակալները շարունակել են դժվարություններ հարուցել հայ խոջաներին: 1534, 1537, 1541, 1567, 1574 և հետագա տարիներին վենետիկի սենատը բազմիցս քննարկել է հայ խոջաների բողոքները և նրանց ազատել «նաւտղչէքէ և ուրիշ տուրքերէ»: 1588 թ., երբ Հալեպի կոնցը հայերից բարձր հարկեր էր գանձել, վենետիկից կարգադրել են «եւ դարձունել տան անոնց՝ ինչ որ սովորականեն ավելի առած են», ընդգծելով, որ պետք է «զգուշավորութեամբ» վարվել հայոց հետ, որպեսզի «չըլլայ թէ ճամբանին փոխեն, թողուն զվենետիկ և ուրիշ տեղ տանին վաճառքնին»[13]:

XVII դ. կեսերից սովորական էր դարձել հալեպահայ խոջաների հանդիպել Վենետիկում, Լիվորնոյում, Ամստերդամում, Մարսելում և Եվրոպայի այլ քաղաքներում: Ամենուրեք նրանց համար ստեղծում էին ազատ և շահավետ առևտրի պայմաններ: Ֆրանսիայի Լուդովիկոս XIII թագավորի (1610—1643) հրովարտակում ասված էր. «Մենք... մեր հատուկ պաշտպանության և հովանավորության տակ ենք առնում այն պարսիկ և հայ ականավոր վաճառականներին, որ (Ֆրանսիա) կըգան իրենց ապրանքներով» և այլն: Իր հերթին, 1635 թ. կարդինալ

Ռիշելիոն հատուկ հրամանագրով արտոնյալ պայմաններ ստեղծեց ջուղայեցի հայ վաճառականների համար, որպեսզի նրանք Ֆրանսիա տանեն այնքան քանակությամբ մետաքս և ուրիշ ապրանքներ, որքան իրենք են ցանկանում[14]:

Սակայն XVII դարի երկրորդ կեսին ամենևին էլ հարթ չէր ընթանում հայ խոջաների առևտուրը Ֆրանսիայում: Սիրիայում և Պարսկաստանում ունիտորական շարժման դեմ հայերի ծավալած պայքարը մոլեռանդ կաթոլիկներին բացասաբար էր տրամադրում հայ խոջաների նկատմամբ: Մարսելում և Ֆրանսիայի այլ քաղաքներում դժվարությունների հանդիպող հայ խոջաները, աստիճանաբար երես դարձնելով Ֆրանսիայից, իրենց մետաքսը տանում էին այլ շուկաներ: 1671 թ. Լուդովիկոս XIV թագավորի ֆինանսների գերատեսուչ Կոլբերը Պրովանսի պառլամենտի նախագահ Օպպետին գրել է. «Մեծ օգուտ է, որ հայերը Լիվոռնոն թողնեն և իրենց մետաքսը բերեն Մարսել: Խնդրում եմ ձեզանից՝ նրանց տալ այն ամբողջ պաշտպանությունը, որ ձեր պաշտոնը թույլատրում է»[15]:

Հալեպի խոջաները բավական բարգավաճ առևտուր էին անում Հոլանդիայի հետ: Պահպանվել է դեպի Հոլանդիա հում մետաքս արտահանելու վերաբերյալ մի համաձայնագիր, կնքված 1616 թ. Ամստերդամում՝ «ֆլաման ազգի բանագնացների» և հալեպահայ նշանավոր խոջաների՝ Պետիկի և Սանոսի միջև: Այդ համաձայնագրում խոջա Պետիկը հանդես է գալիս որպես Հոլանդիայի «Նորին վեհափառության թագուհու էմինը», այսինքն նրա առևտրական գործերի ներկայացուցիչը Սիրիայում[16]:

Հալեպահայ խոջաները Ռուսաստանում որոնել են ոչ թե շուկաներ, այլ տրանզիտի ապահով ճանապարհ: 1725 թ., երբ օսմանյան զորքի՝ Արևմտյան Հայաստան ներխուժելու հետևանքով փակվեց Թավրիզ—Հալեպ ճանապարհը, Գիլանում կանգ առած առևտրականները, որոնք մեծ մասամբ Հալեպից և Դամասկոսից էին, դիմել են Ռուսաստանի կառավարական սենատին, որպեսզի իրավունք ձեռք բերեն Ռուսաստանի վրայով մետաքս փոխադրելու Եվրոպա: Այդ իրավունքը նրանց տրվել է «ջուղայեցի առևտրականների պայմաններով»[17], սակայն հայտնի չէ, թե նրանք երբևէ օգտվել են դրանից:

Հալեպի հայերը ունեին նաև հմուտ արհեստավորի հռչակ: Աղբյուրներում հիշատակվում են ոսկերիչ (ղոյումճի), սադափագործ (սեոեֆճի), ներկարար (պոյաճի), դերձակ (թերզի), մուշտակագործ (քիւրքճի), հացագործ (էքմեքճի), մագաղաթ ու թուղթ կոկող, բուսական

և քիմիական ներկեր պատրաստող, ձեռագիր կազմող և վերանորոգող հայ վարպետներ[18]։

Երկար տարիներ Սիրիայում ապրած կաթոլիկ միսիոներ Մ֊Քայել Ֆեբուրը դիպուկ կերպով նշել է, որ թուրքերը քրիստոնյաներին և հրեաներին թողնում էին «ապրել այնպես, ինչպես այդ արվում էր ոչխարներին ու մեղուներին՝ նրանց կաթի ու մեղրի համար»[19]։ Նրանք պարտավոր էին աշխատել, վաստակել և արդյունքը տալ պաշտոնական և անպաշտոն հափշտակիչներին։ Ոչ մուսուլմանները՝ թուրքերի հետ միասին վճարում էին հինգ տեսակ հարկ՝ սուրսաթ (պատերազմական տուրք), ավարիզ (արտակարգ հարկ), ջիյզ ակչեսի (գրպանի դրամ կամ պարտադիր նվեր սուլթանին), թիրն կամ թեբն (հարդի տուրք), օրդու (բանակի տուրք)[20]։ Բացի դրանից քրիստոնյաներն ու հրեաները վճարում էին այլ բազմաթիվ հարկեր՝ շաշտաթ (շքեղության տուրք), շիրա (տանը գինի ունենալու իրավունքի համար), խարաջ և այլն[21]։ Սակայն հարկերից ավելի խոշոր չարիք էին հարկահան պաշտոնյաները։ Այն դեպքում, երբ խարաջ սահմանված էր 11, 6 1/2 և 3 1/2 դրուշ չափով, հարկահանները գանձում էին տաս, քսան անգամ, երբեմն էլ ավելի մեծ գումարներ։ 1594 թ. Կարկառում (Հալեպի կուսակալություն) գրված մի ձեռագրի հիշատակարանում ասված է. «Մեկ մարդոյն վեց ֆլորի խարաճ առնէին.»[22], այսինքն 21 դրամ ոսկի կամ 360 դրամ արծաթ։

Ծանր հարկերի և կամայականությունների ենթարկվում էին նաև հայ խոջաները։ Նրանք վճարում էին բալմատեսակ «խալչ ու բալչեր», հարկադրված էին «փեշքաշներ» անել մաքսատան կամ քաղաքային պաշտոնյաներին[23]։ Սակայն խոջաներին ավելի ծանր հարված էին հասցընում ավազակները, ոչ միայն ամայի վայրերում, այլև քաղաքներում։ Ձեռագիր հիշատակարանում կարելի է հանդիպել նշումներ խոջաների սպանության մասին («զարկին խանչարով զխոջա Սիսիճանն եւ մեռաւ ի Հալեպ»[24]) և այլն։ 1630-ական թվականներին սուլթանի հրամանով Հալեպում գլխատվել է խոջա Պետիկը և թալանվել է նրա հսկայական հարստությունը։

Սիրիայի քրիստոնյաների վիճակը ճգնաժամային դարձավ XVI դարի վերջերից, երբ կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով ծայր առան ներքին անկարգություններն ու ապստամբությունները։ 1598—1599 թթ. Կարա Յազիջիի հրոսակները կողոպտեցին ու ավերեցին Հալեպը, Դամասկոսը և այլ քաղաքներ։ 1604 թ. Հալեպում գերությունից ազատված մի ավետարանի հիշատակարանում ասված է. «Եւ

աւետարանս յիշատակ է ս. Քառասնից, ի դառն եւ անբարի ժամանակիս՝ որ երերուն եւ տատանեալ կան յաղգս քրիստոնէից ի ձեռն անաւրինաց, որ իբրեւ զկատարեալ գաղան, արձակեալ են ի վերայ միմեանց, որ զհազարս եւ զբիւրս սպաննեն...»[25]:

Աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ փաստեր 1633, 1639, 1655, 1657, 1660 և հետագա տարիներին Հալեպի հայերի, հույների և սորիների դեմ սանձազերծված արյունահեղ հալածանքների վերաբերյալ: Խրախուսվելով սուլթանի պաշտոնատարներից, մոլեռանդ մուսուլմանները ներխուժում էին քրիստոնյաների թաղերը, թալանում եկեղեցիները, խանութները, տները, նրանց բռնադատում կրոնափոխ լինել կամ փրկագին վճարել: Ովքեր ի վիճակի չէին փրկագին վճարելու խոշտանգվում կամ բանտ էին նետվում, իսկ նրանց զավակները որպես գերի վաճառվում էին շուկայում[26]: Մեզ հասել է մի ողբ կրոնափոխության բռնադատված երկու հալեպցի պատանիների՝ ազգությամբ հույն Դավթի և հայ Բալիի նահատակության մասին[27]:

XVI—XVII դարերում ունիտորական շարժումը նոր վերելք ապրեց: Պայքարելով վերանորոգչական (ռեֆորմացիայի) շարժման դեմ, Վատիկանն աջակցում էր ֆրանսիական արքունիքի՝ անգլիական և հոլանդական ազդեցությունն Արևելքից վտարելու քաղաքականությանը: Իր հերթին ֆրանսիական դիվանագիտությունը հովանավորում էր ունիտորներին, որոնք խոստանում էին Եվրոպայի դինված միջամտությամբ Արևելքի ժողովուրդներին ազատագրել «անհավատների» լծից՝ եթե նրանք ընդունեն Վատիկանի գերիշխանությունը:

XVII դարի 30-ական թթ. Սերիայի տարբեր քաղաքներում հաստատվեցին ճիզվիտական, ֆրանչիսկյան և այլ միսիոներական կազմակերպություններ: Հալեպ քաղաքն աստիճանաբար դարձավ ունիտորական շարժման կենտրոններից մեկը: Դրանում կարևոր դեր էր կատարում այն հանգամանքը, որ Եվրոպայի հետ առևտրական սերտ կապեր պահպանող հայ, հույն, սորի մեծատուները զգայուն էին ունիտորական պրոպագանդայի նկատմամբ: Ա. Գ. Հովհաննիսյանը գրել է. «Ունիտորների պրոպագանդը մի հայտնի չափով ընդառաջում էր առևտրական բուրժուազիայի պահանջներին: Սրա գլխավոր մի պատճառն այն էր, որ ունիտորական պրոպագանդան սկսվեց մի ժամանակ, երբ առաջավոր-ասիական քաղաքները ապրում էին տնտեսական և քաղաքական անկում»[28]:

Ունիտորական պրոպագանդան հրապուրում էր նաև եվրոպական շու-

կաներին՝ որպես տնտեսական փրկության լաստ կառչած հալեպահայ խոջաների շուրջը դեգերող Սսի կաթողիկոսներին։ 1575 թ. Գրիգոր XIII պապին հղած իր նամակում Խաչատուր կաթողիկոսը, ակնարկելով անգո «դաշանց թուղթը», օգնություն էր հայցում Վատիկանից։ 1584 թ. Սսի Ազարիա Ջուղայեցի կաթողիկոսը, ռազմական օգնություն ակնկալելով Հռոմից, պատրաստակամություն էր հայտնում ընդունելու կաթոլիկ դավանանքը և այլն։

1630 թ. Ուրբանոս VIII պապը նամակներ հղեց Սիրիայի և Լիբանանի եկեղեցական պետերին, դրվատելով Ֆրանսիայի «ամենաքրիստոնյա թագավորի» բարեմասնությունները և նրա «ամենաքրիստոնյա նավատորմի» հզորությունը, որը պետք էր «երջանկություն» բերեր «դեպի գերի Արևելքը»։ Մյուս կողմից Թևատինյան կրոնավոր[29] հայրենապետ Կղեմես Գալանոսը հայերին ավետում էր, որ «փրկութիւն ամենայն աշխարհաց եւ քրիստոնէից ի յարիական ազգէն Հռովմայեցւոց եղիցի, որք են ֆռանկք։ ...Ուրեմն գալոց են Հռովմայեցիքն փրկել զաշխարհն եւ զազգն ձեր»[30]։ Սակայն մինչև «անհավատների» լուծը թոթափելը, հայերը պարտավոր էին թոթափել «խավարի» և «սատանայի» իշխանությունը, և միաբանել հռոմեական եկեղեցու հետ։

Սիրիայում ունիտորական պրոպագանդան իր բարձրակետին հասավ Կանդիայի պատերազմի տարիներին (1645—1669)։ Մինչ Եվրոպայում աղմկում էին խաչակրաց արշավանքների մասին, Ալեքսանդր VII պապի և Լուդովիկոս XIV թագավորի գործակալներն աշխատում էին մի կողմից ապստամբություններ բորբոքել Օսմանյան կայսրության մեջ, մյուս կողմից հունական, հայկական և ասորական եկեղեցիները ենթարկել Վատիկանի դերիշխանությանը։ 1663 թ. Հալեպի ֆրանսիական հյուպատոս Ֆրանսուա Բարոնի ջանքերով, Անտիոքի հունաց Մակար պատրիարքը, Հալեպի ասորիների (Հակոբիկյան) Անդրեաս պատրիարքը և Սսի կաթողիկոս Խաչատուր Գաղատեցին առանձին-առանձին դիմեցին Լյուդովիկոս թագավորին, հույս հայտնելով, որ Արևելքի քրիստոնյաները, «նորին ամենաքրիստոնյա վեհափառության» ձեռքով կազատագրվեն անտանելի դրությունից։ Գաղատացու դիմումում ասված է. «Բարձրյալն աստված թող ձեզ օրհնի... և ներշնչի հավատի ղգացումներ՝ աղատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր խեղճ ազգին...։ Հույս և հավատ ունենք, որ ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը»[31]։

Վատիկան հղված այդ և մյուս դիմումները, նույնիսկ «Դաշանց թուղթը» կամ հայ-հռոմեական կեղծ դաշինքը վերանորոգելու փորձե-

րը չէին կարող հանդեցնել դրական արդյունքի։ Ա. Գ. Հովհաննիսյանը դիպուկ կերպով նշել է. «Հնազանդության իրենց թղթերով հայ կաթողիկոսները ենթադրում էին Մահմեդի սրից հալածված հայ եկեղեցու ժողովրդի համար ապահովել պապական դավաղանի հոանդուն միջամտությունը։ Սակայն խոստումնառատ պապերը շարունակ հանդես էին գալիս անվճարունակ պարտապանների վիճակում»[32]։

Ավելի քան մեկդարյա ունիտորական աղմկարարությունից հետո՝ XVII դարի վերջերին հայ եկեղեցուց պոկվել էին ընդամենը «մի քանի հազար»[33] հայեր, որոնց մեծամասնությունը հալեպահայեր էին։ «Ուղիղ դավանության» քարոզիչները համարյա հաջողություն չունեցան Հալեպից դուրս, Սիրիայի մյուս քաղաքների, գյուղերի հայության շրջանում։

Ձեռք բերած արդյունքից դժգոհ Վատիկանը շարունակեց պղտորել Հալեպի հայկական դաղթօջախի կյանքը։ 1710—1712 թթ. հայ կաթոլիկ կղերը, ֆրանսիական հյուպատոսի մեղսակցությամբ, պրավել է ս. Աստվածածին եկեղեցին և առաջնորդարանը, սակայն հալեպահայերի ճնշման ներքո թեմակալ առաջնորդ հռչակված դավանափոխ Աբրահամ եպիսկ. Արծիվյանը ստիպված հեռացել է Հալեպից։ Հայ կաթոլիկ կղերը վերստին աշխուժացավ 1740 թ., երբ կապիտուլյացիայի 32-րդ հոդվածով օսմանյան սուլթանը ֆրանսիական թագավորին ճանաչեց որպես ասիական Թուրքիայի համայն կաթոլիկների հովանավորը։ Այդ կապիտուլյացիայից անմիջապես հետո Հալեպում հիմնադրվեց այսպես կոչված «հայ կաթողիկե վերանորոգ պատրիարքությունը» և առաջին պատրիարք դարձավ նույն Արծիվյանը։ 1742 թ. Բենեդիկտոս պապը հաստատեց նրան, սակայն թուրքական սուլթանը չճանաչեց Կ. Պոլսի հայոց պատրիարքից անկախ հայ կաթոլիկ համայնքի գոյության իրավունքը։ Գնալով սաստկացող հակակաթոլիկական հալածանքների հետևանքով, Արծիվյանն իր աթոռը Հալեպից տեղափոխեց Լեռնային Լիբանան, նախ՝ մարոնականների Քրեմի ս. Ամենափրկիչ վանքը, իսկ 1749 թ.՝ հայ կաթոլիկների նորակառույց վանքը Զմմառում։

Ուշագրավ է, որ Հալեպի հայ եկեղեցական կյանքը փոթորկող այդ իրադարձությունների նկատմամբ Սսի կաթողիկոսները ցուցաբերում էին բացորոշ անտարբերություն, իսկ նրանց կողմից նշանակված թեմակալ առաջնորդները (Հալեպը սսական թեմ էր) ոչ միայն չէին հակազդում կաթոլիկ կղերի արարքներին, այլև հաճախ իրենց ընթացքով նպաստում էին հակակաթոլիկական դիմադրության թուլացմանը։ Այդ բոլորից դժգոհ հալեպահայերը դիմել են Սիմեոն Երևանցի կաթողիկոսին՝ Հալեպի թեմն էջմիածնի իրավասության ենթարկելու խնդրանքով։

1782 թ. երևանցին Հալեպի հայոց թեմակալ առաջնորդ է նշանակել էջմիածնի միաբան Մինաս վարդապետին, և տվել հատուկ կոնդակ, որտեղ ասված է. «Նախկին առաջնորդն ձեր իւրովի հրաժարեցեալ եւ հեռացեալ ի ձէնջ, եւ կարգեցեալ է ձեզ նորոգ առաջնորդ... Մինաս խոհեմազարդ վարդապետդ, որ է ի վիճակէ Սրբոյ Աթոռոյս եւ ի յորդւոց սորին՝ ընդ որում եւ ձերդ է լեալ բաղձանք»[34]: Հայտնի չէ, թե Հալեպի թեմը որքան ժամանակ է մնացել էջմիածնի թեվարկության ներքո:

Հալեպահայերը կերտել են մշակութային ուշագրավ արժեքներ:

Հալեպի դասատանը պատրաստվել են զգալի թվով բարձրորակ ձեռագրեր: Վաստակաշատ գրիչներ էին Հովհաննես Ուռհայեցին, Խաչատուր Զեյթունցին, Ղազար գպիրը, Սարգիս Խիզանցին, Աստվածատուր Ուրֆացին, Ղազար Բաբերդցին, Աբրահամ Երեցը, Խաչատուր գպիրը, Իսրայել Համթեցին, Մկրտիչ Լեհցին և ուրիշներ: Դասատան շուրջ հարյուր տարվա (XVI դարի վերջերից մինչև XVII դարի վերջերը) վաստակից պահպանվել են երկու հարյուրից քիչ ավելի ավետարաններ, սաղմոսներ, ժողովածուներ, տաղարաններ, բժշկարաններ և այլ ձեռագրեր, որոնց զգալի մասը գտնվում է Հալեպի հայոց եկեղեցում և Զմմառի հայ կաթոլիկների վանքում: Հալեպում գրված առավել արժեքավոր ձեռագրեր կան Փարիզի, Լոնդոնի և Բեռլինի թանգարաններում:

Առաքել Դավրիժեցին գրվատանքով է պատմում Մուրատ Սարգսի (1592—1662) մասին, որն «էր ինքն արուեստիւ ակնագործ, որ զպատուական ակունս հարթէ եւ շինէ, այլեւ գնող եւ վաճառող սոցին»[35]: Մուրատ Սարգիսը աշխարհահաբար լեզվով պատրաստել է մի արհեստագիտական ձեռնարկ՝ «վասն անուանց եւ որպիսութեանց պատուական ականց», հայ ոսկերիչների և ակնագործների օգտագործման նպատակով: Մուրատը դասակարգել է ավելի քան երեսուն տեսակ աղնիվ քարեր, նկարագրելով դրանցից յուրաքանչյուրի տարբերակները, առանձնահատկությունները, մշակման եղանակները[36]:

Հալեպի հայերը արժեքներ ստեղծել են նաև գեղանկարչության բնագավառում: Դավրիժեցին հաղորդում է, որ պարսկահայ նկարիչ վարպետ Մինասն իր արվեստը կատարելագործել է Հալեպում: Մինչև օրս էլ Սիրիայի հայկական եկեղեցիներում պահպանվել են XVII—XVIII դարերի հալեպահայ նկարիչներ Ումեի որդի Անանիայի, Հանանիայի որդի Ճրճի, Մկրտչի, Մուրատի, Խաչատուրի, Կարապետի և Հակոբի որդի Ներսեսի գործերը: Ուսումնասիրողները հայ նկարիչների աշխատանքն են համարում Հալեպի հնօրյա բնակարաններում հայտնաբերված բազմաթիվ որմնանկարներ:

ԲԱԺԻՆ Ա. ՌԱԱՋԻՆ

ՍԻԲԻԱՅԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ 1841—1918 ԹԹ.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻԲԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի 40-ական թթ. Սիբիան ներգրավվեց համաշխարհային կապիտալիստական շուկայի ոլորտը, իսկ հետագայում դարձավ օտարերկրյա կապիտալի արտահանման ասպարեզ։ Վ. Ի. Լենինը նշել է. «Կապիտալի արտահանումն ազդեցություն է գործում կապիտալիզմի զարգացման վրա այն երկրներում, ուր նա ուղղվում է՝ չափազանց արագացնելով այդ զարգացումը»[1]։

Եգիպտական տիրապետության վերացումից հետո՝ 1841 թ. Սիբիայում ուժի մեջ մտան 1820 թ. արքունական ֆերմանը և 1838 թ. անգլո-թուրքական պայմանագիրը, որոնցով օսմանյան սուլթանը «առևտրի ազատություն» էր շնորհել եվրոպական պետությունների հպատակներին[2]։ 1856 թ. Թանզիմաթը և նրանից բխող օրենքներն առավել նպաստավոր պայմաններ ստեղծեցին եվրոպական ապրանքների ներթափանցման համար։ Խաթթը-Հումայունը հրապարակվել էր եվրոպական մեծ պետությունների ճնշման ներքո և, ինչպես նշված է 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրում, այն դիտվում էր որպես Թուրքիայի կողմից ստանձնված միջազգային պարտավորություն, որը չէր կարող չեղյալ համարվել կամ փոփոխության ենթարկվել առանց այդ պետությունների համաձայնության։ Այդ պայմաններում Թուրքիան և նրա արաբական տիրապետությունները պետք է դառնային վաճառահանման շուկա և հումքի աղբյուր՝ եվրոպական արդյունաբերության համար։

Բեյրութում, Դամասկոսում, Հալեպում և այլ քաղաքներում հաստատվեցին օտարերկրյա առևտրական հիմնարկներ, ապահովագրության և տրանսպորտի ընկերություններ, բանկեր: Սկսվեց ճանապարհաշինարարությունը: 1858 թ. ֆրանսիական կապիտալին պատկանող «Օսմանյան կայսերական ընկերությունը» ձեռք բերեց առաջին՝ Բեյրութ—Դամասկոս խճուղու (112 կմ) կառուցման և շահագործման մենաշնորհը: 1863 թվականից, երբ շահագործման հանձնվեց այդ ճանապարհը, ուղևորների և բեռների փոխադրությունը կատարվում էր ֆրանսիական դիլիժանսներով, ընդ որում ոչ թե երեք օրում՝ ինչպես առաջ, այլ 13 ժամում[3]:

XIX դարի երկրորդ կեսին Սիրիան վերածվեց եվրոպական կիսագաղութի[4]: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ թուրքական կառավարությունը անանկ հայտարարվեց, Սիրիայում նրա իրավասությունից հանվեց և օսմանյան պետական պարտքի վարչությանը հանձնվեց աղի, ծխախոտի և ձկնորսության մենաշնորհը, մետաքսի տասանորդը, խմիչքների աքցիսը, դրոշմատուրքը և այլն: Անգլիական և ֆրանսիական կապիտալիստները, տիրելով օսմանյան պարտքի արժեթղթերի մեծագույն մասին, իրենց ձեռքն էին վերցրել Սիրիայում գործող պետական պարտքի վարչության գործակալությունները, որոնք տարածված էին երկրի մինչև անգամ ամենախուլ անկյուններում:

Օսմանյան պետական պարտքի վարչության ստեղծումից հետո անգլո-ֆրանսիական կապիտալիստները նոր թափ հաղորդեցին ճանապարհաշինարարությանը: XIX դարավերջին արդեն շահագործման էին հանձնվել 625 կմ ընդհանուր երկարությամբ բազմաթիվ անոթևան և ռելսավոր ճանապարհներ, որոնք միմյանց հետ էին կապում Հալեպի, Սիրիայի, Բեյրութի նահանգների, Լևանտյան Լիբանանի և Երուսաղեմի մութասարիֆաթների գլխավոր քաղաքները[5]: Առևտրական խոշոր նշանակություն ունեին Բեյրութ—Դամասկոս, Դամասկոս—Հաուրան, Լաոդիկիա—Համա, Տրիպոլի—Համա—Հոմս—Հալեպ, Շթորա—Բաալբեկ, Սաիդա—Մերջայուն, Հալեպ—Ալեքսանդրետ խճուղիներն ու երկաթուղիները: Բացի այդ, Հալեպ քաղաքը նոր ճանապարհներով կապվեց Այնթապի, Բիրեջիկի և Ուրֆայի հետ: Անտիոք քաղաքից դուրս եկող ճանապարհը, Թոփ-Բողազում միանալով նահանգային մայրուղուն, կապվում էր Հալեպի և Ալեքսանդրետի հետ: 1897 թ. ֆրանսիական կապիտալիստները հիմնովին վերակառուցեցին Բեյրութի նավահանգիստը: Այժմ այն կարող էր ընդունել ժամանակի խոշորագույն նավերը և առևտրի ծավալով համեմատվել Կ. Պոլսի հետ:

XIX դարի վերջերից սկսվեց գերմանական կապիտալի արտահանումը Թուրքիա և նրա արաբական տիրապետությունները։ Գերմանական դիվանագիտությանը հաջողվեց ձեռք բերել Կ. Պոլիս—Հալեպ—Բաղդադ—Պարսից ծոց, Բաղդադ—Հիջազ երկաթուղիների և Ալեքսանդրետի նավահանգստի կառուցման մենաշնորհները։ Պայքարելով գերմանական ներթափանցման դեմ, անգլո-ֆրանսիական իմպերիալիստներն ազդեցության գոտիների բաժանեցին արաբական երկրները։ Միջագետքը և Պաղեստինը հռչակվեց անգլիական, իսկ Սիրիան և Լեռնային Լիբանանը՝ ֆրանսիական ազդեցության ոլորտ։

Օտարերկրյա կապիտալը, մղում տալով առևտրական կապիտալի զարգացմանը, մի կողմից նպաստում էր ֆեոդալական Սիրիայի մերձեցմանը առաջավոր կապիտալիստական աշխարհին, մյուս կողմից՝ ամրապնդում տնտեսական կապերը նրա տարբեր քաղաքների, տարբեր շրջանների միջև, զգալի դեր կատարում ներքին շուկայի ընդլայնման գործում։ Սակայն օսմանյան բռնապետության ծանր լուծն անհամատեղելի էր բուրժուական հարաբերությունների զարգացման հետ, իսկ եվրոպական իմպերիալիստները՝ սեփական շահերի համապատասխան ձգտում էին Սիրիայում պահպանել մինչկապիտալիստական արտադրահարաբերությունները։

Սիրիայում կապիտալիզմի զարգացումը կատարվում էր դանդաղ և տառապալից ջղաձգումներով։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար անհրաժեշտ էր՝ բնակչության տեղաշարժի ազատություն, անձի և ունեցվածքի ապահովություն, սոցիալական իրավահավասարություն, նոր օրենքներ, նոր դատական սիստեմ, վերջապես՝ հասարակական կյանքի նոր դեմոկրատական ձևեր։ Սիրիայում բոլոր այս պայմանները փաստորեն բացակայում էին։ Այնտեղ տիրում էին ֆեոդալները։ Բնակչության մնացած բոլոր խավերը անիրավահավասար էին, գյուղացիության մի մասը գտնվում էր ֆեոդալներից անձնական կամ հողային, իսկ գյուղական վերնախավը, առևտրականները, արհեստավորները, մանուֆակտուրաների տերերը՝ հարկային, դատական և վարչական կախվածության մեջ։ Այդ պայմաններում կապիտալիզմի տարրերը չկարողացան ֆեոդալական ամուր կեղևը պատռել և ընդգրկել արտադրության բոլոր բնագավառները։

Քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայում գերիշխում էր ֆեոդալական արտադրաեղանակը։

Օսմանյան տիրապետության ներքո Սիրիան տրոհված էր մի շարք վարչատերիտորիալ միավորների, որոնք տարբեր ժամանակներում ունեցել են տարբեր թիվ և տարածություն։ XIX դարի կեսերից այդ միավորներն էին Հալեպի, Սիրիայի, Բեյրութի վիլայեթները կամ նահանգները և Լեռնային Լիբանանի[1] և Դեյր էզ-Զորի մութասարրիֆաթները, որոնք իրենց հերթին բաժանված էին ավելի փոքր միավորների՝ սանջակների, կազաների, նահիեների։ Դրանք ընդարձակվելով Կիլիկիայի, Միջագետքի և Պաղեստինի հաշվին, գրավում էին մեկ-երրորդ չափով ավելի մեծ տարածություն, քան այսօր Սիրիան և Լիբանանը։

Սիրիան ներկայացնում էր տարբեր ժողովուրդների ու ցեղերի, տարբեր կրոնների ու մշակույթների մի խայտաբղետ խճանկար։ 1860 թ. Սիրիայում կային 1325 հազար մուսուլմաններ և 410 հազար քրիստոնյաներ։ Լեռնային Լիբանանում քրիստոնյաները հաշվում էին 160.500, մուսուլմանները՝ 32.700 շունչ[2]։ Սուննի մուսուլման էին Սիրիայի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմող արաբները, ինչպես և թուրքերը, քրդերը, չերքեզները և այլն[3]։ Շիայի հետևորդ էին մյութվելիները, ալավիները և այլն, որոնք սուննիների համեմատությամբ փոքրաթիվ էին։ Դրուզները համարվում էին իսլամական աղանդավորներ[4]։ Կային նաև հրեաներ և աննշան թվով եզդիներ։

Քրիստոնյա ազգաբնակչությունը կազմում էին արաբները, հույները, հայերը և ասորիները, որոնք տրոհված էին բազմաթիվ կրոնադավանական՝ կաթոլիկական (մարոնական, հույն կաթոլիկ, ասորի կաթոլիկ, հայ կաթոլիկ, լատին և այլն), ուղղափառ (հույն ուղղափառ, հայ առաքելական, ասորի հակոբիկյան) և բողոքական կամ ավետարանական (պրեզբիտերյան, անգլիքան և այլն) համայնքների։ Առավել բազմամարդ էին մարոնականների, հույն ուղղափառների, հայ առաքելականների և հույն կաթոլիկների համայնքները։ Համեմատաբար փոքրաթիվ հետևորդներ ունեին ասորի միաբնակ կամ հակոբիկյան, ասորի կաթոլիկ և բողոքական եկեղեցիները։ Նեստորական, խալդեական կամ հին նեստորական և լատինադավան համայնքներից յուրաքանչյուրն ուներ հազիվ մի քանի հարյուր անդամ։

Սիրիայի պաշտոնական լեզուն թուրքերենն էր։ Նահանգային բոլոր գործարքները, ամեն կարգի պաշտոնական թղթակցությունները կատարվում էին թուրքերեն։ Այնուամենայնիվ ամենատարածված լեզուն արաբերենն էր, որը նույնիսկ գրավել էր ազգային փոքրամասնություն-

ներից շատերի մայրենի լեզվի տեղը: Զեյթունում և մի շարք այլ գյուղական վայրերում քրդերը խոսում էին քրդերեն, ասորիները՝ ասորերեն, մինչդեռ քաղաքներում նրանք համարյա բոլորն էլ արաբախոս էին: Ըստ Վիտալ Կինեի, Սիրիայի հույների, ասորիների, նեստորականների մայրենի լեզուն դարձել էր սոսկ «ժամասացության լեզու»[5]: Կ. Պոլսի «Մասիս» լրագրի թղթակիցը նույնպես նշում էր, որ «(Հալեպում) հույներն երբեք հունարեն չեն գիտեր, թեև եկեղեցվո ասացմանց մեջ երբեմն խառնըված հունարեն կա»[6]:

Սիրիայում առհասարակ պահպանվել էր հայերեն լեզուն, սակայն տարբեր էր նրա վիճակը տարբեր քաղաքներում: Սիրիահայ հրապարակախոս Հովհ. Քյուրքճյանոֆը գրում էր. «(Հալեպում) չկա երկու (հայ) մարդ, որ իր մայրենի լեզուն գիտնա, որ և իցե բան մը կարդալու և գրելու, և անոր իմաստը իմանալու կարող ըլլա»[7]: Սակայն, դա, ակներև չափազանցություն է: 1868 թ. Հալեպ այցելած Աստ. Տ. Հովհաննեսյանը հաղորդում էր, որ «Հասարակաց լեզուն արաբերեն է, բայց հայք գիտեն հայերեն խոսիլ»[8]: «Արևելք» լրագրի մի համարում ասված է. «Ժամասացությունք, թեև հայերեն կըլլան, սակայն ավետարանները հայերեն—արաբերեն կկարդացվին ի գիտություն տեղացվոց. շատ անգամ խոսված քարոզներն իսկ համառոտիվ արաբերեն կկրկնեն քահանայք, ծանուցմունք հայ-արաբական կըլլան...»[9]:

Իրականությունն այն էր, որ Հալեպի հայերը պահպանել էին մայրենի լեզուն որը աղավաղված էր արաբերենից կատարված զգալի փոխառություններով: Եկեղեցական արարողությունների ժամանակ քահանաները ասում էին՝ «ճիպ բուրվառ (բեր բուրվառը), յուֆթահ ըլ գիրք (բաց գիրքը)» և այլն[10]: Սակայն գնալով բարելավվում էր հայերեն լեզվի վիճակը: 1906 թ. Հալեպից գրում էին. «Այն կարծիքը, թե հալեպցի հայերը սոսկ արաբախոս են և նույնիսկ եկեղեցական արարողություններն ալ արաբերեն լեզվով կկատարեն, բոլորովին թյուրիմացության արդյունք է»[11]:

Սիրիայի որոշ շրջաններում խոսում էին տարբեր բարբառներով: Անտիոքի շրջանի հայաբնակ գյուղերի խոսակցական լեզուն Հրաչյա Աճառյանը անվանում է «Այուրիս բարբառ», իսկ Ա. Ղարիբյանը սահմանազատում է և որպես ինքնուրույն բարբառ է բնութագրում Սվեդիայի, Քեսապի և Բեյլանի բարբառները՝ իրենց ենթաբարբառներով[12]: Ըստ սփյուռքահայ լեզվաբան Տիգրան Անդրեասյանի, Սվեդիայի, Քեսապի, և նրանց շրջակա գյուղերի, ինչպես նաև Արամո և Ղնեմիե գյուղերի հայ բնակիչները «միևնույն բարբառն է, որ կգործածեն...: Այդ բոլոր տեղե-

րուն գավառաբարբառները իրարու նկատմամբ ևնթաբարբառներ են...։ Բայց և այնպես այս գյուղերը ունին հնչումի զգալի տարբերություններ և այլ զարտուղություններ»[13]։

Այսպիսով, Սիրիայում հայերը կազմում էին առավել բազմամարդ ազգային փոքրամասնություններից մեկը։ Ընդ որում ավելի քան մի տասնյակ կրոնադավանական համայնքների ընտանիքում հայ առաքելական համայնքն իր թվաքանակով զբաղում էր մարոնականներից և հույն ուղղափառներից հետո առաջին տեղը։ Ի տարբերություն մյուս քրիստոնյաների, հայերը պահպանել էին մայրենի լեզուն և ազգային մշակույթի այլ հատկանիշներ։

Սիրիայի հայերի թվաքանակի վերաբերյալ պահպանվել են բավական կցկտուր, հաճախ հակասական, խճճված տվյալներ։ 1864 թ. առաջին և հետագայում անցկացված պետական մարդահամարների տվյալները ստույգ չեն։ Քրիստոնյաները հաճախ հաշվառման են ենթարկվել որպես ղայրը մյուսլիմ (ոչ մահմեդական)՝ առանց նշելու նրանց ազգային պատկանելիությունը։ Բացի այդ, հարկային, վինովորական և այլ պարտավորություններից խուսափելու նպատակով, հայերը և մյուս քրիստոնյաները շահագրգռված էին, որ ճիշտ ցույց չտան իրենց թվաքանակը։ Իրականությանը համեմատաբար ավելի մոտ են այն տվյալները, որ հրապարակվել են եվրոպական ճանապարհորդների ուղեգրություններում, առանձին հեղինակների ուսումնասիրություններում և հայ պարբերական մամուլի էջերում։ Սակայն դրանց օգտագործումը կապված է մեծ դժվարությունների հետ։ Եվրոպական աղբյուրները հակված են առհասարակ մեծացնելու հայ կաթոլիկների և բողոքականների թվաքանակը, իսկ հայկականները՝ հաճախ հայ են համարում միայն նրանց, ովքեր հավատարիմ են մնացել ազգային առաքելական եկեղեցու դավանանքին։

Համադրելով մեզ հայտնի աղբյուրների տվյալները, կարող ենք մի փոքր վերապահությամբ ընդունել, որ 1870—1890-ական թթ. Սիրիայում ապրում էին առնվազն 80—85 հազար հայեր։

Աղյուսակում ամփոփված տվյալները, ակներևորեն պակասավոր լինելով հանդերձ, կարող են մոտավոր պատկերացում տալ հայերի տեղաբաշխման մասին[14]։

Ինչպես տեսնում ենք (աղյուս. № 1) հայեր կային Սիրիայի բոլոր նահանգներում, սակայն նրանց հիմնական զանգվածը հաստատված էր Հալեպի նահանգի համանուն սանջակում։ Այստեղ հայ գյուղացիությունը

Հայաբնակ վայրեր	1870—1890-ական թթ.		
	քաղաքային բնակիչներ	գյուղական բնակիչներ	հայերի ընդհ. թվաքանակը
Հալեպի սանջակ	18484	50310	68794
Սիրիայի նահանգ	5000	2500	7500
Բեյրութի նահանգ	2350	2131	4481
Լևռնային Լիբանանի մութեսարիֆաթ	—	60	60
Դեյր էզ-Զորի մութեսարիֆաթ	450	—	450
Ընդհանուր գումար	26284	55001	81285

քաղաքաբնակների նկատմամբ ուներ թվական զգալի գերակշռություն: Նրանց թվաքանակների հարաբերակցությունը մոտավորապես 2:1 էր, այն դեպքում, երբ մյուս վայրերում քաղաքաբնակներն ավելի խոշոր թվաքանակ ունեին, քան գյուղացիությունը:

Նահանգային վարչատնտեսական կենտրոն Հալեպ քաղաքի բնակչության ճնշող մեծամասնությունը տարբեր ազգության մուսուլմաններ էին: Արաբների համեմատությամբ քրդերի, թուրքերի և մյուս մուսուլման բնակիչների թվաքանակը զգալիորեն փոքր էր: 1881—1882 թթ. Հալեպում ապրում էին 51.000 մահմեդականներ, 6500 հրեաներ և 21235 քրիստոնյաներ, այդ թվում 7908 հույն (հունադավան արաբներ), 6473 հայ, 3509 ասորի և 3345 քրիստոնյա արաբներ, օտարներ և այլն: Քրիստոնյաներից կաթոլիկներ էին 17.739, ուղղափառներ՝ 3370, բողոքականներ՝ 126 շունչ: Կաթոլիկների 6708-ը արաբացած հույներ էին, 4371-ը՝ հայեր, 3441-ը՝ ասորիներ, մնացյալը՝ արաբներ և այլն: Հայ առաքելական համայնքն ուներ 2102, հունականը՝ 1200 և ասորականը՝ 68 հետևորդ[15]:

Անտիոքի կամ Անթիքեի կազայի բնակչության ազգային կազմը բավական խայտաբղետ էր: Բացի արաբներից, կային թուրքեր, քրդեր, անասարիներ, չերքեզներ, հույներ, ասորիներ, հայեր և այլն: Հայերը հիմնականում հաստատված էին Ջեբել Մուսայի և Ջեբել Ակրայի գյուղերում, մասամբ էլ կազայի վարչատնտեսական կենտրոն Անտիոքում:

1867 թ. Անտիոքում կար 50 ընտանիք կամ շուրջ 400[16], 1880 թ.՝ 500 հայ[17]: Երկու դեպքում էլ հաշվառման չեն ենթարկվել հայ կաթոլիկները, որոնք իրենց թվաքանակով հավանաբար չէին զիջում ազգային

եկեղեցուն հավատարիմ մնացածներին։ 1895 թ. Անտիոքի 23.550 բնակիչներից շուրջ 7500-ը քրիստոնյաներ էին, այդ թվում՝ 3784 հայեր, ներառյալ հայ կաթոլիկները[18]։ 1909 թ. կոտորածից հետո Անտիոքի փոքրիկ գաղթօջախը վերականգնվեց և 1911 թ. այնտեղ կային 206 հայեր[19]։

Ամբողջովին հայաբնակ էին Սվետիայի կամ Ջեբել Մուսայի լանջերին գետեղված վեց գյուղերը։ 1867 թ. Յողուն Օլուքում կար 300, Հաջի Հապիպլիում՝ 80, Քապուսիեում՝ 70, Պիթիասում՝ 30, Խըդր-Բեկում և Վաքըֆում՝ 50, ընդամենը 550 տնտեսություն կամ 5500 հայ՝ մեկ տանը տասը շնչի հաշվով[20]։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, Սվեդիայի հայերի թվաքանակը շուրջ 1350 տնտեսություն կամ 6300 շունչ էր, այդ թվում Յողուն-Օլուքում՝ 1241, Պիթիասում՝ 1366, Քապուսիեում՝ 1135, Հաջի-Հապիպլիում՝ 1110, Խըդր-Բեկում՝ 993, Վաքըֆում՝ 440[21]։

Ջեբել-Ակրայի շրջանում ամբողջովին հայաբնակ էին տասը գյուղ։ 1866 թ. դրանցից խոշորագույնը՝ Քեսապը ուներ 300, իսկ նրա շրջակա գյուղերից յուրաքանչյուրը՝ 40 կամ 50 տնտեսություն[22]։ 1880 թ. Քեսապում և նրա շրջակայքում կար 600 տնտեսություն կամ շուրջ 6000 հայ[23]։ 1911 թ., երբ այդ գյուղերից անցել էին կոտորածի սարսափները, Քեսապում մնացել էր 2786, Կարապուրանում՝ 1286, Դայաճըքում՝ 435, Քեորքյունեում՝ 342, Էքիզ-Օլուքում՝ 312, Էսքի-Էորենում՝ 179, Չինարճըքում՝ 177, Դյուզ-Աղաճում՝ 113, Պաղչաղազում՝ 121, Պաշուրտում՝ 85, ընդամենը 5836 հայ[24]։

Բեյլանի կամ Բելենկի վարչատնտեսական կենտրոն համանուն գյուղաքաղաքի բնակչությունը կազմում էին միայն «հայք և տաճիկք», այսինքն տարբեր ազգության կամ ցեղի (թուրքմեն, ավշար և այլն) պատկանող մուսուլմաններ։ 1867—1868 թթ. Բեյլանի հայերի թվաքանակը «200 տուն», կամ շուրջ 2000 շունչ էր[25]։ 1880 թ. Բեյլանում կար 300[26], իսկ դարավերջին՝ 350—400 հայկական տնտեսություն։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նրանց թվաքանակը հավանաբար անցնում էր 4000-ից։

Բացի այդ, բազմաթիվ հայաբնակ գյուղեր տեղաբաշխված էին Բեյլանի կազայում։ 1906 թ. տվյալներով, Նարդիզլի գյուղում կար 20, Աթըկում՝ 16, Գյուզելլիում՝ 16, Սովուք-Օլուքում՝ 9, Ղըշլա-Դերեում և Ղանլը-Դերեում՝ 15 հայ ընտանիք[27]։ Տվյալներ չկան Սողանջի, Ֆարթըսլի, Բալլըդաստաղ, Դեյրմեն-Դերե, Սովուք-Սու և այլ հայաբնակ գյուղերի վերաբերյալ։ Վ. Կինեն, դուրս ձգելով համանուն գյուղաքաղաքը, Բեյլանի կա-

գայում հաշվում է 6565 բնակիչ, որոնցից 2310-ը քրիստոնյաներ էին[28], այսինքն՝ հայեր։

Ալեքսանդրետ կամ Իսկենդերուն քաղաքը Հալեպի նահանգի գլխավոր նավահանգիստն էր։ Անցյալում ճոխ ու բարգավաճ այդ քաղաքից մնացել էր մի աննշան բնակավայր, որը սակայն բարեկարգվում էր առևտրի աշխուժացմանը զուգընթաց։ Նրա բնակիչները «հայք, հույնք և տաճիկք» էին։ Ալեքսանդրետի հայերի թվաքանակը 70-80 տնից կամ 300—400 շնչից այն կողմ գրեթե չի անցել[29]։ Ավելի շատ հայեր կային հառնուն կազայի գյուղական վայրերում։ Վ. Կինեի տվյալներով, 1895 թ. Ալեքսանդրետի կազայի բոլոր 26 գյուղերի 16.480 բնակիչներից 7235-ը քրիստոնյաներ էին[30]։ Հավանաբար նրանց կեսը հայ գյուղացիներ էին։

1895 թ. Ջիսր Շուղրի կազայի 32.850 բնակիչներից 9850-ը քրիստոնյաներ էին[31], այսինքն ասորիներ, հույներ (հունադավան արաբներ) և հայեր։ Աղբյուրներում հիշատակվում են միայն Յակուբիե և Ղնիե ամբողջովին հայաբնակ գյուղերը։ Ըստ ծխական հաշվառման, 1911 թ. առաջինում կային 691, երկրորդում՝ 610 հայ գյուղացիներ[32], չհաշված հայ կաթոլիկները։ Ուստի կարելի է ասել, որ Ջիսր Շուղրի կազայի քրիստոնյաների առնվազն մեկ-չորրորդը կամ շուրջ 2500 հայեր էին։

Հալեպի սանջակի հայահոծ շրջաններից էին նաև Այնթապի և Քիլիսի կազաները։ 1868 թ. Այնթապ քաղաքի հայերի թվաքանակը 1730 տուն կամ շուրջ 5000, իսկ 1878 թ.՝ ավելի քան 12000 շունչ[33] էր։ 1867 թ. Քիլիսում կային «400 տունի չափ» կամ շուրջ 2000 հայեր, իսկ 1870-ական թթ. ավելի քան 2500[34]։ Այդ կազաների գյուղական վայրերի, ինչպես նաև Հալեպի սանջակի մյուս կազաների հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ չկան մեզ հայտնի աղբյուրներում։

Բեյրութի նահանգն ընդգրկում էր Լաոդիկիայից մինչև Յաֆֆա ձգվող ծովամերձ երկրամասը, և բաժանված էր չորս սանջակի՝ Ակկա, Թարապլուս կամ Տրիպոլի, Լաոդիկիա և Բալկա կամ Նաբլուս, որոնց բազմաթիվ կազաներից սիրիական երկրամաս էին միայն Բեյրութը, Սաիդան, Սուրը, Մերջայունը, Ակկան, Տրիպոլին, Սաֆիդան, Ակկարը, Լաոդիկիան և մի քանի այլ վայրեր։

Մինչև XIX դարի կեսերը Բեյրութ քաղաքի հայկական գաղթօջախը հաշվում էր 60 տուն կամ շուրջ 300 շունչ[35]։ 1878 թ. ս. Նշան եկեղեցու վերանորոգման ծախսերին մասնակցողների ցուցակից երևում է, որ Բեյրութի հայերը մեծ մասամբ Ադանայից, Մարաշից, Եդեսիայից, Բեյլանից, Տիգրանակերտից, Արաբկիրից, Ակնից, Կ. Պոլսից, Բաղդադից և

այլ վայրերից պանդուխտներ էին։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին բեյրութահայերի թվաքանակը բարձրացել էր շուրջ 1500 շնչի[36]։

Լաոդիկիայի կամ Լաոդիկեի և նրա մերձակա գյուղերի հայերի վերաբերյալ պահպանվել են սուղ տվյալներ։ Ըստ Վ. Կինեի, 1895 թ. Լաոդիկիա քաղաքի 22 հազար բնակիչներից 10 հազարը քրիստոնյաներ էին, այդ թվում 1600 հայեր[37]։ Ամբողջովին հայաբնակ էին Արամո և Գնեմիի գյուղերը, որոնցից յուրաքանչյուրում կային 100 տնտեսություն կամ շուրջ հազար շունչ[38]։ 1911 թ. Արֆալը, Յամադի, Կեողչյու, Ֆաքը Հասան կոչված թուրքմենական գյուղերում ցրված ապրում էին շուրջ 500 հայեր[39]։

Հայկական համայնքներ սաղմնավորվել էին նաև Բեյրութի նահանգի հարավային կազաներում։ 1895 թ. Սուր քաղաքի շրջակա գյուղերում կային 530, Մերջայունում՝ 201 հայեր[40]։

Սիրիայի նահանգը բաժանված էր չորս՝ Շամի-Շերիֆի, Համայի, Հաուրանի և Մաանի սանջակների, որոնց քաղաքներում և գյուղերում ձևավորվել էին հայկական փոքրիկ գաղթօջախներ։ Դրանցից ամենաբազմամարդը Դամասկոսի գաղթօջախն էր, որը, սակայն, բնականոն զարգացման պայմաններ չի ունեցել պարբերաբար կրկնվող հակաքրիստոնեական հալածանքների հետևանքով։ 1860 թ. դրուզ-մարոնական ընդհարումների ժամանակ բորբոքված հակաքրիստոնեական բուռն կրքերի զոհ են դարձել մի քանի հարյուր դամասկոսահայեր, և համարյա կործանվել է ս. Սարգիս հնօրյա վանքը։ Այնուամենայնիվ դարավերջին Դամասկոսում կային 1100, Ջեբել Հաուրանում՝ մի քանի հարյուր հայեր[41]։

Հայկական փոքրիկ գաղթօջախներ կային Բաալբեկում, Համաձում, Հոմսում և այլ վայրերում, սակայն տվյալներ չունենք նրանց թվաքանակի մասին։

Տարբեր ժամանակներում Լեռնային Լիբանանն ընդունել է հայ, հույն, ասորի գաղթականներ[42]։ Քեսրվանի ֆեոդալ շեյխ Խազենը եկվորներին տալիս էր հող և դրամ, որպեսզի նրանք մշտական բնակություն հաստատեն իր տիրույթներում։ 1828—1830 թթ. Լեռնային Լիբանանում ապաստան են գտել զգալի թվով հայեր, որոնք խուսափել էին էրզրումում, Տարոնում և այլ վայրերում մոլեգնող հակակաթոլիկական հալածանքներից։ Նրանց օգնության ձեռք են մեկնել մարոնականները, հատկապես էմիր Բեշիրը[43]։ 1860 թ. Զղարթայում և մի քանի այլ գյուղերում մնացել էին շուրջ 300[44], իսկ դարավերջին՝ 60 հայեր։ Մնում է հետևցնել, որ Լեռնային Լիբանանի հայ գաղթականները, լինելով ճնշող մեծամասնության կաթոլիկներ, ձուլվել են դավանակից քրիստոնյա արաբների

հետ։ Դրա օգտին է խոսում մինչև օրս էլ տարբեր գյուղերում հայկական ծագումով լիբանանցի արաբների առկայությունը։ Հայկական ծագում ունեն, օրինակ, Բեյթ Արմանի, Բեյթ Բիտար, Բեյթ Ջունյն, Բեյթ Մրատ և այլ անուններով կոչվող շատ հայտնի ընտանիքներ։

Դեյր էզ-Զորի մութեսարիֆաթի շուրջ 20 հազար բնակիչներից միայն 1200-ը քրիստոնյա էին, այդ թվում 450 հայեր, որոնք հիմնականում հաստատված էին Համանուն քաղաքում[45]։

2. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Մինչև XIX դարի 40-ական թթ. Սիրիայի քաղաքները արհեստագործության բավական նշանավոր կենտրոններ էին։ Հալեպը դիպուկ կերպով հորջորջվում էր Արևելքի Մանչեստր։ Նրա մետաքսյա, բրդյա և բամբակյա գործվածքները ոչ միայն բավարարում էին ներքին պահանջարկը, այլև արտահանվում էին անգամ որոշ եվրոպական երկրներ։

Սակայն արհեստագործության զարգացման վրա բացասաբար էր անդրադառնում նախ և առաջ եվրոպական ապրանքների ներհոսքը, որոնց հետ տեղական արտադրանքները ոչ իրենց որակով, ոչ էլ գնով չէին կարող մրցել։ Արտադրության որակը բարելավելու, գինն իջեցնելու և այլ միջոցներով օտարերկրյա մրցակցությանը տոկալու փորձերը քիչ թե շատ կայուն արդյունքի չհասցրին։ Կործանիչ հարված սատյան մանավանդ ջուլհակները։ 1850-ական թթ. Հալեպում նախկին 16.000-ի փոխարեն մնացել էր 1116[1], Դամասկոսում 3000-ի փոխարեն 1400 դազգահ[2]։ XIX դ. վերջերին ջուլհակագործությունը արդեն կանգնել էր անելանելի վիճակի առաջ։ Հալեպի տեքստիլ արդյունագործության վիճակի մասին տնտեսագետ Փափազյանը գրում էր. «Կտավի, ջուլի, տեսակ-տեսակ չիթերու, ոսկեթելի, սավայիի և ասոնց նման շատ մը արհեստներ ... կամ մեռած են կամ մահամերձ... Երկու արհեստներ միայն կենդանի են, այն է՝ մետաքսյա հյուսվածանյութեր և մանածե մանուսաններ»[3]։ Առաջինը պարզապես կիսամշակ մետաքսահումք էր, իսկ երկրորդը՝ արևելյան առանձնահատուկ գործվածք, որն ավելի էժան էր վաճառվում, քան նրա եվրոպական նմանակը։

Սիրիայում արհեստագործության անկման գլխավոր պատճառներից էր նաև «հումքի սովը»։ Քարից, ասֆալտից և աղից բացի մյուս օգտակար հանածոները՝ երկաթը, պղինձը, քրոմը, մանգանեզը և այլն կամ անուշադրության էին մատնված կամ էլ արտահանվում էին անմշակ վիճակում։ Անմշակ կամ կիսամշակ էր արտահանվում նաև ապրարային

հումքը՝ մետաքսը, բուրդը, բամբակը, մատուտակը, մորթիները և այլն։ Լիբանանի գրեթե ամբողջ մետաքսահումքը և Սիրիայի մետաքսահումքի մեծագույն մասն արտահանվում էր Ֆրանսիա[4]։

Արհեստագործության անկումը, սերտորեն շոշափելով նաև հայերի շահերը, արտահայտվել է ժամանակի հայ պարբերական մամուլի էջերում։ Եթե ոմանք արհեստագործության անկման պատճառները փնտրում էին արհեստավորների հետամնացության մեջ, ապա ոմանք էլ նրանում՝ որ եվրոպացիները փորձում էին Սիրիան օգտագործել որպես վաճառահանման շուկա և հումքի աղբյուր։ Այդ առումով հետաքրքրական մի եղելություն արձագանք է գտել Կ. Պոլսի «Մասիս» լրագրում։ Նրա աշխատակիցն Անտիոքում այցելել է տեղական կապիտալով կառուցված «բամբակ մանելու գործարան մը», որը, սակայն, այդպես էլ շարք չի մտել եվրոպացիների խափանարարության հետևանքով։ Նրա այն հարցին, թե ինչու եվրոպացիները չեն օգնում, որպեսզի գործարանը «ոտքի կանգնի», գործարանի մեքենաները տեղադրելու համար եվրոպայից հրավիրված մասնագետը պատասխանել է. «Եթե այս ֆաբրիկան ոտքի կանգնի, ալ ո՞ւրկից բամբակ պիտի տանեմք և մանածենիս ո՞րու պիտի ծախեմք...»[5]։

Եվրոպական ապրանքների ներհոսքի և հումքի սովի պայմաններում գրեթե բոլոր արհեստները և մանուֆակտուրաներն առավել կամ նվազ չափով անկում ապրեցին։ Համեմատաբար քիչ կրճատվեց այն ապրանքների արտադրությունը, որոնք պատասխանում էին տեղական բնակչության սպեցիֆիկ պահանջներին, կամ որոնց նմանակը չէր ներմուծվում Եվրոպայից։

1850—1860-ական թթ. տեղական հումքի հիման վրա առաջացան մի շարք «ֆաբրիկաններ», որոնցից այդ կոչմանը քիչ թե շատ համապատասխանում էին ֆրանսիական կապիտալին պատկանող մետաքսաթելի ձեռնարկությունները։ Բեյրութ քաղաքում և նրա արվարձաններում գործում էին 12 խոշոր (1000 կոճ կամ ճախարակ ունեցող) և 40 փոքր (500 կոճ կամ ճախարակ ունեցող) մանարաններ, որոնք մետաքսաթել էին մատակարարում Լիոնի մետաքսագործական ֆաբրիկաներին[6]։ Այդ կարգի մանարաններ կային նաև Հալեպում, Դամասկոսում և այլ քաղաքներում։ Հյուսվածքեղենի, պահածոների, վառոդի, կաշեգործական, օճառագործական, ձիթահանման, սպիրտահանման և այլ «ֆաբրիկանները» սովորական արհեստանոցներ էին, որտեղ գրեթե ամբողջ աշխատանքը կատարվում էր ձեռքով։

XIX դարի վերջերին Սիրիայում նախադրյալներ ստեղծվեցին կապիտալիստական արդյունաբերության համար։ Երկաթուղու բավական լայն

ցանցի կառուցումը նպաստեց սեփականազուրկ գյուղացիական զանգվածների առաջացմանը, ապրանքաշրջանառության լայնացմանը, բեռների ծավալի մեծացմանը և կապիտալների մի տեղից մյուսը փոխադրելուն։ Սեփականազրկված գյուղացիները պատրաստ էին ամենանվաստացուցիչ պայմաններով վարձվել արդյունաբերության մեջ։ Այդ պայմաններում հարուստ վաճառականները սկսեցին իրենց կապիտալների մի մասն առևտրի ոլորտից տեղափոխել արդյունաբերության բնագավառը։

XIX դարի երկրորդ կեսին Սիրիայի չաղաքներում կային բազմատեսակ արհեստներ, որոնց կարելի է բաժանել ըստ հետևյալ խմբերի. առաջին, սննդի հետ կապված՝ չաղացպանություն, հացագործություն, հրուշակագործություն և այլն։ Երկրորդ, հագուստ ու կոշկեղեն արտադրող և դրանց հետ կապված արհեստագործներ՝ ջուլհակներ, դաջողներ, դերձակներ, մուշտակագործներ, ասեղնագործներ, արդուկողներ, կոշկակարներ և այլն։ Երրորդ, կենցաղային պահանջմունքներ բավարարող և կենցաղային գործածության իրեր պատրաստող արհեստավորներ՝ ոսկերիչներ, արծաթագործներ, ժամագործներ, պղնձագործներ, դարբիններ, կլայեկողներ, խառատներ, փականագործներ, ատաղձագործներ, որմնադիրներ, հյուսներ, բրուտներ և այլն։ Չորրորդ, առևտրի և հաղորդակցության միջոցները սպասարկող արհեստավորներ՝ թամբագործներ, պարանագործներ, պայտարներ և այլն։

«Արևելյան մամուլը» գրում էր. «Հայերը գրեթե բոլոր արհեստներուն մեջ մասնակցություն ունին...»[7]։ Նրանք միաժամանակ աչքի էին ընկնում կապիտալիստական արդյունաբերության որոշ ճյուղերի, հատկապես գորգագործության մեջ։

Մինչև XIX դարի վերջերը Սիրիայում, չնայած բարձրորակ բրդի և քնական ներկանյութերի առկայությանը, գորգագործությունը գտնվում էր զարգացման ցածր աստիճանի վրա։ Դամասկոսում պատրաստում էին սոֆրալը (մեծ չափսի) և սրալը (փոքր չափսի) գորգեր, որոնք, թեև էժան էին վաճառվում, բայց որակով զիջում էին հարևան երկրներում պատրաստվածներին։ Այդ պատճառով համարյա տարածում չէին գտել արտահանում։ 1898 թ. Հալեպում բացվում է վարպետ Կարապետ Քեհեյանի գորգագործական «շատ համեստ» արհեստանոցը, որը, կարճ ժամանակի ընթացքում աճելով, 1912 թ. արդեն վերածվել էր բավական խոշոր ձեռնարկության։ Գործարանը ուներ 120 դազգահ և շուրջ 600 աշխատավոր, որոնց պատրաստած «անեղծ, ընտիր ներկերով, նուրբ ու դե-

դեցիկ ծաղիկներով ազնիվ տեսակի մետաքսյա և բրդյա գորգերը» սպառվում էին ոչ միայն ներքին շուկայում, այլև արտահանվում էին ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Անգլիա։ 1908 թ. Քեհեայան գործարանի գորգերն արժանացել են ոսկե մեդալի Հալեպում կազմակերպված նահանգային տոնավաճառ-ցուցահանդեսում[8]։

Ջուլհակությունը ամենից շատ աշխատող ձեռքեր զբաղեցնող արհեստներից էր։ Գրեթե բոլոր քաղաքներում, անգամ գյուղերում չքավորի բնակարանից անբաժան էր ջուլհակի «հորը» և դազգահը։ Ջուլհակությունը, հանդիսանալով «փնտրված արհեստ մը, որքան այրերու, նույնքան և հայ կանանց համար» ապրուստի միջոց էր։ Արհեստանոցներում և ավելի հաճախ տնային պայմաններում արտադրվում էին ոսկեթել կամ արծաթաթել գունավոր նախշերով զարդարված մետաքսյա և բամբակյա գործվածքներ՝ դուբնի, ալաջա, դիմա, որոնք օգտագործվում էին արևելյան զգեստներ, վարագույրներ, սեղանի սփռոցներ, անկողնի, դիվանի, բազկաթոռի ծածկոցներ և այլ կենցաղային նշանակության իրեր պատրաստելու համար։

Ներկարարությունը։ Տեքստիլ արդյունաբերության և գորգագործության զարգացումը ղգալի չափով պայմանավորված էր մանածը ներկելու տեխնոլոգիայով և մանավանդ օգտագործված ներկերի որակով։ Մանուսան, ալաջան, գորգը և մյուս գործվածքները չէին կարող տոկալ եվրոպական համասեռ արտադրանքների մրցակցությանը, եթե չլինեին գունային հնարանքները, իսկ դրանք ստացվում էին թելը ներկելու միջոցով։ Սիրիական գործվածքներում գլխավոր տեղը զբաղում էին կարմիր, կապույտ գույները և դրանց երանգները, այնուհետև՝ ոսկեգույն դեղինը, կաթնագույնը, զմրուխտի կանաչը, մովը, սմբուկին և սևը։ Վաղեմի ժամանակներից այդ գույները ստանալու համար օգտագործվում էին մեծ մասամբ տեղական ծագում ունեցող բուսական, կենդանական և հանքային ներկանյութերը, իսկ XIX դարի կեսերից՝ նաև քիմիական ներկերը։ Եվրոպականի համարժեք կապույտ էր ստացվում շնորհիվ լեղակի, որին Սիրիայի հայ ներկարարները ծանոթ էին դեռևս XVII դարի վերջերից[9]։ Մինչև 1890-ական թթ. չէր հաջողվել եվրոպականի որակին հասցնել կարմիր գույնը։ Այդ գործում ղգալի ավանդ մուծեցին հայ ներկարարները, որոնք մանածը կարմիր ներկելիս կիրառում էին «Այնթաբի ներկարարներու ընկերության» մշակած եղանակը և ստանում եվրոպականին շատ մոտ արդյունք։ Այդ նպաստում էր մանուսայի և առհասարակ գործվածքների ինքնարժեքի իջեցմանը, քանի որ գունավոր մանածը

ներմուծվում էր Եվրոպայից, և անհամեմատ ավելի թանկ արժեր, քան սպիտակը[10]:

Ոսկերչությունը: Դամասկոսում, Անտիոքում և հատկապես Հալեպում հայ ոսկերիչները զգալի թիվ էին կազմում: Հայ վարպետները, զարգացնելով ոսկերչության և ակնագործության դարավոր ավանդույթները, ձեռք էին բերել զգալի հաջողություններ: Նախ և առաջ նրանց մոտ բավական խորն էր արտահայտված աշխատանքի բաժանումը, արծաթագործությունը, սատեքյարությունը և մխալայջիությունը դարձել էին ոսկերչության մասնագիտացված ինքնուրույն ճյուղերը: Սատեքյարները կռելու, դրվագելու և այլ եղանակներով ձույլ ոսկուն տալիս էին պահանջված ձևը, իսկ մխալայջիները տաշում և զետեղում էին թանկագին քարերը: Հալեպի ս. Քառասուն Մանուկ հնօրյա եկեղեցու դանձարանում պահպանված ոսկե և արծաթե իրերը՝ սկիհներ, խաչեր, թագեր, կանթեղներ, ափսեներ, աշտանակներ և այլն վկայում են սիրիահայ ոսկերիչների բարձր վարպետության մասին: Սակայն չի կարելի ընդունելի համարել Ա. Սյուրմելյանի կարծիքն այն մասին, որ իբր Հալեպում ոսկերչությունը «հնագույն ժամանակներից ի վեր գրեթե առանց բացառության հայոց ձեռքն» էր և դարձել էր «հայ վարպետներու մենաշնորհ գեղարվեստը»[11]: Եվրոպացի ճանապարհորդները դրվատանքով են պատմում ոչ միայն հայ, այլև ադրաբ, հույն և հրեա ոսկերիչների մասին[12]:

Պղնձագործությունը: Արևելքի շատ երկրների նման՝ Սիրիայում, չնայած եվրոպական կենցաղային իրերի ներթափանցմանը, տակավին լայն տարածում ունեին տեղում պատրաստված խոհանոցային և այլ կենցաղային գործածության սպասքները: Բարձր էին գնահատվում Հալեպի և Դամասկոսի պղնձագործ հայ վարպետների կերտած քանդակազարդ ջահերն ու կանթեղները, կիտվածանկար ափսեներն ու շռինչները, դրվագված վառարանները և այլն[13]:

Սիրիայի տարբեր քաղաքներում կային նաև փոքրաթիվ երկաթագործ, ինագործ և տարբեր մեքենաներ վերանորոգող հայ վարպետներ:

Դերձակությունը: Սիրիայում և Լիբանանում տեղական բնակիչները հիմնականում օգտագործում էին էնթարի և զպուն, որոնք, սակայն, XIX դարի վերջերից աստիճանաբար իրենց տեղը զիջում էին եվրոպական զգեստներին: Այդ պատճառով դերձակությունը բաժանված էր մասնագիտացված երկու ճյուղերի՝ արևելյան և արևմտյան: Դերձակության այդ երկու ճյուղերում էլ կային շնորհալի հայ վարպետներ, սակայն Ա. Սյուրմելյանն ակներևորեն չափազանցում է, երբ պնդում է, որ Հալեպում դերձակությունն առհասարակ «հայկական արհեստ» էր[14]: Հալեպում գործում

էին նաև զգալի թվով արաբ, հրեա, հույն և եվրոպացի դերձակներ, որոնք գրեթե հայերից ետ չէին մնում ոչ արևելյան, ոչ էլ եվրոպական զգեստներ պատրաստելու բնագավառում: «Բյուզանդիոնի» թղթակիցը հավաստում է, որ Հալեպի հայ արհեստավորներն իրենց դիրքերը պահպանելու համար ստիպված էին մրցել «թե տեղացի և թե եվրոպացի» արհեստակիցների հետ[15]:

Սիրիայում հայերը հնուց ի վեր աչքի էին ընկնում նաև դերձակությանը օժանդակ արհեստ համարվող մուշտակագործության մեջ:

Կաշեգործությունը: Սիրիայում, չնայած կաշվի առատ հումքի առկայությանը, կաշեգործությունը կամ խաղախորդությունը գտնվում էր զարգացման ցածր աստիճանի վրա: Այծի և ոչխարի լավագույն մորթիները արտահանվում էին հում վիճակում: Հալեպի և Դամասկոսի կաշեգործարաններում մշակվում էր մեծ մասամբ ցածրորակ հումքը, այն էլ վերին աստիճանի նախնական միջոցներով: Կաշեգործները գրեթե չէին օգտվում քիմիայի նվաճումներից, օգտագործում էին տեղական բուսաներկեր՝ ծառի կեղևներ, սումակ, վայրի հերձի և այլն: Հալեպում և շրջաններում գործում էին շուրջ հիսուն կաշեգործարաններ, որոնց մի մասը պատկանում էր Տիգրանակերտից գաղթած հայերի: Նրանք հիմնականում արտադրում էին կարմիր և դեղին ներկված կաշի, որն օգտագործվում էր գյուղացիական մուճակների, թամբի, կահույքի, ձիթայուղի տիկի և այդ կարգի այլ ապրանքների պատրաստության մեջ[16]:

Կոշկակարությունը, դերձակության նման բաժանված էր արևելյան և արևմտյան կամ եվրոպական կոշիկներ պատրաստելու ճյուղերի: Առաջինում մասնագիտացած էին արաբները, իսկ երկրորդում՝ հայերը:

Ասեղնագործությունը: Հայ ժողովրդի կիրառական արվեստի դարավոր այս ճյուղը բարձր զարգացման էր հասել Սիրիայում: Հայկական ասեղնագործության տարատեսակները, թեև ժամանակի ընթացքում անցել էին աշխարհից աշխարհ, ենթարկվել ձևափոխությունների, սակայն պահպանել էին ազգային ոճի առանձնահատկությունները և իրենց հին տեղանունները: Այսօր հայկական ասեղնագործության տարբեր տեսակները կոչվում են «Վանի գործ», «Սասունի գործ», «Զեյթունի գործ», «Մարաշի գործ», «Այնթապի գործ» և այլն: Սիրիայի քաղաքներում ամենից ավելի տարածված էին հայկական ասեղնագործության վերջին երկու տեսակները[17]:

XIX դարի վերջերին Հալեպում և շրջաններում գործում էին 102 կայսարիներ՝ ասեղնագործության տարբեր տեսակների պատրաստությամբ և վաճառքով զբաղված արհեստանոցներ[18]: Հայ կանայք տնային պայ-

մաններում մեծ վարպետությամբ պատրաստում էին վարագույրներ, ծածկոցներ, բոխչաներ, ներքնազգեստներ, գլխաշորեր, թաշկինակներ, գոտիներ և այլն, որոնք վաճառվում էին տեղում և արտահանվում ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Շվեդիա և այլ երկրներ: Սիրիահայ ասեղնագործական հազվագյուտ նմուշներ՝ խորանի վարագույրներ, շուրջառներ, սփռոցներ պահպանվում են Հալեպի հայոց եկեղեցու և Ջմմառի վանքի գանձարաններում[19]:

Սիրիայի տարբեր քաղաքներում հայերը զբաղվում էին նաև մի շարք այլ արհեստներով: Հալեպում հացագործները ճնշող մեծամասնությամբ Սասունից գաղթած հայեր էին, առհասարակ հայերն էին զբաղված ապուխտագործությամբ: Կային զգալի թվով հայ քարակոփներ, ատաղձագործներ, կահույքագործներ, ժամագործներ, լուսանկարիչներ և այլն: Հալեպում առաջին լուսանկարիչն եղել է մի հայ՝ Գրիգոր Մարկյան անունով[20]:

Խիստ տարատեսակ տեղեկություններ են պահպանվել Սիրիայում գործող հայ համքարությունների մասին: Հալեպում կային աղգային պատկանելության պատվարով տարանջատված բազմաթիվ համքարություններ, որոնցում միավորված էին միևնույն արհեստով զբաղվող թե շահագործողները և թե շահագործվողները: Ակներևորեն, աղբյուրներում հիշատակվող «դուլումճիբաշի»ները (ոսկերիչների գլուխ), «տեմիրճիբաշի»ները (երկաթագործների գլուխ) և այլն հայ համքարությունների գլխավորներն էին: Հնարավոր է, որ արաբ և հայ համքարությունները ունեին միանգամայն տարբեր հատկանիշներ: Օրինակ, Սասունից Հալեպ գաղթած հայ փոապանները հավատարիմ էին մնում Արևմտյան Հայաստանում գործող համքարական սկզբունքներին:

Սիրիայում հայ համքարությունները գոյատևեցին մինչև առաջին համաշխարհային պատերազմին հաջորդող տարիները, երբ նրանց տեղը գրավելու եկան արհեստակցական միությունները:

Բեյրութ քաղաքն այն գլխավոր դարպասն էր, որով ո՛չ միայն Սիրիան էր կապվում արտաքին շուկաների հետ: Այդ դարպասով էին անցնում նաև հիմնականում դեպի Կիլիկիա, Արևելյան Անատոլիա, Միջագետք, Պարսկաստան և այլ երկրներ տարանցվող եվրոպական ապրանքները: 1850-ական թթ. Բեյրութում բացվեց Կ. Պոլսի Օտտոմանյան բանկի մասնաճյուղը՝ եվրոպական կապիտալով, հաստատվեցին ցամաքային ու ծովային տրանսպորտի գործակալություններ, առևտրական գրասենյակներ, պահեստներ, կառուցվեցին առաջին հյուրանոցները և այլն: 1841—

1859 թթ. Բեյրութի նավահանգստից կատարվող արտահանումների ծավալը մեծացել էր 22, ներմուծումներինը՝ 67 անգամ[21]:

Վերակառուցվում էր Իսքենդերունի կամ Ալեքսանդրետի նավահանգիստը: 1868 թ. այցելելով Ալեքսանդրետ, Աստ. Տ. Հովհաննեսյանը գրել է. «Արդեն սկսած են նորոգել և շինել ինչպես մաքսատունը, վաճառականաց մթերանոցները և խանութները, շուկաները, իջևանատեղիք: ...Ունի փայտաշեն նավամատույց (իսկելե) և կանթեղակիր աշտարակ»: Ալեքսանդրետում հաստատված էին Հալեպի, Դիարբեքրի և այլ վայրերի խոշոր առևտրականների ներկայացուցիչները, որոնք ստանձնում էին «յԱսիայէ և յԵվրոպիոյ հասած ապրանքները»[22]: Միաժամանակ օգտագործվում էին Լատակիայի, Տրիպոլիի և Օրոնտեսի գետաբերանում կառուցված հնօրյա Սելևկիա կամ Սվեդիա փոքրիկ նավահանգիստները:

Առևտրական եռուզեռը համակել էր նաև Հալեպի շուկաները, որոնք XVIII դարի կեսերից գնալով ամայացել էին: Այժմ երբեմնի այդ նշանավոր շահաստանը դարձել էր դեպի հյուսիս՝ Կիլիկիա, ներքին գավառները, և դեպի արևելք՝ Միջագետք, Պարսկաստան տարանցվող ապրանքների գլխավոր կենտրոնատեղին: Այնտեղ կային «մեծ և ընդարձակ շուկաներ, և վաճառատեղիք հոյակապ քարուկիր շինվածքներով, կարավանատունք և իջևանատեղիք բազմաթիվ...»[23]: Հալեպում առևտրական ներկայացուցիչներ ունեին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը և այլ երկրներ: Կային նաև «երևելի հայ վաճառականներ», որոնց կապերը հասնում էին «Ասիայի բոլոր կողմերը, Պաղդադ, Պասրա ի Պարսկաստան»[24]:

Առևտրական առավել աշխուժություն էր տիրում Դամասկոսում: Ճանապարհորդ Բելգիոժոզոն հաղորդում է, որ եվրոպական վաճառականները Դամասկոս էին ուղարկում ոչ միայն արդյունաբերական ապրանքներ, այլև մնայուն գործակալներ, որոնք այնտեղ հաստատում էին վաճառատներ, առևտրական գրասենյակներ, պահեստներ և այլն[25]:

Առևտուրը հիմնականում կենտրոնացված էր քրիստոնյա վաճառականների ձեռքում: Ֆ. Էնգելսը գրել է. «Ո՞վ է առևտուր անում Թուրքիայում, համենայն դեպս ոչ թուրքերը: ...Հույները, հայերը, սլավոնները, արևմտաեվրոպացիները, հիմնավորվելով ծովային նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...»[26]:

XIX դարի 40-ական թվականներից գնալով աճում էր Կ. Պոլսի հայ սարաֆների կամ առևտրավարկատունների շահագրգռվածությունը դեպի Սիրիայի առևտրական շարժումը: 1849 թ. Ղալաթայի սարաֆներից Միսաք Միսաքյանը ձեռք է բերել Սիրիայի մաքսատների շահագործման մենաշնորհը[27]: 1856—1857 թթ. այդ կարգի գործարքներով աչքի են ընկել

Մկրտիչ Ճեղայիրլյանը, Պետրոս Սեֆերյանը և պոլսահայ այլ սարաֆներ[28]։ Սակայն Օտտոմանյան բանկի և եվրոպական վարկային գործակալությունների ստեղծումը հայ սարաֆներին զրկում էր Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում խաղացած նախկին դերից։ Այժմ նրանց կուտակած հսկայական միջոցները ներդրվում էին առևտրի մեջ։

1853 թ. Բեյրութում շահագործման է հանձնվել նախկին առևտրավարկատու, Սիրիայի մաքսատների երբեմնի կապալառու Անթուն Մասրիի (Անտոն Մսրլյան) միջոցներով կառուցված համանուն խանը՝ «Խան Անթուն Բեյը»[29], որն այն ժամանակ համարվում էր Բեյրութի ամենաարդիական և խոշորագույն առևտրական կենտրոններից մեկը։ Այդ լայնածավալ շենքի առաջին հարկում հաստատված էին մեծածախ առևտրով զբաղվող վաճառատներ, պահեստներ, իսկ երկրորդում՝ ներմուծող և արտահանող առևտրական գրասենյակները։ Մի ուրիշ հայ առևտրավարկատու՝ Հաննա Ղուկասը (Հովհաննես Ղուկասյան) կառուցել է Բեյրութի առաջին խոշոր շուկան, որը հայտնի էր Սուք ալ-Արման (Հայերի շուկա) անունով[30]։

1851 թ. Երուսաղեմի հայոց պատրիարքարանը Բեյրութում ձեռք է բերել «մեծաշեն և ընդարձակ տուն մը», որի մի մասը պետք է ծառայեր որպես եկեղեցի՝ «օրըստօրե» ... շատնալու վրա» եղող «հայազգի ժողովուրդին», մյուսը՝ որպես հյուրատուն[31]։ Դրանով Բեյրութ քաղաքում ևս պետք է բեկվեին առևտրական-ուխտավորական այն քարավանները, որոնք գալիս էին Արևելքի տարբեր երկրներից և, հանգրվանելով Հալեպի, Լատակիայի, Դամասկոսի երուսաղեմապատակական հյուրատներում, գնում էին հարավ՝ Պաղեստին, Եգիպտոս։

Սիրիայում և Լիբանանում առևտրի հիմնական միջոցներից մեկը գյուղատնտեսական հումքի արտահանումն էր Եվրոպա։ Այդ կարգի գործարքներով զբաղվում էին գյուղական և ոչ մեծ քաղաքների առևտրականները, որոնք գտնվում էին եվրոպական ֆիրմաներից կախման մեջ։ Եթե չհաշվենք եվրոպացի վաճառականների համար մետաքսահումքի գնմամբ զբաղվող հատուկենտ հայ միջնորդներին, ապա կարող ենք ասել, որ հայերը համարյա դեր չէին կատարում արտահանող առևտրում։ Առևտրական կուտակումների առավել կարևոր միջոց էր եվրոպական արդյունաբերության արտադրանքների ներմուծումը, որով զբաղվում էին ինչպես տեղական, այնպես էլ եվրոպացի առևտրականները։

Բեյրութի և Հալեպի հայ առևտրականների մի մասը կապված էր Լոնդոնում, Մանչեստրում, Փարիզում, Լիվորնոյում հաստատված պոլսահայ և զմյուռնահայ այն կոմպրադորների հետ, որոնք, միջնորդ օղակի դեր

կատարելով թուրք-անգլիական, թուրք-ֆրանսիական առևտրում, եվրոպական ապրանքները տարածում էին ողջ երկրով մեկ[32]: Համարյա ամբողջովին նրանց ձեռքում էր գտնվում հյուսիսային ուղղությամբ՝ Բեյրութ—Հալեպ—Կիլիկիա—Անատոլիա կատարվող տարանցիկ առևտուրը: Նրանք ներքին գավառներն էին առաքում «եվրոպական ամեն տեսակ» արդյունաբերական ապրանքներ՝ բրդյա, մետաքսյա և բամբակյա գործվածքներ, մանվածք, երկաթեղեն, անագ, ապակեղեն, ներկեր, ինչպես և մեծ քանակությամբ «գաղթաբերքեր»՝ շաքար, սուրճ, համեմունքներ և այլն[33]:

Օտարերկրյա կապիտալի ներթափանցմանը զուգընթաց զնալով սրվում էր մրցակցությունը ոչ միայն տեղական առևտրականների, այլև եվրոպական ֆիրմաների միջև: 1850-ական թթ. վերջերից սիրիահայ առևտրականներն արդեն փորձում էին դիմակայելու իրենց սպառնացող վտանգը: Մշակվել և հրապարակով քննարկվել են մի շարք ծրագրեր, որոնց հիմքում ընկած էր մի նպատակ՝ պաշտպանվել հավաքական ջանքերով:

1859 թ. Հալեպում առևտրականներ Հովհաննես Քյուրքճյանոֆի և Սարգիս Քեոսայանի նախաձեռնությամբ հիմնադրվել է «Արամյան խնայողական ընկերությունը»: Նրանց նախահաշվով, ընկերությունն ունենալու էր վեց հարյուր բաժանորդ կամ ակցիոներ, որոնց մուծած շաբաթական մասնավճարներից ակնկալվում էր տասը տարվա ընթացքում գոյացնել 375.000 ղրուշ: Որոշված էր այդ գումարով Հալեպում հաստատել առևտրական մի հիմնարկ, որն օգնության ձեռք էր մեկնելու ընկերության անդամ առևտրականներին: Տարեկան հաշվեփակից հետո յուրաքանչյուր բաժանորդ ընկերության շահույթից պիտի ստանար իր բաժինը՝ համաձայն իր ունեցած բաժնեմասերի, իսկ մնացածը պետք է առանձնացվեր Հալեպում տարրական մի դպրոց հիմնելու համար: Նրանց կարծիքով, մշակութային նպատակների և առևտրական շահերի ղուգորդումը կարող էր նպաստել ընկերության վարկի բարձրացմանը, ապահովել ժողովրդական տարբեր խավերի աջակցությունը: Արամյան ընկերությունը սկզբում արժանացել է բավական ջերմ ընդունելության, սակայն ի վերջո ձախողվել է[34]:

1866 թ. Հովհ. Քյուրքճյանոֆը հանդես է եկել մի նոր, «Արամյան առևտրական ընկերություն» կազմելու առաջարկությամբ: Ծրագրված էր կենտրոնը հաստատել Հալեպում և մասնաճյուղեր ունենալ ոչ միայն Սիրիայի, այլև ողջ Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում: Ընկերության կապիտալը (500.000 ֆրանկ կամ ավելի քան երկու մի-

լիոն ղրուշ) գոյանալու էր յուրաքանչյուրը 500 ֆրանկ կամ 2163 ղրուշ արժող 1000 բաժնետոմսերի վաճառքից: Այդ գումարը պետք է շրջանառության մեջ դրվեր հայ առևտրականներին փոխատվություն տրամադրելու միջոցով: Տարեկան շահույթի տասը տոկոսը պետք է տրվեր բաժնետերերին, իսկ մնացյալը՝ հատկացվեր ուսումնադաստիարակչական նպատակների համար: Նրանց երազանքն էր Կիլիկիայում հիմնել գիշերօթիկ մի դպրոց՝ «Արամյան առևտրական ընկերության փոխատուաց դպրոցը», որի առավել ընդունակ շրջանավարտները պետք է մասնագիտական ուսում ստանային Եվրոպայում[35]:

Այդ կարգի փորձերը, եթե անգամ հաջողությամբ պսակվեին, հազիվ թե կարողանային էական փոփոխություն առաջացնել օտարերկրյա կապիտալի ճնշման ենթարկված հալեպահայ առևտրականների դրության մեջ: Եվ, իրոք, հալեպահայ առևտրականները գնալով զիջեցին իրենց դիրքերը և դարավերջին նրանց ձեռքում հիմնականում մնացել էին այն գործարքները, որ կատարվում էին ներքին գավառների շուկաների հետ: «Բյուզանդիոն» լրագրի Հալեպի թղթակիցը նշում էր. «Վաճառականք հոս երկու որոշ մասերու կբաժնվին, անոնք որ Եվրոպայի հետ հարաբերություն ունին, և անոնք որ գավառներու հետ գործ ունին: Հայոց՝ Եվրոպայի հետ ունեցած հարաբերությունները, բաղդատմամբ օտարներու, շատ քիչ տեղ կբռնեն, իսկ գավառներու հետ է՛ն կարևոր գործն իրենց ձեռքն է»[36]: Նրանք ներքին գավառներն էին առաքում տեղական գործվածքներ, օճառ և այլն, իսկ այնտեղից ստանում էին գլխավորապես գիտոր, խեժ, նուշ, բրինձ, մորթի, աղիք, խամ մետաքս և հումքի այլ տեսակներ, որոնք վաճառվում էին Հալեպում:

Հալեպահայ առևտրականները շարունակում էին մեծ մասամբ կառչած մնալ առևտրի արևելյան, նախնական ձևերին և մեթոդներին: Կրկնատոմար հաշվապահությունը տակավին մուտք չէր գործել նրանց կենցաղի մեջ: Հալեպցի առևտրականը, ինչպես նշել է «Բյուզանդիոն» լրագիրը, «ինչ որ ծախեր է օրական՝ կգրպանե, ինչ վճարում որ պիտի ընե, կընե և այսչափ: Չեն գիտեր, թե ինչ է իրենց տարեկան ճիրոն և այլն: Բայց հակառակ այս կույր-զկուրայն գնացքին, Հալեպի վաճառականությունը զարգացած վիճակ մը ունի և չեն պակսիր հարյուր հազար և ավելի լիրանոց վաճառականները»[37]:

Տարբեր բախտ վիճակվեց բեյրութահայ առևտրականներին:

Իր հուշերում Քահեայանը նշել է, որ 1880-ական թթ. Բեյրութի հայ առևտրականների «մեծ մասը պատդուխտներ էին, որոնք [illegible] Ռում խանի մեջ, և կպարապեին կոմիսիոնի (միջնորդի—Հ. Թ.) գործով: Ասոնք

ընդհանրապես կեսարացի, ադանացի, մարաշցի, ուրֆացի և տիգրանակերտցի էին և Թուրքիո պանպան քաղաքներուն հետ մեծ գործեր կընեին»[38]: Մարաշի Խրլաքյան առևտրական հիմնարկի Բեյրութի գործակալները, օրինակ, «ամեն տարի հազարավոր ոսկու» ապրանք էին ստանում Եվրոպայից և տարանցում Կիլիկիա, ներքին գավառները[39]:

Բեյրութում հայ առևտրականների դիրքերն առավել ամրապնդվեցին 1896 թվականի ջարդերից հետո, երբ Թուրքիայից հայ առևտրական կապիտալի արտահոս սկսվեց դեպի արտասահման: Ներքին գավառների այնպիսի առևտրականներ, ինչպիսիք էին Գալուստ և Հովհաննես Գյուլբենկյանները, Պարսում Պետրոսյանը, Աբրահամ Ջամուրյանը, Մկրտիչ և Նշան Հալաբապետյանները, Տիգրան Գասարճյանը, Սարաֆյանները, Աղաջանյանը, Գալուստյանը, Բոնամյանը և ուրիշներ, Թուրքիայից դուրս բերելով իրենց կապիտալները կամ դրանց մի մասը, առևտրական հիմնարկներ հաստատեցին Բեյրութում: XX դարամուտին, ինչպես նշել է Քհհեայանը, Բեյրութում «մանուֆաքթուրայի գործի գրեթե 1/3-դը հայերուն ձեռքն անցավ»[40]:

Սակայն բեյրութահայ առևտրականները զբաղվում էին ոչ միայն գործվածքեղենի, այլև մանածի, ներկերի, կաշվի, նավթի, օճառի, համեմունքների, արմաթի և ուրիշ ապրանքների առևտրով: Նրանք մեծ մասամբ ներմուծող և տարանցող առևտրականներ էին, սակայն խոշորագույնները միաժամանակ աչքի էին ընկնում նաև արտահանող առևտրում: Բեյրութի Գյուլբենկյան հիմնարկը, որի սյուներն էին Գալուստ, Հովհաննես և Գառնիկ Գյուլբենկյանները, ոչ միայն ներմուծում էր Բաքվի Զուլիանովի և Մանթաշևի նավթարդյունաբերական ընկերությունների ապրանքները, այլև արտահանում էր Հաուրանի, Հոմսի, Համայի հացահատիկային կուլտուրաները: Այդ հիմնարկի գործարքների ծավալի մասին պատկերացում տալու համար նշենք, որ 1914 թ. նրա պահեստներում կար 250 հազար թիթեղ նավթ և մեծ քանակությամբ այլ ապրանքներ[41]:

Հալեպի և Բեյրութի համեմատությամբ, հայերը փոքր դեր էին կատարում մյուս քաղաքների առևտրական կյանքում: Դամասկոսում և Լաոդիկիայում կային առանձին հայ խոշոր առևտրականներ, որոնք գործարար կապեր էին պահպանում Եվրոպայի հետ: Դրանցից էին դամասկոսաբնակ Գրիգորյան եղբայրները, որոնց՝ Եվրոպայից մեքենաներ ներմուծող վաճառատունը ուներ ավելի քան երկու հարյուր հազար ոսկի կապիտալ[42]:

Սիրիայի տարբեր քաղաքներում գործում էին հայ խանութպաններ,

որոնք զգալի դեր էին կատարում լայն սպառման ապրանքների մանրածախ առևտրում:

Արհեստագործության և առևտրի ասպարեզում կատարված տեղաշարժերն առաջացնում էին փոփոխություններ հասարակական հարաբերություններում, բնակչության կենցաղում: Միջնորդ առևտրականները, արհեստանոցների ու մանուֆակտուրանների տերերը և քաղաքային նոր ինտելիգենցիան արագորեն յուրացնում էին եվրոպական բուրժուազիայի բարքերն ու սովորույթները: Ողբալով Սիբիայի հայ նահապետական բարքերի անկումը, կղերապահպանողական Գ. Արսլանյանը նշում էր, որ հայ խանութպանը թերակշռում է, առևտրականը խաբում է իր ընկերոջը որպեսզի «չշահի, այլ վնասե», որ բարեկեցիկ տներում մուտք է գործել շռայլությունը («սպասնավորն ու սպասուհին պահանջ մ'են, և կարգը ստնտուին կուգա», դաշնամուրն «առաջին տեղը կգրավե, թեև տան մեջ նվագել գիտցող ալ չըլլա»): Կանայք հագնվում են եվրոպական նորաձևությամբ, շրջագայում են կառքով և այլն: Երիտասարդները փողոց են դուրս գալիս «ձեռքը գավազան, աչքը աչքապակի, ձեռներուն ձեռնոց, սուրճ չեն խմեր, այլ շամպանիա», խաղում են «դրամով թուղթ՝ խումար» և այլն: Աղջիկները սովորում են օտար լեզուներ, նվագել և պարել, պատրաստվում են դառնալ ոչ թե «տանտիկին», այլ «սալոնի կանայք»[43] և այլն: Այդ բոլորը նպաստում էին սիրիահայ աղայական դասի հզոր հեռանարանի՝ նահապետական ընտանիքի քայքայմանը:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Օսմանյան հողատիրության սիստեմն ուներ ֆեոդալական հասարակարգին բնորոշ բավական բարդ հյուսվածք: Հողերը համարվում էին սուլթանի սեփականությունը, իսկ իրականում օգտագործվող հողերն ունեին իրենց անմիջական տերերը: Թանզիմաթի ժամանակաշրջանում արդեն քայքայված խասերի, զիամեթների, թիմարների փոխարեն ստեղծվեց ֆեոդալ-կալվածատիրական հողատիրություն և հողի նկատմամբ լայն իրավունքներով օժտված ֆեոդալ-կալվածատերերի դասակարգ: 1858 թ. ապրիլի 21-ի օրենքով հողը հռչակվեց պետության սեփականություն և բաժանվեց հինգ կատեգորիայի՝ արաղի-մեթրուքե, արաղի-մեվաթ, արաղի-միրիե, վակֆային և մուլքային: (Մշակելի հողերի համայնատիրական սեփականությունը տակավին գոյատևում էր Սիրիայի հարթավայրային շրջաններում): Օսմանյան սուլթանները հետագայում ևս հրապարակեցին հողային օրենքներ, որոնք սակայն էական փոփոխություններ չմտցրին հողատիրության ձևերում:

Հողատիրության առաջին չորս ձևերը համարվում էին պայմանական, իսկ վերջինը՝ անպայման սեփականատիրություն։ Արապի-մեթրուքե հողերը՝ արոտավայրերը, անտառները, սրբավայրերը և այլն առաջախն ենթակա չէին։ Արապի-մեվաթ կամ խոպան հողերը տրվում էին մշակելու դարձնելու և հետո միայն հարկ վճարելու պայմանով։ Յուրացված խոպանը դասվում էր արապի-միրիե շարքը։ Արապի-միրիե հողերը՝ գերազանցապես վարելահողերը, ձեռք էին բերվում թափուի իրավունքով, որը հողի անժամկետ օգտագործման իրավունքի փաստաթուղթ էր և տրվում էր բնակչության բոլոր խավերին՝ նահանգային իշխանությունների կողմից։ Օգտագործողը պարտավոր էր միանվագ վճարել սահմանված գումարը և տարեցտարի մուծել ռենտան։ Հողը կարող էր ժառանգաբար անցնել օգտագործողի սերնդին, սակայն ամեն անգամ պետք էր ստանալ նոր թափու՝ մուծելով նախնական գումարը։ Եթե անհարգելի պատճառով հողը երեք տարի անընդհատ անմշակ էր մնում, ապա թափուի իրավունքը կորցնում էր ուժը և հողը կարող էր ուրիշի փոխանցվել։

Վաքֆային հողերը մզկիթների, մուսուլմանական բարեգործական հաստատությունների անձեռնմխելի սեփականություն էին։ Դրանք օգտագործման էին տրվում գյուղացիներին՝ թափուի իրավունքով, և չէր թույլատրվում թափու արված վաքֆային հողերն օտարել վաճառելու, գրավ դնելու կամ մի որևէ այլ (բացի ժառանգելու) միջոցով։ Այդ օրենքը չէր տարածվում եկեղեցիների և վանքերի անշարժ գույքի վրա։ Թուրքական կառավարությունը եկեղեցապատական-վանքապատական կալվածները համարում էր մահլուլ (անժառանգ) և չէր արգելում դրանք բռնագրավելու փորձերը։

Մուլքային հողերը կազմում էին մասնավոր անձանց անպայման սեփականությունը։ Մեծ մուլքային հողատարածությունները կենտրոնացած էին ֆեոդալական վերնախավի, փոքրերը՝ գյուղացիների և քաղաքացիների ձեռքում։ Մուլքատերը համարվում էր լիիրավ սեփականատեր, օժտված էր իր կալվածքը վաճառելու, գրավ դնելու, ժառանգելու, նվիրաբերելու և այլ իրավունքներով։ Հողատիրության այս ձևը դասային չէր համարվում, քանի որ ցանկացած դասին պատկանող մարդը կարող էր մուլքատեր դառնալ։ Իրավաբանորեն, անպայման ֆեոդալական սեփականությունը մոտենում էր բուրժուական սեփականատիրությանը։

Սիրիայում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներն ունեին ընդարձակ տիրույթներ։ Օսմանյան կայսրության խոշորագույն հողատեր սուլթան Աբդուլ Համիդին էին պատկանում մի քանի հարյուր հազար հեկտար տարածությամբ ամենաարգավանդ հողեր Հալեպի, Սիրիայի և Բեյրութի նա-

հանգներում։ Հարավային Լիբանանի հողերի 1/8-ը և նրանցում եղած ավելի քան 150 գյուղեր դրուզ ֆեոդալ Սաիդ Ջումբլադի սեփականությունն էին։ Մարոնական վանքերի ու եկեղեցիների տիրապետության տակ էր Լեռնային Լիբանանի մշակելի հողերի 1/6-ը։ Ընդարձակ կալվածներ ունեին ուղղափառ եկեղեցիները և վանքերը։ Կային նաև հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներ։

Խոշոր կալվածատեր էր հայոց եկեղեցին։ Հալեպում ուխտավորական հյուրատնից բացի, Երուսաղեմի հայոց վանքին էին պատկանում ութ տներ, որոնց տարեկան եկամուտը կազմում էր շուրջ 6.500 ղրուշ[1]։ Բեյրութում, Դամասկոսում, Լատակիայում և այլ վայրերում կային «վաքֆ եղեալ» երուսաղեմապատկան կալվածներ, սակայն դժվար է ճշտել դրանց տարածությունը, եկամտի քանակը և այլն։ Այդ քաղաքներում նստում էր Երուսաղեմի վանքից նշանակված «կալուածոց տեսուչը»[2]։ Հալեպի առաջնորդարանի անշարժ գույքը գնահատվում էր շուրջ 12.000 օսմանյան հնչուն ոսկի։ 1878 թ. հաշվառման ցուցակի համաձայն առաջնորդարանն ուներ 23 բնակելի տուն, երկու խանութ և մի քանի ախոռ, որոնք տարեկան ապահովում էին 37.343 ղրուշ եկամուտ[3]։ Տվյալներ չկան նրա չհատուցապատված կալվածների մասին։

Զմմառի հայ կաթոլիկ վանքի հողային ֆոնդի հիմնական մասը գտնվում էր Լեռնային Լիբանանում։ Ավելի քան 120 կմ² տարածությամբ վանքապատկան արգավանդ հողեր կային Զմմառում, Ջյունիում, Զպտինում, Բեյթ-էդ-Դինում, Ռայֆունում և այլ գյուղական վայրերում[4]։ Բացի այդ, Զմմառի վանքը վանքապատկան կալվածներ ու շենքեր ուներ Բեյրութում։ Ս. Եղիա եկեղեցու վաքֆ էր Բեյրութի Սուք ալ-Ղրման շուկայի ոչ միայն հողը, այլև այնտեղ կառուցված շենքերն ու խանութները[5]։

Սիրիայում հայ աշխարհիկ ֆեոդալ-կալվածատերերը խիստ սակավաթիվ էին։ Դա հիմնականում բացատրվում է թուրքական կառավարության աղգահալած քաղաքականությամբ։ Գործադրվում էին ուղղակի և անուղղակի միջոցներ՝ արգելակելու քրիստոնյաների, հատկապես հայերի հողատեր դառնալը։ Ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Սիրիայում սուլթան Աբդուլ Համիդը խրախուսում էր մուսուլման ֆեոդալներին՝ բռնագրավել հայերի հողերը։ Աղբյուրներում հիշատակվում են հայ ֆեոդալ-կալվածատերեր (Սերգո, Խաչո և այլք), որոնք կամ բնաջնջվել են, կամ զրկվել իրենց կալվածներից։

Սակայն հողերի բռնագրավման հարցն առավել կենսահույզ և հրատապ էր Սիրիայի հայ գյուղացիության համար։ Ապրանքադրամային

հարաբերությունների զարգացման պայմաններում, երբ հնարավոր էր շուկայում ազատ իրացնել մթերային ռենտան, ֆեոդալները, և ոչ միայն ֆեոդալները, ձգտում էին ձեռք բերել անպայման հողային սեփականություն։ Դրա գլխավոր պատճառը կալվածքի բարձր եկամտաբերությունն էր։ Եթե ֆեոդալը տիրում էր պայմանական հողերի, նրան հասնում էր ընդհանուր հարկերի 8 տոկոսը, իսկ անպայման հողերի տիրողներն լրենց վարձակալներից ստանում էին ֆեոդալական ռենտա՝ բերքի մինչև 3/4 չափով։ Պատմելով Արամո Հայաբնակ գյուղի մասին «Սիոնի» թղթակիցը հաղորդում է, որ Մուգադդեմ ֆեոդալական գերդաստանի անդամները, «գյուղացի հայոց վերա քիչ-քիչ ազդեցությունին մեծցնելով սկսած են բռնանալ, և անոնց ձեռքը գտնված բոլոր հայրենական կալվածները և անշարժ սեփականությունները խլելով տիրած են»[6]։

Ֆեոդալ-կալվածատերերի թիրախ էին դառնում նաև վանքապատկան և եկեղեցապատկան կալվածները։ 1874 թ. Լատակիայի հայազգի ֆեոդալ Շաքիր Սայեղը հափշտակել է Երուսաղեմի հայոց վանքին պատկանող կալվածներից մեկը, սակայն միառժամանակ հետո ստիպված վերադարձրել է օսմանյան պետական բարձր պաշտոնատար Մեսրոպ Պուպլիի միջամտության շնորհիվ[7]։ 1917 թ. Լևոնային Լիբանանի Խաղեն ֆեոդալական գերդաստանի շեյխերը գրավել են լուծարքի ենթարկված Անտոնյան միաբանության կալվածները Ջյունիում, Ղազիրում, Բեյթխաշպոյում և այլ գյուղերում[8]։

Ի դեպ, վաշխառուական կապիտալի օտարերկրյա ներկայացուցիչները, օգտվելով 1867 թ. հունիսի 18-ի օրենքից, իրենք ևս հափշտակում էին ոչ միայն գյուղացիների, այլև ֆեոդալ-կալվածատերերի հողերը։ Օրինակ, վերոհիշյալ Մուգադդեմ գերդաստանը, որ ինչպես նշել է «Սիոնը», «բավական ժամանակ պարտական լինելով, Արամո գյուղին՝ հանդերձ արտերով չորս մասին մեկը Գաղղիո հյուպատոսին անցած է 20.000 դահեկանի տեղ։ Անցյալ տարի դարձյալ Մուգադդեմը բանտարկվելով, գյուղին երկու մասն ալ, որ 33.000 դահեկանի գրավ էր դրված, կանցնի լադաքիո ռուսաց հյուպատոս Մարկո Իլիասին» և այլն[9]։

Սիրիայում թեև գերիշխում էր խոշոր հողատիրությունը, սակայն խոշոր տնտեսությունները խիստ հազվադեպ էին։ Դրանցից էր Հակոբոս Ոսկանի տնտեսությունը (Հալեպ քաղաքի մերձակայքում), որը զբաղվում էր հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ։ 1908 թ. լինելով Հակոբոս Ոսկանի տնտեսությունում, Գ. Արսլանյանը գրել է. «Հալեպից երկուք ու կես ժամեն կհասնինք հիանալի դաշտի մը մեջ. տիպար ագարակն է։ Երբ անոր սահման-

ները կմտնենք, որոշ կասնվի թե գիտական մեթոդն ինչեր ըրած է ... Կհասցնեն թթենի և ծաղիկներու տեսակներ, պտղատու ծառեր. ջրհան մը ջուր կհայթայթե ..., ամեն գործիք եվրոպական է ...»[10]: Թվում է, դա կարևոր տնտեսություն էր, քանի որ Հալեպից դուրս եկող ճանապարհներից մեկը «հատուկ ագարակին համար շինված» էր[11]:

Լայն տարածում էին գտել մանր տնտեսությունները՝ գյուղացիական սեփականության (մուլքի իրավունքով) և վարձակալության (մուքասատա) ձևով: Վերջինս կայանում էր նրանում, որ սակավահող կամ հողազուրկ գյուղացին մշակում էր ֆեոդալի տրամադրած հողակտորը, և, որոշակի ժամկետից հետո, երբ հողը սկսում էր պտղաբերել, կատարվում էր հողի բաժանում, և գյուղացին համարվում էր հողակտորի կեսի, երբեմն՝ մեկ երրորդի, մեկ չորրորդի կամ ավելի փոքր մասի սեփականատեր: Սակայն ֆեոդալն իրավունք ուներ հողակտորը հետ վերցնելու գյուղացու պարտքերի դիմաց կամ էլ՝ վճարելով հողի գինը:

Օսմանյան պետական պարտքի վարչության ստեղծումից հետո ֆրանսիական կապիտալիստները նպաստում էին խոշոր տնտեսությունների առաջացմանը, որպեսզի ավելացնեն իրենց անհրաժեշտ հումքի տեսակների արտադրությունը՝ հողազուրկ գյուղացիների ճորտային աշխատանքով: Սակայն որոշ վայրերում, հատկապես սիրիական լեռնաշխարհի գյուղերում նրանք պահպանեցին մանր գյուղացիական տնտեսությունները և նրանց հարկադրեցին անցնել տեխնիկական կուլտուրաների արտադրության: Դրանց թվում էին նաև Հալեպի սանջակի լեռնավայրի հայաբնակ գյուղերը:

Օսմանյան հողատիրության նոր սիստեմը խիստ բացասաբար էր անդրադառնում գյուղատնտեսության զարգացման վրա: Գյուղատնտեսության «մահացման պատճառները» հայտնաբերելու և վերացնելու ուղղությամբ կատարված փորձերը քիչ թե շատ հաջողությամբ չպսակվեցին, քանի որ անձեռնմխելի էր մնում հիմնական պատճառը՝ ֆեոդալական կարգը:

Սիրիայի բնակլիմայական պայմանները հնարավորություն էին ընձեռում մշակելու ընդարձակ տարածություններ: Ամենատարածված և բերքառատ կուլտուրան ցորենն էր: Մշակվում էին նաև գարի, վարսակ, բրինձ, խաղող, պիստակ, ձիթապտուղ, ծխախոտ և այլ կուլտուրաներ: Սակայն հետամնաց ֆեոդալական հարաբերությունները, աշխատանքի նախնական գործիքները, հողամշակման հնադարյան եղանակը ու հատ-

կապես անձի և ունեցվածքի անապահովությունն արգելակում էին գյուղատնտեսության զարգացմանը։

Անտիոքի կապայի մակերևույթի կեսից ավելին գրավում էին Ջեբել Մուսան և Ջեբել Ակրան, իսկ մնացյալը՝ Ամուկի դաշտավայրը, որը, ոռոգվելով Համանուն լճի և Օրոնտես (Նահր ալ-Ասի) գետի ջրերով, գերաշխույժ պայմաններ ուներ գյուղատնտեսության համար։ Նրա ամբողջ հյուսիսային հատվածը մտնում էր Բեյլանի կապայի մեջ։ Այդ վայրերի հայ գյուղացիները զբաղվում էին հացահատիկային, բանջարաբոստանային և տեխնիկական կուլտուրաների մշակությամբ։ Վերջիններից արժեքավոր էր հատկապես ռեգլիսը կամ սուսը, որն օգտագործվում էր դեղագործության, ինչպես և օշարակի տարբեր տեսակների պատրաստության մեջ։ Հայ գյուղացիներն աճեցնում էին նաև ձիթապտղի և թթի ծառեր, որոնց հիմքի վրա զարգանում էին օճառագործությունը և մետաքսագործությունը։

Լեռնային շրջաններում, որտեղ գրեթե չկային արհեստական ոռոգման միջոցներ, բերքն ամբողջովին կախված էր բնության քմայքներից՝ երաշտից, կարկուտից, մորեխից և այլ տարերային աղետներից։ Լեռնավայրի հողերում արտադրված հացահատիկը և գետնախնձորն այնքան քիչ էին լինում, որ չէին բավարարում անգամ գյուղացու սպառողական կարիքները։ Օրինակ, հայ գյուղացիների փորձերը՝ Ջեբել Մուսայի և Ջեբել Ակրայի լանջերին արմտիք և գետնախնձոր մշակելու, առհասարակ վերջանում էին անհաջողությամբ։ «Բյուզանդիոնի» թղթակիցը նշում էր, որ գարնանը «եղյամը կփչացնե հունձքերը», իսկ ձմռանը սառչում են գետնախնձորի սերմերը[12]։

Այգեգործությունը տնտեսական խոշոր նշանակություն ուներ սիրիական լեռնավայրերի գյուղացիների համար։ Այգեստաններն առհասարակ գտնվում էին լեռնալանջերին ու ձորակներում և մշակվում էին «տաժանելի աշխատանքով»[13]։ Հայ գյուղացիներն աճեցնում էին խաղողի շուրջ տաս աղնիվ տեսակներ, նարինջ, կիտրոն, ինչպես և ղգալի քանակությամբ խնձորի, սալորի, թզի, կեռասի, նշի և այլ պտղատու ծառեր։ Նրանք խաղողից ստանում էին գինի, օղի և ռուպ, որոնք, ինչպես և մյուս պտուղներից պատրաստված չիրը, վաճառվում էին Անտիոքի, Հալեպի և այլ քաղաքների շուկաներում։

Այգեգործության տեխնիկան չափազանց պարզունակ էր, և գյուղացիները գրեթե զինված չէին վնասատուների դեմ պայքարի միջոցներով։ Այդ պատճառով, այնպիսի սովորական հիվանդություն, ինչպիսին էր քյուլլեմեն (փոշեցումը), պարբերաբար ավեր էր գործում այգիներում[14]։

Լաոդիկիայի, Ջիսր Շուղրի և Անտիոքի կազաններում հայ գյուղացիների հիմնական զբաղմունքներից էր ծխախոտամշակությունը։ Բարձրը էր գնահատված հատկապես արու ուիհա կոչված բուրավետ ծխախոտը, որը, մասնագետների կարծիքով, կարող էր մրցել ամերիկյան «Վիրժինիայի» հետ[15]։ Նրա պահանջարկը մեծ էր մանավանդ Եգիպտոսում, Անգլիայում և Գերմանիայում։

Սակայն ծխախոտամշակությունը, դառնալով ֆրանսիական Ռեժիի վարչության մենաշնորհը, զարգացման հնարավորություն չունեցավ։ Ռեժին սահմանում էր ծխախոտի ցանքատարածությունների չափը, որոշում տեսակը, դինը և այլն։ Ընդ որում ժանդարմական հատուկ ջոկատներ իստորեն հետևում էին նրա հաստատած կարգի պահպանմանը։ Գյուղացիները հարկադրված էին ամիսներով դեգերել Ռեժիի դոնների առաջ՝ ծխախոտ ցանելու թույլտվություն ձեռք բերելու կամ ստացած բերքը նրան վաճառելու համար[16]։ Ջնայած դրան, Սիրիայում արտադրվում էր Ռեժիի սահմանածից առնվազն երկու անգամ ավելի ծխախոտ։ Վ. Կինեի հաշվումներով ծխախոտի արտադրության ծավալը Սիրիայում կազմում էր շուրջ 600.000 կգ., որի կեսը միայն հանձնվում էր Ռեժիին, իսկ մնացյալը վաճառվում էր մասնավոր անձանց, կամ ուղարկվում արտասահման՝ մաքսանենգների միջոցով[17]։

Սիրիայի ծովամերձ շրջաններում նպաստավոր պայմաններ կային շերամաբուծության զարգացման համար։ Գրեթե բոլոր գյուղերում այս կամ այն չափով զբաղվում էին շերամաբուծությամբ, սակայն այն առավել զարգացած էր Անտիոքի կաղայի հայաբնակ գյուղերում։ Հաջի-Հապիպլիի հինգ բնակչից մեկը, իսկ Քեպուսիեի, Պիթիասի և մյուս գյուղերի բնակչության զգալի մասը շերամ էր բուծում։

Իրենց արտադրության քանակով և շերամ բուծելու վարպետությամբ, Պիթիասի գյուղացիները նշանակալից տեղ էին գրավում հյուսիսային Սիրիայում։ Նրանք 25 գրամ սերմից ստանում էին 40—45 քաշ (1 քաշը= =1282 գ.) խոզակ, այն դեպքում, երբ 20—25 քաշը համարվում էր բավարար արդյունք։ Այս հաջողությունը պայմանավորված էր ոչ միայն բնակլիմայական պայմաններով, այլև սերմի որակով։ Պիթիասցիները մեծ մասամբ օգտագործում էին իրենց իսկ մասնագետների (Բուրսայի շերամաբուծական վարժարանի շրջանավարտների) պատրաստած սերմերը, որոնք անհամեմատ ավելի ընտիր և տեղական պայմաններին հարմարեցված էին, քան Եվրոպայից ներմուծվածները[18]։

Հայ գյուղացիների արտադրած մետաքսահումքի («Իսկենդերունի մետաքսը») մի մասն արտահանվում էր Ֆրանսիա և այլ երկրներ, իսկ

մյուս մասն օգտագործվում էր Անտիոքի, Հալեպի, Դամասկոսի մետաքսագործարաններում: Սակայն արհեստական մետաքսի գրոհը մի կողմից, օսմանյան պետական պարտքի վարչության գործադրած ճնշումը մյուս կողմից բացասաբար էին ներգործում մետաքսագործության զարգացման վրա: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Անտիոքի շրջանի գյուղացիները, հեռանկար չտեսնելով շերամաբուծության մեջ, թթաստանները ոչնչացրին և անցան նարնջի, բանանի, դեղձի, նշի և այլ եկամտաբեր կուլտուրաների մշակության[19]:

Գյուղական վայրերում արհեստները թվով սահմանափակ էին և գտնվում էին զարգացման ցածր աստիճանի վրա: Ամենից շատ տարածված էր սանրագործությունը, ջուլհակությունը, երկաթագործությունը, ջաղացպանությունը և այլն: Առաջին երկուսը, կատարելով Անտիոքի առևտրականների պատվերները, ընդգրկում էին ամենից ավելի աշխատող ձեռքեր: Օրինակ, Յողուն-Օլուք գյուղի բնակիչների շուրջ կեսը սանրագործներ էին: Վաքֆում և Խըդր-Բեկում զգալի թիվ էին կազմում ջուլհակները: Գրեթե բոլոր արհեստներն էլ գործադրվում էին տնային պայմաններում և հանդիսանում էին գյուղացիական ընտանիքի ապրուստի օժանդակ միջոց:

Վերոհիշյալներից բացի, հայ գյուղացիները զբաղվում էին գյուղատնտեսական հումքի որոշ տեսակների մշակումով: Դրանցից հատկապես պետք է հիշատակել դափնու ձեթը, չոր մրգերը, ոգելից ըմպելիները և այլն: Դափնու ձեթը, օգտագործվելով օճառագործության մեջ, զգալի եկամուտ էր ապահովում դափնեծառի ընդարձակ անտառներով հարուստ Սվեդիայի գյուղացիներին: Մյուս մթերքները շուկայական նշանակություն չունեին, հազիվ բավարարում էին գյուղացիական ընտանիքի սպառողական պահանջները:

Սիրիայի, Հալեպի և Բեյրութի նահանգները ենթարկված էին հարկային գրեթե միակերպ ռեժիմի: Բազմաթիվ ուղղակի հարկերից գլխավորներն էին՝ աշարը կամ տասանորդը, էմլաքը կամ կալվածահարկը, աղնամը կամ անասնահարկը, թեմեթուն կամ եկամտահարկը, թոփրաքբասանը կամ ճանապարհահարկը, բեդելասկերիեն և այլն: Կային նաև շուրջ մի տասնյակ անուղղակի հարկեր: Արաբ տնտեսագետ է. Գաննաժեի հաշվումներով, Լեռնային Լիբանանում յուրաքանչյուր բնակիչ միջին հաշվով տարեկան վճարում էր 40, իսկ Բեյրութի նահանգում՝ 188 օսմանյան լիրա ուղղակի հարկ: Հարկային լուծը համարյա նույնքան ծանր էր Հալեպի և Սիրիայի նահանգներում[20]:

Սակայն հարկերի ծանրությունը պայմանավորված էր ոչ թե նրանց նոմինալ չափերով, այլ հարկադանձման դիշատիչ ձևերով: Խաբեբա-հումայունը հրապարակողները խոստացել էին ուղղել «հարկերը և առանձնապես տասանորդը գանձելու գծով չարաշահությունները», հարկերը կապալով տալու փոխարեն «հետևողական և ամենակարճ ժամկետում կիրառել ուղղակի գանձման սիստեմ» և այլն: Սակայն այդ ուղղությամբ կատարված փորձերը անցան ապարդյուն, շարունակվեց հարկային քաոսը, առաջվա նման հարկերի գանձման կապալը վաճառվում էր աճուրդով: Ով շատ էր վճարում, նա էլ տիրանում էր այդ իրավունքին, ընդ որում առանց կաշառքի երբեք աճուրդ չէր լինում:

Գյուղացիության վճարած հարկերից ամենածանրը տասանորդն էր: Ձեռք բերելով մի ամբողջ նահիեի, անգամ մի ամբողջ կազայի տասանորդը գանձելու իրավունքը, կապալառուն սովորաբար այն վերավաճառում էր բազմաթիվ միջակ և փոքր կապալառուների: Ստեղծվում էր կեղեքիչների յուրօրինակ մի հիերարխիա: Հարկերը գանձելու գործում պարտավոր էին նրանց օժանդակել պետական իշխանավորները՝ վալին, մութեսարիֆը, մուդիրները, ոստիկանապետը, դատավորները և այլն: Այդ օժանդակությունը իրական և ազդու էր լինում միայն այն դեպքում, երբ նրանք անձնապես շահագրգռված էին, այսինքն բաժին էին ստանում հարկերից:

Կապալառուն գյուղ էր գնում աստիճանավորների մի ամբողջ ոհմակով և պահանջում էր հարկերը: Նայած նրա ախորժակին, տասանորդը կարող էր հասնել բերքի 20—30, երբեմն էլ 40—50 տոկոսին: Սիրիայի հայաբնակ գյուղերի վերաբերյալ մի հաղորդումում ասված է. «Տասանորդական տուրքը, որ ըստ կանոնի և օրինաց պետության 10 տոկոս է, իրանք չորսին մեկ կառնուն»[21]: Թե կապալառուները ինչպիսի չարիք էին գյուղացիության գլխին երևում է նաև Բեյրութի նահանգապետի մի զեկուցագրից, որտեղ ասված է. «Այս շրջանում, ինչպես և մյուս շրջաններում աշարը կապալառուներին վաճառվում է աճուրդով: Հետևանքը լինում է այն, որ ժողովուրդը մեկ տասանորդի փոխարեն վճարում է մի քանիսը...: Այս շրջանի բնակիչները, որպեսզի իրենց ծառերի ամբողջ բերքը կապալառուին տալուց հետո նաև դրամական տուգանք չվճարեն, կտրատել և ոչնչացրել են ավելի քան 15.000 ձիթենի»[22]:

Սիրիայում միաժամանակ առկա էին ֆեոդալական ռենտայի բոլոր երեք ձևերը՝ աշխատանքային, արդյունավճար և դրամական: Կ. Մարքսը ցույց է տալիս, որ դրամական ռենտան «ենթադրում է առևտրի, քաղաքային արդյունաբերության, ընդհանրապես ապրանքային արտադրու-

թյան ու սրա հետ փողային շրջանառության արդեն նշանավոր զարգացում»[23]։

Դեռևս մեր տրամադրության տակ չկան անհրաժեշտ նյութեր ճըշտելու համար, թե ռենտայի երեք ձևերից ո՞րն էր գերիշխողը հայաբնակ շրջաններում։ Սակայն ակներև է, որ Սիրիայի ներքին գավառներում, որտեղ ապրում էին մեծ մասամբ կիսաքոչվորներ, տիրապետում էր արդյունավճար ռենտան, իսկ ծովամերձ շրջաններում, որտեղ տեղաբաշխված էր հայ գյուղացիների մեծամասնությունը, գերիշխում էր դրամական ռենտան։

Արտաքին շուկայում գյուղատնտեսական մթերքների նկատմամբ աճող պահանջը և գյուղացիական տնտեսությունների հյուծումը ֆեոդալներին մղում էին ավելի ու ավելի հաճախ օգտագործելու պարհակային աշխատանքը՝ սեփական ապրանքային տնտեսություն ստեղծելու դրծում։ Գյուղացիները պարտավոր էին վարել ու ցանել «պարոնի» (Սիրիայի հայ գյուղացիներն այսպես էին կոչում ֆեոդալ-կալվածատերերին) արտերը, քարերից ու մոլախոտերից մաքրել նրա ցանքերը, տուն տանել ամբարել բերքը, աշխատել նրա տան, դոմի և ախոռի կառուցման վրա և կատարել այլ բազմաթիվ աշխատավճարումներ։

Անտիոքի հայ գյուղացիները պարտավոր էին պարոն կալվածատիրոջը «նվերներ» տալ ուրախության և տխրության զանազան առիթներով։ Երբ պարոնը խրախճանք էր սարքում կամ հյուրեր ընդունում, գյուղացիները ստիպված էին նրա սեղանին դնել իրենց լավագույն մթերքներից։ Փոխադարձաբար պարոնը մասնակցում էր գյուղացիների... ուրախություններին։ Մի հաղորդումում ասված է. «Ոչ ոք կարող է յուր աղջիկը կամ տղայն նշանել կամ կարգել առանց գիտության պարոնին, անոր հավանությունն ընդունելու, և այս ոչ թե ձրի, այլ քանի մի հարյուր դահեկան տալով իբր պսակադրամ»[24]։

Ֆեոդալական ռենտայի այդ ձևը՝ արտատնտեսական հարկադրանքը գյուղացիներին դնում էր ճորտային վիճակում։ Բնութագրելով ճորտատիրական տնտեսությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «Եթե կալվածատերն անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում։ Հետևաբար անհրաժեշտ է «արտատնտեսական հարկադրանք», ինչպես ասում է Մարքսն այս տնտեսական ռեժիմը բնութագրելիս»[25]։

Հողօգտագործման կիսարարության կամ վարձակալության ձևը կալվածատերերին հնարավորություն էր տալիս հափշտակելու գյուղացիների

վաստակի զգալի մասը: Այս ռենտան արդյունավճար էր, սակայն ապրանքադրամային հարաբերությունների զարգացման պայմաններում ֆեոդալները ձգտում էին այն փոխարինել դրամայինով: Դա գնալով ծանրացնում էր գյուղացիության վիճակը: Սիրիայի գյուղերի վերաբերյալ մի հաղորդումում ասված է. «Թե քրիստոնյա և թե անքրիստոնյա գյուղատերերը... խեղճ գեղացի հայոց ոսկորները կծծեն, և բուրդին հետ մորթն ալ վիրավորելով կխուզեն»[26]: Ֆեոդալները խլում էին նրանց «վարուցանքը, մինչև անգամ բերաննուն պատառը»[27]:

Դրամական ռենտան ուժեղացնում էր վաշխառուական կապիտալի ներհոսը դեպի գյուղ: Բնաառնտեսության քայքայումը գյուղացուն դնում էր շուկայից կախման մեջ, սրում ֆեոդալ-կալվածատերերի, վաշխառուների, պետական պաշտոնյաների և մյուս կեղեքիչների ախորժակը: Ալիմովի տվյալներով, օսմանյան պետության երկրագործական եկամուտների 12,5 տոկոսը գնում էր պետության, 26,8-ը՝ ֆեոդալներին, 26,2-ը՝ գյուղական վերնախավին, վաշխառուներին ու պետական պաշտոնյաներին և միայն 34,5-ը՝ գյուղացիությանը, այսինքն բնակչության 5 տոկոսին բաժին էր ընկնում գյուղացու ձեռք բերած արդյունքի 65,5 տոկոսը[28]:

Սիրիայի ողջ աշխատավոր գյուղացիությունը տվայտում էր համատարած թշվառության մեջ, սակայն առանձնապես ծանր էր հայ գյուղացու վիճակը: «Սիոնի» թղթակիցը նշել է. «Անոնք ոչ ամառը դադրում ունին և ոչ ձմեռը, ոչ գիշեր և ոչ ցերեկ գիտեն»: Չնայած այդ ուժասպառ աշխատանքին, նրանք ապրում էին «ամենախեղճ խրճիթներու մեջ պատըսպարված՝ հետին աղքատությամբ»[29]: Հայ գյուղացիների վիճակի մասին սրատեսուչ վկայություն է բերում նաև Ուլնեցի վարդապետը: Նրա գիտուցագրում Հալեպի եահանդի հայաբնակ գյուղերի մասին կարդում ենք. Ֆռնուզ. «Այս տեղուանքն 180 տուն հայ կա... ամենքն ալ հետին խեղճության մեջ, մերկութենն ի զատ շատերուն ձեռքը կիլկիլի հաց անգամ չանցներ ուտելու...»: Ֆընդիկը. «100 տուն հայ կա, ամենքը ձորի մը մեջ կբնակին և հուսահատյալ են ի պատճառս իրենց դժբախտ և եղկելի վիճակին... Ասոնք վերջին աստիճանի կացության մեջ կգտնվին, օրական պարենի կարոտ են...»: Պաճա. «80 տուն հայ կա...: Տուրքի տակ կճընշվին և ինչ ընելնին չեն գիտեր...»: Խասնր. «40 տուն հայ կգտնվի...: Ժողովուրդը վերջին ծայր աղքատության մեջ կտառապի...»: Լաբաճը. «40 տուն հայ կա: Ասոնք ամենեն խղճալի և օրական հացի կարոտ են, հագուստեղ բոլորովին զուրկ կգտնվին, մարդուս սիրտը չի դիմանար որ վրանին նայի...»: Հասան-Բեյլի. «100 տուն հայ կգտնվի...: Այս ժողովուրդն

ալ հետին չքավորության մեջ խեղդվելու վրա են. կաղաչեմ ասոնց շուտով օգնություն մը ճարեք»: Քիշնեղ. «Այս գեղին հայ բնակիչքը 50 տուն են..., անպատմելի թշվառ վիճակի մեջ են...»: Քիլիս. «Այստեղ 400 տունի չափ՝ չորս հազար հայ ունիմք..., ծանր տուրքերու ներքև ճնշվելով, հուսահատության մեջ ինկած են..»[30]: Տարբեր չէր մյուս հայաբնակ գյուղերի վիճակը:

Այսպիսով, թուրքական սուլթանները մեծ մասամբ չկենսագործեցին թանզիմաթը և դրան հետևող հողային օրենքները, որոնք կարող էին ճանապարհ բանալ Թուրքիայի և նրա տիրապետության տակ գտնվող Սիրիայի կապիտալիստական զարգացման համար: Սուլթանների ագրարային նոր քաղաքականությունը, ի սպաս դրվելով աղգային ճնշման քաղաքականության իրականացմանը, պաշտպանում էր ֆեոդալական վերնախավի շահերը: Ռազմաֆեոդալական հողատիրությանը փոխարինող ֆեոդալ-կալվածատիրական հողատիրությունը հանգեցրեց նաև Սիրիայի բազմազգ աշխատավոր գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը: Ֆեոդալ-կալվածատերերը, խրախուսվելով թուրքական կառավարողների և օտարերկրյա կապիտալիստների կողմից, բռնագրավում էին գյուղացիական հողերը, սաստկացնում հողազուրկ ու սակավահող գյուղացիների շահագործումը և, հնարավորության դեպքում, սահմանափակում նրանց անձնական ազատությունները: Կեղեքիչներն առավել սանձարձակ էին գործում քրիստոնյա, հատկապես հայաբնակ գյուղերում:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՃՆՇՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ։ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

1. ՕՍՄԱՆՅԱՆ ՄԻԼԼԵԹՆԵՐԻ ՏՐՈՀՈՒՄԸ։ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Եվրոպական պետությունները վարում էին Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին «հովանավորելու» քաղաքականություն, որն իրականում քողարկված միջոց էր ընդլայնելու իրենց քաղաքական ազդեցության ոլորտները՝ դաղութային թալանի և կողոպուտի համար։ Խոսելով 1856 թ. Ֆրանսիայի և Անգլիայի՝ Չինաստանի դեմ մղած պատերազմի մասին, վ. Ի. Լենինը նշել է, որ գաղութարարներն իրենց «թալանի քաղաքականությունը կեղծավորությամբ քողարկում էին քրիստոնեության տարածումով»[1]։

Սիրիայում կաթոլիկ եկեղեցին դառնում էր հիմնականում Ֆրանսիայի հովանավորության ներքո։ Բարձրաստիճան կաթոլիկ կղերը՝ անկախ ազգային պատկանելությունից, օգտվում էր ֆրանսիական քաղաքացիության իրավունքից[2]։ Կաթոլիկական համայնքները տարեկան շուրջ երկու միլիոն ֆրանկ օգնություն էին ստանում Ֆրանսիայից և Սիրիայում առևտրական շահեր ունեցող այլ պետություններից[3]։

1840-ական թթ. Սիրիայում գործում էին ազգությամբ ֆրանսիացի շուրջ 300 ճիզվիտ, լազարիստ, կապուչինյան և այլ միսիոներներ, որոնք եկեղեցական, բարեգործական և մշակութային ցուցանակի ներքո ծավալում էին բավական լայն քաղաքական գործունեություն, ընդ որում նրանց նպատակն էր՝ Ֆրանսիայի ազդեցության ներքո պահել և նրա շահերին ծառայեցնել տեղի կաթոլիկական համայնքները։

Դեռևս 1783 թվականից Անթուրայում գործում էր լազարիստների՝ Լեռնային Լիբանանում առաջին դպրոցը, որտեղ բոլոր առարկաները դասավանդվում էին ֆրանսերեն լեզվով։ 1812 թ. բացվեց ս. Իսակ Մարոնի

անվան սեմինարիան, որը կաթոլիկ կղերականներ էր պատրաստում արաբներից։

1830-ական թթ. կաթոլիկ միսիոներները հիմնեցին նաև սկզբնական և միջնակարգ դպրոցներ, կոլեջներ։ 1846 թ. Բեյրութում ստեղծվեց Սեոր դե Շարիթե (գթության քույրեր) միաբանությունը, որը դպրոցներ, որբանոցներ, մանկամատուներ և հիվանդանոցներ հաստատեց Սիրիայի տարբեր քաղաքներում։ Եկեղեցական-մշակութային գործունեություն էր ծավալում նաև Սեն-Վենսենտ դե Պոլ միաբանությունը։ 1875 թ. Բեյրութում հիմնադրվեց ճիզվիտների Սեն-Ժոզեֆ համալսարանը, որտեղ դաստիարակված սերունդը փայլում էր ոչ միայն ֆրանսիական մշակույթի և լեզվի իմացությամբ, այլև մանավանդ ֆրանսիական կողմնորոշմամբ[4]։

Ֆրանսիայից հետո Սիրիայի և Լիբանանի կաթոլիկական համայնքների նկատմամբ ցուցաբերած շահագրգռվածությամբ աչքի էր ընկնում Ավստրիան։ Ավստրիական կառավարության տրամադրած դրամական միջոցներով Սաիդայում, Սուրում, Տրիպոլիում, Լատակիայում գործում էին դպրոցներ, իսկ Դամասկոսում՝ հատուկ կուրսեր արաբ միսիոներներ պատրաստելու համար[5]։ Սակայն քաղաքական ազդեցություն ձեռք բերելու այդ և մյուս փորձերը, հանդիպելով Ֆրանսիայի դիմադրությանը, քիչ թե շատ հաջողությամբ չպսակվեցին։

Անգլիայի, Պրուսիայի և ԱՄՆ-ի կառավարությունները, Ֆրանսիայի համեմատությամբ բավական ուշ սկսեցին «հովանավորել» Օսմանյան կայսրության քրիստոնյաներին։ 1839 թ. ամերիկացի միսիոներ Ռոբինսոնը գրում էր. «Զարմանալի է այն, որ Անգլիան, կարևոր շահեր ունենալով հանդերձ Թուրքիայում, անտարբերություն է ցուցաբերում Սիրիայի գործերի նկատմամբ։ Ֆրանսիան վաղուց այդ երկրում հանդես է գալիս որպես հռոմեական կաթոլիկների պաշտպան։ Այդ պատճառով, կաթոլիկները ամեն տեղ Ֆրանսիայի ջերմ կողմնակիցներ են, ... իսկ որտե՞ղ են Անգլիայի կողմնակիցները, ոչ մի համայնք, նույնիսկ ամենաանշանը նրան չի դիտում որպես իր պաշտպանի...»[6]։

1841 թ. Երուսաղեմում հիմնադրվեց անգլո-պրուսական եպիսկոպոսությունը, որը քարոզչական աշխատանք էր կատարում Սիրիայում։ Այդ գործում նրան աջակցում էին Գոբատ միսիոներական ֆոնդը, Հրեաների մեջ քրիստոնեություն տարածելու Լոնդոնյան ընկերությունը, Բրիտանիայի Սիրիական առաքելությունը և այլ միսիոներական կազմակերպություններ։ 1880 թ. Սիրիայում և Պաղեստինում գործող բողոքական համայնքների թիվը սկզբնական 7-ից բարձրացել էր 175-ի[7]։ Համայնքների դպրոցներն ու եկեղեցիները դրամական նպաստ էին ստանում անգլիական

կառավարությունից, Լոնդոնի ու Մանչեստրի կրոնական-բարեգործական տարբեր կազմակերպություններից։

Սիրիայում բողոքականություն էին քարոզում նաև ամերիկացիները։ 1850-ական թվականներին Սայդայում, Դեյր ալ-Կամարում, Հոմսում և այլ վայրերում գործում էին պրեսբիտերյան-միսիոներական բաժանմունքներ։ Ամերիկացի միսիոներները Բեյրութում հիմնեցին տպարան, Աստվածաշունչը թարգմանեցին արաբերեն և հայերեն[8], սիստեմատիկաբար հրատարակում էին կրոնական-պրոպագանդիստական գրականություն։ Նրանց վերահսկողության ներքո գործում էին բազմաթիվ եկեղեցիներ ու դպրոցներ։ 1866 թ. բացվեց Սիրիայի բողոքական կոլեջը, որի հիմքի վրա հետագայում ստեղծվեց Բեյրութի ամերիկյան համալսարանը։ Ամերիկյան միսիոներները և նրանց գլխավորած համայնքները օգտվում էին անգլիական հյուպատոսարանների պաշտպանությունից։

Անգլիան, Ֆրանսիան և մյուս պետությունները կաթոլիկական ու բողոքական եկեղեցիները հովանավորելու հետ միաժամանակ գործադրում էին հնարավոր ամեն միջոց, որպեսզի թուլացնեն ռուսասիրական հակումներ դրսևորող արևելյան հունադավան եկեղեցիների դիրքերը։ Վերջին հաշվով, Օսմանյան կայսրության քրիստոնյաներին հովանավորելու քաղաքականության սուր ծայրը ուղղված էր Մերձավոր Արևելքում ռուսական ազդեցության ծավալման դեմ։

Մինչև 1847 թվականը, երբ Երուսաղեմում հաստատվեց ռուս հոգևորական առաքելությունը, ռուս ուղղափառ եկեղեցին գրեթե նկատելի գործունեություն չէր ծավալում Սիրիայում։ Այդ առաքելությունը, ձգտելով տեղական բնակիչներից հոգևորականներ պատրաստել, դրամական օգնություն էր ցուցաբերում Բեյրութի, Տրիպոլիի և Դամասկոսի արաբ հունադավան համայնքներին։ 1859 թ. Զահլեում, Հասբայայում և Լատակիայում բացվեցին նոր դպրոցներ՝ Ռուսաստանից ստացվող միջոցներով։ Բացի այդ, փորձ արվեց կաթոլիկություն և բողոքականություն ընդունած հույներին վերադարձնել հունադավան եկեղեցու գիրկը, սակայն ձեռք բերվեցին միայն ժամանակավոր հաջողություններ, ֆրանսիական և անգլիական հյուպատոսների ուժեղ հակազդեցության հետևանքով։

Կաթոլիկներին և բողոքականներին հովանավորող պետությունների դեսպաններն ու հյուպատոսները պայքարում էին նաև ռուս ուղղափառ եկեղեցու հետ դարավոր կապեր ունեցող հայ եկեղեցու դեմ։ 1827—1828 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ ազատագրության

վառ հույսեր էին բորբոքվել Արևմտյան Հայաստանում, այդ պետությունների հարվածի տակ ընկավ արևմտահայության անունից խոսելու իրավունք ունեցող Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը։ Նրանց հաջողվեց ի վերջո քայքայել վաղեմի էրմենի միլլեթը, որով հիմնականում պայմանավորված էր նրա հզորությունը։

Հայտնի է, որ օսմանյան նվաճողները, գրավելով Կ. Պոլիսը, ոչ մահմեդականներին բաժանեցին երեք՝ հունական, հայկական և հրեական միլլեթների կամ կրոնադավանական համայնքների։ Օսմանյան կայսրության բոլոր երկաբնակները, առանց ազգի խտրության, դրվեցին Կ. Պոլսի հունական պատրիարքի, իսկ միաբնակները՝ հայոց պատրիարքի իրավասության ներքո։ Ոչ միայն հայերը, այլև միաբնակ վրացիները, աղվանները, աւորիները, նեստորականները, դպտիները, եթովպացիները և այլն, ինչպես նշել է Մ. Օրմանյանը, «ամենքն ալ իրենց ժողովուրդներով և պետերով ենթարկվեցան հայ պատրիարքարանի իրավասությանը»[9]։ Ընդ որում պատրիարքն իրավունք ուներ դատել, պատժել, նույնիսկ աքսորել այն միաբնակներին, որ անհնազանդ էին գտնվում կամ մեղանչում էին եկեղեցական կանոնների դեմ[10]։

1830 թ. հունվարին Կ. Պոլսի ֆրանսիական և ավստրիական դեսպանները օսմանյան սուլթանից խնդրեցին հակակաթոլիկական հալածանքները դադարեցնել և տալ «նոցա որոշ պատրիարք և եկեղեցի՝ անկախ ղպատրիարքեն հայոց»[11]։ 1831 թ. հունիսի 5-ին սուլթանը ճանաչեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից անկախ հայ կաթոլիկ համայնքի գոյության իրավունքը։ Այդ առիթով տրված սուլթանական բերաթն ավարտվում էր հետևյալ ազդարարությամբ. «Եւ ասոնց (կաթոլիկներին— Հ. Թ.) գործերուն վրայ՝ յունաց և հայոց պատրիարքները և անոնց կողմնակիցները և ուրիշ կողմանէ ով ալ ըլլայ, հիչ մէկ պատճառաւ չի խառնուին»[12]։

Կ. Պոլսի անգլիական, պրուսական և ամերիկյան դեսպանները, օգտագործելով հայ կաթոլիկների նախընթացը, սուլթանից պահանջեցին «շնորհել բողոքական հայոց զանկախութիւն զպատրիարքէն հայոց»։ 1847 թ. նոյեմբերի 15-ին Բարձրագույն դուռը օսմանյան հպատակ բոլոր բողոքականներին ճանաչեց որպես ուրույն համայնք, այսինքն «անջատ յայց զնոսա իբրև որոշ ժողովուրդ, տալով նոցա արքունի հրովարտակով զանկախութիւն զպատրիարքէն հայոց»[13]։ 1850 թ. նոյեմբերի 14-ին «բողոքական դարձածներին» իրավունք տրվեց համայնքային գործերը վարելու համար ընտրել «ազգապետ», որը հաշվետու էր ոստիկանապետին[14]։ Ի տարբերություն հայ կաթոլիկների, հայ բողոքականները հանդես էին

գալիս որպես ոչ թե ուրույն համայնք, այլ բազմազգ «պրոտեստան» կամ բողոքական համայնքի հայկական հատվածը[15]:

Այսպիսով, Անգլիայի և Ֆրանսիայի քրիստոնյաներին հովանավորելու քաղաքականությունը, հանգեցնելով օսմանյան միլլեթների դրության քայքայմանը, զգալի չափով նպաստեց ռուսական կողմնորոշման համակիր համարվող հայ առաքելական եկեղեցու դիրքերի թուլացմանը: Սակայն դա սկիզբն էր երկանց:

Մինչև XIX դարի 20-ական թթ. վերջերը օսմանահպատակ կաթոլիկներն ենթարկվում էին դաժան հալածանքների, որոնք առավել խոշոր չափեր էին ընդունում մանավանդ այն ժամանակ, երբ սրվում էին ֆրանս-թուրքական հարաբերությունները: 1828 թ. հունվարի 27-ին Մահմուդ II 12.000 հայ կաթոլիկներ, այդ թվում 42 հոգևորականներ, Կ. Պոլսից աքսորեց Փոքր Ասիայի խորքերը: Հալածանքի ենթարկվում էին նաև Սիրիայի հայ կաթոլիկները, որոնք ճարահատ ապաստան էին գըտնում Լիբանանում: Ֆրանսիացի ճանապարհորդ դե Մարսելլուսը հաղորդում է, որ 1818—1820 թթ. Սաիդայում կային Հալեպի և Դամասկոսի հակակաթոլիկական հալածանքներից խուսափած զգալի թվով հայեր, որոնք պաշտամունք էին կատարում քաղաքամերձ քարայրներում[16]:

Օսմանյան միլլեթների տրոհումից հետո ֆրանսիական կառավարությունը հոգում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից անկախ հայ կաթոլիկ համայնքի վարկի ու հեղինակության բարձրացման մասին: 1847 թ. Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի միջնորդությամբ, Զմմառի միաբանության մեծավոր, պատրիարք Գրիգոր-Պետրոսին շնորհվել է օսմանյան իֆթիխարի շքանշան[17]: 1860 թ. հայ կաթոլիկ պատրիարքը՝ Լեոնային Լիբանանի մարոնական և հույն կաթոլիկ պատրիարքների հետ միասին ստորագրեց Ֆրանսիայի Նապոլեոն III կայսեր պաշտպանությունը հայցող դիմումը, որը պատրվակ ծառայեց ֆրանսիական զորքերի ներխուժմանը Սիրիա:

Լեոնային Լիբանանի ինքնավար մարդի ստեղծումից հետո հայ կաթոլիկ կղերը կարող էր առավելագույն չափով օգտվել ֆրանսիական դիվանագիտության և Վատիկանի շնորհներից: Առաջին ընդհանուր կառավարիչ (հայ կաթոլիկ) Դաուդ փաշայի միջնորդությամբ օսմանյան սուլթանը և Ֆրանսիայի կայսրը շքանշաններով զարդարեցին հայ կաթոլիկ պատրիարքի կուրծքը, իսկ վերջինս, ինչպես նշում է Մ. Թերզյանը, «իր կարգին» միջնորդեց Հռոմի պապի մոտ, որը և հայազգի կուսակալին

շնորհեց ասպետության առաջին կարգի շքանշան[18]։ Այդ բոլորը նպաստում էին հայ կաթոլիկ համայնքի դիրքերի ամրապնդմանը։

Կ. Պոլսում, Հալեպում, Բեյրութում, Դամասկոսում, Երուսաղեմում, Կահիրեում և այլ վայրերում մեկը մյուսի ետևից երևան եկան հայ կաթոլիկ համայնքներ։ 1840—1850 թվականներին հայ կաթոլիկների ընդհանուր թվաքանակը բարձրացել էր 30, իսկ 1860-ական թթ.՝ 90—100 հազարի[19], որի առնվազն 15—20 հազարը Սիրիայի հայեր էին։ Այդ հաջողություններից հուսադրված հայ կաթոլիկ կղերը, ծրագրելով նոր, ավելի մեծ նվաճումներ, 1868 թ. պատրիարքական աթոռը Զմմառից տեղափոխեց Կ. Պոլիս։ Հայ կաթոլիկ պատրիարք Անտոն Հասունը Հռոմի կողմից ճանաչվեց որպես «պատրիարք տանն Կիլիկիո»։ Սակայն դա հայ կաթոլիկական շարժման բարձրակետն էր։ Անտոն Հասունի որդեգրած ապազգային գիծը, որով կաթոլիկ դավանությունն աղգից վեր էր դասվում, հարուցեց ներհամայնքային սուր հակամարտություններ։ Հակահասունյան դիրքերում կանգնած Անտոնյան միաբանությունը և նրա վանքերը փակվեցին, զգալի թվով կաթոլիկ համայնքներ քայքայվեցին, բազմաթիվ եկեղեցականներ վերադարձան մայր եկեղեցու ծոցը[20]։

Այնուամենայնիվ «ուղիղ դավանության» հավատարիմ մնացած հայ կաթոլիկ կղերը, գործելով Վատիկանի գործակալների և ֆրանսիական դեսպանների թելադրանքներով, պայքարում էր էջմիածնի կաթողիկոսության, Կ. Պոլսի հայոց պատրիարքության դեմ և, որ ավելի վատ էր, շարունակում էր պրոզելիդիզմի փորձերը։ Կ. Պոլսից ամենայն հայոց կաթողիկոսին հղված բողոքագրերից մեկում ասված է. «Կաթոլիկ որսորդները խիստ հաջող դեր կխաղան, անհնարին է մրցել նոցա հետ, վասնզի Եվրոպայեն ահագին գումարներ կթափին...»[21]։

Սիրիայում «մարդորսությամբ» էին զբաղվում և՛ կաթոլիկ, և՛ բողոքական միսիոներները։ Ուլնեցի վարդապետը ահազանգում էր, որ Հալեպի նահանգի նույնիսկ աննշան գյուղերում «պապականաց և այլ օտար կրոնից քարոզիչներն շրջապատեր են մեր ժողովուրդը» և աշխատում են «մարդ որսալ»[22]։

Միսիոներները հայաբնակ գյուղերն էին մտնում դինված երիներանգ խոստումներով։ Դավանափոխության դիմաց նրանք թշվառության ճիրաններում գալարվող հայ գյուղացիներին խոստանում էին դրամական օգնություն և պաշտպանություն, բացում էին արական և իգական դպրոցներ, անվճար հագուստ և սննդամթերք տալիս հայ աղքատ երեխաներին, կառուցում էին մեծածախս եկեղեցիներ։ Դավանափոխները, գտնվելով օտար միսիոներական կազմակերպությունների, սրանց միջոցով էլ թուր-

քական իշխանությունների պաշտպանության ներքո, հաճախ անպատիժ արարքներ էին գործում ազգային եկեղեցուն հավատարիմ մնացածների դեմ։

Սիրիայում հավանաբար չկա մի հայաբնակ գյուղ, որտեղ միսիոներների քարոզչությանը զուգակցված չլինեն ներքին սուր հակամարտություններ, կռիվներ, դատ ու դատաստաններ։ Դրանցից բերենք թեկուզ երկու օրինակ. Կարադուրան գյուղի ավագը՝ կաթոլիկություն ընդունած Ղալանտեր Հովհաննեսը քանդել է տեղի հայկական եկեղեցին։ Գործը հասել է Կ. Պոլիս, և հայոց պատրիարքարանի միջոցով թույլտվություն է ձեռք բերվել եկեղեցին վերականգնելու մասին, բայց գյուղացիներին չի հաջողվել այդ իրավունքից օգտվել, քանի որ նրանց դեմ էր կանգնած Օրդուի պետական աստիճանավորը, որին կաշառել էին Հալեպի միսիոներները[23]։

Մյուս օրինակը վերաբերում է Ղնեի և Յակուբիեի հայ գյուղացիների դավանափոխությանը, որի հրահրողները կաթոլիկ միսիոներները և Հալեպի ֆրանսիական ու իտալական հյուպատոսներն էին։ Օգտագործելով գյուղացիների և հայազգի կալվածատեր Հաննեի միջև ստեղծված լարված հարաբերությունները, նրանց հաջողվել է շուրջ երեք հարյուր գյուղացիների ինչպես և քահանային դավանափոխել։ Պապական գործակալները հայ գյուղացիներին առաջնորդում են Հալեպ, որտեղ նրանք «Դադղիո և Իտալիո հյուպատոսներուն կդիմեն, որպեսզի զիրենք պաշտպանեն (Հաննեի դեմ—Հ. Թ.) և անոնց առջև լատինանալ հանձն կառնուն»[24]։ Այդ հաջողությունը միսիոներներին մղում է նոր սադրանքի՝ որպեսզի Ղնեի և Յակուբիեի մյուս գյուղացիներին էլ դավանափոխ անեն։ Կեղծ վկաներ և կաշառված թուրք աստիճանավորների օգնությամբ նրանք քրեական մի ծանրակշիռ գործ են հարուցում Հաննեի և նրա եղբոր դեմ, որոնք խանգարում էին գյուղացիների դավանափոխությանը։ Նշելով, որ Հալեպի նահանգապետը նրանց «բանտի դատապարտած է ի շնորհս լատին» կղերի, «Մասիս» լրագրի թղթակիցը գրում էր. «Եթե հաջողին Հաննեն տկարացնել և լատինացնել, Յագուպիե և Ղնիե գյուղերուն հայերը որսալ դյուրին է»[25]։

Այսպիսով, եվրոպական պետությունների՝ քրիստոնյաներին հովանավորելու քաղաքականությունը խիստ բացասաբար էր ներգործում Սիրիայի հայության վրա։ Միսիոներների ասպատակությունները գալիս էին լրացնելու այն, ինչ պակաս էր թողնում օսմանյան բռնապետությունը։

Մինչև Ազգային սահմանադրության հռչակվելը, Կ. Պոլսի հայոց պատրիարքները գրեթե չէին զբաղվում Սիրիայի հայկական համայնքների գործերով: Հալեպի, Անտիոքի, Բեյլանի և հյուսիսային Սիրիայի մյուս համայնքները կամ թեմերը դրված էին Սսի կաթողիկոսի, իսկ Լաոդիկեան, Դամասկոսը և Բեյրութը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքի իրավասության ներքո:

Սակայն յուրաքանչյուր թեմի գլուխ կանգնած էր Տանն Կիլիկիո կաթողիկոսի նշանակած թեմակալ առաջնորդը, որը համայնքային գործերը վարում էր ևկեղեցականների, բանկալապետի և մյութեվելլիի օգնությամբ: Առաջին երկուսը նշանակվում էին թեմակալի, իսկ մյութեվելլին կամ եկեղեցական կալվածների տնօրինողը՝ Սսի կաթողիկոսի կողմից և հաշվետու էր միայն նրա առաջ: Եկեղեցականը կամ եկեղեցականները ապահովում էին եկեղեցու «պայծառությունը» և մաքրությունը, կարգավորում ծիսակատարությունները: Բանկալապետը եկեղեցու դրամարկղի պատասխանատուն էր, նրան էին ենթարկվում մոմատունն ու մոմավաճառները և այլն: Չկար գրավոր ոչ մի կանոն կամ կարգադրություն, որով ճշտվեին նրանց պարտավորություններն ու իրավունքները: Թեմակալի կամքն օրենք էր: Մոտավորապես միևնույն ձևով էին գործում երուսաղեմական պատրիարքների գլուխ նշանակված վեքիլ վարդապետները կամ տեսուչները:

Ինչպես Սսի կաթողիկոսների և Երուսաղեմի պատրիարքների, այնպես էլ թեմակալ առաջնորդների և վեքիլ վարդապետների հենարան էր հանդիսանում աղայական դասը: Դործելով նահանգային վարչության և պետական աստիճանավորների հովանավորության ներքո, հայ աղաները մենաշնորհի էին վերածել համայնքային գործերը: Որպես կանոն նրանցից էին նշանակվում բանկալապետը, մյութեվելլին և եկեղեցականները:

Սակայն եվրոպական պետությունների գաղութային էքսպանսիան, նրանց բերած տնտեսական ստրկացման ձևերը (կոնցեսիաններ, բանկեր, պարտքեր և այլն), խախտելով դասակարգային ավանդական հարաբերությունները, նպաստում էին մի կողմից աղայական դասի թուլացմանը, մյուս կողմից առևտրականների, արհեստավորների դերի մեծացմանը հասարակական կյանքում: Այդ պայմաններում գնալով ուժեղանում էր ներքնախավերի պայքարը՝ աղայական առանձնաշնորհումների դեմ:

Սիրիայում հակաաղայական-դեմոկրատական պայքարի մշտաբոր-

բոլ օջախ էր Հալեպ քաղաքը։ 1860-ական թթ. այդ պայքարի գլուխ կանգնած էր բուրժուադեմոկրատական հայացքների տեր հրապարակախոս Հովհաննես Քյուրքճյանոֆը։ Լինելով ժամանակի զարգացած մարդկանցից, Քյուրքճյանոֆը աղայական դասի շահատակությունները մերկացնող հոդվածներ էր լույս ընծայում Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայկական մամուլում, քարոզում էր մատաղ սերնդի ուսման ու դաստիարակության իսկական օջախներ հիմնել։ Նա գրում էր. «Ազգայնոց մեջ այնպիսի հարուստ մարդիկ կան, որ կարող են տարին հարյուր հազար դահեկան նվիրել առանց ամենևին վնաս կրելու, բայց ո՞վ կրնա հարյուր դահեկան անգամ ծախք մը առաջարկել անոնց և ընդունիլ տալ... Յուրյանց զավակաց կրթության նյութական նպաստը հետևներեն կմուրացվի...»[1]։ Քյուրքճյանոֆը, նրա ընկերից Պետրոս Ղարաճյանը և նրանց համախոհները վաո հույսեր էին կապում Ազգային սահմանադրության հետ։

Սիրիայի սահմանադրության կողմնակիցներին թևավորում էր այն համարձակ պայքարը, որ Կ. Պոլսի էնաֆները մղում էին պատրիարքի և ամիրաների դեմ։ 1862 թ. նրանք գրավեցին պատրիարքարանը և այնտեղից դուրս եկան միայն Թուրքական ոստիկանության ճնշման ներքո։ Նման քայլեր փորձում էին նաև Հալեպի սահմանադրության կողմնակիցները։ 1862 թ. դեկտեմբերի 8-ին թեմակալ առաջնորդ Հակոբ եպիսկոպոսը Կ. Պոլսի պատրիարքական տեղապահին հաղորդում էր. «Ինչպես պատրիարքարանը, այնպես ալ մենք հարձակում մը ևս չկրելու և չի ծեծվելու համար պիտի պարտավորվինք ոստիկանութենեն ղինվոր ուղելով առաջնորդարանը պաշտպանելու. ասոնց ըրածը ապստամբություն է»[2]։

1863 թ. մարտի 17-ին Ազգային սահմանադրությունը հաստատվեց Բարձրագույն դռան կողմից։ 1865 թ. սկզբներին Հալեպ հասավ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի շրջաբերական-հրահանգը համայնքային վարչակառավարման մարմինները սահմանադրության համաձայն վերակազմելու մասին։ Դրան անմիջապես հետևեց Սսի Աթոռի կամքը թելադրող գաղտնի նամակը, որտեղ ասված էր. «Մի գործադրեք Սահմանադրությունը, գուցե վրդովմունք մը ըլլա, այլ սպասեցեք...»[3]։ Եվ, իրոք, սահմանադրական ժողովների ընտրությունը, որ պետք է կայանար 1865 թ. կեսերին, հետաձգվել է անորոշ ժամանակով։

Ազգային սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանափակվում էին Սսի կաթողիկոսների և Երուսաղեմի հայոց պատրիարքների իրավունքները։ Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովին էր վերապահվում վանական հաստատությունների «մատակարարության հաստատության ու ծախսուց ընդհանուր տեսչության ու քննության իրավունքը»։ Բացի այդ,

Սսի և Երուսաղեմի վանքերը պարտավոր էին հատուկ կանոնադրություն կազմել և ներկայացնել Ազգային ժողովի հաստատմանը: Դրանով Սսի և Երուսաղեմի աթոռները զրկվում էին ոչ միայն գործելու անսահմանափակ ազատությունից, այլև եկամտի աղբյուր հանդիսացող թեմերից:

Ազգային սահմանադրությունը խփում էր նաև սիրիահայ աղանների և՛ փառամոլությանը, և՛ գրպանին: Ազգային սահմանադրության 46-րդ հոդվածում ասված է. «Ազգային որևէ կալվածո գնումն ու վաճառումը չկրնար տեղի ունենալ առանց տնտեսական խորհրդո գիտության, քաղաքական ժողովո հաճության և պատրիարքի կնիքով հաստատության: Այս տրամադրության ուժովը եկեղեցիներու մյութևելլիության բռված բանը վերցված է հայոց համար»: Մյութևելլիության վերացումով կսյամաքեր չարաշահությունների և գոփումների այն աղբյուրը, որտեղ աղաներից շատերը հագեցնում էին իրենց ընչաքաղցությունը:

Սսի Աթոռը և նրա հովանավորյալները պայքարի դուրս եկան Ազգային սահմանադրության դեմ: Նախ և առաջ միջոցներ ձեռք առնվեցին կանխելու համար թեմերի անջատումը Սսի Աթոռից: Արդարև, սսական թեմերում ժողովուրդը, ինչպես նշել է Ա. Սյուրմեյանը, «ձգտում էր ուղղակի կապվիլ պատրիարքարանի և անոր սահմանադրական ժողովներուն, առաջնորդարանները դնելով Կ. Պոլսի պատրիարքարանի իրավասության տակ»[4]: 1864 թ. սսական թեմերը վերակազմվելով վերածվեցին երկու՝ Հալեպի և Անտիոքի առաջնորդական վիճակի: Առաջինի մեջ մըտնում էին Հալեպի, Քիլիսի և շրջակա գյուղերի, իսկ երկրորդի՝ Բեյլանի, Մուսա դաղի, Քեսապի և հյուսիս-արևմտյան Սիրիայի հայկական համայնքները: 1867 թ. սսական թեմերը վերստին վերակազմվեցին, Անտիոքի վիճակը վերացվեց և ստեղծվեց մի գլխավոր թեմ՝ Բերիո կամ Հալեպի թեմը, որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Հալեպի նահանգը: Այդպես անհամեմատ ավելի հեշտ էր խանգարել Ազգային սահմանադրության կենսագործմանը:

Մինչև 1870-ական թթ., երբ համաձայնություն կայացավ Կ. Պոլսի պատրիարքարանի և Սսի Աթոռի միջև, Սիրիայում ձախողվեցին Ազգային սահմանադրությունը գործադրելու բոլոր փորձերը: Այդ համաձայնությամբ Հալեպի թեմը դրվեց երկակի վերահսկողության ներքո: Գավառական ժողովի և թեմակալ առաջնորդի ընտրությունը Սսի կաթողիկոսի հավանության արժանանալուց հետո միայն կարող էր ներկայացվել Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի հաստատմանը: Երուսաղեմի հայոց պատրիարքը նույնպիսի իրավունքից օգտվում էր Լատակիայի, Դամասկոսի և Բեյրութի թեմերում:

1876 թ. փետրվարի 10-ին տեղի ունեցան Հալեպի թեմի Ազգային գավառական ժողովի ընտրությունները: Ընտրվեցին 24 աշխարհական և 4 եկեղեցական երեսփոխաններ: Աշխարհականներից 16-ը Հալեպից էին, 8-ը՝ Անտիոքից, Քիլիսից, Քեսապից, Բեյլանից[5]: 1877 թ. օգոստոսի 28-ին ս. Քառասուն Մանուկ եկեղեցում հանդիսավոր կերպով բացվել է գավառական ժողովի առաջին նիստը՝ ժողովրդի ներկայությամբ: Ընթերցվել է Կ. Պոլսի պատրիարք Ներսես վարժապետյանի՝ գավառական ժողովի ընտրության օրինավորությունը հաստատող պաշտոնագիրը, արտասանվել են խանդավառ ճառեր և այլն[6]:

Ազգային սահմանադրությունը սահմանափակում էր աղանների և սքեմավոր բռնակալների արատնությունները, բուրժուական դեմոկրատիայի տարրեր ներմուծում Սիրիայի հայ հասարակական կյանքում: Սակայն նրա բավական բարդ ժողովական համակարգը նման էր մի զգեստի, որը համենայն դեպս չէր համապատասխանում գավառների հայության մարմնին: Գավառական ժողովն ընտրվում էր ժողովրդական քվեարկությամբ և կատարում էր օրենսդրական ֆունկցիաներ: Քաղաքական ժողովը գործադիր իշխանություն էր և նրա իրավասությունն էր ուսումնական, տնտեսական, դատաստանական, թաղական խորհուրդներ կազմելն ու նրանց գործունեությանը վերահսկելը: Կար նաև կրոնական ժողով, խառն ժողով և բաղմապիսի հոգաբարձություններ:

Հալեպի թեմի սահմանադրական ժողովներն ու խորհուրդները, գտնվելով Կ. Պոլսի Ազգային վարչության և Սսի կաթողիկոսների շահերի քամման կիզակետում, վերածվեցին «քառակուսի անվի»: Թեմական ժողովներում աթոռ գրաված Սսի կողմնակից աղաները և Կ. Պոլսի կողմնակից էֆենդիները անընդհատ վիճում էին, փոխանակ հարցեր լուծելու՝ ախի կրքեր էին բորբոքում և նրանց նիստերը հաճախ ավարտվում էին կռվով: Կատարվում էին և առանց բավարար հիմքի բեկանվում գավառական ժողովի, թեմական առաջնորդների ընտրություններ, մի նիստում ընդունված որոշումը մի այլ նիստում ջնջվում էր, կամ էլ մնում թղթի վրա: Եվ անընդհատ բողոքագրեր էին տեղում Կ. Պոլիս...[7]:

Բացի այդ, Ազգային սահմանադրությունը թերի, շփոթ և անորոշ էր պատասխանում այնպիսի կենսական հարցի ինչպիսին էր անձնական իրավունքը: Նրանում, ինչպես նշել է Մելիք-Թանգյանը, «չեք գտներ դատակազմական, դատավարական որոշ ձևեր և օրենքներ, զանցառուների պատասխանատվության ենթարկելու և պատժելու հրահանգների կարգեր. ամեն ինչ թողնված է հին կարգով, միայն տալով ընդհանուրին սահմա-

նադրական կերպարանք»[8]: Հայկական համայնքների դատաստանական իրավասությունները սահմանող 47-րդ հոդվածում ասված է. «Դատաստանական խորհրդո պաշտոնն է ընտանեկան վեճերը լուծել և Բարձրագույն դռան կողմե պատրիարքարան հանձնված դատերը՝ հանձնարարության համեմատ քննել և որոշել»: Նույնքան անորոշ է կտակի հոգարարձության պարտականություններին վերաբերող պարբերությունը:

Այդ անորոշությունից օգտվում էին պետական դատարանները: Հայ համայնքի դատաստանական խորհուրդը կարող էր վճռահատել միայն այր և կնոջ միջև ծագած ամուսնական վեճերը, իսկ անձնական իրավունքի մյուս բոլոր գործերը՝ որդեգրություն, խնամակալություն, օժիտ, կըտակ, ժառանգություն, սննդագին և այլն պարտադիր կարգով հղվում էին պետական դատարան: Եվ սա այն դեպքում, երբ հույներն իրավունք ունեին համայնքային դատարանում վճռահատելու անձնական իրավունքի վերաբերյալ համարյա բոլոր գործերը[9]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքները հաճախ են փորձել հայ համայնքի դատաստանական խորհրդի իրավունքների սահմանն ընդարձակել, սակայն նրանց դիմումները միշտ էլ բախվել են Բարձրագույն դռան մերժմանը: 1891 թ. ապրիլի 1 թվակիր շրջաբերականով, դատական նախարարությունը հայտարարում էր, որ հայկական համայնքի դատաստանական խորհուրդն իրավունք ունի «միմիայն ամուսնական վեճերը լուծել, այր և կնոջ (ոչ թե զավակներուն) սննդագին որոշել» և այլն[10]: 1895 թ. փետրվարի 15 թվակիր ընդարձակ թաքրիրում Կ. Պոլսի հայոց պատրիարքը, վերստին արծարծելով հայկական համայնքի անձնական իրավունքի հարցը, Բարձրագույն դռնից պահանջում էր, որպեսզի «հույներուն արրված իրավասությունները տրվին նաև հայոց»[11]: Սակայն ոչ մի արդյունք ձեռք չի բերվել:

Այսպիսով, Սիրիայում Ազգային սահմանադրությունը փաստորեն չգործադրվեց: Ազգային-թեմական ժողովները և խորհուրդներն անվանական էին, և նրանց հիմքում ընկած բուրժուական դեմոկրատիայի սկզբունքները համարյա դեր չէին կատարում սիրիահայ հասարակական կյանքում: Թեմակալ առաջնորդի ընտրության հետ կապված անբովանդակ վեճերը և բազմապիսի կամայականությունները, պատճառ դառնալով փողոցային կռիվների, ծեծի ու խոշտանգումի, խիստ բացասաբար էին անդրադառնում սիրիահայ զաղթօջախների ներքին կյանքի վրա: Աղաների և էֆենդիների ... ղեկավարության հանձնված դարպասը (ազգային առաջնորդարանը) չէր կարողանում թեկուզ նվազագույն չափով իրականացնել այն հույսերը, որ աշխատավորական խավերը կապել էին Ազ-

պային սահմանադրության հետ: Դրանում պատասխանատվության խոշորագույն բաժինը կրում էր սասկան բարձրաստիճան եկեղեցականությունը:

Սիրիայում օսմանահպատակ քրիստոնյաները ենթարկվում էին ազգային ու քաղաքական ամենաբիրտ ճնշման, զրկված էին ամենատարրական իրավունքներից, և անդադար ոտնահարվում էր նրանց մարդկային արժանապատվությունը:

Մինչև XIX դարի վերջերը Սիրիայում ուժի մեջ էր Յուսուֆ փաշայի հրապարակած (1808 թ.) ֆերմանը, որով վերականգնացվում և լրացվում էին առաջին խալիֆաների հռչակած օրենքները: Ըստ այդ ֆերմանի, քրիստոնյաներին և հրեաներին արգելվում էր խոսել արաբերեն, Ղուրան կարդալ, մահմեդականի նման հագնվել, թամբած ձի հեծնել, սուր կրել, լայն գոտի կապել, տնային ծառայող պահել, գինի վաճառել և այլն: Նրանք պարտավոր էին մոտեցող մահմեդականի առաջ ոտքի կանգնել, նրան ճանապարհ տալ, նրա առաջ գլուխ խոնարհել և այլն: Քրիստոնյաները տնից դուրս գալիս պետք է հանեին կրած խաչերը, հանգուցյալի վրա լաց լինեին կիսաձայն, թաղման թափորին լուռ մասնակցեին և այլն: Մահմեդականներին իրավունք էր վերապահված վարելահողի վերածել քրիստոնյաների այն գերեզմանատները, որ այլևս չէին օգտագործվում և այլն:

Սիրիայում եկեղեցու զանգերը հնչեցնելու և այլ իրավունքներ ձեռք էին բերվում հատուկ ֆերմանով: Հիշատակվում են, օրինակ՝ «եկեղեցու կոչնակը կախել տալու և զարնելու ֆերման», «ննջեցելոց թաղման թուտի չի լինելուն ֆերման», «երկաթե կոչնակի մինշիլ չի առնելու ֆերման» և այլն: Այդ ֆերմանները ստացվում էին հայ վերնախավի ներկայացուցիչների միջնորդությամբ: Սակայն այդ իրավունքները քիչ թե շատ հարգվում էին քաղաքներում, իսկ գյուղական վայրերում հաճախ հանդիպում էին մոլեռանդների դիմադրությանը և կորցնում ուժը: Հալեպի առաջնորդարանում պարբերաբար քննարկվել են այս կամ այն շրջանի հայկական «եկեղեցվո զանգահարության դեմ» հարուցված արգելքները, որոնք երբեք առանց կաշառքի չեն հարթվել[12]:

Ա. Սյուրմեյանը բերում է այդ կարգի բազմաթիվ փաստեր: Օրինակ, 1846 թ. Հալեպի առաջնորդարանի կամ «դարպասի» վերանորոգումը պատրվակ է ծառայել հայկական համայնքից մի խոշոր գումար գրպանելու համար: Վերանորոգող հանձնաժողովի թողած արձանագրության մեջ ասված է· «... Մատնեցին մեզ տեղվույս փաշային, ըսելով թե հա-

յոց ազգն նոր եկեղեցի կհաստատեն. և փաշան... անիրավաց խոսածն հավանություն տալով, իսկույն կամեցավ մեր նորաշեն դարպասը քակել տալ: Բայց մեք առ Աստված դիմելով, հաղիվ թե կաշառօք կարողացանք փաշային ու մոլլային տալ 13.200, մահքեմեին սպասավորացը՝ 7000 ղրուշ»[13]: Ի դեպ, Սիրիայի օսմանյան հպատակ քրիստոնյաները նոր եկեղեցի կառուցելու իրավունքից զուրկ մնացին մինչև օսմանյան տիրապետության վախճանը:

Օգտվելով հայերի իրավազուրկ վիճակից, մոլեռանդ մահմեդականները ոտնձգություն էին կատարում նաև աղգապատկան կալվածների դեմ: Բերենք այդ առումով բնորոշ երկու փաստ. առաջին՝ Հալեպի մահմեդականները, հովանավորվելով քաղաքային իշխանությունների կողմից, բռնագրավում են «աղդային արտերին» 2000 կանգուն հողամաս և ընդարձակում իրենց գերեզմանատունը: Իզուր են անցնում հայերի բողոքի թաքրիրները: Երկրորդ փաստը կապված է Հալեպի հայոց գերեզմանատան հետ: Յանկանալով հայոց գերեզմանատան միջով դինավարժության տանել իր զինվորներին, կայազորի հրամանատարը կարգադրում է քանդել տապանաքարերը և ճանապարհ բաց անել: Տարբեր համայնքների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովին հաջողվել է դիմագրավել «սրբավայրի բռնաբարումը»[14]:

Օրենքով սահմանված էր, որ մահմեդական ճանապարհորդը՝ սկսած մուրացկանից մինչև պետական ամենաբարձր պաշտոնյան, իրավունք ուներ երեք օր հյուրընկալվելու քրիստոնյայի տանը: Վերջինս ոչ միայն իրավունք չուներ հրաժարվելու, այլև պարտավոր էր «հյուրին» հայթայթել այն ամենը, ինչ նա կպահանջեր: Այդ՝ օթևանի պարհակն առանձնապես ծանր էր գյուղական վայրերի քրիստոնյաների համար: Մահմեդական հյուրերը «երբեք պակաս» չէին հայ գյուղացիների տնից: Օթևանի պարհակը սովորական պարհակներից տարբերվում էր նրանով, որ հաճախ ոտնահարվում էին քրիստոնյա բնակչության ընտանեկան սրբությունները[15]: Գավառներից Կ. Պոլսի հայոց պատրիարքարան ուղարկված դեկուցագրերում օթևանի պարհակի վերացման անհրաժեշտությունը հիմնավորվում էր «պատվի իրավունքի» պաշտպանությամբ:

Պատվի ողբերգություն էր ապրում ոչ միայն գյուղական վայրերի քրիստոնյա բնակչությունը: Դամասկոսաբնակ դոկտ. Ռայտը նշել է. «Ես ճանաչում եմ բազմաթիվ քրիստոնյա ամուսիններ, որոնք սպանվեցին լոկ այն պատճառով, որ պաշտպանեցին իրենց կանանց պատիվը: Իմ սեփական տանը ապաստան էր գտած մի երիտասարդ քրիստոնյա աղջիկ, որին բացեիբաց հետապնդում էր Ֆրանսերեն խոսող և ընդհանրապես

քաղաքակրթված լինելու հավակնություն ունեցող նահանգապետը...: Թուրքական կայսրության մեջ հազիվ թե գտնվի մի գյուղ, որը չունենա ողբերգական հիշողություններ...»[16]:

Մահմեդականը կարող էր առևանգել, թալանել, սպանել քրիստոնյային և անպատիժ մնալ կամ տուգանք վճարելով ազատվել: Նշանավոր արևելագետ Ա. Կրիմսկին նշել է. «Մինչև անգամ Ասորիքում, այն երկրում, որը տաճկական ուրիշ գավառներից քրիստոնյաների համար ավելի ապահով է համարվում, մահմեդականը սպանելով քրիստոնյային՝ անպատիժ է մնում. սկզբում մի որևէ հյուպատոսի պահանջով նա բանտ կնստի, իսկ երեք օրից հետո տաճիկ կառավարության շնորհիվ ազատ կհամարվի, և բոլորի ծանոթ մարդասպանը հպարտ կերպով անցուդարձ կանի, օրինակ, այնպիսի բազմամարդ փողոցով, ինչպես Բեյրութի Բուրճն է»[17]:

Ճիշտ է, հարատահարվում էին նաև մահմեդական աշխատավորները, սակայն նրանց ունեցվածքը և անձն անձեռնմխելի էին կողմնակի ոտնձգություններից: Դատարանը վերականգնում էր նրանց իրավունքները և պատժում հանցագործներին, եթե, իհարկե, նրանք պետական ստիճանավորներ կամ ազդեցիկ դերդաստանների անդամներ չէին, իսկ քրիստոնյաները համարյա զրկված էին դատարան դիմելու իրավունքից:

Մինչև XIX դարի կեսերը Սիրիայում դատական գործը կենտրոնացված էր մահմեդական հոգևորականության ձեռքում: Դատարանում նախագահում էր կադին, և բոլոր հարցերը վճռվում էին ըստ Ղուրանի դոգմանների, մահմեդական ավանդույթների և անվանի աստվածաբան-իրավագետների ֆեթվանների: Քրեական հարցերի վճռահատման գործում անհեղելի սկզբունք էր Ղուրանի՝ արյան վրիժառության մասին այն հատարակ դրույթը, որտեղ ասված է. «Արյան դիմաց արյուն», «ազատ մարդը զրկվում է կյանքից ազատ մարդու համար, ստրուկը՝ ստրուկի, կինը՝ կնոջ, ով ներում է իր եղբոր սպանողին, նա իրավունք ունի պահանջել հատուցում»՝ նրա արյան գինը և այլն:

Թանզիմաթի ժամանակաշրջանում փորձ արվեց ստեղծելու դատական նոր սիստեմ՝ օժտված քրեական, առևտրական և քաղաքացիական նոր օրենսդրությամբ: Հալեպում, Բեյրութում, Դամասկոսում և Դեյր էզ-Զորում հաստատվեցին նիզամական կամ այսպես կոչված արդիական դատարաններ, որոնց հիմքում ընկած էր դաստուրը՝ թուրքական կառավարության ընդունած օրենքների ամբողջությունը և քաղաքացիական այն իրավունքը, որ ձևված էր եվրոպական պետությունների օրենքների

վրա։ Սանջակներում և կազաներում գործում էին նախադատ ատյաններ, որոնց արձակած վճիռները կարող էին վերանայվել յուրաքանչյուր նահանգի վարչական կենտրոնում գործող վերաքննիչ ատյանում։ Սիրիական նահանգներում վճռաբեկ ատյան չկար, վճռաբեկության վերաբերյալ հայցերը հղվում էին Կ. Պոլիս։

Առևտրական և քրեական այն բոլոր գործերը, որ ծագում էին օսմանահպատակների և օտարահպատակների միջև, լսվում էին Բեյբութի առևտրական դատարանում, որի անձնակազմը բաղկացած էր օտարահպատակ և օսմանահպատակ իրավաբաններից։ Այդ դատարանը ստեղծված էր կապիտուլյացիաներից օգտվող պետությունների պահանջով և, վերջին հաշվով, ծառայում էր նրանց շահերին։

Ըստ Խաթթը-Հումայունի, նիզամական դատարանում դեր չէին խաղում վկաների ազգությունն ու կրոնը։ Բայց գործնականում այդպես չէր։ Այդ պատճառով, անհրաժեշտ էր համարվել Բեռլինի կոնգրեսի որոշումում գետեղել հատուկ հոդված, որտեղ ասված է. «Օսմանյան կառավարության բոլոր հպատակներին առանց դավանանքի խտրության պետք է թույլատրվի վկայություն տալ դատարանում»։ Այդ միջազգային ակտով ամրապնդվում էր Խաթթը-Հումայունի համապատասխան կետը, և թուրքական կառավարությունը հանդիսավոր պարտավորություն էր ստանձնում կյանքում կիրառել այն, ինչը մնացել էր թղթի վրա։

Սակայն դատավարական պրոցեսը շարունակվեց անփոփոխ։ 1879 թ. Հալեպի քաղաքապետարանի (բելեդիեի) անունից Բարձրագույն դռան ներկայացված մի դիմումում ասված է. «Դատաններում մեջ նույնիսկ քաղաքային (նիզամական) դատարանաց առջև մահմեդականի դեմ քրիստոնեից վկայությունը չընդվիր, հարկ կհամարվի, որ ընդհանրապես երկու տարբեր ազգի վերաբերյալ անհատներու մեջ ծագելիք պատահական և քաղաքացիական դատերը քաղաքային դատարանաց առջև տեսնվին և, ըստ հրովարտակաց տրամադրության, քրիստոնեից վկայություններն առանց վարանման ընդունվին, և ասոր հակառակ վարվողը ծանր պատասխանատվության ներքո իյնա»[18]։

Սակայն ամենազազրելին այն էր, որ թուրքական դատարանից անբաժան էին կեղծ վկաներն ու կաշառակերությունը։ Թուրքական ներքին կյանքին լավատեղյակ Վիլսոնը հաղորդում է, որ դատական սանդուխքում վերից վար թագավորում էր «բացահայտ և ամենալպիրշ կերպով կատարվող կաշառակերությունը»։ Իսկ սուտ վկայություն տալն ընդունել էր «կազմակերպված բնույթ»[19]։ Ամեն քաղաքի սրճարաններում և բաղնիքներում ցանկացած ժամանակ կարելի էր գտնել կեղծ վկաներ, որոնք

աննշան վարձատրությամբ պատրաստ էին երդվելու ինչով ուզենաս։ Այդ անձերը շատ լավ հայտնի էին ամբողջ քաղաքում, այդ թվում հենց իրեն՝ դատավորին, բայց նա ամենայն լրջությամբ լսում էր նրանց ցուցմունքները և վճիռ կայացնում դրանց հիման վրա։

Կ. Մարքսը նշել է, որ Ղուրանը և դրա վրա հիմնված իսլամական իրավունքն ամբողջ աշխարհի ժողովուրդներին բաժանում են «ուղղափառների և անհավատների ...։ Անհավատը, դա, գյավուրն է, թշնամի։ Իսլամն օրենքից դուրս է դնում անհավատներին և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև»[20]։ Իսլամը ծառայում էր խոր միջնադարից ժառանգություն մնացած այն համոզմունքի ամրապնդմանը, ըստ որի մահմեդականի և քրիստոնյայի հարաբերությունները չեն կարող տարբեր լինել, քան ստրկատիրոջ և ստրուկի հարաբերությունները։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի (1876—1909) գահակալությամբ Թուրքիայում սկսվեց բռնությունների, հալածանքների և զանգվածային կոտորածների մի նոր ժամանակաշրջան, որը պատմության մեջ է մտել «ղուլումի տարիներ» անունով։ Վ. Ի. Լենինը սուլթան Համիդին համարում էր «թուրքական Նիկոլայ Երկրորդը»[1]։

Ազգային ճնշման ուժեղացումը խթանում էր ազգային-ազատագրական շարժումները գրեթե բոլոր թուրքական տիրապետություններում։ 1876 թ. ապստամբություն բռնկվեց Բուլղարիայում, հուզումներ առաջացան Սիրիայում, Հայաստանում։ Հայ ժողովուրդը, հուսալով Ռուսաստանի օգնությամբ թոթափել թուրքական լուծը, գործուն մասնակցություն բերեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին։ Հայ կամավորական ջոկատները պարտիզանական մարտեր մղելով թշնամու թիկունքում, նպաստում էին ռուսական զորքերի առաջխաղացմանը։

Ռուսական զենքի հաղթանակին հաջորդեցին նախ Սան-Ստեֆանոյի, մի քանի ամիս անց՝ Բեռլինի դիվանագիտական սակարկությունները։ Ոչ 16-րդ, ոչ էլ 61-րդ հոդվածով Հայաստանի անկախության հարցը չդրվեց։

Բեռլինում պարզապես հայկական հարցը աճուրդի հանվեց։ Արդարև, եվրոպական պետությունների ղեկավարները այնտեղ հավաքվել էին ոչ թե ժողովուրդների կենսական հարցերը լուծելու, այլ միջազգային սովորական գործարքներ կնքելու համար։

Բեռլինի վեհաժողովի տրակտատի 61-րդ հոդվածով Բարձրագույն դուռը պարտավորվում էր «առանց հետագա հապաղման բարելավումներ ու ռեֆորմներ իրականացնել հայերով բնակեցված մարզերում և ապահովել նրանց անվտանգությունը չերքեզներից ու քրդերից։ Այդ նպատակով իր ձեռնարկած միջոցառումների մասին նա պարբերաբար պետք է հաղորդեր տերություններին, որոնք պետք է հսկեին դրանց իրականացմանը»։ Թուրքիան ոչ մի ռեֆորմ էլ չանցկացրեց, ընդհակառակն, ուժեղացրեց ազգային ճնշումը։ Իշուր էին անցնում հայերի անդադրում բողոքներն ու արցունքները։ «Խնամակալները» բավարարվում էին նրանով, որ Բարձրագույն դռանն հիշեցնեն, թե Բեռլինի տրակտատով նախատեսված ռեֆորմները պետք է անհապաղ իրականացնել։

Օգտվելով եվրոպական պետությունների թողտվության քաղաքականությունից, թուրքական պարագլուխները որոճում էին հրեշավոր ծրագրեր։ Դրանցից մեկը կապված է հայտնի պետական գործիչ Քամիլ փաշայի անվան հետ։ Նրանում ասված է. «Հիմա, այսօր գոնե, մեր շահերն ու Անգլիայի շահերը կպահանջեն, որ Փոքր Ասիայում (մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչնար, այլ այդ անունը հնչող կղակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկրներն ազատ մնան օտարին միջամտությունից և միջամտության ամեն առիթներից։ Ուստի այս սուրբ նպատակին համար պետք է, և պետական իրավունքը կպահանջե, որ յուրաքանչյուր կասկածելի տարր անհետ ընենք, որպեսզի մեր ապագան ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անճիտ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք—քրդերը, չերքեզները, կուսակալները, դատավորները, հարկահանները, ոստիկանները, վերջապես ամենայն ինչ, կրոնական պատերազմ մը կհայտարարենք, և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ որ ոչ զենք ունի, ոչ զինվոր և ոչ պաշտպան...»[2]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո խոշոր ծավալ ընդունեց չերքեզների, չեչենների հոսքը դեպի Հայաստան, այստեղից էլ Սիրիայի հայերով բնակեցված շրջանները։ Նրանց գաղթը կազմակերպում էին պետական աստիճանավորները, շռայլելով ամենագայթակղեցուցիչ խոստումներ՝ մի տարի շարունակ հացով ապահովում կառավարության հաշվին, ամենահարմար պետական հողերում բնակեցում՝ ցանկացած տարածությամբ հողով, երկրագործական գործիքներով և անասուններով, պետական վարկի լիակատար ապահովում՝ տներ, մզկիթներ, դպրոցներ կառուցելու համար և այլն։ Սակայն տեղ հասնելուց հետո գաղթականներն ընկնում էին թշվառության մեջ։ Թուրքական կառավարությունը

բոլորովին չէր զբաղվում գաղթականներին նպաստ տալու հարցով, որովհետև նրան հարկավոր չէր այդ զանգվածը, առանց նրա թշվառությյան։

Սիրիա քշված գաղթականների ճնշող մեծամասնությունը բաժին հանվեց Հալեպի նահանգին։ Չերքեզական բնակավայրեր հաստատվեցին հյուսիսային Սիրիայի հայահոծ գյուղախմբերի հարևան վայրերում։ Նրանք առանձնապես մեծ թիվ էին կազմում Անտիոքի, Քիլիսի, Հարիմի, Մեմբիջի և Մարաշի կազաներում։ Չերքեզների, չեչենների վերաբնակեցման առթիվ անգլիական հյուպատոսը գրում էր. «Ոչ մի բան չէ կարող արդարացնել այն, ինչ անցյալ տարի ձեռնարկեց թուրքական կառավարությունը, զինված մարդկանց մի ամբողջ ամբոխ լցնելով այն երկիրը, որի անմեղ բնակիչները նույնիսկ սովոր չեն զենք կրել»[3]։

Կենսամիջոցներից իսպառ զրկված, ոտից գլուխ զինված այդ գաղթականները պատուհաս դարձան Հալեպի նահանգի հայությյանը։ Քաղաքներում և գյուղերում աներևակայելի չափերի էին հասնում կողոպուտներն ու հափշտակումները։ 1879 թ. փետրվարի 13 թվակիրով Հալեպից Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում էին. «Ուզնիա, Ֆրնուզ և Ալպաշ գյուղերն իրենց շուրջը գտնված պեշենցի, քերթմենցի, չերքեզ և այլ զինյալ թուրքերեն պաշարված են։ Սույն հայ գյուղերեն զով որ տեսնեն դուրսը կկողոպտեն, կվիրավորեն և կմեռցնեն։ Տեղական կառավարությյան այս մասին եղած բողոքներն ապարդյուն կմնան, վասնզի տեղական իշխանությյան միակ նպատակն է արդեն այս կողմերու հայությյունը և մանավանդ ուզնեցիներն իսպառ փշացնել»[4]։

Սակայն չերքեզները և նրանց միացած մյուս տարրերն աննպատակ գործում էին ոչ միայն գյուղական վայրերում, այլև քաղաքներում։ Մի հաղորդումում ասված է, որ Մարաշում չերքեզները, «տեղացի տաճիկներու առաջնորդությամբ տուները կմտնեն, ընտանյաց մարդիկը կվիրավորեն և տուները կթալնեն· փողոցներու մեջ և շուկաները հայերը կանպատվվին, կգանակոծվին»[5]։ Կողոպուտը, թալանը և սպանությյուններն այնպիսի չափեր էին ընդունել, որ օտարերկրացի միսիոնարները տեղական իշխանությյունից պահանջել են ապահովել իրենց անձի և ունեցվածքի անվտանգությյունը՝ հատուկ ոստիկանների միջոցով։ Այդ պահանջը սակայն չի բավարարվել, ուստի նրանք հեռացել են քաղաքից[6]։

Հալեպում չերքեզները չվերաբնակվեցին, այնտեղ ապրում էին մեծ մասամբ վարչական ու ոստիկանական պաշտոններում նշանակված նրանց առաջնորդները։ Սակայն քաղաքի շուկաները միշտ էլ լցված էին չերքեզ մուրացկաններով և դատարկապորտներով, որոնց հաճախ միանալով զանազան շրջանների զինված հրոսակների հետ թալանում էին

խանութները, վայրագություններ գործում՝ առանց հաշվի առնելու զոհերի կրոնական և ազգային պատկանելիությունը։ Եվ դա այն դեպքում, երբ թուրքական ատիճանավորները փորձում էին Հալեպ քաղաքը, որպես նահանգային վարչատնտեսական կենտրոն և եվրոպական հյուպատոսների նստավայր, զերծ պահել ավազակային հարձակումներից։

Սակայն թուրքական կառավարությանն անհրաժեշտ էին առավել արյունահեղ, առավել բարբարոսական գործողություններ, և Բարձրագույն դուռը ձեռնամուխ եղավ համիդիե գնդերի ստեղծմանը։

Մինչև XIX դարի 70-ական թթ. վերջերը Սիրիայի հայերը և քրդերը պահպանում էին պարզապես դրացիական հարաբերություններ։ Քրդական քնակավայրեր կային Ամուկի դաշտավայրում և հայահոծ այլ շրջաններում։ Իսկ Իսլահիեի գյուղերում, «շատ հայ բնակիչներ..., մեկ տնով, հինգ տնով և մինչև տաս տնով զատ-զատ քրդերու մեջ» էին ապրում, բայց կրոնական տարբերությունը իրեն զգացնել չէր տալիս կենցաղային հարցերում։ Հայերը հարկ էին վճարում քուրդ աշիրեթապետներին, իսկ սրբանք էլ թույլ էին տալիս, որ հայերն ազատորեն կրոնական ծես կատարեն։

Ավելին, Ուլնեցի վարդապետը նշել է, որ կարգադրություն է արվել քրդերի մեջ բնակվող հայերի համար մնայուն «քահանա մի ուղարկելու և մատուռ մի շինել տալու» մասին[7]։ Սակայն այդ այդպես չմնաց։

Թուրքական կառավարությունը միջոցներ գործադրեց հայ-քրդական թշնամանք ստեղծելու համար։ Ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանի գործակալները ստահոդ լուրեր էին տարածում այն մասին, որ իբր հայերը, պատրաստվելով ապստամբության, արտասահմանից անհաշիվ քանակությամբ զենք ու զինամթերք են ստանում, զինվորական գաղտնի խմբեր են կազմակերպում և այլն։ Բարձրագույն դռան դահլիճներից ղեկավարվող այդ հակահայ քարոզչությանը ջերմեռանդորեն արձագանքում էին Կ. Պոլսի «Ստամբուլ», «Վագըֆ», «Սիմաֆոռ» թերթերը, իսկ Եվրոպայում՝ մի շարք կաշառված գրիչներ։ Եվ ամենևին պատահական չէր, որ իբր «հանուն ազգային վրեժխնդրության հայոց զինյալ զորեղ խմբերը» կործանում և այրում էին քրդական գյուղերը որպեսզի Քրդստանը Հայաստանի վերածեն և ազատ քրդերին ռայա դարձնեն...[8]։

Այդ քարոզչությունը արձագանք էր գտնում նաև Սիրիայի քրդերի շրջանում։ 1879 թ. սկիզբներին Հալեպից ահազանգեր էին լսվում այն մասին, որ հայերը «իբրև ապստամբ և անհնազանդ կնկատվին, իսկ քրդերը և ուրիշ զանազան ցեղեր իրենց ապօրինավոր և վնասակար ընթացիք մեջ կքաջալերվին... Ճեզիրեի քրդերն և անոնց պարագլուխները («Պետրիխանի որդիքը») ... այս օրերս իրենց ընկերներով քաղաքս բերվե-

լով, իբրև օգտակար մարդիկ մեծ պատվով ի տես ժողովրդյան շուկաները կպատին, և տեղական կառավարությունը պատվավոր կերպով նոցա բոլոր պետքերը կհոգա...»[9]: Եվ սա այն օրերին, երբ Հալեպի նահանգի տարբեր շրջաններից մեծ թվով ոչ-անհայտ հայեր բանտ էին նետված որպես ապստամբ...: Վերջում թղթակիցն եզրակացնում է. «Իշխանությունք օգտակար և աշխատասեր հպատակները վնասակար, իսկ վնասակարները օգտակար դատելով՝ իրենց ընթացից մեջ կթաջալերեն, ապագային զանոնք իրենց ունայն նպատակին ծառայեցնելու համար»[10]: Սրդին սաղմնավորվում էին համիդիե գնդերը, որոնք շուրջ մի տասնամյակ հետո պետք է մեծագույն չարիքներ պատճառեին նաև Սիրիայի հայությանը:

Թուրքական կառավարությունը միաժամանակ ցուցադրական միջոցներ էր ձեռնարկում իր «բարեխնամության» մասին Եվրոպայում պատրանքներ ստեղծելու համար: Դրանցից էր ռեֆորմի հանձնաժողովների վերակազմությունը՝ նոր հիմունքներով:

Հայտնի է, որ 1878 թ. վերջերին թուրքական կառավարությունը հայկական նահանգներում ստեղծեց ռեֆորմների հարցը ուսումնասիրող հանձնաժողովներ, որոնք իրականում զբաղված էին քրդերին, չերքեզներին և այլ մուսուլմանական տարրերին դինելու, նրանց հայահոծ շրջաններում վերաբնակեցնելու, ազգամիջյան կրքեր բորբոքելու և այդ կարգի այլ հարցերով: 1879 թ. կեսերին, երբ Եվրոպայի հայասերների շրջանում անհանգստության նշաններ երևացին, թուրքական կառավարությունը վերակազմեց ռեֆորմի հանձնաժողովները, դրանցում տեղ տալով նաև քրիստոնյաներին:

Հալեպի նահանգի ռեֆորմների կամ «Բարեփոխմանց երեսփոխանական հանձնաժողովի» ընդամենը 61 աթոռներից 39-ը հատկացվել է մուսուլմաններին, 21-ը՝ քրիստոնյաներին, 1-ը՝ հրեաներին: Քրիստոնյաներին հատկացված տեղերից 12-ը տրվել է հայերին (առաքելական համայնքին՝ 8, հայ կաթոլիկ համայնքին՝ 2, հայ բողոքականներին՝ 2), իսկ մնացյալը՝ հույներին, ասորիներին և մարոնականներին: Եվ, որ ուշագրավ է, այդ հանձաժողովի նախագահ է ընտրվել հայ առաքելական համայնքի ներկայացուցիչներից Մանուկ Գարաճյանը: Հաղորդելով Հալեպի այդ իրադարձությունների մասին «Մասիս» լրագրի թղթակիցը զարմանքով նշում էր. «Այս անգամ կշիռը մահմեդականաց կողմը չհանգելե զատ, դուցե, քրիստոնեից ալ նպաստավոր դիրք մը բռնած է: ...Եթե դժգոհություն հայտնելու իրավունք ունեցող ազգ մը կա, ան ալ մահմեդական, ոչ թե քրիստոնյա պետք է ըլլա...»[11]:

Արդարև, հայերը դառնում էին սուլթանի կազմակերպած կատակերգության գլխավոր դերակատարը։ Բուրք աստիճանավորների խրախուսանքով հանձնաժողովը քննարկում էր ազգային ու կրոնական իրավահավասարության հետ կապված խնդիրներ, որոնք, թեև ոչ մի դրական լուծման չէին հանգում, բայց տպավորություն էին ստեղծում քրիստոնյաների վիճակի բարելավման մասին։ Օրինակ, հանձնաժողովը պահանջում էր, առաջին՝ ինչպես նահանգապետի, մութասարիֆի և կայմակամի, այնպես էլ «ամեն կարգի նիզամի և առևտրական դատարանաց նախագահներուն կողքին մեկ-մեկ քրիստոնյա մուավին» (տեղակալ կամ գործերի կառավարիչ) նշանակել, և «ասոնց ստորակարգյալ պաշտոնեից մեջ ալ ըստ կարելվույն քրիստոնեից թիվն ավելացնել»։ Երկրորդ՝ «ոստիկանության մասին կատարվելիք նոր կարգադրության մեջ ոստիկանեն և ժանդարմայե զատ, անոնց վրա դրվելիք սպաներուն մեջ ալ ըստ կարելվույն քրիստոնյաներ մտցնել, ինչպես նաև հավաքիչ (թահսիլտար), քաղաքային դատարանաց մյուպաշըր, քաղաքապետական դիվանաց չավուշներ առնուլ ոչ-մահմեդականներեն»։ Երրորդ՝ քրիստոնյաներին իրավունք տալ որպես վկա դատարան ներկայանալու և «ասոր հակառակ վարվողը ծանր պատասխանատվության» տակ դնել և, վերջապես, «պաշտոնանկ ընել» կաշառակեր, զեղծարար և «ապօրինի վարմունք» ցուցաբերած պետական պաշտոնյաներին, դատավորներին և այլն։ Հաղորդելով այդ բոլորի մասին, «Մասիս» լրագրի Սիրիայի թղթակիցը հեգնանքով ասում է, որ եթե այդ «խնդրանաց մեկ տասերորդն ալ դրծադրվի» Հալեպի նահանգը կարող է դասվել աշխարհի «բարեկարգյալ երկիրներուն» շարքը[12]։

Իրականում հայերի վիճակը գնալով ծանրանում էր, և մեկ բողոքագիրը մյուսի ետևից հասնում էր Կ. Պոլիս։ 1879 թ. վերջերին Հալեպի հայ պանդուխտները (շուրջ 5000 շունչ) դիմել են մեծ պետությունների Կ. Պոլսի դեսպաններին, խնդրելով Բեռլինի 61-րդ հոդվածի կենսագործումը։ Նրանց դիմումում ասված է. «Ստորագրյալ պանդուխտ արհեստավորքս ի Հալեպ, բնիկ ծագմամբ Սասնո, Մշո, Վանա, Արաբկերու, Ջմշկածագա և այլն, և այլն, կհամարձակիմք աղերսել զքրիստոնյասեր ներկայացուցիչդ վեհապետանց Եվրոպիո, որ արդեն հայոցս կենցաղի մասին քաջածանոթ եք, որք քյուրդ թշնամիներու արտաքին հալածանքներեն ճնշվելով, շատ մը ժառանգական բնակութիւններես արտաքսյալ, միմյանց օգնելու հույսով խիտ առ խիտ բնակվելու ստիպված ենք ի կենտրոնավայր, բայց դարձյալ նոցա վայրագ կացութիւններեն վիշտ, տառապանք, զրկանք, հարստահարութիւնք կրելով, օրապահիկներնիս

հայթայթելու համար ժամանակ մը մինչև ցարդ օտար երկրներու մեջ չարաչար ստրկութեամբ կաշխատիմք, նկատելով որ ի շնորհս վեհապետացն Եվրոպիո մարդկային իրավունք անխտրապես կպաշտպանվին ընդ որ և Հայաստանն ալ հիշողութեան տակ առնելով բարենորոգումներ խոստացաք, և տարիեն ավելի է որ կսպասեմք արդյունք մը վայելելու, միմիայն մի քանի քոմիսերներ Տիգրանակերտա, Վանա, Մշո և Տերսիմի մեջ հարևանցի ձևակերպութիւններ ընելով հեռանալուն պես դարձյալ նույն քրդերն անդր քան զառաջ հարստահարութիւններին» սկսեցին և այլն: Դիմումի վերջում հույս է հայտնվում, որ Եվրոպայի «գթառատ» և «մարդասեր» վեհապետները կպաշտպանեն տարաբախտ պանդուխտներին, որպեսզի նրանք ապաստվեն «պանդխտութեան անտանելի լուծեն»[13]:

Պատասխանելով վեց պետութիւնների կողմից 1880 թ. հունիսի 11-ին տառացիորեն նույն բովանդակութեամբ, բայց առանձին-առանձին մատուցված նոտաներին, թուրքական կառավարությունը հաղորդում էր, որ ռեֆորմներն արդեն կատարվում են, օրինակ, նիզամական դատարանն անջատված է գործադիր իշխանութիւնից, հարկերի բաշխման սիստեմը բարելավվում է, տեղերում կազմակերպվում է համապատասխան ոստիկանութիւն և այլն: Մեծ պետութիւնների հյուպատոսները, ստուգելով թուրքական նոտայում ասվածները, միաբերան վկայում էին, որ հիշատակված ռեֆորմներն իրականում գոյութիւն չունեն, որ այդ բոլորը սոսկ երևակայական և կեղծ տեղեկութիւններ են: Ամփոփելով հյուպատոսական այդ զեկուցագրերը, Ռոլին-Ժակմինը եզրակացնում էր. «Ենթադրյալ ռեֆորմները կատարվում են զավեշտական պայմաններում»[14]:

Համիդիե գնդերը կազմակերպվելուց հետո հարստահարութիւնները նոր թափ ստացան: 1892 թ. հունիսին Հալեպի անգլիական հյուպատոսի պաշտոնակատար Ա. Կետոնին, հաղորդելով Ադանայի նահանգում տեղի ունեցած արյունալի իրադարձութիւնների մասին, նշում էր· «Դժբախտաբար համարյա միևնույն դեպքերն են կրկնվում նաև Հալեպի նահանգում, ... և հակված եմ մտածելու, որ եթե ազդու միջոցներ ձեռք չառնվեն, ապա թուրքերի վարքագիծն այդ վայրերի քրիստոնյա բնակչութեան հանդեպ կարող է լուրջ հետևանքների հանգեցնել»[15]:

1894 թ. թուրքական իշխանութիւնները ուժեղացրին ազգային ճնշումը Հալեպի նահանգում: Սակայն, ի տարբերութիւն հայկական վիլայեթների, այստեղ դրանք զանգվածային ձերբակալութիւններից և աքսորից այն կողմ չանցան, թեև մի նահանգից մյուսն աքսորվող «հեղափոխականները» հաճախ խողխողվում էին «ավազակների» կողմից կամ էլ

մահանում բանտում: Հալեպի ռուսական հյուպատոս Յակիմանսկին հաղորդում է Ալեքսանդրետի, Բեյլանի և Հալեպի հայերի նկատմամբ գործադրված բռնությունների մասին: Իր 1894 թ. դեկտեմբերի 15 թվակիր զեկուցագրում, նշելով, որ Ալեքսանդրետում հրաման է ստացվել «խստորեն հետևել հայ բնակչության վարքին», նա ասում է. «Կայմակամը դրանում հարմար առիթ է տեսնում հագեցնելու քողարկված ընչաքաղցությունը. ... Նա շտապում է ձերբակալել հայ բնակիչներին և նրանց ուղարկել Հալեպի նահանգից ուրիշ նահանգ...: Որպես քաղաքական անհուսալի ձերբակալված հայերը փրկագին են վճարում նայած իրենց հնարավորության և նյութական պայմաններին: Ձերբակալված մնացին միայն նրանք, ովքեր բավարարել չէին կարողացել կայմակամի պահանջները»[16]:

Յակիմանսկու զեկուցագրում Հալեպի հայերի վերաբերյալ ասված է. «Վերջին ժամանակներս այստեղ ձերբակալվել են 30 հայեր՝ մի որևէ քաղաքական դավադրության մասնակցելու մեղադրանքով: Նրանց մի քանիսը որպես ամենավտանգավորներ ուղարկված են Կ. Պոլիս՝ պահակախմբի ուղեկցությամբ, ուրիշներ՝ Ադանայի, Դիարբեքրի, Խարբերդի նահանգները»[17]: Հայերին արգելված է եղել առանց ոստիկանության թույլտվության դուրս գալ քաղաքից: Ոստիկանական հսկողություն է հաստատվել անգամ Սսի կաթողիկոսի Հալեպի բնակարանի վրա: Դրությունը ծանր էր նաև Բեյլանում[18]: Սակայն այդ բոլորը կարող է սոսկ մանրուք թվալ, եթե համեմատվեն այդ նույն օրերին հարևան նահանգներում տեղի ունեցող արյունահեղության հետ: Դիարբեքրում հրդեհվել են 119 հայաբնակ գյուղեր, կոտորվել շուրջ 6000 ընտանիքներ:

1895—1896 թթ. հայկական կոտորածների ասպարեզ դարձավ նաև Հալեպի նահանգը: Առաջինը հարվածի տակ ընկավ Ուրֆայի հայությունը: Ռուսական գերագույն շտաբի փոխգնդապետ Տոմիլովի հաղորդումով, Ուրֆա քաղաքի հայերի կոտորածը սկսվել է 1895 թ. նոյեմբերի 6-ին ընդ որում առաջին օրը թալանվել է 300 տուն, սպանվել 125 մարդ: Այնուհետև հայերը 20 օր փակվել են իրենց թաղամասում: Դեկտեմբերի 16-ին ջարդարարները ներխուժում են հայկական թաղամաս, և վերսկսվում է կոտորածն ու կողոպուտը: Միայն 2000 հայեր հրկիզվել են եկեղեցում: Օտարերկրացի միսիոներները Տոմիլովին պատմել են, որ այդ բոլորը կատարվել է Կ. Պոլսից ստացված հրամանով, որ թուրքական զորքը և համիդիե հեծելազորը մասնակցություն են բերել հայերի կոտորածին: Վերջում Տոմիլովն ասում է, որ թուրքական իշխանությունները կրկնում էին պաշտոնական վերսիան՝ «ջարդերն առաջ են բերել հայ հեղափոխականները, որոնք աշխատում էին անկարգություններով

և նույնիսկ իրենց եղբայրակիցների արյան գնով քրիստոնյաներին ապստամբության դրդել, առաջ բերել եվրոպական տերությունների միջամտություն, որպեսզի այդ միջոցով ինքնավարություն ձեռք բերեն, անպատիժ կերպով շահագործեն և տնտեսապես սարկացնեն իրենց տեղի մահմեդականներին»[19]:

Ջարդարարներն առավել մոլեգնությամբ են գործել Հալեպի նահանգի ներքին շրջաններում: Օրինակ՝ Բիրեջիկում հայերից ոչ մի շունչ չի մնացել, նրանք ովքեր «չմորթոտվեցին կամ եփրատ գետը չնետվեցին, հարկադրված էին մահմեդականություն ընդունել»[20]:

1894—1896 թթ. զանգվածային կոտորածների ալիքը չի հասել մինչև Հալեպի նահանգի ծովեզրյա քաղաքներն ու գյուղերը, սակայն նրանց վիճակված էր 1909 թ. Ադանայի կոտորածների սարսափները:

XX դարի սկզբներին Թուրքիայում ուժեղացան ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Արաբական, հայկական, մակեդոնական ազգային կուսակցությունները, դաշնակցելով երիտթուրքական Իթթիհատ վե Թերաքքը կոմիտեի հետ, պայքարում էին սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնակալության դեմ:

1908 թ. հուլիսի 3-ին երիտթուրքերի կողմն անցած հեղափոխական ջոկատները Մակեդոնիայում պարզեցին ապստամբության դրոշը և, գրավելով Մոնաստիր քաղաքը, սպառնում էին Կ. Պոլսին: Համոզված լինելով, որ մայրաքաղաքում տեղակայված զորքերը նույնպես կանցնեն երիտթուրքերի կողմը, սուլթանը զիջումներ կատարեց: Հուլիսի 24-ին սահմանադրությունը վերականգնվեց, հայտարարվեց խոսքի, մամուլի, հավաքույթների ազատություն, ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները և այլն:

Իշխանությունը գրավելուց հետո երիտթուրքերը, որդեգրելով հետադիմական և շովինիստական շրջանների հետ համաձայնության գալու վարքագիծ, պահպանեցին ֆեոդալ կալվածատիրական հողատիրությունը, հրաժարվեցին աշխատավոր գյուղացիության օգտին հարկային ռեֆորմից: Արտաքին քաղաքականության բնագավառում նրանք հրաժարվեցին Թուրքիան օտարերկրյա միջամտություններից զերծ պահելու հանդիսավոր խոստումներից և ընդունեցին սուլթան Աբդուլ Համիդի գերմանական կողմնորոշումը: Երիտթուրքերը մոռացության տվեցին 1907 թ. Փարիզի կոնգրեսի որոշումները ոչ թուրք ազգերի քաղաքական ու մշակութային ինքնորոշման իրավունքի վերաբերյալ և, զինվելով

պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, ուժեղացրին ազգային ճնշումը և հալածանքը հատկապես հայ ժողովրդի նկատմամբ։

1909 թ. սկզբներին Ադանայում երիտթուրքական գործակալները, ձեռնամուխ լինելով հակահայկական կրքերի բորբոքմանը, լուրեր էին տարածում այն մասին, թե իբր հայերը ձգտում են «հայկական օջախ» հիմնել Կիլիկիայում։ Մարտի 31-ի գիշերը զինված խուժանը ներխուժեց Ադանայի հայկական թաղերը և, գործելով նահանգապետ Ջևադ բեյի և զորահրամանատար Ռեմզի փաշայի ցուցումներով, կոտորեց ոչ միայն դիմադրող այրերին, այլև կանանց ու երեխաներին։ Ապրիլի 2-ին թուրքական կառավարությունը դադարեցրեց կոտորածը՝ եվրոպական պետությունների ճնշման ներքո։ Ապրիլի 12-ին կոտորածները վերսկսվեցին և տևեցին մինչև ապրիլի 14-ը։ Բարբարոսությանը մասնակցում էին նաև թուրքական կանոնավոր բանակի այն զնդերը, որոնք Մակեդոնիայից բերվել էին Ադանա՝ հակաերիտթուրքական հնարավոր ելույթները ճնշելու պատրվակով։ Եվ սա այն դեպքում, երբ Մերսինի նավահանգստում խարսխած էին ութ եվրոպական ռազմանավեր։

Մոգական ազգանշանի նման՝ Ադանայի կոտորածները ոտքի հանեցին նաև Հալեպի նահանգի թուրքերին և մյուս մոլեռանդ մուսուլմաններին։ Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովևը հաղորդում էր. «Ադանայի մուսուլմանների օրինակին հետևեցին Թարսուսի մահմեդականները. ամսի (ապրիլի) 3-ին սկսվեցին հրդեհները, կողոպուտները և սպանությունները։ Այնուհետև անկարգությունները տարածվեցին նաև հարևան վայրերում, առանձնապես Ալեքսանդրետում, որի շրջակայքում այրվեցին մի շարք գյուղեր։ Կրքք-Խանում մորթոտվել են 50 հայ ընտանիք, իսկ Պայասում ազատ են արձակվել տեղի բանտում արգելափակված 500 բանտարկյալներ, որոնք համաձայնվել են մասնակցել վայրագություններին»։ Եվրոպական ռազմանավերի ժամանման շնորհիվ ծովամերձ շրջաններում անդորրությունը վերահաստատվել է, իսկ «ափից հեռու վայրերում» շարունակվել է սպանդը[21]։ Ապրիլի 14-ին կոտորածները «նոր թափով վերսկսվեցին» Կրքք-Խանի, Բեյլանի, Քեսապի, Անտիոքի, Մարաշի, Քիլիսի, Օսմանիեի և նրանց շրջակա գյուղերում։

Յուրաքանչյուր գյուղի, քաղաքի, շրջանի հայությունն յուրովի է ապրել 1909 թ. ապրիլի ողբերգությունը։ Հալեպ քաղաքում կոտորվել են 368 հայ, թալանվել են հայերի խանութները և տները[22]։ Հալեպի նահանգի ներքին շրջաններում ապրող հայերը կոտորվել են մինչև վերջին մարդը, իսկ ծովամերձ գյուղերի ու քաղաքների հայերը կամ նահանջել են հարավ, կամ էլ դիմադրել անհավասար թշնամուն։ Հատուկ հիշա-

տակութ յան արժանի է Դեորթ-Յուլի կամ Ջորք-Մարզվանի հայերի վարքը:

Մինչև ապրիլի 2-ը Ջորք-Մարզվանում խաղաղություն էր տիրում, սակայն հանկարծ ամեն ինչ փոխվեց...: Ջորք-Մարզվան լցվեցին ավելի քան 5000 հայեր, որոնք հարձակման էին ենթարկվել հարևան գյուղերում, իսկ նրանց հետքերով գալիս էր 20—30 հազարանոց թշնամին՝ թուրքական կանոնավոր բանակի միավորները և չուքուրովացի, մարաշցի, այնթապցի, քուրդ-դաղցի բաշիբոզուկները: Ջորք-մարզվանցիները որոշում են պաշտպանվել: Գյուղի շուրջը կառուցվում է 150 պաշտպանական հրակնատներ: Գործի է դրվում արագ սարքավորված զինարհեստանոցը, որտեղ, ինչպես ասված է «Ադանայի սև օրեր» գրքում, «ավելի քան 100 մարդ պատրաստում էին փամփուշտ, պատրոն և հատուկ թնդանոթներ՝ լարով փաթաթված հաստ գերաններով: Առաջին օրերի վախից հետո տղամարդկանց միացան նաև գերանդիներով և մանգաղներով զինված շուրջ 100 կանայք...»: Բաշիբոզուկների առաջին հարձակումները հաջողությամբ ետ մղելուց հետո, «հայերն արդեն պատրաստվում էին վերջին բախմանը: Պատրաստված էր 3000 նիզակ, որոնցով պետք է զինվեին միայն կանայք և անչափահասները...»: Վրճռված էր հարձակման անցնել և, պաշարման շղթան ճեղքելով, Ալեքսանդրետ հասնել: Պաշարման 31-րդ օրը Ջորք-Մարզվան է ժամանում հաշտարար հանձնաժողովը և բաշիբոզուկներին ստիպում է հետանալ[23]:

Քաղաքներում թուրքերը որպես կանոն դիմում էին կեղծիքի և խարդավանքի, որպեսզի մթագնեն հայերի զգոնությունը և նրանց զինաթափեն: Անտիոքում հայերը, հավատալով կայմակամի «պատվո խոսքին», թե զինաթափվելու դեպքում կերաշխավորվի նրանց անվտանգությունը, հանձնել են զենքերը, սակայն նրանք չափազանց թանկ վճարեցին այդ միամտության գինը: Տարբեր շրջաններից հավաքված ընչաքաղց բաշիբոզուկները, քաղաքի մուսուլմանները և թուրքական կանոնավոր բանակի զինվորները հարձակվեցին անզեն ու անպաշտպան հայաբնակ թաղի վրա: Ջարդարարները թալանեցին հայերի ամբողջ ունեցվածքը, իսկ դատարկված տներն ու խանութները հրո ճարակ դարձրին: Կոտորածից փրկվեցին միայն մի քանի հայեր:

Անտիոքի հեշտ ու արդյունավետ ասպատակությունից հետո բաշիբոզուկների խաժամուժը ուղղություն է վերցնում դեպի Քեսապ: Քեսապի հայերի ողբերգությանն ականատես լատին միսիոներ Սաբատտինոն հաղորդում է. «Ապրիլի 23-ին 30 հազար թուրքեր (որոնց մեջ բավական թվով չերքեզներ) այրելե ետքը Կայաճըք, Էսքի-Էորեն և Ջինարճըք գյու-

ղերը, երեք կողմերեն շրջապատեցին Քեսապ ավանը։ Քեսապցիները, որոնք զենքեր ունեին, անմիջապես գյուղեն դուրս դիրքեր բռնեցին, որպեսզի դանդաղեցնեն թուրքերու առաջխաղացքը առնվազն մի քանի ժամ, և կիներն ու մանուկները կարենան լեռները փախչիլ։ ... Երեք հարյուր կտրիճները, որոնք երեք կետերու վրա կպաշտպանեին Քեսապի մուտքը, հազիվ մեկ ժամ դիմադրելե հաքը (նահանջեցին). անոնց դիրքերը ճեղքված էին...»[24]։ Այնուամենայնիվ այդ թեկուզ կարճ դիմադրությունը Քեսապի բնակչությանը հնարավորություն է տվել ապաստանելու լեռները՝ ծովափնյա Կարադուրան գյուղի մերձակայքում։ Թուրքերը կոտորեցին Քեսապում մնացած ծերերին ու հիվանդներին, թալանեցին ու այրեցին տները, եկեղեցիները և դպրոցները։ Դրանով չավարտվեց սակայն քեսապցիների ոդիսականը։ Քեսապում թալանով զբաղված ջարդարարների հարձակումից վախենալով, աղեւոյալները շարժվում են դեպի հարավ՝ Լատակիա, բայց հենց առաջին թուրքական գյուղում թալանվելով, շեղվում են համեմատաբար ապահով Բասիտ գյուղը և Սաբատինոյի գլխավորությամբ ներկայացուցիչներ են ուղարկում Լատակիա՝ օգնություն խնդրելու։ Ֆրանսիական «Ժյուլ Ֆերի» և «Նիժեր» նավերը հասնում են Բասիտ և այնտեղ հավաքված շուրջ 6000 հայերին տեղափոխում Լատակիա[25]։

Քեսապի և նրա շրջակա գյուղերի թալանն ավարտելուց հետո բաշիբոզուկների բազմահազարանոց խաժամուժը թեքվում է դեպի հյուսիս՝ Մուսա լեռան շրջանը։ Խըդր-Բեկի հայ գյուղացիները, երեխաներին և կանանց, շրջանի ֆրանսիական վանքը ուղարկելով, պատրաստվում են ինքնապաշտպանության։ Սակայն նրանց օգնության հասնող անգլիական «Տրիումֆ» զրահանավը ջարդարարներին ստիպում է Անտիոք վերադառնալ։ Ջարդարարները թալանում, կոտորում և այրում էին վերադարձի ճանապարհին հանդիպած անպաշտպան գյուղերը։

Ադանայի եղեռնին զոհ են գնացել ավելի քան 30.000 հայեր, իսկ նյութական վնասը կազմել է շուրջ 20 միլիոն թուրքական լիրա։ Հրկիզվել են հայկական 24 եկեղեցի, 16 դպրոց, 232 տուն, 30 հյուրանոց, երկու գործարան, 1429 ամառանոց, 253 ագարակ, 523 խանութ, 23 ջրաղաց և այլ բազմաթիվ կառույցներ։ Այս բոլորը միայն Ադանայի վիլայեթի հայության կորուստներն են։ Ոչ ոք չի կազմել Հալեպի նահանգի հայության զոհերի և վնասների ցուցակը։ Աղետը միայն Մուսա լեռան շրջանի հայկական գյուղերում թողել է 340 այրի և 222 որբ[26]։

Կոտորածները դադարեցին 1909 թ. ապրիլի վերջերին և շուտով սկսվեց հանցագործությունների հետաքննությունը։ Երիտթուրքերը մա-

քիավելական հնարքներ էին գործադրում պատասխանատվությունից խուսափելու համար։ Նախ և առաջ թուրքական կառավարությունը ցուցադրական ձևով մասնակցեց աղետյալների օգնության գործին, որը կազմակերպել էին եվրոպական մի շարք բարեգործական ընկերություններ և, երկրորդ, ստեղծեց զինվորական հատուկ ատյաններ, որոնք իբր պետք է դատեին կոտորածների պատասխանատուներին։ Սակայն զինվորական ատյանները, հանցագործներին պատժելու փոխարեն, փորձում էին «ապացուցել», որ իբր հայերն ապստամբություն են բարձրացրել և իրենց դեմ գրգռել թուրք ազգաբնակչությանը։ Եվ «ապստամբության ղեկավարներից» 12 անմեղ հայեր մահվան դատապարտվեցին, 44-ն էլ՝ տարբեր ժամկետով արգելափակման։ Զինվորական ատյանը մահվան դատապարտեց նաև շուրջ 50 թուրքեր, սակայն այդ մահավճիռներից միայն քսանն ի կատար ածվեց։

Կեղծիքն այնքան բացահայտ էր, որ զինվորական ատյանի եզրակացությունները չարժանացան անգամ թուրքական պառլամենտի հավանության։ Ստեղծվեց պառլամենտական քննիչ հանձնաժողով (Յուսուֆ Քեմալ, Հակոբ Պապիկյան և ուրիշներ), որը պետք է լիներ աղետի վայրերում և ստուգեր փաստերը։ Գործադիր իշխանությունն իր հերթին նշանակեց մի ուրիշ հանձնաժողով (Էսաթ բեյ, Հարություն Մոստիչյան և ուրիշներ), որը պետք է գործեր առաջինից անկախ։ Այդ հանձնաժողովները հաստատեցին հայերի անմեղությունը և կառավարության ուշադրությունը հրավիրեցին կոտորածի ղեկավարների վրա։ Սակայն ոչ մի միջոց չձեռնարկվեց հանցագործների դեմ, իսկ պառլամենտական հանձնաժողովի անդամ Հակոբ Պապիկյանը, որը կառավարական կլիկի ցուցմունքների համաձայն զեկուցագիր չէր կազմել, վախճանվեց խորհրդավոր պայմաններում։ Կոտորածների հարցը փակված համարվեց 1909 թ. հուլիսի 31-ին, երբ թուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ հայերն օսմանյան պետության օրինապահ հպատակներն են և պատասխանատվություն չեն կրում կոտորածների համար[27]։

Ակնբախ իրողություն է, որ արաբներն այնքան էլ փութկոտությամբ չէին կատարում երիտթուրքերի հակահայ հրամանները։ Հակառակ դեպքում, կոտորածներին կուլ կգնային հարավային և կենտրոնական Սիրիայի հայերը։ Ջբացառելով հանդերձ մոլեռանդ մուսուլման արաբների մասնակցությունը կոտորածներին, միաժամանակ պետք է նշել, որ դա խիստ մասնակի բնույթ էր կրում և ամենևին չվերածվեց

հայ-արաբական թշնամանքի։ Հիշատակության արժանի հակահայ դեպքեր չգրանցվեցին ոչ Դամասկոսում, ոչ Համայում, ոչ էլ Հոմսում։ 1909 թ. հայկական կոտորածների՝ Ադանայից դեպի հարավ մեկնող ալիքները գնալով թուլանում էին և չհասան անգամ մինչև Լաոդիկիա։ Դա հիմնականում բացատրվում է նրանով, որ թուրքական ազգաբնակչությունը զգալի թվաքանակ չէր կազմում Ադանայից դեպի հարավ ընկած վայրերում։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ արաբական մամուլի մի շարք օրգաններ ցուցաբերեցին Ադանայի կոտորածների պատճառները քննարկելիս։ Դրանք կոտորածների պատասխանատու էին համարում երիտթուրքական կառավարությանը։ Հալեպի «Ալ-Թագաոում» արաբական լրագիրը նշել է. «Մահացու մեղք մ՝ է կարծել, թե Ադանայի դեպքը պատահական, առանց կանխամտածության գործված է։ ...Հայերն իրենց ափին մեջ ունենալով սանձը վաճառականության, կրթության և արհեստի՝ անբաղդատելի կերպով զարգացած և հառաջադեմ վիճակ ունեին ղիրենք շրջապատող տարրերուն, մանավանդ թուրքերուն մեջ, սակայն միշտ ջլատված էին թուրքերուն կողմն և ընկճված տեղական կառավարության հարվածներուն տակ...։ Հայերը բնականաբար ամենեն ավելի խանդավառության նշաններ ցույց տվին, ուրախությամբ գրկեցին Սահմանադրությունը, քանզի... կարծեցին թե այլևս թոթափած են ղիրենք դարերե ի վեր տառապեցնող բռնության լուծը...։ Սահմանադրությենեն առաջ հայերեն կողոպտած դրամներուն, հափշտակած կալվածներուն համն իր քմաց այնքան անուշ եկած էր, որ հիմա այդ կեղեքումները գործադրելու առիթ չունենալով», թուրքական կառավարությունը «բորբոքած բարկությամբ կդիտեր անոնց շարժուձևերին» և վախենում էր որ ձեռքից բաց կթողնի «այն կաթնատու կովը, զոր միշտ ուզածին պես կկթեր»[28]։

Հետագայում ևս արաբական առաջադեմ մամուլը և հրապարակախոսներն արդարամտություն են հանդես բերել հայ ժողովրդի նկատմամբ և կորովի ելույթներով նրանց հաջողվել է հնարավոր կոտորածների առաջն առնել։

1911 թ. իտալո-թուրքական պատերազմի ժամանակ, երբ մուսուլմանական հետադեմ շրջանները պահանջում էին ջիհատ՝ կրոնական պատերազմ հայտարարել քրիստոնյաների դեմ, բազմաթիվ արաբ մտավորականներ հակազդեցին դրան, լավ իմանալով, որ ջիհատը պատրվակ էր ծառայելու հայեր կոտորելու համար։ Այդ գործիչների թվում պատվավոր տեղ է գրավում Վելի էդ-Յեկենը։ Հալեպում լույս տեսած իր հոդ-

վածներից մեկում Յեկենը գրում էր. «Մեր իսլամ հրապարակագիրները ազգը կառաջնորդեն կորստյան ճամբան...: Իտալիո հետ մեր ունեցած դժբախտությունը պատճառ եղավ, որ մեր նախկին մոլեռանդ հիմարությունները կրկնենք, որոնք մեզ ամոթ ու նախատինք բերելե զատ օգտակարություն մը չունին բնավ: ...Ճիհատի՝ սրբազան պատերազմի կմղեն ժողովուրդը, ոչ թե Իտալիո դեմ ճակատելու, այլ քրիստոնեության դեմ ելլելու. ժողովուրդին աջակցությունը կպահանջեն ոչ թե թշնամի նավատորմը վանելու, այլ նոխազը հալածելու, որպես թե պատերազմողները մեզի հայրենակից քրիստոնյաներն եղած ըլլային...: Քրիստոնեությունն ոչ Իտալիո սեփականությունն է, և ոչ ալ բոլոր քրիստոնյաներն անոր դինվորներն են»: Իր հոդվածի վերջում Յեկենն ասում է. «Ձեր քրիստոնյա եղբայրներուն սրտերը հանդարտեցնելու ջանացեք անկեղծ ու բարի վերաբերմունքով. մի արյունեք այն սրտերը, որոնց մեջ դուք տեղ մը ունենալու եք սիրվելու համար»[29]:

1912—1913 թթ. Սիրիայի արաբական մամուլը հանդես էր գալիս Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի կենսագործման օգտին: Հաղորդելով, որ Օսմանյան կայսրությունը որոշել է բարենորոգումներ կատարել հայկական նահանգներում, Հալեպի «Ալ-Թաքատում» լրագիրը գրում էր. «Չկարծվի որ մասնավոր շնորհք մ' է կառավարության կատարելիք այդ բարենորոգումները, հայոց արդար իրավունքն է, որ այնքան ատենն ի վեր կպահանջվեր, հաստատամիտ և քաջակորով դիմումներով...: Հայ ազգը իր գովելի ձեռներեցությամբ, համբերատարությամբ և խոհեմությամբ կրցավ ամեն տեսակ արկածի ու պատահարներու կուրծք տալ, դիմանալ և մինչև իսկ սուլթան Համիդի բանտերուն, աքսորանքին ու ջարդերուն հանդեպ արհամարհանքով վերաբերվելով: Հայը իր վերոհիշյալ բարեմասնություններով հաջողեցավ իր ազգային միությունը պահպանել և այդ միությամբ ալ հաջողեցավ աղատության մեծ գործին մեջ ակնառու գործունեություն ցույց տալ: Ուստի այդ ազգը արժանի է ջատագովանքի: Իբիվ թե մեր երկրի մյուս տարրերն ալ օրինակվելին, և հետևեին հայ նկարագրին ու բարեմասնություններուն»[30]:

Այսպիսով, Սիրիայի հայությունը համարյա միևնույն չափով քաջ ծանոթ էր ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես և Կիլիկիայի հայության դառն ճակատագիրը: Սիրիայի հայերը (բացառությամբ կաթոլիկների և բողոքականների) զրկված լինելով եվրոպական պետությունների պաշտպանությունից, բարբարոսաբար կեղեքվում և կողոպտվում էին, ենթարկվում ազգային ու սոցիալական դաժան ճնշման: Այդ քաղաքականության նպատակների իրականացման գործիք էին հա-

միդիե գնդերը։ Շարունակելով Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ քաղաքականությունը, երիտթուրքերը Սիրիայում էլ հայերի դեմ անպատիժ հանցագործություններ էին մղում ոչ միայն թուրքերին, այլև մոլեռանդ և ընչաքաղց մուսուլմանական տարրերին (չերքեզներ, չեչեններ և այլն)։ 1895—1896 և 1909 թթ. զանգվածային կոտորածները սպառնում էին բնաջնջել արյունահեղ ասպատակություններից թուլացած և տնտեսապես քայքայված սիրիահայ դարավոր գաղթօջախները։ Զորք-Մարշվանի, Քեսապի և այլ վայրերի հայերի հերոսական դիմադրությունը և արաբների հայանպաստ դիրքավորումը զգալիորեն նպաստեցին նրանց գոյության պահպանմանը։

Սակայն երիտթուրքերն իրենց վերջին խոսքը պետք է ասեին վերահաս համաշխարհային պատերազմի տարիներին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սիրիայի հայությունն ապրեց իր պատմության հավանաբար խոշորագույն ողբերգությունը: Հայաստանի ժողովրդի նման՝ նրա մեծ մասը ոչնչացվեց Միջագետքի և Սիրիայի անապատներում: Մուսա լեռան հայերը միայն չենթարկվեցին աքսորի հրամանին և, լեռ բարձրանալով, կազմակերպեցին հերոսական դիմադրություն, որն առանձնահատուկ տեղ է գրավում արևմտահայության՝ այդ տարիներին մղած ինքնապաշտպանական մարտերի շարքում: Բացի այդ, Սիրիայի հայերը կորիզը դարձան Արևելյան (Հայկական) լեգեոնի, որը մասնակցեց Պաղեստինի ճակատամարտին, Սիրիայի ազատագրությանը Թուրքիայի լծից:

1914 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան մտավ համաշխարհային պատերազմի մեջ: Սիրիայում և Պաղեստինում զինվորական և քաղաքական ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց թուրքական 4-րդ բանակի ընդհանուր հրամանատար Ջեմալ փաշայի ձեռքում: Նրա գլխավոր խնդիրներից մեկն էր՝ դիմագրավել արաբական զինված ապստամբությունը: 1916 թ. Դամասկոսում և Բեյրութում կախաղան հանվեցին շուրջ 800 գործիչներ և տասնյակ հազարավոր արաբներ քշվեցին Սիրիական անապատ, որտեղ ի կատար էր ածվել հայերի ցեղասպանությունը:

Թուրքական պաշտոնական պատմագրությունը, նենգափոխելով պատմական փաստերը, համառ կերպով պնդում է, որ չի եղել ամբողջ աշխարհին հայտնի ցեղասպանությունը: Թուրք պատմաբան Էսատ Ուրասը գրում է. «Իրականության հետ ոչ մի կապ չունեն և սոսկ առասպելներ են բազմաթիվ հեղինակների գրածները այն մասին, թե իբր թուրքերը սպանել են վեց հարյուր հազար, ութ հարյուր հազար և նույն-

իսկ մեկ միլիոն հայեր, ընդհակառակը, հայերն են սպանել ավելի մեծ թվով մուսուլմաններ...»[1]: Միաժամանակ փորձ է արվում այդ պատմական կեղծ դրույթը դարձնել թուրքական լայն հասարակայնության սեփականությունը: Վերջերս Անկարայի հեռուստատեսությունից հայտարարում էին. «1915-ին հայերու դեմ ցեղասպանություն չէ կատարված, այլ պարտադրաբար ընդունված տեղահանության օրենքի գործադրության ընթացքին, պատերազմական վիճակի պայմաններուն հետևանքով մաս մը հայեր իրենց կյանքը կորսնցուցած են: Ասոնցմե դուրս, կարգ մը ուրիշ հայերու մեռած ըլլալու պարագան ալ ցեղասպանություն չէ, պարզապես թուրքերու և հայերու փոխադարձաբար ղիրար մեռցուցած ըլլալու հրևույթ մը կրնանք նկատել»[2]:

XX դարի առաջին ցեղասպանությունը կանխամտածված ոճիր էր, որը ծրագրվեց, կազմակերպվեց և փուլ առ փուլ իրականացվեց երիտթուրքական կառավարության կողմից:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին թուրքական նացիոնալիզմը, միաձուլվելով պանթուրքիզմի համար մղվող պայքարի հետ, երիտթուրքերի հայացքը ուղղեց դեպի Անդրկովկաս, որը հանկարծ թվացել էր թուրքական կենսական տարածության նախադուռը: Պանթուրքական նվաճումների ճանապարհին սակայն խոչընդոտ էր հայ ժողովուրդը[3]:

Օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման հրեշավոր ծրագրի իրականացմանը: 1915 թ. սկզբներին իթթիհատ վե թերաքքը կուսակցության ղեկավար մարմնի գաղտնի նիստում գլխավոր ղեկուցող Նազըմն ընդգծել էր «Պետք է հայ ազգը արմատախիլ ըլլա, մեր հողին վրա (հայ) անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի: Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետության միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի. այս անգամ գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի ըլլա, հայերեն անհատ մը իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»[4]:

Թուրքիան տակավին պատերազմի մեջ չէր մտել, երբ երիտթուրքական կառավարությունը սկսեց ցեղասպանության նախապատրաստությունը: 1914 թ. օգոստոսին՝ ընդհանուր զինակոչի հրամանի հրապարակումից մի քանի օր հետո թուրքական ոստիկանությանը զուգահեռ

ստեղծվեց Թեշքիլաթ-մահսուսեն՝ հատուկ կազմակերպությունը, որը պետք է հանդիսանար ցեղասպանության մեքենայի գլխավոր մասը: Նրա կենտրոնը գտնվում էր Կ. Պոլսում, ներքին գործերի մինիստրությունում, որտեղից էլ հայ ժողովրդի բնաջնջման իսկական ուղեղը՝ Թալաաթն արձակում էր հրամանները: Հատուկ կազմակերպության դրոշի ներքո հավաքագրվեցին քրեական հանցագործներ, հատկապես մահապարտներ, որոնք այդ նպատակով դուրս էին բերվել կայսրության տարբեր բանտերից[5]: Ստեղծվեց նաև տեղահանության հանձնաժողովը և լքյալ գույքերի վարչությունը: Առաջինն իրականացնելու էր հայերի աքսորը, իսկ երկրորդը՝ նրանց ունեցվածքի բռնագրավումն ու վաճառքը: Յուրաքանչյուր նահանգում, գավառում այդ կազմակերպություններն ունեին մասնաճյուղեր, որոնք ենթարկվում էին համապատասխան վալիին՝ նահանգապետին:

Երիտթուրքական կառավարությունը միաժամանակ միջոցներ ձեռնարկեց հայերին զրկելու դիմադրության յուրաքանչյուր հնարավորությունից: Աքսորվելու օրը նրանք պետք է զարթնեին առանց ղեկավարի, առանց ղեկի: 1915 թ. հունվարի վերջերին հրաման արձակվեց թուրքական բանակի հայ զինվորներին զինաթափելու և, փոքր խմբերով, աշխատանքային վաշտերում (ինշաատ թաբուրի) ընդգրկելու մասին: Քիչ անց, պետական հայ ծառայողները հեռացվեցին աշխատանքից, և հայերից հետ վերցվեցին ներքին անցագրերը՝ թեզքերները: Առաջին հարվածը, իհարկե ոչ պատահականորեն, հասցվեց Զեյթունի և Վանի հայությանը:

Զեյթունը և Սասունը, Ֆրանց Վերֆելի պատկերավոր արտահայտությամբ, երկու սլաք էին մեխված «թուրքական նացիոնալիզմի կենդանի մարմնի մեջ»: Այն դեպքում, երբ Սասունը թուլացել էր համիդյան կոտորածների հետևանքով, Զեյթունը պահպանել էր մարտունակությունը: Պետք էր, նախ և առաջ, կործանել զեյթունցիներին: Մարտի 24-ին 500 թուրքական զինվորներ Մարաշից տեղափոխվեցին Զեյթուն՝ մի շարք ժանդարմների սպանության պատասխանատուներին ձերբակալելու պատրվակով: Մի քանի օր անց, հիսուն ամենահայտնի հայ ընտանիքների ավագները դավադրաբար ձերբակալվեցին: Ապրիլի 8-ին վաթսուն ընտանիք բռնադատվեց հեռանալ հարազատ վայրերից[6]: Հետագա օրերին թուրքական իշխանությունները կանանց և երեխաներին տղամարդկանցից բաժանելով աքսորեցին տարբեր ուղղություններով: Մի ամիս հետո ոչ մի հայ չէր մնացել Զեյթունում և շրջակա գյուղերում:

Վանում իրադարձությունները զարգացան բոլորովին այլ կերպ:

Վանեցիների ինքնապաշտպանությունը և հատկապես ռուսական զորքերի առաջխաղացումը փրկեցին ողջ նահանգի հայությանը, սակայն միաժամանակ պատրվակ դարձան հայ մտավորականության ձերբակալման և ոչնչացման համար: Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը միայն Կ. Պոլսում ձերբակալվեցին 235 անվանի հայ գործիչներ և, քշվելով Անատոլիայի խորքերը, գազանաբար սպանվեցին:

1915 թ. ապրիլին սկսվեց արևելյան նահանգների՝ Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Սվազի և Դիարբեքրի, իսկ հուլիսի վերջերին՝ արևմտյան նահանգների հայության աքսորը: Հերբերտ Գիբոնսը գրում է. «Օսմանյան կառավարությունը սիստեմատիկորեն կենսագործում էր մի պլան, որն ավելի դժոխային էր, քան ամենասարսափելի ջարդը: Ամբողջ Փոքրը Ասիայով մեկ հրամաններ էին ուղարկվում հայ ազգաբնակչությունը Միջագետք աքսորելու մասին: Հրամանները միանգամայն որոշակի էին ու մանրամասն: Բացառություն չէր արվում ոչ հիվանդներին, ոչ ծերերին, ոչ էլ հղի կանանց»[7]:

Հալեպի, Բեյրութի և Սիրիայի նահանգների հայերին աքսորելու հրաման ստացվել էր 1915 թ. սկզբներին, սակայն տարբեր պատճառներով նրա գործադրությունը ձգձգվեց, իսկ հետագայում էլ բոլոր վայրերում միաժամանակ չգործադրվեց: Բեյրութ քաղաքի փոքրաթիվ հայությունն առհասարակ չաքսորվեց շնորհիվ այն կապերի, որ հայերը ստեղծել էին մի շարք պետական բարձրաստիճան պաշտոնատարների հետ: Սակայն ոստիկանությունը խուզարկել է նրանց բնակարանները, բռնագրավել առևտրականների ունեցվածքը, կործանել ս. Նշան-վանքը[8]: Բեյրութի նահանգի հյուսիսային շրջանների հայությունը սակայն լիովին ճաշակեց աքսորի դառնությունները: Լաոդիկիայի հայերի աքսորին ականատես Մուշեղ վարդապետը գրել է. «1915 նոյեմբերի 3-ին, առավոտ կանուխեն Թուրքիո կառավարության կողմե հոգեւոնս շղթայակապվեցավ փոլիսներով ու ժանդարմներով, հարյուրապետը պաշտոնապես հաղորդեց, որ 24 ժամ միայն պայմանաժամ տրված է և այնուհետև պիտի գաղթենք Հալեպ, նույնպես հոգեւոնես դուրս բնակվող բոլոր հայերը...: Նոյեմբերի 5-ին մեզ հոգեւոնեն հանեցին...»[9]: Հայերի ամբողջ շարժուն և անշարժ ունեցվածքը բռնագրավվել է: .

Մինչև 1915 թ. հուլիսի վերջերը Հալեպի նահանգում աքսորի հրամանը չգործադրվեց նահանգապետ Ջելալ բեյի՝ հայերի նկատմամբ ունեցած բարյացակամության շնորհիվ: Բացառություն է կազմել Դեորթ-Յոլի հայությունը, որը մեղադրվում էր թշնամուն օգնելու մեջ: Իբր

դևորթյուղցիները լույսի նշաններով հնարավորություն էին տվել դաշնակից ռազմանավերին ռմբակոծելու Ալեքսանդրետի նավահանգիստը, Բաղդատի երկաթգծի կայարանը և մի շարք այլ օբյեկտներ։ Այդ պատրվակով ապրիլին երեք հայեր կախաղան հանվեցին։ Մի քանի օր հետո 16—70 տարեկան տղամարդկանց քշեցին Հասան-Բեյլի։ Մայիսին երեք-չորս հարյուր հայեր աքսորվել էն Կոնիա։ Երկու շաբաթ անց Դևորթ-Յոլ քաղաքը դատարկված էր հայերից[10]։

Հալեպի նահանգում աքսորի առաջին զոհերից եղավ նաև Այնթապ քաղաքի հայությունը։ Այնթապցիներն ականատես էին եղել Ադանայի, Սվազի, Մալաթիայի, Մարդինի և այլ նահանգների քաղաքներից ու գյուղերից դեպի հարավ քշվող հայերի ողբերգությանը։ 1915 թ. հուլիսի 30-ին նրանց հերթն էր։ Օգոստոսի 19-ին Այնթապը դատարկվել էր հայերից[11]։ Հալեպ և ավելի հեռուները քշվեց նաև Բեյլանի, Քիլիսի, Կաթմայի կամ Կոտմոյի, Քեսապի և այլ վայրերի հայությունը։ Ջեբել-մուսացիները, մերժելով աքսորի հրամանը, լեռ բարձրացան և, ինչպես կնշվի համապատասխան տեղում, հերոսական դիմադրությամբ պաշտպանեցին իրենց կյանքն ու պատիվը։

Հալեպ քաղաքն ու նրա շրջանները քարավանների գլխավոր հանգրվանն էին՝ անապատ քշվելուց առաջ։ 1915 թ. մայիսին այնտեղ հասան ղեյթունցիների առաջին քարավանները։ Այնուհետև ավելի քան երկու ամիս շարունակվեց Կիլիկիայի լեռնաշխարհի հայության հոսանքը։ Օգոստոսին Հալեպ մտան արևելյան նահանգների հայության բեկորները։ 1915—1916 թթ. ավելի քան 350.000 հայեր հանգրվանել էին Հալեպում և այստեղ միաժամանակ մնալուց հետո քշվել անապատ։

Մինչև Հալեպ հասնելը, աքսորականներն անցնում էին դանթեական դժոխքի միջով։ Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիգապը պատմում է. «Եթե աքսորականների քարավաններն աքսորի ընկերքին կազմում էին երկու-երեք հազար տղամարդ, կանայք և երեխաներ, ապա հարավ հասնելիս մնում էին հազիվ երկու-երեք հարյուր մարդ։ Տղամարդկանց սպանում էին ճանապարհին, իսկ կանանց և երեխաներին ... առևանգում էին զինվորներն ու սպաները։ Մնացածները մահանում էին քաղցից ու ծարավից։ Գետերի մոտից անցնելիս նրանց թույլ չէր տրվում նույնիսկ ջուր խմել...»[12]։ Նրանք ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, սվինահարվում էին կամ գնդակահարվում։ Ողջ մնացածները Հալեպ էին հասնում «կմախքի նման» նիհարած, համարյա մերկ կամ ցնցոտիներով ծածկված և հաճախ խելակորույս վիճա-

կում: Շատերի մոտ խախտված էին ներքին օրգանների ֆունկցիաները. նրանք «գազանի նման» հարձակվում էին ուտելիքի վրա, սակայն «մեկ կամ երկու պատառ կուլ տալուց հետո դեն էին շպրտում գդալները»[13]: Լողանալիս նրանց գլխի մազերը մի անգամից թափվում էին:

Հալեպի խաներում, փողոցներում կուտակված էին ամենատարբեր գավառներից քշված բազմահազար հայեր, որոնք գալարվում էին քաղցի և հիվանդությունների (տիֆ, դիզենտերիա և այլն) ճիրաններում: Մահը օրական հնձում էր ավելի քան հարյուր մարդկանց կյանքը: Դոկտ. Նիգոսյան ավերակ խաներում տեսել է քայքայված դիակների կույտեր, փողոցներում հիվանդ ու հյուծված մարդկանց, որոնց վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Նա ասում է. «Մեր դպրոցի շուրջը կար այդպիսի չորս խան, որտեղ ապրում էին 700—800 թշվառներ: ... Ամեն օր մի սայլ տանում էր 8—10 փայտացած դիակներ, առանց դագաղի կամ որևէ ծածկոցի»: Պատահում էր, որ «մեռածների հետ գերեզմանատուն էին տանում նաև կենդանի մարդկանց, այդպիսիներին թողնում էին մի կողմ, մինչև չէին համոզվում, որ մահը կատարել է իր գործը»[14]:

Հարավային Սիրիայում քարավանների գլխավոր հանգրվանն էին Դամասկոս քաղաքը և նրա արվարձանները: 1915 թ. օգոստոսից մինչև դեկտեմբեր այստեղ հասել են շուրջ 130.000 հայեր: Առաջին քարավանը Դամասկոս է մտել օգոստոսի 12-ին, այնուհետև շաբաթական ժամանում էր երկու կամ երեք քարավան, յուրաքանչյուրը՝ մի քանի հարյուր կամ հազար, երբեմն էլ մինչև երկու հազար շունչ: Միաժամանակ մի քանի քարավան դուրս էր գալիս Դամասկոսից՝ «անհայտ ուղղությամբ»: Մինչև նրանց անապատ քշվելը, նոր հասած քարավանները սպասում էին Կադեմում, բաց երկնքի տակ[15]:

Դամասկոսից և Հալեպից դուրս բերվող քարավանները ուղարկվում էին փոքր աքսորակայաններ, որոնք որպես կանոն գտնվում էին Սիրիական անապատին ավելի ու ավելի մոտ վայրերում՝ Մեսքենա, Դեյր Էզ-Զոր, Ռաս ուլ-Այն, Ինթիլլի, Ռակկա, Ջարաբլուս, որտեղից այլևս վերադարձ չկար: Ականատեսներից մեկը վկայում է, որ Հալեպի և Դեյր Էզ-Զորի միջև մի անապատային վայրում, այրող ավազի վրա դանդաղ մեռնում էին քաղցից ու ծարավից հյուծված բազմահազար աքսորական հայեր:

1915 թ. վերջերին աքսորն արդեն ավարտված էր, արևմտահայությանը պոկել էին հարազատ հողից: Մնացորդացը՝ առնվազն 500.000 շունչ համակենտրոնացված էր Հալեպի, Դամասկոսի և Եփրատ գետի

միջև ընկած երկրամասում[16]: Մնում էր ոչնչացնել այդ անօգնական մարդկանց:

1915 թ. գարնանը, Թալաաթի ներկայացուցիչ Միդհատ Շուկրին Կ. Պոլսից ժամանեց Հալեպ, որպեսզի կազմակերպի հայերի տեղափոխումը դեպի անապատ, սակայն նրա առաքելությունը հաջողությամբ չպսակվեց՝ նահանգապետ Ջելալի և ոստիկանապետ Ֆիկրիի դիմադրության հետևանքով: Թալաաթի հրամանով Ջելալը պաշտոնանկ արվեց, սակայն նրա տեղը նշանակված Բեկիր Սամին ևս չբավարարեց իթթիհատին և պաշտոնը դիջեց Բիթլիսի նախկին նահանգապետ Մուստաֆա Աբդուլ Հալիկին, որն անվերապահ կողմնակից էր հայերի բնաջնջման ծրագրի իրականացմանը: Այսունարբու նահանգապետին ջերմեռանդ աջակցություն էին ցույց տալիս աքսորի վարչության փոխտնօրեն Աբդուլ Ահադը և նրա օգնական Այուբ Սաբրին[17]:

Այդ պաշտոնատարների անունով ներքին գործերի մինիստր Թալաաթից ստացված հեռագրերը վկայում են արևմտահայության բեկորների ողբերգության մասին: 1915 թ. սեպտեմբերի 9-ի թվակիր հեռագիր-հրամանում ասված է. «Հալեպից հեռացրեք բոլորին, ինչպես կանանց, այնպես էլ երեխաներին, ով ուզում է լինի, նույնիսկ նրանց, ովքեր ի վիճակի չեն շարժվելու...: Մեզ անհայտ պատճառներով բացառություն է արվել հայտնի մարդկանց, նրանց փոխանակ աքսորավայր ուղարկելու թողել են Հալեպում»[18]: Ակնարկում է ականավոր գրող Գրիգոր Զոհրապին և հասարակական գործիչ Վարդգես Սերենգուլյանին, որոնք այդ ժամանակ Հալեպում էին գտնվում՝ ոստիկանության հսկողության ներքո:

Թուրքական բարձրաստիճան պաշտոնատարների մեջ կային այնպիսիները, որոնք կուրորեն չէին կատարում կառավարության հրամանները: Սեպտեմբերի 15 թվակիր հեռագրով, Թալաաթը նրանց զգուշացնում էր. «Նախապես հաղորդված էր, որ կառավարությունը ջեմիեթի հրամանով որոշեց Թուրքիայի բոլոր հայերին բնաջնջել: Նրանք, ովքեր հակադրվում են այս հրամանին և որոշմանը չեն կարող մասնակցել երկրի կառավարմանը: Առանց խնայելու կանանց, երեխաներին, անկարներին և առանց ականջ դնելու խղճի ձայնին, ինչքան էլ դաժան լինեն բնաջնջման միջոցները, պետք է վերջ տալ նրանց գոյությանը»[19]: Այն դեպքում, երբ որոշ պաշտոնատարներ, խղճի խայթ զգալով կամ պատասխանատվությունից վախենալով, ձգձգում էին հայերի բնաջնջման հրամանների կատարումը, Թալաաթն իսկույն նրանց հավաստիաց-

նում էր, որ ոչ ոք դատական հետապնդման չի ենթարկվելու կառավարության նպատակների իրականացմանը ծառայելու համար[20]:

Հալեպի նահանգապետարանում Կ. Պոլսից ստացվող համարյա բոլոր նախարարական հեռագրերն ավարտվում էին հետևյալ խոսքերով. «քարավաններդ միացրեք և ուղարկեք»: Դա նշանակում էր՝ «ուղարկեք անապատ»: Թուրքական կառավարությունը պահանջում էր արագ և ազդու գործողություններ, բնաջնջման «անուղղակի միջոցների փոխարեն գործադրել ուղղակի միջոցներ», այսինքն կոտորել: Այդ գործի պատասխանատու նշանակվեց Էնվեր փաշայի ազգականներից Վանի նախկին նահանգապետ Ջևդեդ բեյը:

Հալեպի խաներում, փողոցներում տվայտող կիսամերկ, հիվանդ ու հյուծված բեկորներին բռնադատում էին հետիոտն շարժվել դեպի Դեյր էզ-Զոր, Մեսքենա՝ աքսորի վերջին հանդրվանը: Նաիմ բեյն ասում է, որ Հալեպում ոստիկանները «դժբախտ հայերին կապում և քշում էին» անապատները: Քշում էին անխտիր բոլորին, չէին խնայում անգամ այն ընտանիքներին, որոնց տղամարդիկ ծառայում էին թուրքական բանակի աշխատանքային վաշտերում:

Ըստ Նաիմ բեյի, թուրքական կառավարությունը կազմակերպել է երեք զանգվածային կոտորած՝ մեկը Ռաս ուլ-Այնում, մյուս երկուսը՝ Ինթիլլիում և Դեյր էզ-Զորում:

Անկասկած, հայերի առավել խոշոր զանգվածներ կոտորվել են Դեյր էզ-Զորում: 1916 թ. օգոստոսին անապատը կուլ է տվել այն քարավանները, որոնք առանց Հալեպ մտնելու ուղղակի առաքվել են Դամասկոս և Դեյր էզ-Զոր: Ըստ Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջակսոնի, այդ քարավանները հաշվում էին շուրջ 300.000 շունչ: Դեյր էզ-Զորի մութեսարիֆ Զեքի բեյը, չունենալով բավարար թվով սուհակներ, որոշել է նրանց կոտորել արհեստական սովի միջոցով: Երբ այլևս ոչինչ չի մնացել ուտելու, մարդիկ կերել են «մարդոց դիակները»[21]:

1916 թ. մարտի 17-ին արյունարբու գազան Ջևդեդի հրամանով, Քերիմ Ռեֆին և չեթե Արսլանը ձեռնարկում են Ռաս ուլ-Այն աքսորված ավելի քան 50.000 հայերի «մաքրագործմանը»: Նաիմ բեյը նշել է. «Ջարդը... կատարվեց քաղաքից ոչ-հեռու, հիմնականում Ջուրջիր գետի ափին՝ բաղդադ տանող ճանապարհի վրա: Հայերին տանում էին խմբերով և սպանում ամենադաժան կերպով: Մի քանիսին հաջողվեց փախչել Ռաս ուլ-Այն, և նրանք պատմեցին այդ տանջանքների մասին: Կարելի է պատկերացնել այն սարսափը, որ համակեց այդ անօգնական մարդկանց, և ինչպես էին նրանք ցնցվում, երբ նրանց մոտենում էին...

որպեսզի քշեն սպանդանոց։ Չէին խղճում ոչ հիվանդներին, ոչ երեխաներին, ոչ ծերերին»[22]։ Հուլիս ամսին Ռաս ուլ-Այնում մնացել էր մի քանի հայ ընտանիք։

Ինթիլլիում կոտորվել են շուրջ 40—50.000 հայեր։ Զինվորական իշխանությունները, նրանց բաժանելով անապատ քշվող քարավաններից, օգտագործում էին որպես սևագործ բանվոր Ամանոսի թունելի կառուցման աշխատանքներում։ Ոմանց հաջողվել է կոտորածից խուսափել և ճանապարհը շարունակել մինչև Ռաս ուլ-Այն, որտեղ էլ գազանաբար սպանվել են չեթեննների կողմից։

Պետք է նշել, որ աշխատանքային վաշտերում ընդգրկված հայերի ոչնչացման հարցը հեշտ չի լուծվել։ Զինվորականությունը պաշտպանում էր նրանց, որպեսզի չզրկվի ռազմական կառույցների և ճանապարհների շինարարության վրա բանողների ձրի աշխատուժից։ Աքսորի ընդհանուր վարչությունը սակայն բողոքել է Թալաաթին, որը և արգելել է զինվորականությանը՝ միջամտել հայերին անապատ տեղափոխելու գործին։ 1916 թ. փետրվարին, երբ արդեն աշխատանքային վաշտերը հիմնականում ոչնչացված էին և աշխատող ձեռքերի սուր պակաս էր զգացվում, այդ արգելքը վերացվեց։ Այժմ Թալաաթը հրամայում էր. «Մի աքսորեք հայ բանվորներին մինչև չավարտեք երկաթուղու շինարարությունը։ Բայց քանի որ նրանց չի թույլատրվում ապրել իրենց ընտանիքների հետ, նրանց ժամանակավորապես տեղավորեք Հալեպի շրջակայքում։ Մնացածներին՝ իրենց կանանց և երեխաների հետ անմիջապես ուղարկեք...» անապատ[23]։

Բազմաթիվ հրամաններ վերաբերում են հայ որբերին։ 1915 սեպտեմբեր 26 թվակիր հեռագրով, Թալաաթն արգելեց որբանոց հաստատել Հալեպում, սակայն շուրջ երկու ամիս հետո ի փոփոխումն այդ հրամանի կարգադրեց. «Հավաքեցեք և պատսպարեցեք միայն փոքրահասակ որբերին, որոնք չեն կարող հիշել իրենց ծնողների կրած սարսափները։ Մյուսներին ուղարկեք քարավանների հետ»[24]։ 1916 թ. հունվարի 23-ին թուրքական կառավարությունը հրամայեց ոչնչացնել բոլոր հայ որբերին՝ անկախ նրանց տարիքից։ Բացառություն կազմեց միայն Հալեպի Ալթունյան որբանոցը, շնորհիվ այն կապերի, որ նրա հիմնադիրը ուներ Ջեմալ փաշայի հետ։

1916 թ. վերջերին ցեղասպանությունը գործնականում ավարտված էր։ Թալաաթը կարող էր պարծենալ ասելով՝ «Երեք ամսվա ընթացքում ես ավելին արեցի հայկական հարցը լուծելու համար, քան Աբդյուլ Համիդը՝ երեսուն տարվա ընթացքում»։

1919 թ. փետրվարից մինչև հուլիս Կ. Պոլսի ռազմական ատյանում տեղի ունեցավ երիտթուրքական հանցագործների դատավարությունը։ Հանդես գալով որպես վկա, Թուրքիայի հանրապետության ապագա հիմնադիրը՝ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն ասել է. «Մեր հայրենակիցները գործեցին չլսված ոճիրներ, գործադրեցին բռնության հնարավոր բոլոր ձևերը, կազմակերպեցին աքսոր և ջարդ, ողջ-ողջ այրեցին ծծկեր երեխաներ..., պղծեցին կանանց և աղջիկների՝ ձեռները և ոտքերը կապված նրանց ծնողների աչքի առաջ, աղջիկներին խլեցին իրենց հորից ու մորից, հափշտակեցին նրանց շարժուն և անշարժ գույքը, դժբախտ մարդկանց քշեցին Միջագետք...։ Նրանք հազարավոր անմեղ մարդկանց լցրին նավերը և խեղդամահ արեցին ծովում...։ Նրանք հայերին դրեցին այնպիսի անտանելի պայմաններում որպիսին առաջ ոչ մի ժողովուրդ չէր տեսել իր ողջ պատմության ընթացքում»[25]։

Ուշագրավ է, որ Կ. Պոլսի ռազմական ատյանն եղրակացրել է. «Սկսած հայերի աքսորի առաջին րոպեից, տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում գործված ոճիրներն առանձին և տեղական բնույթի արարքներ չէին։ Դրանք կանխամտածված էին և իրագործվեցին կենտրոնական մի օրգանի հրամանով»[26]։

2. ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Մինչև աքսորի հրամանի հասնելը, Մուսա լեռան (Մուսա դաղ) հայաբնակ գյուղերում բավական անհանգիստ վիճակ էր տիրում։ 1915 թ. մայիսի 9-ին զինվորական իշխանությունները խուզարկել էին տները, մինչև անգամ եկեղեցիները և դպրոցները՝ զենք գտնելու ապարդյուն հույսով։ Բացի այդ, թուրքական բանակից փախստական հայ երիտասարդները «զարհուրելի բաներ» էին պատմում զեյթունցիների և առհասարակ տեղահանված հայերի ողբերգության մասին։ Սակայն ոչ բոլորն էին հավատում, որ իրենց ևս սպասում են բռնագաղթի արհավիրքները։ Հուլիսի 28-ին, երբ հայտնի դարձավ Քեսապի և հարևան այլ վայրերի հայերին աքսորելու հրամանի մասին, Մուսա դաղի հայ գյուղացիները միայն այդ ժամանակ պարզ տեսան, որ աքսորի վտանգն արդեն կանգնած է իրենց դռների առաջ։

Հուլիսի 29-ին Յողուն Օլուքում Աբրահամ Տեր Գալուստյանի տանը հրավիրվեց հայկական գյուղերի ներկայացուցիչների խորհրդակցություն, որին Յողուն-Օլուքից մասնակցում էին Տիգրան Անդրեասյանը, Աբրահամ քհն. Տեր Գալուստյանը, Ճապրա Գազանճյանը, Մովսես Տեր

Գալուստյանը, Պետրոս Տեր Գալուստյանը, Էլիաս Մասմանյանը, Պետրոս Հելկեզյանը, Հակոբ Ադամյանը և Պողոս Գապայանը. Պիթիասից՝ Մովսես Ռեննճիլյանը, Գևորգ Շերպեթճյանը և Պողոս Ցրենկյանը. Հաջի-Հապիպլիից՝ Վարդան քհն. Վարդերեսյանը, Գրիգոր Մարգարյանը, Խաչեր Մարտիրյանը և Հովսեփ Տուտագլյանը. Խըդր-Բեկից՝ Տիգրան Գարաճյանը, Մելքոն Գույումճյանը, և Եսայի Իպրահիմյանը. Վագըֆից՝ Թովմաս Այնթապլյանը և Հակոբ Գարակեոզյանը, քապուտիեցիները չեն մասնակցել խորհրդակցությանը:

Խորհրդակցության օրակարգում կար մի գլխավոր հարց՝ դիմադրե՞լ, թե՞ ենթարկվել աքսորի հրամանին: Ներկաները երկար ու բուռն վիճել են, բայց որոշակի եզրակացության չեն հանգել: Նրանց մեծամասնությունը, առաջ քաշելով զենքի, պարենամթերքի խիստ սակավությունը և այլ փաստարկներ, պնդել է «համակերպվել կառավարության կարգադրություններուն»: Դիմադրության օգտին են արտահայտվել Տիգրան Անդրեասյանը, Ճապրա Գազանճյանը, Տիգրան Գարաճյանը, Թովմաս Այնթապլյանը, Հակոբ Գարակեոզյանը և ուրիշներ: Նրանք ասում էին՝ մեր զենքերը նախնական են, մեր պարենամթերքն անբավարար է, բայց մենք ունենք «ամուր լեռներ», և մեր ժողովուրդը վինված է անհուն զրկանքներ ու դժվարություններ հաղթահարելու ունակությամբ. աքսորի ճանապարհին մեզ սպասում է «միայն անպատվություն և չարչարանք, ամենեն դժնդակ և անարգալից մահ», մինչդեռ կենաց ու մահու կռվում կարող ենք հաղթել, իսկ պարտվելու դեպքում կմեռնենք «զեն ի ձեռին, պատվավոր մահով»[1]:

Ուշագրավ է, որ դիմադրության հակառակորդներից ոմանք գաղթի կամ աքսորի հրամանը պարզամտորեն դնահատում էին որպես պատժիչ միջոցառում այն հայերի դեմ, որոնք օրինապահ չէին եղել կամ էլ գործել էին թուրքական իշխանությունների դեմ: Նրանք ասում էին. «Մենք ինչ ըրած ենք, որ կառավարությունը մեզ տեղահան ընե: Ամեն ձևի տուրքերը (հարկերը) վճարած ենք, մեզմե ինչ որ պահանջված է տված ենք: Խուզարկություններ կատարեցին և ոչ մեկ հրացան գտան քովերնիս: Դիտողության արժանի միակ կետը զինվորական փախստականներն են: Սակայն այդ բանին մեջ մենք ինչո՞վ մեղավոր ենք: Նույնիսկ թուրքերը բանակեն կփախչին»[2]: Ուստի նրանք եզրակացնում էին, որ թուրքերը պատճառ չունեն մուսալեռցիների հետ վարվելու այնպես, ինչպես վարվեցին, օրինակ, զեյթունցիների հետ: Այդպես տրամաբանելով, դիմադրության հակառակորդները հնարավոր էին համարում

«Անտիոքի թուրք աղաների» միջնորդությամբ «կարևոր գումար մը» խոստանալով, Մուսա դաղի հայկական գյուղերը ջերծ պահել «տարագրության պատուհասեն»։ Եվ, իրոք, խորհրդակցության հաջորդ օրն իսկ Անտիոք է ուղարկվել մի պատվիրակություն, որն իսկույն վերադարձել է, քանի որ տեղի հայկական համայնքի ղեկավարներն արդեն ձերբակալված էին[3]։

Դիմադրության կողմնակիցներին հուզող գլխավոր հարցերից մեկը քեսապցիների մասնակցության ապահովումն էր ինքնապաշտպանությանը։ Տիգրան Անդրեասյանը հաղորդում է. «Թղթակցություն կատարվեցավ քեսապցիներուն հետ, որով կհորդորենք ղիրենք ապստամբելու մեզի պես, այս կամ այն ձևի տակ»։ Թվում էր, որ քեսապցիները կհամաձայնվեն համատեղ ուժերով դիմադրել թշնամուն, սակայն նրանց պատասխան-նամակում այլ բան էր ասված, մուսադաղցիներին խորհուրդ էր տրվում «ենթարկվել թուրքական իշխանություններին»[4]։ Հետագայում պարզվեց, որ այդ նամակը կեղծ էր։ Եգիպտոսի թեմակալ Թորգոմ Գուշակյանը նշել է. «Մենք տեսել ենք այդ նամակը և պատճառ ունենք հավատալու, որ այն սարքված էր թուրքական իշխանությունների կողմից»[5]։

Հուլիսի 30-ին[6] ժանդարմները Մուսա դաղի հայերին հանձնեցին Անտիոքի կայմակամի հուլիսի 16 թվակիր «հայտարարությունը» կամ աքսորի հրամանը, որով յոթ օր ժամանակ էր տրվում նրանց հարազատ վայրերից հեռանալու համար։

Թուրքական աստիճանավորը փորձում էր մի անգամ ևս կրկնել այն խարդախ խաղը, որով խաբեցին և տեղահանեցին Զեյթունի, Հաճընի, Քեսապի և այլ վայրերի հայ բնակիչներին։ Նա «հայրենակիցներին» հորդորում էր հնազանդել կառավարության հրամանին, խոստանալով կյանքի ու գույքի ապահովություն։ Հայերի գաղթը կամ «տեղափոխությունը» լինելու էր «հասարակ գաղթեցումի գործողություն», որի ընթացքում թուրքական ժանդարմները պետք է ապահովեին նրանց «խաղաղությունն ու հանգստությունը», նրանց պաշտպանեին «ամեն տեսակի կեղեքումի դեմ»։ Հայերը պետք է տեղափոխվեին «կառավարության կողմից որոշված տեղերը», որտեղ նրանց սպասում էին «հանգստավետ» կյանքի պայմաններ։ Ինչ վերաբերում է գաղթողների անշարժ գույքին, ապա դրանք պետք է վաճառվեին և գոյացած գումարը պետք է «որպես ավանդ» ի պահ դրվեր պետական դանձարկղում՝ «իրենց տերերի անունով» և այլն։

Սակայն աքսորը որպես հաճելի ուղևորություն ներկայացնող այդ «հայտարարության» հետ միաժամանակ թուրքական բանակից նոր հայ դասալիքներ էին հասել Մուսա լեռ, որոնք սահմռկեցուցիչ մանրամասնություններ էին հաղորդում գաղթի ճանապարհին գործադրվող վայրագությունների մասին: Սրախողխող եղած տղամարդկանց, առևանգված կանանց և վաճառքի հանված աղջիկների ու երեխաների մասին ականատեսի վկայությունները կայծակի արագությամբ մի գյուղից մյուս գյուղն անցնելով, մուսադաղցիներին բերում էին այն համոզման, որ կայմակամի խոստումները կեղծ էն:

Հուլիսի 31-ի երեկոյան մուսադաղցիները սկսեցին լեռ բարձրանալ: Լեռ բարձրանալու և այնտեղ դիմադրելու որոշումը կայացնելու գործում որոշիչ նշանակություն ունեցավ խորհրդակցությունից օրեր առաջ լեռ բարձրացած թուրքական բանակի հայ դասալիքների վճռականությունը: Նրանք ասում էին. «Եթե նույնիսկ ամբողջ ժողովուրդը գաղթե, մենք լեռը պիտի մնանք: Եվ եթե Մուսա Լեռը նեղ գա մեզի, Կարմիր Լեռ կանցնինք: Կնախընտրենք կռվելով մեռնիլ լեռներուն վրա, քան թե թշնամիին հանձնվիլ»[7]:

Մինչև օգոստոսի 7-ը, երբ թուրքական զորքը փակեց Ճանապարհը, Մուսա դաղի հայության ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 4200 շունչ արդեն լեռ էր բարձրացել[8]: Հավանաբար բոլորը լեռ կբարձրանային, եթե չլինեին դիմադրության հակառակորդ ազդեցիկ աղանները, որոնք, թեև հուսահատ էին վերադարձել Անտիոքից, բայց համագյուղացիներին հորդորում էին հնազանդել կայմակամի հրամանին: Այդ գործում առանձնապես համառություն են ցուցաբերել բողոքական քարոզիչներ՝ Մովսես Ռևենճիլյանը և Հարություն Նոխուտյանը: Ավելի քան 2000 մուսադաղցիներ, որոնք մերժել էին լեռ բարձրանալ, աքսորվեցին անապատ...[9]:

Թուրքական իշխանությունները անմիջապես զբաղվեցին լեռ բարձրացողների հարցով, սակայն գերադասեցին նրանց ետ դարձնել ոչ թե բռնի, այլ խաղաղ միջոցներով: Օգոստոսի 1-ին, երբ ժողովուրդը տակավին գտնվում էր լեռան կողերին՝ Թաթարալանկ կոչված վայրում, Սվեդիայի նահիճի մյուդիր Խալիդը նրանց ուղարկեց մի նամակ, որով նախ հիշեցնում էր կառավարության հրամաններին չենթարկվողների ծանր պատասխանատվությունը, ապա, պատմելով գաղթողների «հանգիստ ու ապահով» ուղևորության մասին, պահանջում էր իսկույն վերադառնալ գյուղերը: Մի քանի օր հետո թուրքերը էլի մյուդիրի ստորագրությամբ մի այլ նամակ են ուղարկում, ուղղված Աբրահամ քհն. Տեր

Գալուստյանին և Մելքոն Գույումճյանին, ուր ասված է. «Ցավով լսել ենք, թե Ձեր երկուքը ևս ժողովուրդին հետ լեռ բարձրացած է: Այսպիսի ընթացք մը ինչպես հաշտեցնել ձեր պատվույն և դիրքին հետ: Բարեբախտաբար տգետ չեք և այժմ կրնաք երևակայել թե ինչ պիտի ըլլա ձեր վախճանը...: Հետևաբար կվստահիմ, որ ձեր ամբողջ ժողովուրդին հետ դաք անմիջապես հանձնվիք և գաղթելով կատարեք կառավարության հրամանը: Հակառակ պարագային ձեզի կմնա պատասխանատվությունը այդտեղ թափվելիք արյան...»[10]: Օգոստոսի 5-ին թուրքերը ուղարկում են երրորդ նամակը՝ չորս հայերից (Վարդան քհն. Վարդերեսյան, Խաչեր Մարտիրյան, Գևորգ Շերպեթճյան և Հարություն Նոխուտյան) բաղկացած մի պատվիրակության միջոցով: Նախորդներից համարյա չտարբերվող այդ նամակն էլ թողնվել է անպատասխան:

Մինչ թուրքերը համառորեն փորձում էին մուսալեռցիներին վերադարձնել, նրանք կազմակերպում էին իրենց ինքնապաշտպանությունը:

Մուսա դաղը կազմում է Ամանոսի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան վերջին զանգվածը, ըրաղեցնում է մոտավորապես 125 կմ^2 տարածություն, ծովից հազիվ հինգ հարյուր մետր բարձրության վրա, սակայն նման է անառիկ բերդի: Նրա արևմտյան սահմանը գահավիժ իջնում է Միջերկրական ծով, Արևելքում Սև գետն է՝ Կարա չայը, հյուսիսում՝ Ջանաքլըբի խոր ձորը, որը Մուսա և Կարմիր լեռները բաժանում է իրարից: Թուրքերը միայն հարավից կարող էին մեծ ուժերով գրոհել:

Ժողովուրդը հիմնականում տեղավորվեց իրարից ոչ հեռու գտնվող Գուզճըղազ, Դամլաճըք, Գըզըլճա և Գափլան-Դուզաղ կոչված վայրերում:

Բնակավայր ընտրելիս առաջին հերթին նկատի է առնվել տեղանքի հնարավորությունները՝ հուսալի ինքնապաշտպանություն կազմակերպելու գործում: Բավական խիտ անտառները և այլ հանգամանքներ որոշակի առավելություն էին տալիս հայերին, սակայն առկա միայն երեք աղքատիկ աղբյուրների ջրերը պետք է բավարարեին նրանց կարիքները:

Մուսա դաղի կատարը վերածվեց յուրօրինակ շինհրապարակի, որտեղ բոլորը՝ այր թե կին, երեխա թե ծեր աշխատում էին, բոլոր կացիններն ու մուրճերը, բոլոր բահերն ու բրիչները գործում էին: Մի տեղ հյուղեր («պատսպարաններ») էին կառուցում, խրամատներ փորում, պատնեշներ կանգնեցնում, մի այլ տեղ հաշվառման էին ենթարկում կռվելու ընդունակ տղամարդկանց, ամուգում առկա զենքերի վիճակը,

ընտրում ինքնապաշտպանության մարմիններ։ Բոլորին համակել էր պատվով ապրելու կամ պատվով մեռնելու վճռականությունը։

Թուրքերի երկրորդ հարձակումը ցույց տվեց, որ զինված ուժերի՝ ըստ բնակավայրերի մասնատումը խիստ դժվարացնում, նույնիսկ խոցելի է դարձնում ինքնապաշտպանությունը։ Ուստի մի օր հետո ժողովրդի մեծամասնությունը տեղափոխվեց Դամլաճըք, որը թեև որպես ռազմական դիրք զիջում էր Գուզճըղազին, սակայն միակ հնարավոր ելուստն էր դեպի ծով։ Այնուամենայնիվ բավական թվով ընտանիքներ մնացին Գուզճըղազում և Գափլան-Գուզազում, սակայն բոլոր կռվողներն էլ օգտվում էին Դամլաճըքի զորանոցի ծառայություններից։

Ստեղծվեց միասնական ինքնապաշտպանության կոմիտե («վարչական մարմին»), որի ընտրությունը կատարվեց ժողովրդական հավաքույթում՝ «գաղտնի քվեարկությամբ»[11]։ Նրա կազմի մեջ էին՝ Տիգրան Անդրեասյանը (նախագահ), Միքայել Կեկենճյանը (ատենադպիր կամ քարտուղար), Հեթում Ֆիլյանը, Սահակ Անտաքյանը, Խաչեր Մարտիրյանը, Հովհան Իսքենդերյանը, Իսքենդեր Քիլիմյանը, Ճապրա Գազանճյանը, Պողոս Գապանյանը, Հովհաննես Գոպուրյանը, Միքրոն Գույումճյանը, Գրիգոր Թովմասյանը, Եսայի Իպրահիմյանը, Սիմոն Շեմմասյանը և Թովմաս Աղայանը։

Ինչպես ճակատում, այնպես էլ թիկունքում գերագույն իշխանությունը գտնվում էր ինքնապաշտպանության կոմիտեի ձեռքում։ Նրան էր պատկանում զինված ուժերը ղեկավարելու, նրանց և ժողովրդի պարենավորումը կարգավորելու, անկարգներին և պարտազանցներին կարգի հրավիրելու, դասալիքներին պատժելու և, վերջապես, այն ամենը տնօրինելու իրավունքը, որ կապված էր ինքնապաշտպանության հետ։ Լեռան վրա ամեն ինչ ենթարկվում էր ինքնապաշտպանության կոմիտեին։

Ինքնապաշտպանության պահանջների համապատասխան հինգ հարյուրից քիչ ավելի մարտիկները բաժանվեցին 46 տասնյակների, որոնց յուրաքանչյուրի գլուխ կանգնած էր տասնապետը։ Նրանք զինված էին նախնական, դարն ապրած զենքերով։ Զինանոցում կար ընդամենը 95 գրա, 11 մաուզեր, 2 մարտին և 5—600 որսորդական հասարակ հրացան, որոնցից միայն 15-ը գործում էր փամփուշտով, իսկ մնացածը լցվում էր փողի բերանից։ Խիստ սուղ էր նաև փամփուշտների քանակը։ Յուրաքանչյուր գրա ուներ 30—120, յուրաքանչյուր մաուզեր՝ 100—200 փամփուշտ։ Վառոդը կբավարարեր շուրջ 30.000 փամփուշտ վերստին լցնելու համար։ Այդքան քիչ և այդքան հասարակ զենքերով զինված

մուսալեռցիները կանգնած էին արդիական զենքերով պինված թուրքական զորքերի դեմ։

Թշնամու գլխավոր հարձակումը սպասվում էր հարավից, բայց հայերը պետք է փակեին լեռան այն բոլոր անցքերը, որտեղից թշնամին կարող էր թեկուզ փոքր ուժերով ներս սողոսկել։ Սակայն նրանց ուժերը բավարար չէին։ Ռազմական առավել կարևոր նշանակություն ունեցող դիրքում կանգնած էին հազիվ երկու տասնյակ մարտիկներ, որոնք, սակայն, ի վիճակի չէին դիմադրավելու խոշոր հարձակումները և, ինչպես պատահեց թշնամու առաջին գրոհի ժամանակ, «արագ-արագ կնահանջեն»[12]։ Մինչև նահանջի լուրը կենարոն հասներ և այստեղից օգնական ուժեր առաքվեին, թշնամին կարող էր առանց լուրջ դիմադրության հանդիպելու առաջանալ և ընդհուպ մոտենալ բնակավայրերին։

Ինքնապաշտպանության կոմիտեն անհապաղ միջոցներ ձեռնարկեց հարավային դիրքերն ամրապնդելու նպատակով։ Առավել խիզախ մարտիկներից առանձնացվեց երեք տասնյակ, որոնք պետք է հերթապահեին Թաթարալանկում։ Ինքնապաշտպանության ամբողջ սիստեմի ողնաշարը կազմող այդ՝ արագ գործողության միավորները զինված էին լավագույն զենքերով ու գործում էին զինվորական փորձ ունեցող և արիության համբավ աչքի ընկած Եսայի Յաղուպյանի, Պետրոս Դմլաքյանի, Պետրոս Տուտագլյանի գլխավորությամբ։ Այդ էշելոնին առաջադրանք էր տրված օգնության հասնել այն դիրքերին, որոնք կենթարկվեին թշնամու հարձակմանը։

Հայերի զենքի և ռազմամթերքի կարիքները մասամբ բավարարում էին Դամլաճըքի ղշլայում կամ զորանոցում հաստատված արհեստանոցները, որոնք օր ու գիշեր վարպետ Ներսես Գազանճյանի տնօրինության ներքո վերանորոգում էին զենքերը, պատրաստում վառոդ, կապարից ձուլում գնդակ, լցնում դատարկված փամփուշտները։ Անձնվեր էին աշխատում Լևոն և Միքայել Գազանճյանները, Վանես և Պողոս Եղիայանները։

Ինքնապաշտպանության կոմիտեն ստեղծեց առաքման հանդամ մի մարմին (Մովսես Տեր Գալուստյան՝ առաքման տնօրեն, Սերոբ Շերպեթճյան և Տիգրան Գազանճյան), որի գլխավոր պարտականությունն էր կապի պահպանումը՝ ճակատի և թիկունքի միջև։ Նրա վերահսկողության ներքո գործում էին տաս-տասներկու տարեկան պատանիներից կազմված մի քանի խմբեր («Թելեֆոնի տղաք»), որոնք հերթապահելով միմյանցից 10—15 րոպե հեռավորության վրա, խրամատներից ստացված «գրավոր լուրը» փոխանցելով իրար հասցնում էին զորակայան։

Դրանով չէր սահմանափակվում սակայն անչափահասների ծառայությունը։ Նրանք հավաքում և զորանոց էին փոխադրում դատարկված փամփուշտները, պայթած արկերի բեկորները, օգնում զինագործ վարպետներին[13]։

Կռվի անընդունակ տարեցները և զենք չունեցողները ընդգրկված էին այսպես կոչված գործավորական վաշտում։ Նրանք խրամատներ էին փորում, գլխավոր դիրքերի առաջ կանգնած ծառերը կտրում, թշնամու ճանապարհը փակող պատնեշներ կառուցում և այլն։ Գործավորների վաշտի վերակացուներն էին Հակոբ Քեշիշյանը, Ճապրա Գաղանճյանը, Պետրոս Մարտիրյանը և Պետրոս Քյուրդյանը։

Ինքնապաշտպանությանը մասնակցում էին նաև կանայք։ Նրանք ոչ միայն ալյուր էին մաղում, հաց թխում, ջուր կուտակում, ուտելիք հասցընում կռվողներին, այլև երբեմն էլ զենքը ձեռին մասնակցում էին մարտերին։

Թիկունքում կարգ ու կանոնը պահպանող ոստիկանի պաշտոնում հերթով նշանակվում էին մարտիկները։

Նշանակվեցին նաև մունետիկներ (Առաքել Կեպեշյան և Օհան Փեննեյան), որոնք բարձր ձայնով հայտարարում էին ինքնապաշտպանության կոմիտեի հրամանները, կարգադրությունները և այլն։

Հատուկ հրամանով ոչնչացվեցին բոլոր շները, որպեսզի թշնամուն չհաջողվեր նրանց հաչոցով հայտնաբերել հայերի բնակավայրերը։

Օգոստոսի 8-ին[14] Մուսա դաղի կատարին հնչեց առաջին կռվի շեփորը։ Իսկույն ընդհատելով ինքնապաշտպանության կազմակերպմանը նվիրված անդրանիկ ժողովը, մարտիկները Թաթարալանկից ուղղակի ճակատ մեկնեցին և ընդունեցին մարտը Յոլ-Աղզի կոչված վայրում։ Վեց ժամ տևող համառ կռիվներից հետո թշնամին նահանջեց՝ տանելով հինգ կամ վեց դիակ և բազմաթիվ վիրավորներ։ Հայերը մարդկային կորուստ չունեցան։

Օգոստոսի 10-ին թշնամու թնդանոթները խոովեցին Մուսա դաղի վաղ առավոտյան անդորրը։ Թուրքերը («2000-ի չափ կանոնավոր զինվորներ») շարժվեցին դեպի Պաքաճըք և, ճեղքելով հայերի դիրքերը, հասան Օմարին Գետայն՝ լեռան խորքերը։ Մահու և կենաց այդ կռիվը տևեց մինչև արևամուտ՝ տեղատարափ անձրևի տակ։ Պաքաճըքի դիրքերից նահանջած մարտիկները և նրանց օգնության հասած թարմ ուժերը, հակագրոհի անցնելով, թշնամուն դուրս քշեցին Մուսա դաղի սահմաններից։

Այդ կռվում իրենց հերոսությամբ աչքի են ընկել բազմաթիվ մարտիկներ, որոնցից հատուկ հիշատակության արժանի են «ըլլեռն» կամ առյուծ Հակոբ Գարակեոզյանը և անվրեպ կրակող Պետրոս Գալուստյանը։ Թշնամին ունեցել է շուրջ հարյուր սպանված և մի քանի հարյուր վիրավոր, իսկ հայերը՝ չորս սպանված և երեք վիրավոր։ Սակայն թուրքերը սպանել կամ գերի են վերցրել շուրջ վաթսուն անղեն հայեր, որոնք ապաստան էին գտել գլխավոր բնակավայրերից հեռու քարայրներում։

Այդ անհաջողությունից հետո Թշնամին արդեն պատրաստվում էր վճռական ճակատամարտի։ Օգոստոսի 13-ին Պիթիասից վերադարձած հետախույզները և նրանց բերած «լեզուն» հաղորդեցին, որ հայկական գյուղերում կուտակված են թուրքական կանոնավոր բանակի շուրջ երեք հազար զինվորներ, ինչպես նաև տարբեր շրջաններից եկած երեք-չորս հազար ընչաքաղց բաշիբոզուկներ, որոնք, ավարտելով հայերի լքած տների կողոպուտը, ակնդետ սպասում էին թուրքական բանակի հրամանատար Ֆախրի փաշայի ազդանշանին՝ գրոհելու լեռն ի վեր։

Օգոստոսի 15-ին, կիրակի օրը, արևածագին Թշնամին հայտնվեց չորս տարբեր կողմերից՝ Գըզըլճայից, Սովուք-Օլուքից, Դամլաճըքից և Յոլ-Աղըզից։ Կռիվ սկսվեց միաժամանակ չորս ճակատներում։ Սակայն շուտով պարզվեց, որ թուրքական հրամանատարի նպատակն էր հայերի ուժերը մասնատել և գլխավոր հարվածը հասցնել Յոլ-Աղըզից։

Յոլ-Աղըզում թուրքական զորքերը բաժանվեցին երկու մասի, մեկը ուղղվեց դեպի անտառի խորքերը, իսկ մյուսը և նրա հետքերով առաջացող բաշիբոզուկների խառնախումբը՝ Թաթարալանկ, որտեղ տեղի ունեցավ առաջին ընդհարումը։ Մինչև օգնական ուժերի հասնելը, Թաթարալանկի դիրքերում կանգնած փոքրաթիվ մարտիկներն արիությամբ դիմադրեցին Թշնամու գրոհներին։ Չնայած երկու թնդանոթների և հազարավոր հրացանների փողերից տեղացող կրակին, նրանք կանգնած մնացին իրենց դիրքերում։

Մութն արդեն ընկել էր, երբ թուրքերն անցան ընդհանուր հարձակման։ Թաթարալանկում գերակշիռ ուժերի ճնշման ներքո հայ մարտիկները մի քանի հարյուր մետր նահանջեցին, սակայն նոր դիրքեր գրավելով, վերստին փակեցին Թշնամու ճանապարհը։ Անտառում դարանակալած թուրքական զորքերը, որոնք երկու դավաճանների առաջնորդությամբ հայտնվեցին թիկունքում՝ Դամլաճըքի մոտերը, ետ մղվեցին հերոսական կռվով։ Ետ մղվեցին նաև արևմուտքից լեռ բարձրացող թուրքական զորքերը, որոնց առաջադրանքն էր գրավել Սովուք-Օլուքի ակը՝ հայերին ջրից զրկելու նպատակով։ Այդ կռվում Գըզըլճայն, Շեյխ Օր-

դուի և մյուս ծովահայաց դիրքերի մարտիկներին զգալի օգնություն ցույց տվին պատանիներն ու կանայք:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 16-ի արևածագին թուրքերը բոլոր կողմերից վերսկսեցին գրոհները: Մինչև կեսօր, ինչպես նշել է Տ. Անդրեասյանը «թշնամին շատ քիչ տեղ կրցավ շահիլ», սակայն նրա ճնշումը գընալով ավելանում էր, և հայերը ստիպվեցին առաջավոր որոշ դիրքեր լքել: Կեսօրից հետո դրությունը ճգնաժամային էր: Արդարև, թուրքական զորքերը, անցնելով Մաղարեն խանդեի ձորը, բարձրացել էին Սինջարեն Դայր կոչված հարթավայրը, որտեղից հազիվ մեկ կիլոմետր հեռու էր գտնվում հայերի գլխավոր բնակավայրը՝ Դամլաճըքը: Խուճապի մատնված ժողովրդի մի մասը, ամեն ինչ լքելով, բարձրանում է վեր, ավելի ու ավելի վեր, և կանգ է առնում այնտեղ, որտեղ Մուսա դաղը զահավեժ թափվում է ծով...: Խուճապը, սակայն երկար չի տևել: Արագ գործողության տանյակների մարտիկները, օգնության հասնելով, համարձակորեն շրջանցում են թուրքական զորքերը և դրանց վերցնում պաշարման կիսաշրջան օղակի մեջ: Երկու կրակի միջև մնացած թշնամին, բազմաթիվ դիակներ թողնելով, նահանջել է: Երեկոյան մունետիկները ծանուցում էին, որ թշնամին դուրս է մղված Մուսա դաղից:

Օգոստոսի 15—16-ի մարտերում հերոսական խիզախությամբ աչքի են ընկել Եսայի Յաղուպյանը, Պետրոս Դըմլաքյանը, Մարտիրոս Ճանսըղյանը, Ճապրա Խայոյանը (զոհված), Վաննես Գոճենյանը (զոհված), Հակոբ Խեչանյանը (վիրավոր), Սարգիս Շաննաքյանը (զոհված), Մարտիրոս Հապեշյանը, Մովսես Յարամազյանը, Պետրոս Գալուստյանը, Մանուկ Գըլըճյանը, Պողոս Գապայանը, Պետրոս Արամաչիսյանը, Պետրոս Տուտագլյանը, Կարապետ Սագայանը և բազմաթիվ ուրիշներ:

Այդ մարտերում հայերը ունեցել են 14 սպանված և 6 վիրավոր: Անհամեմատ ավելի խոշոր են եղել թշնամու կորուստները՝ 600—700 սպանված և վիրավոր: Բացի այդ, հապճեպ նահանջի դիմող թշնամին թողել էր մեծ քանակությամբ ուտեստեղեն, դեղորայք և ումբ մատուզեր հրացան՝ 3000 փամփուշտներով:

Այնուհետև թուրքերը, պատնեշներ կառուցելով Մուսա դաղի հարավային սահմանների վրա, անցնում են դիրքային կռիվների: Օգոստոսի 25-ին, արշալույսին, հրետանային բավական ուժեղ ռմբակոծությունից հետո, թուրքական զորքերը գրոհել են Պաքաճըքի դիրքերի վրա, սակայն ետ են մղվել: Օգոստոսի 29-ին Կերմեր Շերի, իսկ 31-ին վերստին

Պաքաճըքի դիրքերն ենթարկվում են թշնամու հարձակմանը: Դրանից հետո մինչև սեպտեմբերի 8-ը խաղաղություն է տիրում:

Սակայն հայերի օգտին չէր աշխատում ժամանակը: Այժմ թշնամին, պատրաստվելով վերջին ճակատամարտին, ոչ միայն թարմ ուժեր և հզոր ռազմական միջոցներ էր կուտակում, այլև փորձում էր կոտրել հայերի դիմադրական ոգին, նրանց դնելով սովամահության սպառնալիքի տակ: Տիգրան Անդրեասյանը գրել է. «(Թշնամին) գիտեր արդեն, որ մեր ժողովուրդը շատ քիչ պաշար ուներ, ուստի խոհեմություն սեպեց մեզ պաշարելով ստիպել, որ սովամահ կորչինք և կամ անձնատուր ըլլանք»[15]:

Պարզ էր, որ «ափ մը ժողովուրդը չէր կարող մինչև վերջ դիմադրել», կամ թշնամին, կամ էլ սովը նրան հասցնելու էր «սոսկալի վախճանի մը»[16]: Ուստի մուսադաղցիների փրկության միակ հույսը ծովից էր՝ «բարեկամ զրահավորի մը այցելությունը» Մուսա դաղի ջրերը: Պատրաստվել և ծովահայաց ամենաբարձր կետն են ուղարկվել երկու լայնածավալ սպիտակ դրոշակ՝ մեկի վրա կարմիր խաչ, մյուսի վրա օգնություն հայցող հետևյալ անգլերեն մակագրությունը՝ «Christians in distress: rescue» [17]: Դրանց մոտ հերթապահում էին երեք նշանավոր լողորդներ (Մովսես Գրրըքյան, Պապուշյան և Զըլտրյան): Եթե «բարեկամ զրահավոր մը», նկատելով դրոշակները, մոտենար ափին, հերթապահներից մեկը «ծով պիտի նետվեր» մուսալեռցիների «աղերսը» հասցնելու նրան:

Դա մի ընդարձակ գրություն էր, ուղղված անգլիական, ֆրանսիական, իտալական, ռուսական և ամերիկյան «բոլոր ծովակալներուն, նավապետներուն և իշխանություններուն»: Ներկայացնելով տեղահանված հայերի ողբերգությունը և թուրքական կառավարության՝ ողջ հայությունը բնաջնջելու ծրագիրը, մուսադաղցիները գրում էին. «... մենք հոս քաշվեցանք մեր կյանքն ու պատիվը փրկելու համար, քանզի որոշ գիտեինք, թե գաղթել... կնշանակե ոչնչացում, սարսափ, տանջանք և անպատվություն: Ուստի մենք որոշեցինք մահանալ կռվելով...: Մենք հոս քիչ ուտելիք, սակավաթիվ զենք ու անբավարար ռազմամթերք ունինք: ...Մինչև հիմա հինգ կատաղի ճակատամարտեր ունեցած ենք 3000 զորքերու և անկանոն խուժանի մը դեմ: ... Հաջորդ անգամ շատ ավելի մեծ ուժի մը դիմադրելու պիտի ստիպվինք, որով վստահ չենք թե պիտի կարենանք հաղթել...»: Վերջում նրանք խնդրում էին, որ իրենց փոխադրեն «Կիպրոս կամ ուրիշ ազատ երկիր մը: Եվ կամ, եթե այսքանը կարե-

լի չէ, հաճեցեք փոխադրել գոնե մեր կիները, ծերերը և մանուկները, ու պարենավորեցեք մեզ զենքով և ռազմամթերքով, ուտելիք տվեք մեզի, որ ձեզի հետ կողք-կողքի կռվինք թուրքական ուժերուն դեմ»[18]։

Սակայն մարտանավի հայտնվելուն սպասել նշանակում էր ժողովրդի բախտը կապել պատահականության հետ։ Ուստի ինքնապաշտպանության կոմիտեն ձեռնարկել է մի շարք միջոցներ. նախ և առաջ, «աղերսագրի երկրորդ մեկ օրինակը» ուղարկվել է Ալեքսանդրետ՝ Մովսես Գըրըքյանի, Աբրահամ Գոճայանի, Կարապետ Խաղճյանի և Տիգրան Մավլիկյանի միջոցով։ Մի քանի օր հետո նրանք (բացի դասալիք եղած Մավլիկյանից) վերադարձել են ձեռնունայն, ոչ մի նավի չէին հանդիպել այդ նավահանգստի բացերում։

Արտաքին աշխարհի հետ կապվելու երկրորդ փորձը նույնպես ավարտվել է անհաջողությամբ։ Պատրաստվել է երեք նամակ՝ մեկը ուղղված Հալեպի ամերիկյան հյուպատոսին, երկրորդը՝ Հալեպի հայոց առաջնորդարանին, երրորդը՝ Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուպար փաշային։ Այդ նամակները տեղ հասցնելու պարտականությունը նախ ստանձնել է թուրքական բանակի զինվոր Խաչեր Աղապյանը, իսկ սրա անհաջողությունից հետո՝ սվեդիացի հոռոմներ, որոնք սակայն տեղ չեն հասել[19]։

Բացի այդ, ապարդյուն փորձեր են կատարվել Կիպրոսի հետ կապվելու համար։ Ալավի առագաստանավավար Տրեյպաթին, որը համաձայնվել էր մի քանի ընտանիք տեղափոխել Կիպրոս, վերջին պահին հրաժարվել է։ Զախողվել է նաև Օրոնդեսի գետաբերանում գտնվող առագաստանավերից մեկը գրավելու և դրանով Կիպրոս հասնելու բավական հանդուգն ծրագիրը։ Կիպրոսի հետ կապվելու միտքը սակայն չէր լքում մուսադաղցիներին։ Վերջապես նրանց ատաղձագործները պատրաստել են մի մակույկ, որը սակայն օգտագործել հնարավոր չի եղել։

Սեպտեմբերի 5-ին անմշուշ օր էր բացվել Մուսա դաղի վրա։ Դրոշակի պահակները նկատեցին փրկարար նավը։ Լուրն արագ տարածվեց, և ամեն կողմից ցնծության աղաղակներ լսվեցին «վափուռն իկեյր, վափուռն իկեյր»։ Մինչ մարդիկ վազում էին Դամլաճըքի բարձունքները, խիզախ լողորդ Մովսես Գըրըքյանն արդեն ծով էր նետվել։ Արագընթաց մակույկն ընդառաջ լողաց և նրան, պոկելով ջրերից, մարտանավ բարձրացրեց։ Ֆրանսիական «Գիշեն» մարտանավը հեռվից նկատել էր Մուսա դաղի կատարից տրվող ազդանշանները...

Քիչ անց, ֆրանսիացիների հրավերով, մարտանավ էին բարձրանում ապստամբության ղեկավարներից ֆրանսերեն լեզվի գիտակ Պետրոս Դմլաքյանը և Խաչեր Տումանյանը: Նրանք մուսադաղցիների «աղերսագիրը» հանձնեցին «Դիշենի» հրամանատար կապիտան Բրիսոնին և, պատասխանելով նրա հարցումներին, լրացուցիչ տեղեկություններ հաղորդեցին ապստամբության հանգամանքների, ժողովրդի վիճակի և նրան սպառնացող բնաջնջման վտանգի մասին: Կապիտան Բրիսոնը խոստացել է «ուր որ անկե» հեռագրել ու մինչև ութ օր հայտնել թե «ինչ կերպով պիտի կարենա օգնել»: Այնուհետև «Դիշեն» մարտանավը ռմբակոծել է թուրքական դիրքերը, դինապահեստի վերածված Քևպուսիեի հայոց եկեղեցին և այլ ռազմական օբյեկտներ:

Սեպտեմբերի 7-ին ֆրանսիական երրորդ նավատորմի հրամանատար ծովակալ Դարտիե դը Ֆուրնեի հրավերով ինքնապաշտպանության կոմիտեի անդամները՝ Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ այցելեցին «Ժան դ'Արկ» մարտանավը: Ծովակալը նրանց հավաստիացրեց, որ կարվի հնարավոր ամեն ինչ լեռ ապաստանած ժողովրդին փրկելու համար:

Սեպտեմբերի 9-ի արևածագին թուրքերից ստացվեց երեք նամակ՝ ալավի պատանիների ձեռամբ: Երկուսը ստորագրված էին թուրքերի կամակատար ոմն բժիշկ Բենիամին Գայըքճյանի, իսկ երրորդը՝ 131-րդ վաշտի հրամանատար գնդապետ Ռիֆաթի կողմից: Վերջինիս նամակը ուղղված էր Յողուն-Օլուքի, Խըդր-Բեկի, Վաքըֆի, Հաճի-Հապիպլիի և Պիթիասի ավագներին (հիյեթի իխթիյարլերինե): Նա պահանջում էր, որ բոլորը՝ «ծեր և պառավ, կին, այր և անմեղ մանուկները» անմիջապես հանձնվին թուրքերին: Նամակն ավարտվում էր հետևյալ աղդարարությամբ՝ «հակառակ պարագային, թափվելիք արյան պատասխանատուն դուք եք...»[20]:

Բժշկի մի նամակը ուղղված էր Աբրահամ քհն. Տեր Գալուստյանին և Վարդան քհն. Վարդերեսյանին: Աքսորվածների «հանգստության» և թուրքական իշխանությունների անհիշաչարության մասին ճառելուց հետո, բժիշկը գրում էր. «Որոշ է, որ այս ձեր ընթացքը ձեր ամենուն ոչընչացման պատճառ պիտի դառնա: ...երկու հաղարե ավելի, բնավ խոսք չհասկացող և պզտիկներուն անգամ չխնայող պաշըպոզուքներ Հաճի-Հապիպլիի և Յողուն-Օլուքի կողմեն ձեզ շրջապատած են: Միասին ալ երկու վաշտ զինվոր կա: Եթե շուտով չհանձնվիք բնաջինջ պիտի ըլլաք, ատոր վստահ եմ...»[21]: Մյուս նամակն առանց որոշակի հասցեի մի երկ-

տող էր, որտեղ ասված էր. «Եթե երկու ժամեն պատասխան մը չտաք, ձեր զավակներուն մեղքը խոսք չհասկացող ծերերուն վիզը թող ըլլա։ Երկու ժամ ժամանակամիջոց կա։ Աման, անմիջապես հանձնվեցեք և ազատվեցեք, բարեկամներս»[22]։

Ինքնապաշտպանության կոմիտեն, վերլուծելով այդ նամակները, հանգեց այն եզրակացության, որ թուրքերը փորձում են ոչ միայն հոգեբանական գրոհի ենթարկել հայերին, այլև նրանց ապակողմնորոշել թշնամու հարձակման իսկական ուղղությունը ճշտելու հարցում։ Պատասխանելով գնդապետ Ռիֆաթի նամակին, հայերը 24 ժամ ժամանակ էին խնդրում իրենց վերջնական որոշումը հաղորդելու համար։ Սակայն թշնամին հավանաբար կռահեց, որ նրանք փորձում են ժամանակ շահել, և հարձակման անցավ ոչ թե Հաջի-Հապիպլիի և Յողուն-Օլուքի դիրքերից, ինչպես խորամանկել էր բժիշկը, այլ Շեյխ-Օրդուի, Գապաքլըի և Տկամուղ-Յոլուի կողմերից։

Հայերը, սակայն, անակնկալի չեկան։ Թուրքական զորքը և բաշիբոզուկների ոհմակները, որոնք, «սրբազան պատերազմի» լոզունգներ աղաղակելով, առաջ էին շարժվում, ընկան կիրճում դարանակալ սպասող հայ մարտիկների համազարկի տակ։ Հարվածն այնքան ուժեղ և այնքան անսպասելի էր, որ չտեսնված շփոթ առաջացրեց թշնամու շարքերում։ Նախ սկսվեց բաշիբոզուկների փախուստը, քիչ անց՝ զորքի մի մասի անկանոն նահանջը։ Վեց-յոթ ժամ տևեց այդ վերջին կռիվը՝ նահանջող թշնամու և նրան հետապնդող հայ մարտիկների միջև։

Սեպտեմբերի 10-ին[23] ֆրանսիական հինգ մարտանավեր («Գիշեն», «Շարնե», «Դեսեքս», «Ֆուդրե» և «Էստրես») խարսխեցին Մուսա դաղի ջրերում։ Հասավ փրկության ժամը։ Մինչ մակույկները մուսադաղցիներին մարտանավերն էին տանում, ֆրանսիական հրետանին կրակ էր տեղում թուրքական դիրքերի վրա։

Սեպտեմբերի 14-ին 4058 մուսադաղցիներ ոտք դրեցին Պորտ-Սաիդ[24], որտեղ և մնացին մինչև համաշխարհային պատերազմի ավարտը։

* * *

Առաջին համաշխարհային պատերազմից հետո դաշնակցությունը, ձգտելով բարոյաքաղաքական դրամագլխի կուտակմանը, փորձում էր այլամերժորեն իրեն վերապահել ոչ միայն Վանի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, այլև **Մուսա դաղի ինքնապաշտպանությունը** կազմակերպելու և ղեկավարելու պատիվը։ Այդ գործում նրան օգնության են

հասել որոշ հայ և օտար հեղինակներ, դիտությամբ կամ անդիտությամբ խեղաթյուրելով փաստերը։

Ֆրանսիական պատմաբան Պոլ Ժակոն գրել է. «Սվեդիայի (Մուսա դաղ) ապստամբությունը կազմակերպողն էր դաշնակիզմը (այսինքն դաշնակցությունը), և այդ ժամանակ տակավին երիտասարդ Մովսես Տեր Գալուստյանն եղել է ընդհանուր պատերազմական նախարար»[25]։ Սիրիայի պատմության բազմահմուտ մասնագետի ուշադրությունից վրիպել է, որ Մուսա դաղում ոչ նախարարական աթոռներ կային, ոչ էլ նախարարներ։

Փորձ է արվել այդ կարգի մի հայտարարություն էլ պոկելու «Մուսա լեռան քառասուն օրերը» նշանավոր վեպի հեղինակից, որը, սակայն, չի ընկել ծուղակի մեջ։ Բերենք մի հատված այն հարցազրույցից, որ դաշնակցական գրող Վարդգես Ահարոնյանը ունեցել է Ֆրանց Վերֆելի հետ։

«— Արդյոք Սուրիա ձեր այցելության ընթացքին առիթ ունեցա՞ք հանդիպելու ձեր իսկական հերոսին՝ Մովսես Տեր Գալուստյանին, որին դուք ներկայացրել էք իբրև Գաբրիել Բագրատյան,— հարցրի ես։

«— Ոչ, ես ոչ մեկ գաղափար չեմ ունեցել իսկական Բագրատյանի գոյության մասին. իրա՞վ, այդպիսի մեկը գոյություն. ունի.— իր հերթին հարցրեց պ. Վերֆելը։

«— Ինչպես չէ, գոյություն ունի, և Բագրատյանը, և ուրիշներ ձեր վեպի գործող անձերից։ Բագրատյան— Տեր Գալուստյանը, որ վարել է Մուսա լեռան պաշտպանությունը, այն ժամանակ հազիվ 21—22 տարեկան է եղել...» և այլն[26]։

Հետագա տարիներին ևս դաշնակցական գործիչները շարունակեցին մեծ եռանդով խեղաթյուրել Մուսա լեռան ինքնապաշտպանության պատմությունը։ Դաշնակցական Հովհաննես Գ. Պուրսալյանը գրում է. «Եթե Սուեդիո բուռ մը հայությունը կարողացավ 1915-ի չարաշուք թվականին ազատության կարմիր դրոշը պարզել թուրք արյունարբու կառավարության դեմ և, ի վերջո, ձեռք բերել իր ազատությունը, այդ բանը կպարտի Հ. Հ. Դաշնակցության ...։ Շնորհիվ դաշնակցության հեռատեսության և մեր ժողովրդի ի բնե ըմբոստ ոգիին ազատագրվեցավ Ճեպել-Մուսան՝ հիսնօրյա ահավոր մարտնչումներու արյունաներկ ուղիներեն անցնելե հետո...»[27]։ Բնական է, Պուրսալյանը չէր կարող մոռանալ Մուսա լեռան հերոսամարտի... «պատերազմական նախարար» Մովսես Տեր Գալուստյանին։ Նրա ասելով, նա ուներ իր այդ «բարձր և խիստ պատասխանատու պաշտոնին բացարձակ գիտակցությունը։

Կարծես ամոր համար ստեղծված էր, ու այդ գործին ամակ էր հակառակ իր 22 տարեկան հասակին»[28]։

Եղել են նաև նվազ համարձակ փորձեր Մուսա լեռան ինքնապաշտպանությունը գլխավորելու պատիվը հնչակյան կուսակցությանը վերագրելու ուղղությամբ[29]։ Դրանք նույնքան անհիմն են, որքան Պուրսալյաններին հորինած կեղծիքը։ Ո՛չ հնչակյանները, ո՛չ էլ դաշնակցականները ի վիճակի չէին գլխավորելու այնպիսի շարժում, ինչպիսին էր Մուսա լեռան հերոսամարտը։

Պետք է նշել, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը Սիրիայում ազգային կուսակցությունները քիչ թե շատ նկատելի ուժ չէին ներկայացնում։ Հնչակյան գործիչ Աղասին և նրա գաղափարական ընկերները դեռևս 1890-ական թթ. մուտք էին գործել Մուսա լեռան դյուղերը, սակայն ինքնապաշտպանության օրերին նրանց ծավալած քարոզչական անձնվեր աշխատանքից մնացել էին մի քանի հընչակյան անհատներ, որոշ թվով տնայնագործական ձեռնառումբեր, պատրույգավոր հրացաններ և այլն։

Դաշնակցությունը Սիրիա մուտք էր գործել երիտթուրքական հեղափոխության նախօրեին։ Համաշխարհային պատերազմի տարիներին Բեյրութում գործում էր դաշնակցական ուսանողների միությունը, իսկ Քեսապում և Մուսա դաղում՝ երկու խմբակ, որոնցում ընդգրկված էին հաղիվ երկու տասնյակ անհատներ։ Պետք է նաև նշել, որ այդ տարիներին դաշնակցությունը վարում էր օսմանյան կառավարության լոյալ մնալու քաղաքականություն։ Այդ պայմաններում դաշնակցականները չէին կարող կազմակերպել և գլխավորել Մուսա դաղի հայերի ինքնապաշտպանությունը։

Այս կամ այն կուսակցության վերագրել հերոսամարտի ղեկավարությունը նշանակում է մեղանչել պատմական ճշմարտության դեմ։ Մուսա լեռան ինքնապաշտպանությունը ղեկավարել են նրանք, ովքեր արժանացել են լեռ բարձրացած ժողովրդի վստահությանը՝ «իրենց ռազմական ու վարչական փայլուն ընդունակություններով և հերոսական արարքներով»[30]։ Մուսա լեռան հերոսամարտը համաժողովրդական շարժում էր։

Արևելյան լեգեոնի հարցերին նվիրված բավական հարուստ գրականությունը զերծ չէ որոշակի անճշտություններից: Սովետական պատմաբան Ն. Էֆենդիևան գրում է. «Դաշնակցական կուսակցությունը դեռ պատերազմի ընթացքում ստեղծել էր Հայկական լեգեոնը, որը սկզբում մաս կազմեց ֆրանսիացի գնդապետ Ռոմիեոյի կողմից 1918 թ. նոյեմբերին Կիպրոս կղզում կազմակերպված Արևելյան լեգեոնին: Դաշնակիցների բեյրութ մտնելուց հետո հայերը դուրս եկան Արևելյան լեգեոնից, քանի որ Հայկական լեգեոնը նախատեսված էր Թուրքիայի դեմ կռվելու համար...: Այս լեգեոնը պատերազմի ընթացքում չէր օգտագործվել և, պահպանվելով ամբողջությամբ, 1919 թ. վերջերին զգալի ուժ էր ներկայացնում »[1]:

Ն. Էֆենդիևան Արևելյան լեգեոնը շփոթում է Կովկասյան ռազմաճակատում գործող հայ կամավորական գնդերի հետ, որոնք, ինչպես հայտնի է, 1915 թ. վերջերին լուծարքի ենթարկվեցին ցարական իշխանությունների կողմից: Բացահայտ թյուրիմացություն է նրա պնդումն այն մասին, թե Արևելյան լեգեոնն եղել է բացառաբար դաշնակցության նախաձեռնության արդյունքը: Դաշնակցականները, ինչպես կնշվի քիչ հետո, լեգեոնի ստեղծմանը մասնակցել են ոչ ավելի, քան հնչակյանները և ռամկավարները: Հաղիվ թե հավատացող գտնվի Էֆենդիևայի այն հայտարարությանը, որ իբր լեգեոնը չի մասնակցել պատերազմին և, վերջապես, նա սխալվում է, երբ փորձում է Հայկական լեգեոնը հակադրել Արևելյան լեգեոնին: Հայկական լեգեոնը վերանվանված նույն Արևելյան լեգեոնն էր:

Պատմական իրականության դեմ մեղանչում է նաև Շ. Թ. Թորոսյանը, երբ գրում է, որ դաշնակցականները «ոչ մի մասնակցություն չեն ունեցել լեգեոնի ստեղծմանը և լեգեոնականների հավաքագրմանը»[2]: Նրա շարադրած փաստերը Եգիպտահայ ազգային միության և դաշնակցական ոչ անհայտ գործիչ Արտավազդ Հանըմյանի վերաբերյալ իրավունք չեն տալիս նման եզրակացության հանգելու:

Սփյուռքահայ հասարակական գործիչ Ս. Մաթոսյանը բանն այնպես է պատկերացնում, որ իբր ֆրանսիացիներն են նախաձեռնարկ եղել Արևելյան լեգեոնի կազմակերպմանը՝ ընդառաջելով Պորտ-Սաիդում ապաստան գտած ջեբելմուսացիների դիմումին: Նա ասում է. «Սվեդիացին կռվել կուզեր...: Փորթ-Սայիդի ֆրանսիական ծովային սպայակույտը հետաքրքրվեցավ հայտնված բաղձանքներով և սկսավ մարզել երի-

տասարդությունը։ Ապա դիմում եղավ նախարար Տրնի Քոշևնի...։ Շուտով գոհացում տրվեցավ, և այսպիսով հիմը դրվեցավ Արևելյան լեգեոնին շնորհիվ... Պ. Պընուա տ'Ազիի ազդեցիկ միջամտության և մարդասիրական մեծ ջանքերուն»[3]։ Մաթոսյանը սխալվում է նաև, երբ Լեգեոնի ստեղծման գործում «առաջնակարգ դեր» է վերագրում Բենուա դ'Ազիի օգնական ֆրանսիական ծովուժի թարգման-կոմիսար Տիրան Թեքեյանին[4]։

Այդ և այդ կարգի այլ սխալներ տեղ են գտել ամերիկահայ հուշագրող Մ. Ավետյանի և ուրիշների աշխատություններում։

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից Անտանտի տերությունները համառ ջանքեր էին գործադրում արաբներին իրենց կողմը գրավելու համար։ 1916 թ. ապրիլին, երբ Թուրքական կառավարությունը չճանաչեց Հիջազի անկախությունը, վերջապես արաբները որոշեցին պատերազմի մեջ մտնել Թուրք-գերմանական զինակցության դեմ։ Դրանից հետո Անգլիան և Ֆրանսիան միջոցներ ձեռնարկեցին արաբական երկրների ազգային փոքրամասնություններին ևս զինելու և մղելու Թուրքիայի դեմ։ Այդ քաղաքականության արգասիքներից էր նաև Արևելյան լեգեոնը։

Պորտ-Սաիդի չեբելմուսացի հայ գաղթականներին պատերազմում օգտագործելու ծրագիրը, որի վերջին տարբերակն էր Արևելյան լեգեոնը, պատկանում է առաջին հերթին անգլիացիներին։ 1915 թ. վերջերից անգլիական զինվորական իշխանությունները բազմիցս փորձել էին, թեև անհաջող, նրանց հավաքագրել աշխատանքային զորաբաժիններում։ Սայքս-Պիկո համաձայնագրից (1916 թ. մայիս) հետո, որով Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի մի մասը համարվում էին ֆրանսիական ապագա գաղութներ, անգլիացիները գործնական նկատեցին հայ գաղթականների օգտագործման հարցը հիմնականում թողնել ֆրանսիացիներին։ Ըստ Վահան Փորթուգալյանի, Արևելյան լեգեոնի հրամանատար գնդապետ Ռոմիեոյին վերագրվող մի զեկուցագրում ասված է. «Արևելյան լեգեոնի առաջին գաղափարը 1916 թ. հուլիսին Լոնդոնի մեր դեսպան Պ. Քամպոնին թելադրվեցավ Կահիրեի ինթելիջընս սերվիսի պետ զորավար Քլեյթոնի կողմե։ Պ. Պռիան, ի տես պատերազմական նախարարի և ընդհանուր հրամանատարի համաձայնության, իր հավանությունը տվավ»[5]։

Յուրացնելով անգլիական առաջարկությունը, Ֆրանսիայի պատերազմական նախարարությունը օգոստոսի 12-ին որոշում է ընդունել

Կիպրոսում համախմբել այն հայերին, որոնք «կփափագին ֆրանսիական դրոշակի տակ կռվիլ իրենց հայրենիքն ազատագրելու համար»[6]: Բացի այդ, նշանակվել է ծրագրվող Արևելյան լեգեոնի հրամանատարը: Սեպտեմբերի 23-ին ընդունվել են ևս մի շարք որոշումներ. առաջին՝ հայերի կամավորագրություն անցկացնել Եգիպտոսում, Սիրիայում և Հընդկաստանում, երկրորդ՝ հրամանատար գնդ. Ռոմիեոյին գործուղել Կիպրոս, որպեսզի պայմաններ ստեղծի հայերի զինվորական պատրաստության համար, երրորդ՝ լեգեոնի ստեղծման կորիզ դարձնել Պորտ Սաիդի սվեդացի գաղթականներին և այլն[7]: Ի դեպ, այդ և հետագա բոլոր կարգադրություններին Ուոր Օֆիսը պաշտոնապես տեղյակ է պահվել Լոնդոնի ֆրանսիական դեսպանի միջոցով:

Ուշագրավ է, որ հայ ժողովրդին վերաբերող այդ հարցը ամենավերջում միայն քննարկվել է Հայ ազգային պատվիրակության նախագահի հետ: Պողոս Նուպարի մի նամակից երևում է, որ հոկտեմբերի սկզբներին ֆրանսիական կառավարությունը և Ազգային պատվիրակությունը հայերի կամավորագրության հարցի շուրջը բանակցություններ են սկսել և կայացրել նախնական համաձայնություն, որը և վերջնական ձև է ընդունել հոկտեմբերի 27-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը գումարված խորհրդակցությունում: Նա ասում է. «Կհաստատեմ կամավորներու հարցին առնչությամբ հոկտեմբերի 6 թվակիր նամակս, որմե հետո ստացած եմ պաշտոնական երաշխավորություն, թե դաշնակիցներու հաղթանակեն հետո մեր ազգային բաղձանքները գոհացում պիտի գտնեն»[8]:

Լոնդոնի ֆրանսիական դեսպանատան խորհրդակցությանը մասնակցել են անգլիական կառավարության ներկայացուցիչ Մարկ Սայքսը, ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոն և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուպարը: Կողմերը համաձայնվել են, առաջին՝ հայ կամավորները կմասնակցեն միայն Թուրքիայի դեմ մղվող կռիվներին՝ Փոքր Ասիայում, Պաղեստինում և Սիրիայում, երկրորդ՝ դաշնակիցների հաղթանակից հետո Կիլիկիայում կստեղծվի հայկական ինքնավարություն՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո[9]: Այդ խորհրդակցությունից հետո Պողոս Նուպարը հենց Լոնդոնից կարգադրություններ է արել, որպեսզի Եգիպտոսում ձեռք առնվեն բոլոր միջոցները «քաջալերելու և դյուրացնելու համար արձանագրությունը առավելագույն թվով կամավորներուն»[10]:

Արևելյան լեգեոնի պատմության հարցերով զբաղվող գրեթե բոլոր

հեղինակները, ինչպես և ինք՝ Պողոս Նուպարն այդ համաձայնությունը ներկայացնում են որպես ֆրանսիական կառավարության և Հայ ազգային պատվիրակության միջև ստորագրված պայմանագիր, այնինչ հայ-ֆրանսիական համագործակցությունը հիմնված էր ոչ թե գրավոր համաձայնագրի, այլ Ֆրանսիայի «ասպետական» աղնիվ խոսքի և հայ դիվանագետների՝ Ֆրանսիայի նկատմամբ ունեցած կույր հավատքի վրա։

1916 թ. նոյեմբերի 26-ին ֆրանսիական կառավարությունը 7/966—9/11 հրամանագրով հաստատեց պատերազմական նախարարության կողմից պատրաստված՝ Արևելյան լեգեոնի կանոնադրությունը։ Լեգեոն կարող էին ընդունվել միայն հայ և արաբ կամավորներ, որոնց պետք է մարզեին և զեկավարեին ֆրանսիացի սպաները։ Կամավորագրությունն ընդունվում էր պատերազմի ամբողջ տևողության համար։ Զինավարժությունները անցկացվելու էին Կիպրոս կղզում։ Լեգեոնը դրվում էր Սիրիայի ֆրանսիական ծովակալի հրամանատարության ներքո։ Լեգեոնը թեև զեկավարվում էր ֆրանսիացիների կողմից և նրա ծախսերը հոգում էր ֆրանսիական կառավարությունը, սակայն կամավորները ֆրանսիական բանակի զինվոր չէին համարվում և իրավունք չունեին օգտվելու ֆրանսիական զինվորների արտոնություններից[11]։

Արևելյան լեգեոնի կազմակերպման հետ կապված հարցերը քննարկվել են նաև Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունում։ Կամավորագրության ձևերի ու պայմանների վերաբերյալ պատրաստվել է 6 կետից բաղկացած հավելված, որով կամավորներ հավաքագրելու գործը դրվում էր սիրիական և հայկական կոմիտեների վրա։ Հավելվածում ասված է. «Զինվանագիտական կարգի դժվարությունների տեղի չտալու համար կարևոր է, որ զինվորագրության փրոփականտը առաջ տարվի (հայ և արաբ—Հ. Փ.) քոմիթեներու կողմից առանց որևէ միջամտության՝ ֆրանսիական հյուպատոսական կամ դիվանագիտական գործակալներու կողմե։ Փափաքելի է նաև, որ այս փրոփականտը մղվի ամենածայրահեղ զգուշությամբ և որքան հնար է առանց հրապարակային որևէ արտահայտության, որպեսզի կարելի ըլլա խուսափել մեր թշնամիներու ուշադրությենեն և արգելել վրեժխնդրական արարքներ ընդդեմ հայերու և սիրիացիներու»[12]։ Այդ կարգի մտավախության հետևանքով է, որ Լեգեոնը կոչվել է ոչ թե Հայկական այլ՝ Արևելյան[13]։

1916 թ. նոյեմբերին ֆրանսիական զինվորական պատվիրակությունը Կահիրե է ժամանում Հայ ազգային միության հետ միասին Լեգեոնի կազմակերպումը ձեռնարկելու համար։ Հայ ազգային միությունը, միավորելով ազգային կուսակցությունների (Հնչակյան, դաշնակցա-

կան, ռամկավար-սահմանադրական), հայկական համայնքների (լուսավորչական, կաթոլիկ, ավետարանական), Հայ բարեգ. ընդհ. միության և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին, համարվում էր ամբողջ Եգիպտոսի գաղութի անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմին։ Ֆրանսիական պատվիրակությունը և Ազգային միությունը, հիմք ընդունելով հոկտեմբերի 27-ին Լոնդոնում կայացած համաձայնությունը, վերստին քննարկեցին Արևելյան լեգեոնի հետ կապված մի շարք հիմնական հարցեր և ստորագրեցին հետևյալ բանաձևը. «ա. Արևելյան լեգեոնի կազմությունով հայ զինվորներ պիտի մասնակցին զինվորական գործողությանց և դաշնակիցներու հաղթանակին մեջ պիտի ունենան գործուն բաժին, ի փոխարեն պիտի ստանան որոշ երաշխիք Կիլիկիո ազատագրության և հայոց ազգային այլ բաղձանքներու իրականացման համար. բ. Հայ լեգեոնականներ միայն թուրքին դեմ պիտի կռվին պաղեստինյան ճակատին վրա, ու եթե հարկ ըլլա Կիլիկիո մեջ. գ. Հայկական լեգեոնը կորիզը պիտի կազմե ապագա հայ բանակին Կիլիկիո և գրավված հայկական հողամասերուն մեջ»[14]։

Եգիպտոսում կամավորների հավաքագրման ձեռնարկել է Հայ ազգային միությունը։ Կամավորագրվել են շուրջ 600 սվեդիացիներ, 300 եգիպտահայեր և 235 թուրքական բանակի հայ գերիներ ու դասալիքներ։ 1917 թ. սկզբներին Ամերիկա են մեկնել Հայ ազգային միության ներկայացուցիչներ Մ. Տամատյանը, Ս. Սապահգյուլյանը և Ա. Հանըմյանը՝ ապահովելու ամերիկահայերի մասնակցությունը կամավորական շարժմանը։ Ամերիկահայ ազգային խորհրդի ջանքերով մի քանի օրում կամավորագրվել են ավելի քան 5000 երիտասարդներ, սակայն փոխադրամիջոցների անբավարարության հետևանքով նրանցից միայն 1200-ն է հասել Կիպրոս։

Եգիպտոսի և ԱՄՆ-ի Ազգային խորհուրդների կամավորագրության կոչին արձագանքեցին նաև Սիրիայի, Լիբանանի, Ֆրանսիայի և այլ երկրների հայերը։ Արևելյան լեգեոնի կամավորների թվաքանակը բարձրացել է շուրջ 5000-ի (այդ թվում 1000 արաբներ), որոնք բաժանված էին չորս միավորի։

Արևելյան լեգեոնի գումարտակները մարտական պատրաստականության բերվեցին Կիպրոսում, Ֆամագուստայից շուրջ 30 կմ հեռու գտնվող Մոնարիա բնակավայրում։ Լեգեոնի մարտունակությունը ստուգելու համար Կիպրոս ժամանած Ֆրանսիացի գեներալ Բայուն հայտնել է, որ այն պատրաստ է ռազմաճակատ մեկնելու համար։

Պաղեստինի ռազմաճակատը ձգվում էր Յաֆֆայից հյուսիս գտնվող ծովեզրյա Բիր-Զեյթ գյուղից մինչև Հորդանան գետը։ 1917 թվականից հետո, երբ անգլիացիները գրավեցին Երուսաղեմ—Յաֆֆա գիծը, ռազմաճակատում զգալի փոփոխություններ չէին կատարվել։ 1918 թ. սկզբներին դաշնակիցները երկու անգամ փորձել էին գերմանա-թուրքական պաշտպանական գիծը ճեղքել, բայց հետ էին մղվել։ Այնուհետև մինչև սեպտեմբեր կողմերը զբաղված էին ուժերի վերադասավորումով, պատրաստվում էին վճռական ճակատամարտին։

Գերմանա-թուրքական պաշտպանական գիծը բաղկացած էր հինգ հատվածներից՝ Բիր-Զեյթից Ռաս ուլ-Այն, Քաֆր-Քասիմ, Ջալիեից Ռաֆաթ, Արարա և Բերուկինից Բեյթ Լաբան։ Առաջինը գտնվում էր Սարոնի դաշտավայրում, իսկ մյուսները՝ Սամարիայի սեպ և դժվարանցանելի լեռներում։ Անգլո-ֆրանսիական հրամանատարությունն այդ հատվածներում կուտակել էր 35.000 զինվոր, իսկ թշնամու ուժերը բաղկացած էին 8.000 թուրք և 7.000 գերմանացի զինվորներից։ Դաշնակից զորքերն անհամեմատ ավելի լավ էին զինված, օրինակ, թշնամու 130 հրետանու դիմաց ունեին 400 հրետանի և զգալի թվով ինքնաթիռներ։ Սակայն տեղանքի բնական ու արհեստական ամրությունները որոշակի առավելություն էին տալիս գերմանա-թուրքական ուժերին։

Դաշնակից զորքերի հիմնական խնդիրն էր՝ կոտրել թշնամու դիմադրությունը և ճանապարհ բանալ դեպի հյուսիս առաջխաղացման համար։ Սիրիա-պաղեստինյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատար գեներալ Էդ. Ալենբին որոշել էր այդ խնդիրն իրականացնել գրոհի անցնելով Սարոնի դաշտավայրից։ Նրա ծրագիրն էր հանկարծակի գրավել Հայֆա նավահանգիստը և տարածվել թշնամու թիկունքում։ Սակայն այդ գործողությունը հաջողությամբ իրականացնելու համար, նախ անհրաժեշտ էր գերմանա-թուրքական հրամանատարության ուշադրությունը շեղել ռազմաճակատի մի ուրիշ հատվածի վրա։ Այդ դերն էլ վստահվեց ռազմաճակատի կենտրոնական հատվածում կանգնած ալժիրական, հայկական և հնդկական միավորներին։

1918 թ. մայիսի սկզբներին Արևելյան լեգեոնը Կիպրոսից տեղափոխվեց Պորտ-Սաիդ, իսկ մայիսի 18-ին՝ Իսմայիլիե ալ-Թիհ անապատային վայրը։ Հուլիսի կեսերին Կահիրեից Իսմայիլիե ժամանեցին Հայ ազգային միության ներկայացուցիչները և բազմաթիվ մտավորականներ՝ Արևելյան լեգեոնին ողջերթ մաղթելու համար։ Բանակատեղում կազմակերպվեց հանդիսություն, արտասանվեցին հայրենաշունչ ճառեր, որոնցում Արևելյան լեգեոնը ողջունվում էր որպես «հայկական

նորածին բանակ»[15]: Լեգեոնը շուտով շարժվում է դեպի Մեջդել, Ռամլե, Լյուդ, ապա դիրքեր գրավում ռազմաճակատի Ջալիե-Ռաֆաթ հատվածում:

Արևելյան լեգեոնին առաջադրանք էր տրված գրոհել Ռաֆաթի ըժվարամատչելի բարձունքի վրա: Մինչև հայկական գումարտակների ժամանելը, ինչպես նշել է ճակատամարտի մասնակիցներից Խորեն Աճեմյանը, անգլո-ֆրանսիական միավորները մի քանի անգամ փորձել էին Ռաֆաթը գրավել, բայց ետ էին մղվել[16]:

Ճակատամարտի նախօրեին՝ 1918 թ. սեպտեմբերի 18-ին երեկոյան Լեգեոնի ճամբարում արտակարգ եռուզեռ էր: Լեգեոնականները նախապատրաստվում էին իրենց անդրանիկ մարտական մկրտությանը: Ընթրիքից հետո հայ սպաներից Ջան Շիշմանյանը, լեգեոնականներին դիմելով ասում է. «Տղաք, գիտեք, վաղը առտու մեր հարսանիքի օրն է, այն օրը, որուն բոլորս կսպասենք: Ամեն պինվոր կազմ ու պատրաստ պիտի ըլլա առավոտյան ժամը 4-ին: Այս ժամը վրեժխնդրության և արդար հատուցման վսեմ ժամն է. հայրենիքի ազատության համար է, որ պիտի մղենք նվիրական պատերազմը: Ատիկա միակ ծառայությունն է, որ մենք պիտի կատարենք հանդեպ մեր դժբախտ ազգին ու զայն երջանկացնենք մեր արյան գնով: Չեմ գիտեր թե վաղվան վարագույրը երբ իջնե, մեզմե քանին պիտի իյնան ճակատամարտին մեջ, սակայն վստահ եմ, որ հայուն հպարտ ճակատը ամոթի մրուրը պիտի չտեսնե, մեր անցյալը մեզ խթան և ապագան թող հավատք ներշնչե բոլորիս»[17]:

Սեպտեմբերի 19-ի արշալույսին ռազմաճակատի կենտրոնական հրեք հատվածներից միաժամանակ հարձակում է սկսվում: Ալժիրական գումարտակները գրոհում են Քաֆր-Քասիմի, հայկականները՝ Ռաֆաթի, հնդկականները՝ Արարայի բարձունքի վրա: Նկարագրելով հայ մարտիկների գրոհը, ճակատամարտի մասնակից Մ. Զարիկյանը գրել է. «Լուսաբացին հետ տրված նշանի մը վրա բանակը սկսավ դուրս գալ իր խրամներեն և դանդաղ, կշռված քայլերով ու մեծ զգուշավորությամբ առաջ շարժիլ դեպի Թրքական դիրքերը: Հանկարծ փրթիլ փոթորիկը ահռելի թնդանոթաձգությամբ մը, կարծես այդ վայրկյանին երկինքը պատռեցավ և ամպերը վար ընկան որոտացող ռումբերու ծուխ ու բոցերուն հետ»[18]: Չնայած թշնամու տեղատարափ կրակին, հայ մարտիկները բարձրանում են Ռաֆաթի սեպ կողերից, ընդհուպ մոտենում թուրքական առաջապահ դիրքերին... և սվինամարտ է սկսվում: Մ. Զարիկյանը պատմում է. «Սվինները փայլատակեցին...: Արյան դեմ վրեժ ու մահվան դեմ ազատություն մռնչող առյուծները վճռականորեն խոյացան դե-

պի թրքական խրամները...»։ Ճակատամարտը տևել է շուրջ յոթ ժամ։ Թշնամին, քաշվելով պաշտպանական երկրորդ գծի դիրքերը, փորձել է հակահարձակման անցնել, բայց ետ է շպրտվել։ Արևածագին Արևելյան լեգեոնը նոր գրոհ է նախապատրաստում, բայց թշնամին արդեն նահանջել էր...

Ռազմաճակատի կենտրոնական երեք հատվածներից միաժամանակ սկսված գրոհը հնարավորություն տվեց գեներալ Ալենբիի հեծելազորին՝ ճեղքել-անցնել Սարոնի դաշտավայրը։ Հայ ազգային պատվիրակության նախագահին ուղարկած հեռագրում գեներալ Ալենբին գրում էր. «Հպարտ եմ, որ իմ հրամանատարության տակ ունեմ հայկական գունդ։ Հայերը փայլուն կերպով կռվեցին և մեծ մասնակցություն ունեցան իմ հաղթանակում»[19]։

Իրենց վստահված գործը պատվով կատարեցին նաև Արևելյան լեգեոնի երկու թևերից առաջացող ալժիրական և հնդկական միավորները։

Ռաֆաթի բարձունքի ճակատամարտում Արևելյան լեգեոնը տվել է 21 սպանված, 2 մահացու վիրավոր և 76 վիրավոր։ Սպանվածներին թաղել են Ռաֆաթ գյուղի մոտ եղբայրական գերեզմանում։ Ուշագրավ է լեգեոնի հրամանատար գնդ. Ռոմիեոյի դամբանականը. «Կողջունեմ երեկի կռվին մեր հայ զոհերը...։ Մենք հպարտ մխիթարություն ունինք հողին հանձնելու հայ հերոսները, բոլորն ալ առաջին գծին վրա ինկած, իրենց երեսը դեպի թշնամին...։ Անոնք բոլորն ալ արժանի են պատերազմական խաչին...»[20]։

Գերմանա-թուրքական ճակատի փլուզումից հետո Արևելյան լեգեոնը, դաշնակից զորքերի հետ հյուսիս շարժվելով, մասնակցում է Սիրիայի բազմաթիվ քաղաքների ազատագրությանը։ 1918 թ. վերջերին հայ լեգեոնականներին տեղափոխեցին Բեյրութ, որտեղից էլ՝ նախ Ալեքսանդրետ, ապա՝ Կիլիկիա։

Այդ առիթով հարց է դրվել Արևելյան լեգեոնը Հայկական լեգեոն վերանվանելու մասին։ Ակներևաբար Հայ ազգային պատվիրակության թելադրանքով, գեներալ Ժորժ Պիկոյին մատուցվել է հատուկ հուշագիր, որտեղ ասված է. «Արևելյան լեգեոնին մաս կազմող հայ զորախումբերը կոչված են կորիզը կազմելու ապագայի հայկական բանակին։ Կովկասի և Պարսկաստանի հայ զինվորական խումբերը այդ բանակին մաս պիտի կազմեն...։ Արևելյան լեգեոնը ստեղծող քաղաքական ու զինվորական պայմանները լիովին փոխված են, անհրաժեշտ է, որ լեգեոնը կազմող յուրաքանչյուր ցեղային տարր ունենա իր առանձին կազմակերպությունը»։ Հայերի ու արաբների «միացումը մեկ դասավորումի, մեկ

խմբավորումի մեջ եղած է անոր համար, որ երկուքն ալ ուզած են թո-թափել նույն լուծը: Այդ պատճառը գոյություն ունենալէ դադրած է...: Հայ գինվորների համախմբումը ինքնավար Հայկական լեգեոնի մը մեջ՝ հայերը իրենց ամենեն անհրաժեշտ կարիքը կհամարեն: Արևելյան լե-գեոն անվանակոչումը հայոց ռազմական հաջողություննները կստվերածե, ... կվիրավորե իրենց հայրենասիրական արժանապատվությունը»[21]: Ուս-տի խնդրվում էր Արևելյան լեգեոնը վերանվանել Հայկական լեգեոն: Այդպես էլ եղել է:

Հայկական լեգեոնը սակայն խիստ կարճ կյանք ունեցավ: 1920 թ. օգոստոսի 19-ին այն լուծարքի ենթարկվեց, քանի որ նրա գոյությունը կարող էր խանգարել անգլո-ֆրանսիական գաղութարարների նոր, Թուր-քիայի հետ մերձեցման քաղաքականությանը:

Այսպիսով, գաղութարարները, ցանկանալով թուրքերի դեմ օգտա-գործել ցեղասպանությունից ճողոպրած արևմտահայ բեկորներին, «աս-պետական» խոստում տվեցին Կիլիկիայում վերականգնել հայկական պետությունը ֆրանսիական մանդատի ներքո: Ազգային կուսակցություն-ները, հավատալով այդ հերթական կեղծիքին, կամավորագրություն ազմուկ բարձրացրին Մերձավոր Արևելքից մինչև Եվրոպա և հեռավոր Ամերիկա: Արևելյան լեգեոնի մարտիկներն անձնուրաց մասնակցություն բերեցին պատերազմին, սակայն հաղթանակից հետո, ինչպես պետք էր սպասել, գաղութարարները մոռացան իրենց «աստվածական» խոս-տումը...

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԴՊՐՈՑՆԵՐԸ

Սիրիայի հայկական գաղթօջախներում ստեղծվել են մշակութային արժեքներ, որոնք սակայն բնականոն զարգացման հնարավորություն չեն ունեցել տիրող սոցիալ-քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով: Համեմատաբար առաջընթաց քայլ է կատարվել մատաղ սերնդի ուսման և դաստիարակության ասպարեզում:

Դպրոցական գործն անհամեմատ ավելի աշխույժ էր Հալեպում: Հիմքից զուրկ է Ա. Սյուրմելյանի կարծիքն այն մասին, որ իբր Հալեպի հայերը «ի բնե ուսումնասեր չեն եղած, վարժարանի հառաջադիմության համար նյութական զոհողության հանձնառու չեն եղած» և այդ պատճառով «մինչև 1900-ական թվականները իրենց ազգային վարժարանները հառաջադիմություն չեն արձանագրած»[1]: Անկասկած հալեպահայ դպրոցներն ունեցել են լուրջ թերություններ, հաճախ չեն գտնվել պատշաճ բարձրության վրա, բայց իրենց թվով և ուսումնադաստիարակչական մակարդակով գրեթե չեն զիջել մյուս համայնքների դպրոցներին: 1840-ական թվականներին Հալեպում գործում էին 50 տարրական և միջնակարգ դպրոցներ, որոնցից 20-ը պատկանում էին մուսուլմանական, 11-ը՝ հրեական և 19-ը քրիստոնյա համայնքներին: Ընդ որում քրիստոնյա դպրոցներից 6-ը ստեղծել էին հույները, 5-ը՝ ասորիները, 4-ը՝ մարոնականները և 4-ը՝ հայերը: Հայկական դպրոցներին էր բաժին ընկնում 377 ընդհանուր սովորողներից 162-ը[2], որն ամենևին չի խոսում հալեպահայերի «ի բնե ուսումնասեր» չլինելու մասին:

Հալեպի հայկական դպրոցների (1 առաքելական, 3 կաթոլիկական) հիմնադրման ճշգրիտ թվականը մեզ հայտնի չէ: Դրանց գոյության մասին առաջին հաստատ տեղեկությունը վերաբերում է 1840-ական

թվականների կեսերին[3], սակայն անհավանական չէ, որ հալեպահայ դպրոցական գործի սկիզբը դրված լինի շատ ավելի վաղ ժամանակներում: Հայ Առաքելական համայնքի դպրոցը ս. Քառասուն մանկանց եկեղեցուն կից էր և նրա դասատուները գալիս էին քահանայական դասից: Այնտեղ դասավանդվում էին հայերեն և արաբերեն լեզու, թվաբանություն, եկեղեցական երաժշտություն և այլն: Նույնքան խղճուկ էին նաև հայ կաթոլիկ համայնքի դպրոցները: Բնութագրելով Հալեպի դպրոցներում հաստատված ռեժիմը, Գին նշում էր. «Դպրոցները փակվում են միայն տոն օրերին, և ուրիշ ոչ մի արձակուրդ չկա այս երկրում: Բոլոր սովորողներն ընդունվում են միևնույն կարգով: Նրանք դպրոց են գալիս առավոտյան, բերելով կամ բերել տալով կեսօրվա ճաշը: ...Երեխաներն ընդմիջում են կատարում միայն ճաշի ժամանակ, սակայն մընում են ծալլապատիկ նստած և այդ դիրքը պահպանում են դպրոց հասած րոպեից մինչև մեկնելու ժամը, այսինքն մինչև արևամուտ, երբեմն էլ ավելի...»[4]:

1850—1860-ական թվականներին հալեպահայ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործը զգալի չափով բարելավվեց: 1853 թ. ս. Քառասուն մանկանց եկեղեցուն կից բացվեց առաջին հայկական ծաղկոցը՝ մանկապարտեզը, իսկ 1862 թ.՝ Հովհ. Քյուրճյանոֆի աղջկանց մասնավոր վարժարանը, որը, թեև միայն մի քանի տարի գործեց, սակայն գաղթօջախին պատվաստեց իգական սեռի կրթության ճաշակը[5]: Արդարև, վերջինիս փակվելուց հետո ս. Քառասուն մանկանց եկեղեցուն կից գործող արական դպրոցը վերածվել է երկսեռ դպրոցի՝ արական և իգական ջոկ բաժիններով: Սակայն աղգապատկան կալվածների վատ մատակարարումը և աղայական հակամարտությունները բացասաբար էին անդրադառնում դպրոցի վրա: Առաջնորդական տեղապահ Հակոբ վարդապետի մի նամակից երևում է, որ դպրոցը միառժամանակ փակ է մնացել: 1876 փետրվարի 21 թվակիրով, նա Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում էր. «Ժողովրդյան ջերմ փափաքանաց համեմատ, քաղաքիս մեջ տղայոց և աղջկանց վարժարաններ բանալու անհրաժեշտ կարևորությունը իմովմանն իսկ զգալով, թեև վեց ամիսե իվեր կաշխատեի, բայց հաղիվ այսօր կարացի նորա դռները բանալ աղգիս մանկտյաց համար»[6]: Այդ առթիվ, արական դպրոցը վերանվանվել է Ներսեսյան վարժարան՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի անունով, իսկ իգականը՝ Վարդուհյան, վաստակաշատ մանկավարժ Վարդուհի Զորյանի անունով:

1880-ական թվականներից մի շարք հանգամանքներ (հալեպահայերի թվաքանակի աճ, բարեկեցության բարձրացում և այլն) նպաստում էին կրթական կյանքի աշխուժացմանը: Աճեց սովորողների թվաքանակը, և 1897 թ. կառուցվեց «երկհարկանի վայելուչ շենք մը», որը լիովին համապատասխանում էր ժամանակի դպրոցական պահանջներին[7]: Ասպարեզ իջան մի շարք տիկնանց և օրիորդաց ընկերություններ, որոնց նպատակն էր աջակցել դպրոցական գործին: Բացվեցին նաև հայ ավետարանական համայնքին պատկանող երկու դպրոցներ: Աղյուսակում[8] բերված տվյալները ցույց են տալիս հալեպահայ դպրոցների զարգացման ընթացքը 1890-ական թվականներից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը:

Աղյուսակ № 2

Տարեթիվ	Դպրոցների թիվը			Աշակերտների թվաքանակը		
	Հայ առաք.	Հայ կաթոլ.	Հայ ավետ.	Հայ առաք.	Հայ կաթոլ.	Հայ ավետ.
1878—1880	3	2	—	142	90	—
1896—1898	3	3	—	350	110	—
1902—1905	3	2	2	380	180	90
1908—1911	3	2	2	580	205	120

Աղյուսակից երևում է, որ սովորողների ընդհանուր թվաքանակը գնալով մեծացել է: Սակայն դա հալեպահայերի թվաքանակի համեմատությամբ, այնուամենայնիվ ցածր էր: Օրինակ, 1905 թ. Հալեպում ապրում էին շուրջ 8750 հայեր, այսինքն 1250 ընտանիք՝ մի ընտանիքում 7 շունչ հաշվով: Եթե երկու ընտանիքն երեք դպրոցական հասակի երեխա տար, ապա Հալեպի հայկական դպրոցները պետք է ունենային ոչ թե 650, այլ 1875 աշակերտ: Դա նշանակում է, որ դպրոցահասակ երեխաների ճնշող մեծամասնությունը հայկական դպրոց չէր հաճախում, չքավորի երեխաները տնտեսական պայմանների հետևանքով աշխատանքի էին անցնում, իսկ բարեկեցիկ խավերը գերադասում էին օտար դպրոցը: 1911 թ. «Բյուզանդիոն» լրագրի Հալեպի թղթակիցը գրում էր. «Կարող դասակարգը հանդարտ խղճով կշարունակեն իրենց զավակները ղրկել օտար վարժարաններ, տարեկան 4—20 ոսկի թոշակ վճարելով, ու կպնդեն թե հայուն զավակն օտար հարկերու տակ միայն մարդ կըրնան ըլլալ...»[9]:

Հալեպի հայկական դպրոցները գլխավորապես սպասարկում էին

աշխատավորական խավերին: Այդ մասին է վկայում այն, որ նրանցում սովորում էին մեծ մասամբ ձրիավարժ աշակերտներ: Մինչև 1880-ական թվականները ուսման վարձ վճարելու սովորություն առհասարակ չի եղել հալեպահայ դպրոցներում, բացառությամբ մասնավոր դպրոցների: 1906 թ. Ներսեսյան դպրոցի 450 աշակերտներից 200-ը ձրիավարժ էր, իսկ մնացյալից ուսման վարձ էր գանձվում 123 ոսկի, այսինքն յուրաքանչյուր աշակերտից շուրջ կես ոսկի, որը օտար դպրոցների ուսման վարձի համեմատությամբ մի չնչին գումար էր[10]:

Հալեպի հայկական դպրոցների նպատակն էր ոչ միայն պայքարել ձուլման վտանգի դեմ (արաբախոս հայերի բավական հոծ զանգվածի առկայության պայմաններում), այլև պատրաստել կիրթ մարդիկ, որոնք կարողանային «պատվավոր գործերով» ապահովել իրենց օրապահիկը: Դպրոցական ծրագիրը պետք է հարմարվեր այդ նպատակին: Դժբախտաբար, աղբյուրներում պահպանված կցկտուր և անկատար տեղեկությունները հնարավորություն չեն ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու հալեպահայ դպրոցներում գործադրված ուսումնական ծրագրերի և ընդգրկված առարկաների դասավանդման մակարդակի մասին: Հայ պարբերական մամուլը հաճախ զբաղվել է հայ կաթոլիկ և ավետարանական դպրոցների հարցերով զբաղվելիս: Նրա էջերում, թեև հայ առաքելական համայնքի դպրոցները բավական լայն տեղ են զբավում, սակայն մատուցված նյութերը միակողմանի, ընդհանուր բնույթ են կրում, այն էլ մեծ մասամբ վերաբերում են Ներսեսյան դպրոցին: Դա ամենևին պատահական չէր: Ներսեսյան դպրոցը հանդիսանում էր հայկական կարևորագույն ուսումնական հաստատությունը ողջ Սիրիայում[11]:

Ներսեսյան դպրոցը տարրական նախակրթարան էր չորս, երբեմն հինգ կամ վեց դասարաններով: Դպրոցը կայուն ուսումնական ծրագիր չի ունեցել, տնօրենները կազմել, վերակազմել և փոփոխել են այն՝ ըստ իրենց հայեցողության: Տնօրեններն երկար չէին պաշտոնավարում, սակայն տարիների ընթացքում ստեղծվել էր որոշ ավանդություն, որով և ղեկավարվում էր Ներսեսյան դպրոցը: Հայագիտական առարկաները գրավում էին առաջնակարգ տեղը, երեխաներն անցնում էին հայերեն լեզու (ընթերցանություն, քերականություն, շարադրություն), հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և այլն: Բոլոր մյուս առարկաների դասավանդումը, որպես կանոն, կատարվում էր մայրենի լեզվով: Հայագիտական առարկաներին ընծայված ուշադրությունը կարևոր էր հատկապես արաբախոս ընտանիքի երեխաների համար: 1906 թ. Հալեպից «Արևելյան մամուլ»-ին գրում էին. «Տեղացի արաբախոս ծը-

Էողաց այս (Ներսեսյան դպրոց հաճախող—Հ. Թ.) տղաքը, որոնք հայերեն բնավ չէին գիտեր, մեկ տարվա մեջ սկսած են (հայերեն) խոսիլ և կարդալ հաջող կերպով»[12]:

Ներսեսյան դպրոցում դասավանդվում էին մի շարք օտար լեզուներ: Սկզբում երեխաները սովորում էին միայն թուրքերեն և արաբերեն, իսկ հետագայում՝ նաև ֆրանսերեն: XX դարասկզբում անհրաժեշտ է համարվել նաև չորրորդ օտար լեզվի՝ անգլերենի ուսուցումը: Բացի վերոհիշյալներից անցնում էին թվաբանություն, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, կրոնագիտություն, գծագրություն, գեղագիտություն, առևտրին տնտեսություն, մարմնամարզություն և այլն: Այդ բոլոր առարկաների գծով քննություն էր ընդունվում տարին երկու անգամ: Դպրոցական տարեշրջանի փակումը կատարվում էր ծննդոցական հատուկ հավաքույթում, որտեղ տնօրենը զրավոր զեկուցում էր ուսումնադաստիարակչական բնագավառում ձեռք բերված հաջողությունների, տեղ գտած թերությունների և հետագա ծրագրերի մասին[13]:

Ուսումնադաստիարակչական ծրագրի հաջող կատարումը պայմանավորված էր, առաջին հերթին, դասատուների որակով: Ներսեսյան դպրոցում տարբեր ժամանակներում ծառայել են այս կամ այն առարկայի գծով առանձին որակավոր մասնագետներ, սակայն առհասարակ միջակից ցածր է եղել նրա մանկավարժական կազմի գիտելիքների մակարդակը: Կ. Պոլսից, Զմյուռնիայից, անգամ Ադանայից դասատու կամ տնօրեն հրավիրելու փորձերը մեծ մասամբ ձախողվել են դրամական բավարար միջոցների չգոյության հետևանքով: Եղել է ժամանակ, երբ «չորս տող անսխալ նամակ մը» գրելու անկարող մարդիկ, ինչպես վկայում է «Բյուզանդիոն»-ի թղթակիցը, որպես դասատու պաշտոնավարել են Ներսեսյան դպրոցում[14]: Բացի այդ, դասատուների կազմը հաճախ չէր համալրվում և նրանք աշխատում էին անբնականոն ծանրաբեռնվածությամբ:

Ներսեսյան դպրոցի ուսումնադաստիարակչական մակարդակի բարձրացմանը հաճախ խանգարում էին հոգաբարձու ազանները, որոնց ձեռքում էր դպրոցական բյուջեն «հավասարակշռելու» և մանկավարժական կազմը համալրելու իրավունքը: Լինելով մեծ մասամբ անգրագետ կամ կիսագրագետ, նրանք այդ իրավունքից օգտվելիս ղեկավարվում էին այնպիսի նկատառումներով, որոնք պարզապես անհամատեղելի են մանկավարժության հետ: Այնուամենայնիվ, եղել են ուսումնական տարեշրջաններ, երբ Ներսեսյանի հոգաբարձության գլուխ կանգնել են զարգացած և ձեռներեց անձինք (օրինակ՝ Գաբրիել Խանճյան, բժ. Թուփալյան և ուրիշներ), որոնք ճիշտ են մոտեցել դպրոցական գործին և զգալի չափով

նպաստել Ներսեսյան դպրոցի ուսումնադաստիարակչական մակարդակի բարձրացմանը[15]։

Հայկական դպրոցներ գործում էին Հալեպի նահանգի մի շարք հայահոծ շրջաններում։ Մատաղ սերնդի ուսման ու դաստիարակության գործը բավական բարձր մակարդակի էր հասել Այնթափում։ Այդտեղ կարևոր դեր էր կատարում ոչ միայն հայերի թվաքանակը, այլև մանավանդ այդ քաղաքում հաստատված ամերիկյան կոլեջը, որի շրջանավարտներից էր մեծ մասամբ համալրվում հայկական դպրոցների ուսուցչական կազմը։

Հալեպի նահանգի մնացյալ հայկական դպրոցները գտնվում էին անմխիթար վիճակում։ Նախ և առաջ հայկական ոչ-բոլոր համայնքները դպրոց ունեին։ 1867 թ. Ուլնեցու այցելած 20 քաղաքներում և գյուղերում գործում էին միայն երեք խղճուկ հայկական դպրոցներ։ Մնացյալ վայրերում հայկական դպրոց ստեղծելու հնարավորություն չկար։

1880-ական թթ. դպրոցական գործը դնալով մղում ստացավ, տարրական դպրոցներ հաստատվեցին Քեսապում, Ալեքսանդրետում, Սվեդիայում, Անտիոքում, Բեյլանում և այլուր։ Ըստ Լինչի, Քեսապում առաջին դպրոցը հիմնադրվել է 1849 թ., սակայն մինչև 1882 թ. գործել է զգալի ընդհատումներով[16]։ 1890—1910 թթ. դպրոցներ բացվել են նաև Քեսապի հարևան գյուղական վայրերում։ 1905 թ. հնթարկվելով Միացյալ ընկերության վերահսկողությանը, Քեսապի շրջանի դպրոցական կյանքը բավական աշխուժացավ՝ ոչ միայն դպրոցների թիվն ավելացավ, այլև բարձրացավ նրանց ուսման և դաստիարակության մակարդակը։ 1910 թ. Քեսապում և նրա շրջակա գյուղերում գործում էին 12 դպրոց, որոնցում ընդգրկված էին 1100 երկսեռ երեխաներ[17]։ Դավիթ Ուլնեցի վարդապետը հաղորդում է, որ 1867 թ. Անտիոք քաղաքում հայերն ունեին «անկանոն» գործող մի դպրոց[18]։ 1901—1902 թթ. Անտիոքում և նրա մերձակա գյուղերում (Սվեդիա և այլ) կային տասը տարրական դպրոցներ, որոնցում սովորում էին 487 երկսեռ երեխաներ։ Այդ դպրոցների ամսական բյուջեն էր 1520 ղրուշ, որը ծածկվում էր տարբեր բարեգործական ընկերությունների և տեղական կրոնական համայնքների հատկացումներով[19]։ 1900—1901 թթ. Ալեքսանդրետում գործում էին երկու (արական և իգական), իսկ Բեյլանում՝ մեկ (արական) տարրական դպրոց։ Վերջինում ընդգրկված էր շուրջ 100 երեխա[20]։

Դամասկոսի, Լաոդիկիայի և Բեյրութի հայկական դպրոցները գտնվում էին Երուսաղեմի հայոց պատրիարքարանի վերահսկողության

ներքո։ Վեքիլ-վարդապետները և նրանց աջակցող թաղական խորհուրդները դրամական միջոցներ էին հայթայթում դպրոցների տևականացումն ապահովելու համար[21]։ Դամասկոսում առաջին հայկական դպրոցը բացվել է 1849 թ.՝ Սիրիայի մաքսատների տնօրեն Գևորգ Միսաքյանի ջանքերով։ Այդ դպրոցը սկզբում գործել է որոշ ընդհատումներով, իսկ հետագայում՝ անխափան։ XIX դարավերջին նրա արական և իգական ջոկ բաժիններում սովորում էին 310 երեխաներ[22]։ Բեյրութում հայ դպրոցը սկզբնավորվել է 1859 թ. ս. Նշան վանքում։ 1890-ական թթ. սկզբներին հաստատվել է նաև նրա մանկապարտեզի բաժինը, որտեղ սովորում էին 35—40 երկսեռ երեխաներ[23]։ 1904 թ. Բեյրութում շարք է մըտել նաև մի մասնավոր հայկական դպրոց, որտեղ սովորում էին ոչ միայն հայ երեխաներ, այլև «օտարազգի տղաք»։ Դրանք երկու կամ երեք դասարան ունեցող տարրական դպրոցներ էին։

Լատակիայի հայկական դպրոցի վերաբերյալ գրեթե տեղեկություններ չկան հայկական աղբյուրներում։ Ուստի վերապահությամբ պետք է ընդունել Վ. Կինեի հաղորդումը 8 հայկական դպրոցների գոյության մասին։ Նրա ասելով 1890-ական թվականներին Լատակիայում և համանուն կազայում կային երկու միջնակարգ, երեք արական և երեք իգական դպրոցներ՝ ընդամենը 530 աշակերտով[24]։

Լեռնային Լիբանանում բավական վաղ ժամանակներից գործում էր Զմմառի հայ կաթոլիկ վանքի հոգևոր դպրոցը։ Անգլիացի ճանապարհորդ Ջորջ Ռոբինսոնը հաղորդում է, որ 1830-ական թթ. այդ դպրոցում սովորում էին 12 երեխաներ։ Նրանք օգտագործում էին Վենետիկում պատրաստված հայերեն դասագրքեր[25]։ Զմմառի դպրոցը որոշ ընդհատումներով գոյատևում է մինչև մեր օրերը։

Սիրիահայ նոր սերնդի ուսման և դաստիարակության գործը, սակայն չէր սահմանափակվում հայկական դպրոցներով։ Դազիրի ճիզվիտական սեմինարիան (հիմնդ. 1846), Բեյրութի Սիրիական բողոքական կոլեջը (հիմնդ. 1866) և հետագայում դրանց հիմքի վրա ստեղծված ֆրանսիական (Սեն-Ժոզեֆ) և ամերիկյան համալսարանները զգալի թվով հայ ուսանողներ էին ներգրավում, ինչպես Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից, այնպես էլ Սիրիայից։ 1881—1918 թթ. այդ համալսարաններից ավարտական վկայական են ստացել 315 հայ բժիշկներ, դեղագործներ, բուժակներ և աստվածաբաններ[26]։

Այսպիսով, Սիրիայում հայ երեխաների ուսման և դաստիարակության գործը ուներ ակնբախ թերություններ։ Հայկական դպրոցներում սովորող երեխաները կազմում էին դպրոցական հասակի երեխաների

միայն մի փոքր մասը, դասատուներն ունեին մանկավարժական սահմանափակ գիտելիքներ և այլն։ Չնայած այդ և այլ կարգի թերությունների, Սիրիայի հայկական դպրոցները գնահատելի դեր էին կատարում այլացեղ և այլակրոն բնակչության ծովում ցրված հայերի ազգապահպանման գործում։

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սիրիայում գործունեության ասպարեզ են իջել բազմաթիվ մշակութային ընկերություններ։ Եթե դրանց մի մասն անունով միայն գոյություն է ունեցել, ապա եղել են այնպիսինները, որոնք զգալի դեր են կատարել դպրոցներին մղում տալու, աշխատավոր մարդկանց կուլտուր-կենցաղային հանգիստը կազմակերպելու գործում։

Մեզ հայտնի հնագույն ընկերությունն է «Ռուբինյան միությունը», որը հիմնադրվել է 1846 թ. Հալեպում։ Նրա գլխավոր նպատակն էր հայերեն լեզվի տարածումն արաբախոս հայերի շրջանում։ Հալեպում և այլ քաղաքներում կատարված հանգանակությամբ Ռուբինյան միությունը ձեռք է բերել բավական խոշոր միջոցներ[1], որոնց շնորհիվ Հալեպի հայկական դպրոցներում հայերեն լեզվի ուսուցումը սկսել է աստիճանաբար առաջադիմել[2]։

1860-ական թթ., ինչպես նշվեց, ասպարեզ է իջնում Հովհաննես Քյուրքճյանոֆի գլխավորած «Արամյան առևտրական ընկերությունը», որի ուշադրության կենտրոնում էր գտնվում նաև «Հայոց լուսավորությունը»։ Մինչև Բեռլինի վեհաժողովը, այդ նպատակին էին ծառայում ոչ միայն Սիրիայի հայկական մշակութային ընկերությունները։

Բեռլինի կոնգրեսի 61 հոդվածի ստեղծած պատրանքները նպաստեցին մի շարք ընկերությունների առաջացմանը, որոնք, թեև կրում էին մշակութային պիտակ, սակայն, տուրք տալով Խրիմյանի «երկաթե շերեփի» գաղափարին, առհասարակ հետապնդում էին ազգային-ազատագրական թաքուն նպատակներ։ Այդպիսին էր 1880 թ. գործունեության ասպարեզ իջած «Ուսումնասիրաց ընկերությունը», որը նպատակ էր դրել «Բերիո ազգայնոց մեջ ուսումն տարածել ատենախոսությամբք և ձրի դասախոսությամբք»[3]։ Հալեպի հայ «երիտասարդության կեսը» մտել էր նրա շարքերը, որպեսզի ի կատար ածի «առ ազգն ունեցած պարտականությունը»[4]։ Ուսումնասիրացը քայքայվել է ազգային ճնշման և հալածանքի ուժեղացման տարիներին։

Ուշագրավ է, որ մինչև օսմանյան սահմանադրության հռչակումը, Սիրիայում մշակութային կազմակերպությունների ստեղծումը, որպես կանոն, իգական սեռի նախաձեռնության արդյունք է: Դա բացատրվում է նրանով, որ համիդյան ոստիկանությունը կասկածանքով էր դիտում հայ երիտասարդների յուրաքանչյուր համախմբում՝ անկախ նրանց նպատակից:

1882 թ. նոյեմբերի 1-ին Հալեպում հիմնադրվել է «Տիկնանց Մարիամյան ընկերությունը», որի նպատակն էր «օժանդակել աղջկանց ազգային վարժարանին»[5]: Իր կարճատև գոյության ընթացքում ընկերությունը դրամական միջոցներ է հայթայթել դպրոցները բարեկարգելու, աղքատ աշակերտներին անվճար դասագիրք, գրենական պիտույք և այլն տրամադրելու համար: Նրա միջոցները գոյանում էին անդամավճարներից, հանդեսներից և ունևորների շրջանում կատարված նվիրահավաքումներից:

1898 թ. հոկտեմբերի 14-ին հիմնադրվեց «Դպրոցասեր տիկնանց ընկերությունը»: Ներսեսյան դպրոցի սրահում հավաքված կանայք անդամագրվել են՝ հավանություն տալով ընկերության կանոնագրին: Ընկերությունն ուներ երկու կարգի անդամ, առաջին՝ «պատվական անդամուհիք», որոնց պարտականությունն էր «հասույթի աղբյուրներ գըտնել», և երկրորդ՝ «գործող անդամունք», որոնք պետք է կապ պահպանեին դպրոցի հետ՝ սովորող աղջկանց կարիքներին ծանոթանալու և այդ կարգի այլ պարտականություններ կատարելու համար: Յուրաքանչյուր անդամ պարտավոր էր վճարել «առնվազն մի մեճիտ տաբեկան բաժնեգին»[6]:

Հալեպահայ «Տիկնանց խնամակալությունը» հիմնադրվեց 1907 թ. և բավական արդյունավետ գործունեություն ծավալեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Խնամակալությունը հնարավոր ամեն օգնություն ցուցաբերում էր Ներսեսյան դպրոցում սովորող կարիքավոր աղջիկներին, գերազանցիկներին ուղակում էր Կ. Պոլիս կամ Պարտիզակ ուսումը շարունակելու համար: Բացի այդ, նրա ծրագրում կարևոր տեղ էր գրավում առհասարակ հալեպահայ իգական սեռի շրջանում գիր ու գրականության սեր զարթնեցնելը: Այդ նպատակին էր ծառայում նրա փոքրիկ գրադարանը[7]:

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Հալեպում աճպարեզ իջավ Հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղը, որը 1913 թ. ուներ 160 անդամ[8]: Ներգրավելով բարեկեցիկ խավերի և մտավորականության առավել աչքի ընկնող ներկայացուցիչներին, բարե-

գործականը դարձավ հալեպահայ մշակութային կյանքի առանցքը։ Նրա միջոցներից օգտվում էին եկեղեցիները, դպրոցները, ուսումնատենչ պատանիներն ու երիտասարդները։ Համաշխարհային պատերազմի նախօրեին Սիրիայում անցկացված հայկական մշակութային ամենախոշոր միջոցառումները (հայ գրերի գյուտի 1500-ամյակը և այլն) կապված են նրա անվան հետ։

Դամասկոսում, Բեյրութում, Լատակիայում և այլ վայրերում գործող մշակութային ընկերությունների վերաբերյալ պահպանվել են առատ տեղեկություններ։ Դամասկոսում մեզ հայտնի հնագույն՝ «Ներսեսյան ընկերությունը» կազմակերպվել է 1849 թ. Սիրիայի մաքսատների տնօրեն Գեորգ Միսաքյանի նախաձեռնությամբ։ Ընկերության գլխավոր նպատակն էր միջոցներ հայթայթել հայկական նորահաստատ դպրոցի համար[9]։ Հալեպի նման, տարբեր ժամանակներում Բեյրութում և Լատակիայում դպրոցի հոգաբարձությունների կից գործել են տիկնանց ընտամակալություններ, որոնք, սակայն, կարճատև կյանք են ունեցել։ 1910 թվականից այդ քաղաքներում բավական աշխույժ գործունեություն են ծավալում Հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղերը։

Գյուղական վայրերում գործող մշակութային ընկերություններից առանձնապես պետք է հիշատակել «Քեսապի ուսումնասիրաց միությունը», որը հիմնադրվել է 1910 թ. հայ առաքելական, կաթոլիկ և բողոքական համայնքների մի խումբ ներկայացուցիչների կողմից։ Նրա նպատակն էր բարձրացնել Քեսապում և նրա շրջակա գյուղերում գործող հայկական դպրոցների ուսումնադաստիարակչական մակարդակը՝ առանց կրոնադավանական խտրության։ Նրա ծրագրի մեջ էր մտնում Քեսապում մի միջնակարգ դպրոց հիմնելը։ Ուսումնասիրաց միությանը միջոցներ էին տրամադրում ոչ միայն տեղի հայերը, այլև Միացյալ Նահանգներ գաղթած հայրենակիցները։ Վերահաս համաշխարհային պատերազմը խափանեց նրա ծրագրերի կենսագործումը։

Քննարկվող ժամանակաշրջանում սկսվեց սիրիահայ պարբերական մամուլի կյանքը, որը, սակայն, եղել է խիստ աղքատիկ։ 1862 թ. Հալեպում սկսեց լույս տեսնել «Ֆոաթ» պարբերականը, որը ներկայացնում էր նահանգային պաշտոնաթերթից քաղվածքներ։ Հայտնի չէ, թե «Ֆոաթ»-ը որքան ժամանակ է գոյատևել։ 1913 թ. նույնպես Հալեպում հրատարակվել է «Աղբյուր» խմորատիպ պարբերականը (խմբագիր՝ Մ. Նաճարյան)։

Մինչև օսմանյան սահմանադրությունը, ինչպես Արևմտյան Հա-

յաստանում, այնպես էլ Սիրիայում հայությունը հնարավորություն չուներ հրապարակով նշելու համահայկական նշանակություն կրող նույնիսկ մշակութային տարեդարձերն ու դարադարձերը: 1913 թ. օգտվելով երիտթուրքերի ժամանակավոր հանդուրժողությունից, Սիրիայի հայկական համայնքները մեծ ոգևորությամբ տոնեցին հայ գրերի գյուտի 1500-ամյակը: «Բյուզանդիոն» լրագիրը հաղորդում էր, որ Հալեպի տոնակատարությունը «գերազանցեց Պոլսո թաղերուն և գավառներուն մեջ այս առթիվ սարքված բոլոր հանդեսները»[11]: Քաղաքի հայ «երևելի» անձերից ստեղծվել է հանձնաժողով, որը և տարբեր ընկերությունների աջակցությամբ կազմակերպել է մի շարք հոբելյանական հանդիսություններ: Առաջինը տեղի է ունեցել նոյեմբերի 7-ին՝ հայկական դպրոցի սրահում: Նոյեմբերի 8-ին ս. Աստվածածին եկեղեցում Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հիշատակին մատուցվել է հանդիսավոր պատարագ, որին ներկա են եղել մեծ թվով պաշտոնական անձինք, այդ թվում ռուսական հյուպատոսը: Նոյեմբերի 12-ին Հալեպի «Բարոն» հյուրանոցում տրվել է հոբելյանական ճաշկերույթ, որտեղ ներկա են եղել Հալեպի նահանգապետ Ջելալ բեյը, ռուսական, ֆրանսիական, գերմանական, իտալական և պարսկական հյուպատոսները, տարբեր համայնքների ներկայացուցիչներ և հալեպահայ բազմաթիվ «երևելի անձինք» թեմակալ առաջնորդի գլխավորությամբ: Նոսվել են հայ գրերի գյուտի նշանակությունը բացահայտող բաժակաճառեր և, որ ամենակարևորն է, Ջելալ բեյը «սքանչելի ճառով մը» ոգեկոչել է Մեսրոպ Մաշտոցի հիշատակը և բարձր գնահատել «եղբայրական զգացումներու ամրապընդվիլը հայ և թուրք տարրին միջև» և այլն:

Քննարկվող ժամանակաշրջանում բազմաթիվ սիրիահայ գործիչներ նշանակալից դեր են կատարել արաբական մշակույթի զարգացման գործում: Դրանցից է Էտիպ Իսհակը (1856—1885): Չնայած իր կարճատև կյանքին, նա թողել է գրական և հրապարակախոսական պատկառելի ժառանգություն, որը զգալի չափով նպաստել է արաբական քաղաքական մտքի զարգացմանը: XIX դարի արաբական գրականության անվանի գործիչներից են նաև Իսքենդեր Աբգարիոսը, Ճան (Յուհաննա) Աբգարիոսը և ծագումով հայ ուրիշ գործիչներ:

Բժշկագիտության ասպարեզում երախտավորներից է դոկտ. Ջոն վարդապետ(յան)ը (1826—1908), որը երկար տարիներ դասախոսել է Բեյրութի ամերիկյան համալսարանի բժշկական ֆակուլտետում, իսկ կյանքի վերջին քսան տարիները նվիրել է այն ժամանակ Սիրիայում ա-

վեր գործող սուր վարակիչ հիվանդությունների և նրանց դեմ պայքարի միջոցների ուսումնասիրությանը։ Այդ բնագավառում ձեռք բերված հաջողությունների համար բժիշկ Վարդապետյանը պարգևատրվել է օսմանյան կառավարության և Գերմանիայի Վիլհելմ կայսեր կողմից։ Նրա անունով՝ «Ռյու Վարդապետ» է անվանվել Բեյրութի փողոցներից մեկը։

1886—1892 թթ. գյուղատնտես Մելքոն Սուքիասյանը ծառայել է որպես Հալեպի նահանգի գյուղատնտեսական վարչության ընդհանուր տնօրեն։ Իր բեղմնավոր գործունեության ընթացքում նա հիմնել է երկու երկրագործական վարժարան՝ Դամասկոսում և Հալեպում։

Սիրիայում քաղաքաշինության ասպարեզում գնահատելի ծառայություններ են մատուցել մի շարք հայ ճարտարապետներ։ Բիշարա Մուհանդիզ վերանվանված Մանուկ Մանուկյանը (1841—1925) շուրջ հիսուն տարի գլխավորել է Դամասկոսի և Բեյրութի ինժեներա-ճարտարապետական վարչությունները։ 1870-ական թթ. Հովսեփ Խայյաթը զբաղեցնում էր Դամասկոս քաղաքի գլխավոր ճարտարապետի պաշտոնը։ Հետագայում նա տեղափոխվել է Բեյրութ և նրա գլխավորությամբ կառուցվել են ճանապարհներ և հասարակական օգտագործման բազմաթիվ շենքեր։ 1904 թ. հայազգի էմիլ Խաշոն, նշանակվելով Լիբանանի գլխավոր ինժեների պաշտոնում, աչքի է ընկել ջրաբաշխական բազմաթիվ աշխատանքներով։

Տարբեր ժամանակներում հայերը կարևոր պաշտոններ (հյուպատոս, հյուպատոսի տեղակալ, քարտուղար, խորհրդական, թարգման և այլն) են զբաղեցրել Սիրիայի ռուսական, անգլիական, ավստրո-հունգարական, պրուսիական, ամերիկյան, իսպանական, պորտուգալական և այլ հյուպատոսարաններում։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻԲԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ 1918—1946 ԹԹ.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍԻԲԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Սիբիայում վերացվեց թուրքական նվաճողների 400-ամյա տիրապետությունը, սակայն նրան փոխարինած մանդատային ռեժիմը ոչնչով չէր համապատասխանում ազգային անկախության այն երազանքներին, որ այդ երկրի ժողովուրդները հույս ունեին իրականացնել Անտանտի պետությունների հաղթանակով։ Բացահայտելով մանդատի իմպերիալիստական բնույթը, Վ. Ի. Լենինը գրել է. «Երբ խոսում են գաղութների մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի չնչին մասի իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»[1]։

1922 թ. հուլիսի 24-ին Ազգերի լիգայի խորհուրդը հաստատեց Սիրիայի և Լիբանանի մանդատի փաստաթուղթը, որով ճշտվում էին մանդատատերի իրավասություններն ու պարտավորությունները[2]։ Այն բխում էր Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածից, որով իմպերիալիստները փորձում էին մարդասիրական գործի տեսք տալ մանդատային ռեժիմին։ Նրանում ասված էր, որ մանդատատեր պետությունները պարտավոր են որպես «քաղաքակրթական նվիրական պարտք» հոգալ իրենց խնամակալության հանձնված «ժողովուրդների բարօրության և զարգացման» մասին, ժողովուրդներ, որոնք «տակավին ի վիճակի չեն մենակ ոտքի կանգնել արդի աշխարհի դժվար պայմաններում»[3]։ Դա մանդատի ջնարակն էր։ Ըստ էության, մանդատը գաղութատիրության քողարկված ձև էր։

Մանդատի հաստատումից հետո Սիրիայում և Լիբանանում իշխանության ամենահիմնական լծակները կենտրոնացան ֆրանսիական իմպերիալիստների ձեռքում. ըստ մանդատի փաստաթղթի, նրանց էր պատկանում Սիրիայի և Լիբանանի հիմնական օրենքը՝ սահմանադրությունը մշակելու իրավունքը: Նրանց իրավունք էր տրվում նաև այդ երկրներում ռազմական ուժեր տեղաբաշխելու, տեղացիներից ոստիկանական, ժանդարմական միավորներ ստեղծելու, վերահսկելու նավահանգիստները, երկաթուղիները և կապի մյուս միջոցները:

Ֆրանսիական հանրապետության Սիրիայի և Լիբանանի գերագույն կոմիսարն անթաց թագավոր էր: Նրան էին ենթարկվում պինված ուժերը, անվտանգության օրգանները, դատարանները, ներքին ու արտաքին բոլոր գործերը: Նրա նշանակած խորհրդականները վճռող ձայն ունեին ֆինանսների, արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, լուսավորության և այլ բնագավառներում:

Իմպերիալիստներն ամենևին շահագրգռված չէին Սիրիայի և Լիբանանի սոցիալ-տնտեսական զարգացմամբ, սակայն, օբյեկտիվորեն, առաջավոր կապիտալիստական պետության՝ Ֆրանսիայի տիրապետությունը նպաստում էր այդ երկրներում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը:

Քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայում և Լիբանանում գերիշխում էր կապիտալիստական արտադրաեղանակը՝ ֆեոդալական զգալի մնացուկներով:

1. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

1918 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրվեց Մուդրոսի զինադադարի պայմանագիրը, որով Թուրքիան պարտավորվում էր անհապաղ զորացրել բանակը, Անտանտի պետություններին հանձնել Բոսֆորի ու Դարդանելի նեղուցների ամրությունները, Հիջազում, Յեմենում, Սիրիայում տեղաբաշխված կայազորները և այլն: Անգլիան և Ֆրանսիան իսկույն ձեռնամուխ եղան մի կողմից այդ պայմանագրով նախատեսված երկրամասերի ռազմական գրավմանը, մյուս կողմից Մերձավոր Արևելքի բաժանմանը՝ ըստ 1916 թ. Սայքս-Պիկո գաղտնի համաձայնագրի:

Այդ համաձայնագրով, հյուսիսային Իրաքը և արևելյան Սիրիան համարվում էին ֆրանսիական, իսկ կենտրոնական Իրաքը և Անդրհորդանանը՝ անգլիական ազդեցության գոտի: Իմպերիալիստները համաձայն էին, որ այդ գոտիների սահմաններում ստեղծվի արաբական «ան-

կախ» պետություն, կամ պետությունների ֆեդերացիա՝ առանց, սակայն, դուրս գալու իրենց ազդեցության ոլորտից: Բացի այդ, Հարավային Իրաքը կամ Բաղդադի նահանգը դրվում էր Անգլիայի, իսկ արևելյան Սիրիան, Լեռնային Լիբանանը, Կիլիկիան և Հյուսիսային Միջագետքը՝ ֆրանսիական գաղութարարների տիրապետության ներքո: Պաղեստինում նախատեսվում էր հաստատել միջազգային վարչություն՝ հետագա բանակցություններով:

Պաղեստինի ռազմաճակատում թուրքերի պարտությունից հետո արաբական ազգային-ազատագրական ղինված ուժերը մտան Դամասկոս 1918 թ. հոկտեմբերի 5-ին էմիր Ֆեյսալը կազմեց Սիրիայի առաջին ազգային անկախ կառավարությունը, որի ղեկավար նշանակվեց Ալի Ռիզա ալ-Ռիկաբին: Ստեղծվեց օրենսդրական խորհուրդ, հիմնվեցին դատարաններ, նշանակվեցին նահանգապետներ և այլն: Այն ժամանակ, երբ Դամասկոսում Սիրիայի ազգային անկախության հիմքերն էին դրվում, իմպերիալիստները երկիրը մասնատեցին հարավային կամ անգլիական, հյուսիսային կամ ֆրանսիական և արևելյան կամ արաբական վերահսկողության գոտիների, խոր հիասթափություն առաջացնելով ողջ արաբական աշխարհում: 1918 թ. նոյեմբերի 8-ին հրապարակվեց անգլո-ֆրանսիական համատեղ հայտարարությունը, որով իմպերիալիստները փորձում էին հանգստացնել արաբական ժողովուրդներին, նրանց խոստանալով «լրիվ ու վերջնական ազատություն», «ազգային կառավարությունների ստեղծում» և այլն:

1919 թ. մայիսին[1] այդ բոլոր երեք գոտիներում սիրիական կառավարությունն անցկացրեց Սիրիական գլխավոր կոնգրեսի (Մու՝աթամար աս-Սուրի ալ-ամ) ընտրություններ: Հունիսի 2-ին կոնգրեսն ընդունեց մի ծրագիր («Դամասկոսի ծրագիր»), որով ազգային-ազատագրական ուժերը պահանջում էին Սիրիայի «բացարձակ քաղաքական անկախությունը»: Տերիտորիալ առումով Սիրիայի պետությունը պետք է ընդգրկեր մի ընդարձակ տարածություն՝ ժամանակակից ամբողջ Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը: Այդ պետությունը պետք է լիներ սահմանադրական միապետություն, և նրա ապագա թագավոր առաջարկվեց էմիր Ֆեյսալը:

Սակայն անգլո-ֆրանսիական իմպերիալիստները շարունակում էին քայլ առ քայլ իրականացնել Սաքս-Պիկո համաձայնագրի կանխագծումները: 1919 թ. նոյեմբերի 1-ին արևմտյան Սիրիայում բրիտանական զորքերը սկսեցին փոխարինվել ֆրանսիական զորքերով: Նոյեմբերի

21-ին Մերձավոր Արևելքի ֆրանսիական զորքերի ընդհանուր հրամանատար գեներալ Գուրոն նշանակվեց Սիրիայի գերագույն կոմիսար։ Սիրիական կոնգրեսը կոչ արեց ժողովրդին՝ դիմադրել ֆրանսիական զորքերին և ընդունեց օրենք ղինադադարության մասին։ Դեկտեմբերին Լաոդիկիայում և Բաալբեկում ղինաբախումներ տեղի ունեցան ֆրանսիական զորքերի և արաբական ղինված ուժերի միջև։

Սիրիայի ազգային-ազատագրական պայքարի ղեկավարների առաջ կար երկու ուղի. կամ հետևողականորեն կռիվը շարունակել մինչև ազգային անկախության հասնելը, կամ զիջումներ կատարելով համաձայնության գալ ֆրանսիական իմպերիալիստների հետ։ Էմիր Ֆեյսալը և նրա համախոհները ընտրեցին երկրորդ ուղին։

1920 թ. հունվարի 6-ին Փարիզում ստորագրվեց ֆրանս-սիրիական համաձայնագիրը, որով ֆրանսիական կառավարությունը «երաշխավորում» էր Սիրիայի անկախությունը, իսկ Էմիր Ֆեյսալը պարտավորվում էր Ֆրանսիայից խորհրդականներ, մասնագետներ, հրահանգիչներ խընդրել Սիրիայի պետական ապարատը, բանակը, ոստիկանությունը, ժանդարմերիան և այլ օրգաններ կազմակերպելու համար։ Դա լիակատար կապիտուլյացիա էր։ Սիրիական կոնգրեսի գործադիր կոմիտեն միաձայն մերժեց այդ ստորացուցիչ համաձայնագիրը։

Մարտի 6-ին Դամասկոսում բացվեց Սիրիական կոնգրեսը Հաշիմ ալ-Աթասիի նախագահությամբ, մարտի 8-ին հայտարարվեց Սիրիայի միասնական ու անկախ պետության ստեղծման և Էմիր Ֆեյսալի թագավոր հռչակվելու մասին։ Հաջորդ օրը ալ-Ռիկաբին կազմեց Սիրիայի թագավորության առաջին կառավարությունը, որը և դիմեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին՝ որպեսզի ճանաչեն Սիրիայի թագավորությունը։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների պատասխանը հայտնի դարձավ ապրիլի 25-ին, երբ Սան-Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի և Լիբանանի մանդատը հանձնվեց Ֆրանսիային։

Հուլիսի 14-ին Դամասկոս հասավ ֆրանսիական կառավարության վերջնագիրը, որով Ֆեյսալ թագավորից պահանջվում էր՝ ճանաչել ֆրանսիական մանդատը, ֆրանսիական իշխանությունների տնօրինությանը հանձնել Ռայաք-Հալեպ երկաթուղին, ցրել բանակը, ֆրանսիական թղթադրամն ընդունել որպես Սիրիայի ազգային դրամ, պատժել բոլոր նրանց, ովքեր հակաֆրանսիական գործունեություն են ծավալում և այլն։ Կոնգրեսը մերժեց վերջնագիրը, իսկ Ֆեյսալը և նրա համախոհները՝ ձևական բողոք հայտնելուց հետո արտահայտվեցին նրա ընդունման օգտին։

Հուլիսի 20-ին Սիրիայի տարբեր քաղաքներում հայրենասիրական ուժերը հանդես եկան հակաֆեյսալական բողոքի ելույթներով։ Դամասկոսում ցուցարարները գրավեցին դինապահեստը և գրոհեցին արքայական պալատի վրա, սակայն ազգային գվարդիան փակեց նրանց ճանապարհը։ Զոհվեց ավելի քան 300 մարդ։

Մինչ սիրիական կառավարությունը սեփական ժողովրդի արյունն էր թափում, ֆրանսիական զորքերը գրավելով Շթորան, Զահլեն, Այնջարը, Վատի ալ-Հարիրը, ընդհուպ մոտեցան Սիրիայի մայրաքաղաքին։ Հուլիսի 24-ին Մայսալունի լեռնանցքում (Դամասկոսից 28 կմ) սիրիացիների պատրաստված հրացանների, սրերի և բրերի դեմ ֆրանսիական իմպերիալիստները հանեցին ինքնաթիռներ, տանկեր և ռազմական այլ տեխնիկա։ Ճակատամարտը տևեց չորս ժամ։ Մայսալունը ծածկվեց 1.200 սիրիացիների դիակներով։ Հաջորդ օրը ֆրանսիական զորքերը մտան Դամասկոս, մինչև հուլիսի վերջը՝ նաև Հալեպ ու մյուս քաղաքները և ձեռնամուխ եղան մանդատի հաստատմանը։

Գործելով բաժանիր որ տիրես սկզբունքով, 1920 թ. օգոստոսի 31-ին գերագույն կոմիսար Գուրոն դեկրետով լեռնային Լիբանանն անջատեց Սիրիայից և, նրան կցելով Բեկաայի դաշտավայրը և Բեյրութ, Տրիպոլի, Սայդա, Սուր քաղաքները, ստեղծեց «Մեծ Լիբանանի պետությունը»։ Սեպտեմբերին, նույնպես դեկրետով, ստեղծվեցին Հալեպի, Դամասկոսի, Ալավիտի «անկախ» պետությունները, և վարչակառավարման հատուկ ռեժիմ հաստատվեց Ջեբել Դրուզում։ 1921 թ. հոկտեմբերին Ալեքսանդրետի սանջակը ճանաչվեց ինքնավար մարզ՝ Հալեպի պետության սահմաններում։ 1922 թ. հունիսի 28-ին ֆրանսիական իմպերիալիստները, ելք որոնելով այդ կարգի տրոհման հետևանքով առաջացած դժվարություններից, ստեղծեցին «Սիրիական ֆեդերացիա»՝ Դամասկոսի, Հալեպի և Ալավիտի պետությունների միավորումով։ 1924 թ. դեկտեմբերին ֆեդերացիան լուծարքի ենթարկվեց, և ստեղծվեց Սիրիայի պետությունը՝ Հալեպի և Դամասկոսի պետությունների միավորումով։ Ջեբել Դրուզը և Ալավիտի պետությունը Սիրիայի կազմի մեջ մտան միայն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։

Սիրիայի ժողովուրդը չհաշտվեց ֆրանսիական մանդատի հետ։ 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին հակամանդատային ելույթներ տեղի ունեցան Հաուրանում, Հալեպում, Լատակիայում։ 1921 թ. օգոստոսին ապստամբություն բռնկվեց Ջեբել Դրուզում, սեպտեմբերին՝ Եփրատի հովտում, Դեյր էզ-Զորում։ 1922 թ. ապրիլին Դամասկո-

ատում հինգ օր շարունակ տեղի ունեցան հակաիմպերիալիստական ցույցեր ու գործադուլներ։ 1922—1924 թթ. գյուղացիական ապստամբություններ բարձրացան Բեկաայում, Ալեքսանդրետի սանջակում և այլ վայրերում։ 1925—1927 թթ. Ջեբել Դրուզը վերստին բռնկվեց։ Ապըստամբությունը, տարածվելով ողջ հարավային Սիրիայում, վերաճեց ազգային-ազատագրական պատերազմի ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետության դեմ։

Այդ շարժումները խեղդվեցին արյան մեջ։ Սակայն հողը շարունակեց այրվել գաղութարարների ոտքի տակ։

2. ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՀՈՍԸ։ ՈՐԲԱՀԱՎԱՔԸ

Համաշխարհային պատերազմի ավարտին Սիրիայի տարբեր քաղաքներում մնացել էին 70—75 հազար հայեր, որոնց բնաջնջել թուրքերը չէին հասցրել։ Բացի այդ, հայ ժողովրդի հազարավոր զավակներ դեռևս մնում էին անապատում, թուրքական և արաբական աստիճանավորների հարեմներում։ Մոսուլում կային 8000 հայ աքսորականներ, ճնշող մեծամասնությամբ կանայք և երեխաներ, Սիրիական անապատում շամմար ցեղախմբի մոտ՝ «մեծ թվով հայ կանայք և երեխաներ»[1]։ Տղաները թլպատված էին, կրում էին արաբական անուններ, իսկ աղջիկներին և մանկամարդ կանանց վաճառում էին[2]։ Լինելով Դեյր էզ-Զորում և այլ աքսորավայրերում, Վաղարշակ վարդապետը հաղորդում էր. «Եփրատի եզերքներու վրա հաստատված բոլոր վրաններուն մեջ՝ ... Ճիպիրեհեն մինչև Մուսուլ և Պաղտատ... անհամար ու անթիվ (հայ) աղջիկներ և երեխաներ կգտնվին...»[3]։ Մանկամարդ կանայք մնում էին «թուրք և արաբ հարեմներու մեջ արգելափակված, ժամեժամ սպասելով աղատարար փրկիչի մը»։

Մուդրոսի զինադադարի պայմանագրի 22-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր Անտանտի պետություններին հանձնել բոլոր ռազմագերիներին, այդ թվում երկրի խորքերը քշված հայերին։ Դրանով վերապրողները կամ ցեղասպանությունից ճողոպրած հայերը հնարավորություն ձեռք բերեցին վերադառնալու հայրենի քաղաքներն ու գյուղերը։ Մղում տրվեց նաև որբահավաքի գործին։

Որբահավաքը սկսվել էր դեռևս 1915 թվականի աշնանը, սակայն մինչև պատերազմի ավարտը քիչ բան էր արվել։ Հալեպում հիմնադրվել էր մի որբանոց՝ Հայկական որբանոցը, որը ֆինանսավորում էին մի շարք ամերիկյան բարեգործական ընկերություններ։ 1918—1919 թթ.

որբահավաքի գործը նոր մղում ստացավ։ Նրա գլուխ կանգնեցին Հայ ազգային միությունը, Հայ ազգային պատվիրակությունը (Փարիզ), Հայ ազգային խնամատարությունը (Կ. Պոլիս) և մի շարք ամերիկյան, դաստիական, շվեյցարական և այլ բարեգործական կազմակերպություններ։

Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ որբահավաքի ընթացքը, եթե Հիջազի գահակալ Հուսեյն իբն Ալին և նրա որդի էմիր Ֆեյսալը մարդասիրաբար չմիջամտեին գործին։ 1918 թ. սկզբներին Հիջազի գահակալը, ընդառաջելով Պողոս Նուպար փաշայի դիմումին, օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդի դժբախտացած զավակներին։ Մաանի և Ակաբայի կառավարիչներին կարգադրվեց հայերին հանձնել «մեծ ու փոքր, ամուսնացած և ամուրի աղջիկներն ու մանչերը»[4]։

Տեղական իշխանությունները հովանավորում էին Դեյր էզ-Զորում, Ռակկայում, Ռաս ուլ-Այնում և այլ վայրերում գործող որբահավաք մարմիններին, որոնց «գլխավոր գործն» էր «անապատի զանազան վայրերեն հասնող որբերը, աղջիկները և այրինները հավաքելով Հալեպ ղրկել»[5]։ Առաջին նվազ բավական թվով որբեր են հավաքվել Նսեբինի, Դեյր էզ-Զորի, Համայի, Սրուճի, Բիրեջիկի, Ուրֆայի և հարևան շրջանների քրդերի, թուրքերի, արաբների տներից, սակայն, ինչպես նշել է Ա. Սյուրմեյանը, նրանց ճնշող մեծամասնությունը պատկանում էր արաբական սեռին, քանզի ըստ իսլամական կանոնների աղջիկներին և մանկամարդ կանանց չէր թույլատրվում հեռանալ կանանոցից[6]։ Էմիր Ֆեյսալը «խիստ հրահանգներ» է տվել, որպեսզի իրենց հարազատներին հանձնեն բոլոր հայուհիներին, նույնիսկ նրանց, ովքեր արաբների հետ կապված են նիքյահով և երեխաներ ունեն[7]։

1919 թ. հունվարին Փարիզում Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուպարի հետ ունեցած տեսակցությունից հետո էմիր Ֆեյսալը հեռագրով կարգադրել է ալ-Ռիկաբիին պարզել, թե «Ո՞ր արաբներուն և աշիրեթներուն քով հայ կիներ կամ աղջիկներ կամ որբեր կգտնվին», որպեսզի «շուտով այդ հայերը, առնվելով արաբներու քովեն, հանձնվին հայերու կազմած ազգային ներկայացուցչական մարմնին»[8]։ Փարիզից վերադարձին էմիր Ֆեյսալը խստագույն միջոցներ է ձեռք առել, որպեսզի արաբները համապատասխան քաղաքի կամ շրջանի ոստիկանությանը հայտնեն իրենց մոտ գտնվող հայերի մասին և այլն։ Այնուամենայնիվ ուժեղ դիմադրության էր հանդիպում որբահավաքի գործը։

1919 թ. հունիսի 2-ին՝ Սիրիական կոնգրեսի գումարման նախ-

օրեին, էմիր Ֆեյսալը այցելեց Հալեպ, որտեղ հանդիպումներ ունեցավ քաղաքական ու կրոնական գործիչների հետ, եղավ համայնքային կենտրոններում, այդ թվում հայոց առաջնորդարանում։ Հայ ազգային միության ներկայացուցիչը հանդես է եկել ողջույնի ճառով, որտեղ վերստին է արծարծել որբերի հարցը։ Նա ասել է. «Հայ կիներու, աղջիկներու և մանչերու մեծ թիվ մը, բռնագաղթի պատճառով հեռացվելով իրենց մայր երկրեն, կգտնվի Իրաքի և Սուրիո քաղաքաբնակ և վաչկատուն արաբներուն քով։ Տեղական կառավարության մոտ շատ դիմումներ եղած են, սակայն ապարդյուն։ Արդ ... կխնդրենք, որ շերիֆական հրաման ընեք ընդհանրացնելու թագավորական այն հրամանները, զոր ձեր վեհափառ հայրը տված էր Մաանի և Ակաբայի վարչություններուն...»[9]։ Այդ հանդիպման ժամանակ քննարկվել է նաև «նիքյահով ամուսնացածներու և վերադառնալ չուզողներու» հարցը։ Որոշվել է այդպիսիներին 15 օրից մինչև մեկ ամիս պահել մի «չեզոք» կազմակերպության մոտ և այնուհետև միայն նրանց հարց տալ, թե ցանկանո՞ւմ են վերադառնալ հայության գիրկը։ Մի շաբաթ հետո էմիր Ֆեյսալից ստացվել է հետևյալ գրությունը. «Հալեպի զինվորական կառավարիչ Ճաֆիր փաշային գրեցինք, այսօր, ձեռք առնել բոլոր կարելի միջոցները, և թերթերու մեջ հրատարակելու, թե ով որ իր քով ունի հայ կին, մանչ կամ աղջիկ, ու կջանա պահել ու չհանձնել իրենց տերերուն կամ կառավարության, անմիջապես պիտի ենթարկվի խիստ պատիժներու։ Կխնդրվի Ձեզմէ, որ ցույց տաք նույն կառավարչին անոնց գտնված տեղերը, որպեսզի ձեռնարկի զանոնք վերադարձնելու գործին...»[10]։

Արդեն հունիսի վերջերին, ինչպես հաղորդում է «Կիլիկիա» լրագիրը, «հայ կիներու, աղջիկներու և մանչերու հավաքման գործը բուռն թափ» էր ստացել, համարյա ամեն օր Հալեպ էին ժամանում «շրջակա քաղաքներեն, գյուղերեն և վրաններեն ազատվածներու փոքր, թե մեծ խումբեր, ամենքն ալ մերկ, ամենքն ալ աղքատ»[11]։ Լցվել էին ոչ միայն Հալեպի որբանոցները, այլև Դեյր էզ-Զորում, Համայում, Ռակկայում և այլ անապատային կամ անապատամերձ վայրերում հաստատված որբահավաք կայանները։

Որբահավաքի գործը շարունակվեց նաև հետագա տարիներին, սակայն որբահավաք կազմակերպություններին հնարավորություն չտրվեց զբաղվելու այն բազմահազար որբերի ճակատագրով, որ մնացել էին Թուրքիայում։ Հայ ժողովրդին վերադարձվեց նրա դժբախտացած զավակների միայն մի փոքր մասը։

1918 թ. դեկտեմբերի 4-ին Հալեպում կայացավ ցեղասպանությունից ճողոպրած հայերի միտինգը, որի բանաձևում ասված էր. «Մենք մեր ծննդավայր քաղաքներեն ու գյուղերեն բռնագաղթի դատապարտված կամ աքսորվածներեն վերապրող հայերս՝ արհավիրքեն և չլսված կերպով չարչարված և տանջված թուրքերեն, հրաշքով ազատված և ներկայիս Հալեպ ապաստանած, այսօր միտինգի հավաքված, թվով մոտ 50.000 հոգի՝ էրիկ մարդ, կին և մանուկ, մեր ծայր աստիճան պժգանքը կհայտնենք թուրք վայրագության դեմ, վայրագություն մը, որ երբևիցե պատմությունը ճանչցած ըլլա, և հանուն մեկուկես միլիոն կոտորված մերայիններուն, հանուն անոնց այրիներուն և անոնց որբերուն... մենք՝ հիմնված դաշնակիցներուն կողմե բանաձևած սկզբունքներուն վրա, կպահանջենք. 1. Անմիջապես պարպումը Հայաստանի և Կիլիկիո՝ թուրք բռնակալներու կողմե և այդ հողամասերուն դրավումը համաձայնական և հայկական ուժերուն միջոցավ: 2. Հայտարարություն հայոց անկախության և անմիջական հաստատությունը հայկական առժամյա կառավարության մը, և կարճ միջոցի մը մեջ ևս բռնագաղթի ենթարկված մերայնոց իրենց բնակավայրերուն մեջ դետեղումը: 3. Համաձայնական պետությանց կողմե պաշտպանություն այն հայերուն, որոնք. ներկայիս կգտնվին դեռ թուրք լուծին տակ: 4. Վերադարձվիլը և հայ կառավարության կողմե յուրացվիլը ամեն շարժուն և անշարժ ինչքերուն, որոնք կպատկանին մեռցված հայերուն և կամ որոնք մեռած են բռնագաղթի ընթացքին ու օրինավոր ժառանգորդներ ձգած չեն: 5. Վերաշինություն և վնասուց հատուցում բոլոր վնասուց և համայնքային և անհատական ամեն կորստից: 6. Ազատագրումը բոլոր կանանց և բոլոր առևանգված ու բռնաբարված մանուկներուն, բոնի ամուսնացյալներուն կամ ծախվածներուն՝ առաջ թե ետք բռնագաղթեն, ինչ պատրվակով ալ որ եղած ըլլան: 7. Ամենախիստ կերպով պատժվիլը ջարդարարներուն և հայ դժբախտության պատճառ եղողներուն...»[12]:

Հայ ազգային պատվիրակությունը, օգտագործելով այդ բանաձևը, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին մի անգամ ևս հիշեցրել է «փոքր դաշնակցին» տրված խոստումները...

Մուդրոսի պայմանագիրը ստորագրելու պահին Ֆրանսիան բավարար չափով զորքեր չուներ Մերձավոր Արևելքում՝ Կիլիկիայի ռազմական գրավումը իրականացնելու համար: 1918 թ. նոյեմբերի 22-ին Հայկական լեգեոնի առաջին գումարտակը, իսկ հետագա մի շաբաթվա ընթացքում նաև մյուսները ուղարկվեցին Կիլիկիա, սակայն դրանք չէին կարող գրավել հեռացող թուրքական զորքերի տեղը: Ուստի Ֆրանսիա-

կան հրամանատարությունը համաձայնվեց, որպեսզի անգլիական զորքեր ուղարկվեն Կիլիկիա։ Այդ կարգադրությամբ, Կիլիկիայում ամբողջ զինվորական իշխանությունը կենտրոնացվեց անգլիացիների ձեռքում։ 1919 թ. հունվարի 23-ին «գրավված թշնամու երկրամասերի հյուսիսային գոտու» (Ադանայի վիլայեթը, բացի Սելեֆքեի կազայից) վարչակառավարման վերահսկողության ղեկավար նշանակվեց ֆրանսիական բանակի գնդապետ Բրեմոնը, որն ենթարկվում էր անգլիական զորահրամանատար գեներալ Ալենբիին։ Այդ հյուսիսային գոտուց արևելք ընկած Մարաշը, Այնթապը, Ուրֆան և Հալեպը կազմում էին մի առանձին շրջան, որի վարչակառավարման ֆունկցիաները դրվեցին անգլիական «անապատի հեծյալ բանակի» (Desert mounted corps) վրա։

1919 թ. փետրվարի 1-ին գնդապետ Բրեմոնը ժամանեց Ադանա և անցնելով իր պարտականությունների կատարմանը, հայտարարում էր «Մեր ցանկությունն է, որ հայերը տեր դառնան իրենց երկրին։ Մենք կառաջնորդենք զիրենք, որ աճին, մեծնան և սկսին ինքզինքնին կառավարելու գործին մեջ. հաջողիլ. ան առեն մնաք բարով պիտի ըսենք ու հեռանանք»[13]։ «Սիրիայում և Հայաստանում ֆրանսիական հանրապետության գերագույն կոմիսար» գեներալ Ժորժ Պիկոն ևս հայտարարել է. «Կիլիկիան հայուն դարավոր հայրենիքն է, Կիլիկիան ազատագրվեցավ հայ կամավորներու թափած արյամբ և, ուստի, Կիլիկիան հայուն պիտի ըլլա»[14]։ Նա միաժամանակ կոչ էր անում Սիրիայի, Միջագետքի և այլ երկրների հայ գաղթականներին՝ համախմբվել Կիլիկիայում[15]։

Հավատալով այդ կոչերին և հայտարարություններին, բազմահազար հայեր վերադարձան Կիլիկիա։ Տարբեր քաղաքներից և շրջաններից նրանք մի կերպ հասնում էին Հալեպ, այստեղից էլ Գերագույն կոմիսարության «միջոցներով և ծախսերով» տեղափոխվում էին Կիլիկիա[16]։

Մինչև 1919 թ. վերջերն արդեն Կիլիկիա էին վերադարձել շուրջ 150.000 հայեր, որոնց 60.000-ը տեղաբաշխված էր Ադանայում, 12.000-ը՝ Զորք-Մարզվանում (Դեորթ-Յոլ), 8.000-ը՝ Հաճընում, 3—4.000-ը՝ Տարսոնում, 2—3.000-ը՝ Մերսինում, 8—10.000-ը՝ Մսիսում (Մամեստիա), Ինջիրլիում, Հասան-Բեյլիում, Օսմանիեում և այլուր[17]։ Ավելի քան 50 հազար հայեր գնացել հաստատվել էին Մարաշում, Այնթապում, Զեյթունում և նրանց շրջակա գյուղերում[18]։ Բացի այդ, Կիլիկիա էին ուղարկվել շուրջ 10.000 հայ որբեր[19]։

Հուսադրվելով ֆրանսիական գաղութարարների խոստումներից, Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս փաշան ընդհուպ պատ-

բաստվում էր Փարիզից անցնել Կիլիկիա և ստանձնել իշխանությունը։ Սակայն նա այդ քայլը չարեց, քանի որ հորիզոնը սկսել էր մթագնել Կիլիկիայում։ Նրան վախեցնում էր հատկապես այն, որ ֆրանսիական դիվանագետներն արդեն փորձում էին «լեզու գտնել» քեմալականների հետ՝ զիջումների ճանապարհով։

Արդարև ֆրանսիացիները ոչ միայն չէին հարգում լեգեոնականների թվաքանակը քսան հազարի բարձրացնելու խոստումը, այլև հարցականի տակ էին դրել առհասարակ Լեգեոնի գոյությունը։ Ազգային պատվիրակությանը ուղարկված իր զեկուցագրում Վ. Փորթուգալյանը գրում էր. «Խեղճ Հայկական լեգեոնը հարձակումի կենթարկվի թե թուրքերուն, թե ֆրանսիացիներուն և թե անգլիացիներուն կողմեն»[20]։ Նա հաղորդում էր, որ ֆրանսիական հրամանատարությունը դադարեցրել է «զինվորագրության դիմումների» ընդունումը, և զգալի թվով լեգեոնականներ պահանջում են զինաթափվել։ 1919 թ. հունիսին Հայկական լեգեոնից մնացել էին միայն բեկորներ։ Ադանայում կային շուրջ 500, իսկ շրջաններում՝ մի քանի հարյուր լեգեոնականներ, որոնք, ինչպես նշել է Մ. Տամատյանը, այնուամենայնիվ «նախախնամական դեր մը» կատարեցին Մարաշի, Սսի, Այնթափի, Հաճընի, Ուրֆայի և այլ վայրերի հայության ինքնապաշտպանության գործում[21]։

1919 թ. սեպտեմբերի 15-ին բրիտանական զորքերը քաշվեցին Կիլիկիայից և նրանց տեղը գրավեցին ֆրանսիական զորքերը։ Նոյեմբերին Մուստաֆա Քեմալը բողոքեց ֆրանսիական դրավման դեմ և, անտեսելով անգլո-հունական վտանգը, ազգային պատերազմ սկսեց Կիլիկիայի ճակատից։ 1920 թ. հունվարի 21-ին բռնկվեց վաղուց նախապատրաստվող հակաֆրանսիական ապստամբությունը, որը տևեց մինչև փետրվարի 11-ը՝ ֆրանսիական զորքերի անփառունակ նահանջը Մարաշից։ Մարաշի և նրա շրջակա գյուղերի 20.000 հայերից 12.000-ը զոհվեց կռիվների ժամանակ և նահանջի ճանապարհին, 2000-ը ֆրանսիական զորքի հետ նահանջեց Ադանա, մնացած 8000-ը զանգվածաբար գաղթեց Սիրիա[22]։

Մարաշի նահանջն ազդարարում էր ամբողջ Կիլիկիայից ֆրանսիական զորքերի հեռացման սկիզբը, սակայն ֆրանսիական դիվանագետները համառորեն կառչած էին մնում Կիլիկիայից։ 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Անգլիան համաձայնվեց, որ Կիլիկիան միացվի Սիրիային, սակայն այդ զիջումը ոչ մի իրական արժեք չուներ, քանի որ ֆրանսիական զորքերը չէին կարող պահել Կիլիկիան։

1920 թ. օգոստոսի 19-ին գեներալ Գուրոն հրապարակեց Հայկական լեգեոնի դինացրման հայտարարությունը: Նա խոստովանել է, որ հայ լեգեոնականներն Արարայի ճակատամարտից հետո էլ ծառայեցին «միևնույն անձնվիրությամբ և միևնույն արիությամբ»: Սեպտեմբերի 4-ին գնդապետ Բրեմոնը, հրաժարվելով իր պաշտոնից, հեռացավ Կիլիկիայից: Պարզ էր, Ֆրանսիան հրաժարվել էր Կիլիկիայի մանդատից, սակայն փորձում էր սեփական շահերն ապահովող պայմանագիր կնքել Թուրքիայի հետ:

1920 թ. հոկտեմբերի 15-ին ֆրանսիական իմպերիալիստների հերթական զոհը դարձավ Հաճընը, որը լրիվ թողնված էր սեփական բախտին: Քեմալական զորքերն ու չեթեները հրկիզեցին քաղաքը և գազանաբար կոտորեցին նրա համարյա ողջ ազգաբնակչությունը՝ վեց հազար հայեր: Միայն 380 մարդուց բաղկացած մի ջոկատի հաջողվեց ճեղքել պաշարման օղակը և, անընդհատ մարտեր մղելով հետապնդող թշնամու դեմ, հասնել Ջիհան, այստեղից էլ՝ Ադանա[23]:

1921 թ. մարտի 9-ին Լոնդոնում ստորագրվեց ֆրանս-թուրքական պայմանագիրը, որը, սակայն, չբավարարելով քեմալականներին, չհղյալ հայտարարվեց: Թուրքերն անդիջող էին դարձել, քանի որ ձեռք էին բերել ռազմական գործողությունների նախաձեռնությունը: Պաշարելով և բնաջնջման սպառնալիքի տակ պահելով Կիլիկիայի գլխավոր քաղաքները, նրանք կամենում էին թելադրել հաշտության իրենց պայմանները:

Մինչ շարունակվում էին ֆրանս-թուրքական բանակցությունները, զանգվածային բնույթ էր ստանում հայերի և հույների արտագաղթը: Առաջինը դուրս եկան այնթապցիները: 1921 թ. կեսերին Այնթապի 18.000 հայերից 14 հազարը գաղթեց Հալեպ[24]: Օգոստոսին 1058 զեյթունցիներից միայն 471-ին հաջողվեց թշնամու պաշարման գիծը ճեղքել և հասնել Քիլիս՝ ֆրանսիական գրավման գոտին, այստեղից էլ՝ Սիրիա[25]:

1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական պայմանագրով Ֆրանսիան պարտավորվում էր երկու ամսվա ընթացքում հեռանալ Կիլիկիայից: Պայմանագրի 6-րդ հոդվածը, որով Թուրքիան խոստանում էր հարգել «փոքրամասնությունների իրավունքները», չէր կարող վստահություն ներշնչել Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությանը, հատկապես հայերին և հույներին:

Ֆրանսիական գաղութարարները միջոցներ ձեռնարկեցին արտագաղթի առաջն առնելու համար: Նոյեմբերի 8-ին գեներալ Գուրոն կի-

լիկիայի քրիստոնյա աղգաբնակչությանը դիմեց մի կոչով, որտեղ ասված է. «Կատարյալ ներում հայտարարված է։ Փոքրամասնությունների իրավունքները հաստատված են նույն հիմքի վրա, ինչ մեծ պատերազմի ավարտին Եվրոպայում կնքված նույն բնույթի համաձայնագրում։ Առավել հիմնականն այն է, որ Անգորայի կառավարությունը պարտավորվում է բոլոր բնակիչներին՝ առանց ծագումը, ազգությունը, լեզուն կամ դավանանքը հաշվի առնելու, ապահովել նրանց ազատություն և ունեցվածքի պաշտպանություն։ Մնացեք, ուրեմն, ձեր օջախներում, ձեր աշխատանքում, ապրեցեք միասնաբար օսմանյան կառավարության ներքո, որն իր վրա հանդիսավոր պարտականություն է վերցնում հովանավորելու, և վստահ եղեք, որ դուք միշտ լրիվ ապահովված կլինեք Ֆրանսիայի հոգատարությամբ։ Մնկնել նշանակում է՝ դիմել քայքայիչ արկածախնդրության՝ անորոշ ու կասկածելի ելքով։ Մնալ նշանակում է պահպանել ձեր նախնիների աշխատանքի պտուղները, և բարգավաճման հասնելու խաղաղ պայմաններում»[26]։

Նոյեմբերի 23-ին Ֆրանկլին Բույոնը, գնդապետ Կիտլան և Անկարայի կառավարության երկու ներկայացուցիչներ ժամանեցին Ադանա՝ արտագաղթը կանխելու առաքելությամբ, սակայն, ինչպես նշել է Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը, երբ նրանք «եկան..., Ադանան արդեն պարպված էր ու հազիվ 1000 հայ մնացած էր, մեծ մասը պաշտոնյաներ. անոնք ալ հանձնումեն առաջ և հանձնման օրը՝ քաշվելով պաշտոններեն մեկնեցան...։ Ֆրանսիացիք գաղթող ժողովուրդը վերադարձնելու իբրև ապահովություն փափաքեցան, որ գոնե մենք մնանք...։ Մենք մեկնեցանք (նոյեմբերի) 25-ին, երբ ոչ քահանա, ոչ եկեղեցի, ոչ դպրոց և ոչ ժողովուրդ մնացած էր։ Ադանայեն, Համիդիայեն, Օսմանիայեն, Տարսոնեն, Մերսինեն և Դեորթ-Յոլեն բնիկ ու գաղթական 45—50.000 հայեր ցրվեցան...»[27]։ Դա Կիլիկիայից արտագաղթի վերջին ալիքն էր։

1921 թ. նոյեմբերին Մերսինի և Ալեքսանդրետի նավահանգիստներում՝ բաց երկնքի տակ կուտակվել էին ավելի քան 25 հազար հայեր։ Սահակ Բ կաթողիկոսը գրում էր. «Մերսին տասնյակ հազարներով՝ ցուրտ ու անձրևային եղանակին, բացօթյա մնացած են, Տեորթ-Յոլեն՝ մեկ քառորդը փոխադրված է Ալեքսանդրետ և... ցեխերուն մեջ կքաշքըշվին. տասն հազար ալ տեորթյոլցի ու ամանոսցի օրե օր մահվան կամ ազատարար նավերու կսպասեն»[28]։ Բայց այսպես կոչված «Սիբիայում և Հայաստանում ֆրանսիական հանրապետության Գերագույն կոմիսարը» ոչ միայն մերժում էր արտագաղթողներին ընդունել Սիբիա-

յում, այլև չէր կամենում նավեր տրամադրել, որպեսզի նրանց դուրս բերեն «Կիլիկիայի դժոխքից»։

Անգլիացիներն իրենց հերթին Եգիպտոսի, Կիպրոսի և Պաղեստինի դռները փակեցին «փոքր դաշնակցի» բեկորների առաջ։ 1921 նոյեմբերի 30 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «...Կիլիկիայի կողմերեն եկող հայերու Պաղեստին մուտքը արտոնվելու համար կատարված դիմումները բաղձացված արդյունքը չտվին դժբախտաբար, կառավարական նոր օրենքի մը բացորոշ տրամադրության համաձայն նոր գաղթականներու Պաղեստին մուտքը թույլատրված չլինելով»[29]։ Կիպրոս մուտքի իրավունք էր տրվում միայն նրանց, ովքեր կարող էին առաջին կամ երկրորդ կարգով ճանապարհորդել։ Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այստեղ բացառվում էր հայ գաղթականների մուտքը։ Այդ առումով բնութագրական է «Բոնոմ» շոգենավի 217 հայ գաղթականների նկատմամբ Եգիպտոսի բրիտանական իշխանությունների անմարդկային վերաբերմունքը։ Եգիպտահայերի դիմումը դեներալ Ալլենբիի «մարդասիրական զգացմանց» մնացել է անհետևանք և ... շոգենավը շաբաթներ Ալեքսանդրիայի նավահանգստում սպասելուց հետո մեկնել է այլուր...[30]։

Ի վերջո, միջազգային հասարակական կարծիքի ճնշման ներքո, ֆրանսիական գաղութարարները համաձայնվեցին հայ գաղթականներին ընդունել Սիրիայում։ Փոխադրանավեր տրամադրեցին Ֆրանսիան, Անգլիան, ԱՄՆ-ը և Հունաստանը։

Այսպիսով, Ֆրանսիայի գաղութատիրական քաղաքականությունն աղետալի հետևանքներ ունեցավ Կիլիկիայի քրիստոնյա, հատկապես հայ և հույն աղգաբնակչության համար։ Ցեղասպանության արհավիրքներն ապրած արևմտահայության այդ բեկորները, ավելի քան քսան հազար նոր զոհեր տալով, ճնշող մեծամասնությամբ գաղթեցին Սիրիա։

3. ՀԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Կիլիկիայի աղետից հետո թուրք-հունական պատերազմի ելքը սպառնում էր այն հայերի ֆիզիկական գոյությանը, որ աքսորավայրերից վերադարձել էին իրենց հայրենի տունը։ Եվ վերստին ալիք առ ալիք Սիրիա նետվեցին կիսամերկ ու հյուծված մարդկանց բազմություններ։ 1922 թ. դեկտեմբերին Հալեպ հասան 15.000, 1923 թ. կեսերին՝ 30.000 հայ գաղթականներ[1], որոնք գալիս էին Թուրքիայի «ամեն կողմերեն։ Ամենքն ալ որբ, այրի, անտեր ու անտիրական, թողուցած իրենց տունն

ու տեղը»[2]: Սակայն նրանց մի մասը միառժամանակ Սիրիայում մնալուց հետո արտագաղթում էր: Ընդ որում արտագաղթը կրում էր զանգվածային բնույթ: Կահիրեի «Արևը» հաղորդում էր, որ արտագաղթողների «թիվն ամեն շաբաթ հազարներու» կհասնի[3]: Բավական է նշել, որ 1924 թ. Սիրիայում հանգրվանած ավելի քան 225 հազար հայ գաղթականներից մնացել էր շուրջ 150.000:

Սիրիայի հայերի արտագաղթը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական և քաղաքական մի շարք գործոններով: Անկասկած, անգործությունը, թշվառությունը գաղթականներին մղում էին այլ երկրներում որոնել իրենց հացն ու հանդիստը, սակայն արտագաղթի ամենավճռական մղիչը այն անվստահությունն էր, որ հայերը տածում էին ֆրանսիական իմպերիալիստների նկատմամբ: Ճաշակած լինելով Կիլիկիայից նրանց խարդախ նահանջի արհավիրքները, հայերը չէին հավատում, որ մանդատը կարող էր երաշխավորել իրենց ֆիզիկական գոյությունը՝ թուրքական վտանգի դեմ:

1920—1924 թթ. Սիրիայում բռնկված հակաիմպերիալիստական ապստամբությունները և մանավանդ քեմալականների կողմից դրանց ցույց տրվող որոշակի օգնությունը շատերին բերել էին այն համոզման, որ ֆրանսիացիներն ի վերջո կստիպվեն Սիրիայից հեռանալ կամ թուրքերին ղիջել նրա հյուսիսային մարզերը: Այդ հարցը քննարկվում էր անդամ մամուլում: Օրինակ, «Հուսաբերը» գրում էր. «Ո՞վ կրնա հաստատել, որ Ֆրանսա միշտ պետք է մնա Սուրիո մեջ, Թուրքիա հոն այլևս պիտի չմտնի, և տեղացի ժողովուրդն ալ իր զսպած ատելություններուն լեղու տված ատեն մեղավորը անմեղին պետք է տարբերե»[4]:

Արաբ հասարակայնության ամենալայն շրջանները, չհամանալով արաբներին հայերի դեմ լարելու թուրքական փորձերի էությունը և մանավանդ հայ ժողովուրդը շփոթելով ֆրանսիական մանդատի պաշտպան դաշնակցության հետ, հայ գաղթականներին համարում էին Սիրիայի ազգային անկախության սպառնացող վտանգ: Պետական հայտնի գործիչ Շեկիբ Արսլանը հայտարարել է. «Հայերը, եթե կբաղձան հանգիստ ապրել Սուրիո մեջ, պետք է, որ արաբական ազգային ձգտումներուն արգելք չհանդիսանան... և օտարներու շահերուն գործիք չդառնան»[5]:

Հակահայ կրքերի բորբոքման նոր պատրվակ ծառայեց հայ գաղթականների վերաբնակեցման հարցը: 1924 թ. հունվարին, ակներևորեն ֆրանսիացիների թելադրությամբ, հարցը քննարկվեց Սիրիայի դաշնակցային խորհրդի նիստում: Առաջարկվեց Հալեպի, Դամասկոսի և մյուս

քաղաքների քեմպերի բնակիչներին վերաբնակեցնել Ալեքսանդրետի սանջակի ներքին շրջաններում «մշակելի, այլ ցարդ խոպան հողերու վրա»։ Դամասկոսի երեսփոխաններ Ռաշիդ Բարազին, Հապիպ Քհհալին և ուրիշներ ճառել են հայ «գաղթականների վնասակարության» մասին, և նրանց վերաբնակեցման ծրագիրը համարել դրանից ամիսներ առաջ Ազգերի Լիգայի փոքրամասնությունների գործերի ենթահանձնաժողովում քննարկված «Հայկական օջախի» ստեղծման նախագիծը[6]։ Հայերի վերաբնակեցման օգտին են արտահայտվել Հալեպի երեսփոխան Սելիմ Ջեմբերդը և դաշնակցային խորհրդի նախագահ՝ Սուրհի Բարակատը։ Ի վերջո որոշվել է՝ վերաբնակեցնել հայ երկրագործներին, սակայն միաժամանակ փակել Սիրիայի դռները՝ նոր գաղթականների առաջ[7]։

1924 թ. Հիջազ ուղևորված սիրիական պատվիրակությունը (Ադել Արսլանը, Իհսան Ջաբրին և «թուրքական ներշնչումով» առաջնորդվող այլ գործիչներ) անհրաժեշտ են համարել Հյուսեյն թագավորին դրավոր զեկուցել նաև Սիրիայի դաշնակցային խորհրդի՝ հետայնու հայ գաղթականներ չընդունելու որոշման մասին։ Այդ զեկուցագրի հրապարակումից հետո հետադիմական մամուլի օրգանները հակահայ աղմուկ բարձրացրին Սիրիայում, Եգիպտոսում և այլ արաբական երկրներում։ Դամասկոսի «Ֆեթհի ալ-Արաբ» թերթը, օրինակ, գրել է. «Յուրաքանչյուր սուրիացի արաբ պետք է գիտնա, որ հայերուն մեր երկրի մեջ գոնվիլը մեր գլխուն դժբեմ հարված մըն է, եթե աչք փակենք շատ մոտ ատենեն Սուրիան և Լիբանանը Հայաստան պիտի հորջորջվին»[8]։ Անդրադառնալով այդ իրողությանը, «Արևը» գրում էր. «Լրագրական խողովակներով, հանրային արտահայտություններով և կամ այս կարգի այլ միջոցներով հայ ցեղին դեմ ուղղված հարձակումները ծանրակշիռ և մտահոգիչ պարագա մը կպարզեն մեր առջև»[9]։

Պրոթուրքական տարրերը հետագա տարիներին էլ շարունակեցին հակահայ կրքեր բորբոքել, մինչև անգամ ձեռք բերեցին մասնակի հաջողություններ, սակայն հանդիպելով արաբ աշխատավորության առաջավոր խավերի և դեմոկրատական ինտելիգենցիայի դիմադրությանը, չկարողացան սեպ խրել հայ և արաբ ժողովուրդների բարեկամության միջև։

Ինչպես նախկինում հայերի հիմնական զանգվածը տեղաբաշխված էր հյուսիսային Սիրիայի՝ ներառյալ Ալեքսանդրետի սանջակի քաղաքներում և գյուղերում։

Աղյուսակի տվյալները[10] կարող են մոտավոր պատկերացում տալ հայերի տեղաբաշխման և հին ու նոր դաղթականների թվական հարաբերակցության մասին: Անողոք թվերը ցույց են տալիս, որ Սիրիայի հայության շուրջ մեկ երրորդն է միայն վերադարձել աքսորավայրերից:

Աղյուսակ № 3

Հայաբնակ վայրեր	1923—1924 թթ.		
	Հին գաղթականներ	Նոր գաղթականներ	Ընդհանուր թվաքանակ
Սիրիա			
1. Հալեպ քաղաք և մերձակա գյուղեր	13000	37435	50435
2. Ալեքսանդրետի սանջակ	11000	6800	17800
3. Լաոդիկիա և շրջակա գյուղեր	1370	2750	4120
4. Հյուսիս-արևելյան Սիրիայում	—	4750	4750
5. Դամասկոս քաղաք	800	14000	14800
6. Համա և Հոմս	—	2500	2500
7. Հալեպի հայ որբեր	—	1500	1500
Ընդհանուր գումարը	26170	69735	95905
Լիբանան			
1. Բեյրութ քաղաք և արվարձաններ	1500	25000	26500
2. Տրիպոլի քաղաք	50	1900	1950
3. Սայդա, Սուր և այլ քաղաքներ	—	1500	1500
4. Զահլե, Ռայաք, Բաալբեկ և Բեկաայում այլ վայրեր . . .	—	2000	2000
5. Անթիլիաս, Ջյունի և այլ	—	3000	3000
6. Լեռնային Լիբանան	50	500	550
7. Հայ որբեր	—	7141	7141
Ընդհանուր գումարը	1600	41041	42641

Սիրիայի ամենահայահոծ քաղաքը Հալեպն էր: 1918 թ. այնտեղ կային շուրջ 60, 1919—1920 թթ.՝ 35, 1921—1922 թթ.՝ 75, 1923—1924 թթ.՝ 48 հազար հայեր[11], այդ թվում շուրջ 35 հազար գաղթականներ: 1923 թ. Միջգավառային միության անցկացրած մարդահամարի

տվյալներով նրանք գաղթել էին Թուրքիայի ավելի քան 40 բնակավայրերից. Այնթապից՝ 9475, Մարաշից՝ 7000, Խարբերդից՝ 4000, Սասունից՝ 1750, Քիլիսից՝ 1300, Տիգրանակերտից՝ 765, Մալաթիայից՝ 750, Կյուրինից՝ 700, Կարինից և Մուշից՝ 600, Արաբկիրից՝ 560, Զեյթունից՝ 500, Սեբաստիայից՝ 450, Բիրեջիկից՝ 395, Կեսարիայից՝ 362, Բուրսայից՝ 360, Ճիպինից՝ 350, Քղիից՝ 315, Չմշկածագից՝ 250, Ադիյամանից՝ 225, Բհհսենից՝ 194, Ակնից՝ 170, Աշոտից՝ 150, Բալուից՝ 105, Էվերեկից՝ 100, Սղերդից՝ 70, Նիկոմիդիայից՝ 60, ընդամենը 34.285 մարդ, որոնց 20.076-ը իգական, 14.209-ը արական սեռի[12]: Բացի այդ, Հալեպի մերձակա գյուղերում և ավաններում ապաստան էին գտել ավելի քան երեք հազար գաղթականներ, այդ թվում շուրջ 1750՝ Ազիզում, 450՝ Մեմբիջում, 350՝ Բաբում, 600՝ Աֆրինում, Արաբ-Փունարում և այլ վայրերում[13]:

Սիրիայի հայահոծ շրջաններից էր Ալեքսանդրետի սանջակը: Սանջակցիներից քչերին միայն վիճակվեց վերադառնալ հարազատ վայրերը: Այժմ այնտեղ հաստատված էին մեծ մասամբ Կիլիկիայից գաղթած հայեր: 1923—1924 թթ. Ալեքսանդրետ քաղաքում և նրա շրջաններում կային 6500, Ջեբել Մուսայի գյուղերում (Յողուն-Օլուք, Խըդըր-Բեկ, Հաջի-Հապիպլի, Պիթիաս, Քեպուսիե, Վաքըֆ և այլն)՝ 4700, Քեսապում և նրա շրջակա գյուղերում (Կարադուրան, Էքիզ Օլուք, Պաղջաղազ, Զինարճըք և այլ)՝ 300, Բեյլանում և նրա գյուղերում (Սովուք-Օլուք, Նարդիզլի, Գյուզելլի և այլ)՝ 1800, Կըրք-Խանում և գյուղերում՝ 1500, Անտիոք քաղաքում՝ 400, ընդամենը 17800 հայեր[14]:

Լաոդիկիայի և նրա շրջակա գյուղերի հայությանն ճնշող մեծամասնությունը զոհ գնաց ցեղասպանությանը: Բավական է նշել, որ պինադադարին Լաոդիկիայում «մնացել էին 10 արաբախոս հայեր»[15]: Կիլիկիայի աղետից հետո գաղթօջախը վերականգնվեց: 1921—1922 թթ. այնտեղ հանգրվանեցին 2500 կիլիկեցի և զգալի թվով էքպեզցի հայ գաղթականներ, որոնց կեսից ավելին արտագաղթել է: 1923—1924 թթ. Լաոդիկիայում կային 2320, իսկ նրա մերձակա Յակուբիե, Ղնիե, Ղընեմիե և այլ գյուղերում՝ շուրջ 1800 հայեր[16]:

Հյուսիս-արևելյան Սիրիայում ձևավորվեցին մի շարք հայկական փոքրիկ գաղթօջախներ, որոնց բնակիչները «բոլորն ալ գաղթականներ» էին Ուրֆայից, Տիգրանակերտից, Մարդինից, Բշերիկից և այլ վայրերից: Ջարաբլուսում կար 2000, Կամիշլիում՝ 1200, Ռակկայում՝ 600, Դեյր էզ-Զորում՝ 550, Թել-Սեմիրում և այլ գյուղերում՝ 400, ընդամենը՝ 4750 հայեր[17]:

Համաշխարհային պատերազմի ավարտին Դամասկոսում և նրա շրջաններում մնացել էին շուրջ 20.000 աքսորված հայեր, ինչպես և անապատներից հավաքված 430 որբեր, որոնք պատսպարված էին երկու՝ հայկական և ամերիկյան որբանոցներում: 1919 թ. նրանց միայն շուրջ 2500-ը չբնակավ դեպի Կիլիկիա տանող հայերի հոսանքի մեջ: Կիլիկիայի աղետից հետո դամասկոսահայերի թվաքանակը բարձրացել էր 14 հազարի[18], սակայն 1925—1927 թթ. Ջեբել Դրուզի ապստամբության հետևանքով, ոչ միայն նրա կեսն արտագաղթեց, այլև իսպառ վերացան Հաուրանի և Դերաայի նոր ձևավորված հայկական գաղթօջախները[19]:

1918 թ. Համայում և Հոմսում կային ցեղասպանությունից ճողոպրած շուրջ 5500 հայեր և 235 որբեր[20]: 1923—1924 թթ. այդ քաղաքներում մնացել էին 2500 հայեր[21]:

Կիլիկիայի աղետից հետո բազմահազար հայ գաղթականներ ապաստան գտան Լիբանանի քաղաքներում և գյուղերում: 1923—1924 թթ. Բեյրութում և նրա արվարձաններում կային 25 հազար[22], Տրիպոլիում՝ 1900, Սաիդայում՝ 1500, Ջահլեում, Ռայաքում և Բեկաայի այլ վայրերում՝ 2000, Անթիլիասում, Ջունիում, Ջիբեյլում, Ղազիրում, Բաթրունում և այլն՝ 3000, Լևոնային Լիբանանում (Բիքֆայա, Համանա, Ալեյ և այլն)՝ 500 հայ գաղթականներ[23]:

Բացի այդ, Սիրիայի և Լիբանանի տարբեր որբանոցներում պատսպարված էին շուրջ 9000 հայ որբեր: 1923 թ. Հալեպում մնացել էին 1500 որբեր, այդ թվում 1000 Հայկական (Ահարոն Շիրաճյան), 150 Դանիական (Կարեն Էպպե), 120 Հ. Բ. Ը. Միության, 50 Տիգրանակերտի Հայրենակցական Միության որբանոցներում: Լիբանանում հաստատված տաս որբանոցներում պատսպարված էին ավելի քան 7 հազար որբեր: Անթիլիասի, Ջիբեյլի, Նահր Իբրահիմի, Ղազիրի, Ջուք Միխայիլի, Մամլըտեյնի, Ջյունիի ամերիկյան 7 որբանոցներում կային 6270, Ջյունիի Եգիպտահայ որբախնամ ընկերության, Բեյրութի Հ. Բ. Ը. Միության («Քելեկյան» և «Սիսուան») և Այնթափի հայ որբախնամ ընկերության որբանոցներում՝ 871, ընդամենը 7141 որբեր[24]:

Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականների զգալի մասն ապրում էր թշվառ, օրվա հացի կարոտ վիճակում, կուտակված քեմպերի վատառողջ հյուղերում, որոնք, ինչպես նշել է ամերիկացի հեղինակը, նման էին ոչ թե բնակարանի, այլ «որջերի»[25]: Չնայած դրան բուրժուական մամուլը զանազան առասպելներ էր հորինում տարաբախտ հայ գաղթականների

տնտեսական ինքնաբավության, երբեմն նույնիսկ նրանց բարեկեցիկ վիճակի մասին։

1923 թ. Ազգերի լիգայի ժնևի նստաշրջանում, որտեղ քննարկվում էր Հայ ազգային պատվիրակության դիմումը՝ հիսուն հազար հայ գաղթականներ Հայաստան տեղափոխելու վերաբերյալ, ակներևորեն, ներգաղթը ձախողելու նպատակով, Ֆրանսիայի պատվիրակ Մ. Հանոտոն հայտարարել է. «Սուրիա ապաստանած մոտ 150.000 հայերը մեծ մասամբ տեղավորված՝ սկսած են արդեն իրենց ապրուստը շահիլ, և այլևս բեռ չեն ոչ սուրիացի բնիկ ժողովուրդներուն և ոչ ալ տեղական (մանդատային) իշխանություններուն»[26]։ Սակայն փաստերն ապացուցում էին հակառակը։

1923 թ. Բեյրութի քեմպերում պատսպարված էին ավելի քան 19 հազար հայ գաղթականներ, այդ թվում 7000 Առաջին, 5000՝ երկրորդ, 5000՝ Կարանթինայի, մնացյալը՝ Մասլախի, Մադամայի, Հաճընի, Սինիֆիլի, Ռաս Բեյրութի և Ռըմելլի քեմպերում[27]։ Նրանք ապրում էին համատարած թշվառության մեջ. «վարակիչ հիվանդությունները և ժանտախտը հաճախ կայցելեին իրենց, տանելով հազարավոր կյանքեր։ ...Շատեր անոթութենն և ցուրտե կմեռնեին»[28]։

Հալեպի հայ գաղթականների շուրջ կեսը՝ ավելի քան 17 հազար մարդ, ապրում էր Մեյդանի, Սուլեյմանիեի, Համիդիեի կամ Ռամի և մի քանի այլ քեմպերի «խրճիթներուն և վրաններուն» մեջ՝ վատթարագույն պայմաններում։ Նրանք համարյա բոլորն էլ զուրկ էին նույնիսկ նվազագույն ապրուստի միջոցներից. «օրական 17555 հոգիի կերակուր կբաժանվեր»[29]։ Մալարիան, դիզենտերիան, թոքախտը և այլ վարակիչ հիվանդություններ ավեր էին գործում հատկապես երիտասարդների և երեխաների շրջանում։ Միջազգային կարմիր խաչի միջոցներով հատատաված գաղթականների բուժակետը և 20—30 մահճակալանոց հիվանդանոցը չէին կարող բավարարել նույնիսկ նվազագույն կարիքները։ «Սուրիական մամուլը» գրում էր. «Քաղաքիս քեմպին ցավալի և կսկծալի լուրեր կհասնին մեզի, կխոսվի տանջալիկնյութ, հարյուրավորներով երեխաների մահվան մասին, իբրև հետևանք նյութական կարոտության և անպատսպարության ծնունդ եղող հիվանդություններու»[30]։

Դժնդակ պայմաններում էին ապրում նաև Դամասկոսի հայ գաղթականները։ Բաբ Շարքիի, Կադեմի և Սոֆանիեի քեմպերը նույնքան վատառողջ էին, որքան Հալեպի և Բեյրութի քեմպերը։ 1922 մարտի 18 թվակիր իր նամակում Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը գրում էր. «Գաղթական հայերը, ինչպես ամեն տեղ, հոն (Դամասկոսում—Հ. Թ.)

ալ նախանձելի վիճակ մը չունին. գործ չկա բացի ճամբա շինելեն, անկից ալ շատ քիչերը կօգտվին՝ օրական իրենց և իրենցներուն հացի գին մը ձեռք բերելու չափ։ Անոնք, որ ընտանիք ունին, ընտանիքնին քաղաքը կմնան ու իրենք օրերով հեռու տեղեր քար կկրեն ու քար կոտրտեն։ Շատ քիչեր կարողացած են տուն գտնել և վարձել. հաղարավորներ վրաններու տակ ու կամ ընդարձակ գովուշներու մեջ իրարու վրա թխմված են»[31]։ Մի ուրիշ ականատես հաղորդում էր, որ գաղթականները «գործ ունեցած ժամանակ հանգիստ օր մը կանցնեն, անգործ մնացած ժամանակը, ինչ-որ շատ անգամ կպատահի, ծայրագույն թշվառության կմատնվին»[32]։

Պակաս անմխիթար վիճակում չէին Ալեքսանդրետի և մյուս քաղաքների քեմպերում կուտակված հայ գաղթականները։

1926 թ. դեկտեմբերի 31-ին գերագույն կոմիսար Պոնսոն ստորագրեց առաջին դեկրետը գաղթականների վերաբնակեցման մասին։ Գործի վերահսկողությունը հանձնարարվեց «Գաղթականաց տեղավորման միջազգային հանձնաժողովին», որը գտնվում էր գերագույն կոմիսարի տեղակալի նախագահության ներքո։ Կազմվեցին կենտրոնական գործադիր հանձնաժողով, շրջանային ենթահանձնաժողովներ և սկսվեց վերաբնակեցման վայրերի ընտրությունը, ապագա վերաբնակիչների ցուցակագրումը։ Ամեն ինչ արվում էր, որպեսզի վերաբնակեցման ծրագրին տրվի մարդասիրական գործի տեսք։

Սակայն Թշվառության մատնված հայ գաղթականներին փրկելու մասին առասպելները գնալով գունատվեցին։ 1927 մարտի 12 թվակիրով, Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը գրում էր. «Երկար ատենե ի վեր խոսվածները՝ ժողովուրդը քեմպի ախտավարակ մթնոլորտեն ազատելու մասին իրականություն և գործ ըլլալու վրա է», սակայն, «երկրագործները գյուղերու մեջ տեղավորելու մտադրությունը փոքր ինչ մութ է. եթե նոր գյուղեր պիտի հիմնվին և անոնց մեջ 150—200-ական տնվոր պիտի տեղավորվին, օգտակար կրնա ըլլալ, մանավանդ, եթե այդ գյուղերը շատ հեռու չըլլան, իրարու օգնելու և աշխատակցելու մեծ դյուրություններ կունենան. իսկ եթե այլատարր բնակչաց մեջ ցրելու նպատակով է, բնավ համամիտ չենք, որովհետև այդ կերպ տեղավորումը օգտակար չի կրնար ըլլալ ոչ տնտեսապես և ոչ բարոյապես»[33]. Այդ կոահումը ճիշտ էր։

Երկրագործներին հողամշակության համար պարապելու հնարավորություն տալու ցուցանակի ներքո ծրագրված էր վերաբնակեցնել Բեյրութի, Հա-

լեպի և Դամասկոսի հայկական գաղթականների բոլոր բնակիչներին։ Առաջին հերթին Բեյրութից 1000, Հալեպից 800 «երկրագործ ընտանիքներ» կամ 9000 գաղթականներ պետք է հաստատվեին «դաշտերու, երկրագործական կայքերու մեջ իբրև վարձակալ մշակելի հողերու»։ Այնուհետև նրանց հետևելու էին Բեյրութից 5000, Ալեքսանդրետից 5000, Հալեպից 4000 «մասնագիտություն չունեցող գործավորներ», որպեսզի լծվեն «պատահական» կամ «ճահճուտներու չորացման աշխատությանց»[34] և այլն։

Որ միայն երկրագործներին չէր վերաբերում վերաբնակեցման ծրագիրը, երևում էր նաև Հալեպի ազգային-թեմական իշխանության կողմից Գաղթականների տեղավորման կենտրոնական գործադիր հանձնաժողովին ուղղված մի նամակից, որտեղ ասված է. «Հալեպի գաղթականության մեջ հողամշակության ընդունակ տարրեր գրեթե չլլալով, անկարելի է համոզել որևէ գաղթական, որ հոժարի հեռանալ Հալեպեն։ Զարմանալի է, որ ... Հալեպի ևթահանձնաժողովը կշարունակե այդ ուղղությամբ աշխատանք տանիլ։ Ասոր վրա ավելցուցեք նաև ապահովության խնդիրը...»[35]։

Ֆրանսիական իմպերիալիստները, կառչած մնալով հայ գաղթականների վերաբնակեցման ծրագրին, գործադրում էին ճնշման միջոցներ։ Հալեպի գաղթականների կալվածատերերը փորձում էին «դատական միջոցներով տիրանալ իրենց հողերուն», իսկ քաղաքապետարանը ճանապարհներ կառուցելու նպատակով պահանջում էր մեկ այս, մեկ այն գաղթականի կամ նրանց մի մասի վերացումը[36]։ Բեյրութում գործադրվում էին առավել դաժան միջոցներ։ Այստեղ գաղթականները հրոճարակ էին դառնում ժանտախտի դեմ պայքարի պատրվակով։

Այդ կարգի ճնշումներով ֆրանսիական իմպերիալիստներին հաջողվեց մի քանի հազար գաղթականներ վերաբնակեցնել, ինչպես նշել է Վահան Թեքեյանը, «թուրքական և արաբական հոծ բնակչության մը մեջերը...։ Այդ կետերու ընտրությունը եղած ըլլալու է գաղթականներու հանգիստեն ավելի՝ ուրիշ նպատակներու անսալով, զոր չեմ ուզեր պարզել, իքնին հասկնալի ըլլալուն»[37]։ Նորահաստատ գյուղերից խոշորագույնը՝ Հայաշենը, որը հաշվում էր շուրջ 250 հայ ընտանիք, մի կողմի էր թուրքա-սիրիական սահմաններին հարող Ռիհանիե, Հարիմ և Ասկեր Ջայրը կոչված վայրերի բազմացեղ մուսուլմանական բնակչության ծովում։ Միևնույն սկզբունքով տեղաբաշխված էին նաև Վարդաշեն, Սովուք Սու և մյուս հայաբնակ գյուղերը։ Մի բուռ հայերի այդպես ցրելով, ֆրանսիական գաղութարարները հնարավորություն էին ձեռք բերում ցան-

կացած ժամանակ ազգամիջյան ընդհարումներ հրահրելու և, քրիստոնյաներին պաշտպանելու պատրվակով, ճնշելու արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։

Ֆրանսիական իմպերիալիստները հայ գաղթականների վերաբնակեցման ծրագիրն օգտագործում էին նաև որպես միջոց Թուրքիայից զիջումներ կորզելու համար։ 1925—1926 թթ. ֆրանս-թուրքական նոր պայմանագրի նախապատրաստման աշխատանքների ընթացքում կողմերն արդեն հանգել էին նախնական պայմանավորվածության Ալեքսանդրետի սանջակի հարցի շուրջը։ Քեմալականները խոստացել էին չօգնել մանդատի դեմ պայքարող սիրիացիներին, իսկ ֆրանսիական իմպերիալիստները հանձն էին առել Սանջակի հարցը լուծել Թուրքիայի շահերին համապատասխան ձևով։ Թուրքերի պահանջով, ֆրանսիացները Ալեքսանդրետի ոստիկանությունն ու ժանդարմերիան արդեն մաքրել էին հայ աստիճանավորներից։ Զինաթափվել և Սիրիայի խորքերն էին ուղարկվել նույնիսկ հայ հասարակ ոստիկանները։ Թուրքերը պահանջել են նաև Ալեքսանդրետի սանջակի հայ ազգաբնակչության մի մասը «առնվազն 60 կմ» հեռացնել Թուրքիայի սահմաններից[38], սակայն այդ պահանջը չի իրագործվել Ջևթել Դրուզի վերահաս ապստամբության հետևանքով։ Հետագայում հայ գաղթականների վերաբնակեցման աշխատանքները մեկ աշխուժանում էին, մեկ կասեցվում՝ կապված ֆրանս-թուրքական բանակցությունների ընթացքի հետ։ Ի վերջո, ֆրանսիական իմպերիալիստները հրաժարվեցին հայերի վերաբնակեցման ծրագրից թուրքերին սիրաշահելու համար։

Դրանով հայ գաղթականների տեղավորման գործը մտավ նոր հունի մեջ։ Ազգերի լիգայի, տեղական իշխանությունների և հայ բարեգործական հիմնարկների տրամադրած միջոցներով սկսվեց տների կառուցումը Հալեպի և Բեյրութի արվարձաններում։ Կառուցվում էին Նոր Մարաշ, Նոր Ադանա, Նոր Սիս, Ամանոս և Հայրենի բնաշխարհի այլ քաղաքների անունը կրող թաղեր[39]։ Սակայն աշխատանքները ընթանում էին խիստ դանդաղ։ Այդ պատճառով գաղթականների մի մասն իր գոյությունը պահպանեց մինչև երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիները։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին դգալի փոփոխություններ առաջացան Սիրիայի և Լիբանանի հայության տեղաբաշխման մեջ։ Ֆրանս-թուրքական իմպերիալիստական գործարքի հետևանքով Ալեքսանդրետի սանջակը դատարկվեց հայերից։ Անշարժ ու շար-

ժուն գույքից զրկված, նրանք գաղթեցին Հալեպ, Բեյրութ և այլ քաղաքներ։ Տարբեր վայրերում ստեղծվեցին սանջակցիների գաղթակայաններ, իսկ Բեկաայում հիմնադրվեց մի նոր ավան, որի բնակիչները ճնշող մեծամասնությամբ չերքեզմուսացիներ էին։

Քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայի և Լիբանանի հայերի թվաքանակը զգալի աճ տվեց։ 1946—1947 թթ. նրանք հաշվում էին շուրջ 175 հազար շունչ[40]։

4. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՈՅԱՎԻՃԱԿԸ

Ազգերի լիգան, ըստ էության, անփոփոխ պահպանեց Թուրքիայում և նրանից անջատված արաբական երկրներում գործող կրոնադավանական համայնքների իրավական վաղեմի գոյավիճակը (status quo)։ Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր առաջվա պես ճանաչել կրոնադավանական համայնքների ներքին ինքնավարությունը և ամբողջությամբ պահպանել եկեղեցական, դպրոցական, դատաստանական բնույթի այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որ նրանց շնորհվել էին սուլթանական հրովարտակներով, հրամանագրերով (ֆերման, բերաթ և այլն)։ Թուրքիան հետագայում հրաժարվեց այդ պարտավորություններից, սակայն դրանք պահպանվեցին մանդատի փաստաթղթում, այստեղից էլ անցան Սիրիայի և Լիբանանի հիմնական օրենքների՝ սահմանադրության մեջ։

Մանդատի փաստաթղթի 6-րդ հոդվածով մանդատատերը պարտավորվում էր Սիրիայում և Լիբանանում հաստատել այնպիսի դատական դրություն, որը «լիովին երաշխավորի» ինչպես տեղաբնակների և օտարականների իրավունքները, այնպես էլ տարբեր համայնքների անձնական իրավունքի ստատուսը և նրանց կրոնական շահերը։ 8-րդ հոդվածով մանդատատերը պարտավորվում էր Սիրիայում և Լիբանանում հաստատել խղճի ու կրոնական պաշտամունքի «կատարյալ ազատություն»՝ առանց ազգի, կրոնի կամ լեզվի խտրության։ Համայնքներից յուրաքանչյուրին պետք է տրվեր սեփական դպրոցներ ունենալու և մատաղ սերընդի ուսման ու դաստիարակության գործը մայրենի լեզվով կազմակերպելու իրավունք։ 9-րդ հոդվածով մանդատատերը պարտավորվում էր չմիջամտել համայնքների ներքին գործերին և այլն։

Այդ և մանդատի փաստաթղթում հիշատակված մյուս բոլոր իրավունքներն ու արտոնությունները նվիրագործվեցին Սիրիայի և Լիբանանի հիմնական օրենքներով։

Դեռևս մանդատի հաստատումից առաջ՝ 1919 թ. հունվարին Սիրիայի գլխավոր կոնգրեսի ընդունած ժամանակավոր հիմնական օրենքում նշված էր. «Ոչ-իսլամ համայնքներու դատարաններն ըստ առաջնույն պիտի պահեն իրենց դատաստանական իրավասությունները»[1]:

Սիրիայի 1928 թ. Սահմանադրության մի շարք հոդվածներ վերաբերում էին կրոնադավանական համայնքների գոյավիճակին: Նրա 15-րդ հոդվածում ասված է. «Խղճի ազատությունը բացարձակ է: Պետությունը կհարգի երկրի մեջ գոյություն ունեցող բոլոր դավանանքներն ու կրոնները, կերաշխավորի և կհովանավորի բոլոր պաշտամունքները, որոնք հանրային կարգ ու կանոնի և բարի վարուց հակառակ չեն: Կերաշխավորեն նաև բոլոր ժողովուրդներու, ինչ դավանանքի ալ պատկանին, կրոնական շահերուն և անձնական իրավունքներուն հարգանքը»[2]: 19-րդ և 28-րդ հոդվածներով երաշխավորվում էին տարբեր համայնքների իրավունքները կրթական-մշակութային գործունեություն ծավալելու, դպրոցներ կառուցելու, սեփական լեզվով ուսուցում կազմակերպելու վերաբերյալ և այլն:

Համայնքների իրավունքներն ու արտոնություններն երաշխավորում էին նաև Լիբանանի 1926 թ. Սահմանադրությունը և 1930 թ. փետրվարի 3-ի օրենքը: Համայնքային եկեղեցական իշխանությունների իրավասության էին ենթարկված անձնական իրավունքի հետևյալ բնագավառները. նշանախոսությունը, ամուսնությունը, ամուսնալուծումը, որդեգրությունը, սննդագինը, ժառանգությունը և այլն:

Սիրիայի և Լիբանանի համայնքների վերաբերյալ առավել ամբողջական վավերագիր է 1938 թ. նոյեմբերի 18-ի օրենքը, որի հրապարակումից հետո ուժից դրկվեցին համայնքային իրավունքների վերաբերյալ բոլոր նախընթաց օրենքները, դեկրետները, գերագույն կոմիսարության և տեղական իշխանությունների կարգադրությունները: Սակայն նոր օրենքում հաշվի էին առնված կրոնական, վարչական, տնտեսական և կրթական այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որ դրանից առաջ տրվել էին համայնքներին:

Ըստ այդ օրենքի, պետական ճանաչման արժանացած անձնական իրավունքի statut personnel (status personnel) ունեցող համայնք էին համարվում մարոնականների, հույն ուղղափառների, հայ առաքելականների, հայ կաթոլիկների, ասորի կաթոլիկների, մելքիտ կաթոլիկների, ասիրո-խալդեական-նեստորականների, խալդեականների և լատինադավանների համայնքները: Մուսուլմանական ուրույն համայնքներ էին սուննինե-

բը, շիաները, ջաֆերիները, ալևիները, իսմայիլականները և դրուզները։ Որպես ուրույն համայնքներ պետական ճանաչում էին ձեռք բերել Հալեպի, Բեյրութի և Դամասկոսի հրեաները։

1938 թ. օրենքում ճշտորոշված էին հոգևոր պետերի և կրոնական դասի նվիրապետական կարգը, նրանց նշանակման ձևերը և իրավասությունները, համայնքային ժողովների, դատարանների, խորհուրդների, հոգաբարձությունների պարտականություններն ու իրավունքները։ Պետական ճանաչման արժանացած համայնքների կազմական և անձնական իրավունքի կանոնադրությունները ստանում էին օրենքի ուժ, և նրանց հիման վրա արձակված վճիռները, հրամանները, կարգադրությունները կարող էին անհրաժեշտության դեպքում ի կատար ածվել պետական համապատասխան օրգանների միջոցով։ Պետության հետ համայնքային իշխանությունների կապը պահպանելու իրավունքը վերապահվում էր տվյալ համայնքի կրոնապետին, վերջինիս աթոռը Սիրիայից կամ Լիբանանից դուրս դտնվելու դեպքում այդ իրավունքից օգտվել կարող էր նրա մնայուն ներկայացուցիչը։

Նոր օրենքով կրոնադավանական համայնքներին և նրանց ծոցում գործող յուրաքանչյուր մշակութային, կրթական և բարեգործական կազմակերպության, ինչպես նաև կրոնական միաբանություններին իրավունք էր տրվում հանդես գալու որպես բարոյական անձնավորություն (pér-sonnalité morale) և օգտվել շարժուն ու անշարժ գույք ունենալու լիարժեք սեփականատիրական իրավունքից։

Կառավարման մանդատը և նրանից բխող օրենքները նպաստում էին կրոնադավանական համայնքների դիրքերի ամրապնդմանը։ Դրանք նախադրյալ հանդիսացան Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների ձևավորման և զարգացման համար։

1924 թ. օգոստոսի 1-ին հրապարակվեց Սիրիայի, օգոստոսի 30-ին Լիբանանի քաղաքացիության օրենքը։ Հինգ տարի անընդմեջ Սիրիայում կամ Լիբանանում բնակվող անձանց շնորհվում էր քաղաքացիության իրավունք։ Դրանով վերջ դրվեց նախկին օսմանահպատակ հայ գաղթականների բավական անորոշ իրավական դրությանը[3]։ Այժմ նրանք ունեին երկրորդ հայրենիք և կարող էին օգտվել համայնքային իրավունքներից ու արտոնություններից։

Քաղաքացիության օրենքի հրապարակումից ամիսներ առաջ Ֆրանսիական գերագույն կոմիսարիատը Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսին արդեն ճանաչել էր Սիրիայի և Լիբանանի հայության հոգևոր պետ

և նրան իրավունք էր տվել Աթոռը հաստատելու Բեյրութում[4]: Սակայն Սսի Աթոռի ճակատագիրը տակավին անորոշ էր: Նրա գոյության հարցը քննարկվում էր հրապարակով: Ոմանք գրում էին. «Կիլիկիո կաթողիկոսությունը միացնելու է Երուսաղեմի պատրիարքության»: Այլք, այդ թվում և Սահակ կաթողիկոսն ավելի տրամաբանական էին գտնում նրա միավորումը էջմիածնի կաթողիկոսության հետ: Սակայն, ի վերջո, նըժարը հակվեց նրանց կողմը, ովքեր ասում էին՝ «Կիլիկիան պահել էջմիածնի համար»:

Համաշխարհային պատերազմից և Կիլիկիայի աղետից փրկվել էր Սսի Աթոռի թեմերից միայն մեկը՝ Հալեպի թեմը: 1929 թ. մարտի 6-ին Երուսաղեմի հայոց վանքի միաբանության ընդհանուր ժողովը, ընդառաջելով Սահակ կաթողիկոսի դիմումին, որոշեց նրան փոխանցել Սիրիայի երուսաղեմական թեմերը: Նույն թվականի ապրիլին Բեյրութ ժամանեցին Եղիշե պատրիարք Դուրյանի ներկայացուցիչները՝ Մատթեոս եպիսկոպոս Գայլրկճյանը և Աթոռի դիվանապետ Կարապետ Հուրյանը, որպեսզի ի կատար ածեն թեմերի փոխանցման որոշումը:

Այդ առթիվ Եղիշե պատրիարքի՝ գերագույն կոմիսար Պոնսոյին հղած ապրիլի 13 թվակիր նամակում ասված է. «Որոշեցինք ետ կոչել Պեյրութի, Դամասկոսի և Լաթաքիո մեր երեք պատրիարքական փոխանորդները, և այս երեք քաղաքներուն մեջ մեր պատրիարքարանին ունեցած վանքերը, եկեղեցիները, դպրոցները, և այդ թեմերուն ծուխերուն վրա մեր ունեցած հոգևոր իշխանությունը փոխանցել» Կիլիկիո կաթողիկոսին[5]: Մանդատային իշխանությունները հավանություն են տվել փոխանցմանը:

1929 թ. ապրիլի 17-ին կատարվել է Բեյրութի, ապրիլի 20-ին Դամասկոսի և ապրիլի 25-ին Լաոդիկիայի թեմերի փոխանցումը: Սսի կաթողիկոսին է անցել այդ քաղաքներում գործող երեք եկեղեցի՝ «մեջի անոթներով և զգեստներով», երեք փոխանորդարան՝ «մեջի գույքերով», երեք դպրոց՝ «հարակից մասերով» և երեք գերեզմանատուն[6]: Թեմերի փոխանցումից անմիջապես հետո Եղիշե եպիսկոպոս Կարոյանը նշանակվել է Լիբանանի, Խաթ վարդապետ Աջապահյանը՝ Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ, իսկ Եփրեմ վարդապետ Տոհմունին՝ Լաոդիկիայի թեմակալ առաջնորդ: Մայիսի 16 թվակիրով, գերագույն կոմիսար Պոնսոն գոհունակություն է հայտնել Եղիշե պատրիարքին՝ Սսի Աթոռը վերականգնելու համար:

1931 թ. հոկտեմբերին Տանն Կիլիկիո Աթոռը Հալեպից տեղափոխվեց Անթիլիաս (Բեյրութի մոտ)[7]: Նրա իրավասության ներքո էին Լիբանանի, Հալեպի, Դամասկոսի, Անտիոքի և Կիպրոսի թեմերը:

Այսպիսով, 1929—1931 թթ. վերականգնվեց Սսի մատնավոր կաթողիկոսությունը, որը համարյա վերացված էր Կիլիկիայի աղետի հետևանքով: Նրան բավական կարևոր դեր էր վիճակվել Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների վերակազմակերպման գործում:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ: ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Մանդատի հաստատումից հետո օտարերկրյա՝ հիմնականում ֆրանսիական կապիտալը տիրապետող դիրքեր գրավեց Սիրիայի և Լիբանանի տնտեսության տարբեր բնագավառներում: Պետական բանկի ֆունկցիաները կատարող «Սիրիայի և մեծ Լիբանանի բանկը», երկրագործական բանկերը, լիբանա-սիրիական ծխախոտագործական մոնոպոլիան՝ Ռեժին, երկաթուղիները պատկանում էին ֆրանսիական, Դամասկոսի և Բեյրութի տրամվայների և էլեկտրականության ձեռնարկությունները՝ ֆրանսիական և բելգիական, ավտոմոբիլային փոխադրամիջոցները՝ ֆրանսիական և անգլիական կապիտալին և այլն: Սիրիան և Լիբանանը դիտելով որպես վաճառահանման շուկա և հումքի աղբյուր, իմպերիալիստներն արգելակում էին տեղական արդյունաբերության զարգացմանը: և առևտրական հարաբերությունները կառուցում էին անիրավահավասարության սկզբունքով:

Սիրիայի և Լիբանանի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որտեղ զբաղված էր բնակչության առնվազն 70%-ը: Համաշխարհային պատերազմի տարիներին ցանքատարածությունները ավերվել էին, անասունների գլխաքանակը խիստ պակասել էր, սակայն իմպերիալիստները շատ քիչ միջոցներ էին հատկացնում գյուղատնտեսությունը վերականգնելու համար: Նրանք անբավարար կապիտալներ էին ներդնում նույնիսկ այնպիսի կուլտուրաների մշակության բնագավառում, ինչպիսիք էին բամբակը, ցորենն ու գարին, որոնց հետ նրանք որոշակի հույսեր էին կապում: Հիմնականում արտադրության արդիական գործիքների և ոռոգման սիստեմների բացակայության հետևանքով օրինակ, տապալվեց նրանց ծրագիրը՝ Սիրիան «ֆրանսիական Եգիպտո-

սի», այսինքն բամբակի մոնոկուլտուրայի երկրի վերածելու վերաբերյալ:

Իմպերիալիստները գյուղում պահպանեցին մինչկապիտալիստական շահագործման ձևերը, որոնք կազմում էին իրենց ռեակցիոն դաշնակիցների՝ կալվածատերերի և կոմպրադորների բարեկեցության հիմքը: Ագրարային կարգը բնորոշվում էր խոշոր հողատիրության գերիշխանությամբ[1], սակայն առկա էին գյուղացիական մանր տնտեսություններ վարձակալված հողերի վրա: Իմպերիալիստների անցկացրած հողային ռեֆորմը կամ «հողային կադաստրը» հնարավորություն էր տալիս բռնագրավելու գյուղացիների այն հողակտորները, որոնց նկատմամբ սեփականատիրության իրավունքը չէր հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Կադաստրը նպաստում էր խոշոր կալվածատերերի հողային սեփականության մեծացմանը և գյուղացիության հիմնական զանգվածի հողազրկմանը: Սիրիայի տարբեր շրջաններում մշակելի հողերի 60—80%-ը խոշոր կալվածատերերի ձեռքում էր, Լիբանանում դրանց 1/8-րդը կրոնական և բարեգործական հաստատությունների սեփականությունն էր: Գյուղացիության ճնշող մեծամասնությունը սակավահող կամ հողազուրկ էր: Վարձակալությունը կրում էր մասնատուրքի բնույթ, ընդ որում վճարը կազմում էր բերքի 1/5-ից մինչև 3/4-ը: Տարածված էր նաև ենթավարձակալությունը:

Իմպերիալիստները, ինչպես նշել է բրիտանական տնտեսագետ Ալ. Բոննը, «չէին կարող համաձայնվել, որ մանդատի երկրներում ծաղկեն ազգային (անկախ) արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք ի վերջո պետք է ձգտեին իրենց շուկան վերապահել սեփական արտադրանքի համար»[2]: Բանկերը միտումնավոր կերպով կապիտալները հիմնականում մղում էին դեպի առևտրի ոլորտը: Ֆրանսիական իմպերիալիստների ուշադրության կենտրոնում օդանավակայանների, նավահանգիստների, երկաթուղիների, մայրուղիների, նավթամուղների կառուցումն էր՝ ռազմական նպատակներով: Դրա հետ կապված նրանք անընդհատ ավելացնում էին ասֆալտի և ցեմենտի արտադրությունը: Մյուս կողմից տեղական կապիտալիստները, վախենալով ներքաղաքական անկայուն իրավիճակից և անկաշկանդ ներմուծվող օտարերկրյա ապրանքների մրցակցությունից, կապիտալներ համարյա չէին ներդնում արդյունաբերության մեջ:

Պակաս անմխիթար վիճակում չէր առևտուրը: Սիրիան և Լիբանանը առևտրական կապեր էին պահպանում մի շարք երկրների (Ֆրանսիա,

Եգիպտոս, ԱՄՆ, Անգլիա, Ճապոնիա և այլ) հետ, սակայն Ֆրանսիան էր նրանց հումքի գլխավոր գնորդը և արդյունաբերական ապրանքների հայթայթողը։ Իմպերիալիստները չնչին գնով արտահանում էին տեղական հումքը, իսկ իրենց արտադրանքները պարտադրում էին չափազանց բարձր արժեքով։ Այդ պատճառով Սիրիայի և Լիբանանի առևտրական հաշվեկշիռը մշտապես պասսիվ էր, արտահանումները, որպես կանոն, դրամական արժեքով զգալի չափով ցածր էին, քան ներմուծումները։ 1925—1926 ԹԹ. Սիրիան արտահանումներից ստացել է 544,8, իսկ ներմուծումների համար վճարել է 1.267, 1927 թ.՝ համապատասխանաբար 546 և 1279, 1928 թ.՝ 533.7 և 1317 միլիոն ֆրանսիական ֆրանկ։

Մանդատի փոփոխության ենթարկվեց օսմանյան տիրապետությունից ժառանգված հարկային սիստեմը[3]։ Անցյալում արդյունավճար աշխատանքը կամ տասանորդի հարկը փոխարինվեց ավելի մեծ չափով գանձվող փողային հարկով։ Անփոփոխ պահպանվեցին մյուս համարյա բոլոր ուղղակի (կալվածահարկ կամ էմլաք, հկամտահարկ կամ թեմեդդու, անասնահարկ կամ աղնամ, ճանապարհահարկ և այլն) և անուղղակի հարկերը։

Փոխվեց դրամական սիստեմը։ Օսմանյան ոսկեդրամը փոխարինվեց սիրիական և լիբանանյան թղթադրամով, որն երաշխավորված չէր ոսկով և, ֆրանսիական ֆրանկին զուգընթաց պարբերաբար արժեքազրկվելով, բացասաբար էր անդրադառնում Սիրիայի և Լիբանանի ողջ տնտեսական կյանքի վրա։

Ֆրանսիական իմպերիալիստները բառի իսկական առումով թալանում էին Սիրիան և Լիբանանը։ Չնայած Թուրքիան հրաժարվել էր Օսմանյան կայսրության պարտքերից, սակայն նրանք 1881 թվականի սուլթանական ֆերմանի համաձայն շարունակում էին գանձել օսմանյան հանրային պարտքի Սիրիայի բաժինը՝ տարեկան 20.000 օսմանյան ոսկի։

Իմպերիալիստները Սիրիայից և Լիբանանից ստացած հսկայական շահույթների անգամ փշրանքները չէին ծախսում նրանց զարգացման համար։ Անտեսված էր հիվանդանոցների, դպրոցների շինարարությունը, պայքար չէր տարվում հատկապես գյուղական վայրերում ավեր գործող մալարիայի, դիզենտերիայի, տրախոմայի դեմ։

Գաղթականության ալիքը Սիրիա և Լիբանան էր նետել ամենատարբեր զբաղմունքի տեր մարդկանց։ Բացառությամբ որոշ թվով ադանացիների, մարաշցիների և այնթապցիների մյուս գաղթականները Սիրիա

էին հասել «ցնցոտիներ հագին» և «օրվա հացի կարօտ»։ Սակայն կարճ ժամանակի ընթացքում նրանք, հարմարվելով նոր միջավայրի պայմաններին, բավական ակնառու դիրքեր գրավեցին Սիրիայի և Լիբանանի տնտեսության տարբեր բնագավառներում։ 1929 թ. Բեյրութի արաբական «Ալիֆբա» թերթը գրում էր. «Հայերը աղքատ և թշվառ վիճակի մեջ մեր երկիրը եկան։ Շնորհիվ իրենց աշխատասիրության և ընդունակությունների նրանք սկսան տնտեսապես զարգանալ և մեզի հավասար դիրքեր ստեղծեցին։ Անոնցմէ շատեր առևտրական հրապարակին վրա բարձր դիրքեր գրավեցին և օգտակար հանդիսացան մեր երկրի բարգավաճմանը»[4]։

1925 թ. Հալեպի գաղթականների հայ բնակիչները ըստ զբաղմունքի բաժանված էին հետևյալ խմբերի. արհեստավորներ՝ 15.600, սեպագործ բանվորներ՝ 6000, ծառայողներ՝ 360, առևտրականներ՝ 1125, ազատ ասպարեզի մարդիկ՝ 127։ Ըստ մասնագիտության արհեստավորները տրոհված էին՝ դորգագործներ և ասեղնագործներ՝ 8000, զգեստ մաքրող և վերանորոգողներ՝ 3000, որմնադիրներ՝ 1500, ոստայնակներ՝ 850, կոշկակարներ՝ 650, հյուսներ՝ 450, կառապաններ և մեքենավարներ՝ 350, դերձակներ՝ 300, երկաթագործներ՝ 300, թիթեղագործներ և ձուլողներ՝ 150[5]։ Միք. Նաթանյանը գրում էր, որ Սիրիայում «հայը գրեթե բավարար արհեստավոր է»[6]։ Պատկերը մոտավորապես նույնն էր նաև Բեյրութի գաղթականություններում։

Օտար հեղինակները բարձր են գնահատում հայ գաղթականների դերը Սիրիայի և Լիբանանի տնտեսության զարգացման գործում։ Բեյրութի ամերիկյան համալսարանի դասախոս պրոֆ. Ստյուարտ Դաղը գրել է, որ հայ գաղթականները Սիրիա բերեցին «գործավոր ձեռքերու առատություն» և դրան որպես անմիջական հետևանք՝ «օրավարձքերը ինկան իրենց սակեն, բան մը որ անշուշտ վնասակար էր բանվորին և ձեռային աշխատանք տանողին համար, սակայն ասկե օգտվեցավ գործատերը և վերջ ի վերջո սպառողը։ ... Սուր մրցակցությունը նմանապես հրապարակեն քշեց անատակ և անկարող արհեստավորները և սուրիական ձեռային աշխատավորներու որակը բարձրացուց։ Այս կացութենեն ի վերջո շահողը եղավ երկիրը։ Թերևս ամենեն ակնհայտ օրինակը աժան բանվոր ունենալուն կկայանա նոր շինութեանց մեջ, որոնք կկատարվին Սուրիո մեծ քաղաքներուն մեջ։ ...։ Կասկած չկա, որ այս անօրինակ վազքը կառուցանելու և գեղեցկացնելու քաղաքը, ինչպես նաև հին ճամբաները ընդլայնելու և նորերը բանալու ճիգը խթանված է գաղթականներու աժան աշխատանքէն»[7]։

Դադը գտնում է, որ Սիրիայի արդյունաբերությունը շատ քիչ օգտըվեց հայերի «աժան և մասնագիտական» աշխատանքից, իսկ նրանց «անհատական ճիգերը նկատառելի արդյունք չտվին բաղդատմամբ (նըրանց) կարելիություններուն, որովհետև մեծապես տուժեցին դրամագլուխի պակասեն և կառավարական քաջալերութեններեն», այսինքն մանդատային իշխանությունների հարուցած դժվարություններից: Դադը ցավ է հայտնում, որ դանդաղ էին զարգանում արդյունաբերության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք էին ծխառագործությունը, կահույքագործությունը, երկաթագործությունը, ոսկերչությունը և այլն, որոնցում հայերը ճանաչված էին «որպես անգերազանցելի վարպետներ»[8]:

Հայերը կարևոր դեր էին կատարում արդյունաբերական այն ապրանքների արտադրության բնագավառում, որոնք պատասխանում էին տեղական կամ հարևան երկրների բնակչության սպեցիֆիկ պահանջներին: Դրանցից էր ալաջա գործվածքը, որն օգտագործվում էր արևելյան հասարակ զգեստներ պատրաստելու համար: Ալաջայի պահանջարկն առանձնապես մեծ էր Անատոլիայում, որտեղ համարյա վերացել էր նրա արտադրությունը հայերի հեռանալու հետևանքով: 1924 թ. «Արև» լրագիրը հաղորդում էր. «Ալաջան, որ կհյուսվի (հայ) գաղթականներու կողմեն՝ Հալեպեն Անատոլու արտածելու համար, շատ կհառաջադիմի և մեծ հետաքրքրություն ստեղծած է: Ավելի քան չորս հազար հոգի կաշխատին, և արտադրությունը տակավին բավական չէ Անատոլուեն եղած խնդրանքին»[9]: Բայց 1925 թ. սկզբներին թուրքական իշխանությունները արգելեցին ալաջայի և սիրիական մյուս ապրանքների մուտքը Թուրքիա: Դրանով խիստ անկում ապրեց ալաջայի արտադրությունը, որն ապրուստի էական միջոց էր հազարավոր հայ գաղթականների համար:

Մեծ թվով աշխատավորուհիներ զբաղեցնող ասեղնագործությունը «գրեթե ամբողջովին հայոց ձեռքն» էր[10]: Հայուհիները պատրաստում էին բազմատեսակ («Այնթափի գործ», «Մարաշի գործ», «Ուրֆայի գործ» և այլ) ձեռագործներ: Ոսկե և արծաթե թելերով նրանց ասեղնագործած զգեստները, գոտիները, գլխաշորերը, սեղանի սփռոցները, վարագույրները, թաշկինակները լայն սպառում ունեին ոչ միայն տեղական շուկայում, այլև արտահանվում էին ԱՄՆ և Եվրոպայի բազմաթիվ երկրներ: Ասեղնագործությունը պատերազմից տուժած հազարավոր «այրի կիներու ապրուստի միակ միջոցն» էր: Այդ հանգամանքը նկատի ունենալով պետական իշխանությունները մաքսատուրքից առհասարակ

ազատել էին ասեղնագործության համար անհրաժեշտ նյութերի ներմուծումը, իսկ արտահանվող ապրանքներից մաքս էին գանձում ինքնարժեքի 1 հարյուրերորդական չափով[11]: Հովանավորող մաքսերը զգալի դեր կատարեցին ասեղնագործության հետագա զարգացման գործում:

Մինչև հայ գաղթականների ներհոսը Սիրիայում կային մի քանի գորգագործական արհեստանոցներ, որոնք արտադրում էին հիմնականում քիլիմ կամ այսպես կոչված քրդական գորգ: Այդ արհեստանոցներում գործում էին մի քանի հարյուր դազգահ և նրանց արտադրանքը համարյա ամբողջովին սպառվում էր ներքին շուկայում: Հայերը զարկ տվեցին գորգագործությանը: 1926 թ. Հալեպում և Բեյրութում հայ վարպետներն արդեն հաստատել էին «կարգ մը գորգի գործարաններ», որոնք, ինչպես նշել է «Արև»-ի թղթակիցը, «մեծ ապագա» էին խոստանում[12]: 1920-ական թթ. վերջերին շուրջ հազար դազգահ էր գործում գորգագործական այն բազմաթիվ մանր արհեստանոցներում, որոնց հիմնադիրները, վարպետները և աշխատավորները մեծ մասամբ հայեր էին:

1930 թ. Բեյրութում գորգագործ վարպետ, «ադանացի Ֆապրիքաթեոռ» Մուրատ Աշըքյանը հիմնադրել է առաջին գորգագործական ձեռնարկությունը, որը զինված էր Եվրոպայից բերված մեքենաներով: «Եփրատ» լրագիրը հաղորդում էր. «(Այդ գործարանում) պիտի պատրաստվեն ոչ միայն նուրբ, այլև անհամեմատ աժան 8—9 տեսակ մանածներ...: Այս գործարանը, որ առաջին նախաձեռնությունն է իր տեսակի մեջ, մեծ զարկ պիտի տա գորգագործության զարգացմանը»[13]: Հետագայում շարք են մտել նաև Թաշճյանի և ուրիշների գորգագործական ձեռնարկությունները, սակայն զարգանալու հնարավորություն չեն ունեցել մաքսային և այլ դժվարությունների հետևանքով: Դրանք խանգարում էին նրանց արտադրանքի արտաքին շուկա դուրս գալուն:

Արդյունաբերական լուրջ նախաձեռնություն էր Հալեպի մետաքսագործական «Նշարթվա» (Նշան, Արթին, Վահան) հայկական ընկերությունը, որի մասին մեզ հայտնի աղբյուրներում պահպանվել են էական ոչինչ չասող տեղեկություններ: Ընկերության հիմնադիրներից Նշան Փալանճյանի մահից հետո «Նշարթվան» լուծարքի ենթարկվեց: Համաշխարհային պատերազմի ավարտին «Նշարթվայի» նախկին բաժնետերերից Մարտիրոս և Պարգև Դեղարարյանները Բեյրութում հիմնեցին իրարից անկախ երկու արդիական մետաքսագործարան:

1935 թ. հունիսի 15-ին Սիրիայում հիմնադրվեց «Ոստան» հայկական բաժնետիրական ընկերությունը՝ 12.000 սիր. լիրա կապիտալով:

«Ոստանի» հիմնադիրները (Նշան Փալանճյան, Արամ Գազանճյան, Վահե Սեթյան, Հրաչ Փափազյան, Մովսես Տեր Գալուստյան) նպատակ էին դրել Ջեբել Մուսայի Պիթիաս գյուղում «հիմնել հյուսվածքեղենի (մետաքս, արհեստական մետաքս և բամբակ) գործարան մը և զարկ տալ նույն շրջանի տնային հյուսվածքեղենի ճարտարվեստին»։ Հրապարակվել է յուրաքանչյուրը 6 սիր. լիրա արժեքով 2000 բաժնեթուղթ և այլն։ Սակայն «Ոստան» ընկերությունը համարյա չգործեց այն իրադարձությունների հետևանքով, որոնք հանգեցրին Ալեքսանդրետի սանջակի անջատմանը Սիրիայից[14]։

Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում գործում էին հայ վարպետների ոսկերչական, երկաթագործական, ձուլագործական, պղընձագործական, մեքենաների վերանորոգման, կոշկակարական, կաշեգործական և այլ բազմատեսակ արհեստանոցներ, որոնցից մի քանիսի հիմքի վրա համաշխարհային պատերազմի տարիներին առաջացան բավական կարևոր ձեռնարկություններ։

Արդյունաբերության և արհեստագործության համեմատությամբ հայերը փոքր դեր էին կատարում գյուղատնտեսության ասպարեզում։

Սիրիայի և Լիբանանի երկրագործությունը կարիք ուներ աշխատող ձեռքերի, սակայն հայ գաղթականները, ինչպես նշել է Սոյ. Դադը, «չքավոր» և «գործի կարոտ» լինելով հանդերձ մերժում էին գյուղ գընալ և ապրուստ վաստակել երկրագործությամբ։ Անդրադառնալով այդ «բացասական երևույթին» նա թվարկում է հետևյալ պատճառները. «առաջին՝ ժողովուրդներու բնական հոսանքը դավառեն քաղաք։ Երկրորդ՝ (հայերի) հող գնելու կարողության պակասը փոքր հողատեր ըլլալու, բան մը որ կատիպե գաղթականը հողատիրոջ համար աշխատիլ ածան։ Երրորդ՝ գաղթականներու կյանքի մակարդակին բարձրությունը, որ անկարելի կընե անոնց ընդունիլ այն դույզն վճարումը, զոր հողատերերը կընեն արաբ ֆելլահին։ Չորրորդ՝ կյանքի և ինչքի անապահովությունը հեռավոր, բոլորովին օտար և հաճախ թշնամի վայրերու մեջ»[15]։

Ռիհանիեի շրջաններում վերաբնակեցված փոքրաթիվ հայ գյուղացիները զբաղվում էին բամբակի մշակությամբ։ 1936 թ. նոյեմբերին այցելելով Հայաշեն գյուղը, Արտ. արք. Սյուրմեյանը գրել է. «Բամբակենիները մեր հասակեն ավելի բարձր էին և յուրաքանչյուր տունկի վրա 250-ի չափ սպիտակ և առողջ բոժոժներ կապված էին, գեղատեսիլ ու հիացում տվող։ Հոս բամբակի արտերը առատ ջուրով ոռոգվելուն. բերքը հիանալի է»[16]։

Լեռնավայրի հայ գյուղացիները ղգալի եկամուտ էին ստանում ծխախոտի մշակությունից։ Սակայն 1930-ական թթ., երբ վերսաին ծխախոտագործությունը դարձավ ֆրանսիական ռեժիի մոնոպոլիան, նրանք համարյա զրկվեցին ապրուստի այդ աղբյուրից։ Գյուղացիները կարող էին այնքան ծխախոտ ցանել, որքան թույլատրվում էր ռեժիի կողմից և, որ առավել վատն էր, նրանք պարտավոր էին բերքը վաճառել միայն ռեժիին՝ նրա իսկ սահմանած գներով։ «Սաութ ալ-Ահրար» արաբական թերթը գրում էր. «Ծխախոտի մենաշնորհն ապրատահմանյան մոնոպոլիաներին հանձնելով, Սիրիան կորսնցնում է եկամտի վերջին աղբյուրը»[17]։

Արհեստական մետաքսի մրցակցության հետևանքով, հայ գյուղացիները զրկվեցին շերամաբուծության եկամուտներից։ Անտիոքի շրջանի հայ գյուղացիները «տակավ առ տակավ փճացուցին... թթատատանները և անոնց տեղ սկսան մշակել ավելի հասութաբեր պտուղներ՝ նարինջ, դեղձ»[18] և այլն։

Հայերի դերը փոքր էր նաև առևտրի ասպարեզում։

Համաշխարհային պատերազմից հետո սիրիահայ առևտրականները ոչ միայն «ուժահատ և դրամազուրկ» էին, այլև գտնվում էին նախապատերազմյան պարտքերի բեռան տակ։ Պարտատերերը դատարանի միջոցով պահանջում էին պարտքերի «դանձումը կամ պարտապանների բանտարկությամբ պատժվիլը»[19]։ Սիրիայի դաշնակցային խորհրդի նախագահը և գերագույն կոմիսարը, ընդառաջելով հայ առևտրականների դիմումին, հայտարարել են նախապատերազմյան պարտքերի մորատորիում։

Սիրիահայ առևտրականներին հաջողվեց, թեկուզ մասամբ, վերականգնել միայն այն կապերը, որ ստեղծել էին համաշխարհային պատերազմից առաջ Անատոլուի շուկաների հետ։ Ժամանակի հայ մամուլն այդ հաջողությունը ողջունել է որպես սիրիահայ առևտրականների տնտեսական դիրքերի ամրապնդման երաշխիք։ «Արև» լրագիրը գրում էր. «Անոնցմե (Բեյրութի և Հալեպի հայ առևտրականներից) շատերը Անատոլուի ներսի գավառներուն մեջ առևտրական կարևոր գործառնություններ կընեն։ Տենդագին աշխատության մը լծված են Սուրիո մեր ազգայինները, լայն չափով կշահին ու կնպաստավորվին ներկայացող պատեհություններեն»[20]։ Սակայն այդ աշխուժությունը, ինչպես նշվեց, երկար չտևեց։ Այժմ արտաքին կապերից զրկված և պարտքերի տակ ճնշված սիրիահայ առևտրականներին մնում էր կծկվել մանր առևտրի ոլորտում։

Մանր առևտրի շուկաներ կային համարյա բոլոր հայկական գաղթակայաններում: Նկարագրելով Բեյրութի «գաղթականների շուկան», Մերձավոր Արևելքի նպաստամատույցի տնօրեն Չարլս Վ. Ֆաուլը գրել է. «Գաղթականներու շուկան հայոց առևտրական վերջին նորությունն է: ...փայտե տաղավարներն ու խանութները ամենուրեք կտեսնվին: Ոմանք ապրանք կծախեն, ոմանք սրճարան ունին կամ սափրիչի խանութ...: Կվաճառվին ամեն տեսակ ապրանքներ՝ զգեստեղեն, դուլպա, կոշիկ, օճիք, կոճակ և այլն: Մարդ ինչ որ ուզե կրնա գտնել ավելի աժան, քան քաղաքի վաճառատուններուն մեջ»[21]:

Հետագա տարիներին սիրիահայ առևտրականներից ոմանց հաջողվեց կապեր հաստատել Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների շուկաների հետ, բացվեցին հայ առևտրականների «ներմուծող-արտածող» գրասենյակներ, պահեստներ, սակայն մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը նրանց գործառնությունները զգալի տեղ չէին գրավում Սիրիայի և Լիբանանի առևտրական հաշվեկշռում:

Ըստ տնտեսագետ Ֆարա Ադնանի, 1936 թ. Սիրիայի ազգային եկամտի 64,62%-ը բաժին էր ընկնում խոշոր կալվածատերերին և առևտրականներին, 10,56%-ը՝ բանվորներին և 24,82%-ը՝ գյուղացիությանը[22]: Ազգային եկամտի անարդար բաշխման հետևանքով, գյուղի և քաղաքի աշխատավորներն ապրում էին աղքատության մեջ:

Առանձնապես ծանր էր գյուղացիության վիճակը: Գյուղացիներն անասունների հետ ապրում էին միևնույն խրճիթում, չունեին ոչ մի կահույք, ուտում, հանգստանում և քնում էին գետնի վրա: Միսը հազվագյուտ երևույթ էր գյուղացու հարկի տակ, իսկ թեյը կամ սուրճը համարվում էին պերճանք...[23]: Աքրաբ ֆելլահի հայ հարևանները հազիվ թե ավելի բախտավոր լինեին:

1931 թ. լինելով Հայաշեն, Վարդաշեն և մյուս նորահաստատ հայաբնակ գյուղերում, Վ. Թեքեյանը նշել է, որ հայ գյուղացիների «99%-ին սնունդն է, այս կլիմայի տակ, ջերմի բույներու մոտիկ, հաց, լոլիկ, կանաչ պղպեղ և ասոր նման բաներ և հազիվ 10—15 օրը անգամ մը կըրնան միսի երես տեսնել: ... Հայաշեն գյուղը, որ ամենեն առաջ հիմնված է, այսօր ողորմելի վիճակ մը ունի: Անցյալ ձմեռ շատերը հազիվ ուտելու հաց մը ունեին, և ներկա հունձքերնին այնքան ճղճիմ է, որ հարց է, թե պիտի կրնան ձմեռը անցնել, եթե մեկ կողմե պետությունը իրենց մե տասանորդի տուրք կպահանջե, և մյուս կողմե ալ նախապես իրենց

փոխ տրված դրամին գանձումին պահանջը կա»[24]: Տարբեր չէր մյուս հայաբնակ գյուղերի վիճակը:

Հողազուրկ գյուղացիները մեծ խմբերով չվում էին քաղաք, որտեղ, սակայն, աշխատավորների կենսապայմանները նույնպես ծանր էին: Չկար աշխատանքային ոչ մի օրենք, ոչ մի դրավոր կարգադրություն, աշխատավորների շահագործումը թողնված էր ձեռնարկատերերի ագահ կամքին: Աշխատանքային օրը տևում էր արևածագից մինչև արևամուտ: Այդ ուժասպառ աշխատանքի համար աշխատավորները ստանում էին 40—50, երբեմն էլ 20—25 դրուշ օրավարձ, որը չէր կարող նույնիսկ բավարարել նրանց մինիմում կարիքները:

Բացի այդ, ֆրանսիական իմպերիալիստների վայրագ քաղաքականությունը խիստ բացասաբար էր անդրադառնում աշխատավորների տնտեսական վիճակի վրա: Ֆրանկի արժեքազրկման դուգընթաց, սիրիական և լիբանանյան լիրայի գնողական արժեքը պարբերաբար նվազում էր: Աղյուսակում բերված տվյալները[25] ցույց են տալիս, թե ինչպիսի արագությամբ էր թանկանում կյանքը՝ ֆրանկի արժեքազրկման հետևանքով.

Աղյուսակ № 4

Քաղաքներ	1936 սեպտ.	1936 դեկտ.	1937 հունիս	1937 դեկտ.	1938 հունիս	1938 դեկտ.
Բեյրութ	100 %	151.2	162.8	184	162	190.2
Դամասկոս	100 %	141	153.9	194.4	179	204.5
Հալեպ	100 %	147.8	165.6	201	193.4	218

Սակայն աշխատավորների առավել խոշոր թշնամին գործազրկությունն էր: Գործազրկությունն ավելի էր գործում հատկապես համաշխարհային ճգնաժամի տարիներին: Հաց գտնելու հույսով հարազատ վայրերից պոկված գյուղացիները թափառում էին նավահանգիստներում, երկաթուղու կայարաններում, դիշերում փողոցներում: 1929 թ. Բեյրութում աշխատանքի ընդունակ հայ գաղթականների «հարյուրեն 40-ը» գործազուրկ էր[26]: Գաղթականների վիճակը մոտավորապես նույնն էր նաև մյուս քաղաքներում:

Իշխանավորները ոչ մի միջոց չէին ձեռնարկում աշխատավորների

վիճակը գոնե տանելի դարձնելու համար։ Նրանց վիճակը վատից գերնում էր դեպի վատթարագույնը։ «Հուսաբերը» հաղորդում էր. «Կյանքի սղությունը, շահադեհներու մթերումներն ու ժողովրդական դժգոհությունները նախանցյալ շաբաթվան ընթացքին առիթ տվին «անօթության ցույց»երու Հոմսի, Համայի և Ալեքսանդրետի մեջ»։ Ցույցեր եղել են նաև Սիրիայի մայրաքաղաքում։ «Մոտ 3000 ցուցարարներ «անօթի ենք» աղաղակներով խռնվեցան Մերժիի հրապարակին վրա։ Բազմահարյուր կիներ թափոր կազմած ուղղվեցան դեպի սերայ, բողոքելով տիրող թշվառության ու սովի սպառնալիքի դեմ»։ Ցուցարարները քարերով հարձակվել են սերայի և քաղաքապետարանի վրա, ոստիկանությունը կրակ է բացել, սպանվել են 4 ցուցարար և մի ոստիկան։ Վիրավորվել են ավելի քան 20 ցուցարարներ[27]։

Աշխատավորների «անօթության ցույցերը» չմուլացող թափով շարունակվեցին նաև 1938 թվականին։ Դեմոկրատ հրապարակախոս Հակոբ Բերբերյանը գրում էր. «Փոքր չէ այն բանվորական ընտանիքներու թիվը, որոնց տան մեջ կրակ չի վառիր, տաք կերակուրի երես չեն տեսներ, շատ ու շատ ընտանիքներ անօթի կպառկին...։ Այս անօթությունն ու սղությունը, աշխատավորները թշվառության մատնելով, անոնց կյանքը դժոխքի վերածեցին։ Այդ կացությունն էր, որ անցյալ շաբաթ խումբ մը աշխատավորներ մղեց փուռերու վրա հարձակվիլ և բացականչել՝ «Հաց կուզենք, մեր զավակները անօթի են» ըսելով»[28]։

Այսպիսով, ֆրանսիական իմպերիալիստները չփորձեցին լուծել (չէին էլ կարող լուծել) Սիրիայի և Լիբանանի տնտեսական հրատապ հարցերը։ Նրանք բառի իսկական առումով թալանում էին այդ երկրները։ Նրանց տնտեսական քաղաքականությունը տանում էր դեպի աշխատավորական զանգվածների աղքատացում, թշվառացում։ Աշխատավորները պայքարում էին աշխատավարձի բարձրացման, աշխատանքային օրվա կրճատման, աշխատանքի պայմանների բարելավման համար։

2. ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ ՍԻՐԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Սիրիայում և Լիբանանում կոմունիստական շարժումները ձևավորվել են միջազգային բանվորական շարժումների այն վիթխարի վերելքի ազդեցության ներքո, որ 1919—1923 թթ. առաջացրեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը։

Սիրիայի և Լիբանանի ժողովրդական ամենալայն զանգվածների հա-

մար սկզբունքային նշանակություն ուներ ՌՍՖՍՀ ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 3-ի դիմումը, որտեղ ասված էր. «Արևելքի մուսուլմաններ, պարսիկներ և թուրքեր, արաբներ և հնդիկներ, ... դուք ինքներդ պետք է դառնաք ձեր երկրի տերը: Դուք ինքներդ՝ ըստ ձեր ցանկության պետք է կառուցեք ձեր կյանքը: Դուք ունեք այդ բանի իրավունքը, քանի որ ձեր ճակատագիրը ձեր սեփական ձեռքերում է»: Սիրիայի աշխատավոր գյուղացիությանը ոգևորում էր մանավանդ այն, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը բռնագրավում և աղքատ գյուղացիներին էր բաժանում կալվածատիրական հողերը:

1920-ական թթ. Սիրիայում արդեն գործում էին առաջին կոմունիստական խմբակներն ու մարքսիստական շրջանակները, սակայն թե ե՞րբ է ստեղծվել Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, տարբեր հեղինակներ տալիս են տարբեր պատասխան: Դեմոկրատ պատմաբան Սուլեյման Ադիլը գրում է. «Մի խումբ բանվորներ և ուսանողներ, որոնք ծանոթացել էին սոցիալիստական գաղափարներին (1925 թ.) կազմեցին առաջին կոմունիստական խմբակները Լիբանանում, իսկ մի քանի տարի անց՝ նաև Սիրիայում»[1]: Նրա փաստարկությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը հիմնադրվել է ոչ ավելի շուտ, քան 1920-ական թ. վերջերին: Ըստ մի այլ հեղինակի, 1929—1930 թթ. Սիրիայի կոմունիստական խմբակներն ու շրջանակները, «միավորվելով, առաջացրին մեկ կազմակերպություն՝ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը»[2]: Նույնը կրկնում են նաև Տուրիշները:

Հաղիվ թե կարիք զգացվի վիճելու, քանի որ կան բազմաթիվ անժխտելի փաստեր Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության 1925—1930 թթ. գործունեության մասին: Օրինակ, 1925 թ. դեկտեմբերին Բեյրութում տեղի է ունեցել նրա առաջին կոնֆերանսը, որին մասնակցել են Բեյրութի, Հալեպի և այլ քաղաքների կոմունիստական կազմակերպությունների պատգամավորները: 1928 թ. Ֆուադ Շեմալին, որպես Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության պատգամավոր, մասնակցել է Կոմինտերնի 6-րդ կոնգրեսին: 1925—1930 թթ. հրապարակվել են բազմաթիվ կոչեր, հայտարարություններ, նամակներ և այլ փաստաթղթեր, որոնք կրում են «Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե» ստորագրությունը:

Ըստ միջազգային կոմունիստական շարժման ականավոր գործիչ Խալեդ Բեկդաշի, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը հիմնադրվել է 1924 թ. հոկտեմբերի 28-ին[3]: Ակներևաբար, նա

նկատի ունի այդ թվականին Բեյրութում կազմակերպված արաբական առաջին կոմունիստական խմբակը, որի կազմում էին Ֆուադ Շեմալին, Յուսուֆ Յաղբեկը, Ֆարիդ Տեհմեն, Էլիաս Կաշաամին և Բուդրոս Հաշեմին[4]: Այդ խմբակի նախաձեռնությամբ ստեղծվեց ոչ թե Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, այլ ժողովրդադեմոկրատական ծրագրով «ժողովրդական կուսակցությունը», որի շարքերում կոմունիստների կողքին կային նաև ղգալի թվով ոչ-կոմունիստներ:

Ավելի վաղ՝ 1922 թ. Բեյրութում գործում էր «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան ուսանողներու միությունը», որը, չնայած այդպես կոչվելուն, համարյա կապ չուներ հնչակյան կուսակցության հետ և համարվում էր կոմունիստական ինտերնացիոնալի կողմնակից[5]: 1923 թ. «Ուսանողներու միությունը» կազմալուծվեց, նրա առավել առաջադեմ անդամների նախաձեռնությամբ ստեղծվեց կոմունիստական «Սպարտակ» կազմակերպությունը, որը կարճ ժամանակում ճյուղավորվեց նաև Հալեպում, Ջահլեում և Ջեբել Մուսայում: Բեյրութում «Սպարտակի» պատասխանատու աշխատողներն էին Հարություն Մադեյանը, Ավետիս Գնդունին, Միքայել Անանիկյանը, Պետրոս Պարտիզպանյանը, Ոսկան Հովհաննիսյանը, Խաչիկ Փափազյանը, Արամ Երիցյանը, Իսկենդեր Կերյանը, Ավետիս Կեռվերյանը, Շավարշ Միհրանյանը, Ջահլեում՝ Հայկազուն Բոյաճյանը, Հալեպում՝ Մասիս Փանոսյանը, Սեդրակ Հայկազյանը, Ստեփան Գալաֆյանը, Ջեբել Մուսայում՝ Փանոս Արամայիսյանը, Հակոբ Տեր-Պետրոսյանը և մի շարք ուրիշներ (Սեդրակ Հայկազյանը համարվում է Ջեբել Մուսայում առաջին կոմունիստական խմբակի կազմողը): «Սպարտակը» կապ էր պահպանում Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության և Հայաստանի լենինյան կոմերիտմիության հետ[6]:

1924 թ. հոկտեմբերի 28-ին կային և՛ արաբական, և՛ հայկական կոմունիստական խմբակներ, բայց տակավին չկար Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը: Այդ խմբակների միջև օրգանական կապ չի եղել մինչև 1925 թ. մայիսի 1-ը, երբ Բեյրութում տեղի ունեցավ Սիրիայի և Լիբանանի նորագույն պատմության առաջին աշխատավորական զանգվածային ելույթը: Արաբ և հայ ցուցարարները, քաղաքում կարմիր դրոշներ պարզած տողանցելուց հետո միտինգ գումարեցին կինո «Կրիստալի» սրահում: Արտասանվեցին արաբերեն և հայերեն ճառեր, պահանջելով աշխատանքային ութժամյա օր, սոցիալական ապահովություն և այլն: Հենց այդ ժամանակ, ինչպես նշել է արաբ գործիչ Այուբը, «կապ հաստատվեց հայ բոլշևիկների հետ, որոնք կազմել էին իրենց հատուկ կուսակցությունը՝ «Սպարտակը»[7]:

Մայիսմեկյան միտինգից անմիջապես հետո կայացած արաբ և հայ կոմունիստների խորհրդակցությունում որոշվել է միավորել Սիրիայի և Լիբանանի բոլոր արաբական ու հայկական կոմունիստական խմբակները։ Մի ուրիշ խորհրդակցության ընթացքում (հավանաբար հունիս կամ հուլիս ամսին) կազմվել է ժամանակավոր կոմիտե, որի կազմում էին Հարություն Մադեյանը, Յուսուֆ Յաղբեկը, Ֆուադ Շեհալին, Հայկազուն Բոյաճյանը և Էլիաս Աբու Նադերը[8]։ Դա Սիրիայի և Լիբանանի նորաստեղծ կոմունիստական կուսակցության առաջին կենտրոնական կոմիտեն էր։

Այսպիսով, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը հիմնադրվել է 1925 թ. ամռանը՝ իրարից անջատ գործող արաբ և հայ կոմունիստական խմբակների միավորումով։

Մինչև 1941 թվականը, չհաշված 1938—1939 թթ. կարճ ժամանակաշրջանը, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը գործել է ընդհատակում, ոստիկանական հալածանքի, բանտի ու աքսորի պայմաններում։ Այդ պատճառով տվյալներ համարյա չեն պահպանվել նրա անդամների թվաքանակի, նրանց ազգային պատկանելության և այլ հարցերի վերաբերյալ։ Օգտվելով այդ հանգամանքից, հակակոմունիզմի ասպետները պնդում են, որ իբր Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը բաղկացած էր համարյա միայն հայերից։ Այդ ստահոդ պրոպագանդայի նպատակն էր կոմունիստական շարժումը ներկայացնել արաբ ժողովրդի հետ ոչ մի կապ չունեցող և պարզապես օտարների կողմից հրահրվող շարժում։ Ֆրանսիական դաղտնի ոստիկանության հորինած այդ կեղծիքը որպես պատմական փաստ տեղ է գտել Ա. Հ. Հուրանիի, Լակեռուի և այլ հեղինակների աշխատություններում[9]։

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության շարքերում ընդգրկված էին այդ երկրների համարյա բոլոր ժողովուրդների առավել համարձակ, առավել առաջադեմ աշխատավոր զավակները, ուր հայերն արաբներից հետո կազմում էին մեծամասնությունը։ Հնարավոր է, որ հայերը թվական դերակշռություն ունեին կոմունիստական որոշ «նորաստեղծ խմբակներում», սակայն դրանց միավորվելուց հետո պատկերը փոխվել է։

Մինչև 1920-ական թվականների վերջերը հայերը բավական ակնառու դեր էին կատարում կուսակցության բոլոր ղեկավար օրգաններում, սակայն հետագայում իրենց դիրքերը մեծ մասամբ զիջեցին արաբներին։ 1934—1935 թթ. կուսակցության ղեկավարներն էին Խա-

լեդ Բեկդաշը, Մուստաֆա Արիսը, Ֆուադ Կապանը, Նիկոլա Շաուին և ուրիշներ, որոնք մասնակցել էին կոմինտերնի 6-րդ կոնգրեսին:

Փաստ է, որ հայ աշխատավորները կարևոր դեր են կատարել Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ստեղծման գործում և մշտապես կազմել են նրա մարտական ջոկատներից մեկը:

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության առաջնահերթ խնդիրներից մեկը տարբեր ազգության և կրոնի պատկանող աշխատավորներին հեղափոխական արհմիություններում միավորելն էր:

1920-ական թթ. Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում տակավին գործում էին իրենց դարն ապրած համքարությունները: Դրանք, միավորելով նույն արհեստով զբաղվող շահագործողներին և շահագործվողներին, անվերջ պայքարում էին միմյանց դեմ: Մրցակցության մտնելով արաբների հետ, հայերն իջեցնում էին իրենց արտադրանքի գինը, իսկ արաբները բոյկոտ էին հրահրում նրանց դեմ: Դամասկոսից գրում էին. «Երկու ամիսն ի վեր հայ արհեստավորներու և առևտրականներու դեմ բոյկոտի շարժում մը սկսած է, որ հետզհետե կատաղանա: Վերջերս մզկիթներու պատերուն վրա և շուկայի մեջ տեղ-տեղ հայոցմե առևտուր չընելու իմաստով հայտարարություններ ալ փակցված են»[10]: Այնուհետև թղթակիցը պատմում է, թե ինչպես Դամասկոսի հայ կոշկակարների և պղնձագործների համքարությունները միջոցներ են ձեռք առել, որպեսզի կարողանան «չեզոքացնել իրենց դեմ ուղղված այդ անարդար բոյկոտը»[11]:

1928 թ. Բեյրութում կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ կազմվել է «Արհմիությունների կազմակերպիչ հանձնաժողովը», բաղկացած արաբ և հայ աշխատավորների ներկայացուցիչներից[12]: Սակայն նրա ճանապարհին կային բավական լուրջ դժվարություններ: Անհրաժեշտ էր, նախ և առաջ, փարատել հայ-արաբական փոխադարձ անվստահությունը, որը, ինչպես կնշվի համապատասխան տեղում, տևապես հրահրում էին ֆրանսիական իմպերիալիստները և թուրքական գործակալները:

1929—1930 թթ. արաբական մամուլի առաջադեմ օրգանները գրում էին. «Բոլոր բանվորներն առանց հայի և արաբի խտրության եղբայրներ են»: Բեյրութի «Ալ-Ումմալ» թերթն ազդարարում էր. «Մի շարք ազգայնական ղեկավարներ խիստ հարձակումներ են գործում հայերի վրա, և արաբներին դրդում թշնամաբար վարվել նրանց հետ...: Մենք

չենք պաշտպանում ոչ հայ հարուստներին, ոչ հայ կապիտալիստներին, սակայն չենք կարող հանդուրժել, որ արաբ բանվորներին՝ հայ բանվորների դեմ գրգռող խոսքեր ասվեն։ Բոլոր բանվորները եղբայրներ են, թշվառության և աղքատության ընկերներ, ունեն միևնույն տնտեսական և քաղաքական շահերը, հետևաբար պարտավոր են միավորվել, լինել միասնական հանուն իրենց իրավունքների պաշտպանության»[13]։

Դատելով արաբական մամուլի նյութերից, հայ և արաբ աշխատավորների մերձեցմանը խանգարող ոչ-անկարևոր պատճառ էր նաև այն, որ հայերը կարիքից մղված հաճախ խախտում էին աշխատավարձի ընդունված նորմաները։ «Ալ-Ումմալը» գրում էր. «Հայ բանվորը ամենևին էլ զուրկ չէ արժանապատվության զգացումից։ Նա իր մի պատառ հացը շահում է ոչ թե մուրացկանությամբ, այլ սեփական ճակատի դառն քրտինքով։ Նա համաձայնվում է ցածր վարձով աշխատել որպեսզի սովամահ չլինի...։ Երբ հայ և արաբ աշխատավորները միավորվեն արհեստակցական միություններում, ապա, ոչ միայն վերջ կգտնի նրանց մրցակցությունը՝ աշխատավարձի շուրջը, այլև հնարավոր կդառնա համատեղ պայքարն աշխատավարձի բարձրացման, աշխատանքային ժամերի կրճատման, մի խոսքով, աշխատավորների վիճակի բարելավման համար»[14]։

Արհմիությունների կազմակերպիչ հանձնաժողովը ձեռք բերեց որոշակի հաջողություններ։ Ստեղծվեցին բազմաթիվ արհեստակցական (տեքստիլագործների, կաշեգործների, հացագործների, երկաթագործների, ատաղձագործների, կոշկակարների, դերձակների և այլն) միություններ, որոնցում ընդգրկված էին նաև զգալի թվով հայ բանվորներ։

Տարբեր ազգության և կրոնի աշխատավորներին միավորելու ուղղությամբ տարվող աշխատանքները, բախվելով ֆրանսիական իմպերիալիզմի և տեղական ռեակցիայի դիմադրությանը, լրիվ հաջողություն չունեցան, սակայն զգալիորեն նպաստեցին արաբ և հայ աշխատավորների մերձեցմանը, նրանց դասակարգային շահերի գիտակցության բարձրացմանը։

Սիրիայի և Լիբանանի աշխատավորներն անցել են ազգային-ազատագրական մարտնչումների փառապանծ ուղի, կերտել են հակաիմպերիալիստական պայքարի ոգեշնչող, ուսանելի դրվագներ։

Ջեբել Դրուզի ապստամբությունը (1925—1927) ճնշելուց հետո ֆրանսիական իմպերիալիստները ձեռնարկեցին մի շարք ցուցադրա-

կան միջոցառումներ, որոնց նպատակն էր պատրանք ստեղծել մանդատը վերացնելու մասին։ Դրանցից էր Լիբանանի հանրապետության ստեղծումը։ Արաբ պատմաբան Հադդադը դիպուկ կերպով նշել է. «Լիբանանի հանրապետությունը՝ հանդերձ բոլոր օրգաններով ստեղծվեց տաս օրվա ընթացքում»։ Լիբանանը ունեցավ սահմանադրություն, պառլամենտ, սենատ, հանրապետության նախագահ, կառավարություն, բայց անկախ և սուվերեն պետություն չէր[15]։ Այդպիսի «անկախ հանրապետություն» ստեղծելու փորձ կատարվեց նաև Սիրիայում։

1925 թ. ապրիլի 24-ին ֆրանսիական իմպերիալիստները Սիրիայում անցկացրին սահմանադիր ժողովի ընտրություններ, սակայն ընբրանց հաշիվները ճիշտ դուրս չեկան։ Սահմանադիր ժողովում աթոռների մեծամասնությունը ձեռք բերած ալ-կութլա ալ-վաթանիյա (Ազգային Բլոկ) կուսակցությունը կազմեց Սիրիայի սահմանադրության նախագիծը, որով նախատեսվում էր ստեղծել ազգային անկախ պետություն։ Օգոստոսի 8-ին, երբ պետք է քվեարկության դրվեր այն, գերագույն կոմիսար Պոնսոն պահանջեց հանել 2, 73, 74, 110 և 112-րդ հոդվածները[16], որոնք իբր հակասում էին Ֆրանսիայի ստանձնած միջազգային պարտավորություններին։ Սահմանադիր ժողովի նստաշրջանը փակվեց առանց որևէ դրական արդյունքի։

1929 թ. փետրվարի 7-ին ֆրանսիական իմպերիալիստները ցրեցին Սահմանադիր ժողովը, իսկ 1930 թ. մայիսի 22-ին գերագույն կոմիսար Պոնսոն փորձեց դեկրետով պարտադրել սահմանադրության ֆրանսիական տարբերակը, որը, սակայն, չարժանացավ ժողովրդի հավանությանը։ Բողոքի ելույթները ճնշելու նպատակով, իմպերիալիստները հարվածի տակ դրեցին ինչպես արաբ, այնպես էլ հայ դեմոկրատական կազմակերպությունները, նրանց մեղադրելով Սովետական Միության քաղաքական նպատակներին ծառայելու մեջ։ Ֆրանսիական իմպերիալիստներից ֆինանսավորվող «Լա Սիրի» թերթը գրում էր. «Սովետական Միության օգտին պայքարող հայտնի գործիչներ (Հարություն) Մադեյանի և (Ֆուադ) Շեմալիի ձերբակալությամբ կոմունիզմը նորից օրակարգի հարց դարձավ և ղբաղեցնում է բոլոր պետական օրգանները։ ... Պարտավոր ենք ընդունել, որ բոլշևիկյան պրոպագանդան հող է շահում Մերձավոր Արևելքում»[17]։

Ձերբակալվածների շարքում որոշ թվով հայերի առկայությունը պատրվակ է ծառայել ռեակցիոն թերթերին՝ թունոտ սլաքներ ուղղելու հայերի դեմ։ «Լ'Օրիան» թերթը գրում էր, որ հայերը «կրակի հետ կխաղան» աջակցելով կոմունիստների «քայքայիչ գործունեությանը» և

առաջարկում էր հայերին հեռացնել քաղաքներից, քշել գյուղական վայրեր, իսկ եթե այնտեղ էլ նրանք «շարունակեն կոմունիստական թրռուցիկներ տարածել», ապա նրանց «արտաքսել երկրից»[18]: Սակայն ռեակցիոն թերթերն ընկան ծիծաղելի դրության մեջ, երբ պարզվեց, որ ոստիկանները որպես կոմունիստ ձերբակալած և բանտ են նետած եղել մեծ մասամբ հնչակյաններ, ռամկավարներ և անկուսակցական հայեր:

1932 թ. ապրիլին Սիրիայում տեղի ունեցան բազմիցս հետաձգված պառլամենտական ընտրությունները, որոնք պսակվեցին ազգային ազատագրական ուժերի հաղթանակով: Վերականգնվեց սահմանադրությունը, ընտրվեց հանրապետության նախագահ, կազմվեց կառավարություն և սկսվեցին ֆրանս-սիրիական պայմանագրի բանակցությունները: Այժմ իմպերիալիստները փորձում էին մանդատը փոխարինել մանդատից չտարբերվող պայմանագրով: 1933 թ. ապրիլի 10-ին սիրիական կառավարությունը, բողոքելով գերագույն կոմիսար Պոնսոյի քաղաքականության դեմ, խզեց բանակցությունները: Նոյեմբերի 21-ին գերագույն կոմիսարի պաշտոնում Պոնսոյին փոխարինած դե Մարտելին հաջողվեց վերսկսել բանակցությունները, սակայն նրա առաջարկած պայմանագրի նոր տարբերակը չբավարարեց ազգային-ազատագրական ուժերին և Սիրիան վերստին ալեկոծվեց:

Դե Մարտելը ձեռք առավ մի շարք միջոցներ «իր կամքը Սիրիական նացիոնալիզմին պարտադրելու համար»: Ուշագրավ է, որ այդ միջոցներից մի քանիսը վերաբերում էին հայերին: Նրա կարգադրությամբ արդելվեցին հայկական հրապարակային հավաքույթները, դադարեցվեց հայկական դպրոցներին տրվող նպաստը և այլն: Դեկտեմբերի 28-ին Սիրիայի և Լիբանանի հայության ներկայացուցիչներին գերագույն կոմիսարիատ հրավիրելով, դե Մարտելը հայտարարեց. «Հայ ժողովուրդը պետք չէ քաղաքականությամբ զբաղվի այս երկրին մեջ»[19]: 1934 թ. դե Մարտելը ցրեց պառլամենտը, որով և բրվեցին ֆրանս-սիրիական հակասությունները: Սիրիայի համարյա բոլոր քաղաքներում տեղի ունեցան բողոքի արյունահեղ ցույցեր: Կալանքի վերցվեցին և դատվեցին հարյուրավոր ցուցարարներ, այդ թվում 19 հայեր: Կոմունիստներ Տիգրան Ալթունյանը և Սիսակ Թելլալյանը դատապարտվեցին 6, մյուսները՝ 3 և 2 ամիս բանտարկության[20]:

1935 թ. փետրվար-մարտ ամիսներին ժողովուրդը բոյկոտի ենթարկեց ֆրանսիական կապիտալին պատկանող տրանսպորտի, էլիկտրականության և, հատկապես, ծխախոտագործական ձեռնարկու-

թյունները։ «Ալ-Նիդա» արաբական թերթը գրել է. «Հայերն էլ մասնակցեցին ծխախոտագործական Ռեժի-ի դեմ ուղղված բոյկոտին.։ երեկ Բեյրութի փողոցներում նրանք ցուցադրական ձևով այրեցին ծխախոտի պաշարները»[21]։

1936 թ. Սիրիայի ազգային անկախության պայքարը հասավ իր բարձրակետին։ Հունվարի 11-ին Դամասկոսում ազգային հերոս Իբրահիմ Հանանոյի հիշատակին կազմակերպված սգերթը վերածվեց հակաիմպերիալիստական վիթխարի ցույցի, որի հետևանքով ոստիկանությունը կալանքի վերցրեց ալ-կութլա ալ-վաթանիյա կուսակցության մի շարք ղեկավարների և փակեց նրա ակումբները։ Հունվարի 20-ին ողջ երկրով մեկ սկսվեց ընդհանուր գործադուլ, որը տևեց 42 օր։ Ֆրանսիական իմպերիալիստները, վախենալով համաժողովրդական ապստամբության վտանգից, խոստացան ստորագրել Սիրիայի ժողովրդի ազգային պահանջներին համապատասխան պայմանագիր։

1936 թ. հունիսին Ֆրանսիայում իշխանության գլուխ բարձրացավ ժողովրդական ճակատի կառավարությունը՝ սոցիալիստ Լեոն Բլյումի գլխավորությամբ։ Այդ իրադարձությունը դրական ներգործություն ունեցավ ֆրանս-սիրիական բանակցությունների վրա։ Սեպտեմբերի 9-ին Փարիզում ստորագրվեց ֆրանս-սիրիական պայմանագիրը, որով մանդատը վերացվում էր, Սիրիան հռչակվում էր միասնական, անկախ և սուվերեն պետություն։ Սակայն միաժամանակ Ֆրանսիային իրավունք էր տրվում ռազմական բազաներ ունենալու Սիրիայում։ Այդ պայմանագիրը ուժի մեջ էր մտնելու ֆրանսիական պառլամենտի վավերացումից հետո՝ ոչ ավելի ուշ քան 1939 թվականը։ Նման պայմանագիր կնքվեց նաև Լիբանանի հետ։ Այդ պայմանագրերը Սիրիան և Լիբանանը ամբողջովին չազատագրեցին Ֆրանսիայի կախվածությունից, սակայն առաջընթաց խոշոր քայլ էին դեպի իսկական անկախություն։

Հաղթանակից հետո ալ-կութլա ալ-վաթանիյա կուսակցության ղեկավարները պատշաճը մատուցեցին հայերին։ Դոկտ. Իհսան Ջաբրին «Ալ-իթթիհատ» թերթում գրել է. «Մենք սուրիացիներս հայերը կհարգենք, անոնց առավելությունները՝ աշխատասիրությունը և ուղղամտությունը կգնահատենք։ ... Շատ կփափաքինք, որ հայ տարրը ինքզինքը հյուր կամ օտար չկարծե, այլ իր հարազատ երկրին մեջ զգա»[22]։ Բացի այդ, ազգային-ազատագրական ուժերի մի շարք ղեկավարներ, այցելելով Դամասկոսի և Հալեպի ազգային առաջնորդարանները, գոհունակու-

թյուն են հայտնել ազգային անկախության պայքարում հայերի «ցույց տված լրջության և հասունության համար»[23]։

Ֆրանսիայում ժողովրդական ճակատի կառավարություն ստեղծվելուց հետո Սիրիայում և Լիբանանում զգալի չափով բարելավվեցին դեմոկրատական կազմակերպությունների պայմանները։ Աշխուժացան նաև հայ դեմոկրատները։

1936 թ. հուլիսի 4-ին Հալեպում կազմվեց Սիրիահայ ժողովրդական ճակատը՝ «հակադաշնակցական, չեզոք ու Խորհրդային Հայաստանի համակիր» տարրերի նախաձեռնությամբ։ Հայ աշխատավորական միությունը, ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները, որոնք ընդունում էին «լայն ժողովրդական ճակատի մը անհրաժեշտությունը, մասնակցեցան անոր պաշտոնապես»[24]։

Հուլիսի 19-ին հրապարակվեց Սիրիահայ ժողովրդական ճակատի՝ «Հայ ժողովուրդին, Խորհրդային Հայաստանի համակիր բոլոր կազմակերպություններուն և անհատներուն» ուղղված կոչ-հայտարարությունը, որտեղ ասված էր. «Սուրիահայության ցավալի ու դժնդակ ապրելակերպը տարիներե ի վեր վատթարացման ուղիով կընթանար։ Տնտեսապես հյուծման ենթակա, քաղաքական ու մշակութային մարզերու մեջ բրտորեն ճնշված Սուրիո մեջ, հայությունը չէր կրնար արդեն ունենալ լուսավոր ապագայի ոչ մեկ հեռանկար։ ... Սակայն այս տարվան առաջին ամիսներուն քաղաքական դեպքերը գահավեժ արագությամբ հիմնական փոփոխության ենթարկեցին կացության տվյալները։ Սուրիո մեջ ընդհանուր գործադուլը ու սպառնացող ապստամբությունը վերջ դրավ բռնակալության շրջանին, ... տալով մեզի աղատությունների շրջանի մը անմիջական հեռանկարը և ազատ աշխատանքի կարելիություններ»[25]։

Սիրիահայ ժողովրդական ճակատը խոշոր նշանակություն էր տալիս հայ-արաբական հարաբերությունների սերտացմանը։ Արաբ ժողովրդի հետ «նոր ապրելակերպ մը ստեղծելու» և Սիրիայի հայության «բարօրությունը ապահովելու» համար կոչն անհրաժեշտ էր համարում բոլոր միջոցներով ցույց տալ, որ «Սուրիո կատարյալ ազատագրումն ու առաջադիմական ձգտումները միմիայն հրճվանք կներշնչեն հայ ժողովուրդի գիտակից զանգվածներուն»[26]։

Ի նկատի ունենալով, որ արաբ հասարակայնության որոշ խավեր անբարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում հայերի նկատմամբ,

Սիրիահայ ժողովրդական ճակատը կոչ էր անում գործնականապես փաստել «մեր տեղացի եղբայրներուն, թե հայ ժողովուրդը այս երկրի անկախության դեմ ոչ մեկ ձգտում ունի պաշտպանելիք, թե պատրաստ է հայ մշակույթի կողքին զորացնելու արաբ լեզվի ու մշակույթի ուսուցումը մեր կրթական հաստատություններեն ներս, թե հայ բանվորն ու աշխատավորը միմիայն երկրի ընդհանուր շահերուն նվիրված, իրենց արաբ եղբայրներուն հետ ձեռք-ձեռքի, հավաքաբար երկրի առաջադիմության ու աշխատավորության շահերու պաշտպանության համար գործակցելու պատրաստ են»[27]:

Բարձր գնահատելով աշխատավորական զանգվածների տնտեսական համատեղ պայքարի նշանակությունը՝ երկու ժողովուրդների բարեկամական փոխադարձ կապերի ամրապնդման գործում, Սիրիահայ ժողովրդական ճակատն անհրաժեշտ էր համարում, որ «արհեստակցական միություններու մեջ իրեն արժանի տեղը գրավե հայ աշխատավորությունը, և արաբներուն ցույց տա տնտեսական մարզի մեջ ևս այն շահերու համերաշխությունը, որ կկապե հայն ու արաբը»[28]: Սիրիահայ ժողովրդական ճակատը դատապարտում էր դաշնակցության հակասովետական գործունեությունը[29]:

Սիրիահայ ժողովրդական ճակատը «խորհրդային Հայաստանի և սուրիահայ ժողովրդի միջև կապերու սերտացումը» պայմանավորում էր «դանգվածներու մոտ դաշնակցության՝ տարիներու ընթացքին ձևավորած տրամադրություններու ու հոգեբանության հեղաշրջումով»: Դրան հասնելու համար ժողովրդական ճակատը կոչ էր անում «լուսաբանական ու կազմակերպչական» աշխատանք կատարել սիրիահայ գաղթօջախներում, «ոգի ի բռին լծվիլ վերաշինացնելու, Հայաստանի Օգնության Կոմիտեի ու Բարեգործականի մասնաճյուղերի խիտ ցանցով մը բովանդակ Սուրիո շրջանները կապել գործին»[30]: Այդ առումով կարևոր միջոցառում էր համարվում նաև Սովետական Հայաստանի մասին ծավալումը, մշակութային նվաճումների պրոպագանդումը Սիրիայի հայության շրջանում:

Սիրիահայ ժողովրդական ճակատը երկար կյանք չունեցավ: Ֆրանսիայի ժողովրդական ճակատի կառավարության հրաժարվելուց հետո Սիրիայում հալածանք սկսվեց դեմոկրատական կազմակերպությունների դեմ: Այդ պայմաններում Սիրիահայ ժողովրդական ճակատը քայքայվեց:

Ամփոփենք. 1920-ական թթ. սկզբներին Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում իրարից անջատ առաջացել էին հայ և արաբ

առաջին կոմունիստական խմբակները, որոնք 1925 թ. միավորվելով ստեղծեցին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը։ Պատմական խոշոր նվաճում էր այն, որ իրենց դարն ապրած համքարությունները փոխարինվեցին արհեստակցական միություններով, որոնցում արաբներից հետո հայ աշխատավորները կազմում էին մեծամասնությունը։ Հայ աշխատավորության առաջավոր, համարձակ խավերը գործուն մասնակցություն էին բերում արաբ ժողովրդի ազգային անկախության պայքարին։ Հայ աշխատավորների նախաձեռնության արդյունքն էր Սիրիահայ ժողովրդական ճակատը, որի գլխավոր խնդիրն էր վերացնել հայ-արաբական մերձեցման խանգարող խոչընդոտները և հայկական զանգվածները հաղորդակից դարձնել Սովետական Հայաստանի նվաճումներին։

3. ԱՋԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Հայ ժողովուրդը, դարեր շարունակ զրկված լինելով պետական անկախությունից և մշտապես գտնվելով ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի ներքո, առանձնահատուկ նշանակություն է տվել ազգային հարցի լուծմանը։ Հայ բուրժուազիան փորձեց լուծել Հայկական հարցը, սակայն նրա կուսակցությունների մղած ազգային-ազատագրական պայքարն ունեցավ եղերական վախճան։ Արևմտյան Հայաստանը դատարկվեց, և Հայկական հարցը թաղվեց Լոզանի կոնֆերանսում։ Ցեղասպանությանը զոհ կգնար նաև հայ ժողովրդի արևելյան հատվածը, եթե սովետական սոցիալիստական կարգեր չհաստատվեին Հայաստանում։

Արևմտահայության՝ աշխարհով մեկ ցրված բեկորները ցնծությամբ ողջունեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։ Արձագանքելով Հայաստանի օգնության կոմիտեի Երևանի վարչության կոչին, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Հունաստանի, Եգիպտոսի, Սիրիայի և այլ երկրների հայ աշխատավորները ստեղծեցին ՀՕԿ-ի մասնաճյուղեր, որոնք եղբայրական օգնության ձեռք մեկնեցին ավերակներից վերածնված հայրենիքին։ Հովհ. Թումանյանը ոգևորությամբ գրում էր, որ այդ շարժումը վկայում է, «թե կենդանի է հայությունը», և այժմ՝ «Հայաստանի ազատ հողի վրա նա շինելու է իր ազատ ու առատ տունը, հայկական բարձրավանդակի վրա զարգացնելու է իր ազգային հանճարն ու իր խոսքն ասելու է աշխարհին»[1]։

1919 թ. դեկտեմբերին սովետների Համառուսաստանյան համա-

գումարում Վ. Ի. Լենինը նշում էր. «Նախ՝ մենք Անտանտից նվաճեցինք նրա բանվորներին ու գյուղացիներին, երկրորդ՝ ձեռք բերեցինք այն փոքրիկ ժողովուրդների չեզոքությունը, որոնք նրա սատուկներն են և, երրորդ՝ սկսեցինք նվաճել նրա սեփական երկրներում մանր բուրժուազիային և կրթված քաղքենիությանը, որոնք ամբողջովին մեր դեմ էին»[2]։

Դեռևս արտասահմանում եղած ժամանակ դարասկզբի հայ գրականության և կուլտուրայի առաջավոր գործիչներ՝ Ալ. Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը, Զապել Եսայանը, Վահան Թոթովենցը, Հովհ. Աբելյանը, Փանոս Թերլեմեզյանը և շատ ուրիշներ, կանգնելով սովետական կողմնորոշման դիրքերում, պաշտպանում էին նոր, Սովետական Ռուսաստանի հետ հայ ժողովրդի անխախտ բարեկամության գաղափարը։ Ալ. Շիրվանզադեն գրում էր. «Եվ հայ ժողովուրդն էլ գիտի շատ լավ, որ եթե բարեկամ է ռուս ժողովրդի հետ, ունի իրական պաշտպան, եթե թշնամի է՝ չունի ոչ մի ուրիշ անկեղծ պաշտպան...»[3]։

Հայ մտավորականության քաղաքական շրջադարձի ուշագրավ փաստ է այն հայտարարությունը, որ 1926 թ. Փարիզում հրապարակեցին Ալ. Շիրվանզադեն, Արշակ Չոպանյանը, Տիգրան Կամսարականը, Լևոն Բաշալյանը, Վահան Մալեզյանը, Ռուբեն Որբերյանը, Հովսեփ Փուշմանը, Հակոբ Գյուրջյանը, Էդգար Շահինը, Սարգիս Խաչատրյանը և ուրիշներ։ Բողոքելով դաշնակցական գործիչների հակասովետական դիրքորոշման դեմ, նրանք հայտարարում էին. «Մեզի համար անհերքելի իրողություն մըն է, որ Հայաստան մը գոյություն ունի այսօր։ Մենք համոզված ենք, որ այն իր գոյությունը կրնա պահպանել ու զարգանալ միմիայն Խորհրդային Միության հետ դաշնակցած։ Այսօր քաղաքական, մտավորական ղեկավարներուն և անոնց աջակցող բովանդակ ժողովուրդին շինարարական վաստակը մեր ամենուս համար հրճվեցուցիչ և սրտապնդիչ ճշմարտություն մըն է»[4]։

Այդ հայտարարությունը պետք է դիտել այն տեսանկյունից, ինչ տեսանկյունից Վ. Ի. Լենինը գնահատել է ֆրանսիական մտավորականության 71 ներկայացուցիչների ելույթը։ Նա նշում էր, որ «այդ ելույթը... մի հատկությամբ է աչքի ընկնում՝ լավ ծանրաչափ լինել, այն բանի ցուցանիշը տալ, թե ուր է թեքվում մանր բուրժուազիան, այն բանի ցուցանիշը տալ, թե ուր է թեքվում ամբողջովին բուրժուական հասարակական կարծիքը»[5]։

Այդ առումով ուշագրավ տեղաշարժեր առաջացան ազգային կուսակցությունների քաղաքական վարքագրում։

Գտնելով, որ հայ ժողովրդի ազատ ու ինքնուրույն զարգացման ուղին այն ուղին է, որը բացվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով, ս.—դ. հնչակյան կուսակցությունը կանգնեց Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում: Նրա VIII համագումարի (1924) որոշումներում ասված է. «Նկատելով, որ խ. Հայաստանը մեր կուսակցության հետապնդած նպատակի իրագործումն է..., ս.—դ. հնչակյան կուսակցությունը անվերապահորեն կկանգնի Խորհրդային Հայաստանի կողքին, կջանա ամեն միջոցով սատարել անոր բարգավաճումին ու վերաշինությանը, և կապել գաղութահայ աշխատավորությանը բարոյական, գաղափարական և տնտեսական կապերով Մայր-Հայրենիքին»[6]: Հնչակյան մամուլը պրոպագանդում էր, որ «Հայաստանի խորհրդայնացումը» հնչակյան կուսակցության «հետապնդած քաղաքական և տնտեսական սկզբունքներուն իրականացումն է: Հընչակյանության հաղթանակն է»[7]:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հնչակն իրեն համարում էր մարքսիստական, պրոլետարական կուսակցություն, սակայն ոչ մի առնչություն չուներ միջազգային կոմունիստական շարժման հետ: Ս.—դ. հնչակյան կուսակցությունը մասնակցում էր առաջադիմական ուժերի պայքարին, սակայն վարում էր անհետևողական քաղաքականություն, որը բնորոշ է մանր բուրժուազիային: Սոցիալիստական ուսմունքը, ինչպես նշել է «Երիտասարդ Հայաստանը», նրա «ազգային դիմագիծը չէ եղծանած, մնացած է իր խորքին մեջ ազգային: Ասոր փաստը այն է, որ անոր գործունեության դաշտը եղած է և կմնա հայ իրականությունը»[8]: Լինելով ազգային կուսակցություն, հնչակը հիմնականում զբաղվում էր ազգային գործերով:

Սովետական սոցիալիստական հասարակարգը չէր համապատասխանում ռամկավար ազատական կուսակցության դավանած բուրժուական դեմոկրատիայի սկզբունքներին: Նրա «քաղաքական-ընկերային դավանանքը կաղապարված է Արևմուտքի ռամկավար վարդապետության վրա»: Այնուամենայնիվ 1922 թ. ռամկավար ազատական կուսակցության ընդհանուր ժողովը որոշում էր. «Մեր ուժերը տրամադրել հայկական կառավարության, Հայաստանի տնտեսական և բարոյական վերաշինության...: Աշխատիլ արգիլել ամեն տեսակ արկածախնդրություն, որ կրնա վտանգել ժողովուրդին և պետության գոյությունը»[9]: Լոզանի կոնֆերանսից հետո՝ 1924 թ. հունվարի 14-ին ռամկավարները որդեգրեցին «Խորհրդային Հայաստանի հետ ուղղությունը», որը և նվիրագործվեց 1926, 1929, 1931,

1934, 1937 թթ. և հետագայում գումարված բոլոր ընդհանուր պատգամավորական ժողովներով։

Ռամկավար ազատական կուսակցությունը ծնվեց արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարից, սակայն նրա քաղաքական գործունեությունը չհանգեցրեց Հայկական հարցի լուծմանը։ Ռամկավարներն այլևս չէին հավատում արևմտյան դիվանագիտությանը և արևմտահայության դատի լուծման երաշխիքը տեսնում էին Սովետական Հայաստանի զարգացման և ամրապնդման մեջ։ Ռամկավար գործիչ Հրաչ Երվանդը գրում էր. «Մենք դեմ ենք համայնավար վարդապետությանը, բայց և կտեսնենք, թե հայ ժողովուրդը իր քաղաքական ապահովությունը և խաղաղ աշխատանքը կպարտի Հայաստանի վարչաձևին և միմիայն անոր։ Այս պատճառով, Հայաստանի համայնավար վարչաձևին հանդեպ մեր ընդդիմությունը ունի խաղաղ հանգամանք, վասնզի ամեն բանե առաջ և ամեն բանե վեր են երկրին խաղաղությունն ու բարօրությունը»[10]։ Բացի այդ, նրանք Սովետական Հայաստանը համարում էին «միակ կովանը», որից կառչելով հայ ժողովուրդը կարող է տիրանալ «իր պատմական անժխտելի իրավունքներուն»[11]։ Ուստի ռամկավարները կոչ էին անում սփյուռքահայությանը՝ «ոչ մի պայքար մղել խորհրդային իշխանության դեմ, կարելի ամեն միջոցներով ուժ տալ» Սովետական Հայաստանին[12]։

Սովետական սոցիալիստական կարգերի նկատմամբ թշնամական դիրք որդեգրեց դաշնակցությունը։ Նրա X ընդհանուր ժողովի (1924 թ. նոյեմբերի 17-ից մինչև 1925 թ. հունվարի 16-ը Փարիզում) որոշումներից պարզ երևում էր, որ նախարարական աթոռներից զրկված դաշնակցական պարագլուխները ձգտում էին միջազգային իմպերիալիզմի սվինների օգնությամբ վերստին տիրանալ Հայաստանի իշխանությանը։

Դաշնակցության ղեկավարները Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը գնահատում էին որպես «հոկտեմբերյան դավադրություն»[13], իսկ Հայաստանում հաստատված սովետական սոցիալիստական կարգերը՝ որպես «ռուսական աշխարհակալություն»։ Այդ ուղին նրանց պետք է տաներ և, իրոք, տարավ Սովետական Միության թշնամիների լագերը։ 1925 թ. դաշնակցությունը համաձայնագիր ստորագրեց կովկասյան թափթփուկների հետ՝ «Կովկասը ռուսական տիրապետությունեն ազատագրելու» մասին, 1927 թ. անդամ դարձավ Պրագայի հակասովետական «Նոր Արևելքի ընկերվարական լիգային», 1929 թ. հարեց «Պրոմեթե» ֆաշիստական ուխտին և այլն։

Ազգային կուսակցությունների քաղաքական վարքագծում առաջացած տեղաշարժերը հանգեցրին գաղութահայ երկու հակադիր ճակատների

ստեղծմանը, որոնց սահմանադրաման հիմքերի հիմքը կազմում էր նրանց դիրքը Սովետական Հայաստանի հանդեպ։

Սիրիայում և Լիբանանում հայ գաղթականության քաղաքական բևեռացումը կատարվեց մի կողմից ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունների, մյուս կողմից դաշնակցության առանցքի շուրջը։ Սիրիահայ անվանի հրապարակախոս Միհրան Աղաղարյանը նշում էր, որ հնչակ-ռամկավար ճակատը ձգտում էր «դեպի միություն և կապ Հայաստանի հետ՝ հեռու արևմտյան խաբեբա դիվանագիտություններից», իսկ դաշնակցությունը՝ դեպի «գաղութահայ անհայրենիք պետության՝ կոթնած արևմտյան դիվանագիտության՝ ընդդեմ վերաշինվող Հայաստանի»[14]։

Հրահրելով «անհայրենիք պետության» ցնորքը, դաշնակցությունը ձգտում էր գաղութահայությունը կազմակերպել որպես քաղաքական ուրույն միավոր և հակադրել Սովետական Հայաստանին։

1924 թ. հունվարի 20-ին Կահիրեի «Հայկական սրահում» Նիկոլ Աղբալյանը հայտարարել է. «Անհրաժեշտ է, որ արտասահմանի հայությունը, բոլոր գաղութները ստեղծեն բարձրագույն կազմակերպություն մը համապատասխան ճյուղավորումներով։ Կազմվին գավառային, շրջանային մարմիններ, որոնք միավորված ըլլան կեդրոնական խորհրդի մը հատուկ և համապատասխան սահմանադրությամբ։ Տեսակ մը բարոյական պետություն, անհայրենիք պետություն՝ պետական ատրոգելիներով, ազգային և միջազգային իրավական կարգերով։ Այդ մարմինը գերագույն մարմինն է արտասահմանի հայության, իր շուրջ պիտի համախմբի բոլոր ցրված գաղութներու հայությունը, անոնց ազգային, մշակութային, տնտեսական գործունեությունները՝ պետության և քաղաքացիական փոխհարաբերություններով։ Մյուս կողմե ամեն գաղութ իր ապրած շրջանակին մեջ պիտի մեկուսանա, չպիտի ըլլա քաղաքացի իր երկրին, այս անջատումով միանալու համար իր ազգային, իր ազգայնության համապատասխան կազմակերպության, որ պետք է ճանաչվի նաև Ազգերի դաշնակցության կողմե»[15]։

Դաշնակցության պարագլուխները փորձում էին այդ ծրագիրը իրականացնել համագաղութային համագումարի միջոցով, սակայն ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները, չկամենալով հակասովետական պայքարի գործիք դառնալ, մերժեցին մասնակցել դաշնակցության ծրագրած համագումարին։ 1924 թ. հնչակյան կուսակ-

ցության VIII համագումարը հայտարարել է, որ հրաժարվում է համագործակցել այն բոլոր կուսակցությունների հետ, որոնք հակասովետական ուղղություն ունեն և պայքար են մղում Սովետական Հայաստանի դեմ[16]: Նույնիմաստ հայտարարություն է արել նաև ռամկավար ազատական կուսակցության ընդհանուր ժողովը (1924 թ.): Այդ առթիվ Վ. Նավասարդյանը գրում էր. «Մեր հակառակորդները պարզապես բոյկոտի տվին այս (համագաղութային համագումարի—Հ. Թ.) ձեռնարկը, յուղածելով բոլշևիկյան կրակին»[17]:

Սակայն դաշնակցական գործիչները չհրաժարվեցին «անհայրենիք պետության» ցնորքից: Անդրադառնալով համագաղութային համագումարի հարցին, դաշնակցության X ընդհանուր ժողովը հույս է հայտնել, որ հնչակյաններն ու ռամկավարները «ի վերջո... պիտի զգաստանան և կամ այս աղաղակող կարիքը իրենց պիտի զգաստացնի և ոչ հեռու ապագային հնարավոր պիտի դառնա ստեղծել մեկ ղեկավար մարմին, որի շուրջը համախմբված կլինեն մեր բոլոր գաղութներն անխտիր»: Ընդհանուր ժողովը հիմնական էր համարում այն, որ համագումարը և նրանից բխող մարմինը «իրապես կրեն համագաղութային բնույթ, ... լինեն արտահայտիչը գաղութահայության բոլոր տարրերի ու հոսանքների»[18]: Այդ հույսերը սակայն չիրականացան:

Դրանից հետո սկսվեց «անհայրենիք պետության» համար մղվող պայքարի եղերական փուլը: Այժմ դաշնակցությունը ձգտում էր համագաղութային «ղեկավար մարմնի» ստեղծման հասնել ազգային-թեմական իշխանություններում մենատիրություն հաստատելու միջոցով: Իրավացիորեն, Միհրան Աղալարյանը գրում էր. «Թեմական կազմակերպությունների աղմուկը, գավառական ժողովներու ընտրական պայքարը, պատրիարքարան թե պատվիրակություն, կաթողիկոս թե առաջնորդարան, այս բոլորը դաշնակցության ծրագրին մեջ ուղղված են դեպի վիժածին համագումարի վերակենդանացումը՝ հառաջացնելու համար ժողովրդական քվեի անունով, ազգային կամքի ձայնով իրավական վերին վարչություն մը՝ լեցված պարտյալի լեղի մաղձով, ղինված ոսոխի թունավոր սլաքներով ընդդեմ վերականգնվող Հայաստանի»[19]:

Դաշնակցության մենատիրական փորձերը տխուր հետքեր են թողել Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների կյանքում: Մեկ խարդախված ընտրությունը հաջորդում էր մյուս խարդախված ընտրության, մեկ արյունալի կռիվը՝ մյուսին, մեկ սպանությունը մի ուրիշ սպանության...

Ազգերի լիգան, ինչպես նշվեց, Սիրիայում և Լիբանանում հաստատեց իրավական դրության հիմք ընդունեց 1914 թ. նոյեմբերի 1-ի գոյավիճակը (status quo)։ Դրանով ավելի քան կեսդարյա վաղեմություն ունեցող Ազգային սահմանադրությունը պաշտոնապես ճանաչվեց որպես այդ երկրների հայկական գաղթօջախների համայնքային կանոնադրություն։ Սահմանադրությունը կարևոր նվաճում էր ամիրայական առանձնաշնորհումների դեմ պայքարում, սակայն այլևս չէր համապատասխանում Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներում տիրող նոր սոցիալ-քաղաքական պայմաններին։ Եվ, իրոք, Սահմանադրությունը, գործիք դառնալով դաշնակցության ձեռքում, չկարողացավ խաղաղություն ապահովել հայկական համայնքների ներքին կյանքում։

Մինչև դաշնակցության մենատիրության հաստատվելը, Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում գործում էին մի շարք ազգային մարմիններ, որոնց գլուխ կանգնած էր Հայ ազգային միությունը։

Լինելով Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմ, Հալեպի բոլոր ազգային-թեմական մարմինները գտնվում էին Սահակ Բ կաթողիկոսի վերահսկողության ներքո։ Վերջինիս էր ենթարկվում նաև Բեյրութի վրանաքաղաքի ս. Խաչ եկեղեցու նորակազմ թաղական խորհուրդը։ Բեյրութի ս. Նշան, Դամասկոսի ս. Սարգիս և Լաոդիկիայի ս. Աստվածածին եկեղեցիների թաղական խորհուրդները գտնվում էին Երուսաղեմի հայոց պատրիարքի իրավասության տակ։ Բացի այդ, Սիրիայի և Լիբանանի հայաբնակ քաղաքներում կյանքի էին կոչվել Հ. Բ. Ը. միության և Հայ կարմիր խաչի մասնաճյուղեր, բազմաթիվ հայրենակցական միություններ և այլն։ Այդ բոլոր մարմինների և միությունների շուրջը պայքար էին մղում ազգային կուսակցությունները։

Հայ ազգային միությունը կազմված էր միջկուսակցական-միջհարանվանական հիմունքներով։ Նրանում 2-ական աթոռ ունեին Հայ առաքելական, Հայ կաթոլիկ և բողոքական համայնքները, 1-ական աթոռ՝ ս.—դ. հնչակյան, ռամկավար ազատական և Հ. Հ. դաշնակցություն կուսակցությունները և այլն[20]։ Այս հեղինակավոր մարմինը բխում էր Փարիզի Հայ ազգային պատվիրակությունից և մանդատային իշխանությունների կողմից ճանաչված էր որպես Սիրիայի հայ գաղթականության պաշտոնական ներկայացուցիչը։

Կուսակցական պայքարի առաջին զոհերից եղավ Հայ ազգային միությունը։ 1922—1923 թթ. դաշնակցական գործիչները գնալով ավելի ու ավելի ուժեղ ճնշման տակ էին պահում Հայ ազգային միությունը, սա-

կայն նրանց չհաջողվեց այն ենթարկել իրենց ազդեցությանը։ Ի վերջո հնչակյանները և ռամկավարները դուրս եկան «դաշնակցության մենաշնորհ» դարձած Հայ ազգային միության կազմից և այն քայքայվեց։ Դաշնակցական գործիչների այդ և հետագա մյուս «հաջողությունները»[21] պայմանավորված էին այն խորհրդապահական կապերով, որ նրանք պահպանում էին ֆրանսիական իմպերիալիստների հետ։

Մանդատային իշխանությունները բացեիբաց հովանավորում էին դաշնակցությանը։ 1923 թ. դաշնակցական պարագլուխ դոկտ. Ավետիս Ինճեճիկյանը, որպես հայ գաղթականության ներկայացուցիչ, աթոռ էր գրավել Սիրիայի դաշնակցային պետական խորհրդում։ 1926 թ. Սիրիայի սահմանադիր ժողովի երեսփոխան էր ընտրվել դաշնակցական Նարեկ Աբրահամյանը, իսկ սրա մահից հետո՝ 1928 թ. դաշնակցական Մովսես Տեր Գալուստյանը։ Ա. Ալպոյաճյանը ճիշտ էր նկատել, որ «դաշնակցականք ֆրանսիական դիվանագիտության ձեռքին գործիքներ էին, և կոթնած անոր՝ տեսակ մը ազդեցություն ստեղծած էին իրենց համար և հաջողած էին դիրքեր գրավել...»[22]։

Սիրիայում հենարաններ որոնող ֆրանսիական իմպերիալիստները փորձում էին օգտվել նաև ռամկավար ազատական կուսակցության ծառայություններից։ 1924 թ. մայիսի 20-ին ռամկավար գործիչ Հրաչ Երվանդն Ալեքսանդրեթից Արշակ Զոպանյանին գրում էր. «Իսկենդերունի մեջ՝ քանի մը շաբաթներէ ի վեր մեր ընկերները սկսած են հրատարակել «Զարթօնք» մը հայերեն և ֆրանսերեն բաժիններով։ Կարելի է ըսել, թե նախաձեռնությունը եկած է ֆրանսիացիներեն, որոնք գործը ընդարձակելու և քաջալերելու ծրագիրներ ունին, կուզեն արաբերեն և թուրքերեն բաժիններ ալ ավելցնել, ապահովելով գործին բոլոր ծախքերը»[23]։ Որ այդ համագործակցությունը չի շարունակվել, երևում է «Զարթօնք»-ի կարճատև գոյությունից։

1920-ական թթ. Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականության ծոցում գործող քաղաքական կազմակերպություններից ամենաժողովրդականը ս.—դ. հնչակյան կուսակցությունն էր, որը, սակայն, գնալով թուլանում էր ներկուսակցական անվերջանալի պայքարների և նրա ղեկավարների վարած անհետևողական քաղաքականության հետևանքով։ Բացի այդ, մարքսիստական, պրոլետարական կուսակցություն լինելու թեկուզ սին հավակնությունները հնչակը դրեցին ֆրանսիական իմպերիալիստների հարվածի տակ։ Մանդատային ոստիկանությունը հաճախ իբրև կոմունիստ ձերբակալում էր նաև հնչակյաններ[24]։

Ֆրանսիական իմպերիալիստները, դաշնակցությունը համարելով

հուսալի հենարան, բոլոր միջոցներով աջակցում էին նրա դիրքերի ամրապնդմանը, նրա մենատիրական նկրտումների իրականացմանը: Դա դաշնակցական գործիչներին հնարավորություն տվեց անպատիժ գործելու: Եվ նրանք չտեսնված եռանդով սկսեցին հալածել իրենց հակառակորդներին և ճանապարհ բանալ դեպի «անհայրենիք պետություն»...

Դաշնակցական գործիչների ճնշման տակ Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը ձեռնամուխ եղավ ըստ Ազգային սահմանադրության կազմակերպելու Սիրիայի և Լիբանանի գաղթականությունը: Նրա նպատակն էր ստեղծել այնպիսի թեմական իշխանություններ, որոնցում ներկայացված լինեին բոլոր շահագրգռված կողմերը, սակայն նրան խոչընդոտում էին դաշնակցության մենատիրական նկրտումները:

1923 թ. հուլիսի 1-ին Հալեպում պետք է տեղի ունենային դավառական ժողովի ընտրություններ, սակայն ընտրապայքարն այնպիսի սուր բնույթ էր ստացել, որ Տանն Կիլիկիո կաթողիկոսը դրանք հետաձգեց՝ հնարավոր բախումների առաջն առնելու համար: Այստեղ մթնոլորտը շիկացել էր ոչ միայն դաշնակ-հնչակ ընտրապայքարի, այլև տեղացի հայերի անհանդուրժողության հետևանքով: Վերջիններս մերժում էին ազգային-թեմական իշխանությանը գաղթականների մասնակցության իրավունքը, առարկելով, որ նրանք Սիրիայի քաղաքացի չեն[25]: Թեև ինչ ստիճան բորբոքված էին կուսակցական կրքերը, բավական է նշել, որ ժամանակավոր թեմական իշխանության գլուխ նշանակված Փառեն վարդապետը հարձակման է ենթարկվել և խոշտանգվել առաջնորդարանում[26]: Թեև հանցագործները չեն հայտնաբերվել, սակայն ֆրանսիական ոստիկանությունը ձերբակալել և Սիրիայից արտաքսել է երկու հնչակյան ղեկավարներ՝ դոկտ. Կ. Մուշյանին և Ա. Նալպանդյանին[27]:

Տանն Կիլիկիո կաթողիկոսն առավել խոշոր դժվարությունների էր բախվում Բեյրութում: 1925 թ. փետրվարի 18-ին, ակներևորեն դաշնակցական գործիչների դրդումով, ս. Խաչ եկեղեցու և ս. Նշան վանքի թաղական խորհուրդները գումարել են համատեղ ընդլայնված նիստ, նվիրված Լիբանանի հայ գաղթականության հարցերին: Ընտրվել է հրնգանդամ ժամանակավոր ազգային մարմին, որին հանձնարարված էր մի ծրագիր կազմել Լիբանանում ազգային-թեմական իշխանություն կազմակերպելու վերաբերյալ: Տանն Կիլիկիո կաթողիկոսը չհաստատեց այդ մարմնի օրինականությունը և այն քաշվեց ասպարեզից: Դաշնակցական մամուլը բողոքեց և անվայելուչ պայքար սկսեց Տանն Կիլիկիո կաթողիկոսի դեմ[28]:

Մարտի 13-ին ս. Նշան վանքում գումարվեց Բեյրութի հայ «Երևելյաց» խորհրդակցություն, որի հրավիրմանը Սահակ կաթողիկոսը հավանություն էր տվել կուսակցությունների ճնշման տակ: 188 հրավիրյալներից ներկա են եղել 137 «երևելիներ»: Նրանք գաղտնի քվեարկությամբ ընտրել են յոթանդամ Ազգային խորհուրդը, որը համարվում էր ս. Խաչի և ս. Նշանի թաղական խորհուրդների վերադաս մարմինը: Նրա գլխավոր պարտականությունն էր պատրաստել Լիբանանի ապագա թեմական իշխանության կազմական ծրագիրը[29]:

Ազգային խորհուրդը սակայն չէր համապատասխանում դաշնակցության մենատիրական ձգտումներին: Նրա ակումբներում բողոքի միտինգներ էին գումարվում, ճառախոսները պահանջում էին գավառական ժողովի ընտրություններ, իսկ դաշնակցական մամուլը «սանձարձակ հարձակումներ» էր գործում Տաճն Կիլիկիո կաթողիկոսի դեմ, նրան զարդարելով «ապիկար», «անարժան», «ոչ-իրավասու» և այլ մակդիրներով: Բացի այդ, ինչպես նշել է հնչակյան ղեկավար Բենիամին Ժամկոչյանը, «Գրվեցան նմանը չերևակայված ամբաստանություններ և վերջապես (դաշնակցականները) ներկայացան անոր և պահանջեցին ընտրություն կամ հրաժարում»: Տաճն Կիլիկիո ութսունամյա կաթողիկոսը «տեղի կուտա» և հետայնու «կենթարկվի» դաշնակցությանը[30]:

1925 թ. հունիսի 26-ին տեղի ունեցան Լիբանանի ազգային գավառական ժողովի ընտրությունները, որոնք, սակայն, բեկանվեցին քվեատուփերում կեղծ քվեներ հայտնաբերելու հետևանքով: Որոշվեց ձախողված ընտրությունները նորից անցկացնել 1926 թ. հուլիսի 18-ին: Ըստ ընտրողական հրահանգի, գավառական ժողովի 21 անդամներից 14-ը պիտի ընտրվեին Բեյրութից և վրանաքաղաքից, 1-ը՝ Տրիպոլիից, 1-ը՝ Զյունի-Ղազիրից, 1-ը՝ Զահլե-Ռայաքից, 1-ը՝ Սայդա-Սուրից, 3 եկեղեցական անդամները պիտի նշանակվեին Տաճն Կիլիկիո կաթողիկոսի կողմից: Քվեարկելու իրավունք ունեին 25, ընտրվելու՝ 30 տարին լրացած այն բոլոր հայ տղամարդիկ, որոնք հայ առաքելական եկեղեցվու զավակ և Լիբանանի հպատակ էին[31]: Կազմվել է ընտրողների երկու ցանկ, մեկը՝ դաշնակցության, մյուսը՝ հնչակ-ռամկավարչեզոք բլոկի կողմից: Ընտրությունների նախօրեին վերջինս, ինչպես նշել է Բ. Ժամկոչյանը, կոչ է արել հայ հասարակությանը «արթուն ըլլալ և չխաբվիլ Աճիայրենիք պետության երաշխերի ստապատիր խոստումներեն»[32]:

Աղյուսակում[33] ամփոփված են 1926 թ. հուլիսի 18-ի ընտրությունների արդյունքները:

Տեղամաս	Բլոկի ատացած քվեները	Դաշնակցության ատացած քվեները	Գումար
Բեյրութ վրանաքաղաք	723	627	1350
—ը— քաղաքամեջ	94	220	314
Զահլե-Ռայաք	113	64	177
Սաիդա-Սուր	51	11	62
Ջյունի-Ղազիր	79	134	213
Տրիպոլի	44	64	108
Գումար	1104	1120	2224

Սորընտիր գավառական ժողովի 18 աշխարհական անդամներից 16-ը դաշնակցության, 2-ը բլոկի առաջադրած (Միհրան Աղազարյան և Անդրանիկ Կենճյան) թեկնածուներ էին։ Եղել են բազմաթիվ բողոքներ թույլ տրված ապօրինությունների դեմ, այնուամենայնիվ Սահակ կաթողիկոսը հաստատել է ընտրությունների արդյունքները[34]։

Լիբանանի անդրանիկ գավառական ժողովն ունեցավ չորս նիստ՝ 1926 թ. սեպտեմբերի 3-ին, 9-ին, 16-ին և 28-ին, որոնցում տիրել է ծանր մթնոլորտ, եղել են բուռն վիճաբանություններ, անբարեկիրթ անվանարկումներ, իսկ վերջին նիստում սպանվել է դաշնակցական երեսփոխան Վահան Վարդապետյանը։ Ոստիկանությունը ձերբակալել է հընչակյան ղեկավարներ Միհրան Աղազարյանին, Միսաք Վեհունուն, Երվանդ Տատուրյանին և այլ բազմաթիվ անձանց։ Սակայն հնարավոր չի եղել հայտնաբերել ոճրագործին կամ ոճրագործներին և ձերբակալվածները ազատ են արձակվել բացառությամբ երեքի, այդ թվում Միհրան Աղազարյանը, որին դաշնակցական գործիչները համարում էին իրենց համար առաջին թշնամին[35]։

1928 թ. մայիսի 15-ին Բեյրութի խառն դատարանը Միհրան Աղազարյանին դատապարտել է 4, մյուս երկու մեղադրյալներին 3-ական տարի բանտարկության[36]։ Բանտից դուրս գալուց հետո՝ 1933 թ. հոկտեմբերի 11-ին Միհրան Աղազարյանը սպանվեց եղբայրասպան գընդակով[37]։ Դրանից մի քանի տարի առաջ՝ 1929 թ. հունվարի 17-ին վ. Վարդապետյանի փոխվրեժին զոհ էր գնացել նաև հնչակյան եռանդուն գործիչ Սարգիս Տխրունին։ Երկու սպանության դեպքում էլ կա-

տարվել է ձևական հետաքննություն, և ոճրագործները մնացել են անպատիժ[38]։

Եղբայրասպան կրքերը մոլեգնում էին նաև այլ վայրերում։ Սվեդիայի և Քեսապի հայաբնակ գյուղերում կուսակցական պայքարը, միահյուսվելով հողային հարցի հետ, հնձեց շուրջ 60 սվեդացիների և քեսապցիների կյանք։ Ազգային կուսակցությունների պատմության այդ սև էջն անկասկած ունի ներքին ծալքեր, որոնց վրա լույս սփռել հնարավոր չէ վավերագրերի կատարյալ բացակայության պատճառով։

Այսպիսով, սփյուռքահայ մյուս գաղթօջախների նման՝ Սիրիայի և Լիբանանի հայ հասարակական-քաղաքական կյանքը զարգանում էր երկու հակադիր ճակատների բուռն պայքարի պայմաններում։ Այդ ճակատների սահմանազատման հիմքերի հիմքը կազմում էր մի կողմից ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունների, մյուս կողմից հ. հ. դաշնակցության դիրքը Սովետական Հայաստանի հանդեպ։ «Անհայրենիք պետության» ցնորքը լիովին համապատասխանում էր ոչ միայն ֆրանսիական իմպերիալիզմի հակասովետական նպատակներին։ Մանդատային ոստիկանությունը, աջակցելով դաշնակցության մենաշնորհական նկրտումների իրականացմանը, բռնորեն ճնշում էր նրա հակառակորդներին։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՅ–ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ: ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱԿԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

1. ՀԱԼԵՊԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

1920—1930-ական թթ. Սիրիայում հայ-արաբական հարաբերությունները ամենևին հարթ չէին ընթանում։ Ցեղասպանությունից ճողոպրած հայ գաղթականներին վիճակվել էին նոր, դառնաղետ փորձություններ։ Հայ ժողովրդի թշնամիները, չհանդուրժելով Կիլիկիայի սահմանակից Սիրիայում հայերի զանգվածային ներկայությունը, բոլոր միջոցներով փորձում էին թունավորել հայ-արաբական հարաբերությունները։ Եվ, 1919 թ. Հալեպում, 1925—1927 թթ. Դամասկոսում նրանց ձեռքերը վերստին թաթախվեցին արյան մեջ։

1919 թ. փետրվարի 28-ին Հալեպի տարբեր թաղերում անապատի արհավիրքներից փրկված հայության անղեն ու անպաշտպան բեկորները՝ մեծ մասամբ որբեր ու այրիներ, ենթարկվեցին մոլեռանդ իսլամների անպատմելի հարձակմանը։ Արյունահեղությունը սկսվեց Ջումաա բաղարից (Ուրբաթօրյա շուկա), «չափազանց կարճ ատենի մեջ» տարածվեց «քաղաքի գրեթե բոլոր կողմերը» և դադարեց միայն այն ժամանակ, երբ «անգլիական և ֆրանսիական շրջանակինները շարժեցան և թույլ չտվին, որ ջարդն ավելի ծավալի»[1]։ «Հալեպի դեպք», «Հալեպի կոտորած» կամ «Հալեպի ջարդ» անունով հայտնի բարբարոսության ժամանակ սպանվել են 51, վիրավորվել շուրջ 100 և անհետ կորել են 20—30 հայեր[2]։ Պոլ դյու Վեռնե և ուրիշ հեղինակներ նշում են ավելի մեծ թվով զոհեր։

Անգլիական իշխանությունները ձերբակալել են ավելի քան 100 մարդ, այդ թվում «մեծամեծներ»՝ հայերի կոտորածին մասնակցելու կամ մեղսակից լինելու մեղադրանքով, և գործի հետաքննությունը

հանձնարարել են այդ նպատակով հատուկ նշանակված քննիչ հանձնաժողովին, որն ընդգրկում էր երկու անգլիացի, երկու արաբ, մեկ ֆրանսիացի և երկու հայ՝ Պ. Փափազյանը և Մ. Նաթանյանը, որպես Հայ ազգային խորհրդի ներկայացուցիչներ[3]: Սակայն, ինչպես երևում է հայկական մամուլի հաղորդումներից, քննիչ հանձնաժողովի աշխատանքները կրել են համարյա ձևական բնույթ, և անգլիական ռազմական դատարանը վարվել է այնպես, ինչպես պահանջում էին Անգլիայի շահերը: Հալեպի հայերի կոտորածը գերազանցապես քաղաքական բնույթ էր կրում, սակայն այն դիտվեց որպես քրեական հանցագործություն և ըստ այնմ էլ տնօրինվեցին պատիժները: Կայացվել է երեք մահավճիռ, մի մեծ խումբ ստահակներ էլ դատապարտվել են երկարաժամկետ արգելափակման և գործն ավարտված է համարվել:

Անհապաղ հրապարակվել է պաշտոնական հայտարարություն, որով անգլիական իշխանությունները ծանուցել են երկու մահապատիժների ի կատար ածման մասին: Այնտեղ ասված է. «Հայկական ջարդին մասնակցելնուն համար պատերազմական ատյանին կողմե դատապարտված էոմեր Շերիֆ Ակնայի և մանրավաճառ Աբդ ալ-Պեդիի մահավճիռը ընդհանուր հրամանատարության կողմե վավերացված ըլլալով, այսօր մայիսի 8 անոնք կախաղան հանվեցան»[4]: Մայիսի 17-ին ի կատար է ածվել երրորդ մահավճիռը: Սակայն անգլիացիները կամենում էին ստվերում պահել հայկական կոտորածի բուն պատասխանատուներին: Դա երևում է այն վախճանից, որին արժանացան արգելափակման դատապարտվածները: Երրորդ և վերջին մահապատժի ի կատար ածվելուց ընդամենը մի քանի օր հետո Հալեպից հաղորդում էին. «Փետրվար 28-ի ջարդարարության հետևանքով բանտարկված արաբները զինված աորրճանակներով ու դաշույններով փորձեցին ապստամբել ու փախչիլ, որով տեղվույս նահանգապետի հրամանով գնդակահարվեցան, միայն մի քանին ողջ բռնվեցան և զինաթափ եղան»[5]: Դրանք էլ ուղարկվել են Սուդանի անապատի բանտերը: Մի խոսքով, անգլիացիները զանազան միջոցներով ոչնչացրին այն բոլոր վկաներին, որոնք իրազեկ էին Հալեպի հայկական կոտորածի ներքին ծալքերին:

Սակայն որոնող միտքը մշտապես փնտրել է այդ քաոմննելի հանցագործության իսկական պատասխանատուներին: Փարիզահայ հասարակական գործիչ Մարան գտնում է, որ 1919 թ. փետրվարի 28-ի կոտորածը, սկզբնական բնույթով, հանդիսանում էր «ֆրանսիական հոգատարության դեմ սարքված շարժում մը, որուն թելադրությունը միշտ

Դամասկոսեն՝ մահմեդական Սուրիո այդ միջնաբերդեն կուգար, նույնիսկ հայկական կոտորածի մը տեղի տվավ, որովհետև Ֆրանսա Սուրիա էր մտած հայ ղինվորով և հայերը կնկատվեին ֆրանսիական տիրապետության դրոշակակիրները»[6]: Այդ գնահատականում կան ճշմարտության որոշ հատիկներ, սակայն հակաֆրանսիական շարժման՝ հայկական կոտորածի վերածվելու փաստարկը, իհարկե, համոզիչ չէ: Առաջին անգամ այն որպես վահան օգտագործվեց ռազմական դատարանի առաջ կանգնած ջարդարարների կողմից[7], իսկ մանդատի տարիներին դրանից կառչեցին ֆրանսիական իմպերիալիստները՝ որպեսզի քրիստոնյաներին վախեցնեն իսլամական վտանգով: Արևելյան լեգեոնի հայ ղինվորների մուտքը Սիրիա չի կարող հայկական կոտորածի ուղղակի պատճառ համարվել, սակայն, ինչպես կնշվի քիչ հետո, բացասաբար ներգործեց հայ-արաբական հարաբերությունների վրա:

Լոնգրիգի կարծիքով, Հալեպի հայերի կոտորածը տեղական անկարգություն կամ փողոցային դեպք էր: Նա ասում է, որ անգլիական զորքերի Սիրիա մտնելուց հետո «քաղաքներում ընդհանուր առմամբ անվտանգությունը պահպանվեց, բացառությամբ առանձին փողոցային դեպքերի՝ կապված անբաղձալի համարված հայերի հետ, ինչպես 1919 թ. փետրվարին Հալեպում»[8]: Մարայի և Լոնգրիգի գնահատականները ունեն մի ընդհանրություն, այն է՝ առաջինը ուղղակիորեն, երկրորդն անուղղակիորեն Հալեպի հայկական կոտորածը համարում են արաբական գործ՝ առանց արտաքին միջամտության:

Որոշ հեղինակներ Հալեպի հայկական կոտորածը համարում են թուրքական ձեռքի գործ: Իբր Սիրիայում «աշխուժացած թուրքական գործակալություններն էին, որ իրենց կենտրոնի ցուցումով կազմակերպեցին, ղեկավարեցին և հիմնականում նաև գործադրեցին Հալեպի 1919 թ. փետրվարի 28-ի հակահայ արյունոտ բռնությունը»: Կամ՝ «Հալեպի թուրք դավադիրները գլխավորեցին տեղաբնակ իրենց հայրենակիցների և արաբ խավարամիտ որոշ տարրերի խժդժությունները»: Կամ՝ «Թուրք ջարդարարները, առաջնորդելով մոլորեցված մի խումբ արաբների, տարածվում են քաղաքով մեկ..., հարձակվում...» և այլն[9]: Սակայն այդ կարգի եզրահանգումների համար բավարար հիմք չեն տալիս առկա նյութերը:

Հայ և օտար աղբյուրներում պահպանված նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հալեպի արյունոտ իրադարձությունը կազմում էր Կիլիկիայի հայության ֆիզիկական գոյության դեմ ուղղված դավադրու-

թյան մի օղակը։ Ամենևին պատահական չէր, որ Հալեպի կոտորածը տեղի ունեցավ այն օրերին, երբ հայերը զանգվածորեն տեղափոխվում էին Կիլիկիա։ Քեմալականների նպատակն էր նախ կոտրել Կիլիկիա վերադարձի շարժման թափը և, երկրորդ, ստեղծել հայ-արաբական բըշնամական հարաբերություններ, որպեսզի հայ գաղթականներն առհասարակ հեռանան Սիրիայից։

Որ Հալեպի հայերի կոտորածը տեղական նախաձեռնություն չէր, վկայում է նաև գնդապետ Բրեմոնը։ Նրա հաղորդումով, 1919 թ. փետրվարի 28-ի կոտորածը «ընդհանուր շարժում էր՝ կազմակերպված Կոստանդնուպոլսում, և հակառակ անգլիական կայազորի ներկայության այդ թվականին քրիստոնյաների ջարդ տեղի ունեցավ Հալեպում[10]։ Մարտի 3-ին Հալեպում կատարված ձերբակալությունների հետ համարյա միաժամանակ, ձերբակալվել և Սիրիա է աքսորվել Կիլիկիայի ժանդարմերիայի ընդհանուր հրամանատար գնդապետ Հաշիմը՝ անգլիական դեներալ Լեսլիի հրամանով, Ադանայում հայտնաբերվել են խոշոր զինապահեստներ և Կիլիկիայի թուրք ազգաբնակչությանը զենք բաժանելու վերաբերյալ փաստաթղթեր։ Հայտնաբերվել է նաև գաղտնի հեռախոսակայանը, որով գնդապետ Հաշիմը և վալին կապ էին պահպանում Ադանայի վիլայեթի տարբեր շրջանների և Կ. Պոլսի հետ[11]։

Հալեպի հայկական կոտորածը ծրագրվեց Կ. Պոլսում, Ադանայում կամ Սվազում, սակայն այն գործադրվեց պետական վարչամեքենայում որջավորված արաբական հետադիմական տարրերի ձեռքով։ Անգլիական զորքերի Սիրիա մտնելուց հետո Հալեպից հեռացող թուրք պետական պաշտոնյաներին փոխարինել էին «թուրք մտայնությամբ սնած և թուրք դաստիարակությամբ զարգացած» արաբներ, որոնք «մեծ մասով իթթիհատին կպատկաններին»[12]։ Այդ կուսակցության անդամ կամ հետևորդ էին Հալեպում ոստիկանապետն ու հասարակ ոստիկաններ, բարձրաստիճան ու ցածրաստիճան պաշտոնյաներ և էշրաֆեն (ավագանուց) ալ շատերը»։ Միանգամայն հավաստի էր պոլսահայ մամուլի հաղորդումն այն մասին, որ «գարշելի իթթիհատը հոս ալ (Հալեպում) խորունկ արմատ ձգած էր արաբ զանազան խավերուն մեջ, և դյուրին էր հասկնալ թե Թուրքիո մեջ տակավին գաղտնապես գործող իթթիհատականները շատ դյուրավ կրնային հարաբերության մեջ մտնել իրենց Սուրիո կուսակիցներուն հետ»[13]։

Կասկած չկա, որ Հալեպում հայերին կոտորելու ծրագրին գործադրությունը հանձնարարված էր Ադանայի թուրքական շրջանների ցուցումներով գործող արաբ իթթիհատականների Նադի ալ-արաբ (Արաբա-

կան ակումբ) ընկերությանը։ Արյունահեղության նախապատրաստմանը ծառայեց նրա օրգան «Ալ-Արաբ» թերթի «Հայը և արաբը» վերնագրով «չափազանց թունալից», գրգռիչ հոդվածը, որը լույս էր տեսել գլխավոր խմբագիր Սամի ալ-Սարրաջի՝ փետրվարի սկզբներին Ադանայում կատարած շրջագայությունից վերադառնալուց անմիջապես հետո։ Այդ հոդվածում Սամին փորձում էր «ապացուցել, թե հայ կուսակցությունները, հայ չեթեները, հայ ժողովուրդը Թուրքիային դարձող արաբներուն նեղություններ տալև զատ, զանոնք կսպանեն եղեր»[14]։ Հալեպի հայ մամուլը հերքել է այդ զրպարտությունները, սակայն «Սամիի նման թրքացած և թուրք դրամի սպասարկու արաբները» հասել էին իրենց նպատակին, այն է՝ «արաբ ամբոխը» գրգռել էին հայերի դեմ[15]։ Բացի այդ, Նադի ալ-արաբը հալեպցիներին կոչ է արել փետրվարի 28-ին հավաքվել Ջումաա բազարում՝ բողոքելու համար «հայկական խլրժդըժությունների» դեմ։ Ելույթը չի թույլատրվել, սակայն ամբոխը հավաքվել է և հայերի կոտորածը սկսվել է «էլ-արապ պլյուպի կողմե ծանուցված և համաձայնական իշխանության կողմե արգիլված միթինկին համար որոշված վայրեն՝ Ճումա բազարեն...»[16]։

Չի բացառվում, որ Հալեպի խիստ փոքրաթիվ թուրքերից ոմանք մասնակցած լինեն հայերի կոտորածին, սակայն ճիշտ չէ փետրվարի 28-ին Ջումաա բազարում հավաքվածներին, բացառությամբ «որոշ մոլեռանդ արաբների», համարել «Հալեպի և շրջակա բնակավայրերի հայատյաց թուրքեր», այն դեպքում, երբ աղբյուրները թուրքեր չեն հիշատակում հայերի կոտորածին մասնակցելու մեղադրանքով դատարանի առաջ կանգնածների, բանտարկվածների կամ աքսորվածների մեջ։ Ճիշտ է, անգլիական ռազմական դատարանը զանազան նկատառումներով մերժեց լսել կոտորածին արաբ ոստիկանների, ժանդարմների, զինվորների մասնակցության վերաբերյալ վկայությունները, սակայն նրանց մեղսակցության վերաբերյալ փաստերը համապատասխանում էին իրականությանը։ Նույնիսկ արյունահեղությունից շաբաթներ հետո «արաբ ոստիկաններ և թաղերու մխթարներ», շարունակելով քեմալականներից ստանձնած պատվերի կատարումը, գործնական քայլեր են արել հայ գաղթականներին Հալեպից վտարելու ուղղությամբ։ Այդ կապակցությամբ Հալեպից հաղորդում էին. «Այդ դեպքը բավական լուրջ հուղում առաջ բերավ քաղաքին մեջ, և հայ ազգային միությունը, և Ազգային առաջնորդարանը դիմումներ ըրին անգլիական իշխանություններին»[17]։

Սակայն ամենակարևորն այն է, որ արաբներն աշնվորեն ընդունեցին իրենց մեղքը, և 1919 թ. նոյեմբերին արաբական էշրաֆեի՝ ավա-

գանու ներկայացուցիչների առաջարկով ստեղծվեց Հայ-արաբ բարեկամության կոմիտե[18], որի նպատակն էր անգլիական զորքերի հեռանալուց հետո քաղաքում «շրջող վրդովեցուցիչ շշուկները քննել և թյուրիմացությունները փարատել»: Այդ կոմիտեի անդրանիկ հավաքույթում[19] ավելի քան հարյուր հայ և արաբ պաշտոնական անձանց առաջ, Հալեպի զինվորական կառավարչի քաղաքական գծով օգնական Նաջի Սուեդին հայտարարել է. «Հայերն ու արաբները կրնան վստահ ըլլալ, որ իրենց մեկեն մյուսին որևէ վնաս չի կրնար ըլլալ, ու հայն իր տանը մեջ կրնա հանգիստ քնանալ առանց իսլամին կասկած ունենալու, արաբը նույնպես հային կասկած թող չունենա»: Ապա նա նշել է, որ փետրվարի 28-ի արյունահեղությունը «երկու կողմին համար ալ աղետաբեր եղավ: Այո, հայեր սպանվեցան, բայց արաբներն ալ կախվեցան ու շատեր ալ Սուդանի բանտերուն մեջ կհեծծեն»[20]:

Նթե «Հալեպի և շրջակա բնակավայրերի հայատյաց թուրքերի» առասպելը թեկուզ նվազագույն չափով իրականություն լիներ, ապա Նաջի Սուեդին իր խոսքն այլ կերպ կկառուցեր, կամ ավելի քան հիսուն արաբ աստիճանավորներից մեկնումեկը կկառչեր դրանից: Բայց այդպես չի եղել, ներկաները հավանություն են տվել Նաջի Սուեդիի հայտարարությանը և նրան ընտրել Հայ-արաբ բարեկամության կոմիտեի նախագահ: Այնուամենայնիվ այդ խոստովանությունն ամենևին էլ չի նշանակում, որ թուրքերից խաբված մի քանի հարյուր մոլեռանդ արաբների փետրվարյան ապստամբությունները պետք է վերագրել Հալեպի ամբողջ արաբ ազգաբնակչությանը:

Թեև Հալեպի հայերի կոտորածը ծրագրվեց Թուրքիայում և գործադրվեց արաբ իթթիհատականների ձեռքով, սակայն արյունահեղության պատասխանատուների շարքում իրենց որոշակի տեղն ունեն նաև անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները:

Դժվար է հավատալ, որ 1918—1919 թթ. Կիլիկիայից Սիրիա և մինչև Արաբիա ձգվող անգլիական հետախուզության գործակալների խիտ ցանցը որոշակի տվյալներ չէր որսացել Հալեպի հակահայ դավադրության վերաբերյալ: Նադի ալ-արաբ ընկերության կազմակերպած հակահայ միտինգի արգելումը, արյունահեղությունից ընդամենը երեք օր հետո Կիլիկիայի ժանդարմերիայի հրամանատար Հաշիմի ձերբակալությունը, Հալեպի ընդհանուր զինվորական կառավարիչ («դեպքի հոտը առած») Ալ-Այուբի փաշային ներկայացված մեղադրանքը և այլ փաստեր հիմք են տալիս պնդելու, որ անգլիական գեներալ Լեսլիի գլխա-

վորած ռազմական վարչությունը վաղօրոք տեղյակ էր Հալեպի հայերին սպառնացող վտանգի մասին։ Հալեպում զոհված հայերի թվաքանակն անհամեմատ ավելի կլիներ, եթե անգլիական կայազորը «կանխօրոք զգուշացված» չլիներ և «կազմ ու պատրաստ վիճակում չգտնվեր»։

Ուստի անգլիացիները կարող էին արյունահեղությունը կանխել, բայց չկանխեցին։

Առայժմ փաստերը խոսում են ֆրանսիական գաղութարարների անուղղակի պատասխանատվության մասին։ Սիրիայում նրանց վարած քաղաքականությունը նպաստում էր հակահայկական կրքերի բորբոքմանը՝ մոլեռանդ մուսուլմանների շրջանում։ Նրանք, ինչպես ճիշտ կնկատի Հ. Մադեյանը նշել է, «ամեն միջոցի կդիմեին արաբներուն տալու համար այն տպավորությունը, որ նորեկ հայերը իրենց «պաշտպանյայներն» էին, և թե անոնք միևնույն ատեն կրնային օգտագործվիլ արաբներու ազգային-ազատագրական շարժման դեմ»։ Այդ քաղաքականության դրսևորումներից էր այն, որ Բեյրութի ազատագրությանը մասնակցած հայ լեգեոնականներն երկար ժամանակ պահվեցին Սիրիայում։ Այդ «հոգեբանական սխալը» պատճառ դարձավ հայ-արաբական փոդոցային ընդհարումների հրահրմանը։ Գնալով շիկացող հակահայ տրամադրությունները զգալի չափով հեշտացրին Հալեպի կոտորածը կազմակերպողների գործը։

Քեմալականները հետագա տարիներին ևս փորձում էին պղտորել հայ-արաբական հարաբերությունները։

2. ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԳՆԱԺԱՄԸ 1925—1927 ԵՎ 1930—1932 ԹԹ.

1918—1922 թթ. Սիրիայի ժողովուրդը պայքարում էր ֆրանսիական մանդատի հաստատման դեմ, իսկ այնուհետև նրա պայքարի գլխավոր նպատակն էր մանդատի վերացումը, իմպերիալիստների արտաքսումը և ազգային անկախ ու միասնական պետության ստեղծումը։ Ազգային-ազատագրական պայքարի ղեկի մոտ կանգնած էր թուլլ ու անփորձ ազգային բուրժուազիան, որի միջուկը կազմում էին պրոթուրքական որոշակի տրամադրություններ ունեցող խոշոր կալվածատերերը, նախկին պետական պաշտոնյաները և դինվորական աստիճանավորները։ Նրա գլխավոր շարժիչ ուժը կազմում էր գյուղացիությունը։ Բանվոր դասակարգը, լինելով դեռևս փոքրաթիվ և լավ չկազմակերպված, կատարում էր համեմատաբար նվազ կարևոր դեր։ Ազգային-ազատագրա-

կան պայքարին մասնակցում էին մանր ու միջին առևտրականները, մտավորականությունը և հասարակական այլ խավեր:

1925—1927 թթ. Ջեբել Դրուզի ապստամբությունը, որի հրդեհը տարածվեց ամբողջ հարավային Սիրիայում, խոշորադույն զինված ելույթն էր ֆրանսիական տիրապետության դեմ:

Ապստամբության առաջին մի քանի շաբաթների ընթացքում դրուզները, ֆրանսիական զորքերից մաքրելով իրենց լեռնաշխարհը, ընդհուպ մոտեցան Դամասկոսին: 1925 թ. օգոստոսի 23-ին դրուզների և ապստամբությանը հարած Հիջբ ալ-Շաաբ կուսակցության ղեկավարները որոշեցին գրավել մայրաքաղաքը: Հաջորդ օրը հայրենասիրական ջոկատները հարձակման անցան, սակայն ետ մղվեցին ֆրանսիական գերակշիռ ուժերի ճնշման ներքո: Սեպտեմբերի վերջերին գեներալ Գամելենի հակահարձակումը ծանր կորուստներ պատճառեց ապստամբներին, սակայն չպսակվեց հաջողությամբ: Ազգային-ազատագրական ուժերը, վերադառնալով Ղութայի օազիսը, վերստին սպառնում էին մայրաքաղաքին:

1925 թ. հոկտեմբերի 18-ին համաժողովրդական ապստամբություն բարձրացավ Դամասկոսում: Ֆրանսիական կայազորը քաշվեց զորանոցները, և ազգային-ազատագրական ջոկատներն առանց կռվի մտան մայրաքաղաք: Հենց այդ օրն էլ հայ գաղթականների արյունը թափվեց: Բեյրութի «Նոր փյունիկ» լրագիրը հաղորդում էր. «Ջարդ տեղի ունեցած է Գադեմի (հայկական) քեմպին մեջ՝ հատկապես Մեյդանի կողմը, սպանված են շուրջ 50 հոգի: Թալանի ենթարկված են հավասարապես երեք քեմպերն ալ, թե Գադեմ, թե Բաբ Շարքիե, թե Սոֆանիե: Թալանի տրված են անխտիր Բաբ Մուսալլայի և Մեյդանի բոլոր հայ խանութները: Բոլոր քեմպերու հայ գաղթականներն ալ քաղաքամեջը փոխադրված են, ապաստանելով հայ եկեղեցին, լազարիստներու դպրոցը, հայ կաթոլիկներու, ֆրանսիացիներու եկեղեցիները»[1]:

Աղետին ավելի մանրամասն անդրադարձել է Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը: Հայ գաղթականաց կենտրոնական հանձնաժողովին ուղղված նրա մի նամակում ասված է. «Անտուն ու անհայրենիք հայությունը իբրև քավության նոխազ՝ Դամասկոսի հոկտեմբերի 18-ի արյունոտ դեպքին լիառատ խառնեց իր արյունը...: Մոտավորապես 50 է հայ զոհերու թիվը, բայց հազարներ են անոթության ու մերկության մատնված, ու անպատսպար մնացողները: Զոհերու մեծագույն մասը Գադեմի քեմպեն է, որ առաջին ու ներքին հարձակման ենթարկվելով կողոպտվեցավ ու այրվեցավ: Մուսալլա թաղը երեք-չորս զոհերով, տուն

ու խանութ կողոպտվեցավ։ Բաբ Թումայի հայերը թեև տեղական բարեսեր դամասկոսցիներեն պաշտպանվեցան, բայց բնակարանք մասամբ կողոպտվեցան։ Քրիստոնեից թաղին մոտ Բաբ Շարբիեի քեմպը, ուր հայության ատվար մասը համախմբված է, առանց զոհի ու կողոպուտի ազատեցավ՝ իր ունեցածներով. եկեղեցին, դպրոցը և հարակից աղքատանոցը ապաստանելով»[2]։

Դամասկոսի հայերի կոտորածն այս կամ այն չափով տեղ է գտել Սիրիայի նորագույն պատմության հարցերին նվիրված համարյա բոլոր աշխատություններում։ Դրանց հեղինակները, տուրք տալով արաբական և թուրքական հետադիմական մամուլին, ճիշտ չեն լուսաբանել կոտորածի պատճառները և երբեմն էլ մեղավոր են դուրս բերել հենց կոտորածի զոհերին՝ հայ գաղթականներին։

Ամերիկացի ժուռնալիստ Է. Պ. Մակկալումը հոկտեմբերի 18-ի կոտորածը համարում է փոխադարձություն կամ փոխվրեժ այն «ծայրահեղությունների», որ իբր ֆրանսիական դրոշի ներքո գործող հայ «կամավորական գնդերը» գործել են մուսուլման ազգաբնակչության դեմ։ Նա գրել է. «Մինչ ֆրանսիական զորքերն ավերածություններ էին սըփռում այս (Միդդանի—Հ. Թ.) շրջանում, մի խումբ բնակիչներ հարձակվեցին մոտակայքում գտնվող գաղթակայանի հայերի վրա, և ֆրանսիացիների այդ պաշտպանյալներից երկու երկվեցյակ սպանեցին որպես փոխադարձություն այն գյուղացիների սպանության, որ վերջերս կատարվել էր Ղութայում»։ Ցանկանալով ապացուցել իր մտացածին վարկածը, Մակկալումը հայերին մասնակից է դարձնում ֆրանսիական իմպերիալիստների գործած համարյա բոլոր բարբարոսություններին[3]։

Անգլիական պատմաբան Ս. Հ. Լոնգրիգը նույնպես կառչել է հայ կամավորական գնդերի առասպելից։ Նրա ասելով, այդ գնդերը աչքի են ընկել «գազանությամբ ու ամոթալի թալանչիությամբ», պատճառ դարձել «աղետալի դրգռության» և ի վերջո «վառնգել են» Դամասկոսի «անցանկալի բնակիչ հայերի կյանքը»։ Հոկտեմբերի 18-ին «հակաքրիստոնեական տրամադրություններն» այնքան էին աճել Դամասկոսում, որ «ծայրամասում գտնվող հայկական գաղթակայաններից մեկը հարձակման ենթարկվեց, հրդեհվեց և նրա բնակիչներից քսանը սպանվեց»[4]։

Հոկտեմբերի 18-ի աղետը մոտավորապես նույն դիրքերից են դիտել և գնահատել նաև Ջ. Անտոնիուսը[5], Ա. Հ. Հուրանին[6], Ջ. Հադդադը[7] և ուրիշներ։

Բայց բոլորովին այլ էր իրականությունը։ Այդ և մյուս հեղինակների հակահայ առասպելներում որպես գլխավոր հերոս հանդես բերված

հայ կամավորական գնդեր գոյություն չեն ունեցել։ Տակավին այն ժամանակ, երբ այդ պժգալի կեղծիքը նոր էր երևացել հետադիմական մամուլի էջերում, Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը հրապարակով հայտարարել է. «Բացարձակապես կրնամ հերքել բանիվ ու գրով։ Հայ կամավորական խումբեր կամ գունդեր առանձին գոյություն ունեցած չեն ու չպիտի ունենան...։ Հայք կողոպուտ և խժդժություն ըրած չեն ու մտքե անգամ չեն անցներ ապերախտությամբ փոխարինել տարագրության օրերեն ի վեր արաբ ազնիվ ազգեն տեսած և վայելած եղբայրական ու տառապալից սերն ու գութգուրանքը»[8]։

Ճիշտ է ֆրանսիական գաղութարարները փորձեցին նաև հայերից կամավորական գնդեր կազմել, ինչպիսին արդեն ստեղծել էին չերքեզներից, քրդերից և այլ տարրերից, սակայն դա նրանց չհաջողվեց, չէր էլ կարող հաջողվել, քանի որ Սիրիայի և Լիբանանի հայ քաղաքական կազմակերպությունները, ներառյալ պրոֆրանսիական վարքագիծ որդեգրած դաշնակցությունը, և ազգային-եկեղեցական իշխանությունները դեմ էին այդ արկածախնդրությանը։ Եվ ոչ միայն այդ։ Հայ աշխատավորության առաջավոր ներկայացուցիչները պայքարում էին ապստամբության օգտին։

Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորները, տակավին բուժած չլինելով այն վերքերը, որ ստացել էին համաշխարհային պատերազմից, խիստ սահմանափակ հնարավորություններ ունեին ապստամբությանն օգնելու համար։

Ջեբել Դրուզը բռնկվելուց անմիջապես հետո հայ և արաբ աշխատավորների համատեղ ջանքերով ստեղծվեց «Ապստամբությանն աջակցող հեղափոխական կոմիտեն», որը զենք և դեղորայք էր հայթայթում ապստամբներին, նրանց օգնում (մեծ մասամբ հայ կապավորների միջոցով) իրականացնելու կապը՝ Ջեբել Դրուզի և Դամասկոսի միջև, տարածում շարժման արդարացիությունը բացատրող թռուցիկներ՝ արաբերեն, հայերեն և ֆրանսերեն լեզուներով։

1925 թ. հոկտեմբերի 11-ին հրապարակվեց Ապստամբությանն աջակցող հեղափոխական կոմիտեի առաջին հայերեն թռուցիկը, որով հայ գաղթականներին կոչ էր արվում՝ օգնել ապստամբությանը[9]։ Նրա ջանքերով նույն թվականի նոյեմբերի 7-ին Բեյրութի Հայաբնակ Աշրաֆիե թաղում կազմակերպվեց ժողովրդական միտինգ, որի մասնակիցները մեծ ոգևորությամբ համերաշխություն հայտնեցին արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին[10]։

Հեղափոխական կոմիտեն հակադրվում էր ֆրանսիական իմպերիալիզմի գործակալների՝ կամավորներ հավաքագրելու փորձերին։ Ջեբել Մուսայի շրջանում նրա տարածած թռուցիկները հայ գյուղացիներին թելադրում էին չհետևել արաբ ժողովրդի թշնամիներին, «զենք չբարձրացնել սուրիացի եղբայրներուն դեմ»[11]։ Նույնիմաստ թռուցիկներ են տարածվել նաև Բեյրութի, Դամասկոսի, Հալեպի և այլ քաղաքների հայության շրջանում։ Այդ կոմիտեն միաժամանակ եռանդագին աշխատում էր փարատել այն «վտանգավոր թյուրիմացությունները», որ ֆրանսիական իմպերիալիստները առաջադրել էին «արաբներու մոտ հայերու հանդեպ»[12]։ Բեյրութում ֆրանսիական իշխանությունները ձերբակալել են կոմունիստներ Պետրոս Պարտիզպանյանին և Խաչիկ Փափազյանին, որոնք տարածում էին այդ կարգի թռուցիկներ[13]։

Ապստամբության օգտին աշխատանք էր կատարվում նաև ֆրանսիական ղորքի մեջ։ Սուլեյման ալ-Ադիլը նշում էր. «Կոմունիստները ֆրանսերեն լեզվով թռուցիկներով կոչ արեցին (ֆրանսիական) զինվորներին չկռվել իրենց հայրենիքի անկախության համար պայքարող ապստամբների դեմ»[14]։ Բանակում «քայքայիչ աշխատանք» կատարելու մեղադրանքով ֆրանսիական ոստիկանությունը ձերբակալել է բազմաթիվ հայ և արաբ կոմունիստներ, այդ թվում Հ. Մադեյանին և Հ. Բոյաջյանին։ Զինվորական տյանը նրանց դատապարտել է պատժի առավելագույնին, սակայն Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության բողոքի լայն շարժման շնորհիվ մահապատիժը փոխարինվել է ցկյանս արգելափակման[15]։

Ջեբել Դրուզի ապստամբությունը որոշակի դժվարությունների առաջ կանգնեցրեց ազգային կուսակցություններին՝ հնչակյաններին, դաշնակցականներին և ռամկավարներին, որոնց տեղական-քաղաքական նպատակն էր «սերտ կապեր» ստեղծել հայ գաղթականության և մանդատային իշխանությունների միջև։

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը արտահայտվում էր հայ կամավորների հավաքագրման դեմ և քիչ բան չարեց այն ձախողելու գործում։ Սակայն հնչակյան ղեկավարները տանում էին տատանողական գիծ, մեկ համաձայնվում էին, մեկ էլ հրաժարվում մասնակցել այն միջոցառումներին, որոնց նպատակն էր հայ աշխատավորներին միասնական ճակատով հանդես բերել ապստամբության օգտին[16]։ Ջեբել Դրուզի ապստամբության ժամանակ հնչակյան ղեկավարները նպատակահարմար չէին նկատում համագործակցությունը՝ ֆրանսիական իմպերիալիստների հարվածի տակ ընկած կոմունիստական կուսակցու-

թյան հետ։ Այնուամենայնիվ ֆրանսիական ոստիկանությունը հնչակյան ղեկավարներից ոմանց արգելափակեց ապստամբության ամբողջ ընթացքում։

Հայ կամավորների հավաքագրման դեմ էր արտահայտվում նաև ռամկավար ազատական կուսակցությունը։ Նրա կենտրոնական օրգան «Արև» օրաթերթը գրում էր. «Ֆրանսիայի համար ո՞րք կպակսի, մա՞րդ կպակսի, որ իր աչքը դրած է դժբախտ հայ ժողովրդի բեկորներուն վրա, և զանոնք նոր հրդեհի մը մեջ կնետե։ Ֆրանսա, եթե շահեր ունի Սուրիո մեջ և վճռած է հոն մնալ, իրեն միջոցներ չեն պակսիր, մարդ ալ ունի, դրամ ալ ունի, զենք ալ ունի, և պետք չունի տարագիր հայերը շահագործման նյութ դարձնելու»։

Սիրիայի և Լիբանանի ազգային-եկեղեցական իշխանությունները որդեգրել էին ղգուշավոր գիծ՝ առանց դրգռելու ֆրանսիական իմպերիալիստներին, հայ գաղթականությունը չհանել հյուրընկալ երկրի ժողովրդի դեմ։ Այդ առումով հետաքրքրական է Փարիզի «Երևան» թերթի մի հաղորդումը, որտեղ ասված է. «Քաղաքական հեռատեսության լավ օրինակ մը տվեց Դամասկոսը (Հայոց) առաջնորդը։ Օգոստոսի 24-ի տագնապալի օրերին, երբ կառավարությունը (ֆրանսիական իշխանությունը—Հ. Թ.) զենք էր բաժանում քրիստոնյաներին Դամասկոսի մեջ, հայոց առաջնորդը քաղաքավարությամբ մերժում է այդ առաջարկը, ասելով թե հայերը նորեկներ են, հավատարիմ (ֆրանսիական) իշխանություններին և բարեկամ տեղացիներին...»[17]։

Առավել համարձակություն հանդես բերեց Տանն Կիլիկիո Սահակ Բ Կաթողիկոսը։ Երբ ֆրանսիական իմպերիալիստներին հաջողվել էր թեկուզ աննշան թվով հայ վարձկաններ հավաքագրել, նա ներկայացել է գերագույն կոմիսար դե Ժուվինելին և խնդրել. «Ցրվել այն մեկ քանի տասնյակ հայ կամավորները, որոնց գոյությունը ֆրանսիական բանակին ոչ ուժը կավելցնե, և ոչ ալ փառքը»։ Վերջում նա ասել է. «Կամավոր արձանագրվողներուն նպատակը եղած է միայն հացի խնդիրը։ Այսուամենայնիվ լավագույն կհամարեմ մի քանիներու անոթի մեռնիլը, քան թե կուշտ փորով ընդհանուրին կյանքին դեմ վտանգ ստեղծելը»[18]։ Բացի այդ, նա մուսուլմանների կրոնապետին հատուկ գրությամբ տեղեկացրել է, որ հայերը «հավանություն չեն տալիս կամավորական շարժմանը և հնարավոր բոլոր միջոցներով աշխատում են ձախողել այն...»[19]։

Դաշնակցությունը դեմ չէր կամավորական գնդերի արկածախնդրությանը, սակայն չհամարձակվեց բացեիբաց արտահայտվել այդ ան-

շնորհակալ գործի օգտին: Հայեր հավաքագրելու գործը հանձնարարվեց համաշխարհային պատերազմի տարիներին ֆրանսիական դրոշի ներքո մարտնչած Արևելյան (հետագայում Հայկական) լեգեոնի մի շարք դաշնակցական նախկին աստիճանավորների: Ի վերջո, դաշնակցական գործիչները, վախենալով ներկուսակցական դժգոհությունների աճից, ոչ միայն չհովանավորեցին, այլև հալածանք ծավալեցին լեգեոնական բախտախնդիրների դեմ: Ապստամբության տարիներին դաշնակցության պատասխանատու օրգաններում պաշտոններ զբաղեցրած Խոսրով Թյությունջյանը գրել է. «Դաշնակցությունը հաջողությամբ զսպած է նախկին լեգեոնական մեկ քանի բախտախնդիրներ, որոնք հետամուտ էին հայկական առանձին կամավորական գունդ կազմել, ֆրանսիական բանակի կողքին մասնակցելու համար ըմբոստներու դեմ ձեռնարկված զինվորական գործողություններուն»[20]:

Այդ բախտախնդիրների աջակցությամբ ֆրանսիական իմպերիալիստներին հաջողվեց հավաքագրել աննշան թվով հայեր, որոնք հաղիվ մի կաթիլ ջուր էին վարձկանների ծովում:

Ապստամբության նախօրեին, ֆրանսիական դրոշի ներքո «կամավորական» գործող «օժանդակ» կամ «անկանոն» գնդերում կային 6500, իսկ ապստամբության ժամանակ՝ մինչև շուրջ 30.000 կամավորներ[21]: Առ այսօր տվյալներ չեն հրապարակվել կամավորների ազգային պատկանելիության վերաբերյալ, սակայն ժամանակակիցները միաձայն վկայում են, որ այդ գնդերը ճնշող մեծամասնությամբ բաղկացած էին քրդերից, չերքեզներից, նուսեյրիներից կամ անսարիներից և մասամբ էլ արաբներից ու այլ տարրերից: Սահակ Բ կաթողիկոսը այդ գնդերում ծառայող հայերի թվաքանակը նշում էր «մի քանի տասնյակ հայ կամավորներ», Միք. Նաթանյանը՝ «քանի մը հայ ժանդարմներ կամ կամավորներ», ուրիշները՝ «սակավաթիվ հայեր», «մի քանի տասնյակ հայ երիտասարդներ» և այլն[22]:

Սակայն զարմանալի կերպով արաբական հետադիմական մամուլի հարձակման թիրախ դարձան միայն հայերը: Իրավացիորեն Լոնդոնի «Թայմսը» առաջնորդող հոդվածում նշում էր. «Այն իրողությունը, թե այս անկանոն գունդերուն մեծամասնությունը կկազմեն քուրդերը, իսմայիլի հերձվածողները և ամենեն ավելի իսլամ չերքեզները, որոնց ավանդություններեն անբաժան է ավարառությունը և որոնց կարգապահությունը անխուսափելիորեն թույլ է, կթելադրե խորհիլ, որ քննադատության կենտրոնացումը միայն հայերու դեմ՝ ոչ արդար է, ոչ պարկեշտ»[23]:

Հակահայ արշավի ազգանշան հանդիսացան այն ստահոդ հայտարարությունները, որ Սիրիայի Հիզբ ալ-Շաաբ կուսակցության պարագլուխներից՝ դոկտ. Ադբ ալ-Ռահման Շահբենդերի անունից գրեթե միաժամանակ հրապարակվեցին մի շարք արաբական, թուրքական և ամերիկյան թերթերում: Դրանք լայն արձագանք գտան համարյա բոլոր մուսուլմանական երկրներում: Միք. Նաթանյանը գրում էր. «Թուրք մամուլը՝ սկսած Ադանայեն, Էնկյուրիեն մինչև Պոլիս, ու անոնց հայտնի ներշնչումներով արտահայտվող սուրիական մաս մը թերթեր չվարանեցան հրապարակել, թե 500-նոց զուտ հայկական զորագունդեր ֆրանսացի հրամանատարներու ձեռքին տակ ղիրենք հյուրընկալող այդ երկրին (Սիրիայի—Հ. Թ.) բնիկ ժողովուրդներուն դեմ կռվելու ելած են...: Ասկե ավելի ճիվաղային գրգռություն մը կարելի չէ երևակայել...»[24]:

Այլևս հնարավոր չէր կանգնեցնել հայ-արաբական բշնամանք սերմանող հետադիմական մամուլի անիվը: Նրա գորշ էջերում «հայ կամավորական գնդերը» մուսուլմանական գյուղեր էին հրկիզում, գյուղացիներ սպանում, տներ թալանում, իսլամ կանանց առևանգում, «թևերնին կտրելով ոսկե արդուզարդը» խլում և գողացածներն ամենայն սառնասրտությամբ վաճառքի դնում Դամասկոսի շուկաներում: Դրանցից մեկը գրում էր. «Հայ ասպատակները տաս հազար սուրիացիներ ջարդած են և բաղմաթիվ իսլամ գյուղեր թալանած ու ավերած»: Մի ուրիշը՝ «Հայ վարձկան զինվորները հարձակում գործած են Տումայի (Դամասկոսի արվարձան) վրա, սպանելով 600 իսլամներ և կողոպտելով տուներ ու մզկիթներ» և այլն, և այլն[25]:

Այդ աղմուկը պետք էր հիմնավորելու համար Ազգերի լիգայի մանդատային խորհրդին հղված այն բողոքադրերը, որոնցով Ֆրանսիան մեղադրվում էր մանդատի կանոնադրությունը խախտելու մեջ: Արդարև նրա 2-րդ հոդվածում ասված էր. «Մանդատատեր (պետությունը) կարող է զորքեր ունենալ տվյալ տերիտորիայում իր պաշտպանության համար: Մինչև օրգանական օրենքի ուժի մեջ մտնելը և հասարակության անվտանգության վերահաստատումը՝ նրանց իրավունք է տրվում կազմակերպել տեղական միլիցիա, որպիսին կարող է անհրաժեշտ լինել տերիտորիայի պաշտպանության համար, և այդ միլիցիան օգտագործել պաշտպանության, ինչպես նաև կարգի պահպանման համար: Այդ տեղական ուժերը կարող են համալրվել միայն տվյալ տերիտորիայի բնակիչներից»:

Սիրիական գործիչները կառչեցին հենց այդ հոդվածի վերջին նախադասությունից: Հայերին համարելով ոչ թե «տերիտորիայի բնակիչ-

ներ», այլ «հյուրընկալված գաղթականներ», նրանք պնդում էին, որ Ֆրանսիան իրավունք չունի հայերից «կամավորական գնդեր» կազմելու։ Սզգերի լիգայի մանդատային խորհուրդը, ձևականորեն քննարկելով այդ կարգի բողոքագրերը, մանդատի կանոնադրության համապատասխան է համարել հայերի հավաքագրումը «օժանդակ» գնդերում, քանի որ նրանք արդեն սիրիական քաղաքացի էին։ Ամենավատը սակայն այն էր, որ այդ կարգի քննարկումները, շեշտը դնելով հիմնականում «օժանդակ» գնդերի «բարբարոսական» գործողությունների վրա, ծառայում էին հայերին վարկաբեկող սուտ լուրերի ներթափանցմանը եվրոպական մամուլի էջերը։ Օրինակ, մանդատային խորհրդի նիստերից մեկի արձանագրությունում ասված է. «Նկատի ունենալով, որ բողոքարկողները հաճախ հայ և չերքեզ օժանդակ (զորքերին) մեղադրում են ծայրահեղություններ գործելու մեջ, խորհուրդս գտնում է, որ այդ կարգի զորքեր օգտագործելը պարտավորեցնում է մանդատատեր (պետությանը)՝ նրանց կցելու հնարավորին չափ մեծ թվով ֆրանսիական սպաներ, որպեսզի կանխվեն ծայրահեղությունները...» և այլն։

Սիրիայի ազգային-ազատագրական պայքարի ղեկավարները հավանաբար թերագնահատում էին հայ-արաբական թշնամանքի բորբոքման հետևանքները։ Նրանք ուշ անդրադարձան, որ հակահայ կրքերը կարող էին, ի վերջո, հանգեցնել քրիստոնյաների կոտորածի, իսկ դա կծառայեր միայն ֆրանսիական իմպերիալիզմի շահերին։

Հոկտեմբերի 18-ի կոտորածը պետք էր ոչ թե ազգային-ազատագրական ուժերին, այլ դժվար դրությունից ելք որոնող ֆրանսիական իմպերիալիստներին։ Արդարև այդ նույն օրը Դամասկոսում սկսվել էր համաժողովրդական ապստամբություն, և մայրաքաղաք մտած ազգային-ազատագրական ջոկատներին միացել էին Շաղուրի, Մեյդանի և այլ թաղերի բնակիչները։ Ֆրանսիական կայազորը քաշվել էր ալ-Սալիհիայի զորանոցները, և քաղաքը համարյա ամբողջությամբ անցել էր ապըստամբների ձեռքը։ Իմպերիալիստներին մնում էր, ինչպես նշել է Վ. Բ. Լուցկին, «կրոնական թշնամանք բորբոքել, կրոնական կոտորածներ հարուցել։ Այդ միջոցը նոր չէր։ Այն ֆրանսիական գաղութարարների ամենասիրելի պրիոմներից մեկն էր եղել և՛ 1860 թ., և՛ Սիրիայի նվաճումից հետո։ 1925 թ. Դամասկոսի կռիվների ժամանակ ֆրանսիական իմպերիալիստները որոշեցին այն վերստին օգտագործել, ամբակոծությանը զուգակցելով քրիստոնյաների կոտորածը»[26]։

Դրանով նրանք ձգտում էին ճեղք առաջացնել ազգային-ազատագրական ուժերի շարքերում, վարկաբեկել ու թուլացնել ազգային անկա-

խության պայքարը և, վերջապես, համաշխարհային հասարակության ցույց տալ, որ կրոնական հակամարտություններով պատակված Սիրիան կարիք ունի ֆրանսիական խնամակալության։

Ազգային-ազատագրական ուժերի ղեկավարությունը միջոցներ է ձեռնարկել հնարավոր պրովոկացիաներից քրիստոնյաներին պաշտպանելու համար։ Ապստամբության ղեկավարներից Հասան ալ-Խառաթը, անձամբ լինելով քրիստոնյաներով բնակեցված թաղերում հավաստիացրել է, որ մահմեդականները չեն սպառնում ոչ նրանց կյանքին, ոչ էլ ունեցվածքին։ Եվ, իրոք, ինչպես հաղորդում էր «Թայմս»-ի Դամասկոսի թղթակիցը, «ֆրանսիական կայազորի քաշվելուց հետո ազգային, ազատագրական ուժերը պահպանեցին հասարակական կարգ ու կանոնը քրիստոնեաբնակ թաղերում»[27]։ Նույնն են վկայում նաև Դամասկոսում հավատարմագրված հյուպատոսները։ Հոկտեմբերի 21-ին նրանք հայտարարել են, որ Դամասկոսի մուսուլմանները «պաշտպանեցին քրիստոնյաներին և հրեաներին, ներառյալ օտարերկրացիներին»[28]։ Այնուամենայնիվ հայեր կոտորվեցին...

Դեռևս կոնկրետ փաստեր չունենք այն մասին, թե ֆրանսիական իմպերիալիստները ում ձեռքով ի կատար ածեցին այդ քստմնելի ոճիրը։ Սակայն անուղղակի փաստերը հուշում են, որ դրանք այն ձեռքերն էին, որոնք 1919 թ. փետրվարին թաթախվել էին Հալեպի հայերի արյան մեջ։ Անդրադառնալով Դամասկոսի հայերի կոտորածին անգլիական «Դեյլի Տելեգրաֆ» թերթը նշում էր. «Դրանք թուրքական լայնածավալ պրոպագանդայի հետևանք են։ Հայերը միշտ էլ թուրքական հալածանքների զոհ եղած են...»[29]։ Բացի այդ, ֆրանս-թուրքական բանակցությունները հույս էին ներշնչում Թուրքիային՝ վերստին տիրանալու Ալեքսանդրետի սանջակին[30]։

Համաժողովրդական ապստամբության բռնկման ժամանակ ֆրանսիական իմպերիալիստներին կարող էին օգնության հասնել միայն Դամասկոսում որջավորված թուրքական գործակալները և այն պրոթուրքական տարրերը, որոնք գործում էին Սիրիայում հայերի ներկայությունը չհանդուրժող քեմալականների «հայտնի ներշնչումներով»։ Տվյալ պահին, գաղութարարները ուրիշ դաշնակից չունեին Դամասկոսում և միայն նրանց ձեռքով կարող էին քավության նոխազ դարձնել հայ գաղթականներին։ Անկասկած, զոհերի թիվն անհամեմատ ավելի մեծ կլիներ, եթե ազգային-ազատագրական ջոկատները չհասնեին Մեյդան և չցրեին մոլեռանդների ամբոխը։

Հերթական կեղծիք էր ֆրանսիական իմպերիալիստների խոստումը՝

հոկտեմբերի 18-ի աղետից տուժածներին «վնասուց հատուցում» տալու վերաբերյալ: Կազմվեց «բարձր կոմիսարության վնասուց հատուցման հանձնաժողով», որի պատրաստած ցուցակի համաձայն 236 աղետյալներ պետք է ստանային 10.725 օսմանյան ոսկի, բայց ոչինչ չստացան: 1928 թ. օգոստոսի 3-ին գերագույն կոմիսարությունը հայտարարեց, որ «ի վիճակի չէ... վնասուց հատուցում ընել, միմիայն կրնա օգնություններ ընձեռել այրիներու, որբերու և կարոտ ծերերու»[31]:

Այսպիսով, 1925—1927 թթ. հայ-արաբական հարաբերություններում առաջացած նոր ճգնաժամը հետևանքն էր այն ստահոդ հայտարարությունների, որ Շաաբ կուսակցության ղեկավարներից Շահբենդերը կատարեց ի լուր աշխարհի հայ կամավորական գնդերի և նրանց գործած վայրագությունների մասին: Արաբական և թուրքական ռեակցիոն թերթերը, ջերմեռանդորեն արձագանքելով դրանց, ստեղծեցին հակահայ ծանր մթնոլորտ ոչ միայն Սիրիայում: Հոկտեմբերի 18-ին ֆրանսիական իմպերիալիստները, օգտվելով հակահայ շիկացած մթնոլորտից, խաղացին իրենց նախասիրած խաղը: Մինչ թուրքական գործակալները մոլեռանդ մուսուլմաններին մղում էին դեպի հայկական գաղթակայանները, ֆրանսիական ծանր հրետանին ռմբակոծում էր Դամասկոսը: Ազգերի լիգայում այդ բարբարոսական արարքն արդարացվեց հայերի արյամբ: Իբր Դամասկոսի ռմբակոծությունն անհրաժեշտ էր քրիստոնյանների կոտորածի առաջն առնելու համար:

1930 թ. հայ ժողովրդի թշնամիները վերստին աշխուժացան. Բեյրութում լույս տեսնող «Լ'Օրիան» օրաթերթն ի լուր աշխարհի հայտարարեց, որ ֆրանսիական իշխանությունները որոշել են «Հայկական օջախ» ստեղծել Եփրատ և Խաբուր գետերի միջև ընկած երկրամասում[32]: Այդ առասպելի հորինման հիմք էր ծառայել ներքին Սիրիայում մի քանի հազար հայ գաղթականների վերաբնակեցումը, որի մասին նշվեց համապատասխան տեղում: Այդ հայտարարության հաջորդ օրը «Լ'Օրիան»-ը զուգահեռ է անցկացրել Պաղեստինի «Սիոնիստական վտանգի» և Սիրիայի «Հայկական ազգային օջախի» միջև[33]: Հարցի «քննարկմանը» մասնակցել են բազմաթիվ թերթեր, նպաստելով հակահայ հերյուրանքի տարածմանը արաբական հասարակության ամենալայն խավերում:

Թե ինչպիսի սրությամբ են դրսևորվել հակահայ կրքերը, բերենք մի քանի քաղվածք արաբական մամուլից. Դամասկոսի «ալ-ֆեթհ ալ-Արաբ» թերթը գրել է. «Լ'Օրիան թերթը կուզե, որ սուրիացիները հոժա-

րին իրենց երկրին մեջ հայ հայրենիքի մը կազմության։ Եվրոպան հայերուն ամենամեծ բարիքը կընե, եթե զանոնք Հայաստան ղրկե...»[34]։ Բեյրութի «Ալ-Ահրարը». «Ֆրանսիական իշխանությունն ամեն դյուրություն կընծայե, և կուզե զանոնք տեղավորել (Սիրիայում և Լիբանանում)։ Բացի (արդեն հաստատված) 200.000 հայերեն դեռ մեկ միլիոն հայեր ալ պիտի բերվին արտասահմանեն»[35]։ Բեյրութի «Ալ-Ահդ ալ-Ջեդիդ»-ը. «Հայկական հայրենիք մը ստեղծելու և հայեր բնակեցնելու աշխատանքները... բոլոր սուրիացիներուն և մասնավորապես Հալեպի բնակչության հուզման ու զրգռության պատճառ եղած են։ Թուրքիան այդ ծրագրին դեմ բուռն կերպով բողոքում է...»[36]. և այլն, և այլն։

Անդրադառնալով արաբական մամուլի այդ հակահայ արշավին, Ա. Աշշակունին իրավացիորեն գրել է. «Անհերքելի իրողություն է, որ թուրքական գործակալներով ցանցված է սուրիական պետությունն ու Լիբանանի հանրապետությունը։ Թուրքիան անսպառ դրամներ կվատնե թունավորելու դիտումով հայ-արաբական հարաբերությունները։ Արաբ մամուլը անդիտակ հայոց կյանքին ու պատմության հաճախ գործիք կդառնա... և հրատարակության կուտա հակահայ գրություններ...»[37]։

Արաբական մամուլի մի շարք հեղինակավոր օրգաններ, հերքելով «հայկական օջախի» առասպելը, նպաստեցին հակահայ աղմկարարության ամոքճանական թուլացմանը։ Դրանցից «Ալիֆբա» թերթն առաջնորդող հոդվածում գրել է. «Վերջերս հայկական օջախի մը առասպելական պատմությունը բավական ըսի-ըսավներու տեղի տվավ։ Կարդ մը հայ արժանահավատ երևելիներե և վստահելի աղբյուրներե մեզ հասած տեղեկությանց համաձայն իրականության հակառակ են այս լուրերը։ Նույնիսկ բարձր կոմիսարությենեն ստուգած ենք այս պարագան...։ Հայ հայրենիք մը հիմնելու լուրն անճիշտ է։ Մենք հայերու մոտ նման ձգտում չենք նշմարեր, հայերուն ձգտումն է թշվառությենե ազատիլ և կարելի եղածին չափ հողին կապվիլ, այդ կերպով թե իրենց ապրուստը պիտի հոգան և թե օգտակար պիտի ըլլան մեր երկրին...»[38]։

Ծանր մթնոլորտը փարատելու գործում որոշակի դեր է կատարել նաև ս.—դ. Հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունների համատեղ հայտարարությունը, որտեղ ասված է. «Մենք, Ռամկավար ազատական և ս.—դ. Հնչակյան կուսակցությանց Սուրիո շրջանային մարմինները, խառն ժողովի մը մեջ խորհրդակցության առարկա ըրինք վերջերս արաբ թերթերու կողմե եղած հրատարակությունները, և մենք ղմեզ պարտավոր զգացինք վճռապես հայտարարել, թե

ա. Սուրիահայ ժողովուրդը հյուրաբար կգտնվի այս երկրին մեջ և

երախտապարտ է ... արաբ ազնիվ ազգին: ....Անհիմն և երևակայական է Սուրիո մեջ հայկական օջախ մը կազմելու դաղափարը:

բ. Ուրիշ կազմակերպություններ ալ տարբեր տեսակետ կամ մտածում չեն կրնար ունենալ այս մասին:

դ. Հետևապես փափաքելի կդտնենք, որ արաբահայ սերտալիր հարաբերությունները պահպանվին և կասկածների տեղի տվող թյուրիմացությունները վերջ գտնեն:

դ. Մեկ ազգային օջախ ունինք, այն ալ Հայաստանն է, իսկ հոս մեր միակ և գլխավոր աշխատանքը կկայանա մեր ընտանիքներուն ապրուստը և զավակներուն մտավոր և բարոյական զարգացումն ապահովելու մեջ»[39]:

Հաղիվ էին հակահայ կրքերը մեղմացել, երբ լույս տեսավ «Սուրիան և մենք» վերնագիրը կրող գրքույկը, որի հեղինակը (կամ հեղինակները) փորձում էր արաբներին դրգռել հայերի դեմ: Ա. Նիկոլ կեղծանվան ներքո թաքնված նրա հեղինակը հանդես էր գալիս որպես դաշնակցական և խոսում դաշնակցության անունից: Ո՞վ էր իրականում այդ եպերելի վարձկանը և ո՞ւմ պատվերն էր կատարում: Պատասխանելով այդ հարցերին, դաշնակցության օրգանը գրում էր. «Առաջին իսկ պատասխանը, որ գալիս է ընթերցողի գլուխը՝ Անգորան է, կամ թյուրքի ձեռքով է գրված, կամ թյուրքական թելադրանքով»[40]:

Այդ թշվառականի ասելով, իբր արտասահմանում ցրված հայությունը նպատակ է դրել համախմբվել Սիրիայում, որի վրա հայերն իբր ունեն պատմական իրավունքներ: «Դաշնակ կուսակցությունը աշխարհի ամեն կողմը նպաստի կազմակերպություններ» է ստեղծել, որպեսզի ֆինանսավորեն հայերի Սիրիայում հաստատվելը «ոչ թե հյուրի մը պես, այլ տան տերը սնուցանող և հարստացնող տարրի մը պես»[41]: Իբր այդ նպատակի իրականացմանը միջոցներ են տրամադրում Հ. Բ. Ը. Միությունը, Ազգերի լիգան և այլ կազմակերպություններ: «Ամենեն ավելի հավաքվելով Սուրիո հյուսիսակողմը և հին հայ կայսրներու տիրապետած շրջաններուն մեջ» և ապավինելով «մեծ պաշտպան Ֆրանսիային», իբր հայերը ձգտում էին դառնալ որույն քաղաքական գործոն Սիրիայում[42]: Վերջում Ա. Նիկոլի գրքույկը եզրակացնում է. «Այո, հարգելի սուրիացի հայրենակիցներ, ֆրանսիացիները ձեր գլխուն վերև և հայերը ձեր թևը մտնելով՝ ձեզ բարձրացնող երկու ուժեր եղած են...: Եթե կա միակ ուժ մը, որ Սուրիո մեջ պիտի կարենա իրավ քաղաքակրթել իսլամ արաբները, ասիկա հայը կրնա ըլլալ»:

Հայ-արաբական հարաբերությունները թունավորել ձգտող այդ հեր-

թական փորձերը չավին Սիրիայի թուրքական գործակալների և նրանց տերերի սպասած արդյունքը։ Արյունահեղ հարձակման թիրախ չդարձան Հայաշենն, Վարդաշենն և մյուս նորահաստատ հայաբնակ գյուղերը։ Արաբ ժողովրդի ներկայացուցիչները և հատկապես ազգային անկախության պայքարի ղեկավարները արդեն տեսնում էին թե ում կողմից և ինչ նպատակով էին նյութվում հակահայ դավերը։

Դրանում կարևոր դեր պետք է կատարեր հայերի դիրքը Ալեքսանդրետի սանջակի հարցում։

3. ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱԿԻ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Մինչև 1939 թ. հուլիսն Ալեքսանդրետի սանջակը գտնվում էր Սիրիայի կազմի մեջ։ Սակայն ֆրանսիական իմպերիալիստներն այն օգտագործում էին մի կողմից Թուրքիայի բարեկամությունը շահելու, մյուս կողմից Սիրիայի ազգային-ազատագրական ուժերից դիջումներ կորզելու համար։ Համաշխարհային պատերազմի նախօրեին Ֆրանսիան Ալեքսանդրետի սանջակը հանձնեց Թուրքիային, որի հետևանքը եղավ մեծ չարիք երկրամասի ոչ-թուրք ազգաբնակչության, հատկապես արաբների և հայերի համար։

1918 թ. նոյեմբերի 27-ին, ինչպես նշվեց, ֆրանսիական ռազմական իշխանությունները, ձեռնարկելով գրաված երկրամասերի վերակազմակերպմանը, ստեղծեցին վարչատերիտորիալ մի ուրույն միավոր՝ «Ալեքսանդրետի ինքնավար սանջակը»։ Այն ընդգրկում էր Հալեպի նահանգի չորս՝ Ալեքսանդրետի, Անտիոքի, Բեյլանի, Հարիմի կազաները կամ գավառները, որոնք զբաղեցնում էին 4805 կմ² ընդհանուր տարածություն՝ բազմազգ բնակչությամբ։ Այնուհետև, ընդհուպ մինչև համաշխարհային պատերազմը, Ալեքսանդրետի սանջակի հարցն այն գլխավոր հարցերից մեկն էր, որոնցով պայմանավորված էին ֆրանս-թուրքական հարաբերությունները։

Ալեքսանդրետի ինքնավար սանջակի իրավական գոյավիճակի և նրա «վարչական հատուկ ռեժիմի» հիմքում դրված էին մի շարք փաստաթղթեր։ Դրանցից ամենակարևորներն էին՝ Սիրիայում և Լիբանանում գլխավոր կոմիսարի 1920 թ. սեպտեմբերի 1-ի, 1921 թ. օգոստոսի 8-ի հրամանագրերը և 1921 թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական պայմանագիրը։ Վերջինիս 7-րդ հոդվածում ասված էր. «Ալեքսանդրետի շրջանում կհաստատվի հատուկ վարչական ռեժիմ։ Այս շրջանի թուրքական ցեղին պատկանող բնակիչները կօգտվեն բոլոր անհրաժեշտ ա-

ռանձնաշնորհումներից իրենց մշակույթը զարգացնելու համար։ Թուրքերեն (լեզուն) այնտեղ պաշտոնական հանգամանք կունենա»։ 1930 թ. մայիսի 10-ի հրամանագրով, գերագույն կոմիսարը Սանջակի ինքնավար մարզին շնորհեց «հիմնական օրենք», որով վերստին հաստատվում էր Ալեքսանդրետի «հատուկ ռեժիմը՝ Սիրիայի պետության կազմում»։

Հատուկ ռեժիմի պայմաններում ձևական բնույթ ստացավ Դամասկոսի վերահսկողությունը՝ երկրամասի վրա։ Սանջակի ընդհանուր կառավարիչը նշանակվում էր թուրքական համայնքի ներկայացուցիչների միջից՝ Սիրիայի հանրապետության նախագահի հրամանագրով։ Սիրիական պառլամենտում աթոռ ունեին Սանջակի արաբական, թուրքական և հայկական համայնքների ներկայացուցիչները։ Սանջակում պետական պաշտոնյաների 65 տոկոսը թուրքեր էին։ Թուրքեր էին վարչակառավարման խորհրդի 12 անդամներից 7-ը, կառավարման մարմինների ղեկավարների, ժանդարմերիայի ու ոստիկանության և դատավորների ճնշող մեծամասնությունը[1]։ Թուրքերենը արաբերենի և ֆրանսերենի նման համարվում էր պաշտոնական լեզու։

Օգտվելով Ֆրանսիայի պրոթուրքական քաղաքականությունից, Անկարայի կառավարությունը պահանջում էր Ալեքսանդրետի սանջակը «վերադարձնել իր տիրոջը»՝ Թուրքիային։ Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրից շուրջ մեկ տարի հետո՝ 1922 թ. նոյեմբերի 3-ին Բիթլիսի երեսփոխան Յուսուֆ Զիյա բեյը, հանդես գալով մեծ ժողովում, ասել է. «Ալեքսանդրետի շրջանը Սիրիային անցավ Ֆրանս-թուրքական պայմանագրով, մեր ծանր դրության հետևանքով։ Ներկայումս այդ ծանրը վիճակը վերացած է, և մենք ինչ էլ որ լինի պետք է այն վերադարձնենք մեզ»[2]։

Ալեքսանդրետի սանջակը զավթելու ուղղությամբ Թուրքիայի նկրտումները որոշակի կերպով դրսևորվեցին 1934-ի ապրիլի 27-ին՝ Այնթապի նահանգապետի Անտիոք այցելության կապակցությամբ։ Թուրք բնակչությունը նրան դիմավորել է «Կեցցե թուրք ժողովուրդը, փրկեցեք մեզ», «Անկցեն արաբները» բացականչություններով[3]։ Այդ այցելությունը գնահատելով որպես Ալեքսանդրետի սանջակը Թուրքերին հանձնելու նախաքայլ, երկրամասի ոչ-թուրք ազգաբնակչությունը լրջորեն անհանգստացավ, խուճապի մատնվեց։ Ֆրանսիական իմպերիալիստներն իսկույն գեներալ Հուլինգերին Սանջակ ուղարկեցին հավանական հակաիմպերիալիստական ելույթների առաջն առնելու համար։ Գեներալը երկրամասի արաբ և հայ բնակչությանը հավաստիացրեց, որ Ալեքսանդրետի Սանջակը երբեք դուրս չի բերվի Սիրիայի կազմից[4]։

Ֆրանս-սիրիական պայմանագրի ստորագրումից հետո՝ 1936 թ. դեկտեմբերին թուրքական կառավարությունը բողոքի ձայն բարձրացրեց Ազգերի լիգայում, որ Ֆրանսիան իրավունք չունի սիրիական մանդատը պայմանագրով փոխարինելու, քանի դեռ չի լուծված Ալեքսանդրետի սանջակի պրոբլեմը և պահանջեց նրա անկախությունը: Թուրքական պատվիրակությունն այդ պահանջը հիմնավորելու որպես հիմնական փաստարկ առաջ էր քաշում երկրամասի ազգաբնակչության իբր «ճնշող մեծամասնությունը» կազմող թուրքերի անվտանգությունը: Ըստ թուրքական խարդախված տվյալների, երկրամասի 300.000 բնակիչներից 240.000-ը թուրքեր էին, 25.000-ը՝ հայեր, 20.000-ը՝ սուննի արաբներ և 15.000-ը՝ տարբեր ազգի քրիստոնյաներ:

Այդ տվյալներն իրականությունից այնքան հեռու էին, որ դրանց հետ համաձայնվել չէին կարող մինչև անգամ ֆրանսիական իմպերիալիստները: Ըստ 1936 թ. ֆրանսիական իշխանությունների անցկացրած մարդահամարի, երկրամասում կային շուրջ 225.000 բնակիչներ, այդ թվում՝ 85.242 թուրքեր, 62.026 ալավի արաբներ, 22.461 սուննի-արաբներ, 24.911 հայեր, 18.051 քրիստոնյա տարբեր աղանդավորներ, 483 քրդեր, 1084 հրեաներ, չերքեզներ[5]: Թուրքերը կազմում էին Ալեքսանդրետի սանջակի ամենաբազմամարդ փոքրամասնությունը, բայց երբեք նրա բնակչության ճնշող մեծամասնությունը:

Այնուամենայնիվ 1937 թ. հունվարին Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարությունները սկզբունքային համաձայնություն կայացրին Սանջակը «Ինքնուրույն քաղաքական միավորի» վերածելու մասին: Մայիսի 27-ին Ազգերի լիգայի խորհրդում հաստատվեց նրա նոր ստատուսը և հիմնական օրենքը, որով ձևական էր դառնում Սիրիայի դերիշխանությունը երկրամասի վրա: Սիրիայի ազգային կառավարությունը, պառլամենտը և ժողովուրդը մերժեցին ճանաչել այդ նոր ստատուսն ու հիմնական օրենքը: Բացի քեմալական «Հալք էվի»-ների խմբակցությունից, երկրամասի մյուս քաղաքական կազմակերպությունները՝ Ազգային համագործակցության լիգան, ալ-կութլա ալ-վաթանիյա կուսակցության Սանջակի կազմակերպությունը, Սանջակցիների միությունը, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության Սանջակի կազմակերպությունը[6], հնչակյանները և ռամկավարները[7], արտահայտելով երկրամասի ոչ-թուրքական ազգաբնակչության քաղաքական ձգտումները, հակադրվեցին Սանջակը թուրքերին հանձնելու այդ փորձին: Հանրաքվեի նախնական արդյունքները ցույց տվեցին, որ երկրամասի ազգաբնակչության 65 տոկոսը դեմ է ֆրանս-թուրքական գործարքին[8]:

1938 թ. հուլիսի 2-ին Ալեքսանդրետի սանջակը դրվեց Ֆրանսիայի և Թուրքիայի համատեղ վերահսկողության ներքո: Այդ քայլը, որով Սանջակը փաստորեն անջատվում էր Սիրիայից, խոր վրդովմունք առաջացրեց ողջ երկրով մեկ: Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում և այլ քաղաքներում ստեղծվեցին Ալեքսանդրետի սանջակի պաշտպանության կոմիտեներ, որոնց պայքարին գործուն մասնակցություն էին բերում հայկական կազմակերպությունները: «Ժողովուրդի ձայնը» հաղորդում էր, որ Դամասկոսում կոմունիստական կուսակցության հայկական հատվածի և հնչակյան կուսակցության մասնաճյուղի միջև «համաձայնություն մը կայացած է սանջակի պաշտպանության շուրջ միասնաբար աշխատելու համար»[9]: Դամասկոսահայերի մի պատվիրակություն ներկայացել է Ալեքսանդրետի սանջակի պաշտպանության Արաբական կոմիտեի նախագահ դոկտ. Սեյֆեդդին Մամունին և նրան հայտնել Սանջակի պաշտպանության աշխատանքներին մասնակցելու հայերի պատրաստակամության մասին: Այդ կոմիտեում ընդգրկվել են կոմունիստ Հակոբ Բերբերյանը և հնչակյան Հակոբ Խաշմանյանը, որպես Դամասկոսի հայության ներկայացուցիչներ[10]:

1938 թ. հուլիսի 5-ին ֆրանսիական կառավարությունը, շրջանցելով Ազգերի լիգան և անտեսելով հունիսի 2-ի հանրաքվեի արդյունքները, համաձայնվեց, որ Թուրքիան զորքեր մտցնի Ալեքսանդրետի սանջակ՝ «կարգ ու կանոնը» պահպանելու համար: Վերսկսվեցին սանձարձակ բռնությունները, ահաբեկչական գործողությունները ոչ թուրք ազգաբնակչության, հատկապես արաբների և հայերի դեմ: Ազգերի լիգայի՝ հանրաքվեի ընթացքին հետևող միջազգային հանձնաժողովը, բողոքելով այդ աղաղակող ապօրինի արարքի դեմ, հեռացավ Սանջակից:

Հուլիսի 10-ին Դամասկոսում «Քասր ալ-Բելորի» ընդարձակ սրահում տեղի ունեցավ քաղաքի հայության բողոքի միտինգը՝ Սանջակի պաշտպանության արաբական կոմիտեի հովանավորության ներքո: Ընդունվել է Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին և գերագույն կոմիսարին ուղղված բանաձև, որտեղ ասված է. «Մենք, Քասր ալ-Բելորի մեջ հավաքված դամասկոսահայությունս, հովանավորությամբ Ալեքսանդրետի սանջակի պաշտպան կոմիտեի, նախաձեռնությամբ հնչակյան-համայնավար (հնչակյանների և հայ կոմունիստների—Հ. Թ.) համագործակցության, լսելե վերջ միթինգի հարգելի նախագահին և բանախոսներուն ճառերը, բուռն կերպով կբողոքենք Սանջակի բռնագրավման, թուրք բանակի մուտքին, դեմոկրատական կազմակերպություններու լուծման, աշխատավոր գյուղացիության հողերի գրավման և սար-

սափի ու բռնութիւններու դեմ, որ ի գործ կդրվի ոչ-թուրք (հայ, արաբ, հույն, ալևի) խաղաղ բնակչութեան դեմ: Կհրավիրենք սուրիահայ ժողովուրդը... կանգնիլ արաբ ժողովուրդի կողքին՝ պաշտպանելու համար Սանջակի և Սուրիո ժողովուրդներու խաղաղութիւնը, եղբայրութիւնը, հացը և կազմակերպութեան ազատութիւնը»[11]:

Միտինգում արաբ ճառախոսները դրվատել են Սանջակի հայ ազգաբնակչութեան ցուցաբերած տոկունութիւնը, նրա եղբայրական համագործակցութիւնն արաբների հետ: Իր ճառում Սեյֆեդդին Մամունն ասել է. «Մեծապես կգնահատենք մեր հայ եղբայրներու դիրքը Սանջակի հարցին մեջ: Արդարև, մենք բոլորս ալ այս արաբական երկրի զավակներն ենք...: Անցյալին ձեզ մեր դեմ, մեզ ալ ձեր դեմ գրգռեցին: Անոնք մեր երկու ժողովուրդներուն ալ թշնամիներն էին: Այժմ մենք բոլորս արաբական հայրենիքի միասնական զավակներն ենք և այդպես ալ պիտի շարունակենք մեր պայքարը»[12]:

Համերաշխութեան ժողովրդական միտինգներ, ելույթներ կազմակերպել են նաև մյուս քաղաքների հայերը: Հուլիսի 18-ին Բեյրութում տեղի է ունեցել բազմամարդ միտինգ՝ Ալեքսանդրետի սանջակի օգնութեան կոմիտեի հովանավորութեան ներքո: Միտինգի մասնակիցների անունից Սանջակի պաշտպանութեան արաբական կոմիտեի նախագահին հղված բանաձևում ասված է. «Մենք ... Միկոյան ակումբի մեջ հավաքված հայերս ներկա գրով կու գանք մեր խորին երախտագիտութիւնն ու համերաշխութիւնը հայտնել Սանջակի պաշտպանութեան պատվարժան կոմիտեիդ, որ այս դժվար օրերուն ազգասիրական գեղեցիկ գաղափարն ունեցավ Սանջակի նյութաբարոյական օգնութիւն կազմակերպելու և մարդասիրական ու ազգասիրական ազնիվ գործի մը շուրջ համախմբելու Սուրիո բոլոր կազմակերպութիւնները, որոնց կարգին նաև հայ ժողովուրդի ներկայացուցիչները: Հավասարապես զգացված ենք, և կբաժնենք սուրիացի մեծ ազգին տրված անիրավ հարվածը, որը նույն ատեն ուղղված է մեզի՝ հայերուս դեմ»[13]: Համերաշխութեան հայ-արաբական միտինգներ գումարվել են նաև Հալեպում, Լաոդիկիայում, Տրիպոլիում և այլ քաղաքներում:

Դաշնակցութիւնը, վարելով «բարեկամ» Ֆրանսիան չանհանգըստացնելու գիծ, չէր մասնակցում Ալեքսանդրետի սանջակի պաշտպանութեան ձեռնարկումներին: Դաշնակցական ղեկավարները, ինչպես նշել է Հ. Բերբերյանը, ասում էին. «Սանջակի խնդիրը ձեզի ի՞նչ, անիկա արաբներուն գործն է»[14]: Նրանց վարքագծի հիմքում ընկած էր այն լավատեսութիւնը, որ իբր հնարավոր է ֆրանսիական աստիճանավորների

միջնորդությամբ «լեզու գտնել թուրքերի հետ», և գոնե փրկել Ջեբել Մուսայի հայաբնակ գյուղերը։

1938 թ. օգոստոսին թուրքական սվիններուի պաշտպանության տակ անցկացվեցին ««պառլամենտական ընտրություններ», իսկ սեպտեմբերի 2-ին Ալեքսանդրետի սանջակը վերանվանվեց Հաթայի պետություն, որը և Անկարայում մշակված ծրագրի համաձայն վարում էր Սանջակի թուրքացման քաղաքականություն, ահաբեկելով այդ քաղաքականության հետ չհաշտվող արաբներին, հայերին, քրդերին, չերքեզներին։ Սկսվեց զանգվածային արտագաղթ։ Մինչև 1939 թ. առաջին ամիսները շուրջ 70.000 սանջակցիներ հեռացան հարազատ վայրերից, բայց դաշնակցական ղեկավարները տակավին հույս ունեին, որ Ֆրանսան իրենց «չի լքի»։ Նրանց թելադրանքով ջեբելմուսացիները մի վերջին փորձ կատարեցին Սիրիայի կազմում մնալու համար։ Գերագույն կոմիսարին ուղարկված նրանց նամակում ասված է. «Եթե Ֆրանսիան մեզ լքի մեր թշնամիներին, մենք սեփական ձեռքերով կսպանենք մեր կանանց ու երեխաներին և կմեռնենք ղենքը ձեռքին՝ պատվով։ Երբեք, ոչ մի դեպքում Մուսա դաղի հայերը ողջ չեն հանձնվելու թուրքերին»[15]։ Այդ դիմումը ոչ մի հետևանք չունեցավ։ Անհետևանք մնաց նաև բարի կամքի տեր ֆրանսիացիների՝ Միջերկրականյան կոմիտեի դիմումը Ֆրանսիայի վարչապետ էդ. Դալադիեին[16]։

1939 թ. հունիսի 23-ին ստորագրվեց Ֆրանս-թուրքական համաձայնագիրը, որով Ալեքսանդրետի սանջակը պաշտոնապես կցվում էր Թուրքիային։ Դա, ինչպես նշել է գերագույն կոմիսար Պաբրիել Պյուոն, այն «գինն» էր, որը վճարվեց որպեսզի Թուրքիան անցնի անգլո-ֆրանսիական դաշնակիցների կողմը։

Այդ համաձայնագիրը խուճապի մատնեց դաշնակցական ղեկավարներին։ Սանջակից հայերի «ժամ առաջ» գաղթելուն կողմնակից դաշնակցական հրապարակախոս Մ. Ասլանյանը գրում էր. «Անցյալ տարի (1938) այս օրերուն, երբ պարտք կնկատեինք եղածին պես ցոլացնել Սանջակի կացությունը, գտնվեցան մարդիկ, որ լրջորեն մեղադրեցին մեզ իբրև պաղ ջուր թափող տաք ապուրին մեջ, զոր իրենք կփորձեն եփել Թուրքերուն հետ, ի խնդիր երկու տարրերու մերձեցման։ Հիմա սակայն, երբ մեջտեղն է տարվան մը փորձը, ամենեն ջերմ հաշտարարներն անգամ համոզվեցան, թե անկարելի է... լեզու գտնել Թուրքին հետ»[17]։

Ի դեպ, թուրքական կառավարությունը որոշ փորձեր կատարեց Սանջակից հայերի արտագաղթի առաջն առնելու համար։ Պոլսի հայոց պատրիարքը Հաթայ է գործուղել Արսլանյան արքեպիսկոպոսին, որ-

պետի հորդորի հայերին մնալ և գործակցել «իրենց թուրք եղբայրներուն»[18] հետ: Սակայն արտագաղթը շարունակվել է...

Ֆրանս-թուրքական համաձայնագրով, Սանջակում մնալ չցանկացողներին իրավունք էր վերապահվում մի որևէ երկրի քաղաքացի դառնալ և, վաճառելով ունեցվածքը, մեկնել: Սակայն թուրքական իշխանությունները համաձայնագրի այդ հոդվածը չգործադրեցին: Արգելվում էր 25 լիրայից ավելի գումար դուրս բերել[19]: Արտագաղթողները պարտավոր էին վաճառել իրենց անշարժ գույքը և փոխարժեքը հանձնել թուրքական կենտրոնական բանկին՝ Թուրքիայում գործող օրենքների համաձայն այն արտասահման տեղափոխելու համար: Բանկ հանձնված գումարից պետք է հանվեր մեկնողի պարտքերը, իսկ մնացյալը նրան ուղարկվեր ամսական 50 կամ 100 լիրա չափով[20]: Թուրքական իշխանությունները թելադրում էին իրենց քաղաքացիներին՝ «ոչ մի բան չգնել արտագաղթողներից: Վերջին հաշվով, այդ բոլորը հանգեցրին Սանջակում մնալ չցանկացողների ունեզրկմանը:

Սանջակի տարբեր կողմերից դեպի Հալեպ, այստեղից էլ Բեյրութ էին շարժվում արտագաղթի կարավանները: Վերստին լցվեցին եկեղեցիներն ու դպրոցները, վերստին վրաններ դրվեցին, առաջացան նոր գաղթականություններ: Բեյրութի «Լ'Օրիան» թերթը գրում էր. «Հայ գաղթականների վիճակը ծանր է: Դեռևս լրջորեն ոչինչ չի արվել նրանց զգալի օգնություն հասցնելու համար: Այս բոլոր մարդկանց, բոլոր կանանց, բոլոր մեծ ու փոքր երեխաների դեմքից ծորում է լուռ, բայց սուր ցավ, նրանց աչքերում շողում է քաղցից ավելի սուր տառապանքի տխրությունը. զգեստները վկայում են նրանց դժբախտության մասին»[21]:

Մինչև 1939 թ. հուլիսի վերջերն Ալեքսանդրետի սանջակի համարյա ողջ հայերը գաղթեցին Սիրիա և Լիբանան:

Այսպիսով, ֆրանսիական իմպերիալիստները, շրջանցելով կամ ուղղակի խախտելով միջազգային բազմաթիվ պայմանագրեր, համաձայնագրեր, այդ թվում մանդատի կանոնադրությունը, Ալեքսանդրետի սանջակը հանձնեցին թուրքերին: Ինչպես ինքնավար Սանջակի, այնպես էլ Սիրիայի և Լիբանանի հայությունը, հանդես գալով արաբների կողքին, պայքարեց այդ ապօրինի գործարքի դեմ: Այդ իրողությունը, ըստ արժանվույն գնահատվելով արաբների կողմից, բեկում առաջացրեց հայ-արաբական հարաբերություններում: Սրտաբաց ընդունելություն էր սպասում Սիրիա և Լիբանան ապաստանող սանջակցի հայերին:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Սիրիան և Լիբանանը կռվի ուղղակի ասպարեզ չդարձան, սակայն համաշխարհային պատերազմը խոր հետքեր թողեց նրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում։

Եվրոպայում պատերազմը սկսվելու հաջորդ օրը՝ 1939 թ. սեպտեմբերի 2-ին Սիրիայում և Լիբանանում մտցվեց պատերազմական դրություն։ Ոստիկանությունը և անվտանգության օրգանները դրվեցին բանակի վերահսկողության ներքո, հաստատվեց խիստ գրաքննություն, արգելվեցին գործադուլներն ու ցույցերը, «օրենքից դուրս» հռչակվեց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, ձերբակալվեցին և բանտ նետվեցին բազմաթիվ դեմոկրատական գործիչներ։

Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո Սիրիայի և Լիբանանի ֆրանսիական իշխանությունները նախ որոշեցին միանալ Ազատ-Ֆրանսիային և «պայքարը շարունակել դաշնակիցների կողքին», ապա սկսեցին տատանվել, իսկ վերջում նպատակահարմար գտան չանջատվել մետրոպոլիայից և, ընդունելով ֆրանս-գերմանական հաշտության պայմանները, ենթարկվեցին Վիշիի կառավարությանը։ 1940 թ. օգոստոսին Սիրիա և Լիբանան ժամանեց իտալական հաշտության հանձնաժողովը։ Նրան հանձնարարված էր հետևել կապիտուլյացիայի պայմանների կատարմանը, անցկացնել ռազմական գույքի ցուցակագրում և հող նախապատրաստել Սիրիայում ու Լիբանանում Ֆրանսիայի տեղը գրավելու համար։ Իտալական հանձնաժողովի պահանջով բազմահազար արաբ և հայ դեմոկրատներ, համարձակ հայրենասեր աշխատավորներ, առաջադիմական հայացքներ ունեցող բուրժուական գործիչներ արգելափակվեցին համակենտրոնացման ճամբարներում։ 1941 թ. մայիսին, երբ հակաբրիտանական ապստամբություն բռնկվեց Իրաքում, գերմանացիները սկսեցին օգտագործել Սիրիայի օդանավակայանները՝ ապստամբներին օգ-

նելու համար։ Իրաք թռչող գերմանական ինքնաթիռները վայրէջք էին կատարում և վառելանյութ վերցնում Դամասկոսի, Պալմիրի և Հալեպի օդանավակայաններում։ Ներթափանցելով Սիրիա և Լիբանան ֆաշիստները սպառնում էին Անգլիայի դիրքերին՝ Մերձավոր և Միջին Արևելքում։

1941 թ. հունիսի 8-ին դաշնակից զորքերը մտան Սիրիա և Լիբանան։ Հենց այդ օրը ֆրանսիական զինված ուժերի ընդհանուր հրամանատար գեներալ Կատրուն հանուն Ազատ-Ֆրանսիայի հայտարարեց. «Սիրիացիներ և լիբանանցիներ, ես գալիս եմ վերջ դնելու մանդատին։ ... Դուք այս պահից անկախ և սուվերեն ժողովուրդ եք»։ Այդ նույն օրը հրապարակվեց նաև Կահիրեի բրիտանական դեսպանի հայտարարությունը, որով Անգլիայի կառավարությունը երաշխավորում էր գեներալ Կատրուի խոստումը։ Դա, սակայն, կեղծիք էր։ Վիշիականների վռնդվելուց միաժամանակ հետո Անգլիան ճանաչեց Ֆրանսիայի «հատուկ շահերը» Սիրիայում և Լիբանանում, իսկ գեներալ դե Գոլլը հայտարարեց, որ Ֆրանսիան չի հրաժարվում մանդատից։ Այնուհետև մինչև ազգային անկախության պայքարի հաղթանակը՝ 1945—1946 թթ. այդ երկրները մնացին Անգլիայի և Ազատ-Ֆրանսիայի իշխանության ներքո։

1. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Վիշիականների կարճատև տիրապետության ժամանակ Սիրիան և Լիբանանը համարյա զրկվեցին տնտեսական ավանդական կապերից։ Արդյունաբերությունն անկում ապրեց, կրճատվեցին արտադրության որոշ տեսակներ, խիստ բազմացավ անգործների բանակը։ Անընդհատ բարձրանում էին ապրանքների գները, շուկաներում տիրում էր թանկությունը և սպեկուլյացիան։ Առևտրականները հնգապատիկ, տասնապատիկ, երբեմն էլ ավելի բարձր գներով վաճառում էին պատերազմից առաջ իրենց պահեստներում կուտակված և հաճախ գնորդների կողմից որպես անորակ մերժված ապրանքները։

Դաշնակից զորքերի Սիրիա և Լիբանան մտնելուց հետո տնտեսական կյանքն աստիճանաբար աշխուժացավ։ Դրան նպաստում էին արտաքին կապերի գոնե մասնակի վերականգնումը, օտարերկրյա կապիտալի մրցակցության զգալի թուլացումը և հատկապես ներքին շուկայում պահանջարկի խիստ մեծացումը՝ մի քանի հարյուր հազար դաշնակից զորքերի առկայության պայմաններում։ Ապրանքների սովը և տեղական հումքի կուտակումները խոշոր առևտրականներին մղում էին

բախտ փորձելու արդյունաբերության տարբեր ճյուղերում։ Ընդարձակվեցին և արդյունաբերական կարևոր ձեռնարկության վերածվեցին մեծ թվով արհեստանոցներ, ստեղծվեցին տեքստիլ արդյունաբերության, սննդարդյունաբերության, կաշեգործական, մետաղամշակման և այլ բազմաթիվ ձեռնարկություններ։ Դրանցից էին Սպրոյանի, Ծովիկյանի տեքստիլ արդյունաբերության, Չաթալպաշյանի կաշեգործական, Նահարյանի, Տանձիկյանի սարքաշինական, Թաշճյանի գորգագործական, Չելեբի եղբայրների հրուշակեղենի, Բագալյանի ալրաղացի, Խանամիրյան-Դեդեյանի կոշիկի ու զինվորական հանդերձանքի և հայ կապիտալիստներին պատկանող այլ ձեռնարկությունները։

Պատերազմի տարիներին Սիրիայի և Լիբանանի գյուղատնտեսությունն անկում ապրեց։ 1939—1940 թթ. ցանքատարածությունները զգալի չափով ընդարձակվեցին, սակայն բերքատվությունն ընդհանուր առմամբ պակասեց։ 1938 թ. Սիրիայում 453 հազար հեկտարից ստացվել էր 459 հազար, 1945 թ. 750 հազար հեկտարից ընդամենը 415 հազար տոննա ցորեն։ Առավել կամ նվազ չափով նույնն էր նաև գարու, բամբակի, բրնձի, մրգերի և այլ կուլտուրաների բերքատվության վիճակը։

Սիրիայում մշակելի հողերի 3/4-ը (շուրջ 3500 հազար հեկտար) պատկանում էր 8600 խոշոր կալվածատերերին, իսկ 20%-ը՝ աշխատավոր գյուղացիությանը, որը կազմում էր երկրի բնակչության 70—75%-ը։ Լիբանանում 270 հազար հեկտար մշակելի հողերի մոտավորապես կեսը գտնվում էր խոշոր կալվածատերերի, 1/4-ը եկեղեցական-բարեգործական հաստատությունների, իսկ մնացյալ շուրջ 200 հազար հեկտարը գյուղացիների ձեռքում։ Ավելի քան 400 հազար գյուղացիներ հողազուրկ էին։ Կաշառակեր պետական պաշտոնյաները, վաշխառուները և հատկապես կալվածատերերը խլում էին գյուղացու՝ ճակատի քրտինքով ձեռք բերած վաստակը։ «Զարթոնք» թերթը գրում էր. «Ավատապետը միշտ կջանա մշակին ձգել բաժին մը, որ հազիվ բավարար ըլլա անոր հոգին ու մարմինը իրար հետ պահելու, որպեսզի ան շարունակէ իր հողերը մշակել»[1]։

Ապրուստի միջոցներ գտնելու հույսով գյուղացիները խուժում էին արդյունաբերական կենտրոնները։ Օբյեկտիվորեն, գյուղից «դեպի քաղաքները ... ոչ-հողագործական արտագնացությունը պրոգրեսիվ երևույթ է ...։ Նա պոկում է բնակչությունը հետամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավում է նրան արդի հասարակական կյանքի հորձանուտի մեջ։ Նա բարձրացնում է բնակչության

գրագիտությունն ու նրա գիտակցականությունը, պատվաստում է նրան կուլտուրական սովորություններ և պահանջմունքներ»[2]։

Արդյունաբերության զարգացման շնորհիվ գործազրկությունը համարյա վերացել էր, սակայն աշխատավորների շահագործումը կրում էր դաժան բնույթ։ Առաջվա նման բանվորներն ու ծառայողները բաժանված էին մնայուն և ժամանակավոր աշխատողների։ Սիրիայի և Լիբանանի աշխատավորության ճնշող մեծամասնությունը կազմող ժամանակավոր աշխատողները չէին օգտվում ութժամյա աշխատանքային օրվա, տարեկան վճարովի արձակուրդի, հիվանդության պատճառով բացակայած օրերի համար վարձատրվելու իրավունքից, հատուցում չէին ստանում ձեռնարկությունից հեռացվելու դեպքում և այլն։ Արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքը տևում էր 12 ժամ[3], արհեստանոցներում՝ մինչև 16 ժամ[4], շինարարական օբյեկտներում առհասարակ աշխատանքն սկսվում էր արևածագին և վերջանում մայրամուտին։ Այդ ուժասպառ աշխատանքի համար աշխատավորներն ստանում էին ողորմելի վարձատրություն։

Տնտեսագետ Էլիաս Գաննաժեն ճիշտ է նկատել, որ պատերազմի տարիներին աշխատավարձի «գնողական կարողությունը»... գնալով նվազում էր, աշխատանքային եկամուտն այլևս չէր համապատասխանում կյանքի համար անհրաժեշտ մինիմումին, «չէր ապահովում աշխատավորի գոյությունը»[5]։ Թե ինչպիսի արագությամբ էին բարձրանում լայն սպառման ապրանքների գները կարող են պատկերացում տալ հետևյալ թվերը. 1945 թ. մայիսից մինչև նոյեմբեր 1 կգ ալյուրի գինը 65-ից բարձրացել էր 100, 1 կգ միսը՝ 250-ից 400, 1 կգ յուղը՝ 600-ից 900, 1 կգ ոսպը՝ 45-ից 80, 1 կգ լոբին՝ 135-ից 175 ղրուշի և այլն[6]։ Եվ սա, այն դեպքում, երբ բանվորները ստանում էին 120—400 ղրուշ օրավարձ։ Օրինակ, Ժ. Ծովիկյանի գործարանում բանվորների օրավարձը տատանվում էր 120—175, Դըբբայեի մետաքսի գործարանում՝ 150—200, Բեյրութի ջրի հայթայթման տեղամասերում՝ 300—400 ղրուշի միջև[7]։ Կառավարությանն ուղարկված իրենց բողոքագրում Բեյրութի բանվորներն իրավացիորեն նշում էին. «Ներկա պայմաններու տակ, աշխատավորի մը ամսականը հազիվ թե բավարարե անոր տաս օրվա ծախսերուն»[8]։

Մոտավորապես նույնն էր ծառայողների վիճակը պետական և մասնավոր հիմնարկներում։ Սակայն ամենացածրը դասատուների, հատկապես հայ կրթական մշակների աշխատավարձն էր։ Վերջիններիս ամսա-

կան վարձատրությունը 1500-ից 4500 ղրուշ էր և նրանք չէին վարձատրվում ամառվա ամիսների համար։ «Հասկը» հաղորդում էր, որ լիբանանահայ դասատուների մի պատվիրակություն դիմել է Տանն Կիլիկիո Աթոռի տեղապահին, որպեսզի բարելավեն «ուսուցիչների տխուր կացությունը», սակայն ոչ մի միջոց էլ չի ձեռնարկվել և դասատուները ստիպվել են «դասադուլ հռչակել», որը տևել է երկու շաբաթ[9]։ Թեմական իշխանությունները բավարարել են դասատուների մի շարք պահանջները, սակայն հարցը հիմնականում չի լուծվել։ 1943 թ. լիբանանահայ ուսուցիչների միությունը պահանջում էր դասատուների ամսական նվազագույն աշխատավարձը բարձրացնել 2500, առավելագույնը՝ 12500 լիբ. ղրուշի[10]։ Նման պահանջներ դնում էին նաև սիրիահայ դասատուները։

Առանձնապես ծանր էր այն ընտանիքների վիճակը, որոնց կենսական կարիքները բավարարելու գործում որոշ դեր էր կատարում ԱՄՆ-ի և Եվրոպայի հայ բարեգործական ընկերությունների նյութական օգնությունը։ 1942 թ. վերջերին, ի նկատի ունենալով «Սուրիո և Լիբանանի հայ համայնքին թշվառությունը» եգիպտահայ թեմական իշխանությունները հանգանակել և Բեյրութ են ուղարկել ավելի քան 3000 եգպ. ֆունտ (կամ 35626 սիր. լիրա)։ Այդ գումարից 17.125 սիր. լիրա հատկացվել է Այնճարի և Սուրի սանջակցի հայ գաղթականներին՝ դպրոցական կարիքները հոգալու, մալարիայի դեմ պայքարելու, բնակարանից զուրկ ընտանիքներին պատսպարելու նպատակով։ Մնացած գումարը ծախսվել է Բեյրութի, Հալեպի, Դամասկոսի «հայ կարոտյալներու» պարենավորման և նրանց երեխաների կրթության վրա[11]։ Այդ օգնությունը սակայն չէր կարող քիչ թե շատ ղգալի չափով թեթևացնել բաղմահազար «հայ կարոտյալներու» վիճակը։

Սիրիայի և Լիբանանի պետական իշխանությունները լրջորեն չէին զբաղվում աշխատավորների տնտեսական վիճակով։ Ճիշտ է, կայացվում էին որոշումներ, արձակվում էին հրամաններ, սակայն դրանք մնում էին թղթի վրա։ 1944 թ. սեպտեմբերի օրենքով 12—30% հավելում էր սահմանվում աշխատավարձերի վրա, սակայն այն չգործադրվեց ձեռնարկատերերի բողոքի հետևանքով։ 1945 թ. մարտի 23-ին Լիբանանի պառլամենտը ընդունեց մի շարք որոշումներ. առաջին՝ 1944 թ. մայիսի 1-ից ուժի մեջ համարել բոլոր բանվորների և ծառայողների աշխատավարձը 12—30 տոկոս բարձրացնելու օրենքը[12], սակայն կապիտալիստները մերժեցին, իսկ կառավարությունը չկարողացավ այդ որոշումը նրանց պարտադրել։ Երկրորդ՝ եկամտահարկի օրենքի որոշ հոդվածները բարեփոխվեցին, սակայն այդ բարեփոխումն այնքան աննշան է, որ վեր-

ջին հաշվով հավասարվեց ոչինչ չփոխելու հետ։ Երրորդ՝ ձեռնարկություններում զեղչված դներով ղգեստի և մթերքի վաճառք կազմակերպվեց, սակայն դրանից օգտվեցին ոչ թե աշխատավորները, այլ սպեկուլյանտները։

Պետական իշխանությունները ոչ միայն արմատական ոչինչ չէին ձեռնարկում աշխատավորների տնտեսական վիճակը գոնե մասամբ բարելավելու ուղղությամբ, այլև վարում էին, ինչպես նշել է հրապարակախոս Ժորժ Նակկաշը, «հարկային դաժան քաղաքականություն»[13]։ 1945 թ. Լիբանանի պետական բյուջեի ընդհանուր մուտքերի 54,9%-ը ստացվում էր անուղղակի և միայն 12,5%-ը ուղղակի հարկերից[14]։ Անուղղակի հարկերի այդպիսի աճը նշանակում էր «գերծանրաբեռնել միջին խավերը, և բեռնաթափ անել հարուստ խավերին, հասարակ ժողովրդի և բուրժուազիայի միջև ստեղծելով այնպիսի խրամատ, որը հեղափոխությունը միայն կկարողանար լցնել»[15]։

Դրությունը տարբեր չէր նաև Սիրիայում։ Սիրիայի կոմունիստական կուսակցության քաղբյուրոն ահազանգում էր. «Կարելի չէ ազատվել երկրին սպառնացող տնտեսական փլուզումից, ... եթե երբեք (կառավարությունը) չհրաժարի իր ֆինանսական ներկա քաղաքականությունից, որ կձգտի պետության պետք եղած ծախքերուն մեծ մասը ձեռք բերել անուղղակի զանազան տուրքերով, որոնք կճնշեն ժողովուրդին մեծամասնության վրա, զանոնք մատնելով հետին ծայր թշվառության»[16]։

Կառավարությունը խոշոր գումարներ էր ծախսում ոստիկանական ջոկատներ կերակրելու, բանտեր կառուցելու վրա, բարձիթողի անելով ժողովրդական կրթության և առողջապահության հրատապ հարցերի լուծումը։ Լիբանանում հազարավոր երեխաներ չէին ուսանում դպրոցական շենքերի պակասի հետևանքով[17]։ Սիրիայում երեխաների 30%-ը դպրոց չէր հաճախում, իսկ տարվա սկզբում ընդունվածների 30—40%-ը դպրոցը լքում էր «տնտեսական ճնշման ներքո»[18]։

Դժվար վիճակից ելք որոնող աշխատավորները համախմբվում էին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության և արհմիությունների ֆեդերացիայի շուրջը։

Մինչև 1941 թ. հունիսի 8-ը Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը գործում էր ընդհատակում։ Վիշիական ոստիկանությունը ձերբակալել էր մի շարք կոմունիստ ղեկավարների ու շարքայիններ (Ֆարաժալլա Հելու, Մուստաֆա Արիս, Հովհ. Աղբաշյան, Փանոս Արամայիսյան, Սերովբե Սյուկուրյան, Մովսես Ղազարյան և բազ-

մաթիվ ուրիշներ), իսկ ռեպրեսիայից խուսափած կոմունիստներն անցել էին ընդհատակ։ Խալեդ Բեկդաշը գրել է. «Շարունակեցինք մեր պայքարը...։ Երբեք չդադարեց մեր ընդհատակի օրգան «Ժողովուրդի Պայքար» թերթի հրատարակությունը և ցրումը»[19]։

Վիշիականների վտարումից հետո ազատություն ձեռք բերեցին Միջեմիեում և մյուս համակենտրոնացման ճամբարներում արգելափակված բազմահազար արաբ և հայ աշխատավորները, դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Կոմունիստական կազմակերպություններ սկսեցին գործել ոչ միայն Բեյրութում, Դամասկոսում, Հալեպում, այլև շրջանային քաղաքներում։ Վերսաին սկսեց լույս տեսնել «Սաութ ալ-Շաաբ» դեմոկրատական օրգանը և նրա հայերեն հրատարակությունը՝ «Ժողովուրդի ձայն» օրաթերթը։ Հրատարակվում էին հակաֆաշիստական «Ալ-Թարիք», արհմիությունների ֆեդերացիայի պաշտոնաթերթ «Հայաթ ալ-Ումմալ» (Բեյրութում) և «Ալ-Ումմալ վա'լ Նակաբադ» (Դամասկոսում) պարբերականները, որոնց շուրջ համախմբված էին դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչները։

1943 թ. դեկտեմբերի 31-ից մինչև 1944 թ. հունվարի 2-ը Բեյրութում տեղի ունեցավ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության պատմական համագումարը։ Հաշվի առնելով, որ Սիրիայում և Լիբանանում փոխվել էին քաղաքական ու սոցիալական պայմանները, նրանց առաջ կանգնած ազգային խնդիրները, համագումարը որոշեց այդ երկրներից յուրաքանչյուրի համար ստեղծել առանձին կոմունիստական կուսակցություն։ Բացի այդ, համագումարում ընդունվեց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների խարտիան, որով սահմանվում էին նրանց հետագա պայքարի խնդիրները։ Այդ պատմական որոշումները զարգացման հզոր թափ հաղորդեցին աշխատավորական շարժումներին[20]։

1945—1946 թթ. Լիբանանի արհմիությունների ֆեդերացիան հաշվում էր 30.000, Սիրիայի արհմիությունների ֆեդերացիան՝ 18.000 անդամ[21]։ Այդ ֆեդերացիաների կազմի մեջ մտնող արհեստակցական միություններում զգալի թվաքանակ էին կազմում հայ աշխատավորները։ Մի շարք արհմիություններում նրանք զբաղեցնում էին վարչակառավարման կարևոր պաշտոններ։ Նավթարդյունաբերության բանվորների և ծառայողների, կաշեգործական ձեռնարկությունների բանվորների, տպարանական բանվորների, կոշկակարների, դերձակների, ատաղձագործների, մեխանիկ բանվորների արհմիություններում հայեր էին նախագահի

քարտուղարի և գանձապահի տեղակալի պաշտոններում[22]: Բացի այդ, առանձին հայ գործիչներ կարևոր դեր էին կատարում Լիբանանի և Սիրիայի արհմիությունների ֆեդերացիայի մի շարք ղեկավար օրգաններում: 1945 թ. Կարապետ Ճղնավորյանն Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի Փարիզի կոնգրեսի՝ Լիբանանի պատվիրակության անդամ է ընտրվել Մուստաֆա Արիսի, Ժորժ Ֆրեհայի, Ժորժ Մուկարզելի և Այսար Ջիադեի հետ միասին:

Արաբ և հայ աշխատավորների համատեղ համառ ու համարձակ պայքարի խոշորագույն հաղթանակներից էր Սիրիայի և Լիբանանի աշխատանքային կոդեքսների ստեղծումը, որոնք զգալի չափով բարելավեցին բարիքներ կերտող մարդկանց կյանքի և աշխատանքի պայմանները[23]: Հաստատվեց ութժամյա աշխատանքային օր, ճշգրտվեց աշխատավարձի մինիմում չափը որոշելու սկզբունքը և վճարման ձևերը, վերացվեց ժամանակավոր աշխատանքի դրությունը, ձեռք բերվեց երկշաբաթյա արձակուրդի իրավունք, սահմանափակվեց կանանց և երեխաների շահագործումը և այլն: Այդ նվաճումները ձեռք բերվեցին աշխատավորական շարժումների վերելքի շնորհիվ:

Աշխատավորական շարժումների վերելքը դրական տեղաշարժեր առաջացրեց Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների ներքին կյանքում:

2. ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԸ

1941 թ. հունիսի 22-ին սկսվեց հայրենական պատերազմը: Հուլիսի սկզբներին հիտլերյան զորքերը արդեն գրավել էին Լիտվայի, Լատվիայի զգալի մասը, Արևմտյան Բելոռուսիան, Արևմտյան Ուկրաինան, Մոլդավիան: Սեպտեմբերին թշնամին ցամաքից շրջապատել էր Լենինգրադը, հասել Մոսկվայի հեռավոր մատույցները: Նրա նպատակն էր՝ «կայծակնային» հարվածով ջախջախել սովետական բանակը, տապալել սովետական կարգերը: Սովետական ժողովուրդը, լարելով բոլոր ուժերը, պաշտպանում էր սոցիալիստական հայրենիքը:

Հայրենական պատերազմի առաջին օրերից սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում շարժում սկսվեց հակաֆաշիստական պայքար կազմակերպելու համար: Սփյուռքահայ աշխատավորները գիտակցում էին, որ վճռվում է նաև հայ ժողովրդի պետականության, անկախության և ազատության բախտը: Այդ օրերին «Պրավդա»-ն գրում էր, որ սփյուռ-

քահայերի ամբողջ սերը, նրանց ամբողջ համակրանքը Սովետական Միության կողմն է[1]։

1941 թ. աշնանը Սիրիայի և Լիբանանի հակաֆաշիստական լեգայի եղբայրական օգնությամբ հայ աշխատավորները ստեղծեցին Հայաստանի պաշտպանության Սիրիայի և Լիբանանի հայկական լիգան, որի հիմնական խնդիրն էր՝ բոլոր հնարավոր միջոցներով աջակցել Սովետական Միությանը, Սովետական Հայաստանին ֆաշիզմի դեմ պայքարում։ Լիգայի բանբերը՝ «Ժողովուրդի ձայնը» գրում էր. «Հայաստանի ազատության ու առաջադիմության ճակատագիրը կախված է նացիզմի ոչընչացումեն։ Ներկայիս ամեն հայու համար չկա ազգային ավելի գերագույն, ավելի սրբազան պարտականություն, քան պայքարել նացիզմի դեմ... և այն դավաճաններու դեմ, որոնք կփորձեն հայ ժողովուրդի մեջ ներմուծել անոր ազդեցությունը»[2]։

Հայաստանի պաշտպանության լիգայի շուրջը համախմբված հայ աշխատավորները խորապես համոզված էին, որ ֆաշիզմի դեմ պայքարել նշանակում է պաշտպանել Սովետական Հայաստանը, հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի նվաճումները, նրա ստեղծած խաղաղ ու ազատ կյանքի բարիքները։ Թերթելով «Ժողովուրդի ձայն» օրգանի պատերազմի տարիների հավաքածուն, տեսնում ենք նրանց ատելությունը ֆաշիստական վանդալների նկատմամբ, նրանց անսասան հավատքը հաղթանակի համար։ Հայ ժողովրդի «երջանիկ ապագայի մը ապահովման» երաշխիքը տեսնելով դաշնակիցների հաղթանակի մեջ, նրանք գրում էին. «Դաշնակիցներու կողքին ենք, որովհետև անոնց դատը մեր ազգին և Սովետական Հայաստանին ալ դատն է. որովհետև համոզված ենք, թե դաշնակիցներու հաղթանակը Սովետական Հայաստանին և մեր գաղութահայերուս ալ հաղթանակն է»[3]։ Հայ աշխատավորների լավատեսությունը հիմնված էր հակաֆաշիստական պինակցությունում Սովետական Միության ներկայության փաստի վրա։

Հայաստանի պաշտպանության լիգան ծավալում էր բազմակողմանի գործունեություն։ Նրա շուրջը համախմբված առաջադեմ աշխատավորներն ու հայրենասեր գործիչները համակրանք էին սերմանում կարմիր բանակի նկատմամբ՝ Սիրիայի և Լիբանանի հայության շրջանում, պատմում էին ճշմարտությունը Սովետական Հայաստանի մասին, հայ ժողովրդի ապրելու իրավունքը և նվաճումները պաշտպանող կարմիր բանակի մասին։ Նրանք միաժամանակ կոչ էին անում պայքարել ֆաշիզմի դեմ, ձախողել ֆաշիստական գործակալների հանցավոր ծրագրերը, միջոցներ հավաքել կարմիր բանակի օգտին։

Հայաստանի պաշտպանության լիգան 1942 թվականի մարտը հայտարարեց «Հայաստանի պաշտպան մարտիկների օգնության ամիս»։ Այդ առթիվ նրա հրապարակած կոչում ասված է. «Գաղութահայերս, ի տես հայ զինվորի հերոսական կեցվածքին, չենք կրնար անտարբեր մընալ ու մեր բաժինը չբերել հայրենիքի պաշտպանության գործին։ Երբ Հայաստանի մեր եղբայրները իրենց արյունով կնվիրագործեն հայրենի հողը, մեր վրա բարոյական ու ազգային պարտականություն կիյնա կարելի բոլոր միջոցները ի գործ դնել, իբրև հայ մեր հայրենասիրական պարտականությունը կատարել հայրենիքին և անոր պաշտպան զինվորին հանդեպ»[4]։

Աշխատավորների հակաֆաշիստական պայքարը սակայն չէր կարող դուր գալ հինգերորդ զորասյան վարձկաններին, որոնք վիշիականների վատարումից հետո ծավալում էին քայքայիչ գործունեություն։

Դեռևս ղատերաղմից առաջ Հիտլերի և Մուսոլինիի շրջիկ գործակալները հավաքագրել էին քաղաքական գործիչներ, լրագրողներ, դնել մամուլի օրգաններ, կազմակերպել զենքի գաղտնի մատակարարում և այլն։ Բելգրադում, Դամասկոսում և այլ քաղաքներում կային քողածածուկ ակումբներ, պրոֆաշիստական կազմակերպություններ, որոնք սկզբում հրահանգավորվում էին ուղղակի Բեռլինից և Հռոմից, իսկ հետագայում՝ Աթենքում հաստատված գերմանա-իտալական հետախուզության կենտրոնից։ 1942 թ. Սիրիայում հայտնաբերվեց և ոչնչացվեց ֆաշիստական-լրտեսական մի խումբ, որը գործում էր շեյխ Շեկիբ Արսլանի գլխավորությամբ։

Որպեսզի կոտրեն աշխատավորների հակաֆաշիստական պայքարի թափը, ֆաշիստական գործակալները լուրեր էին տարածում «փախստական» դարձած սովետական զեկավարների, արդեն «տապալված» կամ «տապալվելու վրա» եղող սովետական կարգերի, գերմանական զորքերին «անձնատուր» եղած Ալեքսանդրիայի, Հիտլերի՝ Սիրիա «հնարավոր այցելության» մասին և այլն[5]։ Բացի այդ, նրանք խոշտանգում, առևանգում, ահաբեկում էին հակաֆաշիստական պայքարում առավել աչքի ընկնող գործիչներին, աշխատավորներին։ 1942 թ. հունիսի 8-ի գիշերը Բեյրութում նրանց հերթական զոհը դարձավ դեմոկրատ գործիչ Փանոս Արամայիսյանը։ Այդ առթիվ խալեդ Բեկդաշը գրում էր. «Հայերի մեջ դեռ գործում է Հիտլերի ծառայող մի կազմակերպություն (ակնարկում է դաշնակցությանը—Հ. Թ.), որի հետադիմական շեֆերը դավադրական արարքներ են գործում հակաֆաշիստների դեմ»[6]։

Ահաբեկման սպառնալիքներն ու ահաբեկումները չէին կարող սա-

կայն ջլատել հայ աշխատավորների հակաֆաշիստական պայքարը։ Նրանց պաշտպանում էին արաբ դեմոկրատները։ 1942 թ. հունիսի 23-ին Հայաստանի պաշտպանության լիգայի բազմահազարանոց միտինգում Ֆարաժալլա Հելուն ասել է. «Եթե քանի մը այլասերած հայ պետեր իրենց կատաղության մեջ կկարծեն, թե հայ դեմոկրատ մարտիկներու դեմ կատարված սպառնալիքի քաղաքականությամբ պիտի կարենան ֆաշիզմի և անոր գործակալներու դեմ տարված պայքարի մեջ հայ ժողովուրդի միության թափը կոտրել... պետք է անոնք գիտնան, որ մեծապես կսխալին։ Պետք է անոնք գիտնան, թե Սուրիո և Լիբանանի բոլոր դեմոկրատ արաբները հայ դեմոկրատներու կողքին են...։ Սովետական Հայաստանի հանդեպ մեր սրտերուն մեջ կա նույն սերը, ինչ սեր կա Սուրիո և Լիբանանի հանդեպ, որովհետև այս ազատ և անկախ Հայաստանի մեջ մենք կտեսնենք բոլոր փոքր ժողովուրդներուն ազատության ու անկախության խորհուրդը։ Բոլոր գիտակից արաբները Հայաստանի մեջ կտեսնեն իրենց ժպտուն ապագան»[7]։

1942 թ. վերջերին Հայաստանի պաշտպանության լիգան վերանվանվեց Սովետական Հայաստանի բարեկամների ընկերություն, որի գլխավոր նպատակն էր Սիրիայի և Լիբանանի հայերին համախմբել Սովետական Հայաստանի շուրջը։ Ընկերության ղեկավարները հնարավոր էին համարում «Հայ ազգային բոլոր ուժերի միասնությունը՝ գաղութից ներս, և հայ ու արաբ ժողովուրդների միասնությունը՝ երկրի մասշտաբով»[8]։ Այդ լավատեսության հիմքում ընկած էր այն ոգևորությունը, որ կարմիր բանակի հայ ռազմիկների սխրագործությունները ստեղծել էին սփյուռքահայության մեջ։ Հայաստանի կուլտուրական կապի ընկերությանը ուղղած իրենց նամակներից մեկում նրանք գրում էին. «Հայրենական ներկա պատերազմը պատմական մեծ հեղափոխություն առաջ բերեց մեր գաղութին մեջ։ Այսօր Սուրիո և Լիբանանի հայությունը համախմբված է հայրենասիրական դրոշի տակ և պատրաստ է հայրենիքի համար որևէ զոհողության առաջ կանգ չառնել»[9]։

Սակայն ազգային ուժերի միասնությանը խանգարում էր ազգային կուսակցությունների վարքագիծը։ Ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները, տուրք տալով արաբական բուրժուազիայի «չեզոքության» քաղաքականությանը[10], վարում էին սպասողական գիծ։ Դաշնակցությունը, օգտվելով այդ հանգամանքից, կատարում էր զանազան մանևրներ, որպեսզի հնչակյանները և ռամկավարները չհամագործակցեն կոմունիստների հետ։ Արդարև, ազգային ուժերի միասնու-

թյուն ստեղծել նշանակում էր մեկուսացնել դաշնակցությանը, խլել այն ղեկավար դիրքերը, որ 1930-ական թթ. դաշնակցական գործիչները ձեռք էին բերել Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների հասարակական-քաղաքական կյանքում:

Ազգային ուժերի միասնության գաղափարը գնալով ավելի լայն ծավալ էր ընդունում, կողմնակիցներ էր նվաճում նույնիսկ տարիներե ի վեր դաշնակցության մենատիրության ներքո գտնվող ազգային-թեմական իշխանություններում: Ազգային գավառական և քաղաքական ժողովներում ծայր էին տվել բողոքի ելույթները, ըմբոստության դեպքերը, իսկ դաշնակցական գործիչները չէին կարող անհնազանդներին կարգի հրավիրել նախապատերազմյան մեթոդներով, մանավանդ, որ դաշնակիցների Սիրիա մտնելուց հետո բացվել էր Աթենքի գերմանա-իտալական հետախուզության կենտրոնից Հալեպ ուղարկված դաշնակցական պարաշյուտիստների գործը[11], որի հետևանքով սիրիահայ մի շարք դաշնակցական ղեկավարներ կասկածվում էին հինգերորդ զորասյանը պատկանելու ծանր մեղադրանքի մեջ:

Այդ պայմաններում դաշնակցական գործիչները կատարեցին մի շարք տակտիկական քայլումներ[12], որպեսզի հնարավոր դարձնեն ազգային կուսակցությունների համագործակցությունը: Սակայն կային ոչ քիչ թվով հնչակյաններ և ռամկավարներ, որոնք բողոքի ձայն էին բարձրացնում հրապարակով:

Այդ առումով բնութագրական են Բեյրութի «Անդրանիկ» (ռամկավար) ակումբի և Դամասկոսի «Տալվորիկ» (հնչակյան) միության բողոքի ելույթները: Բեյրութի բողոքավորները, մեծամասնություն գոյացնելով ընդհանուր անդամական ժողովում, ակումբը դուրս են բերել ռամկավար կուսակցության վերահսկողությունից[13]: Դամասկոսի դժգոհների բաց նամակում ասված էր. «Մենք Տալվորիկին անդամակցել էինք այն հավատքով, որ ան կպաշտպանե Սովետական Հայաստանը»[14]: Այդ և այդ կարգի մյուս ելույթները վճռական նշանակություն չունեին, սակայն խոսում էին այն մասին, որ 1941—1943 թթ. հնչակյան և ռամկավար ղեկավարների ազգային-քաղաքական վարքագիծը չէր համապատասխանում նույնիսկ իրենց կուսակցության համակիրների հայրենասիրական բաղձանքներին:

1943 թ. վերջերից դրական տեղաշարժեր առաջացան ռամկավար և հնչակյան կուսակցությունների քաղաքական վարքագծում: Դրան նպաստում էր երկու հանգամանք. առաջին՝ Ստալինգրադի հաղթանա-

կից հետո արդեն պարզ երևում էր, որ պատերազմը կավարտվի ֆաշիստական զինակիցների պարտությամբ։ Երկրորդ՝ Թեհրանի կոնֆերանսում երեք մեծ տերությունները՝ ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան որոշում էին ընդունել պատերազմում համատեղ գործողությունների և հետպատերազմյան համագործակցության մասին։ Այդ բոլորն աղատ դործելու համարձակություն տվեցին ռամկավար և հնչակյան դեկավարներին։

1944 թ. մարտի 19-ին ստեղծվեց Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ առաջադիմական միության, սոցիալ-դեմոկրատ հնչակյան և ռամկավար աղատական կուսակցությունների մասնակցությամբ։ Նրա նպատակն էր՝ համերաշխություն և համագործակցություն ստեղծել ամերիկահայ գաղութում, աշխատել հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության համար։ Կողմերը համաձայնվել էին, առաջին՝ «օգնել (դաշնակիցների) պատերազմական ջանքերուն», երկրորդ՝ «կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներու ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի», երրորդ՝ «պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատել ի խնդիր անոնց՝ հայկական հողին վրա վերաբնակեցման»։ Փաստաթղթի վերջում ասված էր. «Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական իրավունքներու տերը կճանչնա Հայաստանի կառավարությունը»[15]։

1945 թ. օգոստոսի 31-ին Բեյրութում ստեղծվեց Սիրիայի և Լիբանանի Հայ ազգային խորհուրդը։ Այդ առթիվ հրապարակվեց կարևոր նշանակություն ունեցող հետևյալ փաստաթուղթը.

«Սովիեթ Հայաստանի ուղղությունը ընդգրկող զանազան հոսանքներու ներկայացուցիչներս, հետ խորհրդակցության, որոշեցինք կազմել Սուրիո և Լիբանանի հայության ազգային խորհուրդ մը, գործունեության և ուղղության հիմք ունենալով հետևյալ կետերը.

«ա. Աշխատիլ հայ ժողովուրդի քաղաքական իրավունքներուն պաշտպանության համար, առաջին առթիվ զորավիգ կանգնելով ... Ամերիկայի հայ ազգային խորհրդի Սան Ֆրանցիսկոյի ժողովին ղրկած հուշագրին, որպեսզի արտասահմանի հայրենազուրկ հայության կարելիություն տրվի վերադառնալ հայրենիք և լծվիլ խաղաղ ու շինարար աշխատանքի»։

«բ. ...Արտասահմանի հայության ազգային բոլոր ցանկությունները լավագույն թարգմանը, համադրողն ու իրագործողը կհանդիսանա միայն Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը։ Ազգային խորհուրդը զայն կնկատե հայկական

դատի մեկ իրավասու հեղինակությունը, որու նկատմամբ կհայտնե իր անվերապահ վստահությունը»։

«գ. Սովետական Հայաստանի հզոր դինակիցը և պաշտպանը և հայ ժողովուրդը երկու անգամ ֆիզիկական բնաջնջումե ազատող ռուս մեծ ժողովուրդին (...) հանդեպ Ազգային խորհուրդը կհայտնե անվերապահ վստահություն»։

«դ. Ազգային խորհուրդը պարտականություն կհամարե նյութական և բարոյական բոլոր միջոցներով օգնել Մայր Հայրենիքին, մշակութային կապեր հաստատել անոր հետ և պայքարիլ բոլոր անոնց դեմ, որոնք մամուլի միջոցով կամ այլ արարքներով կջանան նսեմացնել Սովետական Հայաստանի վարկն ու հեղինակությունը»։

«ե. Ազգային խորհուրդը պիտի աշխատի Սուրիո և Լիբանանի ազգային ներքին կյանքին մեջ ստեղծել ներդաշնակություն և միասնականություն»։

«զ. Ազգային խորհուրդը պիտի աջակցի Սուրիո և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժման և հայ իրականության մեջ արգելելու որևէ արարք, որ կրնա վնասել Սուրիո և Լիբանանի հայության վարկին և հայ-արաբ խաղաղ հարաբերությանց»։

«է. Ազգային խորհուրդին կրնան հարիլ բոլոր այն քաղաքական կազմակերպությունները, միությունները, առանձին անձինք, որոնք կընդունին սույն հայտարարությունը, առանց դավանական և գաղափարական խտրության»[16]։

Հայ ազգային խորհրդին հարեցին հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավարները, լիբանանահայ վերածնունդ միությունը և այլ բազմաթիվ միություններ, խմբակցություններ։ Հայ ազգային խորհրդի կենտրոնական վարչության ուղղված նրանց դիմումներում հայտնվում է, որ ամբողջությամբ ընդունում են 1945 թ. օգոստոսի 31-ի հայտարարությունը։ Հայ կոմունիստների դիմումի մեջ ասված էր. «Սույն պաշտոնագրով կընդունենք ձեր 31 օգոստոսի 1945 թվակիր պաշտոնական հայտարարության ամբողջությունը և կհարինք ձեր շարժումին։ Պատրաստ ենք ամեն տեսակի օժանդակություն ընծայել և նեցուկ հանդիսանալ ձեզի։ Կմաղթենք կատարյալ հաջողություն ձեր նպատակի իրագործման համար»[17]։ Նույն դիրքերում էր նաև հնչակյան կուսակցությունը. «Ս.-դ. հնչակյան կուսակցության Սուրիո և Լիբանանի վարիչ մարմիններս կյուրացնենք հայ ազգային խորհրդի Սուրիո և Լիբանանի կենտրոնական վարչության 31 օգոստոսի 1945 թվակիր պաշտոնական հայտարարությունը իր ամբողջության մեջ։ Կխոստանանք մեր նյութական

և բարոյական աջակցությամբ ղորավիգ կանգնել ձեր շարժումին և հաղթել անոր։ Հաջողության սրտաբուխ մաղթանքներ»[18]։ Ռամկավար ազատական կուսակցության Սիրիայի և Լիբանանի շրջանային վարչությունը հայտնում էր. «Հաճույքով կարդացինք Հայ ազգային խորհրդի Սուրիո և Լիբանանի կենտրոնական վարչության 31 օգոստոսի 1945 թվակիր պաշտոնական հայտարարությունը։ Պաշտոնապես կհայտնենք, թե կընդունինք անոր ամբողջությունը և կհարինք ձեր շարժումին։ Կգնահատենք ձեր նախաձեռնության ոգին և հաջողություն կմաղթենք, խոստանալով ամեն տեսակի աջակցություն»[19]։

Հայ ազգային խորհուրդներ ստեղծվեցին նաև Ֆրանսիայում, Անգլիայում, Բալկաններում, Իրանում, Եգիպտոսում և վերջապես այն բոլոր երկրներում, որտեղ քիչ թե շատ հոծ հայկական գաղթօջախներ կային։ Վ. Նավասարդյանը գրում էր. «Այդ խորհուրդներուն կանդամակցեին «Սովիեթ Հայաստանի ուղղությունը ընդգրկող» հոսանքներու ներկայացուցիչները միայն, այսինքն՝ համայնավարները, հնչակյանները և ռամկավարները։ Դաշնակցությունը այդ խորհուրդներուն մեջ չկար»[20]։

Համաշխարհային պատերազմի նախօրեին (1938 թ.) Կահիրեում գումարվել էր դաշնակցության ընդհանուր պատգամավորական ժողովը, որտեղ նրա ղեկի մոտ էին կանգնել այն պարագլուխները, որոնք «մինուճար Հայաստանի ազատագրությունը» ակնկալում էին ռուսական տափաստաններն արշավող «արիասիրտ գերմաններից»։ Նրանք գրում էին։ «Հայ կուսակցությանց ներկայացուցիչները պարտավոր են խուսափել Ճապոնի, Գերմանիայի և Իտալիայի հանդեպ թշնամական դիրք բռնելե։ Անոնք վարկյան մ'իսկ պետք չէ մոռնան, որ իրենց այսօրվա անզգույշ, գրգռիչ ընթացքով կրնան վաղը մեծապես վնասել հայ ժողովուրդի գոյամարտին և ազատամարտին»[21]։

Եվրոպայում պատերազմը սկսվելուց (1939 թ. սեպտեմբերի 1) հետո դաշնակցության պարագլուխները ուղղակի կապ հաստատեցին Հիտլերի մինիստր Ալֆ. Ռոզենբերգի հետ, և սկսվեցին նրանց ուղևորությունները՝ «հատուկ միսիայով»։ Նրանք միաժամանակ օտար մամուլի միջոցով կոչ էին անում. «Հիտլերի դեմ պատերազմը դադարեցնել և կնքել Գերմանիայի համար պատվավոր հաշտություն, որովհետև Գերմանիան կոմունիզմի ամենամեծ թշնամին է։ Բոլոր մեծ պետությունները պետք է օգնեն Հիտլերին, որպեսզի նա հարձակվի Սովետական Միության վրա, փրկի աշխարհը խոշորագույն վտանգից՝ կոմունիզմից, և Հայաստանն էլ վերագտնի իր անկախությունը»[22]։

Հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը չէր կարող ոգևորություն չառաջացնել դաշնակցական պարագլուխների շրջանում: Նացիստական ղորքերի առաջին երկու-երեք շաբաթվա հաջողություններից ոգևորված Ռուբեն Դարբինյանը գրում էր. «Բարեբախտաբար խորհրդային միությունը ոչ այնքան ղորավոր է, որ կարենա ջախջախել Գերմանիան, ոչ ալ ներքնապես այնքան ղորավոր է, որ երկարօրեն կարողանա դիմանալ Գերմանիայի հարվածներուն»[23]: Եվրոպայի տարբեր երկրներից իսկույն Բեռլին շտապեցին դաշնակցական պարագլուխները: Նրանց առաջին գործը եղավ այսպես կոչված «Հայ ազգային լեգեոնի» ստեղծումը, որը պետք է ֆաշիստներին օգներ Հայաստանն «ազատագրելու» գործում: 1942 թ. վերջերին նացիստական գեներալի ուսադիրներ ստացած Դրոյի հրամանատարության ներքո կային ութ գումարտակ, որոնցում ընդգրկված էին մոտ ութ հազար հայ ռազմագերիներ[24]:

1942 թ. դեկտեմբերի 15-ին Բեռլինում «Արևելյան գրավյալ շրջաններու նախարարության հովանավորությամբ» դաշնակցական պարագլուխները կազմեցին «Հայ ազգային խորհուրդը» կամ «ապագա հայկական կառավարությունը»: 1943 թ. փետրվարի 13-ին հրապարակվեց նրա 12 կետերից բաղկացած հայտարարությունը[25], որով ծրագրվում էր Հայաստանում սովետական կարգերը վերացնել և հաստատել «քաղաքական ինքնավարություն»՝ Գերմանիայի «հովանավորության ներքո»: «Հայ ազգային խորհուրդը» պարտավորվում էր «հայ ազգային կենդանի բոլոր ուժերը» համախմբել, վինել և դնել Գերմանիայի տրամադրության տակ, նրանց դաստիարակել «նոր միտքով և ուղղությամբ» և ծառայեցնել «Մերձավոր Արևելքի մեջ գերմանական ազդեցությունն ամրապնդելու» նպատակին և այլն:

Դաշնակցական պարագլուխների նացիստական արկածախնդրությունը ունեցավ (չէր էլ կարող չունենալ) անփառունակ վախճան: 1943 թ. գարնանը «Հայ ազգային լեգեոնի» բեկորները Պյատիգորսկից, Կիսլովոդսկից և Կրասնոդարից տեղափոխվեցին Գերմանիա: 1944 թ. փետրվարին «Հայ ազգային խորհուրդին» փոխարինելու եկած «Հայկական միավորյալ շտաբը» կամ «Հայկական կապի շտաբը» հիմնականում կազմակերպում էր սովետա-գերմանական ռազմաճակատից ճողոպրած դաշնակցականների և հայրենիքի դավաճանների փախուստը դեպի Հարավային Գերմանիա՝ ամերիկյան ղորքերի ռազմական գործողությունների շրջանը:

Այդ բոլորից հետո դաշնակցական մամուլը փորձում էր ապացուցել, որ իբր «Դրոյի գլխավորած շարժումը ուղղված էր ոչ թե ռուսներուն,

այլ գերմանացիներուն դեմ»[26]։ Այդ դեպքում, ինչպես բացատրել այն դատավճիռները, որ պատերազմից հետո Ֆրանսիայի, Հունաստանի և այլ երկրների դատարանները կայացրին գերմանա-իտալական ֆաշիստների հետ առավել ակտիվ համագործակցած դաշնակցականների դեմ[27]։

Այսպիսով, Հայրենական պատերազմի տարիներին Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորներն անձնազոհ պայքար էին մղում ֆաշիզմի դեմ։ Հայաստանի պաշտպանության Սիրիայի և Լիբանանի հայկական լիգայի և նրան փոխարինելու եկած Սովետական Հայաստանի բարեկամների ընկերակցության գլխավոր նպատակն էր՝ առանց դասակարգային խտրության միավորել ազգային բոլոր ուժերը Սովետական Հայաստանի շուրջը։ Սակայն դրան խոչընդոտում էր ազգային կուսակցությունների վարքագիծը։ Դաշնակցությունը զինվորագրվել էր ֆաշիզմի լագերում և փորձում էր ջլատել աշխատավորների հայրենասիրական ձեռնարկումները, իսկ ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցությունները սպասում էին թե ո՞ր կողմն է հակվելու հաղթանակի նժարը։ Ստալինգրադի ճակատամարտի ելքը դրական տեղաշարժեր առաջացրեց հնչակյան և ռամկավար կուսակցությունների քաղաքական վարքագծում։ Այնուամենայնիվ ազգային ուժերի միասնությունը ստեղծվեց այն ժամանակ, երբ արդեն լուծել էին ինդանոթները։ Դաշնակցությունը դուրս էր մնում հայ ազգային խորհուրդների կազմից։

3. ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Սփյուռքահայ որոշ հեղինակներ պնդում են, որ Հայրենական պատերազմի տարիներին Մերձավոր Արևելքի երկրներում դաշնակցական ղեկավարները, սահմանադատվելով գերմանա-իտալական ֆաշիզմին սպասարկող իրենց գաղափարական զինակիցներից, դադարեցրել են հակասովետական պայքարը[1] և նույնիսկ զորավիգ կանգնել «դաշնակիցներուն, նկատի ունենալով այն հույսերը, որոնք հայ ժողովուրդին համար ստեղծված էին նրանց հաղթանակի հեռանկարով»։ Նրանց ասելով Սիրիայում և Լիբանանում դաշնակցությունը «Սովետական Հայաստանի՝ պատերազմի մասնակից ըլլալե եռք... սկսավ համերաշխական դիրք ճշտել մյուս քաղաքական հատվածներուն նկատմամբ և գործակցեցավ անոնց հետ համայնքային հարցերուն մեջ»։ Այլ խոսքով, չկար կուսակցական պայքար, կար կուսակցությունների հաշտ ու համերաշխ համագործակցություն...[2]։

Սակայն իրականում ամենևին այդպես չէր։ Համաշխարհային պա-

տերազմի ողջ տևողության դաշնակցությունը համառորեն շարունակում էր հակաասվեատական պայքարը։ Փոխվել էին միայն պայքարի ձևերն ու մեթոդները։

Ճիշտ է, դաշնակցական գործիչները, հանդես բերելով «համերաշխական ոգի», կատարեցին մի շարք զիջումներ։ 1941 թ. նոյեմբերի 24-ին Տանն Կիլիկիո թեմերի Ազգային ընդհանուր ժողովը, որի «քվեներու ջախջախիչ մեծամասնությունը» պատկանում էր դաշնակցությանը, ստիպվեց Ազգային կենտրոնական վարչության հինգ աթոռներից մեկը զիջել ռամկավար Մկրտիչ Մսըրլյանին, երկուսը՝ անկուսակցականներ Հովսեփ Ենիգոմշույանին և Մարտիրոս Ալթունյանին[3]։

1941—1942 թթ. հանձնայն դեպս ոչ դաշնակցության ցանկացած ձևով լուծվեց հակաբյուրոյական պայքարի միջնաբերդի վերածված Լիբանանի թեմի հարցը։ Մեծ մասամբ ռամկավարներին և հնչակյաններին համակիր անկուսակցականները, բյուրոյական դաշնակցականների օգնությամբ, ազգային-թեմական ժողովներից քշեցին հակաբյուրոյականներին և կանգնեցին ազգային իշխանության ղեկի մոտ։ Դրանով փաստորեն վերջ դրվեց մի քանի տարի ի վեր ներկուսակցական կյանքը խռովող հակաբյուրոյական շարժմանը, բայց միաժամանակ Լիբանանի թեմը դուրս բերվեց դաշնակցական գործիչների վերահսկողությունից[4]։ Այնուամենայնիվ նրանք ողջունեցին այդ «բարվոք լուծումը», որպեսզի վատահության մթնոլորտ ստեղծեն բանակցությունների սեղանի շուրջը։ Այդ առթիվ դաշնակցության Լիբանանի օրգանը գրում էր. «Ուրախ ենք հայտնելու, որ երկար բանակցություններե հետո ազգային խնդիրները հանգեցան բարվոք լուծման մը՝ վերջ դնելով այն բոլոր տարաձայնություններուն և տարաձայնություններուն, որոնք կհուղեին, մանավանդ վերջերս, Պեյրութի հայ կյանքը»[5]։

1942 թ. որոշակի հաջողություն ձեռք բերվեց նաև Դամասկոսի թեմում։ Դաշնակցական գործիչները հնչակյան և ռամկավար ղեկավարներին զիջեցին Դամասկոսի դժգոհներին «զսպելու» նախաձեռնությունը։ Տարբեր կողմերի ներկայացուցիչներից նշանակվեց ժամանակավոր ազգային վարչություն, որը դաշնակցությունից կախում չուներ[6]։

Ճիշտ չգնահատելով դաշնակցության տեղական զիջումների իսկական արժեքը, հնչակյան և ռամկավար ղեկավարները բանակցությունները շարունակում էին մեծ լավատեսությամբ։ Բանակցությունների օրակարգի գլխավոր հարցն էր՝ ազգային գավառական ժողովները վերակազմել ժողովրդական ընտրություններով։ Ընդ որում հնչակյան և ռամկավար ղեկավարների մոտ պատրանք էր ստեղծվել այն մասին, որ բա-

նակցությունների միջոցով իբր ազգային-թեմական իշխանություններում դաշնակցության մենաշնորհությանը փոխարինելու է ազգային կուսակցությունների համագործակցությունը։

Ազգային կուսակցությունների սակարկություն-բանակցությունները ձգձգվելով, ընդհատվելով, վերսկսվելով, շարունակվում էին և այդ ընթացքում դաշնակցական գործիչները որոշ զիջումներ էին կատարում, սակայն դրանք էական նշանակություն չունեին։ Ազգային-թեմական իշխանությունների հիմնական լծակները (ազգային գավառական ժողովներ և այլն) առաջվա պես մնում էին դաշնակցական գործիչների ձեռքում։ Հնչակյան և ռամկավար ղեկավարները, ի վերջո, հասկացան, որ այդ բանակցությունները պետք էին միայն դաշնակցությանը՝ խանգարելու համար հայ դեմոկրատների ջատագոված ազգային ուժերի միասնության ստեղծմանը։

1944—1945 թթ. աշխատավորական շարժումների վերելքի պայմաններում հայ դեմոկրատները հանդես եկան ազգային-թեմական իշխանությունների անհապաղ վերակազմության օգտին։ 1945 թ. փետրվարի 11-ին Բեյրութում կայացավ հայ աշխատավորների բազմահազարանոց միտինգ, որտեղ ճառախոսները պահանջեցին թեմական իշխանությունները «վերակազմել դեմոկրատական հիման վրա»։ Հովհ. Աղբաշյանը նշում էր. «Կոմունիստները ազգային գործերին ներս կմտնեն գործակցելու համար բոլոր անոնց հետ, որոնք անկախաբար իրենց դասակարգային և կուսակցական համոզումներեն կուզեն պարկեշտորեն ծառայել գաղութի հառաջադիմության»[7]։ Նույն թվականի մարտի 25-ին Դամասկոսի հայ աշխատավորների միտինգում Հ. Մադիյանը և մյուս ճառախոսները ցույց տվին «ազգային գործերի անմխիթար վիճակը» և, արտահայտելով ժողովրդական լայն խավերի կամքը, պահանջեցին ազգային գավառական ժողովի ընտրություններ[8]։

Սերիայի և Լիբանանի հայ ազգային խորհրդի ստեղծումից հետո ազգային-թեմական իշխանությունների վերակազմության օգտին մղվող պայքարը մտավ իր վերջին՝ վճռական փուլի մեջ։ 1945 թ. սեպտեմբերի 23-ին Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և Զահլեում միաժամանակ նրա գումարած ժողովրդական միտինգները ստիպեցին դաշնակցական գործիչներին՝ ցած դնել ղեկները։ Հոկտեմբերի 21-ին Լիբանանի, քիչ ավելի ուշ Դամասկոսի թեմում անցկացված գավառական ժողովի ընտրություններն ավարտվեցին Հայ ազգային խորհրդի թեկնածուների հաղթանակով։

Բավական բուռն պայքար էր մղվում Տանն Կիլիկիո կաթողիկոսական թափուր աթոռի շուրջը։

1941 թ. նոյեմբերի 26-ին Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դահլիճում բացվեց Ազգային ընդհանուր պատգամավորական ժողովը, որի քվեների մեծամասնությունը պատկանում էր դաշնակցությանը։ Վերջինս, օգտվելով այդ հանգամանքից, փորձում էր կաթողիկոս ընտրել Գարեգին արք. Խաչատուրյանին։ Սակայն հնչակյանները և ռամկավարները հակադրվում էին նրա ընտրությանը, որպեսզի Տանն Կիլիկիո աթոռը հետու պահեն հակասովետական-հակաէջմիածնական հնարավոր արկածախնդրություններից։

Դաշնակցության թեկնածուի ընտրությանը դեմ էր նաև Ամենայն հայոց կաթողիկոսությունը։ Դեկտեմբերի 2-ին էջմիածնի ներկայացուցիչները՝ Արսեն արք. Ղլըճյանը և Համբարձում Առաքելյանը, ժամանելով Անթիլիաս, հայտարարել են. «Նկատի ունենալով, որ ամսույս (դեկտեմբերի) 7-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռի համար Տ. Գարեգին արք. Խաչատուրյան իբր թեկնածու կնկատվի և որի ընտրությունը ձայնի մեծամասնությամբ կասկածից դուրս է, Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատվիրակներս կաթողիկոսական ընտրության մասնակցելու մեր արտոնագրերը հետ կառնենք։ Ներկայիս իրողության մեջ Գարեգին արք. Խաչատուրյանի թեկնածությունն ու ընտրությունը մենք կգտնենք Մայր Աթոռ ս. Էջմիածնի բարոյական շահերին ու նրա խաղաղ կյանքի ընթացքին անհամապատասխան և անընդունելի»[9]։

Այնուամենայնիվ Ազգային ընդհանուր ժողովի դաշնակցական պատգամավորները պահանջում էին անտեսել էջմիածնի կամքը և «անպատճառ կատարել» կաթողիկոսական ընտրությունը։ Նրանց գործադրած ճնշումներին, Տանն Կիլիկիո միաբանական ընդհանուր ժողովը պատասխանել է մի հայտարարությամբ, որտեղ ասված է. «Մենք՝ Կիլիկիո աթոռի միաբաններս կցանկայինք համերաշխություն տեսնել Մայր Աթոռի և Կիլիկիո Աթոռի միջև...։ Սակայն Մայր Աթոռի... ղույգ պատգամավորներու գրավոր դիտողությանց վրա... այն համոզումը գոյացուցինք, որ սպասված համերաշխությունը պիտի չիրականանար...։ Հետևաբար, իրական համերաշխության և միասնականության գետին մը գտնելու այս պատեհությունը չկորսնցնելու համար, մենք պիտի համաձայնինք Մայր Աթոռի տեսակետին՝ չմասնակցելով Կիլիկիո կաթողիկոսի ընտրության, եթե պատգամավորական ժողովը չհամաձայնի երկրորդ ընտրելիի մը վրա։ Եթե այս անկարելի ըլլա, կաթողիկոսական

ընտրությունը կհետաձգվի անորոշ ժամանակով»[10]: Այդպես էլ եղել է:

1942 թ. ապրիլին Տանն Կիլիկիո միաբանական ընդհանուր ժողովը, նախապատրաստվելով կաթողիկոսական ընտրությանը, որոշում ընդունեց բոլոր չորս (Լիբանան, Հալեպ, Դամասկոս և Կիպրոս) թեմերում աղգային գավառական ժողովի ընտրություններ անցկացնել, սակայն դաշնակցական գործիչները խանգարեցին դրան, որպեսզի չզրկվեն Ազգային ընդհանուր ժողովում իրենց ունեցած մեծամասնությունից: Այնուամենայնիվ Տանն Կիլիկիո միաբանությունը որոշեց 1943 թ. մայիսի 9-ին կատարել կաթողիկոսական ընտրությունը, ընտրվողների հնգանուն ցանկից դուրս թողնելով դաշնակցության պաշտպանյալի անունը: Սակայն դա բավարար երաշխիք չէր: Ուստի, կաթողիկոսական ընտրության նախօրեին ս.—դ. Հնչակյան, ռամկավար ազատական կուսակցությունները և կոմունիստները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ ասված էր. «Ի նկատի ունենալով, որ ամսույս 9-ին դումարվելիք կաթողիկոսական ընտրության պատգամավորական ժողովի ներկայացուցիչները պիտի ըլլան նախորդ պատգամավորականի ժողովականները, և տրված ըլլալով որ այդ ժողովը իր ապօրինի կառուցվածքով և իր որդեգրած ազգավնաս ուղղությամբ դեմ է ս. էջմիածնա Մայր Աթոռին, ... և արտահայտելով ժողովրդի ստվար մեծամասնության կամքը, հայտարարենք, թե

«ա. Կաթողիկոսական ընտրության նախորդ պատգամավորները իրավունք չունին կաթողիկոսական ընտրություն կատարելու:

«բ. Միմիայն օրինավորապես ընտրված ժողովներե բխած պատգամավորներով է, որ կրնա կատարվիլ կաթողիկոսական ընտրությունը:

«գ. Կպահանջենք չեղյալ հայտարարել մայիսի 9-ին կաթողիկոս ընտրելու հրավիրված ժողովը և անմիջապես միջոցներ ձեռք առնել օրինավոր ժողովի մը գումարումը ապահովելու համար»[11]:

Դաշնակցական գործիչները, ի վիճակի չլինելով հոսանքն ի վեր թիավարել, վերստին հանդես բերեցին «համերաշխական ոգի»: Եվ 1943 թ. մայիսի 10-ին Տանն Կիլիկիո կաթողիկոս ընտրվեց Գարեգին արք. Հովսեփյանցը, որի թեկնածությունն առաջ էին քաշել Տանն Կիլիկիո միաբանությունը և հայրենասիրական ուժերը:

1943 թ. փետրվարին հրապարակվեց Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գեորգ արք. Չորեքչյանի կոչը՝ ուղղված համայն հայ ժողովրդին՝ «Սասունցի Դավիթ» տանկային զորասյան օգտին միջոցներ հավաքելու վերաբերյալ[12]: Ինչպես Սովետական Միության, այնպես էլ

սփյուռքի հայերը սիրով արձագանքեցին էջմիածնի կոչին: 1944 թ. փետրվարին ռազմաճակատ մեկնեց «Սասունցի Դավիթ» առաջին, իսկ նույն թվականի մայիսին՝ երկրորդ տանկային շարասյունը: Միջոցների հանգանակությանը մասնակցեց նաև Սիրիայի և Լիբանանի հայությունը:

1943 թ. մարտին Տանն Կիլիկիո կաթողիկոսական տեղապահը, արձագանքելով էջմիածնի կոչին, դիմեց Սիրիայի և Լիբանանի հայությանը. «Կհրավիրենք և մենք Սիրիա-Լիբանանի մեր ... ժողովուրդը, որպեսզի անմիջապես և ամեն տեղ ձեռնարկե հանգանակության «Սասունցի Դավիթ» տանկային զորասյունի շինության ի նպաստ, և սաստե՛ր անոր իր սրտաբուխ և առատ նվերներով, սա համոզումով, թե Սովիետ Միության կարմիր բանակին օգնելը կնշանակե օժանդակել և զորացնել դաշնակից միացյալ ազգերու մարտնչող հերոս բանակները, ապահովել մարդկային ազատությունը բռնապետություններեն և փութացնել վերջնական հաղթանակը»[13]:

Այդ կոչին անհապաղ արձագանքեց Սովետական Հայաստանի բարեկամների ընկերակցությունը: Նրա օրգան «Ժողովուրդի ձայն»-ի էջերում հաճախ էին երևում հոդվածներ, հաղորդումներ, լուրեր, կոչեր «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հանգանակության օգտին: Թերթը գրում էր. «...երբ այսօր մեզ կանչողը Սովետական Հայաստանն է, երբ մեզմե պահանջվածը հավիտենական Սասունցի Դավիթի թուրկայծակին փայլատակման համար է, տանք մեր առավելագույնը մեր հայրենիքին»[14]: Սակայն հանգանակությունը չէր տալիս սպասված արդյունքը՝ «հելուզակների դավաճանության» հետևանքով: Ակնարկվում էր Ազգային կենտրոնական վարչության դաշնակցական անդամներին, որոնք, ինչպես նշում էր ռամկավարների օրգանը, «իբրև «ղգուշավորություն» համազգային հանգանակության հակառակեցան»[15]:

1944 թ. մարտին միայն հնարավոր եղավ «Սասունցի Դավիթ» շարասյան հանգանակության հակառակորդներին զինաթափել և նրան տալ համազգային բնույթ[16]: 1944 թ. ապրիլի 27-ին, Ա. արք. Սյուրմեյանը ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահին հաղորդում էր. «Պեյրութի Սովետ Հայաստանի բարեկամներու նախաձեռնությամբ հանգանակված և Հայաստան ուղարկված գումարը անբավարար գտնելով մեր ժողովուրդի թվին և որակին, շուրջ ամիս մը առաջ մեր նախագահությամբ կազմվեցավ «Սասունցի Դավիթ» հրասայլի զորասյունի համազգային հանձնաժողով մը, որ ցարդ հաջողեցավ, կարճ ատենի մեջ, հանգանակել շուրջ յոթանասուն հազար լիբանանյան ֆրանքի»[17]: Այդ հանձնաժո-

ղովը հանգանակել և Հայաստան է ուղարկել շուրջ 180 հազար լիբ. ֆրանք[18]:

1946 թ. հունվարին Տանն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ սկսվեց մի նոր համազգային հանգանակություն՝ «կոշիկի մի գործարան և սարքեր» ձեռք բերելու և Հայաստան ուղարկելու համար: Հալեպի, Լիբանանի և Դամասկոսի թեմերում կատարված հանգանակությունից գոյացել է 175 հազար լիբ. ֆրանք: Այդ գումարից ութսուն հազարը առանձնացվել է կոշիկի գործարանի գնման համար, իսկ մնացյալը հատկացվել ներգաղթի ֆոնդին[19]:

1945 թ. դեկտեմբերի 21-ին ՍՍՀՄ ժողկոմսովետը, ընդառաջելով Հայաստանի կառավարությանը, որոշում ընդունեց արտասահմանի հայերի հայրենադարձության մասին: 1946 թ. փետրվարին Հայաստանի կոմկուսի կենտկոմի պլենումում քննարկվեց «Արտասահմանյան երկրներից վերադարձող հայերի ընդունումը և տեղավորումը նախապատրաստելու միջոցառումները»: Կուսակցական, սովետական և տնտեսական օրգանների առաջ խնդիր դրվեց նախապատրաստվել բավարարելու հայրենադարձների կարիքները: Արտասահմանյան տարբեր երկրներ ուղարկվեցին Հայաստանի կառավարության ներկայացուցիչները, որոնք կազմակերպեցին աղգահավաքի մեծ գործը:

Սիրիայում և Լիբանանում ներգաղթի պատմական գործի գլուխ կանգնեց «Սուրիո և Լիբանանի հայերի ներգաղթի կոմիտեն», որը գործում էր Հայ ազգային խորհրդի հովանավորությամբ: Նրանում ընդգրկված էին ս.—դ. հնչակյան, ռամկավար ազատական կուսակցությունների և այլ կազմակերպությունների հեռևյալ ներկայացուցիչները. Մկրտիչ Մարըլյան՝ պատվո նախագահ, Հրանդ Դևեջյան՝ նախագահ, Հրաչ Սեդրակյան, Վահրիճ Ճերեճյան՝ քարտուղարներ, Բագրատ Բագալյան՝ գանձապահ և վեց խորհրդականներ: Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և մյուս քաղաքներում ստեղծվեցին ներգաղթի տեղական կոմիտեներ, որոնցում ընդգրկված էին առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչները[20]: Նրանց օգնում էին բազմաթիվ բարեգործական, մշակութային, ուսանողական, հայրենակցական, մարզական միությունները: Այդ առումով ուշագրավ է Հալեպի Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության վարչության՝ ներգաղթի կոմիտեին ուղղված նամակը, որտեղ ասված է. «Միությունս մեծ խանդավառությամբ և միաձայնությամբ տվավ իր որոշումը արձանագրվելու և առաջին իսկ առիթով հայրենիք մեկնելու...: Հաստատ հավատ և վստա-

հույսյուն ունենք Սովետական Հայաստանի գուրգուրոտ պետության վրա, որ արտասահմանի իր թափառական եղբայրները դրկաբաց կհրավիրե։ Միությունս՝ իր բոլոր կարելի միջոցներով օժանդակ հանդիսանալու համար ներգաղթի գործին, ձեր տրամադրության տակ դնե ինքնինքը»[21]։

Ներգաղթի լուրը ոգևորություն առաջացրեց Սիրիայի և Լիբանանի հայության ամենալայն շրջաններում, անգամ մայրենի լեզուն մոռացած հայերի մեջ։ Արամո, Յակուբին, Ղնեե և այլ հայկական արաբախոս գյուղերից հետո հայրենադարձի խանդավառության ալիքը հասավ մինչև հեռավոր Կամիշլիի և նրա մերձակա գյուղերի քրդախոս հայերին։ Կամիշլիում կազմակերպվեց հրապարակային հավաքույթ, որտեղ հայերեն և քրդերեն լեզվով արտասանվեցին հայրենասիրական ճառեր։ Նրանք ասում էին. «Ի լուր... պատմական մեծ որոշման չենք կրնար զսպել ուրախության արցունքները»[22]։ Սիրիայի հայության 90%-ը, Լիբանանի 80%-ն արձանագրվեց ներգաղթելու համար[23]։

Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Սիրիայում և Լիբանանում դաշնակցական պարագլուխները հնարավոր ամեն ինչ անում էին ձախողելու համար ներգաղթը։ Սկզբում նրանք գրում էին. «Ինչու այս արձանագրությունները։ Անխղճություն է խաղալ գաղութի գոյության հետ։ ... Ինչ է որ կկատարվի, ներգա՞ղթ, թե նոր փորձաքար այս ժողովուրդի համար»[24]։ Տեսնելով որ օրըստօրե մեծանում է ներգաղթել ցանկացողների թվաքանակը, նրանք ասում էին. «Հայաստանի ներկա սահմանները նեղ են ու հնարավոր չէ զանգվածովի ներգաղթը, հետևաբար արձանագրեցեք այնքան, որքան որ հնարավոր է տանել։ ... Մեր գաղութին բաժինը մեկ կամ երկու հազար կրնա ըլլալ»[25]։ Երբ հայրենադարձի կարավանները սկսեցին ճանապարհվել, նրանք ուղղակի ողբում էին.—«Հայ կյանքն է, որ կքայքայվի, տեղի ունեցածը զարհուրելի սպանդ մըն է՝ ուղղված հայ տնտեսական կյանքին, հայ բարոյականին ու հայ հոգիներուն։ Նոր Ապրիլ 24 մը, որ կուգա խախտելու հայ ժողովրդի բարոյական դիմագիծը»[26]։

1946 թ. հունիսի 23-ին Բեյրութի նավահանգստից մեկնեց ներգաղթի առաջին կարավանը։ Մինչև 1948 թ. ներգաղթեցին մոտավորապես 105 հազար հայեր, այդ թվում 40 հազարը՝ Սիրիայից և Լիբանանից։

Այսպիսով, համաշխարհային պատերազմի տարիներին ևս շարունակվեց դաշնակցության հակասովետական պայքարը։ Փոխված էին միայն պայքարի ձևերն ու մեթոդները։ Առանձնապես բուռն պայքար էր գնում թեմական իշխանությունների, Տանն Կիլիկիո կաթողիկոսական

թափուր աթոռի շուրջը։ Երկարատև պայքարով վճռվեց այնպիսի նվիրական գործի բախտը, ինչպիսին էր Սասունցի Դավիթ ղորապետի օգտին հանգանակությունը։ Դաշնակցությունը կանգնած էր թեք մակերևսի վրա և գնում էր մեկ անկումից մյուս անկումը։ Այսպես շարունակվեց մինչև 1947 թ. վերջերը, երբ Սիրիան և Լիբանան ներքաշվեցին սառը պատերազմի ոլորտը։

4. ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

1943—1946 թթ. Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների ազգային անկախության պայքարը պսակվեց հաջողությամբ։ Քաղաքական բարդ իրադրության պայմաններում մղվող այդ զոհառատ պայքարի համարյա բոլոր փուլերում հայ աշխատավորները ցուցաբերեցին պատշաճ զգոնություն և քաղաքացիական պարտքի գիտակցություն՝ իրենց երկրորդ հայրենիքի նկատմամբ։ Այդ վարքագիծը բարձր գնահատվեց ազգային-ազատագրական ուժերի կողմից և, որ կարևոր է, զգալիորեն նպաստեց հայ-արաբական բարեկամության ամրապնդմանը։

Աշխատավորական շարժումների վերելքը նպաստում էր ազգային անկախության պայքարի աշխուժացմանը։ Ազատ-ֆրանսիական իշխանությունները մեկ խոստանում էին, մեկ մերժում մանդատը վերացնել։ 1943 թ. փետրվարին հրապարակվեց Ազատ-Ֆրանսիայի լիազոր պատվիրակ գեներալ Կատրուի կողմից Լիբանանի հանրապետության նախագահ Ալֆ. Նակկաշին ուղղված նամակը, որտեղ ասված էր. «Ֆրանսիան դեմ ժյուրե կպահպանի Լիբանանի մանդատը, մինչև որ Ազգերի լիգան նրան ազատի այդ պատասխանատվությունից»։ Դա հակաիմպերիալիստական գործադուլների և ցույցերի հզոր ալիք բարձրացրեց Սիրիայում և Լիբանանում։

Ազատ-ֆրանսիական իշխանությունները ստիպված որոշ զիջումներ կատարեցին՝ ներքին իրադրությունն առավել չբարդացնելու համար։ 1943 թ. հուլիսին Սիրիայում և օգոստոս-սեպտեմբերին Լիբանանում անցկացվեցին պառլամենտական ընտրություններ, որոնք, չնայած իմպերիալիստների գործադրած ամեն կարգի ճնշումների, պսակվեցին ազգային-ազատագրական ուժերի հաղթանակով։

Ֆրանսիացիները կոպիտ կերպով միջամտեցին նաև հայկական համայնքի թեկնածուների նշանակմանը և ընտրությանը։ Լիբանանի ընտրությունների նախօրեին Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը նշում էր, որ

ֆրանսիացիները և նրանց գործակալները «ամեն ճնշում ի գործ կդնեն հայ համայնքի վրա...»: Դրա շնորհիվ դաշնակցությանը հաջողվեց ձեռք բերել դեպուտատական երկու աթոռ՝ մեկը (Հրաչ Փափազյան) Սիրիայի, մյուսը (Մովսես Տեր Գալուստյան) Լիբանանի պառլամենտում: Սիրիայում պառլամենտի մյուս հայ անդամներն էին դեմոկրատ գործիչ Մովսես Սալաթյանը և անկուսակցական Նազարեթ Յագուպյանը, իսկ Լիբանանում՝ նույնպես անկուսակցական Հրաչյա Շամլյանը:

Պառլամենտական ընտրություններից անմիջապես հետո սկսվեց Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության պայքարի վճռական փուլը:

1943 թ. նոյեմբերի 8-ին Լիբանանի պառլամենտը վերանայեց սահմանադրության այն հոդվածները, որոնք հակասում էին ազգային անկախությանը: Առաջին հոդվածը վերաշարադրվեց հետևյալ ձևով. «Լիբանանն անկախ, միասնական և սուվերեն պետություն է»: Վերաշարադրված 52-րդ հոդվածով միջազգային պայմանագրեր կնքելու իրավունք ուներ Հանրապետության նախագահը: Արաբերենը հռչակվեց պետական լեզու և այլն: Լիբանանի պառլամենտի այդ պատմական որոշումների օգտին քվեարկեցին 50 դեպուտատներ, այդ թվում հայկական համայնքի երկու դեպուտատներից մեկը՝ Հրաչյա Շամլյանը[1]: Մյուսը՝ դաշնակցական Մովսես Տեր Գալուստյանը և չորս արաբներ մերժեցին մասնակցել քվեարկությանը: Հայ դեպուտատի այդ անպատասխանատու քայլը, որը կատարվել էր ֆրանսիական գաղութարարներին դուր գալու նպատակով, առիթ տվեց, որպեսզի հենց ֆրանսիական գործակալները փորձեն վերստին պղտորել հայ-արաբական հարաբերությունները:

Ֆրանսիական իմպերիալիստները, մերժելով սահմանադրության վերանայման օրինականությունը, զինվորական հսկողություն հաստատեցին պառլամենտի շենքի վրա: Նոյեմբերի 11-ին դեպուտատները մտան պառլամենտ և այդ արտահերթ նիստում ընդունեցին դատապարտության բանաձև ֆրանսիական իմպերիալիզմի դեմ: Պառլամենտի այդ որոշմանը ֆրանսիական իմպերիալիստները պատասխանեցին բռնությամբ: Նույն գիշերը ձերբակալվեցին և Ռաշայայի բերդում արգելափակվեցին Լիբանանի Հանրապետության նախագահ Բեշարա ալ-Խուրին, պրեմիեր մինիստր Ռիադ Սոլհը և մի շարք մինիստրներ: Հանրապետության նախագահ նշանակվեց ֆրանսիական կողմնորոշման ծառայող էդդեն և կազմվեց նոր կառավարություն, որը, սակայն, չարժանացավ ժողովրդի հավանությանը:

Նոյեմբերի 13-ին գործունեության ասպարեզ իջավ մի նոր ուժ՝ Լիբանանի ազգային համագումարը, որը համախմբում էր ազգային ան-

կախության պաշտպան համարյա բոլոր կուսակցությունների և խմբակցությունների ներկայացուցիչներին։ Նրա 44 անդամներից 3-ը հայեր էին։ Հարություն Մադեյանը ներկայացնում էր հայ կոմունիստներին, Մկրտիչ Մսըրլյանը՝ ռամկավար ազատական կուսակցությանը և Լևոն Ալթունյանը՝ լիբանանահայ Վերածնունդ միությանը[2]։ Դաշնակցությունը և ս.—դ. հնչակյան կուսակցությունը չէին մասնակցում Լիբանանի ազգային համագումարին[3]։

Լիբանանի ազգային համագումարը կոչ արեց ժողովրդին՝ բոյկոտի ենթարկել ֆրանսիական իմպերիալիզմի դրածոներին, պաշտպանել ազգային կառավարությունը, որի մի շարք անդամներ դինված դիմադրություն էին պատրաստում Լեռնային Լիբանանի Բշամուն գյուղում։ Բեյրութում հայտարարվեց ընդհանուր գործադուլ և տեղի ունեցան հակաիմպերիալիստական ցույցեր, որոնց մասնակցում էին նաև հայ աշխատավորները։ Խալեդ Բեկդաշը գրում էր. «Հազարավոր իսլամ, քրիստոնյա, դրուզ, հայ ցուցարարները կողք-կողքի կքալեին առանց մեկը մյուսի դավանանքը իմանալու, առանց որևէ կրոնական բացականչության. այս կամ այն համայնքի կեցցեները միայն ու միայն ուղղված էին հայրենիքին, անկախության, սահմանադրության և դրոշակին»[4]։

Ֆրանսիական իմպերիալիստները ապարդյուն փորձեցին քրիստոնյա-իսլամական հակամարտություններ հրահրել և ցույցերը վերածել ազգամիջյան կռվի։ Այս անգամ էլ ծրագրվել էր, ինչպես գրում էր Ազգային համագումարի օրգանը, քավության նոխազ դարձնել հայերին. «խառնակիչները լուրեր տարածեցին այն մասին, որ իբր մեր կառավարությունը նախօրոք պատրաստած ծրագրի համաձայն, որոշել է հայերին ղրկել լիբանանյան քաղաքացիությունից։ Քիչ էր մնում, որ մեր հայ եղբայրները հավատային այդ ստին, եթե նրանց ղեկավարները չփարատեին այն, չդիմակազերծեին նրա հեղինակներին և հայ ժողովրդին չհրավիրեին եղբայրանալ Լիբանանի ժողովրդի հետ»[5]։

Այնուամենայնիվ նոյեմբերի 20-ին Ազգային համագումարը մի պատվիրակություն է ուղարկել Անթիլիաս՝ Տանն Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ Խաղ արք. Աջապահյանին հավաստիացնելու, որ ոչ մի համայնք չի իրավազրկվելու մի ուրիշ համայնքի օգտին։ Իր հերթին, տեղապահը պատվիրակությանը հավաստիացրել է, որ «հայ և արաբ ժողովուրդներու եղբայրակցությունը անքակտելի է և այդպես էլ պիտի մնա»[6]։

Ի վերջո, ֆրանսիացիները գործի դրին ղորքերը՝ գործադուլը ճնշելու համար։ Կրակ բացվեց ցուցարարների վրա։ Որոշ վայրերում ցույ-

ցերը վերածվեցին փողոցային մարտերի, եղան սպանվածներ և վիրավորներ։ Այնուամենայնիվ միջազգային հասարակայնության կարծիքի ճնշման ներքո ֆրանսիական իմպերիալիստները ստիպված էին զիջումներ կատարել։ Նոյեմբերի 22-ին գեներալ Կատրուն պաշտոնապես ճանաչեց Լիբանանի ազգային անկախությունը։

Նոյեմբերի 23-ին Ազգային համագումարի մի բազմանդամ պատվիրակություն վերստին այցելեց Անթիլիասի կաթողիկոսարան, շնորհակալություն հայտնելու «այն ազնիվ դիրքի համար, որ հայ համայնքի զավակները որդեգրեցին Լիբանանի ազգային դատի հանդեպ»[7]։ Հաջորդ օրը Լիբանանի նախկին պրեմիեր մինիստր Ահմեդ Դաուքի բնակարանում տեղի ունեցավ հայկական համայնքի ներկայացուցիչների (Գրաեգին Թապուրյան, Հովսեփ Ենիգոմշույան, Հովհաննես Ազբաշյան և ուրիշներ) հանդիպումը Ազգային համագումարի անդամների հետ։ Այդ հանդիպման ժամանակ փոխանակված ճառերը լայն արձագանք գտան արաբական մամուլում։ «Բեյրութ» թերթը «Աստված պահե մեր հայ եղբայրները» վերնագրի տակ գրել է. «Մենք իսկապես հիացած ենք մեր հայ եղբայրներուն ղգացումներուն վրա»[8]։

Լիբանանի հանրապետության նախագահ Բեշարա ալ-Խուրին, պրեմիեր մինիստր Ռիադ Սոլհը և բազմաթիվ այլ պետական գործիչներ պատշաճը մատուցեցին հայերին։ Նոյեմբերի 30-ի պրեսկոնֆերանսում Ռիադ Սոլհը հայտարարել է. «Ես հայերու ներկայությունը այս երկրին մեջ կընդունիմ դրկաբաց և առանձին հաճույքով։ Անոնք այս երկրի անկախությունը գուցե մեզմե ավելի լավ պաշտպանեն, որովհետև անոնք երկար ժամանակ ապրած են բռնության տակ, պայքարած և զոհված են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը։ Իմ կառավարության սիրտը բաց է հայերու համար։ Ես պիտի ընեմ այն, ինչ որ հարկավոր է, որպեսզի հետ այսու անոնք ավելի լայնորեն մասնակցին կառավարական գործերուն»[9]։

Դեկտեմբերի 7-ին Լիբանանի հանրապետության նախագահ Բեշարա ալ-Խուրին այցելեց Բեյրութի հայոց առաջնորդարան, որտեղ նրան ընդունեցին կաթողիկոսական տեղապահ Խադ արք. Աջապահյանը և հայկական համայնքի ներկայացուցիչները։ Փոխանակվեցին ճառեր։ Ի պատասխան թեմակալ առաջնորդի ուղերձին, հանրապետության նախագահը, դրվատելով հայերի հավատարմությունը Լիբանանի ազգային դատի նկատմամբ, ասել է. «Լիբանանի հայ համայնքը մեկ անբաժան մասն է լիբանանյան ազգության»[10]։

Ազգային անկախության պայքարն այլ կերպ ընթացավ Սիրիայում։ Նոյեմբերի 28-ին Սիրիայի պառլամենտը սահմանադրության հանեց 116-րդ հոդվածը[11], սակայն ֆրանսիական իմպերիալիստներն արդեն ի վիճակի չէին ուժ գործադրելու[12] և ճանաչեցին Սիրիայի ազգային անկախությունը։

Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության պայքարի այդ նոր փուլն եղրափակվեց Ազատ-Ֆրանսիայի, Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչների՝ 1943 թ. դեկտեմբերի 22-ի համատեղ հայտարարությամբ։ Նրանում ասված էր, որ Ֆրանսիան համաձայնվել է 1944 թվականի մայիսի 1-ից ազգային կառավարություններին փոխանցել իշխանությունը։ Եվ իրոք, մինչև 1944 թ. վերջերը փոխանցվեցին մաքսատան, նավահանգստի, փոստահեռագրական, լուսավորության և այդ կարգի մի շարք գերատեսչություններ։ Սակայն ձգձգվում էր հատուկ զորամասերի[13] փոխանցումը։ Ինչ վերաբերում է ֆրանսիական զորքերի դուրս բերմանը, ապա այդ հարցը մնում էր առկախ, մինչև անգամ չէր դրվել օրակարգում։

Ֆրանսիական իմպերիալիստները հատուկ զորամասերի փոխանցումը պայմանավորում էին անիրավահավասար պայմանագրի կնքման հետ։ Սակայն ազգային կառավարությունները ոչ միայն չընտրեցին կոմպրոմիսի ուղին, այլև միջոցներ ձեռք առան որպեսզի ամրապնդեն Սիրիայի և Լիբանանի ազգային անկախությունը։

1945 թ. հունվարին Սիրիայի կառավարությունը որոշում ընդունեց ազգային նոր բանակ ստեղծելու մասին։ Հունվարի 13-ին այդ որոշումը արժանացավ պառլամենտի հավանությանը։ Նույն օրը ողջ Սիրիայում սկսվեց ընդհանուր գործադուլ, և ժողովրդական զանգվածներն առանց ազգի և կրոնի խտրության հանդես եկան ազգային բանակ կազմելու օգտին։ Հայ ժողովրդի աշխատավոր զավակներն աշխույժ մասնակցություն ունեցան այդ ելույթներին։ «Ժողովուրդի ձայնը» գրում էր. «Հայի և արաբի, իսլամի և քրիստոնյայի արհեստական թշնամություններ առաջացնել փորձողները դարձյալ ձախողեցան իրենց նպատակներուն մեջ»[14]։

Դժվար դրության մատնված իմպերիալիստներն ազգային կառավարություններին առաջարկեցին բանակցությունները վերսկսել հատուկ զորամասերի փոխանցման և ֆրանսիական զորքերի դուրս բերման հարցերի շուրջը։ Սակայն դա հերթական կեղծիք էր։ Նրանց նպատակն էր՝ ժամանակ շահել։ Եվ իրոք, 1945 թ. մայիսին, երբ համայն աշխարհն արդեն տոնում էր ֆաշիզմի դեմ հաղթանակը, ֆրանսիական իմպե-

բրիտանիստները Սիրիա և Լիբանան ուղարկեցին ցամաքային և ծովային նոր ուժեր։ Բացի այդ, մայիսի 18-ին ազգային կառավարություններին հանձնվեց պայմանագրի մի նախագիծ, որով Ֆրանսիային իրավունք էր տրվում այդ երկրներում ունենալ օդային, ծովային և ցամաքային ռազմական բազաներ և այլն։

Սիրիան և Լիբանանը վերստին ալեկոծվեցին։

Մայիսի 20-ին հրապարակվեց Լիբանանի կոմունիստական կուսակցության կոչը՝ ուղղված հայ ժողովրդին։ Նրանում ասված էր. «Օտար հետադիմության հաշվույն աշխատող տարրերը, որոնք միշտ պղտոր ջուրին մեջ ձուկ որսալը արհեստ ըրած են, կփորձեն միտքերը պղտորել, քրիստոնյան և իսլամը, հայն ու արաբը իրարու դեմ հանել, յուրաքանչյուրին այնպես հավատացնել փորձելով, թե այս շարժումը իրեն դեմ ուղղված է։ Իրենց խառնակիչ այս հերյուրածո սուտերով ֆաշիստ-իմպերիալիստական շրջանակները կձգտին պառակտել ժողովուրդի պայքարի միասնականությունը, փոխադարձ անվստահության և անապահովության մթնոլորտ ստեղծել երկրին բաղկացուցիչ տարրերուն միջև և այսպիսով Լիբանանի ազգային պայքարը շեղեցնել իր նպատակեն։

«Հայ ժողովուրդ,

«Լիբանանի արաբ ժողովուրդը ոչ մեկ թշնամություն ունի հայ ժողովուրդին հանդեպ։ Ընդհակառակը, անիկա տոգորված է բարեկամական լավագույն զգացումներով և կհավատա թե հայ ազատասեր ժողովուրդն ալ իրեն պես կխորհի։

«Մենք վստահ ենք, թե ինչպես անցյալին, նույնպես ներկայիս, հայ ժողովուրդը ձախողության պիտի մատնե ամեն գույնի գրգռիչներու դավադրությունները։ Հայ ժողովուրդը, գիտակից իր ազգային ապահովության շահերուն, գիտակից թե Լիբանանի ժողովուրդին հացի և ազատության համար մղած պայքարը իր ալ պայքարն է, պիտի շարունակե տեղացի ժողովուրդին հետ հաշտ ու խաղաղ ապրելու իր հետաքես և իմաստուն քաղաքականությունը»[15]։

Հայ աշխատավորները լայն մասնակցություն բերեցին մայիսի 19—30-ին Բեյրութում ծավալված գործադուլներին և ցույցերին, որոնց նպատակն էր՝ ամրապնդել Լիբանանի ներկայացուցիչների դիրքերը՝ հատուկ զորամասերի փոխանցման վերաբերյալ բանակցություններում։ Լիբանանի ազգային համագումարի առաջարկով, հայ կոմունիստները, հնչակյան և ռամկավար կուսակցությունները ներկայացուցիչներ են նշանակել գործադուլները կազմակերպող հանձնաժողովներում։ Մեծ մասամբ հայերից էին կազմված հայաբնակ թաղերի՝ Բուրջ-Համուդի,

Նոր Հաճընի, Մար-Մխայիլի, Մեղավարի և այլ վայրերի գործադուլային հանձնաժողովները։

Մինչ ֆրանսիական իմպերիալիստները նոր զորքեր էին բերում Սիրիա, ազգային կառավարությունն առաջ էր տանում սեփական բանակ ստեղծելու աշխատանքները։ Դամասկոսում, Հալեպում և մյուս քաղաքներում գործում էին կամավորների հավաքագրման հատուկ կայաններ։ Հայ աշխատավորներն էլ դիմում էին «ազգային նորակազմ բանակին մեջ կամավորագրվելու համար»։ Հալեպում հայերի կամավորագրմանը նպաստում էր ազգային թեմական իշխանությունը։ Արաբական «Անվնասներ» թերթը հիշատակում է մի կոչ, որով Հալեպի հայոց թեմական առաջնորդը «ֆրանսիական բանակի հայ զինվորներին և պաշտոնյաներին թելադրում էր անմիջապես հրաժարվել և ծառայության մեջ մտնել ազգային բանակում»[16]։

Մայիսի 25-ին Դամասկոսի ազգային ղավառական ժողովը, արտահերթ նիստ գումարելով, միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը։ «Սուրիո հայ ժողովուրդը որպես սուրիական քաղաքացի և իր քաղաքացիական պարտականության գիտակից, ներկա տագնապալի օրերուն, իրեն համար նվիրական պարտք կհամարե հայտարարել թե հայ զանգվածը Սուրիո ազգային կառավարության կբերե իր բովանդակ գործակցությունն ու զոհողությունը զորս կպահանջե օրվան կացությունը, և իր բոլոր մտածումներն ու գործունեությունը կհիմնե այս սկզբունքին վրա»[17]։

Մայիսի 29-ին Դամասկոսում ֆրանսիական տանկերն ու զրահապատ մեքենաները կրակ բացեցին ցուցարարների վրա, ռմբակոծեցին պառլամենտի շենքը, ըմբոստ թաղերը։ Ոտքի էին ելել բոլորը՝ ով կարող էր զենք կրել։ Ֆրանսիական զորքի հետ ընդհարումներ տեղի ունեցան նաև Հալեպում, Հոմսում, Համայում, Ջեբել Դրուզում և այլ վայրերում։ Ապստամբությունը կշարունակվեր, եթե չմիջամտեին արտաքին ուժերը։ Բողոքի ձայն բարձրացրին Եգիպտոսը, Իրաքը և մյուս արաբական երկրները։ Սովետական Միության կառավարությունը մեծ պետություններին կոչ արեց միջոցներ ձեռք առնել Սիրիայի և Լիբանանի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար։

Այդ բոլորից հետո ֆրանսիական իմպերիալիստները ստիպված էին հատուկ զորամասերը փոխանցել ազգային կառավարություններին, սակայն ֆրանսիական և անգլիական զորքերի դուրսբերման հարցը դեռևս մնում էր առկախ։

1945 թ. դեկտեմբերի 13-ին Լոնդոնում կնքվեց Մերձավոր Արևելքի վերաբերյալ անգլո-ֆրանսիական համաձայնագիրը, որտեղ ասված էր. «(Ֆրանսիական և անգլիական զորքերի) էվակուացման ծրագիրը պետք է կազմվի այնպես, որ ապահովվի Մերձավոր Արևելքում բավարար քանակությամբ զորքերի պահպանումը մինչև այն ժամանակ, երբ Միավորված ազգերի կազմակերպությունը կորոշի կոլեկտիվ անվտանգության կազմակերպել այդ գոտում»: Դա, փաստորեն նշանակում էր անգլո-ֆրանսիական համատեղ տիրապետություն հաստատել Սիրիայում և Լիբանանում:

1946 թ. փետրվարի 4-ին Սիրիայի և Լիբանանի ազգային կառավարությունները բողոքեցին ՄԱԿ-ին: Երեք օր շարունակ նրանց բողոքը քննարկվեց Անվտանգության խորհրդում: Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները մինչև վերջն էլ հակադրվեցին Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների արդար պահանջներին: Նրանց օգնության փութաց նաև ԱՄՆ-ը: Սովետական Միության պատվիրակը հանդես եկավ Սիրիայից և Լիբանանից օտարերկրյա զորքերի անմիջապես և առանց պայմանի դուրսբերման օգտին:

Անվտանգության խորհրդում փաստորեն ոչ մի բանաձև չընդունվեց, սակայն անգլո-ֆրանսիական իմպերիալիստները չէին կարող այլևս տեղի չտալ: Ապրիլի 17-ին Սիրիայից, իսկ այդ տարվա վերջում՝ Լիբանանից դուրս բերեցին իրենց զորքերը:

Դրանով զարգացման նոր փուլ սկսվեց Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների պատմության մեջ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

Քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներն ապրում էին բավական աշխույժ մշակութային կյանքով: Գործում էին բազմաթիվ քառամյա, վեցամյա նախակրթարաններ, միջնակարգ դպրոցներ, մի քանի տասնյակ մշակութային միություններ, լույս էին տեսնում պարբերական մամուլ, գրական և դիտական աշխատություններ, կազմակերպվում էին հայ ժողովրդի գրականության և պատմության ամենատարբեր հարցերին նվիրված դասախոսություններ, հանդիսավոր կերպով նշվում էին տարեդարձեր, դարադարձեր, մշակույթի անվանի գործիչների հոբելյաններ և այլն: Գնալով աշխուժանում էր նաև թատերական և երաժշտական կյանքը, հանդես էին գալիս երիտասարդ նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ:

Սփյուռքահայ մյուս գաղթօջախների նման Սիրիայի և Լիբանանի հայ մշակույթի բնորոշ գծերից էր կուսակցական և հարանվանական ազդեցության գոտիների բաժանվածությունը: Ազգային կուսակցություններից և կրոնադավանական համայնքներից յուրաքանչյուրը ուներ իր դպրոցները, իր մշակութային միությունները, իր պարբերական մամուլը և այլն, որոնք խստորեն սահմանազատված էին և չէր կարող խոսք լինել նրանց համագործակցության մասին: Այդ վիճակը, հանգեցնելով ուժերի և միջոցների ցրմանը, բացասաբար էր անդրադառնում հայ մշակույթի զարգացման վրա:

Բացի այդ, սիրիահայ և լիբանանահայ մշակույթի բնականոն զարգացմանը խոչընդոտում էին ֆրանսիական իմպերիալիստները: Ինչպես արաբ, այնպես էլ հայ դեմոկրատական մշակույթը զրկված էր զարգացման ամենատարրական հնարավորություններից: Առաջադիմական մտավորականները հալածվում էին, դեմոկրատական մամուլը լույս էր

ընծայվում ընդհատակում և այլն։ Մշակույթի համարյա բոլոր բնագավառները գտնվում էին ֆրանսիական գրաքննիչների վերահսկողության ներքո։

1. ԴՊՐՈՑՆԵՐԸ

Հայ գաղթականները դեռևս չէին բուժել պատերազմից ստացած իրենց խոր վերքերը, երբ սկսեցին հոգալ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության մասին։ Օտարները զարմանքով են պատմում, որ հայ գաղթականները «նույնիսկ թշվառության օրերին» շարունակում էին իրենց «մշակութային կյանքն ու գործունեությունը։ Պետրոսի մեջ անմիջապես որ գտան պատսպարվելու ամենանախնական միջոցը, այսինքն վրաններ լարել, ուղեցին իրենց դպրոցը ունենալ...։ Հսկա վրան մը ճարվեցավ... և վերածվեցավ դպրոցի, ուր 500 գաղթական փոքրիկներ հավաքվեցան։ Բացի դպրոցներե, բավական թվով մշակութային և երիտասարդական կազմակերպություններ ծնունդ առին գաղթականներե ներս»[1]։ 1922—1923 թթ. հայկական դպրոցներ գործում էին Սիրիայի և Լիբանանի համարյա բոլոր այն քաղաքներում ու գյուղերում, որտեղ բնակություն էին հաստատել թեկուզ փոքրաթիվ հայեր։

Այդ հանրակրթական դպրոցներին կանխել էին որբանոցները, որոնք միաժամանակ կրթական օջախներ էին։ Հայ ժողովրդի դժբախտացած բազմահազար զավակները սովորում էին ո՛չ միայն արհեստներ։ Մեծ մասամբ հայերից բաղկացած մանկավարժական կազմը նրանց զինում էր մայրենի լեզվի իմացությամբ և առօրյա կյանքում անհրաժեշտ տարբեր գիտելիքներով։ 1925—1926 թթ. որբանոցները փակվեցին, բացառությամբ այն հաստատությունների («Թռչնոց բույն», կուրանոց և այլն), որտեղ պատսպարված էին սահմանափակ թվով հաշմանդամ, անպաշտպան որբեր։

Սիրիայում առաջինը սկսեց գործել Հալեպի Ներսեսյան դպրոցը, որը փակ էր մնացել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Այնուհետև մեկը մյուսի հետևից հանդես եկան բազմաթիվ դպրոցներ, որոնք մեծ մասամբ արդյունք էին հայրենակցական միությունների նախաձեռնությանը և կազմակերպված էին համայնքային հիմունքներով։ 1924—1925 թթ. Հալեպում գործում էին 19 հայկական դպրոցներ, որոնցից 10-ը պատկանում էին հայ առաքելական, 5-ը հայ ավետարանական և 4-ը՝ հայ կաթոլիկ համայնքին[2]։ №№ 6, 7 և 8 աղյուսակներում[3] ամփոփված տվյալները ընդհանուր պատկերացում են տալիս հալեպահայ դպրոցական գործի ծավալի մասին։

Հայ առաքելական համայնքի դպրոցներ	1924—1925 թթ.		
	Աշակերտների թվաքանակը	դասատուներ	բյուջէ օսմ. ոսկի
1. Կիլիկեցի դաղթականների երկսեռ վարժարան (Նախկին Ներսեսյան)	1150	33	1950
2. Ազգային Հայկազյան » »	900	31	2400
3. Այնթապի կրթասիրաց միություն » »	487	16	830
4. Ազգային Մեսրոպյան » »	300	9	150
5. Խարբերդի դաղթականաց » »	300	6	350
6. Մալաթիայի » »	100	5	200
7. Ուրֆայի » »	100	3	100
8. Զարսանջաքի ուսումն. միութ. » »	110	5	208
9. Արմենյան » »	80	4	55
10. Դատեմի հայրենակց. միության » »	50	1	—
Ընդամենը	3577	113	6243

1927—1928 թթ. Հալեպում կազմակերպվել են երեք նոր դպրոցներ. առաջինը՝ Սահակյան երկսեռ վարժարանը, որտեղ սովորում էին շուրջ 200 երեխաներ, հիմնադրվել է օտարազգի հայասեր Կարեն Էպպեի միջոցներով։ Երկրորդը՝ քեմալի Ներսեսյան վարժարանը, որն ուներ շուրջ 250 աշակերտ[4], և երրորդը՝ Հալեպի կենտրոնական միջնակարգ վարժարանը (տնօրեն Խորեն Գաբիկյան), որը, սակայն խիստ կարճատև կյանք է ունեցել միջոցների անբավարարության հետևանքով[5]։

Այդ բոլոր դպրոցները գործում էին կամ վրանների ապակ կամ էլ վարձովի, անհարմարավետ շենքերում։ 1923 թ. Հալեպից հաղորդում էին. «Ամենամեծ ամոթ մըն է վարժարանի հարմարազուրկ շենքի մը չգոյությունը։ Ըլլա Ազգային, ըլլա Կիլիկյան վարժարանին մեջ տղաքը սոսկալի կերպով խճողված, օդե և լույսե զուրկ սենյակներուն մեջ կաշկանդված՝ բանտի կյանք կանցնեն»[6]։ Այդ երկու դպրոցների շենքերի վարձը կազմում էր մի բավական մեծ գումար՝ 450 օսմ. ոսկի։

Դպրոցներում ուսումն անվճար չէր, սակայն շատ քիչ թվով ծնողներ միայն կարող էին թեկուզ մի չնչին գումար վճարել որպես ուսման վարձ։ Յուրաքանչյուր դպրոցի հոգաբարձու մարմին պարտավոր էր անվերջ հանգանակություն կատարել տարեկան բյուջեն հավասարա-

կշռելու համար։ Սակայն միշտ չէ, որ հաջողությամբ պսակվում էին նրանց ջանքերը։ Օրինակ՝ 1924—1925 թթ. տարեշրջանում Կիլիկիայի գաղթականաց դպրոցի բյուջեն տվել է 520, Հայկազյանինը՝ 480, Զարսանջաքի ուսումնասիրացինը՝ 208, Այնթափի կրթասիրացինը՝ 65 օսմ. ոսկի բաց[7]։ 1925 թ. Հալեպից հաղորդում էին, որ մի շարք դպրոցներ «նյութական տագնապալի շրջան մը կանցնեն, ... 4—5 ամիսե ի վեր չեն կրցած ուսուցիչներուն ամսաթոշակ վճարել»[8]։ 1926 թ. մի քանի դպրոցներ ամիսներ շարունակ փակ են մնացել...

Աղյուսակ № 7

Հայ ավետարանական համայնքի դպրոցներ	1924—1925 թթ.		
	Աշակերտների թվաքանակը	դասատուների թվաքանակը	բյուջե օսմ. ոսկի
1. Հայ ավետարանական երկսեռ վարժարան	315	11	550
2. Հայ ավետարանական երկսեռ վարժարան (քեմպում)	231	5	200
3. Ուսումնասիրաց երկսեռ վարժարան (քեմպում)	146	5	200
4. Հայ ավետարանական (արական) բարձրագույն վարժարան (American Boys High School) .	135	11	1300
5. Հայ ավետարանական (իգական) բարձրագույն վարժարան (American Girls High School) .	123	10	1200
Ընդամենը	950	42	3450

Վերջին երկու դպրոցում ուսանում էին նաև արաբ և այլ ազգության պատանիներ, սակայն սովորողների ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը։ Այդ պատճառով նրանց ուսուցիչները մեծ մասամբ հայեր էին։ 1926 թ. առաջինում պաշտոնավարում էին մեկ ամերիկացի, երեք արաբ, ութ հայ, իսկ երկրորդում՝ երեք ամերիկացի, մեկ արաբ և ութ հայ դասատուներ[9]։ Ինչպես այդ երկու, այնպես էլ մյուս ավետարանական դպրոցները, ֆինանսավորվելով ամերիկյան Բորդ ընկերության կողմից, անհամեմատ ավելի լավ էին մատակարարվում, քան հայ առաքելական համայնքի դպրոցները։

Հայ կաթոլիկ դպրոցներն ապահովված էին դպրոցական հարմարավետ շենքերով և մանկավարժական որակավոր կադրերով։ Նրանց դրա-

մական օգնություն էին տալիս Վատիկանը, ֆրանսիական կառավարությունը և զանազան կոնգրեկացիաներ։

Աղյուսակ № 8

Հայ կաթոլիկ համայնքի դպրոցներ	1924—1925 թթ.		
	աշակերտ. թվաքանակ	դասատու. թվաքանակ	բյուջե օսմ. ոսկի
1. Հայ կաթոլիկ (արական) բարձրագույն վարժարան (College Armeno-Catholic Sacre-coeur (....	500	30	4000
2. Հայ կաթոլիկ (արական) ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարան	300	10	
3. Հայ կաթոլիկ (իգական) բարձրագույն վարժարան՝ (Անարատ Հղության քերց)	200	15	
4. Հայ կաթոլիկ (իգական) Սրբուհի Աննայի (Անարատ Հղության քերց)	200	8	
Ընդամենը	1200	63	4000

Որոշ թվով (հավանաբար 100—120) հայ երեխաներ սովորում էին ամերիկյան (American Presb. Mission School) և այլ օտար դպրոցներում։

Բազմաթիվ հայկական դպրոցներ էին գործում Սիրիայի մյուս քաղաքներում և գյուղական վայրերում։

Ալեքսանդրետի սանջակում կային պետական և «մասնավոր» (այսինքն համայնքային) դպրոցներ։ 1928—1929 թթ. պետական 66 դպրոցներից 44-ը թուրքական էին, 18-ը արաբական և միայն 4-ը հայկական[10]։ Սա երկրամասի արաբների և հայերի նկատմամբ կիրառվող բացահայտ խտրականության արդյունքն էր։ 1935—1936 թթ. որոշ «ուղղում» մտցվեց՝ ոչ-թուրքական ազգաբնակչությանը սիրաշահելու համար։ Պետական դպրոցների թիվը բարձրացվեց 70-ի, որը բաժանվեց հետևյալ ձևով. 35 թուրքական, 28 արաբական և 7 հայկական, որոնցում ընդգրկված էին համապատասխանաբար 2923, 2311 և 475 աշակերտներ։ Դրանով սակայն խտրականությունը չվերացվեց։ Լուսավորության բնագավառի հատկացումների (1.732.720 ֆր.) առյուծի բաժինը (1.030.390 ֆր.) տրվում էր թուրքական, մնացյալը՝ 702.330 ֆր. արաբական և հայկական դպրոցներին[11]։

Պետական յոթ դպրոցները չէին կարող նույնիսկ մասամբ բավարարել Սանջակի հոծ հայության կրթական կարիքները։ Ուստի հայերը

կազմակերպել էին 32 ազգային վարժարաններ, որոնցում սովորում էին 3064 երկսեռ երեխաներ[12]: Դրանցից առավել կարևորներն էին Ալեքսանդրետի Նուպարյան, Ջեբել Մուսայի Սիսուան և մի քանի այլ դպրոցներ, որոնք հիմնականում ֆինանսավորվում էին Հ. Բ. ընդհ. միության կողմից: Նուպարյան դպրոցը հիմնադրվել էր 1922—1923 թթ. և անխափան գործեց մինչև Ալեքսանդրետի սանջակի կցումը Թուրքիային: Այնտեղ սովորողների թվաքանակը տատանվում էր 300—350-ի միջև[13]:

Ջեբել Մուսայի վեց գյուղերից յուրաքանչյուրն ուներ իր դպրոցը: 1924 թ. «Արև»-ին հաղորդում էին. «Երեք տարիե ի վեր Սվեդիո վեց հայաբնակ գյուղերուն մեջ բացված են «Սիսուան» անունով նախակրթարաններ»[14]: Այդ դպրոցներում սովորում էին ավելի քան 300 երեխաներ:

Քեսապում մատաղ սերնդի ուսումնադաստիարակչական գործի գլուխ կանգնած էր Ուսումնասիրաց ընկերությունը: 1924 թ. նրա ջանքերով ստեղծվեց մի բարձրագույն նախակրթարան, որը 1928 թ. օժտվեց սեփական հարմարավետ շենքով: Հետագայում իրենց դռները բացեցին հայ ավետարանական, հայ կաթոլիկ համայնքների և Հ. Բ. ընդհ. միության դպրոցները: 1930-ական թթ. Քեսապում գործում էին յոթ (ներառյալ լատին միսիոնարների դպրոցը) նախակրթարաններ, ուր ընդգրկված էին շուրջ 400 երեխաներ[15]:

Հայկական դպրոցներ կային նաև Անտիոքում, Ռիհանիեում, Կըրքխանում և նրանց մերձակա գյուղերում: Այդ դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էին 70—80 երեխաներ, և նրանց բոլոր ծախսերը հոգում էին «ժողովուրդի տված լումաներով»[16]: Եկամտի ուրիշ աղբյուր չունեին:

Մի շարք հայկական դպրոցներ գործում էին հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան Սիրիայի քաղաքներում և գյուղական վայրերում: Դրանցից կարևորագույնը Լատակիայի հայկական փոքրիկ համայնքի դպրոցն էր: 1924—1925 թթ. այդ դպրոցում սովորում էին շուրջ 200 երեխաներ[17]: 1920-ական թթ. վերջերից դպրոցական գործը աշխուժացավ Դեյր էզ-Զոր, Կամիշլի քաղաքներում և նրանց հարող Ռաս ուլ-Այն, Ռակկա, Հասիչե, Դերբեսիե և այլ գյուղական վայրերում:

Մինչև Ջեբել Դրուզի 1925—1927 թթ. ապստամբությունը, Դամասկոսում գործում էին ութ հայկական դպրոցներ, որոնցից երեքը պատկանում էին հայ առաքելական, երկուսը՝ հայ ավետարանական, մեկը

հայ կաթոլիկ համայնքներին, և երկուսը՝ լատինական կոնգրեգացիաներին։ Հայ ազգային երկսեռ վարժարանում սովորում էին 500, Այնթափի կրթասիրաց միության երկսեռ վարժարանում (Սուկ Սարուջա)՝ 110, հայ հառաջդիմասեր միության վարժարանում (Բաբ Մուսալլա)՝ 90, հայ ավետարանական դպրոցներում՝ 200, հայ կաթոլիկների օրիորդաց դպրոցում՝ 120, Ճիզվիտների ֆրանքո-արմենիեն դպրոցում՝ 162, լազարիստների դպրոցի հայկական բաժնում՝ 100, ընդամենը 1282 աշակերտ[18]։ 1925—1927 թթ. հայերի թվաքանակի անկման հետևանքով Դամասկոսի հայկական դպրոցների թիվը պակասեց։ Լատին միսիոնարների դպրոցները վերացան, իսկ հայ առաքելական համայնքի դպրոցները միավորվեցին։ 1930-ական թթ. Դամասկոսում գործում էին երեք հայկական դպրոցներ, որոնցում ընդգրկված էին շուրջ 5—600 երեխաներ։

Հայկական փոքրիկ դպրոցներ գործում էին նաև Համայում, Ջեբել Դրուզում և այլ վայրերում։ Համայի դպրոցն ուներ 40 աշակերտ և գոյատևում էր «60-ն ավելի կրթասերներու ամսական վճարումներով»[19]։

Աղյուսակում ամփոփված տվյալները ցույց են տալիս համայնքներից յուրաքանչյուրի բաժինը Սիրիայի հայ դպրոցական գործում։

Աղյուսակ № 9

	1924—1925					
	հայ առաքելական ազգային		հայ կաթոլիկ		հայ ավետարանական	
	դպրոցների թիվը	աշակերտների թիվը	դպրոցների թիվը	աշակերտների թիվը	դպրոցների թիվը	աշակերտների թիվը
1. Հալեպ քաղաք	10	3377	4	1110	5	950
2. Ալեքսանդրեթի սանջակ	39	3539	—	—	—	—
3. Հյուսիս-արևմտյան Սիրիա	1	200	—	—	—	—
4. Դամասկոս, Համա և այլն	5	780	1	120	2	200
Ընդամենը	55	7896	5	1230	7	1150

Աղյուսակի տվյալները խոսում են այն մասին, որ Սիրիայում հայ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործի հիմնական ծանրությունը ընկած էր հայ առաքելական համայնքի դպրոցների վրա։ Հետագա տարիներին ավելացավ հայ կաթոլիկ և ավետարանական դպրոցների թիվը, սակայն դա էական փոփոխություն չառաջացրեց։

Ինչպես Սիրիայում, այնպես էլ Լիբանանում հայկական առաջին հանրակրթական դպրոցները ստեղծվեցին գաղթականություններում։ 1922 թ. դասերը սկսվեցին Սին էլ Ֆիլի (Բեյրութ) Արամյան, Էշրեֆիեի (Բեյրութ) ավետարանական, Ջահլեի Պալըքճյան և մի քանի այլ դպրոցվրաններում։ 1923 թ. Բեյրութում շարք մտան ավետարանական և հայ կաթոլիկ համայնքների, իսկ նրա արվարձաններից Կարանտինայում Մեսրոպյան, Հաճընում Սահակյան ազգային դպրոցները[20]։ Այդ տարվա ընթացքում հայկական դպրոցներ բացվեցին Ալեյում (Նուպարյան), Ջյունիում (Արամյան), Ռայաքում և շրջանային այլ քաղաքներում[21]։ 1930 թ. Լիբանանում արդեն գործում էին 29 հայկական դպրոցներ, որոնցից 16-ը պատկանում էր հայ առաքելական, 8-ը հայ կաթոլիկ և 6-ը հայ ավետարանական համայնքին[22]։

Հայ կաթոլիկ և ավետարանական դպրոցների համեմատությամբ առաքելական համայնքի դպրոցները գտնվում էին վատթար պայմաններում։ «Ազդակ»-ը գրում էր. «Մեր հայ կաթոլիկ եղբայրները ... ունին հասութաբեր կալվածներ և Հռոմեն կատանան առատ նվեր։ Ամերիկացիք որոշ չափով կօգնեն մեր հայ բողոքական եղբայրներուն, իսկ մեր (առաքելական—Հ. Թ.) հայ վարժարանները զրկված են ամեն տեսակի արտաքին օժանդակություններե։ ... մեր 16 վարժարաններն ալ կրթական տարին կվերջացնեն բացերով։ Մեր ուսուցչությունը նվազագույն ամսականը կառնե և անոնցմե արժանավորագույնները գովելի եռանդով և անձնվիրությամբ կշարունակեն իրենց օգտակար գործը»[23]։

1932 թ. կենտրոնական քեմպի կամ ս. Խաչ եկեղեցու վրանաքաղաքի վերացման հետևանքով, հայ գաղթականների մի ստվար մասը տեղափոխվեց Անդր Նահրըի շրջանը։ Այդ առիթով որոշ փոփոխություններ են տեղի ունեցել Բեյրութի այդ խոշորագույն քեմպի դպրոցական կյանքում։ Նոր Մարաշի դպրոցն օժտվել է սեփական քարաշեն շենքով, իսկ Նոր Սիս, Թրաս, Սին էլ Ֆիլ թաղերում հաստատվել են փայտաշեն դպրոցներ՝ վարձովի հողերի վրա։

Աղյուսակում (№ 10) ամփոփված են տվյալներ Անդր Նահրըի կամ Բուրջ Համուդի այդ առաջին հինգ դպրոցների մասին[24]։

Լիբանանում հայ դպրոցական գործը դանդաղ, բայց անշեղ վերելք էր ապրում։ Ավելանում էր սովորողների թվաքանակը, ընդարձակվում էր դպրոցների ցանցը և, չնայած երկրում տիրող տնտեսական դժվար պայմաններին, գնալով բարելավվում էր նրանց վիճակը։ 1938—1939 թթ. Բեյրութում գործում էին 13, շրջանային քաղաքներում 15 ազգային դպրոցներ, որոնցում սովորում էին շուրջ 5000 երեխաներ[25]։ Այդ

Դպրոցների վայրը	1932 թ.		
	սովորողների թվաքանակը	դասատուների թվաքանակը	բյուջե լիր. լիրա
1. Նոր Մարաշ			
ա) նախակրթարան	90	4	1350
բ) մանկապարտեզ	141	3	
2. Ս. Լուսավորիչ թաղ			
ա) նախակրթարան	88	4	875
բ) մանկապարտեզ	80	1	
3. Թրատ			
ա) նախակրթարան	15	1	325
բ) մանկապարտեզ	30	1	
4. Նոր Սիս			
ա) նախակրթարան	15	1	250
բ) մանկապարտեզ	60	1	
4. Սին էլ Ֆիլ			
ա) նախակրթարան	10	2	129
բ) Մանկապարտեզ	22	1	
Ընդամենը	551	19	2929

դպրոցներից միայն 9-ը (շուրջ 2500 աշակերտ) ունեին անցյալի համեմատությամբ տանելի պայմաններ, իսկ մնացյալ դպրոցներում երեխաների վիճակը ուղղակի անտանելի էր. «Ազդակը» գրում էր. «Աշնանամուտի և գարնան տոթերուն կտառապին մեր նիհարակազմ հազարներու հասնող երեխաները թիթեղներու անշնչելի տաքեն, ձմրան պաղ հովերեն և փոթորկախառն անձրևներեն կամ շենքերու հատակի անշնչելի փոշիեն»[26]:

Համաշխարհային պատերազմի տարիներին Լիբանանի ազգային

Աղյուսակ № 11

Դպրոցական տարեշրջան	Սովորողների թվաքանակը	Բյուջե՝ լիր. լիրա
1940—1941	5600	—
1942—1943	6500	108.398
1943—1944	6036	180.000
1944—1945	6260	244.165
1945—1946	6880	288.030

դպրոցները վերելք ապրեցին։ Անընդհատ ավելանում էր սովորողների թվաքանակը, և առաքելական համայնքը մի բավական խոշոր գումար էր հատկացնում ծածկելու համար նրանց տարեցտարի աճող բյուջեն[27]։

Վերելք ապրեցին նաև հայ կաթոլիկ և ավետարանական համայնքների դպրոցները, սակայն, ինչպես Սիրիայում, այնպես էլ Լիբանանում հայ դպրոցական գործի հիմնական ծանրությունը կրում էր հայ առաքելական համայնքը։ Այդ մասին են վկայում աղյուսակում բերված տվյալները[28]։

Աղյուսակ № 12

Համայնքները	1950—1951		
	դպրոցների թիվը	սովորողների թվաքանակը	բյուջե՝ լիր. լիրա
1. Հայ առաքելական	28	6834	351.387
2. Հայ կաթոլիկ	11	2723	—
3. Հայ ավետարանական	12	2452	208.185

Մինչև 1939 թ. Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցների մեծագույն մասը քառամյա կամ տարրական նախակրթարաններ էին։ Մի քանի վեցամյա նախակրթարաններ կային Հալեպում, Բեյրութում և այլ քաղաքներում։ Հետագայում ստեղծվեցին ութամյա կամ բարձրագույն նախակրթարաններ։ Համարյա այդ բոլոր դպրոցներին կից գործում էին մանկապարտեզներ՝ քառամյա շրջանով։

Հայկական դպրոցներում սովորում էր դպրոցահասակ երեխաների միայն մի մասը։ Այսպես, 1924—1925 թթ. սիրիահայ երեք համայնքների 67 դպրոցներում սովորում էին ընդամենը 10.000-ից քիչ ավելի հայ երեխաներ, այն դեպքում, երբ այդ ժամանակ Սիրիայում ապրում էին ավելի քան 80.000 հայ գաղթականներ կամ 11.000 ընտանիք (մի ընտանիքում 7 շնչի հաշվով)։ Երկու ընտանիքից երեք դպրոցահասակ երեխա հաշվով Սիրիայի հայկական դպրոցները պետք է ունենային ավելի քան 16.000 սովորող։ Եթե նկատի ունենանք, որ հայ երեխաների խիստ աննշան մասն էր օտար դպրոց հաճախում, ապա կարող ենք եզրակացնել, որ Սիրիայի դպրոցահասակ հայ երեխաների առնվազն մեկ չորրորդը դպրոց չէր հաճախում։ Այդ երևույթն առավել կամ նվազ չափով տակա էր նաև Լիբանանում։

Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցներում սովորում էին մեծամասամբ աշխատավոր ընտանիքի երեխաներ։ Դպրոցների նպատակն

էր ոչ միայն հայը հայ պահպանելը, այլև պատրաստել բարեկիրթ, պիտանի մարդիկ, որոնք ընդունակ լինեն հայթայթելու իրենց օրվա ապրուստը հանրօգուտ աշխատանքով։ Այդ նպատակին պետք է համապատասխաներ դպրոցների ուսումնական ծրագիրը։

Հայ կաթոլիկ համայնքի դպրոցները հետևում էին ֆրանսիական, ավետարանականները՝ անգլիական և ամերիկյան համապատասխան դպրոցների ծրագրերին, իսկ հայ առաքելական համայնքի դպրոցները չունեին ուսումնական միասնական կայուն ծրագիր։ Սիրիայից «Արև»-ին հաղորդում էին. «Յուրաքանչյուր դպրոց անջատաբար ու անկախաբար իրեն հատուկ և ըստ իր վարչական մարմնին քմահաճույքին մասնավոր ծրագիր-կանոնագիր մը որդեգրած՝ իր ըմբռնած ու փափաքած ձևով ուսմունք ու դաստիարակություն կջամբե հայ նոր սերունդին»[29]։ Փորձեր եղել են, բայց այդպես էլ չի լուծվել, «այլևայլ վարժարաններու միացման և միևնույն ծրագրով ընթանալու ամենակարևոր հարցը»։ Ընդհուպ մինչև համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին ուսումնական կայուն ծրագրի բացակայությունը եղել է Սիրիայի և Լիբանանի ազգային դպրոցներից շատերի ամենախոցելի կողմը։

Դպրոցներում անցնում էին մի տասնյակից ավելի առարկաներ, սակայն առանձնահատուկ կարևորություն էր ընծայվում հայերեն լեզվի, հայոց պատմության, Հայաստանի աշխարհագրության և այլ հայագիտական առարկաների դասավանդմանը։ Բոլոր առարկաների դասավանդումը կատարվում էր հայերեն լեզվով։ Սա խիստ կարևոր էր այնքան ժամանակ, որքան հայկական կյանքում թուրքերեն լեզուն իր տեղը չէր զիջել մայրենի լեզվին։ (Ի դեպ, թուրքախոսության դեմ պայքարը տակավին շարունակվում էր երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին)։

Մատաղ սերնդի ուսումնադաստիարակչական գործի արդյունավետությանը խանգարում էր բարձրորակ դասագրքերի բացակայությունը։ Մայրենի լեզվի ուսուցումը երկար ժամանակ կատարվում էր Թուրքիայում պատրաստված «Մեղրագետ» (Ռուբեն Զարդարյան), «Գանձարան» (Ս. Անտոնյան) և այլ այդ կարգի իրենց դարն ապրած դասագրքերով։ Հայ երեխաները հայոց պատմություն էին անցնում հաճախ ժամանակավրեպ դասագրքերով, որոնցում ներբողվում էր օսմանյան սուլթանների «բարեխնամությունը» հայերի հանդեպ կամ արևշատության մաղթանքներ էին հղվում Ղազի Մուստաֆա Քեմալին և այլն։

Հայկական դպրոցներում անցնում էին արաբերեն, ֆրանսերեն,

անգլերեն, իսկ Ալեքսանդրետի սանջակում՝ նաև թուրքերեն։ Առաքելական և կաթոլիկ համայնքների դպրոցներում ավելի ուշադրություն էին դարձնում ֆրանսերեն, իսկ ավետարանական դպրոցներում՝ անգլերեն լեզվի ուսուցմանը։ Բոլոր դպրոցներում արաբերենի ուսուցումը գտնվում էր խիստ ցածր մակարդակի վրա։ Մինչև 1925 թ., օրինակ, Լիբանանի հայկական դպրոցներում արաբերեն լեզվի ուսուցումը պարզապես «դանց առնված էր», իսկ հետագայում «պարտավորիչ եղավ», սակայն միայն ազգային անկախության հասնելուց հետո դրվեց արժանավայել բարձրության վրա[30]։

Սիրիայում և Լիբանանում հայ դպրոցական գործին խանգարում էր հատկապես մանկավարժական որակավոր կադրերի պակասը։ Բացառելով սակավաթիվ արժանավորներին, դասատուները մեծ մասամբ պատահական, հաճախ այլ ասպարեզներում ձախողված մարդիկ էին։ «Հուսաբերը», նշում էր. «(Սանջակում) պատրաստված ուժեր չունինք, եղածները հարկ եղած պաշարը չունին ուսուցանելու համար»[31]։ Ալեքսանդրետի սանջակի դասատուներին վերաբերող այդ գնահատականը կարելի էր տարածել Սիրիայի և Լիբանանի հայ դպրոցների մեծագույն մասի վրա։

Սակայն նախակրթարաններով չէր սահմանափակվում դպրոցական գործը։ Սիրիայում և Լիբանանում գործում էին նաև մի քանի հայկական միջնակարգ դպրոցներ, կոլեջներ։ Դրանց առաջինը՝ Բեյրութի Համազգային ընկերության ճեմարանը հիմնադրվել է 1930 թ. մարտի 3-ին՝ Լևոն Շանթի և Նիկոլ Աղբալյանի նախաձեռնությամբ։ 1930-ական թթ. վերջերին Բեյրութում և Հալեպում շարք մտան Մխիթարյանների երկու երկրորդական կամ միջնակարգ դպրոցները։ Այդ և մյուս կոլեջ կամ լիցեյ կոչվող միջնակարգ դպրոցներում սովորում էին ընդամենը չորս-հինգ հարյուր երկսեռ պատանիներ։ Նրանց ուսումնական ծրագիրը կազմված էր ֆրանսիական երկրորդական դպրոցների (Ecole secondaire) հետևությամբ, սակայն կարևոր տեղը գրավում էին հայագիտական առարկաները։ Այդ դպրոցների շրջանավարտները մեծ մասամբ աշխատանքի էին անցնում ուսուցչական ասպարեզում, ոմանք էլ մասնակցում էին բակալավրյի քննություններին և, հաջողության դեպքում, ուսումը շարունակում ֆրանսիական, երբեմն էլ ամերիկյան համալսարաններում։

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում հայ դպրոցական կյանքը բավական աշխույժ էր Սիրիայում և Լիբանանում։ Գործում էին տարբեր համայնքների մի քանի տասնյակ հանրակրթական դպրոցներ,

որոնք, ակնբախ թերություններ ունենալով հանդերձ, կարևոր դեր էին կատարում մատաղ սերնդի կրթության գործում: Միջնակարգ դպրոցներն ընդգրկում էին սահմանափակ թվով սովորողներ: Հայկական դպրոցը հայապահպանման գլխավոր ապդակն էր:

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մինչև 1920-ական թթ. վերջերը Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների մշակութային կյանքի առանցքը կազմում էին Այնթափի, Մարաշի, Ադանայի, Խարբերդի, Թոմարզայի, Մալաթիայի, Արաբկիրի, Երզնկայի, Սեբաստիայի, Յոզկաթի, Ուրֆայի, Զեյթունի և այլ ավելի քան երեսուն հայրենակցական միությունները: Ինչպես Հալեպում, այնպես էլ Բեյրութում ստեղծվել էր միջհայրենակցական կենտրոնական վարչություն: Դրանք համակարգում և ղեկավարում էին այդ միությունների գործունեությունը:

Սկզբում բոլոր հայրենակցական միությունների հիմնական նպատակն էր՝ «հետզհետե բազմացող հայրենակիցներու եղբայրական ձեռք կարկառել և օգնել անոնց բարոյապես ու նյութապես՝ կարելի միջոցներով»[1]: Սակայն, հետագայում զգալի չափով ընդլայնվեց նրանց գործունեության ասպարեզը: Յուրաքանչյուր հայրենակցական միության ներսում ստեղծվեցին տարբեր բաժիններ («միություն», «խումբ» և այլն) տարբեր բնագավառների համար: Օրինակ, Ադանայի հայրենակցական միությունը ուներ «Ադանայի հայրենակցական միության վերաշինաց միություն», «Ադանայի եկեղեցասիրաց միություն», «Ադանայի աղքատասիրաց միություն», «Ադանայի հայրենակցական միության Պանդուխտ թատերական խումբ», «Ադանայի տիկնանց ընկերակցություն», «Ադանայի մարզական միություն» և այլն: Այդպիսի բաժիններ ունեին նաև քիչ թե շատ բազմամարդ մյուս հայրենակցական միությունները:

Հայրենակցական միություններն այնքան էին ճյուղավորված և այնպիսի ուժ էին ներկայացնում, որ հնարավոր չէր նրանց շրջանցել Սիրիայի և Լիբանանի հայ գաղթականությանը վերաբերող այս կամ այն կարևոր հարցը լուծելիս: Օրինակ, 1927 թ. ապրիլի 1-ին Բեյրութում տեղի ունեցավ 33 հայրենակցական միությունների ներկայացուցիչների ժողովը, որի նպատակն էր՝ «հայ գաղթականներու և նոր սերունդի բա-

րոյական ու տնտեսական բարելավման համար միջոցներ մտածել»։ «Ազդակը» գրում էր. «1918—1922 լիբանանահայ ազգային կյանքի գործոնները հայրենակցական միություններն էին ընդհանրապես, երբ տակավին զանազան մշակութային կազմակերպություններ գոյություն չունէին և կուսակցություններն ալ գրեթե անկազմակերպ վիճակի մեջ էին»[2]։ Դրությունը տարբեր չէր նաև Սիրիայում։

1930-ական թթ. հայրենակցական բաժանվածությունը հաղթահարվեց։ Հայրենակցական միությունները սկսեցին իրենց դիրքերը զիջել նոր ընկերություններին, որոնք կազմակերպված էին ոչ-հայրենակցական հիմունքներով։

Ստեղծվել են ավելի քան հարյուր հիսուն անուն մշակութային ընկերություններ, որոնց մեծագույն մասը կարճատև կյանք է ունեցել, իսկ մնացյալը գնահատելի դեր է կատարել Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների մշակույթի մակարդակը բարձրացնելու գործում։ Դրանցից առավել կարևորներն էին Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Հայ օգնության խաչը, Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը և մի շարք ուրիշներ։

Այժմ յուրաքանչյուր մշակութային ընկերություն առավել կամ նվազ չափով գտնվում էր այս կամ այն կուսակցության վերահսկողության ներքո։ Մանդատի տարիներին դաշնակցության ենթակա մշակութային և բարեգործական ընկերությունները ունեին զարգացման ամենալայն հնարավորություններ։ Հնչակյան և ռամկավար շրջանակների ընկերությունները օգտվում էին անհամեմատ ավելի նվազ արտոնություններից և երբեմն նույնիսկ ստիպված էին լինում պատասխանելու ոստիկանության հարցերին։ Ինչ վերաբերում է դեմոկրատական մշակութային ընկերություններին, ապա դրանք առհասարակ զրկված էին գոյության իրավունքից։

Համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող տարիներին մշակութային ընկերությունների պայմանները բարելավվեցին։ Նախ՝ ֆրանսիական տիրապետության թուլացումը, հետագայում և ազգային անկախության պայքարի հաջողությունը նպաստում էին արդեն գոյություն ունեցող մշակութային ընկերությունների աշխուժացմանը և նոր ընկերությունների, այդ թվում դեմոկրատական երիտասարդ գրողների Գրական շրջանակների ստեղծմանը։

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

1918—1946 թթ. Սիրիայում և Լիբանանում լույս են տեսել ավելի քան հիսուն անուն հայ պարբերականներ (օրաթերթ, երկօրյա, եռօրյա, շաբաթաթերթ, ամսաթերթ, տարեգիրք), ամենատարբեր՝ ազգային, քաղաքական, տնտեսական, գրական, երգիծական, կրոնաբարոյախոսական թեքումով։ Դրանք մեծ մասամբ կուսակցական նախաձեռնության արդյունք էին, կամ ենթակա էին այս կամ այն կուսակցությանը։ Անկուսակցական պարբերականներ եղել են, սակայն կարճատև կյանք են ունեցել։

Սիրիայում հայ պարբերական մամուլի առաջնեկը «Տարագիր» օրաթերթն է, որը լույս է տեսել 1918—1919 թթ. Հալեպում[1]։ Նրա տնօրեն խմբագիրն էր Բ. Միլիտոնյանը, հիմնական աշխատակիցներն էին՝ Լևոն Մոզյանը և Գրիգոր Մխալյանը։ Տպագրվում էր մարոնիտների Սալիբեի տպարանում։

Լիբանանում առաջին հայ պարբերականները ստեղծվել են որբանոցներում։ 1922 թ. Ջիբելլի որբանոցում լույս են տեսել «Հուսանք» և «Տուն», Ջյունիում՝ «Այգ», Նահր Իբրահիմում՝ «Նոր Դար» խմորատիպ-ձեռագիր պարբերականները, որոնք գոյատևել են հազիվ մի քանի ամիս։ Հետագայում Ջաֆհաս որբերի նախաձեռնությամբ հրատարակվել են մի քանի տպագիր պարբերականներ, որոնցից հիշատակելի են «Որբաշխարհի Աստղը» և «Օվասիսը» («Օվասիս» ամսաթերթ, օրգան Սուրիո պատանեկան միության, Բեյրութ, 1925—1928, ծավալը՝ 16 էջ, չափսը՝ 25×19 սմ, տպարան՝ «Հրաշդան»։ «Որբաշխարհի Աստղ» հանդես ամսօրյա, օրգան Մերձավոր Արևելքի որբերու դաշնակցության, Բեյրութ, 1925—1930 թթ., ծավալը՝ 16 էջ, չափսը՝ 26×19, արտոնատեր՝ Վռամ Սամվելյան, վարիչ-խմբագիր՝ Գ. Կ. Աֆարյան, տպարան՝ Ս. Թաշճյան)։

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, առանձնահատուկ հոգատարություն ցուցաբերելով հայ աշխատավորների նկատմամբ և նկատի ունենալով նրանց արաբերեն լեզվի անբավարար իմացությունը, կուսակցության տպագիր խոսքը լույս էր ընծայում նաև հայերեն լեզվով։ Կոմունիստական օրգաններ էին «Նոր Փարոս» (1925, Բեյրութ), «Սպարտակ» (1927, Ռակկա), «Մարտակոչ» (1934, Բեյրութ) հայ պարբերականները։ 1930—1931 թթ. Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության օրգան «Ալ-ֆաճըր ալ-Ահմարը» («Կարմիր Արշալույս») հրատարակվում էր նաև հայերեն լեզվով։ 1938 թ.

փետրվարի 6-ից Բեյրութում սկսեց լույս տեսնել «Ժողովուրդի ձայն» շաբաթաթերթը, որպես հավելված կոմունիստական «Սաուտ ալ-Շաաբ» օրգանի, որը հրատարակվում էր 1935 թվականից, սկզբում ընդհատակում, իսկ 1937 թվականից՝ լեգալ պայմաններում: 1939 թ. սեպտեմբերի վերջերին «Ժողովուրդի ձայնը» փակվեց ֆրանսիական գերագույն կոմիսարի հրամանով[2]: Վերստին սկսել է լույս տեսնել 1942 թ. կեսերից և շարունակվել է մինչև 1947 թ. վերջերը, երբ Սիրիան և Լիբանանը ևս ներքաշվեցին սառը պատերազմի ոլորտը: «Ժողովուրդի ձայնը» մեծ դեր է կատարել «ոչ միայն Սիրիայի և Լիբանանի, այլև ամբողջ Մերձավոր Արևելքի և ի սփյուռս աշխարհի ցրված հայության քաղաքական, դեմոկրատական մտքի ձևավորման, հայրենասիրական զգացումների զարգացման, «Մայր Հայրենիքի և արաբական հայրենիքների» շուրջը հայ զանգվածների միավորման ու համախմբման, սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնականության, իմպերիալիզմի և ռեակցիայի դեմ արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին հայ ազգաբնակչության մասնակցության գործը կազմակերպելու հարցում»[3]:

Սիրիայում և Լիբանանում ս.—դ. Հնչակյան կուսակցությունը ստեղծել է մի շարք պարբերականներ: Դրանցից առաջինը՝ «Սուրիահայ մամուլ» օրաթերթը (1922—1927, Հալեպ, խմբագիրներ՝ Վարդ-Մխակ (Վարդիվառ Գարանֆիլյան) և Ս. Տխրունի (Սարգիս Քեսերյան), ծավալը՝ երեսն 2, երբեմն 4 էջ, չափսը՝ 26×19 սմ, տպարան՝ «Տավրոս») համարվում էր նույն կուսակցության Ադանայի պաշտոնաթերթ «Տավրոսի» շարունակությունը: «Սուրիահայ Մամուլը» պրոպագանդում էր առաջադիմական գաղափարներ, ջատագովում Սովետական Հայաստանի նվաճումները, դատափետում դաշնակցության հակասովետական քաղաքականությունը և, ինչպես Միհրան Նաճարյանն է նշել իր հուշերում, ծառանում էր «Սուրիաբնակ և արտասահմանի թուրքերու հայահալած և հայ գաղթականները իբրև անբաղձալի տարր ցույց տալու չարամտությամբ կատարած պրոպագանդին դեմ»[4]:

1924—1935 թթ. Բեյրութում ս.—դ. Հնչակյան կուսակցության օժանդակությամբ լույս է տեսել «Լիբանան» ազգային եռօրյա «անկախ հայաթերթը»: Նրա հիմնադիրներն էին Մանուել և Ժոզեֆ Աճեմյան եղբայրները, որոնք, սակայն բավարար չափով հայոց լեզվին գիտակ չլինելով, թերթի խմբագրությունը տարբեր ժամանակներում հանձնել են տարբեր քաղաքական հայացքներ ունեցող գործիչների (Արշակ Գազանճյան, Ղազար Ջարըք, Երվանդ Քեշիշյան, Դիոնիս Կեսարյան, Միհ-

րան Ս. Նաճարյան, բժիշկ Միսաք Դակեսյան, պրոֆ. Սամուել Թումաճանյան, Միհրան Սեֆերյան, Միհրան Աղազարյան և ուրիշներ)[5]։ «Լիբանանը» քաղաքական և ազգային կայուն ուղղություն չի ունեցել, հաճախ գոնվել է մեկ այս, մեկ այն հակոտնյա բևեռում։ Այդ պատճառով, չնայած բավական երկարակեցությանը, համարյա հետք չի թողել Սիրիայի և Լիբանանի հայ հասարակական կյանքում։

1937 թ. նոյեմբերի 7-ին Բեյրութում սկսեց լույս տեսնել ս.—դ. հնչակյան կուսակցության Լիբանանի շրջանի պաշտոնական օրգան՝ «Արարատ» երկօրյան, որը հետագայում վերածվեց օրաթերթի և շարունակվում է մինչև այսօր։ Նրա արտոնատերն էր Գրիգոր Հաճընկյանը, պատասխանատու անօրինը՝ Օննիկ Ճամպուլյանը։ Տարբեր ժամանակներում «Արարատի» խմբագիր են նշանակվել Արմենակ Էլոյանը, Արսեն Կիտուրը, Միհրան Սեֆերյանը, Արմեն Դարիսը, Հրանդ Դանգրունին, Ժիրայր Նայիրին և այլ հնչակյան գործիչներ։ Հնչակյան երիտասարդ մտավորականները հրատարակել են մի շարք պարբերականներ, որոնցից ուշադրության արժանի է «Կայծը» (Հ. Մ. Մ. պաշտոնաթերթ, մարզական գրական, գեղարվեստական, հասարակական հանդես, Բեյրութ, 1942—1947, խմբագիր՝ Արմեն Դարիսպ, ծավալը՝ 48 էջ, չափսը՝ 27×20 սմ)։

1924 թ. մարտին Բեյրութում լույս ընծայվեց Լիբանանում առաջին դաշնակցական օրգանը՝ «Փյունիկ» եռօրյա լրագիրը։ 1926 թ. այն վերանվանվեց «Նոր Փյունիկ»։ 1927 թ. մարտի 5-ին իր տեղը զիջեց «Ազդակ»-ին, որը 1927—1930 թթ. եռօրյա լրագիր էր, 1930—1931 թթ.՝ երկօրյա, իսկ 1932 թ. մարտի 1-ից մինչև այսօր՝ օրաթերթ է։ «Փյունիկ» և «Նոր Փյունիկ» օրգանը խմբագրում էին Արշակ Հովհաննիսյանը (Ա. Արշակունի) և Խոսրով Թյութունճյանը։ «Ազդակի» տնօրեն-արտոնատերն էր Հայկ Պալյանը։ Տարբեր ժամանակներում որպես խմբագիր պաշտոնավարել են Արամ Սահակյանը, Մանուկ Ասլանյանը, Մուշեղ Իշխանը (Ճենտերեճյան), Տիգրան Ոսկունին (Գույումճյան) և ուրիշներ։ 1932 թ. լույս է տեսել «Ազդակի» առաջին գրական հավելվածը՝ «Հարդագողը», 1944—1952 թթ.՝ «Ազդակ շաբաթօրյակը» և այլն։ Մինչև 1946 թ., երբ Հալեպում սկսեց լույս տեսնել «Արևելք» (1946—1957) օրաթերթը, «Ազդակը» համարվում էր նաև Սիրիայի դաշնակցական կազմակերպության ձայնափողը։ «Արևելքի» արտոնատերն էր Հրաչ Փափազյանը, գլխավոր խմբագիրը՝ Անդրանիկ Ծառուկյանը։ Դաշնակցության համակիր օրգան էր Բեյրութի «Ազդարար» շաբաթաթերթը (1942—1953 թթ., հիմնադիր Մանուկ Ասլանյան, արտոնատեր՝ Հ. Տայյան), որի հիմնա-

կան աշխատակիցներն էին՝ Նիկոլ Աղբալյանը, Արշամ Խոնդկարյանը, Եղիա Քասունին, Խորեն Գաբիկյանը, Սիրան Սեզան, Հայկ Ժամկոչյանը և ուրիշներ։

Սիրիայում ամենավար ազատական կուսակցության ձայնափողն էր «Եփրատը» (Հալեպ, 1928—1933 թթ. արտոնատեր Եղիազար Պենլյան, պատասխանատու տնօրեն բժիշկ Պողոսյան), Լիբանանում՝ «Զարթոնք» օրաթերթը (Բեյրութ, արտոնատեր՝ Բարունակ Թովմասյան)։ «Զարթոնքի» առաջին համարը լույս է տեսել 1937 թ. սեպտեմբերի 26-ին։ Նրա առաջին խմբագիրը եղել է Վահան Թեքեյանը, հետագայում այդ պաշտոնը հաջորդաբար վարել են Լևոն Թյութունճյանը, Միքայել Նաթանյանը, Երվանդ Չեշիշյանը, Գրիգոր Պեքերեճյանը, Մարտիրոս Տեր Ստեփանյանը, Գերսամ Ահարոնյանը և ուրիշներ։

Սիրիայում և Լիբանանում ստեղծվել են բազմաթիվ գրական հանդեսներ։ Դրանցից հատուկ հիշատակության արժանի են «Նայիրի» (Հալեպ, խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկյան), «Ակոս» (Բեյրութ, խմբ.՝ Գառնիկ Բանյան) և «Անի» (Բեյրութ, խմբ.՝ Վահե Վահյան) պարբերականները, որոնք կարևոր դեր են կատարել երիտասարդ գրողների կազմավորման գործում։ Լույս են ընծայվել տնտեսագիտական, առողջապահական, մանկապատեհական, երգիծական, կրոնաբարոյախոսական և այլ բնույթի պարբերականներ։

Քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայում և Լիբանանում որոշ տարիներ ապրել և ստեղծագործել են հայ մշակույթի ականավոր բազմաթիվ գործիչներ։ Դրանցից առավել կարևորներն են՝ Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Երվանդ Օտյանը, Գարեգին կաթ. Հովսեփյանցը, Ներսես վ. Ակինյանը, Համազասպ վ. Ոսկյանը, Հովհաննես վ. Մսըրյանը, Գասպար Իփեքյանը, Եղիա Քասունին, Բարսեղ Կանաչյանը, Բարսեղ Աբովյանը և ուրիշներ։ Այդ ժամանակաշրջանում գործունեության ասպարեզ իջավ մշակույթի երիտասարդ գործիչների մի սերունդ, որի վաստակը բավական ծանր էր կշռում սփյուռքահայ հոգևոր արժեքների նժարում։

Ինչպես ավագ, այնպես էլ նոր սերնդի գրողները որդեգրել էին քաղաքական երկու հակադիր ուղղություն՝ Սովետական Հայաստանի դե՛մ թե՛ Սովետական Հայաստանի հետ։ «Նայիրի» և «Ակոս» պարբերականների շուրջը բոլորված երիտասարդ գրողները (Անդր. Ծառուկյան, Եդ. Տարոնյան, Մուշեղ Իշխան, Եդ. Պոյաճյան, Ն. Զոլաքյան և ու-

րիշներ), կաշկանդված լինելով դաշնակցության հակասովետիզմով, զրկված էին հայրենի հողի կենարար ուժից։ Նրանց ստեղծած (1947 թ.) Մերձավոր Արևելքի հայ գրողների միությունը (նախագահ՝ Նիկ. Աղբալյան) համարյա կյանք չունեցավ։

Սիրիայում և Լիբանանում դեմոկրատական գրողները գործելու և ստեղծագործելու բնականոն պայմաններ չունեին։ Նրանք մշտապես գտնվում էին ոստիկանական հալածանքի, բանտ ու աքսորի սպառնալիքի տակ։ 1947 թ. Բեյրութում նրանց հաջողվեց ստեղծել «Անի» պարբերականը և Գրական շրջանակը, որոնց մասնակցում էին Վահե Վահյանը, Գ. Ադդարյանը, Հ. Գանգրունին, Տիգրան Վարժապետյանը և այլ գրողներ ու արվեստագետներ։ Գրական շրջանակը ուներ երկու՝ ներքին և արտաքին բաժին. առաջինը «հատկացված էր ստեղծագործական և ինքնազարգացման կարևոր իրագործումներու», այնտեղ քննարկվելու էին Շրջանակի անդամների գրական ստեղծագործությունները, հայ հին ու նոր գրականության հարցերը, միջազգային մշակույթի նորությունները, նոր լույս տեսած գրքեր։ Արտաքին բաժինը կազմակերպում էր գրական հրապարակային ելույթներ։ Գրական շրջանակն ունեցավ կարճ կյանք վերահաս սառը պատերազմի հետևանքով։

Քննարկվող ժամանակաշրջանում իրադարձություններով հարուստ չի եղել Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների թատերական կյանքը։ Թատրոնը համարվում էր ֆինանսներ հայթայթելու միջոց ամենատարբեր օգտակար նպատակների համար։ Յուրաքանչյուր մշակութային միություն, հազվադեպ բացառությամբ, ուներ իր թատերախումբը, որը տարին մեկ կամ երկու անգամ կազմակերպում էր ներկայացումներ։ Դրանց երբեմն մասնակցում էին հյուր եկած դերասաններ (Սանամյան, Աբովյան, Վարդ-Պատրիկ, Մարության և այլք)։ Նրանց խաղացանկերում էին՝ «Սոս և Վարդիթեր», «Պատվի համար», «Մարվող ճրագներ», «Արշին մալ ալան», «Օթելլո» և այլն։ Չկար հայկական թատրոնի սրահ, և բոլոր ներկայացումները տրվում էին վարձովի սրահներում։

Լիբանանում հայկական թատրոնն անբաղձալի վիճակից դուրս բերելու առաջին փորձը կատարեց Համազգային ընկերությունը։ Գեղարվեստական նշանակալից երևույթ էին «Օշին Պայլի» (Լևոն Շանթ), «Արա Գեղեցիկի» (Գ. Իփեկյան) բեմադրությունները։ 1941 թ. ստեղծվեց Համազգայինի մնայուն թատերախումբը, որը նպատակ էր դրել ներկայացումներից ստացված հասույթը հատկացնել թատրոնի զարգացմանը։ Նրա խաղացանկի առավել ժողովրդական գործերն էին Լևոն Շանթի

«Հին ամուսնները», «Ինկած բերդի իշխանուհին» և Գոգոլի «Ռևիզորը»։ Համաշխարհային պատերազմից հետո թատերախումբը՝ իր վաստակաշատ ռեժիսորի անունով կոչվեց Համազգայինի թատերասերներու Գ. Իփեկյան մբութիւն, որը գործում էր երիտասարդ արվեստագետ Ժորժ Սարգսյանի ղեկավարության ներքո։

Սիրիայում և Լիբանանում հայ երաժշտական կյանքը բավական աշխույժ էր։ Վոկալ և գործիքային մեկ համերգը հաջորդում էր մյուսին։ Գործում էին բազմաթիվ երգչախմբեր, որոնցում առանձնահատուկ տեղ էր գրավում Հայ երաժշտական միության «Գուսան» երգչախումբը (հիմնված 1932, խմբավար Բարսեղ Կանաչյան)։ Հայ երգարվեստի զարգացման և հայ երգչի պրոպագանդման գործում զգալի ավանդ է ներդրել նաև սիւուռքահայ անվանի կոմպոզիտոր և խմբավար Համբարձում Պերպերյանը։

Հայկական և արաբական շրջաններում լայն ճանաչում ձեռք բերած արվեստագետներ էին գեղանկարիչ Հարութիւն Կալենցը և ծաղրանկարիչ Տիրան Ահճմյանը։ Հ. Կալենցի և նրա կնոջ Արմինե Պարոնյանի տաղանդը առավել փայլ ստացավ հայրենիքում։

ՎԵՐՋԱԲԱՆ

Համաշխարհային պատերազմի հրանոթները տակավին նոր էին լռել, երբ սկսվեց սառը պատերազմը Սովետական Միության և սոցիալիզմի համաշխարհային լագերի պետությունների դեմ։ Վերածնվում և բազմանում էին ֆաշիստական կազմակերպությունները, Արևեմտյան Գերմանիայում՝ ռևանշիստները, Ֆրանսիայում՝ «ուլտրաները» և այլն։ Մի շարք երկրներում ստեղծվեցին «ուժեղ ձեռքի» կառավարություններ, սահմանափակվեցին բուրժուադեմոկրատական ազատությունները, գործի դրվեցին կառավարման ֆաշիստական մեթոդները։ Այդ բոլորի գլխին կանգնած էին ԱՄՆ-ի իմպերիալիստները։

1947 թ. վերջերից սառը պատերազմական իրավիճակ ստեղծվեց նաև Լիբանանում։ Միջազգային իմպերիալիզմի բացահայտ օգնությամբ իշխանության ղեկի մոտ կանգնած Բեշարա ալ-Խուրիի հարվածի տակ ընկան դեմոկրատական կազմակերպությունները։ Լուծարքի ենթարկվեց Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, փակվեցին արհմիությունների ֆեդերացիայի ակումբները, խափանվեցին «Սաուտ ալ-Շաաբ», «Ժողովուրդի ձայն» և մյուս դեմոկրատական օրգանները, ձերբակալություններ կատարվեցին արաբ և հայ աշխատավորների շրջանում։ Մինչև 1948 թ. կեսերը Դեկվանեի, Բաալբեկի և այլ վայրերի բանտերը լցվեցին բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչներով։

1947—1948 թթ. Սիրիայում իշխանության գլուխ կանգնած ժողովրդական կուսակցության (Շաաբ) կառավարությունը գտնվում էր մի կողմից ԱՄՆ-ի, մյուս կողմից Անգլիայի իմպերիալիստների ճնշման տակ։ 1949 թ. մարտի 30-ին կատարվեց առաջին (Հյուսնի Զաիմի), օգոստոսի 14-ին երկրորդ (Սամի Հինավիի) և դեկտեմբերի 19-ին՝ երրորդ (Ադիբ Չիշեքլիի) պետական հեղաշրջումը։ 1954 թ. իմպերիալիստները դադարեցին իրար ձեռքից խլել Սիրիան, սակայն նրանց ճնշումը շարունակվեց նախ Բաղդադի պակտի, հետագայում էլ՝ Էյզենհաուերի դոկտրինայի միջոցով։ Այդ ճնշմանը դիմադրելու նպատակով 1958 թ.

Սիրիան միավորվեց Եգիպտոսի հետ (Արաբական Միացյալ Հանրապետություն)։ Իսկ Լիբանանը, հարելով էյզենհաուերի դոկտրինային, մըխըրճվեց քաղաքացիական կռիվների մեջ։

Այդ իրադարձությունները բացասաբար անդրադարձան նաև Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների վրա։

1947 թ. դաշնակցության ընդհանուր պատգամավորական ժողովը «անվերապահորեն» կողմնորոշվեց դեպի «դեմոկրատիք արևմուտքի» հակասովետական լագերը։ Մշակվեց հակասովետական պայքարի նոր ծրագիր, որի հիմքում ընկած էր երրորդ համաշխարհային պատերազմի «անխուսափելիության» վարկածը։ Լիբանանից, Սիրիայից և Իրանից «բազմաթիվ հայ երիտասարդներ» ուղարկվեցին Ամերիկա՝ «ստանալու համար հարկ եղած պատրաստությունը, լավապես ծառայելու նպատակով ոչ միայն Միջին ու Մերձավոր Արևելքի անգլո-ամերիկյան պաշտպանության գործին, այլև հետախուզական առաքելությանց կովկասյան ճակատի վրա»[1]։ Ստանձնելով այդ և այդ կարգի այլ «անպատիվ պարտավորություններ», դաշնակցությունը հնարավորություն էր ձեռք բերում անպատիժ գործելու սփյուռքահայ ներքին կյանքում։

1947—1955 թթ. Սիրիայում և Լիբանանում դաշնակցությանը հաջողվեց բիրտ ուժով վերականգնել ազգային-թեմական ղեկավար օրգաններում այն բոլոր դիրքերը, որ կորցրել էր պատերազմի տարիներին։ 1948 թ. նոյեմբերի 4-ին դաշնակ «մարտականները» ներխուժեցին Լիբանանի ազգային առաջնորդարանը և այն գրավեցին[2]։ Այնուհետև մեկ խարդախ ընտրությունը հաջորդում էր մյուս խարդախված ընտրությանը։ 1951 թ. արդեն դաշնակցական գործիչները վերածվարծում էին «Անհայրենիք պետության» ցնորքը։ Կարո Սասունին գրում էր. «Գաղութներու մեջ ցրված հայությունը ... անհրաժեշտորեն կենտրոնական վարչություն մը պիտի ունենար, եթե ծրագրված դժվարություններու չհանդիպեր...։ Այսօր նույնքան անհրաժեշտ է այդ կենտրոնը, և գաղութահայությունը պետք է իր կենտրոնը ունենա»[3]։ Այդ կարգի «կենտրոն» ստեղծելու նպատակով, 1956 թ. փետրվարի 20-ին դաշնակցությունը գրավեց Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը։

Սառը պատերազմի պայմաններում գործադրվող հակադեմոկրատական հալածանքները նպաստում էին «աջ տարրերի» աշխուժացմանը նաև ս.—դ. հնչակյան և ռամկավար ազատական կուսակցության ղեկավար շրջաններում։ Սիրիայի և Լիբանանի հայ դեմոկրատական ճակատը (Հայ ազգային խորհուրդ) քայքայվեց, և գնալով ուժեղանում էր հնչակյան և ռամկավար «աջերի» ձգտումը՝ դաշնակցության հետ լեզու

գտնելու...: Այդ առումով բնութագրական է այն հայտարարությունը, որ հնչակյան կուսակցության ընդհանուր քարտուղար Հարություն Ճերեճյանը կատարել է «Վա Ռեվյու դյու Լիբան» շաբաթաթերթի թղթակցին: Նա ասել է, որ դաշնակցության հետ «մերձեցում մը կարելի է, և նույնիսկ մաղթելի, բայց մեկ պայմանով, որ մեզ բաժանող վեճերը հասկըցվին և լուծվին լիբանանյան շրջանակի մեջ»[4]: 1965 թ. հնչակ և ամկավար «աջ տարրերի» ուժեղացումն ընդհուպ հանգեցրեց ազգային կուսակցությունների միջև համագործակցության եղբեր որոնող այն բանակցություններին, որոնք ձգձգվելով, ընդհատվելով, վերսկսվելով շարունակվում էին մինչև վերջին տարիները:

Լիբանանի ներքաղաքական կյանքում տարիներև ի վեր տիրող անհանգիստ վիճակը հիմնականում հետևանքն էր սոցիալ-տնտեսական այն էական տեղաշարժերի, որ առաջացրեց «բաց դռների» քաղաքականությունը: Այդ փոքր երկրում գործում էին շուրջ հարյուր խոշոր բանկեր, որոնց շրջանառու կապիտալների կարևոր մասը պատկանում էր նավթ արտահանող երկրների՝ Սաուդական Արաբիայի, Քուվեյթի, Կատարի և այլ արաբական երկրների էմիրներին: Այդ կապիտալները նպաստում էին բուրժուազիայի նոր խավերի ձևավորմանը, որոնք արտահայտում էին համաարաբական շահեր: Գնալով ուժեղացող այդ խավերը սահմանափակում էին «լիբանանյան ազգի» ներկայացուցիչ համարվող մարոնական բուրժուաների կապիտալների շահարկման ասպարեզը (բանկ, ապահովագրական ընկերություն, տրանսպորտ և այլն) և, որ առավել կարևոր է, ձգտում էին հեղաշրջել կրոնադավանական համայնքային կարգը, որը, վերջին հաշվով, հանդիսանում է մարոնական բուրժուաների քաղաքական և տնտեսական գերակայության երաշխիքը:

1958 թ. Լիբանանում ծագած քաղաքացիական կռիվներն ավարտվեցին «ոչ հաղթող, ոչ պարտվող» կոմպրոմիսային համաձայնությամբ, սակայն արաբա-իսրայելական զինաթափման պայմաններում իմպերիալիստները սկսեցին մեծ եռանդով սրել մարոնական և սուննի ամենաբազմամարդ համայնքների հակասությունները: 1975 և 1978 թթ. վերստին բորբոքվեցին քաղաքացիական կռիվները: Դրանցից հատկապես վերջինը նշանավորվեց հակահայ արյունալի իրադարձություններով:

1978 թ. հոկտեմբերի սկզբին լիբանանահայության հետ պատահած աղետը պետք է դիտել և գնահատել այն պայքարի տեսանկյունից, որ «լիբանանյան ազգի» բուրժուազիան մղում է համաարաբական շահեր արտահայտող բուրժուազիայի դեմ՝ իր տնտեսական ու քաղաքա-

կան շահերի պահպանման համար։ Արդարև լիբանանյան բուրժուազիայի հայկական հատվածը, օգտվելով օտարերկրյա և արաբական կապիտալների ներհոսից, զգալի չափով ամրապնդեց իր դիրքերը և, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, համարվում էր բավական ուժեղ մրցակից առանձնապես արդյունաբերության և առևտրի ասպարեզում։ Բավական է նշել, որ 1960-ական թթ. Լիբանանի թեթև արդյունաբերության տարբեր բնագավառներում ներդրված 375 միլիոն լիբ. լիրայից շուրջ 125 միլիոնը պատկանում էր հայ արդյունաբերական բուրժուազիային, իսկ խոշոր ներմուծումների 10%-ը բաժին էր ընկնում հայ առևտրականներին։ Հասկանալի է, որ Լիբանանի բուրժուազիան, հատկապես «լիբանանյան ազգը» ներկայացնել հավակնող նրա հատվածը չէր կարող դրան հանդուրժել։ Սակայն այնքան ժամանակ, որքան տակավին չէր թուլացած Լիբանանի բուրժուազիայի համամարթական շահեր արտահայտող հատվածի գլխական հիմնական ուժը՝ պաղեստինցիներից բաղկացած ջոկատները, մարոնական բուրժուաները չէին համարձակվում վճռական գործողություններ ձեռնարկել հայերի դեմ։

Մարոնական բուրժուազիայի գլխված ջոկատները հայկական թաղերը ռմբակոծեցին, հայեր կոտորեցին, հայերին պատկանող վաճառատները կողոպտեցին, տները թալանեցին[5] ոչ թե «դրական չեզոքություն» պահպանող հայերին պատժելու համար, այլ պարզապես հայ բուրժուաներին ունեզրկելու, նրանց կապիտալները քամուն տալու համար։ Մի խոսքով, նրանք ձգտում էին շարքից դուրս բերել ներքին շուկայում իրենց ուժեղ մրցակիցներից մեկին՝ հայ բուրժուազիային։ Մարոնական բուրժուազիայի ականավոր ներկայացուցիչ, նախկին պրեզիդենտ որդի Շամուն կրտսերը հայտարարել է, որ հայերը քաղաքացիական կռիվներին չմասնակցելով, հնարավորություն ունեցան իրենց «առևտուրը զարգացնելու», տնտեսապես բարգավաճելու, այն դեպքում, երբ Լիբանանի ազգաբնակչությունը հսկայական կորուստներ ունեցավ և քայքայվեց երկրի տնտեսությունը։ Իր խոսքի վերջում նա պահանջել է հայերին վտարել Լիբանանից, զրավելով նրանց ունեցվածքը։

Մինչև բիրտ ուժի անցնելը, մարոնական բուրժուազիան փորձեց հայ բուրժուաներից կոնտրիբուցիա ստանալ։ Սակայն այնքան խոշոր էին պահանջվող դումարները, որ դրանք վճարել նշանակում էր հրաժարվել ամբողջ ունեցվածքից։ Իհարկե հայ հարուստները չվճարեցին պահանջվող կոնտրիբուցիան։ Նրանց ունեզրկել ձգտող մարոնականները սպասում էին հարմար առիթի, և այդ առիթը ներկայացավ 1978 թվականի հոկտեմբերին, երբ չկային Ազգային ճակատի ջոկատները, և միջ-

արաբական ուժերը հնարավորություն չունեին պաշտպանելու մարոնական ջոկատների վերահսկողության ներքո գտնվող հայկական թաղերը:

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սառը պատերազմի, իմպերիալիստական դավադրությունների և հատկապես արաբա-իսրայելական գինաբախման հետևանքով, բավական բարդ, անկայուն և անապահով վիճակ ստեղծվեց նաև Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների համար: Տարիներ ի վեր ծայր առած արտագաղթը զգալի թվով սիրիահայեր և լիբանանահայեր ցրեց և շարունակում է ցրել աշխարհի չորս ծագերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ առաջին

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Հայ-սիրիական կապերը: Հայկական ինգագույն բնակավայրերը Սիրիայում

1 «Եւ ի Տանէ Թորգոմայ ձիովք և հնձելոք և ջորւոք լցին զվաճառս քոյ» (Եզեկիել, ԻԷ, 14):

2 Տե՛ս Հ. Մելիոնյան, Հայ-ասորական հարաբերություններ, Երևան, 1970, էջ 51:

3 Տե՛ս Հր. Բարթիկյան, Պրոկոպիոս Կեսարացի, Երևան, 1967, էջ 142:

4 Տե՛ս Н. А. Караулов, Сведения арабских географов, смомпк, XXIX стр. 6—7, Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը, Երևան, 1952, էջ 259.*

5 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 226:

6 Հայկական աղբյուրներից հայտնի է, որ ասորական և հրեական բավական հոծ գաղութներ կային Արմավիրում, Երվանդաշատում, Արտաշատում, Վաղարշապատում, Զարեհավանում, Զարիշատում, Վանում և Հին Հայաստանի այլ քաղաքներում: Փավստոսը, պատմելով Արտաշատի 9000 տուն հրեա բնակչության մասին, ասում է, «զոր ածեալն էր զերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց» և այլն:

7 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ դաղթականության, հ. 1, Կահիրե, 1941, էջ 110:

8 Ա. Գ. Աբրահամյանը (Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Երևան, 1964, էջ 428), Հրանդ Արմինը (Մեծն Տիգրան, Կահիրե, 1957, էջ 78), Տ. Անդրեասյանը (Սվեդիայի բարբառը, Երևան, 1967, էջ 351), Բ. Եղիայանը («Հայերը Սուրիո և Լիբանանի մեջ», տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1948, № 27 և 28) և ուրիշներ այդ գաղթօջախների սկզբնավորումը կապում են Տիգրան II-ի կիրառած վերաբնակեցումների հետ: Կան նաև այլ վարկածներ: Ոմանք սվեդացիներին և քեսապցիներին համարում են Փռուգիայից արևելք շարժվող արմեններից, որոնք բաժանվելով իրենց ցեղակիցներից բնակություն են հաստատել Անտիոքի լեռնային շրջաններում: Ուրիշներ նրանց համարում են դաշտային Կիլիկիայի նախկին բնակիչներ, որոնք հայկական պետության կործանումից (1375) հետո հալածանքներից փախչելով ապաստան են գտել Մուսայի և Ակրայի լեռներում (տե՛ս «Էջմիածին», 1952, էջ 35):

9 Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 415:

10 «Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 24:

11 Փավստոս Բուզանդ, *Պատմություն Հայոց*, էջ 221—222։

12 Պարսից պետության արևելյան նահանգներից Սագաստանը սահմանակից էր Հընդկաստանին, Խուժաստանը տեղադրված է Պարսից ծոցից հյուսիս, իսկ Շահուդ, Մեշովն և Քաշկար գավառները Պարսից ծոցի շուրջը, առաջինը՝ Շիրազում, երկրորդը՝ այժմյան Բասրայի մոտերը, երրորդն՝ այժմյան Վասիտի տեղում։ Հայ պատմիչներն Ասորեստանն անվանում են Քաշկար։

13 Արտավանի խճանկարը պահպանվում է հայկական վանքի հնագիտական թանգարանում, Զիբինյաց լեռան խճանկարը ներկայումս զարդարում է Երուսաղեմի ռուսական վանքի մատուռներից մեկը։ Երրորդ խճանկարը հայտնաբերվել է Դամասկոսի դռան մոտ գտնվող ս. Պողիկտոսի մատուռում։ Ուսումնասիրողները տեխնիկայի, նախագծերի, մոտիվների ու պատկերագրության ընդհանրություններ են տեսնում այդ և հռոմեական ու հրեական նույն ժամանակի խճանկարների միջև։ Այդ խճանկարների մասին մանրամասն տե՛ս Armenian Art Treasures of Jerusalem, Edited by Bezalel Narkiss, Manoda Press, 1979.

14 «Ղևոնդայ Մեծի վարդապետի Պատմութիւն Հայոց», ս. Պետերբուրգ, 1887, էջ 7։

15 Նույն տեղում, էջ 9։ Տե՛ս նաև Սեբեոս, էջ 110, Ստեփանոս Ասողիկ, էջ 120, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 82 և այլն։

16 «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 110։

17 «Ղևոնդայ Մեծի վարդապետի Պատմութիւն Հայոց», էջ 29—30։

18 «Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 112։

19 Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց, *Հիշատակարանք ձեռագրաց*, հ. 1, Անթիլիաս, 1951, էջ 47։

20 «Յովհաննէս Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», էջ113։

21 Ղ. Ալիշան, *Հայապատում*, հ. 1, Վենետիկ, 1901, էջ 520։

22 «Ղևոնդայ Մեծի վարդապետի Պատմութիւն Հայոց», էջ 40։

23 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 170։

24 «Ղևոնդայ Մեծի վարդապետի Պատմութիւն Հայոց», էջ 168։

25 Նույն տեղում, էջ 133։

26 «Մովսես Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 234։

27 A. Mingana, „The Work of Dionysius Barsalibi against the Armenians", in Woodbrooke studies, vol IV, Cambridge, 1931, p. 55.

28 Նույն տեղում։

29 «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 61։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում։

32 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 217։

33 Նույն տեղում, էջ 218։

2. Սիրիայի հայկական գաղթօջախները XII—XIII դդ.

1 «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», էջ 61։

2 Տե՛ս „Chronique de Michel le Syrien", t. II, Paris, 1900—1910, p. 271.

3 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 294։*

4 *Տե՛ս* Հ. Բ. Նալբանդյան, *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 79։*

5 *Նույն տեղում, էջ 43։*

6 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 337։*

7 *XV դարի կեսերին Ջհանշահի արշավանքի ժամանակ Թլկուրան ավանն ավերվել է և հայերը ցիրուցան են եղել։ Ազեսին ժամանակակից մի գրչի թողած (1452) հիշատակարանում ասված է, որ Ջհանշահի զորականներից Թոխան Աղլին «հկեալ գերեաց զրազում քրիստոնեայս և նահատակեաց...»։*

8 J Laurent, L'Arménie, entre Byzante et l'Islam, Paris, 1919, p. 301.

9 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 264։*

10 Գաբեգին Կաթողիկոս Հովսեփյանց, *Հիշատակ սրանք ձեռագրաց, հ. 1, էջ 263։*

11 Հ. Բ. Նալբանդյան, *Արաբական աղբյուրները, էջ 240—241։*

12 *Տե՛ս* Գ. Ալիշան, *Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 482։*

13 *Տե՛ս* Վ. Ս. Աբրահամյան, *Արհեստները Հայաստանում 4—18 դդ., Երևան, 1956, էջ 159։*

14 W. Heyd, Histoire du Commerce du Levant, t. II, Leipzig, 1886 p. 167.

15 *Նույն տեղում, էջ 168։*

16 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 24։*

17 *Նույն տեղում, էջ 223։*

18 *Տե՛ս «Ընդհանրական թուղթ Ներսես Շնորհալւոյ», Երուսաղեմ, 1871, էջ 95։*

19 *Նույն տեղում, էջ 97։*

20 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 69—70։*

21 *Նույն տեղում, էջ 71։*

22 Վարդան Այգեկցի, *Առակների ժողովածու, հ. 2, էջ 196։*

23 *Նույն տեղում, էջ 328։*

24 *Նույն տեղում, էջ 192։*

25 *«Մեծն Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն», Մոսկվա, 1861, էջ 124—125։*

26 *Նույն տեղում։*

27 *Մկրտիչ Քասունու, Կիլիկիո հայկական իշխանությունները, Բեյրութ, 1974, էջ 69։*

28 *Նույն տեղում, էջ 87։*

28 Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 102։*

30 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 259։*

31 Մ. Չամչեան, *Պատմութիւն հայոց, հ. 3, Վենետիկ, 1785, էջ 19—20։*

32 Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, էջ 339։*

33 *Նույն տեղում, էջ 261—262։*

34 *Նույն տեղում, էջ 302—303։ Ուռհայեցին ապստամբության վայրը համարում է «քաղաքն, որ կոչի Ապլասթան» (այժմ Էլբիստան), որը գտնվում է հյուսիսային Կիլիկիայում։ Արևմտյան և արաբական միջնադարյան աղբյուրների հիման վրա կարծիք է հայտնվել, որ այդ ապստամբությունը բռնկվել է ոչ թե Ապլասթանում, այլ Անտիոքից տասը մղոն հյուսիս գտնվող Արտաշիայում (Տե՛ս «Մատթէոս Ուռհայեցի և խաչակրաց ժամանակագիրքը. Արտաշի՞ա թե՞ Ապլասդա», «Բազմավեպ», 1916, էջ 45—47)։*

35 Խառանում ոչ միայն գլխովին ջախջախվել են խաչակիրների ուժերը, այլև գերի են ընկել Եգեսիայի տիրակալ Բոլդուին Դե Բուրգը, Ջոսլինը և այլ աստիճանավոր անձեր: Մինչև 1108 թվականը նրանք մնացին գերության մեջ:

36 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն*, էջ 313:

37 Նույն տեղում, էջ 315:

3. Հալեպի հայկական գաղթօջախը XV—XVIII դդ.

1 Ս. Այուրմեյան, *Պատմություն Հալեպի հայոց*, հ. 3, Փարիզ, 1950, էջ 10:

2 Բ. Սարգիսյան, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*, հ. 1, Վենետիկ, 1914, էջ 401—402:

3 Ս. Այուրմեյան, *Պատմություն Հալեպի հայոց*, հ. 3, էջ 26:

4 Ս. Այուրմեյան, *Յուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի*, հ. 1, Երուսաղեմ, 1935, էջ 151:

5 Ս. Այուրմեյան, *Պատմություն Հալեպի ազգային գերեզմանատանց*, Հալեպ, 1935, էջ 12, 13 և 15:

6 «*Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրություն*», Վիեննա, 1936, էջ 320:

7 *Տե՛ս* Documents inédits pour servir à l'histoire du Christianisme en Orient (XVI—XIX), t. I, Londre, 1907, p. 54.

8 *Տե՛ս* A. Russell, The natural history of Aleppo, t. II, London, 1794, p. 26.

9 *Տե՛ս*, «*Սովետական Հայաստան*», 11 հոկտեմբերի 1966: Այդ արձանագրություններն առաջինը նկատել է Դեյր էզ-Զոր և Հասիչե քաղաքների պատմական հուշարձանների տեսուչ Շառլ Շաստին: Հայաստանի պատմության բանգարանի տնօրեն Մորուս Հասրաթյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Բեյրութում, հրավիրվել է Դեյր էզ-Զոր՝ Հալեպի պետական բանգարանի աշխատակից Նուպար Փարթամյանի ուղեկցությամբ: Ընթերցելով արձանագրությունները, Մ. Հասրաթյանը ճշտել է, որ դրանք գրված են Նոր Ջուղայի հայ վաճառականների կողմից:

10 Մատենադարան, ձեռ. 2672, էջ 401բ:

11 «*Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրություն*», էջ 320:

12 A. Ismail, Histoire du Liban du XVII^{e} s. à nos jours t. I, Beyrouth, 1958 p. 134.

13 Ղ. Ալիշան, *Հայ-Վենետ*, Վենետիկ, 1896, էջ 216, 430—431, 464—465:

14 Charle-Diran Tékéyan, Marseille, la Provence et l'Arménie. Marseille, 1929 p. 25—26.

15 Նույն տեղում, էջ 23:

16 Ս. Այուրմեյան, *Պատմություն Հալեպի հայոց*, հ. 3, էջ 288—289:

17 Армяно-русские отношения в XVIII веке, Ереван, 1964, стр. 179—180.

18 1680 թ. մի խումբ հալեպցի հայ ներկարարներ դիմել են ֆրանսիական հյուպատոս Լորան դ'Արվիլնոյին, խնդրելով, որ դյուրացնի ֆրանսիական լեղակի ներմուծումը: Լեղակը օգտագործվում էր մետաքսյա, բրդյա և բամբակյա գործվածքների մանածը կապույտ ներկելու համար (Ս. Այուրմեյան, *Պատմություն Հալեպի հայոց*, հ. 3, էջ 974):

19 M. Fébure, Théâtre de la Turquie, Paris, 1682, p. 217.

20 Նույն տեղում, էջ 235—236:

21 Նույն տեղում, էջ 375—376:

22 Գ. Սրվանձտյան, *Թորոս աղբար, հ. 2, կ. Պոլիս, 1888, էջ 454:*

23 Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959, էջ 444:*

24 Ա.. Սյուրմեյան, *Պատմություն Հալեպի հայոց, հ. 3, էջ 394:*

25 Ա.. Սյուրմեյան, *Յուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի, հ. 1, էջ 49—50:*

26 Tournebise, „Le Catholicisme à Alep au XVII[e] s. (1625—1663)" *տե՛ս* „Etudes", № 5. fevrier, 1913, pp. 354—355.

27 *Նույն տեղում, էջ 366:*

28 Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության հ. 1, Երևան, 1957, էջ 495:*

29 *Կաթոլիկ միսիոներ կլիմենտ կամ Կղեմես Գալանոսը գործել է XVII դարի առաջին կեսին, եղել է կաթոլիկության ամենաակտիվ պրոպագանդիստներից Հայաստանում և Վրաստանում: Նա տիրապետում էր հայերեն լեզվին: Նրա գրչին են պատկանում Հայաստանի և հատկապես հայ նկեղեցու պատմության վերաբերյալ աշխատություններ, գրված հայերեն և լատիներեն լեզուներով:*

30 Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումները, Երևան, 1961, էջ 49—50:*

31 *Նույն տեղում, էջ 90:*

32 Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ, հ. 2, էջ 48:*

33 Մ. վ. Թերզյան, *Ջմմառու հայ վանքը, Բեյրութ, 1949, էջ 77:*

34 Գ. Ք. Աղանյանց, *Դիվան հայոց պատմության, գ 1, Թիֆլիս, 1893, էջ 331:*

35 *«Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», էջ 587: 1873 թ. Պետերբուրգում Մուրատ Սարգսի ձեռնարկը լույս է տեսել ռուսերեն, Քերովբե Պատկանյանի թարգմանությամբ:*

36 *Տե՛ս Մուրատի ձեռնարկը նույն տեղում, էջ 586—605:*

Բաժին առաջին

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱՆՆԵՐԸ 1841—1918 ԹԹ.

Գլուխ երկրորդ

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1 Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 22, Երևան, 1951, էջ 321:*

2 *Առաջինը եվրոպացիներին իրավունք էր տալիս «ամեն կարգի» արդյունաբերական ապրանքներ ներմուծել Թուրքիա, մաքս վճարելով ինքնարժեքի 3%-ի չափով: Երկրորդը վերաբերում է Անգլիայի «հպատակների և նրանց ծառայության մեջ եղող անձանց» հոմք գնելու և արտահանելու իրավունքին: Նրանց թույլատրվում էր Օսմանյան կայսրության «բոլոր մարզերում» գնել և ինքնարժեքի 12%-ի չափով*

մաքս վճարելով արտահանել «առանց բացառության ամեն տեսակ ապրանք, որ ստացվում էր երկրի ընդերքից և արդյունաբերությունից»:

3 M. T. Панченкова, Политика Франции..., Москва, 1966, стр. 58.

4 1860 թ. մայիս-հուլիս ամիսներին անգլո-ֆրանսիական մրցակցության պայմաններում Բեյրութում, Սաիդայում, Հասբայայում, Ռաշայայում, Դեյր ալ-Կամարում, Զահլեում, Դամասկոսում և այլ վայրերում տեղի ունեցան դրուզ-մարոնական բախումներ, որոնց ընթացքում կոտորվեցին ավելի քան 20 հազար քրիստոնյաներ այրվեցին 380 գյուղեր, կործանվեցին 600 եկեղեցի և վանք: Մեծ վնասներ կրեցին նաև մուսուլմանները: Քրիստոնյաներին փրկելու լոզունգի ներքո, ֆրանսիական զորքը ներխուժեց Սիրիա, սակայն Անգլիայի միջամտությունը կաշկանդեց նրա գործունեությունը: 1861 թ. Ֆրանսիայի, Ավստրիայի, Պրուսիայի և Թուրքիայի ներկայացուցիչները կազմեցին «Լիբանանի օրգանական սահմանադրությունը», որով և Լեռնային Լիբանանը հռչակվեց ավտոնոմ մարզ եվրոպական պետությունների վերահսկողության ներքո:

5 Տե՛ս V. Cuinet, Syrie, Liban et Palestine, Paris, 1896, p. 41–42.

1. Հայերի տեղաբաշխումը

1 Մինչև XIX դարի կեսերը Լեռնային Լիբանանը կառավարվում էր օսմանյան սուլթանի հարկատու ֆեոդալների միջոցով: Ինքնավար մարզի վերածվելուց հետո՝ 1861 թ. իշխանության գլուխ կանգնեց մի քրիստոնյա կառավարիչ, որը, թեև նշանակվում էր Բարձրագույն դռան կողմից, սակայն գործում էր եվրոպական մեծ պետությունների փաստական վերահսկողության ներքո: Նրան էին ենթարկվում ամբողջ գործադիր իշխանությունը, հասարակական կարգի պահպանման օրգանները, նրա հրամանով էին նշանակվում կայմակամները, մյուդիրները, դատավորները, նեռսի հրավիրվում մեջլիսը և այլն:

2 Տե՛ս F. Lenormant, Histoire des Massacres de Syrie en 1860, Paris, 1861 p. XV.

3 Թուրքերը հիմնականում բնակվում էին քաղաքներում և առհասարակ պետական պաշտոնյաներ, զինվորականներ, կալվածատերեր էին: Թուրք էին համարվում դարերից ի վեր Անատոլիայի կազմի դաշտային շրջաններում բնակվող թուրքմենները, ավշարները և միջինասիական ծագում ունեցող այլ ժողովուրդների բնակորները, որոնք սակայն թուրքերից տարբերվում էին մշակույթով և ազգային այլ հատկանիշներով: Քրդերը հաստատված էին Բեքաայի, Սալհիեի, Քիլիսեի, Սեմաանի լեռներում, Ամանուսի դաշտավայրում և հատկապես Ջեզիրայում: Այդ վայրերում նրանց հիմնական զբաղմունքն էր երկրագործությունը և անասնապահությունը: Դամասկոսում և այլ քաղաքներում էին ապրում քրդական ավազանին, ցեղապետերը, որոնք մեծ մասամբ զինվորականներ կամ պետական ծառայողներ էին: Չերքեզները և չեչենները Սիրիայի նոր բնակիչներն էին: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո նրանք հյուսիսային Կովկասից և Դաղստանից գաղթել էին Արևմտյան Հայաստան, այնտեղից էլ նրանց մի մասն անցել էր Սիրիա: Չերքեզական և չեչենական հոծ բնակավայրեր կային Հալեպի նահանգի հատկապես հայաբնակ շրջաններում: Թուրքական կառավարությունը նրանց որոշ արտոնություններ տվեց հայերի հաշվին և, ինչպես նշվեց համապատասխան տեղում, աշխատում էր ամեն կերպ սրել ազգամիջյան հարաբերությունները:

4 Մյութվելիները հիմնականում բնակվում էին Բեկաայի դաշտավայրում, Բեյրութի, Սաիդայի, Սուրի շրջաններում և զբաղվում էին երկրագործությամբ: Անսաբինների կամ ալավիների ճնշող մեծամասնության կրոնը, իսլամական և քրիստոնեական տարրեր պարունակելով հանդերձ, էապես կռապաշտական էր: Շեմսին կոչված անասաբինները պաշտում էին երկնային մարմինները (արևը, աստղերը), շայբինները՝ բնությունը (ծառեր, բույսեր), քելբինները՝ կենդանիներ, հատկապես շուն: Անսարիները տեղաբաշխված էին Լատակիայում և նրա շրջաններում և զբաղվում էին երկրագործությամբ, արհեստներով և առևտրով: Տեղի հայ բնակիչները նրանց անվանում էին թաթ: Մինչև XIX դարի 60-ական թթ. դրուզները բնակվում էին Լեռնային Լիբանանում, իսկ դրուզ-մարոնական արյունահեղությունից հետո՝ նաև Ջեբել Հաուրանում, որը հետագայում վերանվանվեց Ջեբել Դրուզ՝ դրուզների լեռ: Նրանք հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ, մասամբ էլ գյուղական արհեստներով: Թուրքական կառավարողները, ինչպես մյութվելիներին և անսարիներին, այնպես էլ դրուզներին համարում էին իսլամական աղանդավորներ և նրանց դրել էին սուննի կրոնապետի իրավասության ներքո:

5 V. Cuinet, Syrie, Liban et Palestine, p. 129—130.

6 «Մասիս», 1880, № 2523:

7 «Միլ Ավարայրի», 1866, էջ 408—409:

8 «Սիոն», 1868, № 9, էջ 213:

9 Տե՛ս, «Արձագանք», 1888, № 1, էջ 15:

